

ԽԱՐԿԻՆ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԱՆՈՐԿ  
ԱԲԵՂՅԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ՏԱՐԿԻՍ ԱՐՄԵՆԻԱՆ

# ՄԱՆՈՒԿ ԱԲԵԳՅԱՆ

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԵՐԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Ի. ԱԲԵԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

4(092)  
3-42

ՍՈՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՄԱՆՈՒԿ ԱԲԵԳՅԱՆ

ԿՅԱՆԷՆ ՈՒ ԳՈՐԾԸ

27767

1204



ՀԱՅԿԵՐԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ 1970





*Մենագրությունը նվիրված է ակադեմիկոս Մանուկ Արեղյանի կյանքին ու զիտական ժառանգության ցննությունը:*

*Աշխատության առաջին մասում արխիվային վավերագրերի և տպագիր աղբյուրների հիման վրա ուսումնասիրված է ու ղեա՛նատված Մ. Արեղյանի կյանքն ու մանկավարժական, հասարակական գործունեությունը, երկրորդ մասում՝ նրա հայագիտական բազմակողմանի և հարուստ ժառանգությունը: XIX դարի երկրորդ և XX դարի առաջին կեսերի հայ ազգային-քաղաքական ու զիտա-մշակութային կյանքի անսաղաչելի վրա բացահայտվում և արժեքավորվում է Մանուկ Արեղյանի անձն ու զնրը հայագիտության զարգացման պատմության մեջ:*

15147

Խմբագիր՝  
Ա. Տ. ՂԱՆԱԿՅԱՆ



**Մ**անուկ Արեղյանի դիտական վաստակի զնահաստությունը Հայազգիություն մեջ սկիզբ է առնում տակավին նրա կենդանության օրոք, իսկ առավել լայն ու ամբողջական դրսևորվում է դիտականի մահվանից անմիջապես հետո, Հասկարյուս նրա մահվան կամ ծննդյան տարելիցների առնչությամբ:

Եթե մինչև Արեղյանի մահը նրան նվիրված սակավաթիվ հոդվածները վերաբերում էին նրա այս կամ այն աշխատությունը կամ առևտրությունը և կրում էին առավելաբար միտումնավոր բննադատության բնույթ<sup>1)</sup>, ապա մահվանից հետո Արեղյանին վերաբերող հետազոտությունները գալիս էին հիմնականում առարկայական ճշմարիտ ելակետերից զնահաստելու գիտնականի վաստակն ու նրա պատմական նշանակությունը:

Արեղյանի կյանքին ու գիտական ժառանգությանը նվիրված առաջին ուսումնասիրությունները երևան են գալիս 1946-ին, նրա հիշատակին ձոնված ԵՊրական-բանասիրական հետախուզումները գրքում<sup>2)</sup>, որ բացահայտված էին ու զնահաստված Մ. Արեղյանի կյանքի ուղու և նրա գրականագիտական, բանագիտական ու լեզվաբանական գործունեության էական կողմերը: Առանձնակի արժեք

<sup>1</sup> Այստեղ և աշխատության համադաստատյալն սեղերում Հեղինակը կանգ չի առել Մ. Արեղյանի առանձին աշխատությունների մասին 30-ական թվականներից ի վեր հանդես եկող այն հոդվածների ու գիտությունների վրա, որոնք գիտական արժեք չեն ներկայացրել և որոնց անհիմն լինելը Հնտագալում ապացուցվել է Հայազգիություն կենդանի պարզացումով:

<sup>2</sup> Տե՛ս ԵՊրական-բանասիրական հետախուզումներ, խմբ. Ն. Սարգսյան և Ա. Ղանազանյան, ՀՍՍՍ ԳԱ Հրատ., Երևան, 1946: Ե. Տեր-Մինասյան, Մանուկ Արեղյանի կյանքն ու գործը (էջ 9—21), և. Սարգսյան, Մ. Արեղյանը և Հայ հին գրականության պատմությունը (էջ 25—110), Ա. Ղանազանյան, Մ. Արեղյանի բրբհ Փուլիորյան (էջ 111—147), Ա. Ղալիբյան, Մ. Արեղյանի քերականագիտական ժառանգությունը (էջ 149—160):

ևն ներկայացնում են. Մարգարյանի կատարած նախասրբեղանական շրջանի հայ հին գրականության պատմագիտության արդյունքների համեմատությունը Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» հետ, վերջինիս առավելությունների բացահայտումները, Արեղյանի գրականության պարբերացման սկզբունքների, նրա բուսեղծած գրա-պատմական տեսության ու համակարգի հայ հին գրականության պատմագիտության զարգացման գործում խաղաղած դերի գնահատությունները: Պատմական միևնույն հայացքով, հայ բանագիտության ձևավորման ու զարգացման տեսադաշտի վրա Ա. Ղանայանյանը բնում է Արեղյանի բանագրական ժառանգությունը, մասնավորապես հայ ժողովրդական վեպերի՝ «Սասնա ծռեր»-ի, «Պարսից պատերազմ»-ի, առասպելների, ժողովրդական բանահյուսական հուշարձանների նրա կատարած գիտական հրատարակությունների տեղաբարձական սկզբունքները և քննադատարար գնահատում այդ տեսությունների և սկզբունքների գիտապատմական արժեքը: Ա. Ղարբյանը համառոտակի սովեթացվում է Արեղյանի քերականագիտական համակարգը, երևան է հանում նոր հայերենի շարահյուսության, ձևարանության և բառադիտության մեջ գիտնականի սահմանած քերականագիտական նոր կարգերն ու հասկացությունները, նոր հայերենի քերականության մշակման ու զարգացման գործում մեծ արժեք ապով Արեղյանի պատմական գերին:

Եթե այս ամենին ավելացնենք նաև Ե. Տեր-Մինասյանի՝ Արեղյանի կյանքին ու գիտա-մանկավարժական գործունեությանը նվիրած համառոտ ուրվագիծը, սպա պարզ կդառնա պատմական այն կարևոր նշանակությունը, որ ձևոր են բերում նշված հոդվածները Արեղյանի կյանքի ու գործի ուսումնասիրության սկզբնավորման տեսակետից:

50-ական թվականներից սկսած թե՛ Սովետական Հայաստանում և թե՛ արտասահմանում մենագրական հետազոտության փորձեր են արվում Մանուկ Արեղյանի կյանքի ու գիտական վաստակի նկատմամբ:

1954թ., Մ. Արեղյանի մահվան տասնամյակի առիթով, որտեղևն լույս է տեսնում նա. Մարգարյանի հոդվածը՝ նվիրված Մ. Արեղյանին<sup>1</sup>, Հեղինակը համառոտակի ուրվագծում է Մ. Արեղյանի

կյանքի ու գիտական գործունեության անցած ուղին, գնահատելով նրա ժառանգության գիտա-պատմական արժեքը: Նա առանձնապես շեշտը դնում է գիտնական-բազմաբաց, գիտնական-հասարակական գործչի և, մանավանդ, «Հայոց հին գրականության պատմություն» երկհատոր աշխատության գիտական խոշոր նշանակությունը:

1955 թ. Բոստոնի «Հայերենը» ամսագրում շարունակաբար սկսում է լույս տեսնել Արեղյանի մենագրությունը, նվիրված Մանուկ Արեղյանի կյանքին ու գիտական գործունեությանը<sup>2</sup>: Հեղինակը իր ձևորի տակ եղած փաստերի ու անձնական հուշերի հիման վրա բավական հանգամանալից շարադրում է Մ. Արեղյանի կյանքի հիմնական զոները, համառոտակի բնում և արժեքավորում նրա լեզվաբանական, բանագիտական, բանասիրական աշխատություններն ու հետազոտությունները: Բայց վերահաս մահվան պատճառով աշխատությունը մնում է անավարտ: «Հայոց հին գրականության պատմություն» բնութագրում, որ հեղինակը խոստանում էր առը հաջորդ դիտում<sup>3</sup>, այդպես էլ մնում է չիրականացված:

Նույն՝ 1955-ին «Սովետական գրականություն» ամսագրում լույս է տեսնում Ա. Ղանայանյանի՝ Մ. Արեղյանին նվիրված մի ամբողջական ուսումնասիրություն<sup>4</sup>, ուր սեղծ ուրվագծվում է մեծ հայագետի կյանքի ու գիտա-մանկավարժական գործունեության անցած ուղին, նրա հետազոտական մեթոդը, արժեքավորվում նրա ստեղծած գիտական արդյունքների պատմական նշանակությունը:

Մ. Արեղյանի լեզվաբանական հայացքների բացահայտմանն ու գնահատմանն է նվիրված 1962-ին լույս տեսած էջ. Ազալանի «Հայ լեզվաբանության պատմություն» II հատորում Մ. Արեղյանին հատկացված ենթագլուխը<sup>5</sup>, ուր հանգամանորեն բնվում են Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսություն» ներածությունը, հեղինակի զավանած լեզվաբանական սկզբունքներն ու տեսական հայացքները:

1965-ին, Արեղյանի ծննդյան 100-ամյակի առիթով, «Պատմա-բանասիրական հանդես»-ում լույս է տեսնում ակադ.

<sup>1</sup> Արտ. Արեղյան, Մանուկ Արեղյան (կյանքը և աշխատությունները), ակադ. «Հայերենը» ամսագիր, Բոստոն, 1955, №№ 1, 2, 3, 4, 6, 7, 9, 10, 11:

<sup>2</sup> Տե՛ս «Հայերենը», 1955, № 11, էջ 76:

<sup>3</sup> Ա. Ղանայանյան, Մ. Արեղյանի կյանքի ու գործունեությունը, «Սովետական գրականություն», 1955, № 12, էջ 126-140:

<sup>4</sup> Էջ. Ազալան, Հայ լեզվաբանության պատմություն, 5, II, Երևանի պետական լուսարարի հրատ., Երևան, 1962, էջ 132-153:

<sup>1</sup> X. H. Саркисян, Манук Агертма, 200th 9th «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1954, № 12, էջ 29-36:



4. Մեխիբ-Յանջանյանի «Մանուկ Արեղյան» հոդվածը<sup>1</sup>, որ հեղինակը վեր է հանում Արեղյան-Հայտարարի գիտական խոշոր արժանիքները, թուօցիկ ներկայացնում նրա կյանքի անցած ուղին, գնահատում Արեղյանի բանագրական և գրականագիտական հարուստ ժառանգությունը, միասնական ջրույց տալով վերջինիս ահզրն ու նշանակությունը հայ բանասիրության պատմության մեջ: Նույն թվականին, դարձյալ նույն առիթով, յույս են տեսնում Մ. Ավգլաբեղյանի և Ա. Մարտիրոսյանի հոդվածները նվիրված Արեղյանի մշակված հայ հին գրականության պատմության տարրեր խնդիրներին<sup>2</sup>:

Թեպետ այդ հարցերին բավական հանգամանորեն անդրադարձել էր Խ. Սարգսյանը տակավին երկու տասնամյակ առաջ, սակայն երկու հոդվածագրներն<sup>3</sup> էլ նոր կողմերից ու յուրօրի էին բացահայտում Արեղյանի սձայնը հին գրականության պատմության արժանիքները:

1966 թվականից սկսած սովետահայ երիտասարդ լեզվաբանների շրջանում հետաքրքրություն է արթնանում Մ. Արեղյանի հոլովների տեսության նկատմամբ: Մանկավարժական և գիտական պարբերականներում երևան են գալիս մի շարք թեր ու զեմ հոդվածներ<sup>4</sup> նվիրված Արեղյանի հինգ հոլովի տեսությանը: Լեզվաբանների մի խումբ (Ռ. Իշխանյան, Մ. Ասատրյան, Արտ. Պապոյան, Պ. Շարաբեխանյան, էմ. Պիլազյան)<sup>5</sup> կրկին վերաբնեւելով հոլովների վիճակը արդի արեւելահայերենում, հանդես են գալիս Մ. Արեղյանի հինգ հոլովի տեսության պաշտպանության և ժամանակակից հայերենի բերականությունների մեջ զրա արտատարման

առաջարկով: Լեզվաբանների ու մանկավարժների մեկ այլ խումբ (Ա. Կարիրյան, Ալ. Մարգարյան, Ռ. Փիլիպոսյան, Լ. Ավգլալյան, Արտ. Հարությունյան<sup>6</sup>) փորձում է ապացուցել արդի բերականական ուսմունքներում արմատավորված յոթ հոլովի տեսության ճշտությունը և Արեղյանի տեսությունը պաշտպանողներին մեղադրել:.. Արեղյանին սխալ հասկանալու մեջ:

Հոլովների բմբնման հարցերում այլ մտեղնում է ցուցաբերում էդ. Աղալանը: Նա ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներով բնեկյով արդի հայերենի հոլովների խնդիրը, գալիս է այն հետևություն, որ հայերենում կա վեց հոլով: Նա Արեղյանի տեսությունից անվերապահորեն բնորոշում է հայցականի շղջությունը և բնդհակառակ, հակադրվելով Արեղյանին, բնորոշում է սեռական հոլովի առկայությունը արդի հայերենում<sup>7</sup>: Մի փոքր այլ կախիտից, սեռական հոլովի պաշտպանությամբ դարձյալ, հանդես է գալիս Պ. Պողոսյանը 1968-ին սպալյրած իր մի հոդվածում<sup>8</sup>:

Բացառությամբ էդ. Աղալանի և Պ. Պողոսյանի հոդվածներում արժարված գրույթների, հոլովների բմբնման շուրջ եղած այս, ինչլիս նաև նախորդ վիճարանությունները ամփոփելու և զրանց պատասխանելու է գալիս Հովհ. Բարսեղյանը իր «Մանուկ Արեղ-

1 Կ. Ա. Մեխիբ-Յանջանյան, Մանուկ Արեղյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3 (30), էջ 9—18:

2 Մ. Ք. Ավգլաբեղյան, Մ. Արեղյանի իրեն հայց հին գրականության պատմարան, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 6, էջ 59—65: Ա. Ա. Մարտիրոսյան, Մանուկ Արեղյանը և հայ հին գրականության պատմության պարբերագումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 195—202:

3 Ռ. Իշխանյան, Ուղղակիան, թե՛ հայցական, «Սովետական գրքոց», 1965, № 47: Մ. Ասատրյան, Կա՞ արդյոք ժամանակակից հայերենում հայցական հոլով, «Սովետական գրքոց», 1965, № 50, էին և նոր բանավեւեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգը շուրջը, «Բաներ» նրևանի համալսարանի», 1968, № 2, էջ 143—157: Արտ. Պապոյան, Մի՞ հայցականի կ՞ սեռականի մասին, «Սովետական գրքոց», 1966, № 1: Պ. Շարաբեխանյան, Արդի հայերենի հոլովները, «Սովետական գրքոց», 1966, № 13: Պ. Շարաբեխանյան, էմ. Պիլազյան, Արդի հայերենի հոլովների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 115—134:

1 Ռ. Փիլիպոսյան, Ուղղակի և սեռական հոլովական հասկացությունների մասին, «Սովետական գրքոց», 1966, № 4: Լ. Ավգլալյան, Գարձյալ հայցականի մասին, «Սովետական գրքոց», 1966, № 7: Ա. Կարիրյան, Ալ. Մարգարյան, Ընգզե՛ կամարականությունների, «Սովետական գրքոց», 1966, № 10: Ա. Հարությունյան, Անտական և հայցական հոլովները կաև և սե՛համեծու են, «Սովետական գրքոց», 1966, № 19, Ա. Կարիրյան, Հայց լեզվի բերականության ամբողջլթային հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 80—94:

2 էդ. Աղալյան, Ժամանակակից հայերենի հոլովները, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 117—140: Հարցի առավել մանրամասն քննությունը տե՛ս էդ. Աղալյանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոսարձումը գրքում, Երևական, 1967, էջ 179—303: էդ. Աղալյանի բնագրատական նկատությունների հերձական համակարգի և սեռական բնագրատական նկատությունների հերձական մասին և հատկապես Մ. Ասատրյանի սձին և նոր բանավեւեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգը շուրջը հոդվածներում:

3 Պ. Պողոսյան, Անտական հոլովը ժամանակակից հայերենում, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 138—152:

յանի հինգ հուրովի տեսութունը և նրա հին ու նոր քննադատությունները» բանավիճաչին աշխատությունը<sup>1</sup>։

Արեղյանին նվիրված վերջին հետազոտությունը էդ. Զբրաշյանի «Մանուկ Արեղյանը և հայկական տաղաչափության հարցերը» է<sup>2</sup>, ուր հեղինակը հայ բանասիրության պատմության մեջ առաջին անգամ անգրադատում է Մ. Արեղյանի տաղաչափագիտական ծառանդությունը և հայ նախընթաց տաղաչափագիտության տեսադաշտի վրա բացահայտում և դնահատում է Մ. Արեղյանի տաղաչափության տեսության սկզբունքներն ու համակարգը։

Այսպիսին էր Մանուկ Արեղյանի անձի ու գործի ուսումնասիրության վիճակը հայ բանասիրության մեջ<sup>3</sup>, երբ 1959 թվականին տողերիս գրողը, Արեղյանի մահվան 15-ամյակի առթիվ «Մովսեսական Հայաստան» ամսագրում լույս է բնծայում մեծ հայագետին նվիրված իր անդրանիկ հոդվածը<sup>4</sup>։

Այնուհետև՝ 1965-ին, Մ. Արեղյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ «Պատմա-բանասիրական հանդես»-ի խմբագրու-

թյան հանձնարարությունը սողերիս հեղինակը գրում և տպագրում է Մանուկ Արեղյանի կյանքն ու գործն արտացոլող մի մենագրական փնտրիկ<sup>5</sup>։ Մինևույն թվականին, դարձյալ նույն առիթով, «Մովսեսական գրականություն» ամսագրում նա տպագրում է Մ. Արեղյանի գրաքննադատական ու տեսական հայացքներին նվիրված մի հետազոտություն<sup>6</sup>։ Նույն տարին Մաշտոցյան մատենադարանի Մ. Արեղյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի առնչությամբ գումարված նստաշրջանում նույն հեղինակը զեկուցում է կարգում Արեղյանի հայ վիպական բանահյուսության տեսության վերաբերյալ, որի սուսերին համառոտությունը տպագրվում է Մ. Արեղյանի Երկերի առաջին հատորի վերջում իբրև ամփոփում<sup>7</sup>։

Այսպես, շուրջ մեկ քսանամյակի ընթացքում, հիմնականում մանր հետազոտությունների ձևով, երևան են գալիս Մանուկ Արեղյանի կյանքն ու գիտական գործունեության առբեր կողմերը անդադարձնող մեկուկես տասնյակից ավելի ուսումնասիրություններ, որոնք ընդհանուր դեմքով շոշափում էին մեծ հայագետի գիտական ծառանդության զրեթև բոլոր էական կողմերը։

Այսուհանդերձ Մանուկ Արեղյանի կյանքի ու գործի ամբողջական ու հանգամանալից հետազոտությունը մնում էր օրակարգի հարց և հայ բանասիրության պատմության տակավին չհատուցված պարտքերից։

1959 թ. Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը սողերիս հեղինակին հանձնարարեց գրել Մ. Արեղյանի մասին մի հանրամատչելի գրքույկ։ Սակայն խորամուխ լինելով նյութի մեջ, հեղինակը հարմար է գտնում գրել Մ. Արեղյանի կյանքին ու գիտական ողջ ծառանդությանը նվիրված մենագրական ուսումնասիրություն։

Սույն աշխատությունն, ա՛հա, այդ մտադրության իրականացումն է և Մ. Արեղյանին նվիրված առաջին ամբողջական ժողովրդական հետազոտությունը, որի վրա հեղինակն աշխատել է 1959 թ. ի վեր։ Անձը, որին նվիրված է այս գիրքը բարտաբեր զեկուցումով հաստատ կենսագրությունը շունչի։ Նա խոշոր դիպեալական էր և նրա

1 «Հայաստան», 1967, Այս, ինչպես նաև Գ. Զահեկյանի «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» (Երևան, 1967) աշխատության մասին տեսելու ուսումնասիրության IV գլխում։

2 «Բաների Երեանի համալրական», 1968, № 1, էջ 80—93։

3 Բացի վերահիշյալներից, Արեղյանի կյանքին ու գործունեությանը 1944 թրվականից ի վեր նվիրվել են լրագրային և այլ կարգի հոդվածներ ևս՝ Գրանցից «Իշխման են» Ա. Դանալյանի «Մանուկ Արեղյան» («Գրական թերթ», 1945, № 28, «Մովսեսական Հայաստան», 1959, № 226), «Հայագիտության վիթխարի կողմին» («Գրական թերթ», 1964, № 29), Գ. Պոստայու «Մանուկ Արեղյան» («Եկամբ», 1945, Գ արակ, էջ 85), Ն.-Ի Մանուկ Արեղյան («Էքստրաֆիկս», 1948, նոյ-դեկտ., էջ 54—57), Պ. Հակոբյանի «Բազմալատակ գիտնականը» (Մ. Արեղյանի մահվան 10-ամյակի առթիվ, «Գրական թերթ», 1954, № 25), և Սարգսյանի «Манук Арегян» («Коммунист», 1965, № 120), Մ. Արեղյանի «Հայաց լեզվի տեսության Երկրորդ հրատ» (Երևան, 1965) Ալ. Մարգարյանի գրած առաջաբանը և այլն։ Տպագիր հոդվածներից և ուսումնասիրություններից զատ, Արեղյանի մահվան և ծննդյան տարիներին նվիրված գիտական նստաշրջաններում Արեղյանի գիտական գործունեության առբեր կողմերին նվիրված արժեքավոր զեկուցումներ են կարդացել Կ. Մելիք-Յուսեփյանը, Ա. Դանալյանը, և Սարգսյանը, էդ. Աղայանը, Գ. Արվիդ, Աս. Մնացականյանը, Մ. Ավգոստիդյանը, Ս. Առքիչյանը, էդ. Զբրաշյանը, էժ. Պիլալյանը, Գ. Գասպարյանը, Ա. Մարտիրոսյանը, Ս. Հարությունյանը և ուրիշներ, որոնց մի մասը զեկուցումները հրատարակվել են ժամույտ։

4 Ս. Հարությունյան, Հայագիտության մեծ երախտագործը. «Մովսեսական Հայաստան», 1959, № 9, էջ 15—16։

1 Ս. Ս. Հարությունյան, Մեծ հայագիտը. «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1, էջ 137—152։

2 Սարգիս Հարությունյան, Մանուկ Արեղյանը ընձազատ և գրականության անսարան, «Մովսեսական գրականություն», 1965, № 5, էջ 140—148։

3 Մ. Արեղյան, Երկեր, հատոր I, Երևան, 1966, էջ 562—567։

Կլանքի ղեկավարը նրա զործն էր... Եվ որովհետև նրա զործն էլ, այսինքն զիտական գրքերը, մեծահասար էին և բնականաբար ոչ հաճախ էին հանդես գալիս, ուստի և նա, կարելի է ասել, հարուստ չէր ղեկավարով<sup>1</sup>: Այդ է պատճառը, որ սույն աշխատության մեծ մասը կազմում է Մ. Արեղյանի զիտական բազմահարուստ ժառանգության քննությունն ու արժեքավորումը:

<sup>1</sup> Գ. Գևորգյան, Հուլ-էլուլի կարգացած 2002 ԳԱ Նիստերի գաղչինում Մ. Արեղյանի մահվան 10-ամյակին նվիրված հրեյանական երեկոյին (1954 թ., սեպտեմբերի 30, անտիպ, ձևագիրը պահվում է Ա. Ղանալանյանի անձնական արխիվում):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Կ Յ Ա Ն Ք Ը



«Անդամն շնորհ մ'ըր ազգայն-  
նոցնան միջավայրը լքած է իմաս-  
տուցյամբ և ներհանությամբ, լըրու-  
թյամբ և զՍՆ նպատակներն նետաղը-  
ղումով»:

Ա. ԻՍԱԿՅԱՆ

1

Արարի ափին ընկած հին Աստապատի ավերակների մերձա-  
կայքում բարձրացել էր մի նոր գյուղ՝ որ ուսական բարսեզների  
վրա երկար ժամանակ շարունակում էր նշվել Քաղաքենց թուրա-  
կան անվամբ: Բայց այն բնակիչների և ուրիշների կողմից վաղուց  
մկրտվել էր մոտակա ավերակների հին ու պատմական անունով,  
որի հնութունը մեր մատենագրության մեջ վկայված էր տակավին  
X դարից՝ Քովմա Արծրունու Պատմությամբ: Սակայն բանա-  
վոր ավանդություններով գյուղի հնութունը հասնում էր մինչև V  
դար և կապվում ժամանակի ամենախոշոր իրադարձություններից  
մեկի՝ Ավարայրի հերոսամարտի հետ: Պատմել են, որ Ավարայ-  
րի զաշտից վարդան Մամիկոնյանի մարմինն «այդտեղ են բերել  
ու պատել», որից և տեղանունը՝ Աստ-տ-պատ:

Աստապատի մոտ է գտնվում նաև նշանավոր ս. Ստեփանոսի  
վանքը, որն իր զիրբի և կարմիր բարից ու աղյուսից կառուցված  
լինելու պատճառով կոչվում էր նաև Քարատակի վանք, կամ առա-  
վել հուշակված՝ Կարմիր վանք: Մեկ այլ ավանդությամբ վանքը ևս  
կապվում էր Ավարայրի հերոսամարտի հետ. պատմել են, թե հա-  
կատավարտից այդ վանքն են բերել վիրավոր զինվորներին, որոնց  
վերբերից ծորացող արյունով կարմիր է ներկվել վանքի դավիթն ու  
սանդուղքները<sup>1</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայ ժողովրդական աստվածները Մ. Խորենացու Հայոց պա-  
մոթյան մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 558, Դ. Արեղյան, Սխալտե, Վենետիկ,  
1893, էջ 507: Ն. Լազյան, Կախիչների ստախանական շրջան կամ Կախիչեան,  
«Ազգ. հանդես», XV դիրք, Քեֆլիս, 1907, էջ 150:

Այնպեղաշատ Աստուպատի Համբալն ու անունը նոր ժա-  
մանակներում կապվում է Մանուկ Արեղյանի ծննդյան Հիշատակի  
հետ:

Մանուկ Արեղյանը ծնվել է 1865 թվականի մարտի 17-ին  
(հին տամարով 5-ին), Աստուպատ գյուղում, հողագործ նաչառոր  
Արեղյանի ընտանիքում: Լինելով բնտանիքի կրտսեր արու զավա-  
կը՝ Մանուկը փորձուց իսկ դռնում է ծնողների, հատկապես հոր,  
սիրու և ուղարկության ասարկանք:

Հայրը՝ Խաչատուրը լինելով անըրազատ ու անուսում, կյանքն ու  
բախտը կապած հողին, լավ էր զգում ուսման հարգն ու արժեքը և  
ձգտում էր, որ զավակներն էլ իրեն պես զուրկ չլինան գրիչ ու գի-  
տությունից:

Մանուկն հինգ տարեկան էր, երբ հայրը մեծ բրուչ համար մի  
աչրքենարան է գնում: Մանուկն սկսում է թախանձել հորը, որպես-  
զի իր համար էլ գիրք անել: Հայրը խոստանում է, բայց խոստումն  
իրագործում է երկու տարի հետո միայն, երբ բուրում է Մանուկի  
խթմ տարին: Հայրը որոնես դաս առնելու է ուղարկում գյուղի խաչ-  
ֆաների մոտ: Երեք տարի սովորելով նրանց մոտ, Մանուկը բավա-  
կանաչափ հմտանում է գրանախառնության և հատկապես գրաբար

1865  
2767

1204

1 Արեղյանների տո՛ւր նախապես կրվել է Արեղյան՝ անվանառու եսխու՛  
Պետրոսի Աղբը (Քրք. տղիտակ բնդ) մականունն հիման վրա, որ սրվել է Պե-  
տրոսի՝ բնից մեկը ապրտակ լինելու պատճառով:

Պետրոսի զավակներից մեկն է եղել Գալուստը, որի անունով էլ (Գալուսյան)  
հաճախ կոչվել են զերգատանի անդամները: Գալուստը ունեցել է մի քանի զա-  
վակ, որոնցից մեկն է նաչատուրը՝ Մանուկ Արեղյանի հայրը: Խաչատուրը անու-  
նանում է թահանայից հետո գյուղի մյուս գրանառու մարդու՝ տիրացու Արեճու-  
կանի զանր՝ Մարթայի հետ: Խաչատուրի և Մարթայի ամուսնությունը ձեզում են  
մի քանի զավակ, որոնցից ամենաերտուրը եղել է Մանուկը (Տե՛ս շալրաները,  
1952, Ձ 1, էր 22—24):

2 Մանուկ Արեղյանի ծննդից սկսած մինչև Գեորգյան նմարանի ընդունվելու  
և սովորելու կենսագրական հասվածքը շարադրված է ըստ Արամ Դանադելյանի  
անձամբ Մ. Արեղյանից գրառած կենսագրական ակնարկի, որի համար սրտանց  
չնորճակալություն ենք հայտնում Ա. Դանադելյանին: Վերջինս Շիշլալ կենսագրա-  
կանին կրել է հետևյալ ծանոթությունը:

«Իրի է առև առկերս ցրոզը 1944 թվականին (ապրիլ կամ մայիս ամսին),  
մահվանից մի քանի ամիս առաջ, իր՝ Արեղյանի բնտամբ պատմածի հիման վրա:  
Արվար մամուտակի դիմագրում էր պատմելու կենսագրությունը, պատճառաբանելով  
թե՛՛ ավ՛՛մ է հարկավոր: Երբ մի կերպ համաձայնվեց, արդեն հիվանդությունը բա-  
վական բարձրացել էր: Այս զրվածից հետո աղետ չկորոզողավ պատմելու...»:

գրքերի ընթերցանության մեջ: Այդ տարիներին հենց Հովակիմ  
կախկուպու Տեր-Գրիգորյանը (էմիի Տեր-Գրիգորյանի հայրը) հիմ-  
նում է Կարմիր վանքի դպրոցը, որի անդամիկ աններից է դառնում  
Մանուկ Արեղյանը: Նա այստես ընդամենը սովորում է հինգից-վեց  
ամիս, բայց սկզբից ևնթ, իր բացառիկ ընդունակություններով, իր  
վրա է հրավիրում կախկուպուի և վարդապետների ուղարկությունը:  
Այդ է պատճառ դառնում, որ 1876 թ. մի երբանիկ դիպվածի շնոր-  
հիվ, Մանուկ Արեղյանը դառնում է էջմիածնի Գեորգյան նորաբաց  
նմարանի աշակերտ՝:

Ճննարանի տեսուչը հոգ է առնում նոր ասնի կրթության  
նրան նմարանական պայմաններին ծանոթացնելու և ընտելացնե-  
լու ուղղությամբ: Այդ նպատակով բարձր դաստարանցիներից ա-

1 Ճննարանի պարսկա՛նու ասնիքից մեկին, հիվանդության պատճառով, նե-  
մարանից ազատում են: Ճննարանի վարչության կարգադրությամբ, ազատված  
սպաների փոխարեն պետք է նմարան ընդունելի վանքի մեկ ուրիշը՝ նույնպես պարսկա՛նու  
թևից: Լուրն հասնում է Աստուպատ. Կարբիքը Հովակիմ կախկուպու Տեր-  
Գրիգորյանի և լուրն հայտնող վարդապետի մանուկ հայրը՝ Խաչատուրը նմարանի  
ստու՛յ Գարբիէ կախկուպու Ավդալյանի անունով համապատասխան միջնորդա-  
տեսուչ է վերցնում և տաննեկեղանջ Մանուկի հետ ֆուրգեով Հանապար՛ է ըն-  
դուն գնալ Վաղարշապատ: Մինչև Երևան հասնելը տեսու է երև որ Երևանից  
երկանիվ սայլով ուղևորվում են Վաղարշապատ և իջնախում Հոբիփոմի վանքում՝  
ծանոթ վարդապետի մոտ: Վաղարշապատ լինելով Խաչատուրի մտադրությամբ՝ թերս-  
նավատություն է հայտնում, ասելով.

— Գձարք թե ընդունվե՞լ...  
— Տեսնեք, թե ո՛նց ընե ընդունի,— վրա է բերում Մանուկի հայրը՝ իր ունե-  
ցած ծանոթությունների և ընթած միջնորդագրերի վրա վստա՛:

Հաջորդ օրը հայր ու սրբի գալիս են նմարան և դնում նե ուղի Ավդալյանի  
բնակարանը, որ գտնվում էր հենց նմարանի շենքում: Գարբիէ կախկուպուը  
սիրայից ընդունում է նրանց, կարգում իրեն ուղղված նամակը և ասարկանքով  
ստամ.

— Այր ը՛ որ ես Գարսկաստանի հայերից կի պահանջել մի հոգու...  
— Սրբազան, մեկ չի՞... Սեզ և Գարսկայնը բաժանողը մի գնա է. հա՛՛ Լուսե-  
նից, հա՛՛ Լուսենից՝ ի՛նչ տարբերություն,— պատասխանում է Մանուկի հայրը:

Ավդալյանը Խաչատուրի սրամիտ պատասխանի վրա ըմբիծալ է սուլել, սպա  
բերում է արևմտա՛նու լիզվով մի ընթերցարան և դնում Մանուկի առաջ: Լիզվով  
պատասխան բավական վարժ ընթերցանությունը, Գարբիէ կախկուպուը իր հավանու-  
թյունն է առյից, զովում է նրան և մեծից բռնած առաջնորդում է սերտորան Մա-  
նուկի մեծից բռնած ամբիտն բարձրանալով, Ավդալյանը գիտում է ընթերցող աշա-  
կներունին, ասելով.

— Սեզ համար մի նոր ընկիր եմ բերել: սա այս տարվա վերջակտն է լինելու:  
Այց որանից Մանուկի նմարանական գտերկերները նրա անունը «վերչա-  
կես» են գնում:



ասանձացնում է երեք հոգու (Ա. Զամինյան, Ինկ. Քարաժյան, Սաֆարյան), որոնք Մանուկի հետ պարագլուս են տարբեր առարկաներ: Ն. Քարաժյանը պարագլուս է ընդհանուր պատմություն, Սաֆարյանը՝ բուսաբանություն, իսկ Ա. Զամինյանը՝ քերականություն, այն էլ Արսեն Բաղդատունու խրթին գասարքով, որից Մանուկը ոչինչ չէր հասկանում:

Զնայած զործագրած ջանքերին, Մանուկին այդ տարի չի հաջողվում փոխադրվել հայերգ գասարան: Ընծարանի զարթոցական բաժնի առաջին գասարանը ծանրաբեռնված էր ուսման բավական բարդ ժրագրով, որի դիմաց չնչին էին զուլպական խալֆաներից կամ վանական զարթոցից ստացած փոփոխները: Բացի այդ, Արևիզյանը ճնմարան էր ընդունվել շատ ուշ՝ համարյա ուսումնական տարվա վերջին (այսինքն ամսին), մի պարագլուս, որ հնարավորություն չէր ընձեռնել ընդունակ պատանուն կարճ ժամանակամիջոցում լրացնել իր կրթության թերին՝ հասնելու ճնմարանի երկրորդ գասարանցիների մակարդակին:

Նոր ուսումնական տարվանից արդեն, որոշ շափով ընտելացած լինելով ճնմարանի միջավայրին, ավանդիլոդ առարկաներին և ուսման ծրագրի պահանջներին, Արևիզյանը սկսում է հաջողությամբ յուրացնել գասավանդիլոդ առարկաները, առանձնապես մեծ առաջադիմություն ցույց տալով հայոց լեզվից (զրարար և շաշարհաբար):

Ընծարանում գիշերօթիկ աշակերտներին չէր թույլատրվում, ամառային արձակուրդներին անգամ, այցի զնայու հարգազաններին: Արևիզյանը 1876—80 թվականները մնում է ճնմարանում, ասանց էջմիածնից դուրս գալու: Միայն մեկ անգամ, 1878 թվականին, երբ հայրը ուսաթողական պատերազմի անչլուցյալներ, ծառայում էր Բզղիբում գանվոդ առական բանակում՝ իբրև գումակախին, Մանուկի չերմախաով հիվանդ լինելու պատճառով այցի է գալիս Երան և օգափոխության նպատակով տանում որդուն Բզղիբը: Երբ որոշ մաս Այստեղ, Արևիզյանը, չնայած անդի շրջ կլիմային, փոքրին չկազդուրվում է և նորից վերադառնում է էջմիածին:

Այս տարիներին Գեորգյան ճնմարանում էին գասավանդում Սեդրակ Մանդինյանը, Ստ. Պալասանյանը, Գարապետ Կոստանյանը և Փիլիպոս Վարդանյանը, որոնց անձամբ աշակերտում է Մանուկ Արևիզյանը: Իր ընդունակությունների և լավ վարքի համար Արևիզյանը ճնմարանում արժանանում է քոչոր ուսուցիչների սերունու ու համակրանքին: Նրան հատկապես զօրգորում ու խրախուսում է

ճնմարանի տեսուչ ինքը՝ Գարրիկը կոխկոպտա Այվազյանը, որի վրա Արևիզյանն առաջին իսկ հանդիպումից շատ լավ տպավորություն էր թողել:

1882 թ. Արևիզյանը բարձր զնահատականերով ավարտում է ճնմարանի զարանոցական հանրակրթական բաժնի և փոխադրվում յարանական մասնագիտական բաժնի: 1885 թ. բուրջիլով Գ յուսարը, մայիս ամսին հանձնում է բոչոր ավարտական ըննությունները՝ «յուժ զովելի» զնահատականերով՝ արժանանալով առաջնակարգ մրցանակագրի (դիպլոմ):

1 սեպտեմբեր նոր կյամ, 11—12 ասրեկան Արևիզյանը անգիր գիտեր ամբողջ ժամագրերը Ենդունակ պատանուն խրախուսած լինելու համար, Այվազյանը Արևիզյանին, երբ դեռ առաջին խմբի աշակերտ էր, նվիրում է մի նախած ձու, որ ավելի էր Երան Արևիզյանը գյուղացի մի Երանի աշակերտ, իսկ մի օւրել անգամ կ'է մի փոքր ձագից, իբրև իր ընկերների մեջ ամենախոստերին ու ընդունակին:

— 1885 թ. ամառը ավարտելով Գեորգյան ճնմարանը, Մ. Արևիզյանը մի խումբ քրասավարանների հետ միասին (Աստվածատու կաշարյան, Սեդրակ Մելիք-Սեդրակյան, Մեղրան Մուլիսե-Շահյան, Քրեթատար Տեր-Վրթմանյան, Ինկիլաչյան Մուրադյան և Մարտիրոս Հանեսպալանյան) հունիսի 10-ին դիմում է էջմիածին Սինոդին հետևյալ խնդրով.

«Յետ աւարտելոյ յաղոցեման Տեան զընթացս ուսման մերոյ յ Գ. լսարանի, զամս ինն վաշիկեալ զտղով չնորսն Մար Աթոռոյ Ազգես, կրթաապագաս: Համարեմք ցմեք, ուստի և իզձ է մեզ՝ ստորագրեցան զՍ Փարս իւր ծառայութեանս մերով կրթաապագս գտանելու առ քրասավար Աթոռ Աթոռն Ազգես և առ ճնմարանն Երբին:

Այդ՝ առ ի յայանելոյ զեմբոսակա մեր և առ ի հասանելոյ յայգիտում՝ օրտեսողիս բազմաեց մերոց, եկլ բարհանալոց Սինոդոյ, ամենայն սերով յանն անուստը միամեայ ժամանակու առանց իբր անկախութեան ցրաստատութիւն յ Ա. յ Բ. և բոս մասին յ Գ. գասարան, խոստատութեան և եկլ հարկ լիցի և մասնաշարքանապետութեան, խնդրելով միայն առ մեզ միջոց կելու և եկլ բոս վաշիկեման յափաւոր և համառ կեցեալս:

Անի ունելով անօրէնութեան Սրբոզան Անգամոց Առանկը միամբ ամենախոնարհ որդի:» (Նեանում են անունները):

Այս հայտարարությունը ներկայացվում է ճնմարանի տեսուչի՝ Գրիգոր կոխկոպետին, որը հատուկ զեկոչաբարով այն ներկայացնում է Սինոդին և միամասնակ միջնորդում հարկի աշակերտների դիմումը, նրանց ընդունել աշխատանքի նա գտնում էր, որ դրանով կանանոթի 4000 ու գումում, և միամասնակ այն բարոյապես կեպատի միտարանության ձագիմանը: Գիտող շրջանակալաները շատ անելով պատասխանին, կիրակի՝ հունիսի 23-ին, Գեորգ IV կաթողիկոսի զերկզմանին, պատարագից հետո, հանդուսյան պաշտան են կատարել առկա միտարանության, ճնմարանի աշակերտության և հոժ բազմամյան ներկայութեամբ Մանուկ կաշարյանը (Արևիզյան) մի օրգուն զարցանալով պատշաճաբ հետ է կարգում Գեորգ IV զերկզմանի վրա (տ՛ս և՛ Կերարատ, 1885, թիվ 2., էջ 264—265):





1887-ին թողնելով ճեմարանը, Աբեղյանը հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է կարգվում Եուզվա թեմական դպրոցում: Այսուհետև նա դպրոցի մի քանի ուսուցիչներից կազմում է գրական մի շրջան: Այդ խմբակի անդամները գրական առարկը խնդիրների շուրջ հանդես են գալիս դասախոսություններով և մտքերի փոխանակությամբ: Այստեղ է, որ 1888-ին Աբեղյանը, նախ ունկնդիրների փոքր շրջանում, ապա առավել լայն հասարակության առջև առաջին անգամ կարգում է մեր ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռեր»-ի իր գրառած նոր պատումը, հիացմունք պատճառելով հանդիսականներին: Եուզիում Աբեղյանն աշխատում է ընդամենը երկու տարի, մի կարճ ժամանակամիջոց, որ, սակայն նրա կյանքում նշանավորվում է երկու կարևոր փաստով. նախ՝ 1888-ին այսուհետ լույս է տեսնում «Նմուշներ»-ը: Որն իր գրական-հասարակական արձագանքներով Աբեղյանին համոզում է վերջնապես ձևեր քաշել բանասերգություններ հորինելուց. և ապա հայտնի տարին (1889 թ.) Եուզիում լույս տեսած «Գավիթ և ՄՇեր»-ը, հայ ժողովրդական վեպի երկրորդ նշանավոր պատումը. որ մինչև այդ դրությամբ հայանի Գար. Սրվանձաթյանի առաջին ու միակ պատումից հետո, գալիս էր հաստատելու, որ հայ ժողովրդական նորահայտ վեպը ոչ թե պատահական կամ տեղական բնույթի մի սակզմագործություն է, սակայն Տարածին հատուկ, այլ մի համազգային վեպ, որ վաղուց է զուրս եկել Մշո կամ Սասնո սահմաններից ու դարձել Հայաստանի այլ զավանների սեփականություն: Ես: «Սասնա ծռեր» վեպի այդ նոր պատումը Աբեղյանը գրի էր առել Փեղզյան ճեմարանում սովորելիս՝ 1886 թ., ճեմարանի ղեկավար Գրիգորյանի նախապես (նախա բերել): Վեպի այս նոր պատումը իր գեղարվեստական ու կուլտուր-պատմական ակնհայտ արժանիքներով դրավում է ժամանակի գիտական մտքի ուշագործությունը:

Լեռն, որին հայանի էր հիշյալ պատումը Եուզիի գրական երկններից տակավին, 1888 թ. «Մշակ»-ում հանդես է գալիս մի գրախոսականով՝ զրավատելով նոր տարրերակի գրական արժանիքները: Ապա՝ «Գավիթ և ՄՇեր»-ի լույս տեսնելուց հետո Լեռն մի քանի օրանակ հոգվածով՝ մանրամասն վերլուծման է ենթարկում հիշյալ

1 Առ, Մի նոր հարստություն մեր ժողովրդական գրականության համար, «Մշակ», 1888, № 147.

2 «Նախնի գրականական և պատմական», 1890, դիրք 4, էջ 337—377.

պատմի գեղարվեստական հատկանիշները: Նույն թվականին Լեռն Սարգսյանը «Մուրճ»-ում դարձյալ զրավատելով Աբեղյանի հրատարակած տարրերակը<sup>1</sup>, մասնավորապես շեշտում էր պատմի գեղարվեստական կողմը, արժեքավորում այն և գտնում, որ «Աբեղյանի հրատարակած «Գավիթ և ՄՇեր» ժողովրդական դրամատիկական վեպը... մի շատ նշանավոր երևույթ է մեր գրականության մեջ»:

Ռուսական գիտական միտքը ևս, հանձին նիկողայոս Մառի<sup>2</sup>, բարձր է դնահատում Մ. Աբեղյանի պատումը, այն արժեքավորելով բարբառագիտական և կուլտուր-պատմական տեսականներից:

Այս նպատակով կարծիքները վերջնականորեն կողմնորոշում են Աբեղյանին իր նախասիրությունների մեջ: «Գավիթ և ՄՇեր»-ով նա ճանաչում է ձեռք բերում և ընդմիջում նվիրվում գիտությանը: Նույն իսկ տարին (1889 թ.) «Մուրճ» ամսագրում ըսկերում է լույս տեսնել Մանուկ Աբեղյանի անդրանիկ հետազոտությունը՝ «Ազգային վեպ» խորագրով<sup>3</sup>: Փաստը գալիս էր հավաստելու, որ Աբեղյանը չի մնում սույն ժողովրդական վեպը դրառողի և հրատարակողի դերում, այլ դառնում է վեպի առաջին ուսումնասիրողը:

1889 թ. Աբեղյանը, Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանի տեսուչ, իր երբեմնի ուսուցիչ Փիլիպոս Վարդանյանի հրավերով մեկնում է Թիֆլիս և ստանձնում վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչի պաշտոնը:

Վարժարանում պաշտոնավարելու շորս տարիների ընթացքում, մանկավարժական աշխատանքներին զուգընթաց Աբեղյանը լրագրային-հասարակական լայն գործունեություն է ծավալում Թիֆլիսում՝ իր գրական բախտը կապելով ժամանակի հայ նշանավոր պարբերականներից մեկի՝ «Նոր-դար»-ի հետ:

1889-ից սկսած Աբեղյանը պարբերաբար թղթակցում է «Նոր-դար»-ին, իր բուն ազգանունից բացի, հանդես գալով «Վարժարան», «Գիտավոր» և այլ կեղծանուններով: Նրա սկզբնական շրջանի լրագրային գործունեություն առանցքը ժամանակի հայ գրականության, լեզվի և թատրոնի հետ առնչվող հրատարակչության էին, որոնք արժարժեցում էին մասնախոսական ու թատերախոսական հոգվածներում: Գրանց մեջ դերասանների խաղի ու բն-

1 «Մուրճ», 1889, № 9, էջ 1459—1462.  
2 ЗВО русского археологического общества. т. IV, 1889, էջ 414.  
3 «Մուրճ», 1889, №№ 10, 11, 1890, №№ 1, 2:



մադրութիւնների վերաբերյալ և դրական որոշակի և ուշագրավ դիտողութիւններին հետ մեկտեղ առաջ էին քաշվում գրականագիտական ու թատերագիտական ընդհանուր տեսական խնդիրներ և հիմնականում ճիշտ լուսարեւոյում:

Արեղյանն այնքան սերտորեն է կապվում «Նոր-գար»-ի հետ, որ 1890-ից սկսած մինչև արտասահման մեկնելը վարում է «Նոր-գար»-ի մատենախոսական բաժինը. իսկ 1891—92 թվականներին, երբ թերթի խմբագիր-հրատարակիչ Սպանդար Սպանդարյանը երկարատե բուժման պատճառով մեկնում է արտասահման, Արեղյանը ստանձնում է «Նոր-գար»-ի խմբագրութիւնն ու անգամ հրատարակութունը՝ Նար-Գոսի, մեկ-մեկ էլ Մուրացյանի օժանդակութեամբ:

Թիֆլիսում աշխատելու տարիներին Արեղյանը գործուն մասնակցութիւն է ունենում նաև տեղի դրական-հրատարակչական աշխատանքներին: 1889 թվականից սկսած նա ընտրվում է Թիֆլիսի հայերեն դրքերի հրատարակչության խմբագրական մասնաժողովի անդամ: Այդ տարիներին եվրոպական և ուրս հեղինակներից Արեղյանը կատարում է մի շարք թարգմանութիւններ, որոնցից հատկապես աչքի է ընկնում Պոլի «Տարա Քուլան» (1892 թ.):

1890 թ. ամռանը Արեղյանը Թիֆլիսից գնում է Էջմիածին և իր նախկին աշակերտ նորընծա Գարեգին սարկավազ Հովսեփյանի հետ, բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով, շրջում է Արագածոտն գավառի գյուղերը, Սակայն մի քանի դրույ անցնելուց հետո, հիվանդանում է և վերադառնում Էջմիածին: Արեղյանը նպատակ էր հետապնդում հատկապես հայտնաբերել հայ ժողովրդական վեպի նոր պատումներ: Նույն նպատակով նա իր շրջադասութիւնները շարունակում է նախելահանում, Մեղրիում, Ղափանում և Գորիսում, բայց ոչ մի անդ վեպի որևէ պատում չի հայտնաբերում:

1 Ինչ չի հաջողվում Արեղյանին՝ հաջողվում է Գար. Հովսեփյանին, որն Ապարտեից և հարակից այլ գյուղերից, ինչպես նաև Էջմիածնի մոկացի գաղթականներից գրել է անտու ժողովրդական վեպի ութ նոր պատում և բանահյուսական այլ արեւեակոր նմուշների հետ միասին ԲՓշապետի ժողովրդական բանահյուսութիւնից խորագրով, 1891-ին ուղարկում է Թիֆլիս՝ Արեղյանին, օպագրելու: Վերքինս, ժողովածուն հատուկ զեկուցումով ներկայացնում է հրատարակչական մասնաժողովին, որը նպատակահարմար է գտնում սույնով օպագրելի վեպի միայն չորս նոր պատումները (երեքը՝ ոչ ամբողջությամբ). իսկ մնացած բանահյուսական նյութերը հրատարակել ասանկին: Հաջորդ իսկ տարին (ուչև նաևենում երկու ժողովածուներ

Արեղյանը լրագրային-հրատարակչախոսական ասպարեզ է իջնում 90-ական թվականներին, երբ արևելահայ հասարակական-քաղաքական կյանքում լուրջ հեղաբեկումներ էին կատարվում: Հասարակա-տեսական նոր հարաբերութիւնների արմատավորման հետևանքով հիմնական բեկում էր տեղի ունենում գաբերով սերբազործված ավանդական կենցաղի ու սովորութիւնների մեջ: Օտար զարչապարի տակ ճնշված ժողովուրդը կյանքի վերափոխութիւնների պատճառով ազգային ինքնգիտակցութեան արթնացման ու քաղաքականացման կազմակերպվելու բուն վերելք էր ապրում:

Հայ հասարակական միացը լուրջ խմորումների մեջ էր: Կյանքի նոր հոսանքը սպառնում էր հիմնահատակ կործանել ամբողջ հին ու ավանդականը: Առաջ էին գալիս ազգային-քաղաքական, հիստորակական, բնասնկան-կենցաղային և բարոյական հարաբերութիւնների Նոր ըմբռնումներ. ծնունդ էին առնում հասարակական-քաղաքական նոր հոսանքներ ու ուղղութիւններ: Հիմնադրվում են նաև ազգային-քաղաքական կուսակցութիւնները:

Այդ նոր պայմաններում առանձնապես մեծ դեր է ստանձնում հայ պարբերական մամուլը, մասնավորապես թերթերը, որոնցից լուրբանը շուրջ դառնում է հասարակական-քաղաքական որևէ ուղղութեան կազմակերպիչն ու զինավորողը, ուղղութիւններ, որոնք միմյանցից տարբերվում էին բուրժուական նոր հարաբերութիւնների նկատմամբ ունեցած իրենց հայացքով ու վերաբերմութեով: Բուն ազգային կյանքի ու կենցաղի վրա ի՞նչ չափով պետք է ազդեին թուր բնագավառներն իրենց անվերապահորեն նեթարկելու աշխույժ նշաններ ցույց տվող բուրժուական հարաբերութիւնները,— ահա այն կենտրոնական հարցը, որի պատասխանի բնույթն ու հատուցման շափերն էլ բնորոշում էին արևելահայ լրագրային, հետևաբար և հասարակական երկու հիմնական հոսանքների շամփարածանը: Եթէ լրերալ-բուրժուական «Մշակ»-ն ու իր հետե-

լի մեկը՝ «Փշապետ» ժողովրդական բանահյուսութիւնից, մյուսը՝ «Սասն ծառ»-ի խորագրերով: Մեր վեպի հիշյալ անվանումը, որ հետագայում ընդհանրանում է ու տարածվում, պատկանում է Արեղյանին: «Սասն ծառ»-ի Գ. Հովսեփյանի դրած ասաշարանի վերջում Արեղյանն անվազնում է վեպի անվան հարցի համարձակ հիմնադրում «Սասն ծառ» անվանակոչումը (տե՛ս «Սասունից Գավիթ», հայ ժող. կյուր, բերդոգրաֆիա, պրակ առաջին. կազմեցին Մ. Բաբայան և Մ. Թրքաչիան, Երևան, Գեահրատ, 1939, էջ XXXVI):





Շեշտելով ազգի ֆիզիկական ու հոգեոր կյանքի կազմակերպման մեջ ազգային մամուլի խաղաղի կարևոր գեղը, Արեղյանն առանձնապես մեծ տեղ էր հասակացնում ամսագրին, իբրև հասարակության կենսական խնդիրները լայն, հիմնավոր ու խոր ուսումնասիրելու և ուղղություն տալու լավագույն միջոցին:

Պարբերական մամուլին հասարակական նման կարևոր գեղ վերապահելն էր պատճառը, անշուշտ, որ «Նոր-գարս»-ի երիտասարդ հրատարակատեսը բուն կրթով գատապարտում էր մամուլի այդ սրբազան պարտականությունը շարաշահողներին:

Հասարակական բարձր դիմացկունքով օժտված հրատարակատեսը իր քննադատության անողոր սյաթն էր ուղղում լայն հասարակական խնդիրներն առօրյա նեղ անձնական հաշիվներով նենդափոխող մտայնության դեմ, որից առհասարակ շնչահեղձ էր լինում ժամանակի հայ պարբերական մամուլը: Եվ այդ, իրավունքով, Արեղյանը համարում էր այն մեծագույն թերությունը, որը ամբողջաբար անուշադիր է թողնում հասարակության բացերից միշտ խոտոզ պարբերական մամուլը: 1891-ին դրած իր երկու առաջնորդող հոդվածներում («Մեր պարբերական մամուլի դրությունից» և «Լրագրական կուսակցություններ»<sup>1</sup>) Արեղյանն անդրադառնում է հենց այդ հարցերին: Պարբերական մամուլի մեծագույն թերությունն Արեղյանը համարում էր այն, որ մամուլը հաճախ չի ծառայում ժողովրդի միտքն ու հոգին կրթելու, նրա վարքն ու բարքը ազնվացնելու բարի նպատակին, այլ օգտվելով ժողովրդի որոշ մասի անգիտությունից ու հասարակական վատ հակումներից, իշխում է մինչև փոքոցային ազնվարարների ու հայտնողների մակարդակը: «Մեր պարբերական մամուլի առաջին պակասավոր կողմը.— գրում է Արեղյանը.— ... էթն կարելի է աշտղես տան, հայհոյանքը, մեր մի կարգ թերթերի հայհոյելու արժանավորությունն է»<sup>2</sup>:

Նման թերթերը հասարակական սկզբունքային հարցերը վերածում են անձնական հաշիվների, դիպում և վիրավորում առանձին անհատների, հասնելով քեղհույ նրանց քննանկկան կյանքի խնդիրներին: Գատապարտելով մամուլին ու դրականությանը պատիվ չբերող բանավավի այդ արտատվող եղանակը, Արեղյանը մատնացույց է անում հայ պարբերական մամուլի մեկ

այլ արատ ևս. դա լրագրային կուսակցությունների, ավելի ճիշտ՝ թայֆաների գոյությունն է, որն, բայց Արեղյանի, սամեհամեծ լարերին էս: Բնավ չհերքելով լրագրային կուսակցությունների գոյության հասարակական անհրաժեշտությունը, Արեղյանը գատապարտում էր սուկ նեղ թայֆաներն ու թայֆախաղըրը, որոնք մեծ մնաս էին հասցնում հասարակական սկզբունքային պայթյունին:

«Լրագիրը, — գրում է նա, — ... յուր համակողմների դրոշակը պիտի լինի, որի շուրջը պիտի խմբվեն կուսակիցները. լրագիրը յուր համակողմների մտքի ու սրտի արտահայտությունը պիտի լինի, նա պիտի քարոզող հանդիսանա այն ամեն ձգտումներին, որ ունին կուսակիցները»<sup>3</sup>: Ընդ որում արգարքան է հասկանալի է այն կուսակցությունը, որն հիմնված է ազատ մտածողության վրա, և հարում են դրան հանուն զաղափարի ու հասարակական ձգտումների: Իսկ երբ որևէ կուսակցություն սչի բխում ազատ մտածողությունից, սեփական առողջ գաղափարությունից... չի բխում սեփական դադափարների, ձգտումների թևադրությունից — դա արդեն լրագրական կուսակցություն չի կարող լինել իսկական մտքով, այլ միայն լրագրական քայֆաներ»<sup>4</sup>:

Ահա, հասարակական այս արտաքի դեմ է քննադատության սյաթն ուղղում Արեղյանը, արատ, որի տարածման շրջանակները բովանկան լայն էին ժամանակի հայ իրականության մեջ, զգալապես վնասում էին ազգային-զաղափարական ուժերի համախրմմանն ու քեղհանուր շահերի միավորմանը:

Ահող, երիտասարդ սերունդը, որ ամեն մի հասարակության հիմքն ու ապագան է, մեծապես տուժում էր լրագրային թայֆաներից, չէր համախմբվում, չէր կազմակերպվում. դրանց ներկայացուցիչները առանց միմյանց հասկանալու խորշում էին միմյանցից, լարվում իրար դեմ:

Արեղյանը, որի համար թանկ ու նվիրական էին ազգային միասնությունն ու համախմբվածությունը, հասարակական շահերն ու ազնիվ խնդիրները, ցավ ի սիրտ գատապարտում էր կուրամտությունը լրագրական կուսակիցների, որոնք դարձին ոչ մի նշան ցույց չէին տալիս և չէին ձգտում սմի ավելի խոհեմ, ավելի համերաշխ հասարակական դործունեությանը:

«Ինչո՞ւ, ի՞նչուր մամուլամատ լինել գաղափար ու սպարդուն վե-

1 «Նոր-գարս», 1891, N N 140, 141, 142, 143, 144, 145:

2 «Նոր-գարս», 1891, N 140:

1 «Նոր-գարս», 1891, N 142:

2 Այդ:



ներով,— որովհետև էր Արեղյանը,— որոնք առանձակ տարիներին ընթացրում զբաղեցրել են մեր մտքերը և գրեթե ոչինչ օգուտ չեն բերել և ոչինչ չեն պարզել, բայց եթե զարգացրել են միայն մեղածում և ոչ ոք բաժանական սգին»<sup>1</sup>:

Ահա, ազգային ինքզինատեղեկության այս վերելքի շրջանում, էրք առաջին քան երբևէ հասարակականորեն առաջադրվում էր ազգային-բազմակերպական համախմբվածության կարևորագույն խնդիրը, Արեղյանը կանգնած էր զազափարական սկզբունքային համախմբմբ-վածության դիրքերում:

Արեղյանի խորին համոզմամբ, հասարակական կյանքի զարգացման տվյալ պայմաններում, երիտասարդությունը պետք է հասկանա, որ ժիժաղելի են այդ նեղմիտ, փթած կուսակցություններն ու նրանց վարած վեճերը, որոնք հասարակական ոչ մի անհրաժեշտություն չեն ներկայացնում: Նրա բարոզած զազափարական համախմբվածությունն, հարկավ, չէր ենթադրում զազափարական կուսակցությունների ժխտում: «Կուսակցական դրությունն անհրաժեշտ է,— գրում էր Արեղյանը,— բանի որ շատ խնդիրներում հայացքների տարբերություն կա. բայց այդ կուսակցությունները պետք է հիմնված լինեն ազատ, լայն մտածողության վրա, հետո այն կույր ստույգությունից և թշնամական հարաբերությունից, այն նեղհայաց հողուց, որ ունեցել են մեր կուսակցությունները և ունի զեռ գրանց մի մասը»<sup>2</sup>:

Արեղյանը կողմնակից էր զազափարական լայն ու սկզբունքային, անձնական ու թայֆայական նեղ շահերից բարձր կանգնած պայքարին:

Արեղյանի հրապարակախոսության մեջ կենտրոնական տեղ են գրավում ազգային-հասարակական խնդիրները՝ իրենց այլախյլ զրևերումներով:

«Նոր-գար»-ի մի քանի առաջնորդողներով՝ նա իրեն հատուկ շիտակությամբ ու անաչառությամբ զստապարտում էր հասարակական կեղծիքն ու փաստափրական տեսչից մղված ազգասիրական անակց ցույցերը:

Արեղյանը թուեռտ ծաղրի է ենթարկում ժամանակի կեղծ ազգասերներին կամ «գործիչներին», որոնք չիմանալով իրենց ազգն

ու նրա հոգսերը, իրենց «ազգային գործիչ» էին հռչակում, ավելի արվում, քան գործում:

1892 թ. ամռանը Քիֆլիսում և Անդրկովկասում մոլեզնում է ժամտախոր Արեղյանը «Նոր-գար»-ի մի քանի առաջնորդողներով (N N 116, 118) զիմում է հայ հասարակությանն ու կազմակերպություններին, ապով նրանց գործնական կույր ու խորհուրդներ, համաժողովրդական այդ աղետը կանխելու համար: Այդ առթիվ նա առանձին բնութայն առարկա է զարմնում նաև հայոց բարեգործության խնդիրն առհասարակ: Չհերբելով ընդհանրապես անհատներին ու առանձին կազմակերպություններին բարեգործությունների զրական արդյունքները, Արեղյանը, սակայն, ելնելով հասարակական տվյալ աղետի նկատմամբ հայ բուրժուազիայի անտարբեր վերաբերմունքից, խստագույն քննադատության է ենթարկում բուրժուական կեղծ ազգասիրությունն ու բարեգործությունը: Ելյդ սոսկ անունով մարդասիրությունը նա բացատրում է հարուստ խալիբին հատուկ դասակարգային հոտի բարբերով: «Ոչ մի բարեգործություն,— գրում է նա,— այնքան մեծ չի կարող լինել, որքան ծանր բուրժուական օգնել ժողովրդին, նրա նեղ վիճակը թեթևացնել»<sup>3</sup>. զտ, բատ Արեղյանի, ձեռնառու չէ հայ հարուստներին, քանզի նրանք աչդպիսի «ձգնածամբում» արած նվիրաբերությունը կորած բան են համարում: Նրանց նվիրած գումարները կծխած են կալմ ժամանակամիջոցում և իրենց կատարած բարի գործն ու անունը զրանց հետ կմոռացվի. միշդեռ փաստափրական տեսչերով բնված հարուստ բարեգործներին կեղծ անուն ու համբավ է պետքելով Արեղյանը մերկացնելով հայ բուրժուազիայի հասարակական բարեգործության բուն արմատները, կորակացնում է, թե ամեր հարուստները մեծ մասամբ անվան համար են անուն իրենց բարեգործությունը և ոչ... մարդասիրությունից զրզված և կամ հասարակությանն ու ազգին օգնելու զիտակցությունից»<sup>4</sup>:

Ազգային կյանքի սխուր նրկությունից էր զաղվականությունը, որ զարեր շարունակ պետական-բազմակերպ ինքնուրույն կյանքից զրկված ժողովրդի ուսերին ծանրացել էր իրեր մի ճակատագրական անեծք և մղում էր նրան բնաշխարհից հատվածաբար հեռանալ օտար հորիզոններ, պատապարվել օտար երկրներին օտակ, զզգալով հաճան, որ այդ թվացող ապահովությունը սկիզբն է միայն իր պատմական զժրտախտության: Ժամանակի մեծ միա-

<sup>1</sup> «Նոր-գար», 1891, № 144:

<sup>2</sup> Անդր.

<sup>3</sup> Անդր, N N 133, 136:

<sup>4</sup> «Նոր-գար», 1892, № 118:

վորների մեջ հայ գաղթականությունը գաղթավայրերում աստիճանաբար կորցնում էր իր ազգային ինքնությունն, տարրալուծվում էր իրեն իսկ հովանավորող ազգի ընդերքում, թողնելով իր ետևից միայն սրտամորմոք հիշատակներ: Ժողովրդին բաժին ընկած այս դաժան ճակատագրի դեմ էր աճա իր ծայնը բարձրացնում 1891-ին «Նոր-դար»-ի երիտասարդ խմբագիրը, ճակատագիր, որ շարունակում էր իրեն զրացնել տալ նոր ժամանակներում՝ ընդունելով նորանոր ձևեր:

Ազգային մեծ կամ փոքր սեղանությունները, որոնց միշտ էլ ենթակա էր հայ ժողովուրդը, Ռուսաստանում մասնավորապես սովորանում է XIX դարի վերջերին, երբ անգրկասպյան երկրները վաղուց էին արգեն ցարական Ռուսաստանի ձեռքն անցել: Բազմաթիվ հայեր Անդրկովկասից խմբերով գեմում էին այնտեղ, «սկզբբում իրեն պանդուխտ՝ շահելու և փող վաստակելու նպատակով, սպա նաև բնասանիքներով էին հաստատվում» և մնում մշտական բնակություն:

Արեղյանն իրավամբ, գաղթականության այդ հոսանքի մեջ տեսնում էր մի ամբողջ հայ հատվածի կործանում: «Մարգարև շպենտը է լինի մարդ,— գրում էր նա իր «Ավելի լավ է պանդուխտել, քան գաղթել» առաջնորդող հովվածում,— որ առաջուց կարողանա ասել, որ անգրկասպյան երկրի հայ գաղթականությանն, ինչպես է բոլոր գաղթականությունների համար էլ նույն վիճակն է սպասում, ինչ որ Պարսկաստանի, Հնդկաստանի, Իտալիայի և ուրիշ կողմերի հայ գաղթականություններին է եղել: Ի՞նչ են մնում այդ հարուստ և բազմամարդ հայ գաղթականություններից, եթե ոչ միայն զրանց կորչելու, անհետանալու պատմությունը և թերևս մի քանի ավերակ ու կիսականգուն, կամ ուրիշների ձեռքն անցած եկեղեցիներ... նույն այդ վիճակն է սպասում և անգրկասպյան հայ գաղթականությանը, եթե բանի ուշ չէ, միջոցներ ձեռք չստանալին այդ կորտաի դեմն առնելու համար»:

Եվ ինքն՝ Արեղյանը հարցը հարուցելով հանդերձ, գործնական միջոցներ է առաջարկում հայ գաղթականության հոսանքը Միջին Ասիա կանխելու համար, մի պարագա, որ թելադրվում էր մեր անցյալի պատմության ողբալի փորձով:

Որո՞նք էին այդ միջոցները:

Հայ գաղթականության կորստյան դիտավոր պատճառը հա-



Մ. Արեղյանի մայրը՝ Մարթա Արեղյան

1 «Նոր-դար», 1891, № 131:



Առասպառի Կարմիր վանքը

մարելով մայր հայրենիքից իսպառ կտրվելու հանգամանքը, Արեղյանը գաղթականությունը հակադրում է պանդխտությունը, որն ինքնին լինելով ևս ազգային շարիք, այլուամենայնիվ հայրենիքից կտրվելու մտանդ չէր առաջադրում: Ենթև հայը կտրված չի մտում յուր երկրից, — ավելացնում էր նա, — ինչքան երկար տարիներ էլ որ պանդխտության մեջ մնա, նա չի ոչնչանում, նա միայն պանդխտում է և վերջիվերջո վերադառնում է հայրենիք: Ջարդացնելով այս միտքը, Արեղյանը այն հիմնավորում էր նաև հին ու նոր գաղթների զրգադրամանների տարբերությունը: Եթե հնում գաղթներն ունեցել են մեծ մասամբ բազարական զրգադրամաններ, այսինքն գաղթել են հիմնականում երկրի բազարական անապահո՞նջությունների, սլատմական արհալիրների (ավերածությունների, սրածուխյունների) պատճառով, ապա նորերում հայերի գաղթը պատճառաբանվում էր մեծ մասամբ սոցիալական մղումներով, այսինքն՝ «Հայրենի երկրի անտեսական, նյութական անապահով գրություն» հետևանքով: Ուստի Արեղյանն իրավացիորեն գտնում է, որ նորոքյա սոցիալական զրդումներով պատճառաբանված գաղթները պատմականորեն իրենց չին կարող արգարացնել: Գրանք ժողովրդի բարոյալրման արտահայտություններ են, որի մի ընդհանրացումն է հանդիսանում «Որտեղ հաց՝ այնտեղ կաց» նամուրական, հակահայրենասիրական առածը, մի խորհուրդ, որն ըստ Արեղյանի «ավելի մեծ մնասներ է տվել հայ ժողովրդին, քան կանկ-բամուրների և Չինգիզ-խաների կոտորածները, սովերն ու ավերածությունները»:

Եվ քանի որ նոր գաղթը սոսկ սոցիալական անապահովվածություն էր պայմանավորված, ուստի Արեղյանը առաջարկում էր նախընտրել յարիքի փոքրագույնը՝ պանդխտությունը, «քան բնիկությունը, քան գաղթականությունը բնիկ, տեղացի լինելն ու օտար երկրում հաստատվելը»: Այսինքն՝ անզրկասպառ հայերը չպիտք է այնպիսի կայքեր հաստատեն «ալդ օտար երկրի հետ, որ այդ երկիրը դառնա նրանց նոր հայրենիքը և իրենք կտրվեն բուն հայրենիքից»:

Այս էր ահա Արեղյանի ճրտղարակախոսության բուն նպատակը՝ ժողովրդին պահել հայրենի երկրում, կանխել գաղթն օտար երկրներ և հայություն օտարացումը, մի ազնիվ նպատակ, որին



գին՝ որպէսզի լինի ժամանակի հայ հասարակական հոսանքներէ տարբեր ներկայացուցիչներ, իրենց հայացքներէ տարբերութիւնն անկախ:

Արեւոյանն իր մի շարք հոգովածներում անզրպառնում է նաև ազգային մի շատ ցավոտ խնդրի՝ սեփական լեզուն ու մշակութիւնը սրճամարտող այն հասարակական մտայնութեանը, որ նույնքան վտանգավոր էր հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար, որքան գաղթն ու ավերածութիւնները:

Հասարակական նոր հարարերութիւններէ զարգացման և ազգային ինքնաճանաչութեան բարձրացման հետ միասին հայ բուրժուական երիտասարդ մտավորականութեան մի մասի մեջ նկատելի էր ազգային նյութական ու հոգեւոր մշակութիւնի նկատմամբ մի արճամարհական վերաբերմունք, որ արդէոյնք էր այդ սերնդի օտար կրթութեան և դաստիարակութեան:

Այդ պարտները փորձուց իսկ մայրենի լեզվի փոխարեն թութովելով օտար բարբառներով, օտարազգի դաստիարակների խնայմարին ենթակա, իրենց հետագա կրթութիւնը դարձել շարունակում էին օտար միջնակարգ և բարձրագույն դպրոցներում, ուր հաղորդակցվելով եվրոպական և ռուսական համեմատաբար բարձր գիտութեանն ու կուլտուրային, բամահում էին իրենց սեփականը, այն համարելով հետամնաց ու միջնադարյան: Բացի այդ, ազգային լեզվով կրթութիւնն ստացած երիտասարդ մտավորականներէ շատերն ևս, առաջադիմ ու զարգացած երևալու մտախորտութիւններէ մզված, անդիտանում էին սեփական ազգի դարավոր մշակութիւնն, այն հայտարարելով «փոստ ու հին», իր զարն ապրած և ներկայի համար անարժէք մի բան: Այս վտանգավոր մտայնութեան դեմ էին ահա մագառում հայ ազգային-դեմոկրատական մտավորականութեան լավագույն ներկայացուցիչները, ի թիվս որոնց՝ Մանուկ Արեւոյանը:

Լինելով մեր հին լեզվին ու մշակութիւնն բարաստեղյակ, Արեւոյանը տարբեր առիթներով իր ապագիւր տարբեր ելույթներում անխնայ ձողում ու խարսկանում է սեփական լեզուն ու կուլտուրան արճամարտողներին, ցաղում այդ մտայնութեան տարածման համար, ոգևորվում երիտասարդութեան այն սակավաթիվ ներկայացուցիչներով, որոնք իրենց նվիրում էին սեփական ժողովրդի հոգեւոր մշակութի հետագոյնմանն ու արժեքավորմանը: Ճնորդորք 1890—92 թվականների մի շարք համարներում լույս տեսած մի շարք հոգովածներն ու մատենախոսութիւնները, որոնք

նվիրված էին հայոց լեզվի և գրականութեան հարցերին, նոր հրատարակված պատմա-գրական հուշարձաններին ու զեղարվեստական երկերին, Արեւոյանը բազմիցս անդրադառնում է հիշյալ խընդրին:

Մ. Խորենացու «Հայոց պատմութեան» Խորեն Ստեփաննի աշխարհարար թարգմանութեանը նվիրած մատենախոսակամում Արեւոյանը խստորեն դատապարտում է այն ազդեցութեանը, որ իշխում է հայ իրականութեան մեջ հայ գրականութեան նկատմամբ ադիտութիւնն, որից բխում է սեփականի արճամարհանքն ու ինքնաճանաչմանը:

«Մենք,— դրում է Արեւոյանը,—... ընդհանուր եվրոպական գրականութեան երկրպագուներ ենք, զիտենք դիտատեղ եվրոպական նշանավոր հեղինակների գովածները և նրանցով ոգևորվել սիրում ենք ծանոթանալ օտարների կյանքին և սովորել օտար լեզուներ: Իսկ մենք, մեր անցյալը, մեր մատենագրութիւնը, մեր լեզու,— դրանք ավելորդ են, մի՞թէ մինչև անգամ կարելի է դրանց մասին խոսք բաց անել»:

Կծու հեղինակը՝ ժողովելով ժամանակի ազգային նիհիլիզմը, Արեւոյանն իր բննադատական խոսքն է ուղղում այն ազնա նորամուրիներին, որոնք մեր հին մշակութիւնն նկատմամբ ունեցած իրենց անտեղյակութեան հետեանքով թուր ու մուր էին թափում դրաբար լեզվի ու մատենագրութեան վրա, դրանք համարելով հին ու հետադիմական: «Մեզնում ախրում է մի ընդհանուր անտարբերութիւն դեպի այն, ինչ մերն է».— ցաղով ընդգծում էր Արեւոյանը, նկատի ունենալով ժամանակի մտավորական որոշ շրջաններում իշխող ինքնաճանաչման այլանդակ մտայնութիւնը:

Արեւոյանն անցյալի իմացութիւնն ու ուսումնասիրումը պատահական բան չէր համարում, այլ ներկայով թեւազրկած անհրաճելիութիւնն. ներկան ըմբռնել կարողանալու և առաջնորդելու համար, անհրաժեշտ է անցյալի իմացութիւնն, անցյալ կյանքի փորձերի հաշվառում: Ահա թե ինչու է նա այնքան կարող ու որոշակի դնում մեր հին գրականութեան ուսումնասիրութեան հարցը: «Մենք մեր մատենագիրներին ուսումնասիրութիւնը բարձիթոյի ենք արած, մինչև անգամ մի արճամարտված գրութեան մէջ ենք դրած... մատնանել է արդեն զգատութեան գուլ և լուրջ կերպով նայել մեր



գրարարի, այսինքն մեր հին մատենագրության ուսումնասիրության վրաս<sup>1</sup>։

Ցարիզմի և հեղափոխության նկատմամբ հայ հասարակության և ազգային կուսակցությունների վարելիք բաղադրականության հարցըն է, ապա, որ շուշափում է Մանուկ Արեղյանը իր հաջորդ՝ 1905-ին հրատարակած «Պետք է պարզել թե ինչ են ուղում» հողվածում: Ըողվածը արձագանքն ու դարգացումն էր «Նոր-գարս-ի 1905 թվականի նոյեմբերի 6-ի «Ե՛նչ են ուղում մենք» առաջնորդողի, ուր թերթն իր հիացումներն արտահայտելով հեղափոխական շարժումների վերելիք նկատմամբ, միաժամանակ զոհնակուրբար էր ընդունում ցարիզմի նկատմանը մանիֆեստն ու սահմանադրական բարեփոխությունների խոստումները: «Նոր-գարս-ը» նավատարիմ իր զողւշավոր ու պոհպանողական դավաններին, դանում էր, որ ցարական կալուրության հպատակ հայ ժողովուրդը չպետք է հետևի մանիֆեստից զծրոհ՝ ծայրահեղ կուսակցություններին, այլ իր սեփական դիրքը մշակի կառավարության խոստացած բարեփոխությունների հանդեպ և ձգտի իրադործել տալ թղթի վրա կրած սահմանադրական խոստումները: Իրավացի համարելով «Նոր-գարս-ի հարցադրումը, Արեղյանը միոժամանակ որոշակի առաջ է բաշում պատմա-հեղափոխական տվյալ փուլում հայ ժողովրդի ու նրա ազգային կուսակցությունների վաշելիք բաղադրականության բովանդակության ու բուսյլի հարցը: Նրա կարծիքով հայոց ազգային բաղադրականությունը «պետք է բխի մեր դարերի պատմությունից» և «մեր այժմյան ընդհանուր ազգային դրությունից», այսինքն արդի բաղադրականությունը պետք է ունենա պատ-

1 «Նոր-գարս», 1906, № 2:



մական հիմք ու արդարացում: Իսկ բանի որ ազգային քաղաքակա-  
նություն մշակողներն ու իրադրոթոզները հասարակության առաջ-  
նակաբղ խմբավորումներն են, այսինքն կուսակցությունները, ուս-  
տի և նա անցում է հայ ազգային կուսակցությունների ազգային-  
քաղաքական գործունեության գնահատությանը: Հայ ազգային քա-  
ղաքականության բնագավառում Արեղյանը տվյալ պահին աես-  
նում էր քաղաքական նրբ տարրեր ուժեր ու խմբավորումներ, զը-  
բանցից մեկը՝ Գաղափարական էր, մյուսը՝ Հնչակյանները, իսկ  
նրբորդը՝ ազգի սովոր մեծամասնությունը, հասկացող ու զորքի  
մարդոց մի սովոր բաղմություն, որ ոչ Հնչակյան անունն է ուզում  
կրել և ոչ գաղափարական: Այդ նրկու կուսակցությունները համար  
ուժեղ պայքար են մղում իրար դեմ, իսկ անկուսակցական մեծա-  
մասնությունը «չուր մեջ ունի և սնուցանում է մի խուլ զգոհու-  
թյուն այդ կուսակցությունների դեմ, և այդ զգոհությունը գնալով  
մեծանում է»<sup>1</sup>:

Ազգային-հասարակական այս երեք խմբակցություններից Ա-  
րեղյանն առանձնացնում է կրթորդը՝ անկուսակցական գանդիս-  
տներին, որոնք իրենց անկազմակերպվածության պատճառով չունեն  
որոշակի ծրագիր. ուստի նա նշված նրկու կուսակցություններից  
այսօրանցում է հրապարակել իրենց «հավատամքը», իրենց քաղա-  
քական նպատակներն ու ինքիքները, որպեսզի մոզովրդի համար  
պարզ լինի, թե իրենցից ինչ են ներկայացնում այդ կուսակցու-  
թյունները և ինչի են ձգտում դրանք:

«Մեզ ասում են, թե Հնչակյան կուսակցությունը սոցիալ-դե-  
մոկրատական է, ավելի միջազգային ձգտումներով... Մենք չցի-  
տենք այդ, այլ միայն լսում ենք և լսածն էլ որոշ չէ մեզ համար:

Մյուս կողմից մեզ ասում են, թե «Գաղափարական» բուն  
ազգային կուսակցություն է, բացառապես ազգային նպատակնե-  
րով և հենց դրանով է տարբերվում Հնչակյան կուսակցությունից:  
Մենք այդ ևս հաստատ չգիտենք, այլ միայն լսում ենք. չցիտենք  
մասնավոր, որ կարևորն է, թե ինչպիսի հայ ազգային կուսակցու-  
թյուն է»<sup>2</sup>:

Այս իրավացի դիտողությունները, որ վկայում են տվյալ կու-  
սակցությունների մոզովրդական գանդիստներից կտրված լինելը,  
տրամաբանորեն առաջադրում էին կուսակցական ծրագրերի քա-



Մ. Արեղյանը կնիքածնի Գաղափարականի սան (1878)

<sup>1</sup> «Նոր-գար», 1906, № 2:  
<sup>2</sup> Անդր.





Մ. Արևիյան (1903)

ցահայտման և մասսայականացման, ինչպես նաև կուսակցություն  
նպատակների պարզարանման պահանջը: Վժժմանակ է վերջապես,  
որ հայտնի լինի հայ հասարակությանը, ըն ի՛նչ են ուզում յուր  
կուսակցությունները: Փամանակ է վերջապես, որ քննադատության  
անձին նրանց ծրագիրները, և նրանց հետևողները գիտակցորեն  
վերաբերվեն դեպի իրենց սիրած գործը և ոչ լուկ անվան համար ի-  
րար դեմադրեմ կանգնեն: Հայ ազգային բազմաթիվ կոմիտե-  
ությունների նպատակների ու խնդիրների պարզարանման հարցա-  
պնդումով Արևիյանը հետամտում էր հայ ժողովրդի կենսական  
շահերին իր կուսակցությունների ծառայելու խնդիրը: Ազգային  
կուլամբ կուսակցությունը օպիտի գործն հայ ազգի շահերն ի նկա-  
տի անկախով և ամեն մի որոշում ու որո՞ծ պիտի անցկացնի հայ  
ազգի գոյության և նրա կուլտուրական զարգացման շահերի բովում:  
Ուրիշ տեսակ մենք չենք հասկանում Ազգային կուսակցություն հա-  
յերիս համար:»

Առաջնորդվելով նման էլպդով և ձայնակցելով «Նոր-դար»-ի  
վերահիշյալ առաջնորդին, Արևիյանը ազգային կուսակցության  
շահախնդրություններից դուրս է համարում մասնատրական հա-  
սարակարգի շրջանակներում Ռուսաստանի պետական կարգի փո-  
փոխման հարցը: Մասնավորապես քննադատելով գաշնակներին  
Ռուսաստանի միապետության դեմ հանուն հասարակապետության  
նրանց մղելիք պայքարի համար՝ Արևիյանը գտնում է, որ «հայ

1 «Նոր-դար», 1906, № 2:

2 Անդ:

3 1904 թ. նոյեմբերին Փարիզի լատինական թաղամասում դրամորդում է  
Ռուսաստանի հեղափոխական և դեմոկրատական կուսակցությունների առաջին գաղտնի  
խորհրդակցությունը՝ Միլյուկովի նախագահությամբ: Այստեղ ի թիվս այլ սոցիալ-դե-  
մոկրատական ու ազգային կուսակցությունների մասնակցում է նաև Պաշենկեցու-  
թյունը: Խորհրդակցությունը միասին որոշում է, ա) բնագործության ոչնչացում,  
բ) միապետության փոխարենում ազատ-դեմոկրատական կարգերով հիմնված ա-  
զատ ընտրությունների միջոցով, գ) ազգային ինքնորոշման իրավունք, սեփական  
կաշառավորում ազգային զարգացման ազատության բոլոր ժողովուրդների համար:  
Այս նպատակների իրագործման համար էլ բուրժուա-դեմոկրատական ու ազ-  
գային կուսակցությունները միավորում են իրենց ուժերը: Այդ խորհրդակցությունը  
և Պաշենկեցու ժամում է Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների  
և շարժումների որոշող, գաշնակցելով Հասարակական կուսակցության և ընդ ազգային սո-  
ցիալիստներին Իսկ 1905 թ. մայիսին ժնկում հրախրված Պաշենկեցու ժամում հու-  
սակցության խորհուրդը փոխում է Պաշենկեցու III համագումարի (1904 թ.)  
բնագործում «Վոլկայան նախագիծը» և որոշում է «Վոլկայան շարժման հարցում  
ինքնազատագրության շրջանից անցնել բուն հեղափոխական գործունեություն:

«Ազգային» կուսակցության համար այդպիսի աշխատանքն ու նը-  
պատակը ոչ միայն անպետք է... այլև վնասակար: Անպետք է դա,  
որովհետև մեր ազգային շահերին, մեր զոյաբնության ու զորադրաման  
համար ոչնչով ավելի նպաստավոր չի լինիլ մի հասարակագիտա-  
կան Ռուսիա, քան մի սահմանադրական Ռուսիա. մի հասարակա-  
ցիտական Յրանսիա շատ ավելի է աշխատում Ֆրանսիացինէլ Այ-  
միրը, քան մի սահմանադրական Անգլիա յուր որևէ գաղութը: Պատմական ակադեմիոյ, հարկավ, Արեւելանն արդարացի էր, քան-  
չէն ազգային փորձամասնութիւններին ձեռնումն ու շահագործումը  
էական սնչով չէր փոփոխիլ մասնաւոր կարգիտալիտատական հա-  
րարերութիւններին ստիւյաութեան պայմաններում պետական-կա-  
ռավարչական տարրեր սխտաններին փոփոխութիւնից: Ուստի և  
փոքր ու ճնշված ազգի կուսակցութեան ձեռող ազգի պետական  
կարգի փոփոխման համար մղած պայքարը Արեւելանը վնասակար  
է համարում: «Վնասակար է դա, քանի որ ամենայն ջանք ու զոր-  
ծունեութիւն, որ հայ ազգի սահմանական անմիջական անհրաժեշտ  
պահանջից չի ծաղում, իրար վատնված ուժ է դառնում, էլ չենք աս-  
ում, որ այդպիսի ձգտումը, որ ոչնչով չի նպաստում մեր զոյա-  
բնան ու զարդացման խնդրին, իրար մեր դնւ է կանգնեցնում ռուս  
ազգի ահազին մեծամասնութիւնը, որ կատաւարութիւն, առանց  
թաղա՛որի կրեակայել չի կարող»<sup>1</sup>:

Արեւելանի այս տեսակետը, որ թելադրված էր դարերի պատ-  
մական փորձով, միաժամանակ և պայմանավորված էր տվյալ  
պատմական պահով, այն իրագրութեան, որ ստեղծել էր զարկով  
Անդրկովկասում իր հայահալած բաղաբանականութեամբ, խաղաղ ազ-  
գաբնակչութեան ազգամիջյան վանձվածաբար կոտորածներով:

«Մեր բաղաբանական դրութիւնն այս րոպէիս այնպէս է,— գրում  
է նա,— որ չենք կարող ոչնչագրութեան շտնել, թէ ինչ կուսան մեր  
ուս կամ այն կարծիքի համար ռուս ժողովրդի և առհասարակ ռուս  
ազգի մեծամասնութիւնը և նույնիսկ այժմյան կատաւարութիւնը  
ինչը՞ առանց որևէ շրջափոխի օդաի մեր դնւ կանգնեցնել ռուս  
ազգի մեծամասնութիւնն ու կատաւարութիւնը»<sup>2</sup>:

Սակայն այդ որոշումը մեծ է թելի վրա, որովհետև զաւր զեպրիցը, հասկացի-  
կովկասյան հայ-արքերէական ընդհարումները Պաշկեպոյան ուշադրութեան  
տարողայնս կենարտագնում են ազգամիջյան կոիվերին:

1 «Նոր-գար», 1906, № 2:

2 Անդր:

Արեւելանի բաղաբանական արամաբանութեանը աչքի էր զարնում  
իր պահպանողական սահմանափակվածութեամբ, մասնավորապէս  
«ազգային» և «միջազգային» հասկացութիւններին միջև խիստ սահ-  
մանադատում դնելիս: Եվ այդ ան ժամանակ, երբ ռուսական  
մարքսիստական սոցիալ-դեմոկրատիան Անդրկովկասում արդեն  
յուրը բաղաբանական-բաղաբանական միտքը և իր միջազգային բնութիւ-  
նը պակաս չէր անօրինում ազգային փորձամասնութիւններին իրավա-  
բաղաբանական խնդիրը դեմոկրատական հեղափոխութեան մեջ, քան  
ազգային կուսակցութիւնները: Բայց Արեւելանն արդարացի էր, երբ  
ազգային բաղաբանականութեան մեջ կարևոր արժեք էր տալիս պատ-  
մական իրավացիութեանը, այսինքն այն բանին, թէ ազգային քա-  
նաքակտելութեանը պետք է համապատասխանի անցյալի և արդի  
պատմութեան զարգացման ընթացքին: «Պատմութեան հակառակ  
գնալ չի լինիլ,— գրում է նա,— և հակառակ գնացողը շատշատ  
կատա՛ի»: Իսկ պատմութիւնը մեզ կապել է երկու ազգի հետ. մեկը  
մեր դարավոր թշնամին է, որ ինչհարյուր տարուց ի վեր առանց  
բազանակերթիկիւր, բարբարոսական միջոցներով զուր է ըլում մեզ  
մեր բնիկ երկրից, կոտորում է մեզ, որ մեր տեղը բռնի, և արդեն  
կիսով չափ բռնել է մեր տեղը... Մենք մենակ մեր ուժերով անզոր  
ենք այդ թշնամու դնւ... Ինչհարյուր տարվա մեջ ոչ այդ թշնամին  
հաշտվեց մեզ հետ, և ոչ մենք համակերպվեցինք մեր ստրկական  
վիճակին...»

Մյուս կողմից պատմութիւնը մեզ կապել է մի ուրիշ մեծ ազգի  
հետ, այն էլ մեր պայտին ցանկութեամբ: Ռուսիան մեզ բերել է  
կայերի ապահովութեան և բաղաբանակրթութեան և ազգի աճում:  
Քանի նրա իշխանութիւնը կա Կովկասի սահմաններում և մեր  
ձայնատանում, մենք հուշս կունենանք, թէ կապերենք և կանենք:  
Վերացավ այդ իշխանութիւնը, և մենք կատանանք այն դրութիւնը:  
որ ունենէք հարյուր տարի առաջ, որ ունեն այժմ հայերը Թլուրբիա-  
յում, և ավելի ես վատ: Մենք պիտի հետզհետե բնկենք, ինչպիս  
որ գարեր շարունակ ընկել ենք:

Ռուսական իշխանութիւն և զորեղ իշխանութիւն մեր կրկ-  
նում,— ահա թէ ինչ պիտի լինի մեր ազգային բաղաբանականութեան  
հիմնարարը: Պետք է խոստովանել այս և առանց բաշխելու բացար-  
ձակ քարոզելը»<sup>3</sup>:

3 «Նոր-գար», 1906, № 3:



Հայ ժողովրդի ազգաց գոյութունն անզամ կապելով Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հետ, Արեղյանը ոչ միայն չի հերքում ցարիզմի ոստիկանական ռեժիմի ու ազգահալած բազարակառնության անկախությունը, այլև կոչ է անում անողոր պայքար մղել դրանց դեմ, որ ազատում է մեր ազգային գոյությունը: «Բայց այդ չէ նշանակում, — շարունակում է Արեղյանը, — թե պիտի թույլ տալ, որ ռուսաց կառավարությունը յուր հոգը թախտով, յուր կարող կրող մեզ ոչնչացնի, մեր լեզուն և ազգային բազարակրթությունը խեղդի: Փակելու անուսաց կառավարությունը ազատ կթողնի մեզ մեր ազգի գոյությունը պահպանելու, իբրև Հայ առաջադիմելու, մենք ամբար պիտի բռնենք Ռուսիայից և սրտով հարգենք նրան»:

Արեղյանը խտրող ապրքեական է միմյանցից ռուսական (իմաստ ցարական) ռեժիմ և ռուսական պետություն հասկացությունները:

Ռուսաց պետության մենք միշտ բարեկամ պիտի լինենք, — գրում է նա, — այլ բան է դեպի կառավարությունն ունեցած հարաբերությունը: Պետությունը մնալուն և հաստատուն է, իսկ կառավարությունը՝ փոփոխական... կճշդի մեր հայությունը ռուս կառավարությունը, և մենք կլինենք նրա իշխումին, ազատ կթողնի մեր ազգությունը, և մենք ոչ մի թշնամական հարաբերության պատճառ չունինք ու բարեկամ պիտի լինենք նրա հետ:

Իսկ ռուսաց պետությունը մենք միշտ պիտի ցանկանք, որովհետև մեր երկրում մենք առանց այդ պետության ապրել չենք կարող: Այս պիտի լավ հասկանանք և այս պիտի լինի մեր ամեն ազգային մասնությունն այլև ուրիշ»:

Այսպես, ուրեմն, ցարիզմի հայահալած բազարակառնության պայմաններում անզամ, երբ շատ գյուրազայիներ երևա էին շուտ ապիտ Ռուսաստանից, Արեղյանը պատմության դարգացման րունը բնթացքն ու ապագան նկատի առնելով Ռուսաստանի հետ միավորված մնալու մեջ էր աեսնում հայ ժողովրդի ազատով կյանքի ու դաւիրքի:

Հայ ժողովրդի հոգևոր կերտվածքի նորոգման և ազգային ինքնապահպանման գաղափարները տալիկ նոր ու որոշակի դրսևորումներ են գտնում Արեղյանի ճեմարանական շրջանի վերջին տարիներին հրատարակախոսություն մեջ: Արեղյանի այդ շրջանի հրատարակախոսությունն ամփոփվում է և ավարտվում 1910 թ. «Շորի»

դրսևում լույս տեսած «Մեր դարացական կյանքից» ժամայուն հոդվածաշարով, որ իր շոշափած հարցերով կարևոր երևույթ էր ժամանակի հայ մտավորական կյանքում: Հոդվածաշարի շարժառիթը նույն թվականին, նույն թիվերում լույս տեսած Հովհ. Քումանյանի Սո. Մայրապետացի և Մանուկ Արեղյանին ուղղած «Նայանքն չգիտենք» բաց նամակն էր, որ րանհատեղոր տազնադած՝ ճեմարանը, ներսոյան ու թեմական դպրոցներն ավարտած հայերենի ուսուցիչներին մարենի լեզվի ահավոր տղիտությունից, ժամանակի այդ նշանավոր հայկաթաններեց երևույթի պատճառներն էր փորձում իմանալ:

Հայոց լեզվի ուսուցիչներին մարենի լեզուն լավ չտիրապետելու փաստը Արեղյանը հիմնավորում է հասարակա-բազարական և սոցիալ-կենցաղային լուրջ դրացապատճառներով: Աստղին պատճառը նա համարում է ցարիզմի վարած ոստիկանական բազարակառնությունների և մանավանդ հայ լեզուն և մշակույթը: Ի՞նչ խոսք կարող էր լինել հայոց լեզվի լավ տիրապետման մասին, երբ այդ կանոնի նկատմամբ ոչ մի արտոնություն չէր վայելում: Մինչդեռ ռուսական զիմնադիաներում ռուսերենը օգտվում էր բացարձակ արտոնությունը. ռուսերենից կտրվողներին այլևս չէր թույլատրվում ուսումը շարունակել: Իսկ հայերենը ոչ իրայն նման ստավություն չունեի, այլև հավասարազոր էր դասվում մյուս առարկաներին. և քանի որ դրանց դրվածքը շատ թույլ էր հայկական դպրոցներում, ապա թույլ էր նաև հայոց լեզվի դասավանդումը: Ետևորաբ, Արեղյանը հայոց լեզվի վատ ուսուցման մյուս պատճառը բացատրում էր հայ իրականության մեջ դպրոցական գործի բնզանուր թույլ դրվածքով:

Գևորգյան ճեմարանում, օրինակ, հայոց լեզվի ուսուցման վասթարացումը մասամբ տեսնելով երկրի բնզանուր սոցիալ-բազարական իրադրություն (հայ եկեղեցական գույթի և կալվածքների բռնադատվում, ռուս-ճայոցական պատերազմ, հեղափոխական շարժումներ, ցարական դաժան ոնակցիա), մասնավորապես գրա հիման վրա ծագած աշակերտություն հուզումների ու խռովությունների մեջ, Արեղյանը սակայն մյուս կողմից կարևոր տեղ էր

1 ՅՄ «Շորիգան», 1910, №№ 191, 193, 194, 197, 202—204, 207—208:

2 ՅՄ «Շորիգան», 1910, № 191:



հատկացնում ճեմարանում տիրող արտադրող պայմաններին (ճեմարանի տեսուչների և մանկավարժական խմբի համախափ փոփոխում, աշակերտների ընդունելության և տեղաբաշխման արդարինի եղանակներ, հայտք լեզվի գասայանդաման թույլ զրվածք և այլն):

Հայկական դպրոցներում հայտք լեզվի զրվածքի թուլությունը Արեղյանը բացատրում է մի շատ ուշադրավ հանգամանքով ևս:

Նա ցավով նշում է, որ մինչև 1906—1907 ուսումնական տարին հայտք լեզու ասելով մեր դպրոցներում դրաբարն էին հասականում: Լեզվի նկատմամբ մեղանում եղած այդ հնամուխական ըմբռնումն է եղել մասամբ պատճառը, որ թերուզնահատվել է կենդանի հայերենի ուսուցումը և այն փոխարինվել մեռած գրաբարով, որից աշակերտները շատ բան չէին հասկանում: Մինչդեռ «Հայերենի ուսում ասելով,— գրում է Արեղյանը,— այսուհետև պետք է հասկանալ աշխարհաբարի, կենդանի հայերենի ուսումը, այն հայերենը, որ կյանքի ու գրականության մեջ պետք է զարթուի: Նա առաջարկում է, որ հայկական դպրոցներում «մինչև աշակերտի ավարտելը լինի հայերենի—արևելյան և արևմտյան աշխարհաբարի ուսում: Եթե այսպես չլինի, ես հավատացած եմ, որ այսուհետև ևս մեր աշակերտների հայերենը միշտ թույլ կլինի»<sup>1</sup>:

Իր այս տեսակետն ավելի առաջ տանելով, Արեղյանը գտնում է, որ աշխարհաբարի ուսուցման հետ միատեղ պետք է փոփոխել «նաև հայտք գրականության ծրագրերն ու զասատվության եղանակը»: Նրա խորին համոզմամբ «հայերենի ուսումը բարձրացնելու համար՝ պետք է... ուժ տալ աշխարհաբարին և աշխարհաբար գրականությանը»:

Այս խնդրում դարձյալ երևան է դալիս Արեղյանի՝ ազգի հողոր նորոգման և վերածննդի ձգտումը: Հայտք լեզվի և սոցաասարակ ազգային ոգու մշտատևության խնդրում նա իրավագործն կարեոր տեղ էր հատկացնում բոլորին հասկանալի կենդանի հայերենին և նրանով ստեղծված նոր ու թարմ գրականությանը, որ փոխարինելու էր մեռած ու շատ քերթին մատչելի գրաբարին: Ազգային զրույթության պահպանության ու վերածննդի համար «իրավի մեծ նշանակություն ունեւր նորոգ լեզուն և նոր ու թարմ գրականությունը: Այդ չէր նշանակում, հարկավ, թե Արեղյանը մերժում էր սոցասարակ հին լեզվի՝ գրաբարի ուսուցումը: Ընդհակառակը. նա

պարտադիր էր համարում գրաբարի ուսումը դպրոցներում, բայց այնքանով միայն, որքանով այն նպաստելու էր աշխարհաբար ասուով լավ բմրոնելուն և յուրացնելուն: Բայց այդուամենայնիվ «ինչքան մեծ է գրաբարի նշանակությունը,— գրում է Արեղյանը,— աշխարհաբարի և աշխարհաբար գրականության տեղ չպիտի զնել գրաբարն ու գրաբար գրականության ուսումը... Մեր դպրոցներում սկզբից մինչև վերջն իշխող պիտի լինի աշխարհաբարը»<sup>2</sup>:

Հայերեն լավ չսովորելու և սոցասարակ հայերեն չիմանալու «ընդհանուր թուլության էական գյատճառը» Արեղյանը համարում է արհամարհանքը սեփական լեզվի նկատմամբ: «Դա մեր կյանքի ամենազավաղագու կողմն է»,— գրում է նա, որ դնալով խորանում և այլևնալակ ձևեր է ընդդնում:

«Մի՞թե կարելի է դատապարտել մի աշակերտի,— գտնացած նկատում է նա,— որ լավ գրաբար սովորել չի աշխատում, երբ նա տեսնում է, որ հազարավոր հայ տղայք, գիննադիայի աշակերտներ և ուսանողներ, նույնիսկ բարձրագույն ուսում ստացած հայտգրի տղամարդիկ ու շատ կրթված հայ կանայք ոչ միայն գրաբար մի տող չեն հասկանում, այլև հայերեն չգիտեն իրենց իմացածի բառորդի լափ, ոչ միայն հայերեն լեզվով երկու տող գրել չգիտեն ու չեն գրում, այլև հայերեն լեզվով կես ժամի լափ մի հասարակ դրուցատույթություն անել չեն կարողանում: Ոչ միայն այդ կրթվածները հաճախ բառի բուն նշանակությամբ հայերեն չգիտեն, այլև ավելորդ են համարում իմանալ: Եվ գրում և խոսում են գրանք ուրիշ լեզուներով, և ամոթ չէ համարվում այդ, այլ իրերի բնական գրությունն»: Եվ երբ հայ աշակերտը իր շրջապատում տեսնում է, որ իրենց «հայ կրթվածներ, հայ առաջավորներ, հայ ազգասիրներ» համարող «ինտելիգենտներ»-ը հայերեն չգիտեն ու արհամարհում են այդ լեզուն, կարո՞ղ է արդյոք սիրել հայերենը, հետաքրքրվել նրանով և խորանուխ լինել նրա մեջ:

«Ահա թե ո՞րտեղ է մեր աշակերտների հայերեն լավ չգիտենալու ամենամեծ պատճառը: Ինչի՞ պետք է նա հայերեն լավ իմանա, երբ հազարավոր «կրթվածները» հայերեն չգիտեն ու չեն խոսում և ամոթ չէ համարվում այդ»: Ազգային-բարոյական այս այլախմբական ծրագրերը իր շրջապատից են արածել նույնիսկ հայ կրթվածն օջախների՝ դպրոցներն ու ճեմարանը, սրտնը կոչված

<sup>1</sup> «Շորիգոս», 1910, № 204:

<sup>2</sup> «Շորիգոս», 1910, № 204:

էին լինելու հայ լեզվի ու ոգու կռան դարբնոցները: Հայկական զգրոցներում հաճախ բավարար չափով հայերեն լիմացող ուսուցիչները սովորեցնում, այս ուսուցիչների մի մասն իրենց գավակներին այլազգի զգրոցներ կրթութեան տան ու նրանց հետ մայրենի լեզվով շտապելու փաստերը Արեղյանն իրավամբ համարում է «աշակերտներին հայերենի նկատմամբ պարզապես անբարոշականացնող մի գրութուն»<sup>1</sup>:

Եվ այդպես, զգրոցներում հայոց լեզվի թերուսուցումն ու աշակերտների հայերենի թերիմացությունը Արեղյանը հիմնականում պատճառարանում է հասարակական կյանքի հանգամանքներով, զգրոցը համարելով այդ կյանքի մի բաղկացուցիչ օղակը:

«Ինչ որ մեր կյանքի մեջ կա,— գրում է նա,— նույնը պիտի լինի և մեր զգրոցի մեջ: Քանի կյանքի մեջ հայերենն արժամարհված է, մեր զգրոցում կարգին հայերենի ուսում չի կարելի տալ ընդհանրապես»:

Սակայն Արեղյանը բնավ էլ այն կարծիքին չէ, թե հասարակական կյանքի հանգամանքներով պայմանավորված ուսումնակրթական գործը չի կարելի բարելավել առանց հասարակական կյանքը փոխելու: «...Կյանքը փոխելն իհարկ է մեր ձեռին չէ,— նկատում է նա,— բայց մենք կարող ենք զգրոցն այնպես կարգավորել, որ արտաքին ազդեցությունները գոնե պակասեն և համեմատաբար ավելի լավ հայերեն սովորեն մեր աշակերտները»<sup>2</sup>:

Բնական է, որ բարենորոգման անհրաժեշտության տեսական հիմնավորմանը հետևելն նաև գործնական առաջարկները: Եվ Արեղյանը առաջադրում է դրանք: Այդ հիմնականում երեք տարի առաջ Խորմյան Հայրիկին ներկայացրած ձեմարանի ուսումնական զրվածքի բարեփոխության իր ծրագիրն էր, համարված հատկապես հայոց լեզվի հարցն ու ուսուցումը զգրոցներում պատշաճ բարձրության վրա դնելու նոր առաջարկներով:

Գրոցական գործի և մասնավորապես հայոց լեզվի ուսուցման բարելավման խնդրում Արեղյանի մղած բարենորոգչական պայքարը, եթե մանկավարժական տեսակետից պատմական կարևոր արժեք էր ներկայացնում, հատկապես զգրոցական կարգիքի զեմտրոստականացման և մայրենի լեզուն առաջնակարգ առարկա դարձնելու, նրա ուսուցումը կատարելիզործելու միտումներով, ա-

պա հասարակական-բողաբացիական առումով այն ազգային-բազարական վերանորոգման ձգտումի մի այլ արտահայտությունն էր, որ նպատակ էր հետապնդում նպատակները ազգային հոգևոր կյանքի ժաղկմանն ու բարդավաճմանը:

## 6

1899—1900 ուսումնական տարում Արեղյանը ստանձնում է նաև ընդհանուր եվրոպական գրականության, իսկ հաջորդ՝ 1900—1901 ուսումնական տարում՝ նաև գրականության տեսության դասալսողները: Հետագայում նա դադարում է դասավանդել Հայաստանի այլաբանագրություն, հայոց պատմություն, զերմաներեն, ինչպես նաև գրականության տեսություն, և հիմնականում ծանրանում է հայոց լեզվի (գրաբար և աշխարհաբար), հայոց հին ու նոր գրականության պատմության (թե՛ տեսական, թե՛ սեմինար պարագմունքներ), մասամբ էլ հայոց լեզվի առաջափոխության վրա, որոնք էլ ապագայում դառնում են նրա գիտական ուսումնասիրությունների լույս առարկաները: Ընձարանի ուսումնական ծրագրում Արեղյանը մի կարևոր նորամուծություն է կատարում. առաջին անգամ հայկական ուսումնական ճաստառությունների պատմությունը ներմուծում է ժողովրդական բանահյուսությունը իրրև առանձին ծրագրված առարկա և ինքն էլ ստանձնում դասավանդումը:

Էջմիածնի վանական միջնադպրն ու ձեմարանի կարգ ու կանոնը ծանոթ էին Արեղյանին տակավին աշակերտական շրջանից: Սակայն հասուն տարիքում դրանց հետ ունեցած պաշտոնական շփումը՝ նոր վերաբերմունք է արթնացնում նրա մեջ դեպի հայոց հոգևոր կենտրոնն ու իր երբեմնի սուտմնատեղին: Այդ վերաբերմունքը լավագույնս գրեթե լվել է «Գիտավորի հիշատակարանը» ֆելիետոնաշարի՝ և դանազան պաշտոնական գրությունների մեջ: Հիշյալ ֆելիետոնում Արեղյանը նրգիծական որոշակի իրադրությունների ու կերպարների միջոցով քաջահայտում է էջմիածնի վանական միջավայրում տիրող սգոտությունն ու խավարը, հոգևորականների ընչաբազույթությունը, սղեռ վանականների թշնամանք կրթության ու լուսավորության նկատմամբ, միաբանության

<sup>1</sup> «Շորիզոն», 1910, № 207.

<sup>2</sup> «Շորիզոն», 1910, № 208.

<sup>1</sup> «Ներգաբ», 1902, №№ 69, 73, 95, 98, 165, 166.



նյութական միջոցների անհարկի վատնումներն ու շարաշահումները և ճանապարհում տիրող սպորիժուստիաները:

Իր գրչի երգիծական սուրբ Արեղյանն ուղղում է տակավին միջնադարյան տղիտության ու խավարի մեջ խարխափող բարձրաստիճան հոգևորականության այն մասի դեմ, որի հասարակական դերն ու նպատակը իբրև էր ընդհուպ անտախ գուշակների ու կախարհների մակարդակը և մի լուսամտա դարում «ի շարունակին գրպանին», զանազան հմայական գրքերով ժողովրդի մեջ ամբասպնդում էր սնտոխապաշտությունն ու խավարը: Ֆելիտանոնաշարն աչքի է ընկնում նաև Քևորդյան ճանապարհում արժատավորված վարչական անօրինական բարբերի խիստ քննադատությանը, որն առավել խորանում է ու հիմնավորվում հեղինակի հետագա պաշտոնական նամակներում և հղվածներում:

Քևորդյան ճանապարհի վարչա-կրթական գործերը, հիմնադրման օրից սկսած, վարվում էին կաթողիկոսի կողմից հաստատված հատուկ կանոնադրությամբ: Սակայն հետագայում, տարբեր կաթողիկոսների ամուսնակալությունների ժամանակ, հիշյալ կանոններից բազմաթիվ շեղումներ են կատարվում, առանց հոգևոր վերադաս իշխանության օրինականշումի:

Ըստ կանոնադրության՝ հոգևոր ճանապարհի տեսուչը պետք է լիներ հոգևորական. նա պարտավոր էր ենթարկվել մանկավարժական խորհրդին. խորհուրդը պարտավոր էր պարբերաբար նիստեր գումարել, քննարկել բոլոր կրթական հարցերը և ընկնաց բազմազան. սահմանված էր չորսբանջուր տարի ճանապարհի հատուկ ընդունելության կարգ՝ ըստ թեմերի և չորսբանջուր թեմից՝ աշակերտների որոշակի թիվ և այլն:

Հասարակական կյանքի պարզացումն, հարկավ, իր կնիքն էր դնում ճանապարհի վարչա-կրթական նկարագրի վրա, և զարցնական շատ կանոններ հանում էին կյանքի նոր պահանջների նկատմամբ: Այսպես, էջմիածնի Քևորդյան ճանապարհը, որ Քևորդ IV-ի հոգմից հիմնադրվել էր սոսկ կրթված հոգևորականների պատրաստելու նպատակով, հետագայում բնավ էլ չարդարացրեց այդ, բանդի լինելով հայկական միակ բարձրագույն դպրոցը, չէր կարող բավարարություն չափ հասարակության անող կրթական պահանջներին. ուստի և ճանապարհը աստիճանաբար շեղվում է իր նախնական նրպատակից և վերածվում հայ մտավորականության կրթական օջախի Ալպա. խախտվում էր ճանապարհի տեսչի հոգևորական լինելու կանոնը, բանդի հաճախ բացակայում էին տեսչի հարմար հոգևոր

րական թեկնածուներ. բարձրագույն հոգևոր իշխանությունը ստիպված հրավիրում էր աշխարհական մտավորականների՝ ստանձնելու ճանապարհի տեսչի պաշտոնը: Զանազան պատճառներով խախտվում էր նաև ճանապարհի ընդունելության կարգը:

Հասարակական կյանքի հանդամանքներով պայմանավորված վարչա-կրթական կանոնների նման խախտումներն հիմք էին մատուցում զանազան օրինազանցումների ու կամայականությունների, որոնք խիստ բացասաբար էին անդրադառնում ուսման զրվածքի ու որակի վրա:

Ճանապարհ ընդունվելու կարգի խախտումներն, օրինակ, ոչ միայն չէին զատապարտվում, այլև հաճախ խրախուսվում կամ օրինականշվում էին տեսչի կողմից, առանց մանկավարժական խորհրդի գիտություն: Արեղյանի երգիծական քննադատությունն, ահա, ուղղվում է ճանապարհում իշխող նման սպորիժուստիաների ու շարաշահումների դեմ, որոնցով սոսահարվում էին մանկավարժական խորհրդի և սաուցիչների ստորակալ իրավունքները:

Ուսուցիչների պարբերական բողոքներն ու Արեղյանի ֆելիտանոնաշարը, հավանաբար, իրենց ազդեցությունն են ունենում: 1902 թ., նոր ուսումնական տարին դիտես չսկսած, ճանապարհի նախկին տեսուչն ազատվում է պաշտոնից և ցրում մանկավարժական կազմը: Նոր տեսուչ է կարգվում դարձյալ Կ. Կոստանյանը. վերջինս ճանապարհի նախկին ուսուցիչներին, այդ թվում նաև Արեղյանին, պաշտոնի է հրավիրում: Նոր տեսչի առաջարկած պայմանները, սակայն, հարվածում էին ուսուցիչների նյութական, մասամբ և բարոյական շահերին և առիթ տալիս իրավացի բողոքներին ու դժգոհություններին:

Արեղյանը տեսչին ուղղած իր պատասխան գրության մեջ բողոքելով ուսուցիչների բռնիկների իջեցման դեմ, իր տագնապն է հայտնում ժամանակի հայ ուսուցչի անապահով ներկայի և ախար

1 «Նոր-գարս», 1902, N 165, 166:

2 Արեղյանի անաբարկվում էր, օրինակ, 1902—1903 ուս. տարում դպրոցնական բաժնում գասականգիլու շարաբակուն 10 ժամ հայոց լեզու, յարաքանական բաժնում՝ հայ դրականոթյուն, ընդհանուր դրականոթյուն և դրականոթյուն տնտեսյուն՝ շարաբակուն 7 ժամ, տարեկան 1525 ու աշխատավարձով Այդպիսով, նախորդ տարիների համեմատությամբ Արեղյանից վերջում էր 6-րդ դասարանի հայոց շին դրականոթյուն պատմություն, գերմաներեն և Հայաստանի պատմական աշխարհագրության դասերը (Տե՛ս 2002 Պետական կենտրոնական պատմա-արխիվ, ֆոնդ 312, թղթ. 38, թվ. 3, թերթ 3, 11):

ու անխոստում ազգազայի նկատմամբ: Հայ ուսուցիչը, որի «սոցի-  
կը,— գրում է նա,— փոխանակ տարվետարի ավելանալու՝ պակա-  
սում է, երևի որպեսզի վերջը բոլորովին ուշանա և ուսուցիչը 45—  
50 տարեկան հասակում, առանց կենսաթղթակի և խնայողության  
մնացած, կրթա յուր համար ապրելու նոր ասպարեզ բանա կամ  
դռններն ընկնի մուրա»<sup>1</sup>:

Մասնավորապես շնչոր զննելով հայ ուսուցչի աշխատանքի  
անկալուն ու հարափոփոխ պայմանների վրա, Արեղյանն ընդգծում է  
այն մեծ տարբերությունը, որ գոյություն ունի որս ուսական պե-  
տական դպրոցների ուսուցիչների և հայ մանկավարժների նյու-  
թական կյանքի միջև: Քաջ դիտակցելով հայ ուսուցչի անհուսահատ  
ու անկալուն կյանքի հասարակական բարոյորման անհնարինու-  
թյունը, նա պահանջում է տեսչից զոնե որոշ առանձնահատուկ վե-  
րաբերմունք ճեմարանի որակյալ մանկավարժների նկատմամբ:  
Այդ ևս մերժվում է տեսչի կողմից, բայց ճեմարանի վարչությունը  
ունենալով Արեղյանի խիստ կարգը, փոխադարձ բանակցություն-  
ներից հետո հոժարում է նրա որոշ առաջարկություններին<sup>2</sup>, և նա  
դարձյալ շարունակում է իր աշխատանքները Գևորգյան ճեմարա-  
նում<sup>3</sup>:

Ճեմարանի ուսուցիչների նյութական կյանքի վրա բացասա-  
բար էին անդրադառնում նաև աշխատավարձերի վճարման երկա-  
րատև ձգձգումները, ճեմարանի վարչության անզամ ստիպելով  
լրջորեն անհանգստանալ և ահադանգել այդ մասին դերագույն հո-  
գևոր իշխանությունը: Այդ ստիպիվ ուշադրավ է Կ. Կոստանյանի  
զիմումը կաթողիկոսին, որի մեջ ակնհայտ խոստովանություններ  
կան ճեմարանի ուսուցիչների նյութական օտար կացության վերա-  
բերյալ: «Ունենով առաջի աչաց,— գրում է Կոստանյանը,— զի մե-  
ծագույն մասն Նոցին ծանրաբեռնուելը ընտանեօք, հոգան դպիտոյա  
կենաց իրեանց յարդանց անտի անձնական վաստակօց, և շունին  
զայլ ինչ ազահովիթին բաց յուսմական թոշակացն, զորս ընդու-  
նին ի ճեմարանէս, աչլե զիտելով բայց, զի ամենեքին նորս պտանին  
ի մեծի նեղութեան ի լցուցանել զպէտ իրեանց և զընտանեացն.

1 ԼՍՍԷ Պետական կենտր. պատմ. արխիվ, ֆ. 312, քղթ. 38, ավա. 2, քերթ 13:  
2 Անդ. քերթ 11, 25, 29, 30:  
3 1903 թ. Արեղյանն ամուսնանում է զորավոր Գևորգ Եանաթանյանի դստեր՝  
Գրիգոր Ետանիկի հետ, որից հետագայում ունենում է շորս զավակ. ավագը՝ Գա-  
ղիկ (1904—1920 թթ.), միջնեկը՝ Մհերը (1907—1908 թթ.), հայրը միջնեկը՝  
Մհերը (ծն. 1909 թ., այժմյան ԼՍՍԷ մտչ. նկարիչ Մհեր Արեղյանը) և կրտսերը՝  
Ասրիկը (ծնվ. 1911 թ.):

պարտ անձինս համարիմ զեկուցանելի դայմանէ վեհափառ Տե-  
րութեանց»<sup>4</sup>:

Ուսուցիչների տնտեսական վիճակը ծանրանում է հատկապես  
1903 թվականին ցարական կառավարության կողմից հայ եկեղե-  
ցական կալվածքների բռնագրավման և ապա՝ ուսուսակական  
պատերազմի հետևանքով: Նշված իրադարձությունները և հատ-  
կապես 1905 թ. ամբողջ երկիրը սարսուղ ուսական առաջին հնգա-  
փոխության հուժկու շարժումները արմատական խրտումներ ու  
խոտվություններ են առաջ բերում Գևորգյան ճեմարանում: Ռուսա-  
կան ողջ կալույթյան մեջ մտնելնոց հեղափոխական շարժումները  
իրենց մակընթացության ալբի մեջ են ներսուռում նաև հետավոր  
էջմիածնի Գևորգյան ճեմարանի եկեղեցական կալվածքների բնա-  
դրավումից արդեն հուզված ու բորբոքված աշակերտությունը:

Հեղափոխական գաղափարները զանազան ձևերով հատկա-  
պես դազանի գրակնություն միջոցով թափանցում են ճեմարանի  
պատերից ներս: Ճեմարանի աշակերտությունը, հետևելով պետա-  
կան դպրոցների աշակերտության արամադրություններին, սկսում  
է իրարից, ըմբոստանալ ճեմարանի կարգ ու կանոնի և այն պահ-  
պանող վարչություն դեմ<sup>5</sup>:

1904—1905 ուսումնական տարին դեռևս լավարված, վրա են  
հասնում ցարական դազանի ոստիկանության դիտությունը ու զըր-  
գումներով կազմակերպված հայ-աղբրեչանական ազգամիջյան կո-  
տորածները, որոնք առավել բորբոքում են առանց այն էլ հուզված  
աշակերտական միջուկը: Այս անգամ ևս, նախորդ ուսումնա-  
կան տարվա նման, բարոյական ու նյութական անսպասով պայ-  
մաններից զրգոված, ճեմարանի վարչությունը ժամկետից շուտ  
փակում է ուսումնական տարին: Ճեմարանի սոսուրը զովարանում  
է նման պայմաններում վարել ճեմարանի գործերը: 1905 թ. օգոս-  
տոսին կաթողիկոսական հատուկ կոնգրակով Կ. Կոստանյանի փո-  
խարեն ճեմարանի սոսուր է կարգվում Երևանի հայոց թեմական  
հոգևոր զորոցի անտուշ Գարեգին վարդապետ Հովսեփյանը:

Բռնագրավված եկեղեցական կալվածքների ու գույքը էջմիած-  
նին վերագարձնելու ցարական կառավարության որոշումը մեծ ո-

1 ԼՍՍԷ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆանդ 312, քղթ. 38,  
ավա. 2, քերթ 39:

2 Ճեմարանում տիրող ուսակական հուզումների ընդհանուր նկարագրու-  
թյանը շարագրված է ըստ Մ. Արեղյանի «Մեր դպրոցական կյանքից» հոդվածա-  
շարի ավանդների (ակն. «Ներդրուե», 1910, N 194, 197):



դեորութիւնն է առաջացնում էջմիածնում. դրանով մեջտեղից վե-  
րանում էր նյութական զովարութիւնների հոգար. մեծ հուսերով  
սկսվում է նոր ուսումնական տարին: Մամայն այդ հույսերը էր դերե  
ևն երևում հետագա դեպքերի ազդեցութեամբ:

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան անընդհատ աճող  
ալիքը նոր քաղաքով է իր մեջ ներառում ճեմարանի ուսուցիչներին  
ու աշակերտութեանը. դրան ավելանում են նաև հայ-աղբերջանա-  
կան կոիլիների նորանոր զոտառալի դեպքերը: Ճեմարանի աշակեր-  
տութեան խտուրտութիւնները հասնում են իրենց գագաթնակետին: Ա-  
շակերտները ժողովներ են զուարտում, կազմակերպում են խոր-  
հորդներ, ճասեր են արտասանում: Երկրի ընդհանուր հեղափոխա-  
կան իրադրութիւնը իր գործող կերպն էր դնում նաև ճեմարանի վրա:  
Աշակերտներն իրենց ընդհանուր գրովթունից զգո՞հած, չեն կամե-  
նում այլևս հին ձևով ապրել ու սովորել, ձգտում են սակզծել նոր  
զարգացական կյանք:

Ճեմարանն իր բնույթով շատ էր տարբերվում սովորական  
դպրոցներից: Այստեղ աշակերտներն ամբողջ բանջորս ժամը անց  
էին կացնում ճեմարանում, սկսած պատանեկան տարիքից, վեր-  
ջացած երիտասարդ տարիքով: Բացի այդ, ճեմարանն ուներ բա-  
վական խիստ հանրակեցութեան կարգի. դրանց մի մասն արդեն  
հնացել էր և չէր համապատասխանում ժամանակի պահանջներին:  
Աշակերտութիւնն, ահա, բմրոտանում էր այդ կարգ ու կա-  
նոնի դեմ և ձգտում հիմնովին վերափոխել այն: Ճեմարանի վար-  
չութիւնն էլ զովարանում էր հին եզանակներով կառավարել աշա-  
կերտութեանը:

Ճեմարանի տեսուչը՝ Գարեգին վրդ. Հովսեփյանը, տարին  
դեռևս չբարձրած, հրաժարվում է պաշտօնից: Եւրոպեան կաթողիկոսը  
հատուկ կոնզակով ճեմարանի տեսչի պաշտօնին է հրավիրում Մես-  
րոպ վրդ. Տեր-Մովսէսյանին<sup>1</sup>:

<sup>1</sup> Գաթողիկոսն այդ կոնզակում հատուկ շեշտում էր ճեմարանի աշակերտու-  
թեան հեղափոխական հոգումներն ու ասում զորի՜ ճարտգումը:

«Մտայայտ է ամենեցուն և Ջեզ.— դրում է Մեսրոպ վարդապետին կաթողի-  
կոսը.— գրի գրի և պահանջը ժամանակին միանգամայն չեղափոխելու է և յնդ-  
փոխել, չեղաբջիւն և չուրի նաև զմիտս մարդկան ըստ իրարանչիրում զսոս-  
կարքի, ի շարս ալլոց և զգիրազգրից և զմասաւ պիտոս ասճաարկ սոսումեա-  
մարտս պատանեաց՝ սասանոցս ընդ յարկու Հոգևոր Ճեմարանի Մ. Աբոտոյս  
Տերմացո 1905—06 ողջոյն ամի սոսումնական իրավիցս զիպեցան անցր անցից  
զեզ ճեմարանի, խոյնդոս հանդիսանալով կանոնադր և անտայթար ասնզման  
գառուց խորի և ցանկաչ յառաջգործութեան և բարգաւաճման ուսման և զսո-

Հայրենասեր կաթողիկոսի մտահոգութիւնը ճեմարանի մասաղ  
սնդրի կրթութեան նկատմամբ և դրա բարելավման հուշը: Մես-  
րոպ վարդապետի անձի հետ կապով ևս զուր են անցնում, բանդի  
ինքը ճեմարանի հին կարգերի մեջ ոչ մի բարեփոխութիւն չի մըտ-  
ցընում: Մանկավարժական խորհուրդը ստիպված ինքն է որոշ բա-  
րեփոխումներ ձրագրի մշակում և ներկայացնում կաթողիկոսին,  
որը և մտնում է անհետևանք:

Ճեմարանում կազմվում է կենտրոնական ժողով, որն էր նիս-  
տերը գումարում է հրապարակով՝ աշակերտների ներկայութեամբ:  
Ժողովի ամբողջից հատուկ գասախոսութիւններ են ճասեր են կար-  
դացվում՝ ոգևորելով աշակերտութեանը: Այլևս ոչ ոք չի գրադվում  
դասերով, տեսչի ուժերից վեր է դառնում աշակերտներին զսպելն  
ու ճեմարանի կանոններին ենթարկելը:

Եվ «Այն» ինչ որ աշակերտութիւնն ուզում էր օրինական ճա-  
նապարհով փոփոխել ճեմարանի ներքին կյանքի մեջ,— դրում է  
հետագայում այդ օրերի մասին Մ. Աբեղյանը,— տեսնելով որ այդ  
ճանապարհով դրսիս չի գալիս, ձեռք է բերում հեղափոխական ճա-  
նապարհով՝ միանգամից շուտ տալով ճեմարանի հանրակեցութեան  
կանոններն ու կարգերը: ... Եվ այսպիսի դեպքում շատ հնացած  
ու խոտան կարգերի հետ, բնականաբար, նաև շատ պիտանի կարգեր  
շուտ եկան: Ամեն տեսակի գծտուրթիւններ, կոիլներ, ընդհարում-  
ներ աշակերտների՝ իրար մեջ և վարչութեան մեջ: Մանկավարժա-  
կան խորհուրդն ու դաստիարակները գրազված են այդ ընդհարում-  
ներին վերջ տալու շանքով, բայց հաճախ, իհարկե, այսպիսով:  
Ավելարդեք վրան և անտեսական մի բանի պակասութիւններ, որոնց  
պատճառով մի բանի անզամ օրերով դասաղույներ, աղմուկներ,  
զոտուրդներ և այլն»<sup>2</sup>:

Խտուրթիւնները ծայր աստիճանի են հասնում 1907 թ. հուն-  
վարին, երբ աշակերտները բաժանվում են երկու մեծ խմբի և պայ-  
քարի են դուրս գալիս իրար դեմ: Պատճառը երեք աշակերտների

տարակուսեան բազմաթիւ մանկանց... Բազմաց ի սանցս ի հոգոր զիկորաց և  
յարգարոյ մշակաց խոյանմարեալ անդատանին Հայաստան աշխարհիս, աքնեա  
ամս հոլով յամանս իրանց և մայրալ զկեանս իրանց և ենթարկեալ բերանց  
և հոսանց հանգամանց ժամանակս, զրկեցան ի հոգևարար սննդէն և ի ծա-  
ղոյ կաթողի մօր համայնից մեր արկից՝ ի լուստու բարձրագործ կրթութեան  
(ՀԱՄԷ Պետական կետք. պատմական արխիվ, ֆոնդ 312, թղթ. 38, վավ. 3,  
թիւթ 155):

<sup>2</sup> «Երեւոն», 1910, № 104:

հետաքման խնդիրն էր, որոնք վիրավորել էին տեսչին և դրավոր ամբաստանել վարչության անդամներին: Մանկավարժական խորհուրդը քննելով այդ երեք աշակերտների հարցը, որոշում է երեքին էլ վտարել ճեմարանից: Այդ որոշումը ընդունում է աշակերտների մեծամասնությունը, իսկ 24 հոգի բողոքում են դրա դեմ: Այդ առթիվ էլ հիշյալ խումբը գծավում է աշակերտների մեծամասնության հետ: Խմբերը միմյանց հետ հաշտեցնելու և դործի էությունը քննելու նպատակով կազմվում է մի հանձնաժողով Աբրղյանի նախագահությամբ, Մ. Օլբեղյանի և Ք. Լեւոնյանի անդամակցությամբ: Սակայն այդ երկու ներհակ խմբերին հաշտեցնել չի հաջողվում և փոքրամասնությունը (թվով 19 հոգի) զիջում են տեսչին, հայտնելով, թե իրենք կամավոր հեռանում են ճեմարանից ի համերաշխություն իրենց երեք ընկերների:

Ճեմարանի աշակերտության խտություններն առիթ են ծառայում 1906—1907 ուսումնական տարին ևս ժամանակից շուտ փակելուն: Ուսումնական տարվիկերին ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը կաթողիկոսին ներկայացրած պաշտոնական տեղեկագրի մեջ, ամփոփելով տարվա ընդհանուր արդյունքները,

Այդ 19 աշակերտները երեք զիջում են կաթողիկոսին, խնդրելով անձամբ քննել իրենց հարցը և շարացում են այն պատճառները, որոնք առիթ են ծառայել իրենց բողոքին: Աշակերտների բերած պատճառարտությունները հիմնականում համապատասխանում են էլեմենտի հոգսը սինդիս անգամ Բարգին վրդ. Ազգվելյանի հիշյալ հարցի առթիվ կաթողիկոսին ներկայացրած զեկուզագրի մեջ առաջ բերված այն բացատրական երևույթներին, որոնց հետևեցով, բոս Ազգվելյանին առաջ են կկել ու գալիս ճեմարանի աշակերտության զեզուցությունները: Չբանք են, ա) ճեմարանի սաներին արվել էլքին արուեստությունները, բ) ճեմարանի ու հաստատոս և շափազանց թերի ուսումնական ծրարիքը, գ) ոչ մասնագիտ և իրենց առարկան չիմացող ուսուցիչների անուշխությունը, դ) տե՛՛նուս տեսուչների հոճախակի պաշտոնավարումը, ե) անընդունակ և իրենց պաշտոնին անարժան վերակացուների դրությունը, զ) անտեսական ու կենցաղային բնույթի մի շարք արտավոր երևույթների արմատազուսբ ճեմարանում և այլն:

Ձեկուցողը պահանջում էր կաթողիկոսից անձազուղ ընկույթան արձև 19 աշակերտների ճեմարանից կամվին հետևելուս զրգապատճանները և առաջնկայում հրավիրել ձեռնհաս մարզիկներից կազմված բարձրագույն կենտրոնական ժողով, որտեղ քննարկման զրվին ոչ միայն ճեմարանի, այլև բոլոր թե՛՛մական ու ծխական զարդերների կարգավորման խնդիրները:

Էլեմենտի զեվանատան խորհուրդը քննելով երեք աշակերտների բուն և 19-ի կամավոր հետաքման հարցը, որոշում է հաստատել մանկավարժական խորհրդի որոշումը 3-ի հետաքման վերաբերյալ, իսկ 19-ին հետաքմարտություն ուղ աղջ ուսումնական տարվա ընթացքում երեք ճեմարան ընդունվելու (2002 Պետական կենտր. պատմական արխիվ, ֆ. 56, գ. 501, Խ. 19—28):

ի վերջոս պնդում է, թե ճեմարանը օհիմնված որոշ ծրարքով ու որոշ նպատակի համար, մեր կյանքի ներկա պահանջներին բավարարություն առլ չի կարող: Անհրաժեշտ է հիմնական փոփոխություն ծրարքի ու զարդից նպատակի, ճեմարանը շարունակությունն է վանքական ժառանգավորաց զարդից: Մեկը դիաներ, որ ոչ միայն սովորողներից վերջին տարիներս համարյա հոգևորական կույման մեջ շեն մտնում, այլ շատերը նույնիսկ այդ կույմաբ ընդունելուց և հատուկ խնամքներ վայելելուց հետո էլ թողլ են իրենց կույմաբ: Ժամանակակից շէ, խիստ զվար ու վնասակար է զիշերթիկությունը. աշակերտները պիտի ապրեն ու մեծանան ընտանիքներում, կյանքը պիտի նոցա դաստիարակե: Իմ համարումս ժողովրդի մեջ պիտի մեծանան նրա համար զործելուս պատրաստվող պատանիները և հոգեկան այն վնասը, որ ստանում են նորս փակված զարդում, շափազանց մեծ էն:

Այս նկատողություններին հետևում է տեսչի հրամարականը: Ազգպես, ուրեմն, կյանքը, աշակերտական բողոքների ու խտությունների ձևով, իր նոր պահանջներն էր առաջադրում հայոց միակ բարձրագույն ուսումնական հաստատության հին, բարազան կարգ ու կանոնի դեմ: Զարգացող հասարակական կյանքի պահանջներն և ճեմարանի իր զարն արարած կարգերի միջև եղած հակասությունն այնքան ակնբայն էր, որ ճեմարանի ուսումնական ծրարքին, կրթական նպատակի և աշակերտության կենցաղային պայմանների արմատական բարեփոխությունների անհրաժեշտությունը դիտակցում էին զարդական զործին մտոյիկ կանգնած անհրաժեշտ բարձր կույմներով շատ մտավորականներ: Միեղընս գամծ հոգևոր բարձր իշխանությունը համառորեն շարունակում էր կառչած միակ հնին ու ավանդականին, խուսափել բարեփոխություններից, ճնքածամի միակ կիթ որոնելով տեսուչների հոճախակի փոփոխման մեջ: Բայց ի վերջոս բարձրագույն հոգևոր իշխանությունն էլ է անզի տային կյանքի հրամայական պահանջների առջև:

1907 թ. հունիսի 2-ին Մկրտիչ երիմյանը հատուկ կոնդակով պարտավորեցնում է իր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանին՝ սինդիս անգամներ և Մալը Աթոռի ձեռնհաս միաբաններին մասնակցությամբ ժողով հրավիրել և քննություն զնել ճեմարանը:

1 2002 Պետական կենտր. պատմ. արխիվ, ֆ. 312, Բ. 36, վավ. 12, Թերթ 12—14.



քանի և կենդեցական մյուս դպրոցների բարեկարգման հարցը, Կաթողիկոսի ցանկութեամբ հրավիրված ժողովը իր կրկրորդ նիստում (1907 թ., հունիսի 23) ի գիտութիւն բնօրնակնելով ճեմարանի տեսուչ Մեսրոպ վարդապետի հրծարականը, որոշում է կայացնում անհասպող հրավիրել մի տեսուչ, որը առաջիկա ուսումնական տարվա համար կազմի ուսուցչական նոր խումբ: Տեսչութեան պաշտոնի բեկնածուներ են առաջադրվում Մանուկ Արեղյանը, Մինաս Բերբուջյանը, Նիկողայոս Աղունցը և Բարսեղ Գասպարյանը: Վերջնական ընտրութիւնը թողնվում էր կաթողիկոսի կամքին:

Հիշյալ որոշումից անմիջապէս հետո երիմյան Հայրիկը հրավիրագրով դիմում է Ղարաբախիստամ (այժմ Կիրովական) հանգրստացող Մանուկ Արեղյանին՝ շտապ հրավիրելով էջմիածին: Ընդունելով Արեղյանին՝ կաթողիկոսը առաջարկում է ստանձնել տեսչի պարտականութիւնները և հանձնարարում նախապէս ծանոթանալ ճեմարանի գործերի ընդհանուր վիճակին: Ծանոթանալով գործերին, Արեղյանը մի ընդարձակ հայտարարութեամբ դիմում է կաթողիկոսին և, նախքան տեսչի պաշտոն ստանձնելը, հանգամանորեն շարադրում է ճեմարանի պայմանների բարեփոխման իր առաջարկութիւնները, պատճառարանելով բարեփոխումների հասարակական անհրաժեշտութիւնը:

«Աշակերտութիւնը.— դրում է նա,— այս երկու տարին, ինչպէս հայտնի է, ընդհանրապէս խռովյալ վիճակի մեջ է եղել, որն երբեմն անկարգութիւններ է առաջ բերել: Պատճառը աշակերտների ղեկավարութիւնն է իրենց վիճակից, որ եթէ մասամբ առաջ է զբախն կրկրի ընդհանուր գրովութեանց, մասամբ և իրավաբան հիմունքներ ունի մեր դպրոցի գրովութեան մեջ: Ընտարանը բարեկարգելու համար այդ ղեկավարութեան պատճառները պետք է վերացնել»:

Բազմաթիվ պատճառներից Արեղյանը մատնանշում է միայն պիտակները, որոնք, իր կարծիքով, արմատական նշանակութիւն ունեն ուսումնական-դպրոցական գործի համար: Ընտարանի առաջադիմութեան ու բարգաւաճման առաջին անհրաժեշտ պայմանը Արեղյանը համարում է «յուր կոչման արժանավորութեան վրա բարձր կանգնած փոքրիկներ մտնելու արմատական նշանակութիւն խմբի» ստեղծումը: Իսկ բարձրագույն կրթութեամբ որակյալ ուսուցչական խումբ ստեղծելու նախապայմանը նա տեսնում է ուսուցիչներին նյութական գրովութեան բարելավման մեջ, այն է՝ դասա-

1 ՀԱՅԷ Գեոտական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 56, գ. 501, թ. 129:

ղիներ, հետևաբար՝ աշխատավարձերի բարձրացման և որոշ թվով տարիներ ծառայելուց հետո՝ կենսաթղջակ սահմանելու միջոցով-այսինքն այն, ինչ առկա էր ուսուսական պետական և հայկական բաղաբային թեմական մի քանի դպրոցներում: Իսկ ճեմարանի ուսուցիչների նյութական անկաշուն վիճակը բարձր է լինում լատիւնացի ուսերի ճեմարան գալուն, եկամտներն ևս սակավ տարիներ հետո հետանում են՝ ոչ մի ապագա շտանակելով իրենց պաշտոնի մեջ: Զարթոնքակ մանկավարժական խումբն էլ շշի ունենալ բարոյական ազդեցութիւն ու չի կարող սույ աշակերտներին անհրաժեշտ մտավոր սնունդը, որով և բնականորեն, ղեկավարութիւնն ու խռովութիւնը անպակաս կլինի աշակերտների մեջ:

Այստեղ դարձյալ Արեղյանին առաջ էր բաշում տարիներ շարունակ վերաբարձրվող ու իրավացի ղեկավարութիւններ հարուցող ուսուցչական կազմի նյութականի բարելավման խնդիրը, որի գրական լուծումը իրավամբ մեծապէս կբարելավեր ճեմարանի մանկավարժական կազմի որակը, որից հաճախ ղեկավարում էր ճեմարանի աշակերտութիւնը:

Երկրորդ կարևոր հանգամանքը Արեղյանը համարում է ճեմարանի տարեկան նախահաշիվների կարգավորումը և ժամանակին Ֆինանսավորումը, նախահաշիվ, որից էլ կախված է ճեմարանի ամբողջ նյութական ղեկավարութիւնը՝ սկսած աշակերտների պարենից ու հագուստից, վերջացրած ուսուցիչների ու այլ պաշտոնյաների աշխատավարձով, ճեմարանին անհրաժեշտ դուրսով ու դրեկական պիտույքներով:

Երրորդ կական նախապայմանը նա համարում է ճեմարանի աշակերտութեան իրավացի պահանջների (աշխատհիվ հարցատկրելու, կենդեցի ամենօրյա հաճախելուց, խմբական աղբիքներ կատարելուց հրաժարելու, ճեմարանի շրջապատից դուրս ամենօրյա աղատ երթեկութեան և այլնի) բավարարումը:

Չորրորդ պայմանը, որ դնում է կաթողիկոսի առջև Արեղյանը, ճեմարանի կառավարման վարչական սխեմայի հետագա դիմոկրատականացումն է: Ընտարանի տեսուչը, որ միշտ էլ կարգվել է կաթողիկոսի կողմից և կառավարել ինքնադուրս՝ կաթողիկոսի կամ նրա անդակալի թելադրանքով, առանց մանկավարժական խորհրդի գիտութեան կամ մասնակցութեան, Արեղյանի առաջարկով այժմ նա սպիտի ընտրվի մանկավարժական խորհրդից ու կառավարի նույն խորհրդի ցուցումներով: Հիշյալ պարագան Արեղյանը համարում է ամի շատ անհրաժեշտ պայման մանկավարժական

խմբի համերաշխ գործունեության համար»։ Նա իրավացիորեն իր դժգոհությունն է հայտնում կաթողիկոսին, որ որևէ անկարգության կամ խռովության պատճառով միշտ էլ մանկավարժական խորհուրդն է բոլոր դժվարություններն ու բարդական պատասխանատվություններ իր վրա կրում, մինչդեռ ճեմարանի կառավարման գործերում «ոչ մի ձայն ու իրավունք չունի»։

Բարելավման ենթակա նշված պայմանները, որ տարիներ շարունակ անհատական բողոքների կամ ձևավորման մանկավարժական խորհուրդի կողմից ներկայացվում էին դերագույն հոգևոր իշխանությանն ու միշտ էլ մնում անհետևանք, այժմ ամփոփվում են Արևելյանի կողմից, անառակելի փաստերով ու կոտ տրամաբանությամբ պատճառարանված ներկայացվում կաթողիկոսին իբրև պաշտոնական առաջարկություններ։

Այդ ամենն առաջադրելուց հետո, Արևելյանը հայտնում է կաթողիկոսին, «որ ես, ինչպես էլ պատրաստեցիք եմ իմ ուժերը միմյուր իմ սիրած հաստատությունը և երկար տարիների վարժապետությունից հետո օգտակար լինելու նրան վարչական պաշտոնով, չեմ կարող հանձն առնել ճեմարանի անսուբյուր, մինչև շփոթվին վերահիշյալ պայմանները՝ որոշ եզրակացություն հանգելով, որով կվերացվեն աշակերտական դժգոհությունների ու անկարգությունների պատճառները, որովհետև հավատացած եմ՝ բանի որ նույն գրությունը կմնա, մեր զարոցը չի կարող բարգավաճ ու ցանկալի հասադադիմություն ու բարեկարգություն ունենալ»։

Արևելյանի այս հայտարարությունը իրական Հայրիկի մակարդակի վրա հասցնելով ու վերահիշյալ ժողովի նախադաս Գեղբղ արքեպիսկոպոս Սուրենյանին՝ ժողովում մանրամասնորեն քննարկելու և կարծիք տալու համար։

Ժողովը իր վեցերորդ նիստը (1907 թ., հուլիսի 2) ամբողջապես նվիրում է Մանուկ Արևելյանի հայտարարության քննարկմանը, և սկզբունքորեն ընդունում նրա գրեթե բոլոր առաջարկությունները, բացառությամբ մեկի, ճեմարանի ուսումնական ու կառավարման վարչակարգի փոփոխման հարցը թողնելով հատուկ քննության։

Ժողովն իր որոշումն ուղարկում է կաթողիկոսին, որը, սակայն, նույնությամբ չի ընդունում և 1907 թ. սեպտեմբերի 7-ին հրապարակած կենդանի մեջ օրենքի ուժ է տալիս միայն Արևելյանի առաջարկներից մի քանիսին (բարձրագույն կրթության ուսուցիչների անհրաժեշտություն, դասաղների բարձրացում, ուսուցիչների օտարերկրների հավելում՝ ծառայած տարիների համեմատ և կենսաթո-

շակի գրամարկդի հիմնադրում), իսկ մնացած կարևոր խնդիրները, որովհետք էին աշակերտության վիճակի բարելավումը, ճեմարանի ուսումնական և կառավարման վարչական սխեմանի դեմոկրատականացումը, տարեկան նախահաշիվի ճշգրտումը և բարձրումը, մնում են շտուգված ու անհետևանք, հետագայում սեղիք տալով նորանոր դժգոհությունների ու խռովությունների։

Այլովիսով, էջմիածնի բարձրագույն հոգևոր իշխանությունը ի վիճակի չի լինում իրագործելու Արևելյանի չափավոր առաջարկությունները, բավարարվում է միայն մասնակի բարելավումներով, որոնք առանձին ազդեցություն չեն ունենում ճեմարանի հետագա ճակատագրի վրա։

Չընդունելով Արևելյանի առաջարկած պայմանները, էջմիածնի հոգևոր իշխանությունը ճեմարանի տեսչի պաշտոնին է կոչում Մինաս Բերբերյանին, որը ստանձնելով այն, շտապում է առաջնիկ ուսումնական տարվա ճեմարանի ուսուցչական նոր խումբ կազմել Մ. Բերբերյանը 1907 թ. օգոստոսի 11-ին գրավոր դիմում է Մ. Արևելյանին՝ հայտնելով նրան ճեմարանում դասավանդելիք իր առարկաները, դասերի ու ուժիկի շափը, Արևելյանը, որ նախապես պայմանավորվել էր Բերբերյանի հետ այդ հարցի սովորով, որոշ ճշգրտումներից հետո, տալիս է իր համաձայնությունը։ Նոր ուսումնական տարում կաթողիկոսը հայտց դպրոցների գործը բարելավելու նպատակով էջմիածնի Մայր Աթոնին կից ստեղծում է հասունիկ ուսումնական հանձնաժողով, որի նպատակն էր հակահանդուրդ դպրոցների ուսումնա-կրթական աշխատանքների ղեկավարումը։ ճեմարանի մանկավարժական ժողովի կողմից հանձնաժողովի անդամ են ընտրվում Մինաս Բերբերյանը և Մանուկ Արևելյանը։

Սակայն Բերբերյանին ևս վիճակված չէր իր պաշտոնը հանգիստ ու անվտանգ վարել։ 1907—1908 ուսումնական տարվա հենց սկզբի ամիսներին վախճանվում է իրական Հայրիկը և կաթողիկոսական դասը մնում է թափուր։ Հեղափոխական շարժումը, որ ամբողջ երկրում սկսել էր արդեն սեղանավորվելու ապրիլ և դեմոկրատիկ ճնշում էր ստոյիպլինյան ռեակցիայի կողմից, զայաբում է մուտքը դեպի դպրոցները, սկսվում է աշակերտական հուզումների աստիճանական խաղաղացումը։ Ճեմարանը ևս դուրս չի մնում այդ ընդհանուր գրությունից. աշակերտությունը խռովված կրքերը հանդաբարում են և սկսվում են ուսման մի համեմատաբար խաղաղ փաստականաչափը։



Երկրում մոլեզոտ ուսուցիչներ, սակայն, բախում է նաև Հեմարանի գոյնը. Պետերբուրգ, Քիֆին և Երևանի նահանգային գաղտնի ուստիանությունը Հեմարանի հուղանների մասին հզվող գաղտնի հարցերի հիման վրա սկսվում են ստիֆանական հետաքննություններ կատարվել: Հեմարանը դառնում է ստիֆանական հետախույզության առարկա: Մ. Բերբերյանի տեսչության Երկրորդ տարում այդ հետախույզության անմիջական զուգն է դառնում ինքը՝ Հեմարանի տեսուչը: 1909 թ. ապրիլին ստիֆանությունը ձերբակալում է Մինաս Բերբերյանին: Էմիլիանի հոգևոր իշխանությունը, հանձնի կաթողիկոսի տեղապահ՝ Սուրենյանի, Մ. Բերբերյանին պատանում է տեսչի պարտականություններից և առաջարկում Հեմարանի մանկավարժական խորհրդին ընտրել խորհրդի մշտական նախագահ, որը մինչև ուսումնական տարեվերջը վարի Հեմարանի գործերը: Ապրիլի 28-ին կայանում է մանկավարժական խորհրդի նիստ, որը միաձայն խորհրդի նախագահ է ընտրում Մանուկ Աբեղյանին: Աբեղյանը ևս երկար չի մնում այդ պաշտոնում: Դեռևս նախորդ տեսչի պաշտոնավարության ժամանակ Հեմարանում տիրել է ունևնում աշակերտների մի նոր ցույց: Տուցարարների հարցը փոխարկում է մանկավարժական խորհուրդ, սակայն վերջինս ոչ մի որոշում չի կայացնում, հարցն համարելով իր պատասխանատվություններից դուրս: Աբեղյանի ժամանակավոր տեսչության օրերին այդ հարցը նորից է դրվում մանկավարժական խորհրդի ընտրվածանք: Նախքան որոշում կայացնելը կաթողիկոսի տեղապահ՝ Գևորգ արքեպիսկոպոսը միջամտում է գործին, կարգադրելով մանկավարժական խորհրդին զստագույլ անող աշակերտների ընտրությունների փոխադրել հարցը ուսումնական տարվա սկզբներին: Այս հանգամանքը առիթ է ծնույնում Հեմարանի ուսուցչության և էմիլիանի հոգևոր իշխանության միջև առկա հակասությունների ծայրահեղ սրման, կաթողիկոսի տեղապահի միջամտությունը խորհուրդը դիտում է իրեն վանքի իշխանությունների կողմից իր իրավունքների օտնահարման մի կոպիտ ցույց, իրավունքներ, սրանց պահպանման համար Հեմարանի ուսուցչության միջամտությունների պայքարը մեղսել էր առանց որևէ շրջափակի արդյունքի: Եվ ահա ներկայացնել էր առիթը տարիներով կուսակցված բողոքն ու դայրությունն արտահայտելու համար:

Մանկավարժական խորհրդի անդամները, ի նշան բողոքի, միաձայնուտ կերպով, բացառություն մեկի, հրաժարվում են իրենց պաշտոններից, խորհրդի որոշումը Աբեղյանը խիստին հայտարարում է արքեպիսկոպոս Սուրենյանին: Վերջինս, Հեմարանի տարեվերջյան ընտրությունների ձախողմանը հրաժարականը և առաջարկում է Աբեղյանին հանգարտեցնել ուսուցչներից և շարժարկում էր պաշտոնակատարն առավել համարում էր որոշման մեջ. նա խիստին պատասխանում է Սուրենյանին, թե ինչպես այսպիսի պատասխանում էր պաշտոնակատարն արքեպիսկոպոսին: Երբ մեր պաշտոններից, ուսուցչները և ևս նրանց հետ հրաժարվածական ժողով կայանալու ևս չի և այսուհետև չի կարող մանկավարժական ժողով կայանալ Հեմարանի գործերը վարելու համար... ևս այսօրվանց ինձ ազատ եմ համարում ապագայի պատասխանատվությունից»:

Տեղապահն ստիպված ընդունում է Հեմարանի մանկավարժական կողմի հրաժարականը և տեսչի պաշտոնակատար է նշանակում Ստեփան Կանայանին, այն միակ ուսուցչին, որը չէր միանել ուսուցչական խմբին և իր պաշտոնից չէր հրաժարվել: Բայց շուտով Հեմարանի խմբից ազատվում է Մինաս Բերբերյանը և նորից ստանձնում տեսչի պարտականությունները: Նախորդ ուսուցչական խումբը, որի մեջ էր և Աբեղյանը, կրկին աշխատանքի է հրավիրվում: Աբեղյանը շարունակում է իր աշխատանքները Գևորգյանի Հեմարանում մինչև 1914 թ., երբ ուսուցչին իր երկու մեծ խմբի միջև պատակտում է առաջարկում Գևորգ V կաթողիկոսն էլ փոխանակ արգարն ու մեղավորը միմյանցից զատելու, Հեմարանի

1 ՀԱՅԿ Պետ. կենտր. պատմ. արխիվ, ֆ. 312, ք. 39, վավ. 5, Թ. 14:

2 Հեմարանի նկատմամբ վանական իշխանությունների վարած կամայականության, թշնամության ու խաղաղության մասին մի ուշագրավ քննադատական փաստաթուղթ է Հեմարանի ուսուցչի և վերահսկող Լաճան Տեր-Առաքելյանի Առ. Կանայանի ուղղած ներքորերկայ հայտարարությունը.

«Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Հեմարանը, մեր ապարիստ Արմատերը չուր վարելիքով հանդերձ՝ կրեանկահնառակ հիմնադրի մասին հետո (խորը Գևորգ IV կաթողիկոսի մասին է— Ս. Ը.) համարյա միշտ ենթակա է եղի վտերի իշխանությունների բացարձակ կամայականության, երանց տեղապահ ընտանացին ու թունայից թահահանչույթին.— Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այս արգահատելի հաստատությունը տարիներ շարունակ, մասնավորապես տեղապահությունների միջոցին դարձել է անհատական գծում հաշիվներ մտքելու կրկին և անձնական շահատակությունների ապարկը.— Ի նկատի առնելով, այս ժամա կրթավարը զերծ չի մտուտ վտանակն կեղտոտ ինտրյուզիոններին, այս բարվոր եմ համարում ներկայացնել հրաժարական և հետևաբար (ՀԱՅԿ Պետ. կենտր. պատմ. արխիվ, ֆոնդ 312, ք. 39, վավ. 5, Թերթ 18)»

ամբողջ ուսուցչական կազմն ազատ է արձակում, հաշվի չնստելով նրանցից ոմանց ճեմարանին մատուցած երկարամյա ծառայությունների և նրանց գիտելիքների ու մանկավարժական հարուստ փորձի ճեա: Արևդյանը ստիպված, 1914 թ. հունիսի 15-ին հրաժարվում է ճեմարանի յուր պաշտոնից, մեկնում Քիֆլիս՝ ընդմիջտ թողնելով էջմիածինը:

## 7

Արևդյանը Ներսիսյան դպրոցի վարչության հրավերով ստանձնում է գյուրջի գրաբարի և հայ հին գրականության ուսուցչի պաշտոնը: Մինչև նոր ուսումնական տարեկիրքը պայմում է առաջին համաշխարհային պատերազմը: Հասարակական կյանքի ու մտածողության մեջ բուրջ փոփոխություններ են կատարվում. ծաղում են սոցիալ-հասարակական և ազգային-քաղաքական նոր շահահնգություններ: Հեղափոխության մարտն ախիբ, որ պատերազմի նախօրեին արդեն սկսել էր կենդանության նշաններ ցույց տալ, պատերազմի ընթացքում նորից է աշխուժանում՝ իր մեջ ընդգրկելով Ռուսաստանի ճնշված ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու ազգային-քաղաքական կյանքի հնգարեկման աշխուժացող արամադրությունները: Առանձնապես աշխուժանում է հայ ազգային-քաղաքական միտքը, որը Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակի մղած հաղթական կռիվների հետ էր կապում հայրենի երկրի փրկության և ազատագրության հույսերը: Քիֆլիսն արևելահայության մտավոր ու մշակութային կենտրոն լինելու պատճառով դանում է այն բորբոքուն քուրան, որ կտում ու կործնում է ժամանակի ազգային ոգին՝ իր շոշափուկները տարածելով ընդթափառհե ու հայաբնակ գաղաթիները: Իմ պատահական չէ, որ պատերազմի բերան արձավիթներից սնկախ, հենց պատերազմի տարիներին, Քիֆլիսում հայ առաջավոր մտավորականության ջանքերով նոր թափ ու ծավալ է ստանում հայ մշակութային կյանքի զարգացումը: Պատերազմից առաջ հիմնադրված գիտական, գրական ու մշակութային մի շարք կազմակերպություններ այդ տարիներին առավել աշխուժացնում են իրենց գործունեությունը: Պատերազմի մամանակ հիմնադրվում են նման նոր ընկերություններ ևս, որոնց մեջ ընդգրկվում են ժամանակի նշանավոր մտավորականները: Քաղաքական ու տերիտորիալ նոր հեռանկարների

բացման հետ միաժամանակ փայլուն հեռանկարներ են ստվերագծվում Անդրկովկասի հայ գիտական ու մշակութային կյանքի առջև: Ահա, ազգային-քաղաքական և մշակութային կյանքի այս հորձանուտն է նետվում Մանուկ Արևդյանը:

Բանն այն է, որ ռուսական առաջին հեղափոխության պարտություն և ստոլիպինյան ռեակցիային հաջորդող ժամանակաշրջանում, այսինքն ընթացիկ հարյուրամյակի տասական թվականների սկզբներից իսկ, երբ երկրի հեղափոխական տրամադրությունների արթնացման հետ մեկտեղ իր զարգացման նոր փուլն էր թևակոխում նաև հայ հասարակական-քաղաքական միտքը, Արևդյանի գիտական գործունեության մեջ ևս որոշակի տեղաշարժեր են կատարվում: Եթե նախորդ տասնամյակում Արևդյանի գիտական շահագրգռությունները, առանձին բացառություններով, պտուղում էին հիմնականում լեզվա-քերականագիտական հարցերի շուրջը, ապա տասական թվականներին դրանք դերազանցալես կենտրոնանում են զրա-պատմական խնդիրների վրա և հատկապես այնպիսի երևույթների, որոնք պատմա-հասարակական մեծ հնչողություն կարող էին ունենալ ազգային-ազատագրական շիկացած հույսերի ու սոցիալական-քաղաքական գոտեմարտերի նոտն շրջանում: Ժամանակաշրջանի պատմա-հասարակական միտումը արտաբերտ անտես ու աննկատ, սողսկում է հայ հին գրականության առանձին զեմքերի ու երևույթների մասին Արևդյանի հետադրությունների մեջ և դարերի հեռվությունից ազդում զեմքերն ու գործերը նրա փայլուն մեկնաբանությունների ներքո բոլորովին նոր՝ լարաշրջանին համահեռուն իմաստ ու երանց են ստանում: Արևդյանի այդ շրջանի հետադրած խնդիրները հանրամատչելի զեկուցումների ձևով, նախ կարդացվում են հասարակական մեծ լսարաններում, ապա նոր՝ հրատարակվում պարբերականներում կամ առանձին գրքերով:

Մանուկ Արևդյանը հիշյալ տասնամյակում ի թիվս հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչների, ընդգրկվում է Քիֆլիսում հիմնադրված Հայ գրողների կովկասյան և Հայտոց ազգայական ընկերությունների մեջ, իր գործուն մասնակցությունը ցուցաբերելով դրանց աշխատանքներին: 1916 թ. սկզբներից նա գիտական մի շարք զեկուցումներով հանդես է գալիս հիշյալ ընկերությունների նիստերում, արժանանալով ջերմ ընդունելության: Հունվարի 16-ին Հայտոց ազգայական ընկերության հրատարակային նիստում Արևդյանը ցեկուցում է կարգում՝ նվիրված ըն-





Բարձի Մարդասիրական ընկերության զահլիճում նա կրկնում է Քիֆիտում կարդացած դասախոսությունը:

«Ենթե մինչև Բրյուսովի դասախոսությունը,— գրում է հետագայում Ստ. Զորյանը,— Արեղյանին գիտեր մեր ինտելիգենցիայի մի սահմանափակ թիվ, այդ օրվանից նա դարձավ ուշադրության արարիկ: Մեր գիտական աշխարհում նա իհարկև հեղինակություն էր, բայց այժմ հասարակությունը ևս ճանաչեց նրան որպես այդպիսին»<sup>1</sup>:

Արեղյանի հայ հին գրականությունը նվիրված դասախոսությունները շարունակվում են հոբոթդ տարին ևս: 1917 թ. հունվարի 27-ին, դարձյալ Քիֆիտի Հայ երաժշտական ընկերության զահլիճում նա կարդում է հայ միջնադարյան առականրին նվիրված իր նոր հետազոտությունը: Գոչի և Ալյեկեցու առականրի քննուած նյութի հիման վրա Արեղյանը բացահայտում է առականրի ժանրի մեջ անդրադարձած միջնադարյան Հայաստանի սոցիալ-դասակարգային կյանքի պատկերը, ճնշված դասերի բնորոտությունը ազնվականության և հոգևոր դասի զին, միջնադարյան-կրոնական աշխարհայացքի մեջ տեղի ունեցող փոփոխությունները, կրոնական խրատականությունը նկատմամբ ծաղրն ու աշխարհիկ կյանքի ձգտումը:

Այս ուսումնասիրությանը Արեղյանը պարզացնում ու խորացնում էր հայոց հին բանաստեղծության իր տեսության դերազդյուն խնդիրներից մեկը՝ նոր աշխարհայացքի ու աշխարհիկ ոգու վերածումն ու կյանքի սոցիալ-դասակարգային հարաբերությունների անդրադարձումը հայ հին գրականության մեջ: Արեղյանի մշակած մատերիալիստական տեսությունն առհասարակ և հին գրականությունն սոցիալ-դասակարգային բովանդակության բացահայտման սկզբունքը մասնավորապես, թիկարված էր զարաչքանի, այսինքն Ռուսաստանի և Անդրկովկասի 1917 թ. մեծ հեղափոխությունների նախօրեին երկրում կատարվող սոցիալ-դասակարգային ու հեղափոխական-բաղաբական գոտեմարտերի կոնկրետ շարժառիթներով:

Աշխատությունը սիրբ-ինչ վերանշակված լույս է տեսնում միայն 1935 թվականին<sup>2</sup> և սույա մտնում Արեղյանի՝ 1946-ին տպագրված «Հայոց հին գրականության պատմության» II հատորը:

1917 թ. ապրիլին Հայոց ազգադրական ընկերությունը Քիֆիտում հիմնում է կովկասադրական և մասնավորապես հայապիտական երկսն Բարձագույն դասընթացներ, որտեղ, ի թիվս հայոյ քննական պատմության, հայոց ժամանակակից պատմության, հայ նոր գրականության, դասախոսվելու էր նաև հայոց հին և նոր ժողովրդական բանահյուսություն, որի համար դասախոս է կարգվում Մանուկ Արեղյանը: Եույն տարվա մայիսի 13-ին նա կարդում է իր առաջին դասախոսությունը՝ նվիրված հայ հին ժողովրդական բանահյուսությանը, մասնավորապես հին վեպի դարացման ու հարատևության հարցին:

Այս եույն ժամանակներում (1917 թ., ապրիլ—մայիս) հայ միշարք նշանավոր մտավորականներին, հատկապես Հովհ. Թումանյանի և ուրիշների նախաձեռնությամբ ու բաներթով կազմակերպվում է Հայկադյան ընկերությունը, որի մերձավոր նպատակն էր վիճելու սկզբունք... Հայոց ակադեմիա, զնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայադիտությունը և ամենակողմանի ուսումնասիրել մեր աշխարհքը, մեր հին ու նոր կյանքը, մեր գրականությունն ու զեղարվեստը և սույա՛ով վիճակի մեջ զնել հայ գիտնականներին, գրողներին ու զեղարվեստագետներին»<sup>3</sup>: Այս նոր հիմնադրվող հաստատության հետ հայ մտավորականությունը մեծ հույսեր էր կապում: Հովհաննես Թումանյանն, օրինակ, հայ գիտությունը, գրականությունը, մշակույթի զարգացման բնագավառներում Հայկադյան ընկերությունը մեծ հեղաշրջող նշանակություն էր վերապահում:

«...Մինչև այժմ հայ ժողովուրդն ունեցել է մի հոգևոր կենտրոն՝ էջմիածնի տաճարը,— սասում է Թումանյանը,— այժմ մենք սույում ենք կառուցանել մի նոր տաճար պիտության, գրականության ու զեղարվեստի տաճարը— Հայկադյան ընկերությունը... Մենք չունինք գրականությանը նվիրված պրոֆեսիոնալ գրողներ, սրտնից հետո պիտի ունենանք: Մենք չունինք հայ գիտնականներ, սրտնից հետո պիտի ունենանք: Մենք չունինք հայ զեղարվեստագետներ, սրտնից հետո պիտի ունենանք: Եվ սույապայում հայոյ կույտուրայի զարգացման պատմությունը ցրող պետ է բաժանի երկու շրջանի— մինչև Հայկադյան ընկերությունը և Հայկադյան ընկերություններից հետո»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ստ. Զորյան, Հուշերի զիր, Երևան, 1935, էջ 253:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց միջնադարյան առականրը և սոցիալական հարաբերությունը նրանց մեջ, «Մեծ Կույտուրայի պատմության ինտիտուտի աշխատություններ», 4, 1, Երևան, 1935, էջ 7—50:

<sup>3</sup> «Միջոց», 1917, № 81:

<sup>4</sup> «Նորդոտ», 1917, № 116:





տատուիլունեներից աշխատանքի բազմաթիվ հրավերներ է ստանում: Աշխատում էն, հատկապես, Գևորգյան ճեմարանի վարչության տարբեր ժամանակներում (1915, 1917 թթ.) կրկին ճեմարան դառնալու և նախկին պաշտոնը ստանձնելու՝ Արեղյանին ուղղած քաղեցն առաջարկները, որոնք զանազան պատճառաբանություններով մերժվում են: Արեղյանին անհողող կամքը չի կոտրում անգամ ճեմարանի տեսիլ՝ իր բարեկամ Գ. Հովսեփյանի անձամբ Քիֆլիս գալն ու նրան էջմածին հրավերելը<sup>1</sup>: Կաթողիկոսի կամքով ճեմարանից արձակվելու հանգամանքը խոցել էր ազնիվ գիտնական-մանկավարժի արժանապատվությունը, և նա բնդմիշտ հրամարվում է ճեմարանից:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծվում է բազարական յուրատեսակ իրադրություն: Ցարիզմի և բուրժուական ժամանակավոր կառավարության տապալումը ակտիվացնում և ուժեղացնում է բնագոտությունից ազատարարված Անդրկովկասի ժողովուրդների անկախության ձգտումները: Օղակելով այդ հանգամանքից, տեղական ազգային կուսակցությունները ստեղծում են Անդրկովկասի միասնական բուրժուա-դեմոկրատական կառավարություն՝ Սեյմ, որը, սակայն ներքին տարածաշրջանների և արտաքին շնչումների հետևանքով, շատ կարճ կյանք է ունենում: 1918 թ. մայիսին գերմանա-բուրժուական դավթիչների ռազմական ու զինվանագիտական ձնշման տակ Սեյմը կողմադրվում է. սկզբում Ադրբեջանը և Վրաստանը, ապա և Հայաստանը շուլակվում են անկախ հանրապետություններ: Վրաստանի կառավարության գլուխ կանգնած իրենց սոցիալ-դեմոկրատ հռչակող վրացի մենչևիկները հատկանշվում են շեշտված ազգայնամոլական քաղաքականությամբ: Հաշվի չնստելով՝ Վրաստանում ապրող աղջային փոքրամասնությունների շահերի հետ, մենչևիկյան կառավարությունը ներքին քաղաքականության մեջ թույլ է տալիս տյուրիսի գործողություններ, որոնք սեղիք են տալիս իրավացի դեմոկրատիաների:

1918 թ. կեսերին Հայ բազմահազար զանգվածներ տեղահանված Զավախից ու Անդրկովկասի այլ դավառներից և Բուրբուական արշավանալու արերից հայածված, մենչևիկյան կառավարությունից ապաստան են խնդրում: Վրացի մենչևիկները մերժում են

փրկության հույսով իրենց ձեռք կարկառած հայ զանգվածներին, նրանց թողնելով Բակուրիանիի ցուրտ ու խոնավ անտառներուս ծայր հուսահատության, սովի ու տարափոխիկ հիվանդությունների մատնված:

Վրաստանում բնակվող հայ մտավորականության շրջաններում վրացիներին և բողոքի ձայներ են լսվում կառավարության այդ փոքրոցի ու սամարգի վարուների գիմ: Գրանցից ուշադրավ էր հատկապես Հայ ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովրդի ձայն» թերթում տպագրված Մ. Արեղյանի «Շաշեր և վրացիներ» վերտառությամբ հոդվածաշարը<sup>2</sup>:

Արեղյանն այստեղ իր ցավն ու վրդովմունքն է արտահայտում վրաց մենչևիկյան կառավարությունը, որն իր անհեռատես շովինիստական քաղաքականության պատճառով իրար գեմ է լարում զարավոր հարևանության ու բարեկամության ու մեջ պարող հայ ու վրաց ժողովուրդներին, բարեկամություն, որ ես նրա, նույնիսկ իր արտահայտությունն է գտել Հայ ժողովրդական վեպ «Մասնա ծուր»-ում: Արեղյանն իրավացիորեն այդ անմարդկային վերաբերմունքը համարում է վրաց սնանկացող ու սնանկացած տղանկությունից մտքի ու զգացմունքի ծնունդ, մի սնանկ ազգային քաղաքականություն, որ որդեգրել էն վրացի սոցիալ-դեմոկրատները:

«...Վրացի ազնվականների հին տխուր դերը դեպի հայերը.— գրում է Արեղյանը,— մեծ ճարտիկությամբ կատարում են վրաց սոցիալ-դեմոկրատները... ինչ խաղ աեսն, որ այդ լուկ խոսքով սոցիալիստներն ու դեմոկրատները իրենց մամուլում ու վրաց քաղաքականության մեջ լիարացիի գլխին... նիկ վրաց սոցիալիստ կանգնած լինելին այս վերջին տարում նրանց նացիոնալ-դեմոկրատները և ոչ սոցիալ-դեմոկրատները, դուրս նրանց վարուները ունյաես չէր ազդիլ հայերի վրա, ինչպես միջազգային սոցիալիստներին: Նացիոնալ-դեմոկրատներից վաղուց ապաստում էին այդպիսի վարուների և նրանցից հուսախաբ լինելու բան չունեինք: Բայց էր սոցիալ-դեմոկրատ անվան սակ պարտրած շովինիստա-

<sup>1</sup> Մաշտոցյան մասնագրքների արխիվ. Տերաբ վարդապետի ֆուդ, թղթ. 126, վավ. 439. Գ. Հովսեփյանի ֆուդ, թղթ. 95, վավ. 684:

<sup>1</sup> «Ժողովրդի ձայն», Քիֆլիս, 1918, №8 3, 4, 5, 12, 13, 16, 17:  
<sup>2</sup> Արեղյանը նկատի է առնում Դավթի և Նրա քավոր վրացի Գորգիզը բարեկամությունը, մասնավորապես այն միջազգայն, էր քավոր Գորգիզը զբուժանում է Դավթին իր թշնամիների հեղությունից, ստեղծ. «Ջրույլ կաց, աստղ վնասուն և, Վրաստան չէ, որով շեշտել է Վրաստանի՝ Շաշերի համար ունեցած հանգիստ ու ապահով առիթ նշանակությունը:





անշուշտ, կարող էին սոցիալ-դեմոկրատները հենց սկզբից խուսափել, բայց շարին այդ Ավիլի ես վատ իրենց՝ սոցիալ-դեմոկրատների համար»։ Արեղյանն իր դեմոկրատական համոզմունքով ու ինքնուպահովմամբ Վրաստանի կառավարության վարած այդ հիվանդագին քաղաքականության հարստեություն մեջ լուրջ շարքեր է անանում՝ ոչ միայն հայերի, այլև Վրաստանի համար»։

Ռուսական հեղափոխության պատմական ազատարար մեծ դերը մեկնեցնվելու ըմբռնած Արեղյանը չէր կարող այլևս հաշտվել որևէ նոր ազգային կամ սոցիալ-քաղաքական բռնության հետ։

«Արդեն անցել են այն ժամանակները,— գրում է նա,— երբ մի ազգ մի ուրիշ ազգի կարող էր պահել ճարտական վիճակի մեջ Ազատության, ազգային ինքնորոշման համը մի անգամ ճաշակելուց հետո՝ այսուհետև ոչ մի ազգային փորձամանություն, թույլ չի տալ որ իրեն հետ խաղ անեն...»<sup>1</sup>։

Այսպիսի մեծ հավատ ու համոզմունք ունենալով ետհեղափոխական նոր ժամանակաշրջանի նկատմամբ, Արեղյանը հրապարակորեն մարտնչում է ժողովուրդների եզրալրական նոր հարաբերությունների համար, որի իրականացման կարևոր կանխապայմաններից մեկը փոխադարձ հարգանքը և դեմոկրատական հավասար իրավունքների առկայությունն է համարում։ Նա պատմական փորձի հաշվառումով և սեփական համոզմամբ վստահորեն հավաստիացնում է, թե սհալության ամբողջությունը,— լինին բնիկ վրաստանցիներ, թե հայաստանցիներ,— նրանք միայն Վրաստանի զորացումն ու բարգալաճումն են ցանկանում, որովհետև դա միակցումայն մերն է, մի պայմանով միայն, որ մենք շլիկենք այս երկրում իրավազուրկ և խորթ»<sup>2</sup>։

Հայ ժողովրդի ֆիդիկական ու հոգևոր գոյության պահպանության դիրքերից բխող Արեղյանի այս մարտնչող դեմոկրատիզմը պատմականորեն դեմատակի է և արժեքավոր ոչ սոսկ ազգային շահերի պաշտպանության տեսակետից միայն, այլև առհասարակ հասարակության ընդհանուր քաղաքական առաջադիմությունը ներպատկելու առումով, մանավանդ որ մենշեկիկան Վրաստանում կիրառվող ազգային խտրականության քաղաքականությունը միևսադիմական բայց էր ազգերի ինտերնացիոնալիստական համերաշխության ու համագործակցության համար բուլշեիկների մղած

քաղաքական պայքարի նպատակից, պատմականորեն մի արգաբացի միտում, որ փորք անց բնկնելու էր ազգերի սոցիալիստական համերաշխության հիմքում։ Այսուհանդերձ Քիֆլիսի զաշենկյանական «Աշխատավոր» լրագիրը, առանց խորամտիկ լինելու հարջի էություն մեջ, կուսակցական միտումնավոր դիրքերից հարձակվելով իր հակառակորդ «Ժողովրդի ձայն» թերթի բռնած ընդհանուր սեղանության վրա, 1918 թ. սեպտեմբերի 25-ի ստանդարտում, առանց անունը տալու, զրպարտում է Արեղյանին, որ իբր վերջինս իր «Հայեր և վրացիներ» հոդվածում այդ երկու ազգերին հայտարարել է «գարավոր թշնամիներ»։ Պատասխանելով այդ զրպարտությունը Արեղյանը նկատում է, որ լրագրորդը պետք է «մի քիչ խելք և մի փորք ազնվություն ունենա», իսկ «Աշխատավոր» թերթը «իմ «Հայեր և վրացիներ» հոդվածի առթիվ... ոչ խելք է ցույց տվել, ոչ էլ ազնվություն... Այդ «բնկնների կողեկախիլը» (իմս՝ «Աշխատավոր» թերթի խմբագրությունը— Ս. Ը.) պետք է խմանա, որ ես և նրան ոչ իրանցից ավելի, գոնե իրանց չափ կարգացել ևմ հայր պատմություն և դիտեմ թե հայերն ու վրացիները դարերի ընթացքում ի՞նչ հարաբերություններ են ունեցել։ Ուստի ես իմ վերոհիշյալ հոդվածի մեջ չէի կարող այդպիսի բան գրել և չեմ էլ գրել»։

Համատ փաստերով հերքելով «Աշխատավոր»-ի իր դեմ հարուցած մեղադրանքը, Արեղյանը հեղանքով եղբայրանում է.

«Ի՛նչ է այս, պարտնեն՛ք։ Արդյոք դուք մտքով այնքան կո՛ւլր եք, որ շատ պարզ դրած ու կրկնած բաները բուրբուլին հակառակ ձևով եք հասկանում, թե՛ այնքան անբարեխիղճ եք, որ հասկանում եք և գիտակցությամբ այդպես եք վարվում։ Նրե՛ս առաջինն է, էլ ինչպե՛ս կարող եք ավելի մեծ ու բարդ բաները հասկանալ, սոցիալիզմից խոսել ու գրել...»<sup>3</sup>։

Հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության պահպանության շահախնդրությամբ է դարձյալ բերողվում 1919-ին հրատարակած «Լոռի» հոդվածաշարը՝ Վերջինս հիմք էին ձառառելու լոռու համար Վրաստանի ու Հայաստանի միջև սանձադեղծված ազգամիջյան արյունոտ ընդհարումները։ Իրավացիորեն բնագրականով Լոռին Հայաստանից բռնագրավելու մենշեկիկան Վրաստանի գավառական միտումները, Արեղյանը պատմական անհերքելի փաստերով ապացուցում է, որ Լոռին միշտ էլ եղել է Հայաստանի

<sup>1</sup> «Ժողովրդի ձայն», 1918, № 12։

<sup>2</sup> Անդր.

<sup>1</sup> «Ժողովրդի ձայն», 1918, № 23։

<sup>2</sup> Տե՛ս «Ժողովրդի ձայն», 1919, №№ 17—22։









շատ կարևոր խնդրի՝ հայոց լեզվի ուղղման անբնական տերմինաբանության գործի իրականացմանը։ Աշխատանքը տևում է մի քանի տարի։ Երբ նոյեմբերին Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր, հաջորդ իսկ ամսին Հայաստանի ուղղման կոմիտեի Ավիա նուրիջանյանի հրամանով Արեղյանին հանձնարարվում է կզգանլ ուսւ-հայերեն և հայ-ուսուերեն ուղղման անբնական բառարանը։ Այդ գործը զլուխ բերելու նպատակով Սովետական Հայաստանի ուղղման կոմիտեի անդամները զլիվար շտաբում Արեղյանը նշանակվում է ուղղման անձնակազմի քարտուղար։ Նա, որ մինչև այդ ուղղման հրամանները, հրահանգներն ու կանոնադրերը ուսուերենից հայերեն թարգմանող հանձնախմբի անդամ էր և վարել էր մեկուկես տասնյակի հասնող ուղղման գրքերի ու զինվորական գործակարության վերաբերյալ գրքածրների թարգմանության խմբագրությունը<sup>1</sup>, վստահորեն ձեռնամուխ է լինում ուղղման անբնական թարգմանք կազմելու աշխատանքներին։

8

Արեղյանի գիտա-հասարակական գործունեությունը նոր թափ ու ծավալ է ստանում Հայաստանի սովետականացման շրջանում։ Պատերազմի ծանր արհավիրքներից հյուսիսում երկրի անտեսության վերականգնման առաջին քայլերին ղուղնթից նորաստեղծ Սովետական Հայաստանի կոստակարությունը զբաղվում է հանրապետության կուլտուրական վերաշինության խնդիրներով։ Դրանցից առաջնահերթն ու անհնաձեռնին անգրագիտության վերացումն էր՝ լեռնյան կուլտուրական հեղափոխության ծրագրի կենտրոնական հարցը, որի կենսագործման համար Հայաստանի կոստակարությունը հարմար ձևեր է որոնում։ Ընդհանուր անգրագիտության պայմաններում համասարած գրագիտության արմատավորման և առհասարակ ազգայնակուլտուրական կուլտուր-կրթական մակարդակը շնչաակի բարձրացնելու համար Հայաստանի կոստակարությունը լուսավորության ժողովրդական կոմիտեի անդամներին միջոցով գիտում է կրթական մի շարք արմատական միջոցառումների։ Հայոց լեզուն, շնչած իր նոր բնութիւն, զենուս շարունակում էր օգտվել հին հայերենի՝ որարարի ուղղագրությունից և ենթարկվել ուղղագրական հին կանոններին ու օրենքներին։ Այդ հանգամանքը զղա-

լիորեն զվարացրել էր հայոց լեզվի ուսուցումը։ Վերջինս մի լուրջ խոչընդոտ էր մասսայական անգրագիտությունը կարճ ժամկետում արմատախիլ անելու ճանապարհին, և, բնականաբար, կուլտուրական հեղափոխությունը նախատեսում իրականացնող սովետական կոստակարությունը առաջին հերթին ձեռնամուխ է լինում ուղղագրության բարեփոխման կարևոր խնդրին։ Բայց նոր հայերենի ուղղագրության բարեփոխումը մինչև համապետական հարց դառնալը, վաղուց էր արդեն գիտական-գործնական խնդիր դարձել լեզվաբան-հայագետների համար։

Ակամ անցյալ դարի երկրորդ կեսերից, մասնում և հրապարակային ելույթներում առաջ են քաշվում նոր հայերենի ուղղագրության բարեփոխման տարբեր առաջարկներ, որով հարցն աստիճանաբար ձեռք է բերում հասարակական նշանակություն։ Հիշյալ հարգի պատմության մեջ բացառիկ տեղ է վերապահվում Մանուկ Արեղյանին։ Իր գիտա-մանկավարժական գործունեության սկզբից իսկ, մասնավորապես 1890-ական թվականներից, նա պարբերաբար դրառվում է աշխարհաբար հայերենի ուղղագրության խնդրներով։

1890 թ. «Նոր-գար»-ում հրատարակած՝ «Ուղղագրական նկատողություններ» հոդվածում առաջ քաշելով ժամանակակից գրական լեզվի մեջ ուղղագրական միասնություն ստեղծելու հարցը, նա գիտականորեն հիմնավորում է այն սկզբունքները, որոնց վրա պետք է խարսխվեն ուղղագրության միասնական օրենքները։ Ուղղագրության առաջին և զիջավոր սկզբունքը համարելով հնչյունականը, այսինքն արտերի գրությունը արտասանության համեմատ, և ապա՝ շտապաբանականը, որ է բառի արմատական գրության պահպանումը, Արեղյանը ցույց է տալիս, որ հայոց լեզվի մեջ իշխող է պատմական, այն է՝ գրարարի ուղղագրությունը, որի մեջ լի պահպանվում հիմնականը՝ հնչյունական սկզբունքը։ Բառերը գրվում են ոչ թե բառ ժամանակակից զարգացման խոսակցական արտասանություն, այլ գրարար ձևով։ Եվ Արեղյանը ուղղագրական հիմնական զվարությունը համարում է այդ պատմական ուղղագրությունը, որը «նոր լեզվի համար ոչ թե մի սկզբունք է, այլ մի հնոտիք, որ մենք կրում ենք, որովհետև նրանից զվար է աղտավելը, և այդ հնոտիքը պիտի կրենք, մինչև որ, եթև կարողանանք, ազատվենք նրանից»<sup>2</sup>։ Բայց նա միտամանակ գտնում էր, որ

1 «Նոր-գար», 1890, №№ 151, 153, 154, 155;  
2 «Նոր-գար», 1890, № 151.

<sup>1</sup> Մ. Արեղյան, Թուս-հայերեն ուղղման քարտուղար, Երևան, 1927, էջ 3-4.  
106

առայած հայոց լեզվի բարրաւեցնելի պղծեցութեամբ մի՞նչույն բարձր երկրի ձեւերով արտասանվելու պատճառով, ուղղագրութեան բարեփոխումը հնչյունական սկզբունքի հիման վրա մեզ մտա հնարավոր չէ կիրառել. ուստի առաջարկում է ուղղագրական բարեւարձումները հիմնել երկրորդ սկզբունքի՝ ստուգաբանականի վրա, որով հայոց լեզվի ուղղագրութեան մեջ մասնակի բարեփոխություններ կարելի կլինի մտցնել, ստեղծելով մի օրինաւափ միասնութիւն:

Արեղյանը շափազանց զգույշ է մտնելում ուղղագրական բարեւարձումների խնդրին և ամեն մի հտիտումն ու շտապոված քայլ այդ ուղղութեամբ համարում է սխալ ու վնասակար: Այդ էր պատճառը, որ նա նույն 1890 թվականին Գրարարի երկրաբարրաւեցնելու արժեքավոր հետազոտութեան մեջ<sup>1</sup>, դարձյալ ուղղագրութեան իր նախորդ հնչյունական-արտասանական սկզբունքը պնդելով հանդերձ, պնդում է, որ թեպէս հին արտասանութեան վրա հիմնված պատմական ուղղագրությունը օտարի ուղղագրութեան մեջ ներկայանում է իրրե մի հնացած զգեստ, բայց ոչ ավելորդ զգեստ, որ հնչյունավոր կարելի է հանել և դուրս ձգել. այդ հեշտ չէ անելը ոչ թէ նրա համար, որ մենք վարժվել ենք այդ զգեստին, այլ ավելի նրա համար, որ այդ հին ուղղագրությունը պահում է միութուն և տեղիք չի տալիս տարանջնարությունների. իսկ մի լեզվի գրութեան մեջ ամենից անհրաժեշտ պայմանն է ուղղագրութեան միութունը<sup>2</sup>:

Այստեղ Արեղյանն առավել ճշգրտում է ուղղագրական բարեփոխումների իր նախորդ տեսությունը, հնչյունական և ստուգաբանական սկզբունքների պահպանման հետ միաժամանակ կարեւոր տեղ տալով նաև ուղղագրական միասնութեանը: Եվ նա գրտնում է, որ ուղղագրութեան մեջ փոփոխություններ մտցնելիս միշտ պետք է առաջնորդվել երեքով էլ. «Կարելի չէ մեկովն առաջնորդվել, առանց մյուս երկուսն ի նկատի ունենալու»<sup>3</sup>:

Ուղղագրութեան փոփոխությունների վերաբերյալ Արեղյանի այս խոհնմն ու խելաշիջի տեսակետը շարունակում է առավել խորանալ ու գործնական երանգներ բնորոշել նրա հետագա գիտա-հասարակական գործունեութեան ընթացքում:

1892 թ. Քիչիխում նա հրատարակում է «Հայոց լեզվի ուղ-

ղագրութեանը» ուսումնական ձեռնարկը, որի նպատակն էր այդ շրջանի հայոց լեզվի ուղղագրութեան խառնաշփոթութիւնն ու բազմադանութիւնը ենթարկել որոշ միօրինակութեան ու միասնութեան Գիրքը, որ կազմված էր հայ և օտար ուղղագրական աշխատութիւնների սկզբունքների ու փորձի հիման վրա, ուներ զործնական կարևոր արժեք: Այն հայոց լեզվի ուղղագրութեան մի ամփոփ ուղեցույց էր: Այնուհետև, տարիներ անց, իր մանկավարժական փորձից ելնելով, նա կազմում է «Գալլ և գալլի պատահարներ» խորագրով ուղղագրութեան ուսուցման օժանդակ մի ձեռնարկ, որն ունենում է մի քանի հրատարակութիւն: Բացի այդ, նույն նպատակով, Մ. Մատենճյանի և Ա. Արեղյանի աշխատակցութեամբ կազմում է և ներօթյան գալորցի կողմից հրատարակում «Գրագիտ» վերնագրով ուղղագրական ձեռագիր հոգւածների մի քանի գրքույկ, որոնք ևս ունենում են կրկնակի տպագրութիւններ: Բայց գրանք էլին էականը: Արեղյանի ուղղագրական բարեփոխությունների ամբողջական տեսությունը ամփոփված ձևով երևան է գալիս 1913 թ. հոկտեմբերի 14-ին էմիգրանում հայ գրերի գլուխի 1500-ամյա համագրային մեծ հոբելյանի՝ զեկուցման մեջ, որ զրվել էր հորեկանական կազմակերպիչ հանձնաժողովի առաջարկութեամբ: Այստեղ Արեղյանը գիտակա-նարեն զարգացնում է ու խորացնում զեկու 23 տարի առաջ «Նոր-գար»-ում տպագրած ուղղագրութեան բարեփոխութեան մասին իր հոգւածների տեսական գրութիւնները: Առաջադրելով մեր ավանգա-կան ուղղագրութեան մեջ կատարվելիք փոփոխությունների հարցը, նա այն համարում է զձվար ու կենսատ և տվյալ ժամանակափո-լում հետտուկ ուղղագրութեան արժանի մի խնդիր: Ուստի և ողջունում է հորեկանական հանձնաժողովի կարևոր նախաձեռնութիւնն այդ առթիվ: Ապա, գիտական հատուկ քննութեան առարկա դարձնելով հայոց լեզվի ուղղագրութեան փոփոխման հարցը, քննադատելով այն պատահական երևութիւններով պատճառաբանողներին, Արեղ-յանը ապացուցում է, որ այն պատմական մի անխուսափելի ան-հրաժեշտութիւն է, «իսկապիս շարունակութիւնն ու մնացորդ» պարարարի և աշխարհարարի մեծ վեճի, որ զեո վերջնական բա-վարար լուծում չի ստացել մտքերի մեջ ընդհանրապէս»: Այս մեկ-նակխում էլ նա գտնում է, որ ուղղագրութեան փոփոխման հարցը սեռայնյալիս պահանջ է, ինչ որ մի ժամանակ աշխարհարար գրա-

1 «Նոր-գար», 1890, № 167—191, 193, 194, 196, 197:

2 «Նոր-գար», 1890, № 197:

3 Անդ.

1 «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1913, № 11, 12:



կան լեզվի խնդիրը, և նույնպես պիտի, այս կամ այն կերպ, լուծուած ստանա, ինչպես աշխարհաբարի խնդիրը<sup>1</sup>: Եվ ի՞նչ աշխարհաբար հաղթանակ է արդեն գրարարի զեմ ձևարանության և շարահյուսության հարցում, ապա այն զեռու մնում է կաշկանդված գրաբարի ուղղագրությամբ, «որ օտակա նշանակություն չունի մի նոր գրական լեզվի համար, քան ձևարանությունն ու շարահյուսությունը»:

Հարցը զենյով պատմական նման անհրաժեշտության տեսանկյունից, Արեղյանը հիմնադր փաստարկներով հակաձայնում է հին ուղղագրության կողմնակիցներին այն պատճառարանությունների զեմ, թե ինչու Ֆրանսիացիները կամ ուրիշները, որոնց ուղղագրությունը նույնպես զգվարություններ ունի, չեն փոփոխում: Մանկավարժական իմաստով այդ դիտողությունը ճիշտ համարելով հանդերձ, նա օգտամական տեսակետից այն անարժեք է համարում, քանզի Ֆրանսիացիների կամ ուրիշների հին լեզվից նոր մեղմին անցնելու շրջանում ուղղագրության մեջ այնպիսի վիթխարի փոփոխություններ են տեղի ունեցել, որ երևակայելն անզամ չնարավոր չէ: Ուղղագրական բարեփոխումների վեճերն ու փորձերը, որ Ֆրանսիացիների մոտ տեղի են ունեցել XV—XVII դարերում, մեկ մոտ, լեզվի օգտամական զարգացման հետևանքով, միայն XIX դարի երկրորդ կեսերին են բաժին ընկել: Այսուհանդերձ Արեղյանը տեսականորեն բժբեռնելով հայոց լեզվի ուղղագրության արմատական բարեփոխման անհրաժեշտությունը, գործնականորեն, սակայն, ինչպես և զրանից շատ տարիներ առաջ, այն շատ զգվար իրադրմելի է համարում. ուստի և գտնում է, որ քաղ խնդրին պետք է շատ զգույշ մտանել: Գծվարության ամենամեծ պայմանը համարում է այն, որ մեկ ունենի երկու գրական լեզու (արեկեղհայ և արեմտահայ), որոնք իրարից խիստ տարբերվում են իրենց արտասանությամբ: Եվ ամեն զծբախտություն կլինեք ազգային տեսակետից, ի՞նչ մեր երկու գրական լեզուների մեջ ուղղագրությունը հիմնված լիներ ոչ թե գրարարի վրա, այլ տարբեր տեղերի արտասանության: ... Ուստի միանգամ ընդմիջա պիտի հրաժարվի ուղղագրության մեջ հիմնական փոփոխություններ մտցնելու ամեն ծայրահեղ մտրից, որով ցանկանում են մեր ուղղագրությունը խիստ հնչարանական դարձնելը<sup>2</sup>: Դեմ արտահայտվելով ուղղագրու-

թյան արմատական բարեփոխության մտայնությունը, Արեղյանը առաջ է քաշում և օգաշտույանում ուղղագրական մտանալի բարեկուրտությունը անհրաժեշտությունը: Այդ խնդրում, սակայն, նկատի ունենալով մեր տարբեր բարբառների բաղաձայնների հնչյունական տարբերությունները, ինչպես և դարերով բաղաձայնների ուղղագրության անփոփոխ բնույթը, Արեղյանը հանուն ուղղագրական միասնության գտնում է, որ քրաղաձայնների հին ուղղագրությունը անհնար է փոփոխություն կարող է միայն ուղղագրական խառնաշփոթություններ առաջացնել: Հետևաբար, բարեփոխությունների նեթակա են մնում միայն ձայնավոր տառերը և այն էլ միայն նրանց: «որոնց գրությունը համապատասխան չէ ի՞նչ ոչ բոլոր բարբառների, սունվազն գոնե երկու գրական լեզուների ընդհանուր զարգացական արտասանությունը»:

Այլ հարցում ևս Արեղյանը զգուշություն է ցուցաբերում, զրանելով, թե փոփոխություններն այն լավով պետք է կատարվեն, որ բարի գրության պատկերը շատ չփոխվի: Հայերեն վեց ձայնավորներից երեքը (ա, ր, ի) գրության մեջ ոչ մի զգվարություն չեն ներկայացնում, քանզի յուրաքանչյուր նշանագիր մի հնչյուն է արտահայտում: Մնում են երեքը՝ (օ, ու, է), որոնց գրության համար կո հինգ տառ (ե, է, ու, օ, ի) և նույնիսկ մի երկատառ (ու): Ահա զրանց յայոց լեզվի ուղղագրության մեջ ունեն խառն վեճակ, որ սկզբնապես չի եղել, այլ առաջ է եկել օգտամականորեն «բրեն հետևանք այն բանի, որ հնչյունները բառերի մեջ փոխվել են, իսկ գրությունը մնացել է հինք»:

Եվ ահա ուղղագրական հիշյալ խառն վեճակը կարգավորելու համար Արեղյանը հնչյունների արտասանական և օգտամական-տեսագրական տանձնահատուկությունները նկատի ունենալով, առաջարկում է. 1) բառամիջում օ հնչյունը զրել միշտ ու ստառով, բառասկզբում՝ օ ստառով, իսկ շատասկզբում՝ վո վանկը զրել: ո ստառով, 2) է-ն պահել բառերի վերջում, ապա՝ բառասկզբում ու բառամիջում՝ փակ վանկերում, երբ է-ն փոխվում է ի ձայնավորի, ինչպես նաև բառերի սկզբում և բառամիջում՝ ա, ի, ո, ու ձայնավորներից առաջ, 3) ե-ով զրել այն բառերի ու վերջին փակ վանկերի է-երը, որոնք չեն զառնում, 4) չ կրտաձայնը ա և ո ձայնավորներով վերջացող բառերից հետո զրելու զրել, 5) վ. ու և և տառերի զկարում զրել և, քանի որ արմատացել է ուղղագրության մեջ Ղ. Աղայանի վ-հնչյուն ու-ի տեղ և զրելու սովորությունը, թեպետ

<sup>1</sup> «Արարատ», 1913, էջ 1052.

<sup>2</sup> «Արարատ», 1913, էջ 1057—1058.

ինքը՝ Արեղյանը տեսականորեն ընդունում է Կ-ի փոխարեն ամենուրեք վ գրելու սկզբունքը:

Արեղյանի այս առաջարկությունները, իր արտահայտված՝ «առաջին աստիճանի», այսինքն նվազագույն բարեփոխումներ էին, որ ավյալ փուլում հնարավոր է համարում ընդունել: Մինչդեռ ինքն անձամբ կողմնակից է առավել շատ փոփոխությունների, կամ բառ իրեն՝ «երկրորդ աստիճանի» բարեփոխումների (ինչպես օրինակ՝ բառասկզբի և հեշտը չ-ն բոլոր դեպքերում գրել ն, է-ն՝ պահել միայն բառասկզբներում, իսկ մնացած դեպքերում գրել և և այլն): Բայց զրանք համարում է ապագայի դործ, քանզի ուղղագրության բարեկամներին մեզ նա իրավամբ մեծ տեղ է տալիս զբաղան հասարակայնության կողմից ընդունելիության հանգամանքին: Երբ այդպես շատ փոփոխություններ մտնեն բառերի գրության մեջ, ապա կփոխվի նրանց պատկերը, որը և դժվարընդունելի կդառնա: Դրա համար էլ նա կողմնակից է աստիճանական փոփոխության, իսկ իր առաջարկությունները դնահաստում է իրրե առաջին աստիճանի տարրական փոփոխություն: «Այս փոփոխություններով,— գրում է Արեղյանը,— մեր ուղղագրությունը ձայնավորների և վ-ի նկատմամբ հարկավ գիտական ճշտություն չի ստանում, բայց ուղղագրության մեջ որոշ դյուրություն է մտնում և մի քանի տառերի գրությունը կանոնավորվում է»: Եղևյով, որ կլինեն և կան շատերը, որոնք զեմ են ինչպես այդ, այնպես էլ ուղղագրական որևէ այլ փոփոխության, Արեղյանը պնդում է. «Արդյախներին սակայն նա պիտի կրկնեմ, թե փոփոխությունը լինում է և լինելու է. կուզեք գիտությունը համարել, կուզեք աղիտությունը: Հետզհետե մասնում են նորանոր փոփոխություններ և մենք անկարող ենք դրա առաջն տեսել...»<sup>1</sup>:

Արդյախով, Արեղյանը, 1913 թ. և դեռ զրանից շատ տարիներ առաջ, հայտն լեզվի ուղղագրության ամբաստական բարեփոխումը համարում է պատմականորեն անհրաժեշտ խնդիր, իսկ մասնակի բարեկամները դարձնում է օրվա հարց և որոշակի առաջարկությունների ձևով ներկայացնում գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանին նվիրված համազգային հանդիսավոր ժողովի քննությանը: Թեպետ իր այդ առաջարկությունները Արեղյանը չէր ներկայացնում իրրե պարտադիր դործագրելի օրինալիծ, այլ ստակ որպես հնարավոր փոփոխություն, որպես «ակադեմիական քննություն», այ-

դուամենայնիվ դա մի լուրջ քայլ էր հայտն լեզվի հին ուղղագրության մեջ համազգային-պաշտոնական ձանապարհով բարեկամումներ մտցնելու տեսակետից: Ինքը՝ Արեղյանը, կտրականորեն զեմ էր ուղղագրության անհատական բարեփոխումներին, այն համարում էր համազգային նշանակություն ունեցող մեծ դործ և առայ էր քաշում ուղղագրական բարեփոխումները ընդհանուր-ազգային, պաշտոնական հիմքերի վրա դեկլու պահանջը: Ուղղագրական բարեփոխումներն ու պործագրումը, որ դարգացած երկրներում իրադործում էին նրանց ակադեմիաները, հայ իրականության մեջ պետականության և նման հիմնարկի բացակայության պայմաններում, Արեղյանը համարում է մի այնպիսի համազգային հեղինակավոր մարմնի դործ, որի որոշումները պարտադիր լինեն հայության բոլոր հատվածներին: Արդյախի մարմին, նրա կարծիքով կարող էր լինել Քիեֆիսի և Կ. Պոլսի զբաղաներից, ինչպես նաև հոգևոր իշխանության ներկայացուցիչներից ստեղծված մասնագետների մի այնպիսի խորհուրդ, որն շիր որոշումներով մի քանի ուղղագրական խնդիրների գտն լուծում տար»<sup>2</sup>:

Արեղյանի վերհիշյալ ցանկություններն ու առաջարկները թեպետ չիրականացան, բայց էականն այն է, որ պատմականորեն հայ իրականության մեջ առաջին ինքն էր, որ ուղղագրական անհատական վարիվերումների և ընդհանուր խառնաշփոթության զեմ այդքան լայնությամբ ու խորությամբ զնում էր գիտական ու նպատակալին բարեփոխումների հիման վրա մեր ուղղագրության կանոնավորման ու սխտեմավորման հարցը, և, որ զիսավորն է՝ զրան ընդհանուր, պարտադիր և պաշտոնական բնույթ առլու խնդիրը:

Ապա, դայժյալ, Արեղյանը ուղղագրական բարեփոխությունները զիտում է ոչ ստակ իրրե գիտական-հնչյունաբանական մի իրողություն, այլ արպես հասարակական կարևոր երևույթ, որպես շիր միջոց հայերի մեջ հայ գրագիտությունը, որով և հայ լեզուն գորտցնելու համար: Իսկական նպատակը,— զրում է նա,— «հա այս վերջինն է»<sup>3</sup>:

Բայց ուղղագրական բարեփոխումներին պաշտոնական կերպարանք առլու և հայ ժողովրդի լայն զանգվածներում զբաղիտությունը տարածելու Արեղյանի բաղձանքը չէր կարող իրականանալ քարական բռնակալության հասհամալած քաղաքականության պայ-

<sup>1</sup> «Արարատ», 1913, էջ 1139—1140.

<sup>1</sup> «Արարատ», 1913, էջ 1143.

<sup>2</sup> «Արարատ», 1913, էջ 1064—1066.



Տոններում և առարկայական այլ պատճառներով. ուստի և նրա վերահիշյալ բոլոր առաջարկությունները հասարակականորեն չեն զործադրվում և մնում են առանց որևէ շոշափելի հետևանքի: Եվ այժմ, երբ Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր, երբ օրակարգի հարց է դառնում աշխատավոր զանգվածների կուլտուրական մակարդակի բարձրացումը, որի իրագործումն սկսվում էր բնօրհանուր գրագիտության տարածումից, պետականորեն ու պաշտոնապես առաջ է քաշվում հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման խնդիրը:

Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիտեի առաջ ուղղագրության բարեփոխման գործը հանձնարարում է այդ խնդրի հնարյա նախանձայններին՝ Մանուկ Աբեղյանին:

1921 թ. հունվարին, Հայաստանի լուստոզկոմ Աշ. Հովհաննիսյանի հրավերով Երևանի պետական թատրոնի գահելեում, բաշխաձարը լուսարանի առաջ Աբեղյանը կարդում է հայոց լեզվի ուղղագրության հնարավոր բարեփոխումների մասին մի զեկուցում, որ փաստորեն շարունակությունն ու զարգացումն էր 1913-ին էջմիածնում կարդացած հայտնի զեկուցման հիմնական դրույթներին:

Այս վերջին զեկուցման մեջ ամենից առաջ անձեռնմխելի էր թողնվում բազմաշունչների ուղղագրությունը. փոփոխությունները առաջարկվում էր մտցնել հիմնականում ձայնավորների, մասնավորապես է, օ, և հնչյունների ուղղագրության մեջ, ճիշտ այնպես, ինչպես առաջարկվել էր 1913 թվականին: Եվ քանի որ ձայնավորների արտասանությունը մեր երկու զրական լեզուներում գրեթե նույն էր մնում, Աբեղյանն առաջարկում է ուղղագրության բարեփոխությունը հիմնել առաջին հերթին զոչորակալան-զրական արտասանություն վրա: Ապա, համառարած գրագիտությունն արագ և հեշա տարածելու, ուղղագրական ամեն կարգի զովարություններից խուսափելու, ինչպես նաև բարեփոխումները զրագնա սերնդի կողմից զյուրությունը բնօրհան տալու համար, նա զանում էր, որ «փոփոխությունը պետք է այնպես լինի, որ բացառություններ չմնան, և բոս կարելի յույն, թիւ բառերի զրությունը տարբերվի եզածից», եվ երբորը սկզբունքը Աբեղյանը համարում է զիտականը, այն, որ «փոփոխությունը պետք է հիմնավորված լինի հնչարանական տեսակետով և պատմականորեն»:

Այս սկզբունքներով հիմնավորված Աբեղյանի առաջ քաշած նոր բարեփոխումները իրենց հիմնական ձևերով նույնանում էին 1913 թ. առաջարկների հետ. տարբերությունը միայն այդ փոփո-

խությունների աստիճանի ու սահմանների մեջ էր: Եթե 1913 թ. Աբեղյանը ս, օ, ե, է տառերի զրության մեջ մասնակի փոփոխություններ էր կամենում մտցնել, բայց ներբոստ կողմնակից էր առավել արմատական բարենորոգումների և չէր զանում այդ մասին անզամ խոստովանել, ապա 1921 թ., հասարակական կյանքի նոր պահանջների պայմաններում, ուղղագրությունն առավել զյուրացնելու և զրա մեջ միօրհանկություն մտցնելու նպատակով առաջարկում է օ և է տառերը հանել այբուբենից և բոլոր զեպերում օ և է հնչյուններն արտահայտել ս և ն տառերով: Ապա նույն նպատակով առաջարկում էր վ հնչյունը բոլոր զեպերում (ս-ի և -ի փոխանակ) զրել վ առավ. չ տառը պահել և զործածել միայն կիտանայն ի (ն) հնչյունի համար, ա-ով և ո-ով վերջացող բառերից հետո չ զրբել, իսկ բառերի սկզբում Ե հնչոյ չ տառի փոխանակ զրել Ե, ինչպես որ հնչում է:

Այն ամբողջական նորը, որ զիտակցարար չէր շոշափվել 1913 թ. նա, եօ, իս երկբարբառների և սլ կապակցության ուղղագրության հարցն էր, որ Աբեղյանն այժմ առաջարկում էր փոխել և զրել յա, յս, յոս ձևերով, իսկ սլ կապակցությունը, որտեղ սլ է արտասանվում, զրել բոս այդմ (լուսալույս, բոսբուրբուր):

Այս բոլոր բարենորոգչական առաջարկները նույն Աբեղյանի ութ տարի առաջ էջմիածնում կարդացած զեկուցման զրույթներին առավելագույն աստիճան էին ներկայացնում, որ այն ժամանակ առաջ էր քաշվում իրի հարցադրում, իսկ զործադրումը թողնվում էր սուպագային:

Աբեղյանի զեկուցումը բնարկվում է զիտակ մարդկանց կողմից, ապա կազմվում է հայոց լեզվի մասնազեաններից բազկացած մի հանձնաժողով, որի հատուկ քննության է լուստոզկոմը ներկայացնում հիշյալ զեկուցումը: Հանձնաժողովը բնօրհանում է առաջադրված զրույթները, որից հետո լուսավորության ժողովում տպագրել է առյախ այն և հղում սհայ լեզվի մշակներին, առանձնապես լուսավորության զործով մտահոգվածներին», լսելու նրանց հեղինակավոր կարծիքը: Սակայն ոչ մեկից որևէ առարկություն կամ արձագանք չի ստացվում: 1921 թ. զեկտեմբերի 28-ին Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիտեի հրամանով կազմվում է հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման հանձնաժողով՝ նախազուրկումը Մ. Աբեղյանի, անզամակցությամբ Ստ. Մախառայանի, Հ. Մանանդյանի, Գր. Ղափանցյանի և Տ. Մուշեղյանի: Հանձնաժողովը քննության է ստեղծում Աբեղյանի վերահիշյալ

ներ մացնելու հարցի շուրջը: Ուղղադրական հանձնաժողովին կից ինստիտուտում գործում է նաև հանրապետության լավագույն մասնագետներից կազմված մանկավարժական ենթահանձնաժողովը, որը հասկապես բնում է բարեփոխված ուղղագրության հարցը մանկավարժական տեսանկյունից: Այս հանձնաժողովը և ենթահանձնաժողովը աներկբա ընդունում են բարեփոխության անհրաժեշտությունը, նոր ուղղագրության կետերից մի բանիսը, իսկ մնացածներին վերաբերյալ արտահայտում են տարբեր կարծիքներ: Հանձնաժողովի անդամների մեծամասնության կողմից ընդունելին և միասնականն այն է լինում, որ է և օ տառերը պետք է վերականգնել այբուբենի մեջ, բառասկզբին յն և վո երկձայն հնչյունները արտահայտել է և օ տառերով, իւ, էա, եօ երկբարբառների գրությունը թողնել նույնությամբ:

Հիշյալ առաջարկությունները, սակայն, մնում են անհետփյան մինչև 1940 թվականը: 1940 թ. լուսժողովումսին կից տեղամիտարական կոմիտեի որոշմամբ՝ նոր ուղղագրության մեջ վերականգնվում է է և օ տառերի գործածությունը, վերացվում է բառասկզբում ե-ից և օ-ից առաջ յ-ի և վ-ի գրությունը և այլն: Այս փոփոխություններով նոր ուղղագրությունը բավականաչափ մոտենում էր հնին և տարբերությունը երկուսի միջև զգալիորեն փոքրանում էր:

Արեղյանը դառնում է հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրը, և 1940-ին որոշ չափով բարելավված ուղղագրությունը, որ գործում է այժմ մեղանում, այլ չէ, բան 1921-ին Արեղյանի առաջարկած երկրորդ, մասամբ և երրորդ աստիճանի ուղղագրական փոփոխությունների իրագործումը:

Արեղյանի 20-ական թվականների գործունեությունը, որ սկսվել էր ուղղագրության բարեփոխման կարևոր խնդրի իրականացումով, աչքի է ընկնում աղլալին-հասարակական լայն բովանդակությամբ և առաջադրված խնդիրների բազմազանությամբ:

Հարգապատ ժողովրդի վերածնունդը նոր թափ է հաղորդում հիսնամյակը վաղուց արդեն բուրբած ծանրաբարո զիտնականին, որ պատանեա աշխուժությամբ լծվում է նոր հայրենիքի մշակութային կյանքի վերելքի մեծ ու ղժվարին գործին: Գրան մեծապես նպաստում է Սովետական Հայաստանի կառավարության և կոմունիստական կուսակցության հենց սկզբից իսկ պատկանելի զիտնականի

նկատմամբ ցուցաբերած մեծ վստահությունն ու հոգատարությունը: Սովետական Հայաստանի լուսժողովի առաջարկությամբ, Ժողովրդական կոմիտեների խորհուրդը, 1921 թ. նոյեմբերի 1-ի ինիստում, հաշվի առնելով հանրապետության նյութա-տնտեսական ծանր պայմանները, հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչների և առաջին հերթին Մ. Արեղյանին նշանակում է մշտական թոշակ և պարեն: Երբ 1921 թ. սեպտեմբերին Հայաստանի աշխատավորության ֆիդիկական ծանր կացությունը բարվոքելու անհրաժեշտությունից մղված, երևանում կազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեն (204), Արեղյանը ևս, բազմաթիվ հայ գործիչների ու մտավորականների հետ միասին ընտրվում է կոմիտեի անդամ և իր գործուն մասնակցությամբ նպաստում նրա հայրենանվեր մեծ նպատակի իրագործմանը<sup>1</sup>:

Հայաստանի կառավարությունը, առանց որևէ վերապահության, Արեղյանին է հանձնարարում պետական կարևորություն ներկայացնող դիտա-հասարակական պատասխանատու խնդիրների իրագործումը: Ասվեց, որ Հայաստանի սովետականացման առաջին իսկ օրերին Հայաստանի ռազմկոմի կողմից Արեղյանին է հանձնարարվում կազմել ուսու-հայերեն և հայ-ուսներեն ռազմական տերմինների բառարան: Այս կարևոր գործի վրա Արեղյանն աշխատում է որոշ ընդհատումով:

1922 թ. հոկտեմբերին երևանում բացվում է ռազմական հրամանատարական դասընթացներ, հետագայում նաև՝ դպրոց: Արեղյանը հիշյալ երկու տեղում էլ կարգվում է հայոց լեզվի ուսուցիչ: Իսկ երբ 1924 թ. ռազմական նոր դրերի թարգմանության և տպագրության նպատակով կազմվում է Կովկասյան կարմիրգոյշ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդին կից Հայկական խմբագրական-հրատարակչական կոլեգիան, բույր նոր թարգմանություններին լեզվական և տեղմիտարական խմբագրությունը հանձնարարվում է Մանուկ Արեղյանին: Այս աշխատանքների կատարումը մեծապես նպաստում է ռազմական տերմինների բառարան կազմելու գործին, որը հեղինակի ծանրաբեռնվածության պատճառով 1922 թ. վեր անավարտ էր մնացել: 1924 թ. Արեղյանը դարձյալ անդրադառնում է ռազմական տերմինների բառարանին, այն վերջնական

<sup>1</sup> «Կարմիր աստղ», Թիֆլիս, 1921, № 214:

<sup>2</sup> «Կարմիր աստղ», 1921, № 172:



նպաստավորում և 1925-ին հանձնում վերոհիշյալ խմբագրական կոլեկտիվին՝ տպագրությանը 1927-ին լույս է տեսնում Արեղյանի հիշյալ բառարանը<sup>1</sup>, մեծապես նպաստելով հայ ռազմական լեզվի հետագա զարգացմանը և, մասնավորապես, կարճիր բանակի հակահանց զորամասերում գինձորական պարապմունքներն անցկացնելու և հատկապես զորժողովից հայերեն հրահանգներն ու հրամանները լեզվական տեսակետից կատարելիզործելու իմաստով:

Այս զորքերին համընթաց Արեղյանը շարունակում է զբաղվել գիտա-մանկավարժական աշխատանքներով:

Հայաստանի սովետականացման առաջին իսկ ամսին փակվում է Երևանի համալսարանը և կառավարության հաստիք որոշումով բացվում է ժողովրդական համալսարան, ուր Արեղյանին հանձնարարվում է դասախոսել հայ ժողովրդական բանահյուսությունը, հայ հին գրականություն և հայոց լեզվի տեսություն: Եվ այնուհետև մեկ տասնամյակից ավել Արեղյանը շարունակում է հիշյալ առարկաների դասավանդումը Երևանի համալսարանում:

Այդ գիտա-մանկավարժական աշխատանքների ընթացքում Արեղյանին շեղում էր 1921 թ. (1921 թ.) և ապա՝ հայ գրականության պատմության պրոֆեսորի (1926 թ.) կոչում:

1923—25 թվականներին Արեղյանը վարում է Երևանի արդեն պետական համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի ղեկավար պաշտոնը:

Նրա 20-ական թվականների գիտա-հասարակական գործունեության մեջ նշանակալից տեղ են զբաղում Հայաստանի անդրանիկ գիտա-հետազոտական հաստատության՝ գիտության և արվեստի ինստիտուտում աշխատելու աշխատանքները:

1925 թ. հունվարի 20-ին Հայաստանի ժողովրդային հաստիք ղեկավարում էր Մովսեսյանի Հայաստանի առաջին գիտական կենտրոնը՝ գիտության և արվեստի ինստիտուտը: Վերջինս սրբաճրագույն գիտա-հետազոտական հիմնարկություն էր: Երբ նպատակն էր սաչակցել բնագիտական, մասնավորապես, տեխնիկական, պատմական-հասարակական և զեղարվեստական խնդիրների գիտական ուսումնասիրությանը և Հայաստանում իր աշխատանքներով նպաստել հանրապետության նյութական և մտավոր-կուլտուրական շինարարությանը: Ինստիտուտի առաջնակարգ պարտականությունն էր ուսումնասիրության նյութ գարծնել «Հա-

յաստանի բնական և կուլտուրական միջավայրը, ինչպես նաև Հայաստանի շինարարության հետ կապված տեխնիկական և զեղարվեստական խնդիրները»: Բացի այդ, ինստիտուտը պետք է իր ուժերը ի սպաս դնել Հայաստանի շինարարությանը և ստանձնել հաստիք աշխատանքներ՝ պետական և հասարակական հիմնարկությունների և կազմակերպությունների առաջարկով: Այն լուծելու էր նաև գիտության, տեխնիկայի, արվեստի վերաբերյալ վեճեր և տարաձայնություններ և զեկավարելու էր իրեն ննթակա հիմնարկների գիտական և զեղարվեստական աշխատանքները<sup>2</sup>:

Հայաստանի առաջին գիտական հաստատությունը իր բնույթով, առաջադիր խնդիրներով, ինչպես նաև կազմակերպական առանձնահատկություններով հետագայի գիտությունների ակադեմիայի հիմնադիր բնույթն էր և այն հաստատուն հիմքը, որի վրա ապագայում բարձրանալու էր Հայաստանի առաջին գիտությունների ակադեմիան: Բացի այդ, գիտությունների և արվեստի ինստիտուտը իր շուրջն էր համակենտրոնացնում Հայաստանի լավագույն գիտական ուժերին, որոնցից շատերը հետագայում դարձան մեր ակադեմիկոսներն ու թղթակից անդամները:

1925 թ. ապրիլի 27-ին հրավիրվում է ինստիտուտի առաջին ընդհանուր ժողովը և տեղի է ունենում ինստիտուտի բացումը: Ընտանությունը կատարվում են ընտրություններ: Ընդհանուր ժողովը ինստիտուտի խորհրդի անդամներ է ընտրում Հակոբ Հովհաննիսյանին, Առաքել Քեչեկին, Աշոտ Հովհաննիսյանին, Արսեն Տեր-Արշալույսին և Ալեքսանդր Թամանյանին: Խորհրդի նախագահ է ընտրվում Հայկ Գյուլիբեկխյանը, փոխնախագահ՝ Մանուկ Արեղյանը և գիտական քարտուղար՝ Հովակիմ Բեղլյանը<sup>3</sup>: Նույն տարվա հոկտեմբերի 11-ին ինստիտուտի ընդհանուր ժողովի երկրորդ նիստում Հ. Գյուլիբեկխյանը հրաժարվում է նախագահությունից և ժողովը միաձայն խորհրդի նախագահ է ընտրում Մանուկ Արեղյանին<sup>4</sup>: 1925 թվականից մինչև 1930 թվականն անընդմեջ Արեղյանը վերընտրվում է ինստիտուտի խորհրդի նախագահի պաշտոնում և այդ հինգ տարիների ընթացքում պատվով կատարում իր վրա զբո-

<sup>1</sup> Ա. Արեղյան, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Երևան, 1927:

<sup>1</sup> ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոց. շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 122, գ. 242, թ. 25—26:

<sup>2</sup> «Տեղեկագիր ՀեՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի», Մ 1, Երևան, 1926:

<sup>3</sup> ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոց. շինարարության պետ. կենտրոնական արխիվ, ֆ. 122, գ. 257, թ. 3—4:





ներին նրա՝ հանրապետական ու անդրկովկասյան սովետական իշխանությունների ղեկավար կազմում ընտրվելու մեջ:

1925 թ. նա ընտրվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմիտեի անդամ և հետագա տարիներին (1927, 1929 թթ.) դարձյալ վերընտրվում: 1929 թ. Արեղյանն ընտրվում է Անդրկովկասի Կենտրոնական անդամ, իսկ դրանից առաջ, 1927 թ.<sup>1</sup> Երևանի բազմաբային խորհրդի անդամ էր: Իր այդ բոլոր պետական-հասարակական պարտականությունները նա կատարում է ճշտիվ ու քաղաքացուն, բազմաբացու ու զինանակների մեծ պատասխանատվությամբ, արժանանալով ժամանակակիցների շեմ համակրանքին:

Սակայն 1930-ական թվականներից սկսած, անձի պաշտամունքի սկզբնաղբյուրներից ի վեր փորձվում է վերաբերմունքը հին մտավորականության նկատմամբ: Ասպարեզ են գալիս ժամանակի ուղեկիցները իրենց ամբողջավարակյան «քննադատություններով», հասնելով ընդհուպ քաղաքական շանտաժի:

1930 թ. Արեղյանն անակնկալ, առանց որևէ պատճառի ազատվում է գիտության և արվեստի ինստիտուտի նախագահի պարտականություններից: Հաջորդ տարին, երբ լույս է տեսնում նրա «Հայտնի լեզվի անտություն» մեծարդյուն աշխատանքը, փորձ-ինքն անց կատարվում են առաջին հրապարակային ոտնձգությունները նրա դավանած դիտական տեսության ու մեթոդաբանության դեմ: Դրանք, սակայն, չեն կարողանում կորույր ընդհանուր վստահությունն ու մեծ գիտնականի անասան հեղինակությունը: Սովետական Հայաստանի կուսակցությունն ու կառավարությունը մինչև վերջ էլ խորթին պատկասանքով ու ճողատարությամբ են վերաբերվում Արեղյանին՝ միշտ պատշաճը հատուցելով նրա մեծ վաստակի դիմաց:

Ազատվելով գիտության և արվեստի ինստիտուտի ղեկավարի պաշտոնից, Արեղյանը հաստատվում է, սակայն, ինչպես այդ, այնպես էլ հետագայում վերանվանված կուլտուրայի պատմության և ապա պատմության ու գրականության ինստիտուտների նախագահության անդամ:

1932 թ. նա ընտրվում է Հայաստանի Կենտրոնական նախագահությանն առընթեր կազմված Հայաստանի ԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման և ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ:

<sup>1</sup> ՏԿՍ Կոլտուրական ֆրոնտ», 1934, №№ 29, 33, 34: «Մարտիզմ-լենինիզմի ինստիտուտի Տեղեկագիր», 1932, № 1, էջ 154—165:

դովի նախագահ: Հանձնաժողովը զգալի դրոժ է կատարում Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող օտար տեղանունները հայացնելու, ինչպես նաև եղածները ճշգրտելու ուղղությամբ:

Սովետական Հայաստանի կառավարությունը բարձր գնահատելով հայ գիտությանն ու մշակութային մատուցած Արեղյանի մեծ ու բազմաժամ Ժողովրդականությանը, 1935 թ. նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ նույն տարվա նոյեմբերի 20-ին, առանց դիսերտացիայի պաշտպանության, եղած գիտական աշխատությունների հիման վրա, Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիտեի արժանացնում է հասարակական գիտությունների զոկտորի գիտական աստիճան:

Գիտական այս պատվավոր առանձնաշնորհումները, սակայն, հանգիստ ու անդորր երաշխավորող դասիները չէին Արեղյանի համար: Դրանք, անկախ նրա գիտական մեծ վաստակից, պարտավորեցնում էին պարտաճանաչ գիտնականին: Եվ նա, շնայած իր պատկառելի տարիքին ու աննպատակ առողջությանը, ձեռնամուխ է լինում գիտական նորանոր խնդիրներին:

1931 թ. աշբերի հիվանդություն պատճառով Արեղյանը հրաժարվում է Երևանի պետական համալսարանում դասավանդելուց, անցնում կենսաբանական և ընդմիջա վերջ գնում իր բազմաժամ կազմավորական գործունեությանը: Բայց նա չի թողնում գիտության սուպրանոսը և շարունակում է աշխատանքները գիտա-հետազոտական հաստատություններում: Այդ տարիներին նա իր ամբողջ ուժն ու եռանդը կենտրոնացնում է կիսատ մնացած աշխատություններ ավարտման, վերամշակման և տպագրության վրա:

1933-ին Արեղյանը Մեխրեան ֆոնդի միջոցով լույս է բնծայում «Հայտնի լեզվի տաղաչափություն» հետազոտությունը, որ բնական պատրաստ էր երկու տասնամյակ առաջ, սակայն ժամանակի բնթացքում նորանոր փաստերով համարվելի ու վերամշակվելի էր հեղինակի կողմից և դարձել գառական մի գործ:

Արեղյանի 30-ական թվականների գիտա-հետազոտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում հայ ժողովրդական վիպը՝ «Սասնա ծռեր»-ը:

1931 թ. կեսերին պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ է. Չարենցի և Մ. Արեղյանի միջև բանակցություններ են վարվում «Սասնա ծռեր»-ի գիտական հրատարակության շուրջ: Նախաձեռնությունը, որ պատկանում էր բանաստեղծին, շատ է դուր գալիս Արեղյանին. բայց դրոժի ծանրությունը և մասնավանդ աշբերի հի-

վանդությունը նկատի ունենալով, վերջինս հրաժարվում է վեպի ընդհանուր խմբագրությունը հանձն առնել: Սակայն Չարենցի կողմից առաջարկությունը կրկնվում է Այս անգամ Արեղյանը պայմանավորվելով 4. Մելիք-Յանջանյանի հետ և ստանալով նրա համաձայն աշխատելու համաձայնությունը<sup>1</sup> ընդունում է պետհրատի առաջարկը<sup>2</sup>: 1932 թ. սեպտեմբերին Արեղյանի և Չարենցի միջև կնքվում է պայմանագիր<sup>3</sup>, բայց որի վեպի համահավաք բնագիրը, որ բաղկացած էր լինելու 100 մամուլից՝ տպագրվելու էր երկու հատորով: Կազմողներն անմիջապես ձևոնամուխ են լինում գործին: 4. Մելիք-Յանջանյանի եռանդուն ջանքերի շնորհիվ հնադարաններից հանվում ու ի մի են բերվում վեպի անտիպ ու տպագիր տարբերակները: Բացի այդ, 4. Մելիք-Յանջանյանը, որ Հայաստանի շրջանները գործուղված գիտական արշավախմբերին մասնակցելիս մինչ այդ գրի էր առել վեպի շորս նոր պատում, շարունակում է յուր բանահավաքական գործը՝ վեպի հրատարակական աշխատանքներին զուգընթաց, որի արդյունքն են լինում արդեն 1933-ին գրաքան վեպի շորս նոր արժեքավոր տարբերակները: Փրի են առնելվում նորանոր պատումներ ուրիշ բանահավաքների կողմից և: Իսկ արդեն գրաված, բայց որոշ պակասություններ ունեցող պատումները 4. Մելիք-Յանջանյանի կողմից կրկին համեմատվում են գրանց առաջողների վերապատումների հետ, լրացվում ու ճշգրտվում:

Մ. Արեղյանը 4. Մելիք-Յանջանյանի ջանադիր աշխատակցությամբ հավաքելով, համակարգելով և խմբագրելով վեպի ըստը հայտնի պատումները, միաժամանակ նոր պատումներ ձևոր բերելու նպատակով անձամբ զբիմում է Սփյուռքի հայ բանահավաքներին<sup>4</sup>, որոնցից, ցավօր, չնչին բան է ստացվում:

«Սասնա ծռեր»-ի առաջին հատորը լույս է տեսնում 1936 թ., մի գործ, որը մեր գարավոր ճշակույթի լավագույն հուշարձաններից է: Այնուհետև, որոշ ընդհատումներով, շարունակվում են աշխատանքները վեպի հաջորդ հատորի վրա: Երկրորդ հատորի առաջին մասը լույս է տեսնում Արեղյանի մահվան տարին՝ 1944 թվականին, իսկ երկրորդ ծավալուն մասը, հիմնականում 4. Մելիք-Յանջանյանի ջանքերով, տպագրվում է միայն հաջորդ սասնածռայկի

սկզբներին (1951 թ.), որով ամփոփվում է ու ավարտվում հայ ժողովրդական մեծ վեպի դիտական հրատարակությունը:

«Սասնա ծռեր»-ի առաջին հատորի հրատարակությունից հետո կրկին հասարակական մեծ հետաքրքրություն է ստեղծվում մեր վեպի շուրջը: 1938 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը որոշում է 1939 թ. մայիս ամսին տեսնել «Սասունցի Գավիթ» ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանը: Հիշյալ որոշումը ցնծությամբ է ընդունվում ժողովրդի ամենատարբեր խավերի կողմից: Հայաստանի ժողովախորհուրդը կազմակերպում է վեպի ստեղծատարությունն անցկացնող հոբելյանական հանրապետական կոմիտե, որի մեջ է մտնում Մ. Արեղյանը: Կոմիտեն սկսում է զորեն նակաձորեն նախապատրաստվել վեպի ստեղծատարությանը: Կոմիտեի առաջին իսկ նիստում Մ. Արեղյանի առաջարկությամբ, որոշվում է կազմել «Սասունցի Գավիթ» դիտական համահավաք հյուսվածո բնագիրը և հոբելյանի օրերին հրատարակել հայերեն և ռուսերեն լեզուներով: Կազմվում է բնագիրը կազմող հանձնաժողով՝ Գ. Աբովի նախագահությամբ, Մ. Արեղյանի և Ա. Ղանալանյանի անդամակցությամբ: Հանձնաժողովն անցնում է համահավաք բնագիրը կազմելու աշխատանքներին. վեպի առաջին՝ «Սասնաքար և Բաղդասար» էջուրի հյուսվածո համահավաքը հանձնարարվում է Մ. Արեղյանին, «Առյուծաձև Մհեր» և «Սասունցի Գավիթ» էջուրը՝ Գ. Աբովին, իսկ «Գավիթ և Խանդուխտ» մասը և «Պրստիկ Մհեր» էջուրը՝ Ա. Ղանալանյանին: Վեպի հյուսվածո բնագիրը, որ կազմվելու էր հիսուսից ավելի տպված ու անտիպ պատումները, վեպի սյուժետային զծի դարգացմանը նպաստող բոլոր կարևոր միջադեպերի հիման վրա, կատարվում է հաջողությամբ և ներկայացվում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի դիտական խորհրդի և Հայաստանի գրողների միության վարչության ընդլայնված նիստերի, ինչպես նաև «Սասունցի Գավիթ» հոբելյանական հանրապետական կոմիտեի բննարկմանը: Երկու տեղում էլ հյուսվածո համահավաքը ընդունվում է և հաստատվում: 1939 թ. հոբելյանական օրերին լույս է տեսնում «Սասունցի Գավիթ» համահավաք բնագիրը՝: Եվ այդ օրից սկսած մեր ժողովրդական վեպը քնն հայերիս և քնն օտարներին ներկայանում է հիշյալ հյուսվածո բնագրով, մի աշխատանք, որ մեր վեպի ամբողջ

1 ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, № 107:

2 ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, № 353:

3 ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, № 114:

4 «Սասունցի Գավիթ», Հայկական ժողովրդական (պոս), Հայաստան, Երևան, 1939. Կույի, Հայկաստան, Երևան, 1961:



շական պատկերն ու հարուստ բովանդակությունն է ներկայացնում: Վեպի համահավար բնագիրը մինևույն տարին թարգմանվում է ուսուցիչների և ունենում է երեք տարբեր հրատարակություն: մեկը՝ Երևանում, մյուսը՝ Մոսկվայում, երրորդը՝ Լենինգրադում:

Այնուհետև այն թարգմանվում է միութենյան տարբեր ժողովուրդների, ինչպես նաև հետագայում օտար մի քանի լիզուներով: Վեպի համահավար բնագրի հրատարակությանը, փաստորեն, մեր վեպը դուրս է դալիս նախ՝ համազգային և ապա՝ միջազգային ասպարեզ:

Բացի համահավար բնագրից, Արեղյանը գործուն մասնակցություն է ունենում վեպի տունակատարության գիտական հանդեսներին: 1939 թ. օգոստոսի 22-ին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Մասունցի Գավթին» նվիրված հորելյանական նստաշրջանում նա կարգում է մի զեկուցում, որն ամբողջությամբ նվիրված էր հայ բանագիտության մեջ մեր վեպի դրսեման, հրատարակման և ուսումնասիրման քննական պատմությանը: Այն բանասիրական ճշգրտությամբ կատարված և տեսական խոր գիտելիքներով մեկնաբանված մեր վեպի պատմության առաջին ամբողջական հնտագիտությունն էր, որով գիտական հաստատված էր կազմվում այն մեծ աշխատանքների մասին, որ կատարվել էր 1874 թվականից սկսած մինչև հորելյանը:

Արեղյանի հիշյալ զեկուցումը լույս է տեսնում հայերեն և օտերեն՝ «Մասունցիտություն» Մասունցի Գավթի» հայ ժողովրդական վեպի մասին» վերնագրով<sup>1</sup>:

Սովետական Հայաստանի կառավարությունը այս անգամ ևս բարձր է գնահատում մեծ գիտնականի վաստակը՝ հատկապես վեպի համահավար կազմելու համար, և Արեղյանին (ինչպես նաև Ք. Աբովյն և Ա. Ղանալանյանին) 1940 թվին պարգևատրում է հանրագիտության Գերազույն սովետի նախագահության պատվոգրով:

<sup>1</sup> «Давид Сасунский», Армянский народный эпос, Ереван, Армгосиздат, 1939. Նույնը, Москва, Гослитиздат, 1939. Նույնը, Москва—Ленинград, изд. Акад. наук СССР, 1939.

<sup>2</sup> Տե՛ս «Մասունցի Գավթին» Հորելյանական ժողովածու նվիրված կոստի 1000-ամյակին, ԱրմՖանի հրատարակչություն, Երևան, 1939: «Մասունցի Գավթին», Հայ ժողովրդական կոստ: Բերիտորաֆիա. Կազմեցին Մ. Բարսեյան և Ա. Միքայելյան: Ներածությունը և խմբագրությունը պրոֆ. դ-ր Մանուկ Արեղյանի, Պետհրատ, Երևան, 1939: «Давид Сасунский», Юбилейный сборник посвященный 1000-летию эпоса, изд. Армфана, Ереван, 1939.

Իրագմայա գիտական ու մանկավարժական ծանր աշխատանքը իր խոր հետքն է թողնում արգեն իր պատկանելի հասակն ապրող գիտնականի անողջության վրա: Բժիշկները համատարեն խորհուրդ են տալիս հրաժարվել գիտական աշխատանքից: Բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդելուց նա հրաժարվել էր տակավին 30-ական թվականների սկզբներին: Կրթկին համալսարան վերադառնալու ուսկտորի արած քանիցս առաջարկները մնում են անարդյունք: 1937 թ. անսալով բժիշկների հորդորներին, Արեղյանը թողնում է իր վերջին գիտական պաշտոնավայրը՝ պատմության և գրականության ինստիտուտը: Մակայն բժիշկների մի վերջին խորհուրդը՝ հրաժարվել պարսպկուց, Արեղյանը մեկնեղմիշտ մերժում է: Գիտակցական ողջ կյանքը գիտական սրբությունը մաշած գիտնականի համար դա նշանակում էր դանդաղ ինքնասպանություն: Եվ նա առանձնանալով յուր բնականորեն պատերի մեջ, շարունակում է համատարեն ստեղծագործել: Նա վերջնականապես կարգի է բերում բառասուն տարի առաջ կոմիտասի հետ ձեռնարկած ու կիսատ թողած և այնուհետև ստեղծված հնտագիտական խաղիկները: Երգ-խաղիկների համահավար մեծ ժողովածուն, որ այնքան ջանք ու տեսական «սև աշխատանք» էր պատճառել գիտնականից: Եվ 40-ական թվականները սկզբնավորում են «Ժողովրդական խաղիկներ» մեծածավալ հավաքածուի հրատարակումով: Տասնյակ տարիների աշխատանք էր այն իր մեջ ամփոխում, որի համար էլ շատ սերելի էր դարձել մեծ գիտնականին: Նույն թվականին էլ Արեղյանը լույս է բնծայում միջնագրության բարձրագույն բնարական երգերի, մեր բանահյուսության փառքն ու պարճանքը կազմող հայրենների պոլորիկ ժողովածուն: Այն նույնպես երկար տարիների մանրագինի պրպտումների արգասիք էր, որի տեսական-բանասիրական ուսումնասիրությունը լույս էր տեսել տակավին 20-ական թվականների վերջերին՝ «Հին դասանական ժողովրդական երգեր» խորագրով: Բանագիտական-բանասիրական վերջին աշխատանքները, որոնք լույս են տեսնում 1940—

<sup>1</sup> «Գիտական ժողովրդական ստեղծ, հայրենիք և անտաններ», Երևան, ԱրմՖանի հրատ., 1940:

41 Բելականներին՝ «Վերջական երդելու» և «Վերջականեր» կոչված կո-  
թողներն իբրև Առաջին-Գերմանո գիտնուտ արձաններ» հետազո-  
տություններն են:

40-ական Բելականներին Արեղյանի հիմնական զբաղմունքն է  
դասնում մեր հին ու միջնադարյան գրականությունը թե՛ առան-  
ձին դեմքերով ու խնդիրներով, և թե՛ այն ամբողջությամբ վերջ-  
րամ:

Հայոց հին գրականությանը նվիրված մեծարժեք ուսումնասի-  
ությունները և մանավանդ «Հայոց հին գրականության պատմու-  
թյուն»-ը դասնում են մեծ գիտնականի կարապի երգը:

1940 թ. գարնանը, լեռնած անբարեհույս առողջությանը,  
Արեղյանը Մեսրոպ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առիթով ձեռ-  
նամուխ է լինում մեր դպրության մեծ հիմնադրի կյանքն ու զործը  
պատկերող Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի գիտական հրատա-  
րակությանը: Այն, ի տարբերություն մինչ այդ եղած պատմական  
երկերի նման հրատարակությունների, զրաբար բնագրին կից ու-  
նենալու էր նաև աշխարհաբար թարգմանությունը, մի օտարազա,  
որ մեծապես նպաստելու էր մեր գրի ու դպրության նախահոր կյան-  
քի զրավզներին լայն մասնաբաժանացմանն ու տարածմանը: Հաջորդ  
խիտ տարին՝ 1941 թ., լույս է տեսնում Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն՝  
Արեղյանի կազմած բնագրով, թարգմանությամբ, առաջարկում ու  
ծանոթագրություններով: Նույն տարվա սկզբին «Սովետական  
գրականություն» ամսագրում սպաղրվում է Արեղյանի «Մեսրոպ  
Մաշտոցի և հայ գրի ու գրականության սկիզբը» մեծարժեք հետա-  
զոտությունը, որն հետագայում (1962 թ.) զրվից Կորյունի երկի  
աշխարհաբար հրատարակության ներածականում:

1940 թ. գարնայւ, ՍՍՄԿ դիտությունների ակադեմիայի հայ-  
կական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտը, որի գի-  
տական խորհրդի անդամ էր Արեղյանը, հանձնարարում է վեր-  
ջինիս գրելու հայ հին գրականության ամբողջական պատմությու-  
նը: Արեղյանը երկար ժամանակ առանձնում է ձեռագրից հետո,  
պատասխանատու և ծանր զործը, ակամա համաձայնվելուց հետո,  
նույնիսկ հրաժարվում է և ինստիտուտին է վերադարձնում պայ-  
մանագրին ու զրա դեմաց ստացված գումարը<sup>1</sup>:

Պատճառը՝ օրավոր վատթարացող առողջությունն էր, մյուս  
կողմից՝ հայ ժողովրդի գիտական մշակված պատմության քաջա-

կալությունը, որ շատ էր ծանրացնելու գրականության պատմար-  
նի զործը: Կային տակավին լրտարանված պատմական ու բանա-  
սիրական շատ հարցեր, որոնց կողքով չէր կարելի լուելլայն անց-  
նել, իսկ նման անբարեհույս առողջությամբ զժվար էր խորա-  
մուխ լինել այդ կնճռոտ խնդիրների պարզարանման մեջ:

Սակայն ինստիտուտի բազմիցս կրկնվող դիմումների ու հոր-  
դոսների ճնշման ներքո, ի վերջո Արեղյանն հանձն է առնում այդ  
զործը և երկու տարվա ընթացքում ավարտում «Հայոց հին գրա-  
կանության պատմության» առաջին հատորը, որն քննդրվում էր  
սկզբից մինչև X դարի մեր բանահյուսության ու դրավոր դպրության  
ամբողջական պատկերը՝ յուր զարդացման օրինաչափություններով  
և առաջին հատորն ավարտելուց հետո Արեղյանը նույն թվով ու  
ծրազրով շարունակում է աշխատանքները երկրորդ գրքի վրա, մեր  
հին գրականության պատմության մշակումը հասցնելով մինչև XIV  
դար:

«Հայոց հին գրականության պատմություն»-ը շարադրելու ըն-  
թացքում Արեղյանը հանգես է դալիս հին գրականության հանգու-  
ցային խնդիրներին նվիրված մեծարժեք հոդվածներով ու ղեկու-  
ցումներով: Գրանցից հիշարժան են հատկապես երկուսը. «Կյանքի  
և աշխարհայացքի փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ  
դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնու-  
թյան շրջանի» (կարդացված ՍՍՄԿ դիտությունների ակադեմիայի  
Հայկական ֆիլիալի նիստերի զահլվում, 1943 թ. հունվարի 18-ին,  
սպաղրված ԱրմՖանի նույն տարվա «Տեղեկագրի» առաջին համա-  
րում) և ապա՝ «Հովհաննես Սարգավազ վարդապետ» (ՀՍՄԿ ԳԱ  
«Տեղեկագիր», 1944, № 1—2):

Չնայած իր պատկառելի տարիքին, ինչպես միշտ, կյանքի այս  
շրջանում ևս Արեղյանը բանիվ և զրբիվ արձագանքում է ժամանակի  
հուզող իրադարձություններին:

1941 թ. մայիսին, աշխարհացունց պատերազմից մեկ ամիս  
առաջ, Մոսկվայում տեղի է ունենում հայ գրականության տասնօր-  
յակից Այդ կարևոր իրադարձության Արեղյանը գնահատում է իր-  
բև սովետական ժողովուրդների մշակութի տոն, իբրև պետու-  
թյան, կուսակալության կողմից ազդային կուլտուրայի գնահատ-  
ման ու մեծարման մի արտահայտություն, որն ամբողջապես հա-  
կուտակ էր ու անհամատեղելի անցյալում ցարական կառավարու-  
թյան ազդային փոքրամասնությունների մշակութային ամենաչրե-  
չին ձևաարկումների նկատմամբ ունեցած վերաբերմունքին: Այդ

1 ԳԱԹ, Արեղյանի ֆոնդ, № 359:





ժամանակի սզութունը. «եթե կարողանայի,— դրում է նա,— չէ՛ր հրաժարվի»<sup>1</sup>։

1943 թ. նոյեմբերին, Հայաստանի սովետականացման 23-րդ տարեկիցի առթիվ, միտոբենական կառավարության հանձնարարության և Հայաստանի ժողովուստի որոշումով հիմնադրվում է Հայաստանի անդրանիկ գիտությունների ակադեմիան։ Փա հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչների տարիների փայտալյառ կրթական իրականացումն էր։ Ուստի և բնական է այն մեծ խանդավառությունը, որ սպրեց ամբողջ հայ ժողովուրդը և ամենից առաջ նրա մտավորականության առաջատար ջոկատը՝ գիտությունների ակադեմիայի հիմնադրման առթիվ։

Հայաստանի առաջին գիտական կենտրոնի՝ գիտության և արվեստի ինստիտուտի հիմնադրումից ի վեր (1925 թ.) անցած 18 տարիների ընթացքում գիտությունը Սովետական Հայաստանում զգալի առաջընթաց է ապրում։ Հիմնադրվում են նոր գիտական հաստատություններ, ստեղծվում են գիտական նորանոր էլուզեր, համապատասխան մասնագիտակներով։ Այդ կալուն հիմքերի վրա էլ բարձրանում է Հայաստանի գիտությունների ակադեմիան։ Գիտական հին սերնդի վաստակաշատ ներկայացուցիչներից և երիտասարդ նոր աշխատող գիտնականներից հաստատվում է Հայաստանի ակադեմիկոսների ու թղթակից-անդամների առաջին անձնակազմը, որտեղ առաջին հերթին ի թիվս ժամանակի նշանավոր հայագետների՝ Լ. Սևառյանի, Ստ. Մալխասյանցի, Լ. Մանանդյանի, Գր. Ղափնեցյանի, հաստատվում է Մանուկ Աբեղյանը։

1943 թ. նոյեմբերի 29-ին բացվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստ, ուր ակադեմիկոսներ Ը. Յրեղյու, Բ. Գրեկովի և ուրիշների հետ միասին ընդարձակ ճառով հանդես է գալիս նաև ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը<sup>2</sup>։

Այդ ճառը Հայաստանի գիտությունների ակադեմիայի զարգացման հետագա ուղղությունը ընդհանուր գծերով նշող մի ծրագիր էր, որն իր նշանակությունը մինչև օրս էլ չի կորցրել։

Աբեղյանն ամենից առաջ շեշտում էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի, իր հասարակմամբ սասած՝ Հայդիտակի կազմա-

կերպման պատմական մեծ նշանակությունը՝ այն, որ իր հոգեվարքն ապրող մի ժողովուրդ, հասարակա-քաղաքական նոր կարգի որդեգրելու շնորհիվ կարողացել է շատ կարճ ժամանակամիջոցում բարձրանալ բարդավաճ ժողովուրդների մակարդակին և հիմնել իր սեփական ակադեմիան։

Գալով նորաստեղծ ակադեմիայի որոշակի խնդիրներին, Աբեղյանն առաջ է քաշում նրա զարգացման հեռանկարների հարցը և այն սկսում ամենահիմնականից՝ կարգերից։ Ենչուհետև Հանրապետության գիտության տարրեր էլուզելում մասնագետներին մի ամբողջ բաղձություն անկախությունը, մեծ գիտնական կյուրաժենայելի գտնում է, որ ակադեմիայի կազմակերպումով այն կարիք է զղում համարվելու նորանոր մասնագետներով, այդ կարևոր դործը դուրս բերելու համար նա առաջ է քաշում միտության տարրեր շրջվաներում, տարրեր դիտահետազոտական հաստատություններում աշխատող հայ մասնագետներին Հայաստանի ակադեմիայի շուրջը համախմբելու պահանջը։

Պատմական առանձնակի իմաստ ունի Աբեղյանի առաջադրած Հայաստանի նորաստեղծ ակադեմիայի ունենալիք ալգային բնույթի խնդիրը։ Ենչուհետև լենինյան ալգային քաղաքականության կիրառվող սկզբունքներից, Աբեղյանը նշում է հայ ժողովրդի առջև ծառայած ու կենսագործվող անսկսա-քաղաքական ու կուլտուրական կերպու կարգի խնդիրները, մեկը բնդհանուր միտոբենական է, «որոնց իրագործմանը պիտի մասնակցի» մեր ժողովուրդը «իբ բուր ուժերով, ինչպես այժմ մասնակցում է աշխարհում շտենկամ աշխարհում մեծ պատերազմի մեջ»։ մյուսը՝ իր առանձին ալգային խնդիրն է, որը «է՛ և պետք է լինի առանձնապես ձևով ալգային, բովանդակությամբ սոցիալիստական հայկական կուլտուրան»։ Աբեղյանը հատկապես ընդգծում է «հայկական կուլտուրա» հատկացությունը իբրև հայ ժողովրդի ամենախիտորոշ ալգային հատկանիշը՝ «Ար կուլտուրան պիտի լինի մեր իբրև առանձին ալգ գոյության իրազմունք... Գրանով է, որ մենք պիտի պարծենանք մեր միտության մեջ մտնող մյուս ժողովուրդների առաջ և այլ ալգերի առաջ»։ Այս պատճառով էլ, ահա, Աբեղյանը Հայկական ակադեմիայի հիմնադրման փաստի մեջ տեսնում է մեր գիտության ու մշակույթի ծաղկման ու առավել զարգացման լայն հուանկարները։

Ու բանի որ Հայկական ակադեմիան պետք է լինի ալգային գիտության ու կուլտուրայի մեծ կենտրոնը, հետևաբար և այն պետք

1 ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, №ՈՑ 99, 99։

2 ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, № 85։



է խոշոր շահով զարկ տա մեր բուն ազգային գիտութիւններին՝ հայագիտութեան զարգացմանը<sup>1</sup>։

«Հայաստանի ակադեմիան գիտութեան բոլոր ճյուղերի զարգացման հետ միասին, առանձնապէս պէտք է զբաղվի հայագիտութեամբ, այս գիտութիւնը շատ ընդարձակ մտքով առած, և՛ պատմութեամբ, և՛ գրականութեամբ, և՛ հայոց լեզու, հայ ֆիզիկոս, Հայաստանի աղիւղութեամբ, աեղագրութեամբ, հեմախտութեամբ, արվեստ և այլն։ Այդ տեսրկային պզդից հենց մեծ զարկ պիտի տա մեր Գիտակը (իմա՝ գիտութիւնների ակադեմիան—Ս. Հ.)։ Մենք անհնից ատաջ պետք է ճանաչենք մենք մեզ, մեր ժողովրդի ու մեր երկրի անցյալը, գիտականորեն ու լայնորեն պարզենք ու վեր հանենք այն բոլոր կուլտուրական նվաճումները, որ արել են մեր նախնիքները, որ այժմ մեր պարծանքը է՝ և պիտի լինին։ Գրանով մեր ահագնեմիան մեծ գործ կատարած կլինի և այժու, որ և մենք, նաև մեր

1 Տակափն 1935 թ., Հայաստանի եռորտրեկերի հանրապետական VIII համագումարի զոմարման ակտիւթեամբ. Արեւշահը մտածելով Նանդու և գալիս հայոց լեզվի ու հայագիտութեան զարգացման մասին մի քանի արժանապատեան տառադրեկերով նա գտնում էր նախ, որ հանրապետութեան մեջ պետք է տեսնենք տառադրութեան գործընկ շայտ լեզվի զարգացման ընդհանրագիտ և զրա ուսմանն ու ուսեղացմանն առանձնապէս մտանով սերնդի մեջ։ Ապա, մտածելովով անցյալի դրական ժառանգութեան արժեքավորման խնդրով, նա առաջարկում է ավելի ընդարձակել հայ հին ու նոր կուսիկներէ երկրի գիտական ու ժողովրդական հրատարակութեանը, ինչպէս նաև զարկ տալ անհն տեսակի գիտական երկերի թարգմանութեանն ու տաղարթութեանը։ Բայց անհնհամեմտեղեմ՝ հայագիտութեան զարգացման նախաաաղրի հարցն էր, որ ստիպում էր պատկաստագրու հայագետին այն առաջարկել եռորտրային Հայաստանի կառավարութեանը իբրև կենսականորեն կարևոր խնդիր։ «Մի գիտավթան կա,— գրում է նա,— որ ոչ միայն խորհրդային, այլև համաշխարհային լափաշուցով ամենից ավելի պիտի զարգանա և զարգանա։ Հնայագիտութեան ունի եռորտրային Հայաստանում։ Դա հայագիտութեանն է կամ հայկական բանասիրութեանը—հայկական ֆիլոլոգիան և ժողովրդական բանահայտութեան, պատմութեան, գրականութեան, գրականութեան և զարգանալով մաղովրդագիտութեան ընդհանրագիտ... Այս բոլորի, ինչպէս և հայկական արվեստի մասիլաւն և խորամուխ տեսմանագիտութեանը կարող է և պարտավոր է անել եռորտրային Հայաստանը, որ պետք է այդ նկատմամբ առաջինը և պիտավորը հանդիսանա։ Գրա համար հարկավոր է նոր գիտական կազմեր պատրաստել, որ հնչու և կարճ մտմանակի զրոծ չէ...» (տե՛ս «Վեպուստրոկային հրատ», 1935, № 1)։

Արեւշահը 1935 թ. առաջ քաշած խնդիրները համահնչուն էին և զրնքն հուշանունով էին Հայկական ակադեմիան ստեղծելու առթիվ նրա արտասույտած այժմյան պահանջներին։ Գրանը պատմագիտութեան էին հայագիտութեան զարգացման նոր հնարակարներով։

Միութեան ժողովուրդները, ինչպէս և զրոսմ ուրիշները կճանաչեն հայկական անցյալը և ըստ արժանիւթուն կճանահատեն այն»։

Արեւշահը հաստուկ նշանակութիւն է տալիս ակադեմիայի հասարակական դերին, մեր ժողովրդական տնտեսութիւնը և լայն գանգվածներէ կուլտուրան բարձրացնելու և զարգացնելու նրա մեծ խնդիրներին։

«Մեր ակադեմիան,— շարունակում է նա,— ավելի ևս մեծ շահերով պիտի ազդի մեր հայ ժողովրդի կուլտուրային և տնտեսային արագ բարձրացմանը։ Գիտական արիւնները այս կենտրոնից ավելի արագ և ավելի մեծ ուժով, ավելի ընդարձակ շրջանով պիտի ներգործեն իրենց մտապայլու... որպիսով գիտութիւնը հեշտութեամբ թափանցի ժողովրդի բոլոր խավերի մեջ։ Ակադեմիան պիտի զործի և աշխատի մեր ժողովրդի բոլոր խավերի համար։ Նրա գիտական աշխատութիւններէ հրատարակութիւնները միայն սակավաթիվ ընտրալներէ համար շարի լինեն, այլ լինելով բոլորը հայերեն լեզվով, հարկավ, մեծ զարկ պիտի տան մեր հայ ժողովրդի մտավորային զարգացմանը, քանի որ մեր ժողովրդի զանազան խավերը հնարավորութեան կունենան ըստ կարելուն ոգովելու մեր Գիտակի գիտական նվաճումներէրց։ Բայց հայերեն լեզուն, որ անպայման անհրաժեշտ է, այդ միայն բավական չէ։ հարկավոր է մեր հայկական գիտական միտքը թափանցի նաև մեր Միութեան ուրիշ կողմերը. ուստի հարկավոր է, որ մեր ակադեմիան իր հրատարակութիւններն անի անպայման միաժամանակ և՛ հայերեն, և՛ ռուսերեն»։

Այգպէս, մասնաւորից մեծ տարի առաջ, Սովետական Հայաստանի գիտական անդրանիկ կենտրոնի՝ գիտութեան և արվեստի ինտերուտի երբեմնի նախագահ՝ Մանուկ Արեւշահը, Հայկական ակադեմիայի հիմնադրմանը նվիրված իր պատմական կուլթիւում տառադրում է տեսական ու գործնական մի շարք ծրագրային խնդիրներ, որոնք բնորոշելու էին Հայաստանի գիտութեան վաղվա օրը։ Գրանը իմաստուն պատգամներ էին և մեծ գիտնականի վերջին հրատարակային խոսքը՝ իր ժողովրդի զալիք մտավոր բարգաւաճման ու ազգային գիտութեան զարգացման ազնիվ հոգատարութեամբ արտրված։

Ակադեմիկոս գաւնայուց հետո Արեւշահը շարունակում է աշխատել «Հայոց հին դրականութեան պատմութեան» երկրորդ հատորի վրա։ Մակայն պատերազմական ծանր օրերը, ռազմաճակատում անհայտ կորած օրդու վիշտը, օրրատրի վատթարագոյ առաջ-

զուժյունը աստիճանաբար թևալու է ն «գիտություն դարավոր կազ- նուն» զեպի գետին և 1944 թ. սեպտեմբերի լույս 25-ի «Գիշերը» ընդ- միշտ տապալում: Ենա ընկալի հսկա կազմուցում և ծանր լուսավորում տիրեց անտառում», — գրեց Արեղյանի մահվան մասին «Նաազա- լում Գերանիի Գեմերճյանը, Արեղյանի մահը ծանր վիշտ է պատ- ճառում հայ գիտության ու մշակույթի մեծ երախտավորներին՝ նրա ընկերներին ու բարեկամներին:

Ակադեմիկոս Հովսեփ Թրբելին այդ առթիվ հեռագրում է Ա- նիկորազից. «Նորին կակիծով ընկալեցինք հայ գիտության և հայ ժողովրդի կրած ահռելի կորստի՝ մեծապատիվ Մանուկ Արեղյանի մահվան գուշոջը»<sup>1</sup>:

Այլ. Իսահակյանը մեկ տարի անց, Արեղյանի դերեղմանին՝ մահվան տարևիցի առնչությամբ արտասանում է հետևյալ խոս- բերք. «Մանուկ Արեղյան: Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ա- վանդությունների մարմնացում, գիտական՝ բազմա ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբ- բունը մարդ՝ մեր ապագածների սկես կայուն, մարի և կամքի, աշ- խատանքի և գործի հսկա. պատկանելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ:

Հավերժ սիրելի Մանուկ Արեղյան... Բովանդակ հայությունը հարգում և պատկառում է քեզանից և բո մեծարժեք վաստակներից, և բո՞ մեղեցից հեռանալը համազգային վիշտ է:

Մենք խորապես զգում ենք, որ բո շնորհիվ մեր ազգային-հո- դեկան միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»<sup>2</sup>:

Արեղյանի հուղարկավորումը կատարվում է հոկտեմբերի 1-ին, գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճից, ուր զրված էր նրա աճյունը վերջին հրաժեշտի համար: Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ Արեղյանին թաղում են Երևանի քա- ղարային պանթեոնում:

Մեծ գիտնականի հիշատակը բոտ արժանվույն հավերժացնե- լու համար, Հայաստանի Ժողկոմսովետը որոշում է ՀՍՍՌ գիտու- թյունների ակադեմիայի գրականության ինստիտուտը և Երևանի

№ 36 միջնակարգ դպրոցը կոչել Մանուկ Արեղյանի անունով: Ապա, սահմանվում է Արեղյանի անվան վեց թոշակ՝ Երևանի պետ- համալսարանում, մանկավարժական ինստիտուտում և ակադեմիա- յի գրականության ինստիտուտում: Միևնույն ժամանակ Ժողկոմ- սովետը որոշում է նախապարտատել և հրատարակել Արեղյանի գիտական աշխատությունները<sup>3</sup>, որին Մ. Արեղյանի անվան գրական- նությունը ինստիտուտը վերջերս միայն ձեռնամուկ և զրալ:

<sup>1</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 1944, № 196:

<sup>1</sup> ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, № 268:

<sup>2</sup> «Գրական թերթ», 1959, № 40:



ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

Գ Ո Ր Ծ Ը

Արեւիյանի գիտական գործունեությունը համընկավ XIX դարի վերջին տասնամյակին ու XX դարի առաջին կեսերին, երբ հասարակական գիտությունների բնամարտում գիտահետազոտական մեթոդների և ուղղությունների պայքար ու հերթափոխություններ էին տեղի ունենում:

Գարսակղրների ծայր առած և լայն թափ ու ծավալ ստացած պատմա-համեմատական մեթոդը իր գալթակիչ դերը խանության տակ է առնում բանասիրական ու պատմա-աղղագրական գիտությունների տարրեր նյութեր, որոնց թվում առաջին հերթին լեզվաբանությունը, աղղագրությունը և բանագիտությունը: Գարսակներին և, մտնավանդ, դարավերջերին, սակայն, այս միևնույն մեթոդով առաջնորդվող գիտությունների ներքում առաջ են գալիս տեսական-մեթոդաբանական տարրեր ուղղություններ, որոնք իրենց հանապարհ են հարթում նախորդ դպրոցների կամ ուղղությունների հերքումով:

Աղղագրության և բանագիտության մարզում XIX դարի առաջին կեսերին Վյուհեմ և Հակոբ Գրիմ և իրենցից հիմնադրած առասպելաբանական դպրոցը, որ ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում խոշորագույն առասպելաբաններ Մյուլլերի, Կուհնի, Մանհարդի, Շվարցի, Բուսլանի, Պոտերնյայի մեծարժեք աշխատությունների շնորհիվ աննախադեպ զարգացման է հասնում, ինչպես նաև դարակեսերին հիմնադրված Բենֆեի համեմատական փոխառությունների դպրոցը՝ նույն հարյուրամյակի 60-ական թվականներին անդլիացի փիլիսոփա-հոգեբան Էդուարդ Քալլսթրի հիմնադրած մարգարանական դպրոցի և նրա հետևորդների կողմից ենթարկվում են խիստ քննադատության ու հերքման:

Անդլիական մարգարանական դպրոցը չէր հասցրել տակավին ամրապնդել համաշխարհային տիրակալության իր սահմանները.





Արեղյանն իր գիտական շահախնդրությունների ուղտան է ներառել նաև հայագիտական հրեր տարրեր առարկաներ՝ հայ ժողովրդական բանահյուսություն, հայ գրականություն և հայոց լեզու, և գրանք և նիթրկում խոր ու համակողմանի հետազոտման:

Հայագիտական հիշյալ առարկաները, անկախ նրանց տարբերությունից, Արեղյանն ուսումնասիրում է մեկ միասնական եղանակով՝ պատմական մոտեցումով: Նա բանահյուսական, գրական, լեզվական բոլոր փաստերն ու երևույթները դիտում և հետազոտում է իրենց ծագման ու զարգացման հարաշարժ ընթացքում, նրանց անընդհատ փոփոխությունների մեջ: Պատմականությունը, որ մարքսիստական գիտական մեթոդաբանության բնորոշ առանձնահատկություններից է, կազմում է Արեղյանի գիտական հետազոտությունների հիմնական եղանակը:

Գ Լ Ռ Ե Ա Ռ Ա Ջ Ի Ն

## ժՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ բանագիտությունը սկզբնավորվում է XIX դարի կեսերին: Գիտություն այդ նոր ճյուղի սկիզբը զբվում է Երկու աշխատություններ, որոնք լույս են տեսնում Մոսկվայում ու Վիեննայում գրեթե միաժամանակ: Մեկը՝ Մկրտիչ Էմինի «Վէպը հեռին Հայաստանի»-ն է (Մոսկվա, 1850 թ.), մյուսը՝ Հովսեփ Գաթրճյանի «Պատմություն մատենագրության Հայոց» (Վիեննա, 1851 թ.), որտեղ երկու հեղինակն էլ բննություն են առնում հայ հին գրություն, մասնավորապես, Մ. Խորենացու «Հայոց պատմության» ավանդած վիպական-բանահյուսական նմուշները և երկուսն էլ միմյանցից անկախ հաստատում ու հաստատում են հայ հին վիպական բանաստեղծության ցոյություն ու հարստության փաստը: Բանն այն է, որ անցյալ դարականերին գիտական և հասարակական կարծիքի մեջ տեղ էր գտել այն վարկածը, թե իբր հայ ժողովուրդը չի ունեցել իր սեփական դեցարանությունը: Էմինի ու Գաթրճյանի աշխատությունները գալիս էին հերքելու այդ վշտը կարծիքը: Եվ ոչ միայն այդ, երկու հեղինակն էլ հետազոտելով հայ հին բանահյուսության նմուշների բովանդակության ու ձևի մի շարք հատկանիշներ, հանդում են գրեթե միանման եզրակացությունների:

Հայ բանագիտությունը թեպետ սկզբնավորվում էր հին բանահյուսության նմուշների հետազոտություններ, սակայն հետագայում այդ սահմաններում կաշկանդված չի մնում, այլ տեղաշարժվում է սուտը զեպի նոր սահմանագծեր:

XIX դարի երկրորդ կեսի առաջին տասնամյակներին հայ պարբերականներում երևան են գալիս ժողովրդական նոր բանահյուսու-



Յյան դրսոված առաջին նմուշները, որոնք արդեն ուսումնասիրու-  
թյան նոր հեռանկարներ էին բացում հայ բանասերների առջև

1865-ին Քիֆլիսում լույս է տեսնում Ստ. Պալասյանյանի «Պատ-  
մության հայոց գրականության» առաջին հատորը՝ ամբողջապես  
նվիրված բանավոր գրականությանը, այսինքն ժողովրդական բա-  
նաստեղծությանը: Հեղինակը ժամանակի առաջինն ու նվիրյալն  
գրականագիտական ու բանագիտական առաջավոր ուսմանը հերթ  
դիմելով, բնութագրում է գրականության հասարակական դերն ու  
նշանակությունը, գրականության և ժողովրդական բանաստեղ-  
ծյան նմանությունն ու տարբերությունը, ժողովրդական բանաստե-  
ղծության ընդհանուր նկարագիրն ու յուրահատկությունը և այս  
անցում հայ բանաստեղծության առանձին ժանրերի քննությանը:

Պալասյանյանի առավելությունը նախորդների նկատմամբ այն  
էր, որ ի թիվս հին բանաստեղծական հուշարձանների, հատուկ ուշա-  
դրություն է դարձնում ժողովրդից դրսոված նոր բանաստեղծության  
տեսակներին՝ ասակներին, առածներին, հանելուկներին և ներգրին,  
կատարելով մի շարք արժեքավոր գիտադասարաններ:

Գարեգին Սրվանձտյանով, հատկապես նրա «Գրոց ու բրոց և  
Սասունցի Գավթի կամ Մհերի դուռ» գրքուկով՝ փաստորեն սկըս-  
վում է ժողովրդական կենդանի բանաստեղծության նմուշների կար-  
գավորված հավաքումն ու հետազոտությունը: Սրվանձտյանը թե-  
պետ շունի բանագիտական առանձին ուսումնասիրություններ, բայց  
իր հավաքած բանաստեղծական նյութերի վերաբերյալ արած ստույգ  
ու խորիմաստ գիտադասարաններն, իրավամբ, հետագայում ձևեր  
բերեցին հեղինակավոր նախակարծիքի արժեք:

Սրվանձտյանի անդրախիկ գրքուկը, որ հարուստ էր ազգա-  
գրական փաստերով, կենդանի բանաստեղծական նմուշներով, պատ-  
մական բացառիկ արժեք է ձևեր բերում հասկապես մեր նոր ժողո-  
վրդական վեպի՝ «Սասնա ծռեր»-ի հայտնագործումով: Սրվանձ-  
տյանն առաջինը հայ բանագիտության պատմության մեջ հայտնա-  
բերում և գրառում է «Սասնա ծռեր» վեպի Մշո բարբառով մի պատ-  
ում, որն այնուհետև դառնալու էր հայ ժողովրդական վեպի ու-  
սումնասիրության հիմքը: Սրվանձտյանի ծառայությունը հայ բա-  
նագիտությանը, սակայն, սոսկ «Սասնա ծռեր»-ի դրսոված ու գրառ-  
մամբ չէր սահմանափակվում. նա վեպի իր գրառմանը կցած նախ-  
նական գիտադասարաններում նկատում էր այնպիսի արմատական

հասկանություններ (վեպի և Հայաստանի հին ու միջնադարյան պատ-  
մության աղբյուրներ, դիցաբանական ընկալումների և պատմական  
իրողությունների տարբեր շերտերի, պատմական անախրոնիկմե-  
նությունների տարբեր շերտերի, պատմական անախրոնիկմե-  
նությունների, զեղչական կյանքի ու կենցաղի, ժողովրդական հավատալիք-  
ների, կենդանի սովորույթների անկախության բազմաթիվ փաստեր),  
որոնք այսպես մասնագիտական մանրակրկիտ ուսումնասիրու-  
թյուններով ապացուցվեցին, այսպե և ընդլայնվեցին ու խորացվեցին  
նորանոր կողմերով:

«Գրոց ու բրոց»-ից երկու տարի անց՝ 1876 թ. Սրվանձտյանը  
հրատարակում է ազգագրական-բանաստեղծական մեծարժեք նյութ-  
ներով լիցուն «Մանսնա»-ն, որ բանագիտական տեսակետից հաս-  
կանելիում էր հերթաթիւների մասին արտահայտած ուշադրավ գիտա-  
դասարաններով:

Սրվանձտյանի և նրա հետևորդների անդուլ ջանքերով երկու  
ստանաձայլի ընթացքում տպագրվում և կուտակվում է հայ ժողո-  
վրդական կենդանի բանաստեղծության մի պատկանելի ժառանգու-  
թյուն, որն արդեն ապաստում էր իր իսկական հետազոտողին:

80-ական թվականներից ի վեր դանդաղ, բայց հաստատուն  
բացվելով սկսվում է հայ բանագիտական մտքի աստիճանական վե-  
րելը: Ծանծաձայլի սկզբներին (1881 թ.) տպագրվում է Մ. էմինի  
«Монсей Хоренский и древний эпос армянский» գրքուկը՝ նը-  
վիրված գարձայլ ետրենացու ավանդած միպական հին բանաստեղ-  
ծական նյութերի քննությանը: Հայ կենդանի բանաստեղծության  
հետազոտությունը սկսվում է միպական ժանրերից և հատկապես  
«Սասնա ծռեր» ժողովրդական վեպից: Նույն 1881 թ. Գր. Խալաթյա-  
նի թարգմանություններով, առաջաբանով ու ծանոթագրություններով  
սուսերին լույս է տեսնում «Սասնա ծռեր» վեպի Գ. Սրվանձտյանի  
գրառած պատմումը: Թարգմանիչը առաջաբանում տեսակետներին և  
հետևում է Սրվանձտյանի արդեն արտահայտած տեսակետներին և եզ-  
րուտ շեշտանալով դրանցից, ենթադրում, որ վեպի Սանասարի և Խալ-  
աթյանի պատմությունը կամ «փոխառություն է» Աստվածաշնչից և այլ  
դրսոված աղբյուրներից, կամ էլ դրանցից անկախ պատմական եղև-  
լությունների մասին ժողովրդական-ավանդական հիշողությունների  
արդյունք: Այս փորձ է անում նաև որոշել վեպի ծագման ժամանա-

1 «Давид Сасунский (армянский народный эпос)», пер. Гр. Халатян-  
ца, «Журнал Министерства народного просвещения», СПб, 1881, номер,  
№ 51—82:

1 Կ. Պոլիս, 1874:

կը՝ նրա նախնական խմբագրությունը հանգեցնելով բրիտանեոս-  
թյան առաջին զարբերին:

Մի քանի տարի անց՝ 1885 թ., Խալաթյանը հրատարակում է  
«Общий очерк армянских сказок» փոքրիկ հետազոտությունը,  
որի մի են ընկած ու վերաշարադրված հայկական հրաշագու-  
տում հերթաթեների հիմնական մոտիվները՝ ոռուսական և եվրոպա-  
կան հերթաթեների համանման մոտիվների համեմատությամբ: Սա  
հայկական հերթաթեների համեմատական հետազոտության առաջին  
փորձն էր, որ, ցավոք, հետագայում կիրառողներ չունեցավ:

Հիշյալ տասնամյակում հայ բանագիտության և ազգագրության  
մեջ նշանավոր իրադարձություն հանդիսացավ Նույն Գր. Խալաթյա-  
նի հրատարակած «Հայ ազգագրության ծրագիր»-ը (Մոսկվա,  
1887 թ.): «Ծրագիրը» զայն էր կարգավորելու ազգագրական և բա-  
նահյուսական նյութերի հավաքման մինչև այդ կողմ տարեհարյիս  
վիճակը և ժամանակի եվրոպական գիտության պահանջների մա-  
կարդակով ստույգ հիմքերի վրա դնելու բանահավաքչական գործը  
մեղակոմ:

Այսպիսին էր հայ բանագիտության գրությունը, երբ երիտա-  
սարդ Հեմարանովարա Մանուկ Արեղյանը ոտք է դնում այնտեղ-  
նախ իբրև բանահավաք, այսպ՝ հետազոտող:

### ՀԱՅ ՎԻՊԱ-ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Արեղյանի բանագիտական հետազոտությունները իրենց ընդ-  
գրկած նյութի բնույթով՝ բաժանվում են երկու խմբի. 1. բանավոր  
կենդանավարդ ժողովրդական կենդանի բանահյուսության և 2.  
գրավոր ավանդված և միջնադարում գրաված ու մշակված բանա-  
հյուսական սրբասիրների:

Բնական է, որ բանահյուսության հիշված տեսակները ուսում-  
նասիրողին պարտադրին նաև իրենց հետազոտության մեթոդա-  
կան յուրահատկությունները: Եթե ժողովրդական կենդանի բանա-  
հյուսության նորոքյա գրաված նմուշների զննքում հետազոտվում  
են սուկ դրանց պատմա-բանագիտական ու պաղափարա-գեղար-  
վեստական հատկանիշները, ապա գրավոր ավանդված բանահյու-  
սական սրբասիրները այդ ամենի հետ միասին և ամենից առաջ  
ենթարկվում են բանասիրական հանգամանակից բնություն: Գրա-  
վոր բանահյուսական նմուշների պատմա-բանագիտական ու գա-  
ղափարա-գեղարվեստական խնդիրների հետազոտությանն անցնե-

լուց առաջ, հարկ էր զգացվում պարզել ու առանձնացնել դրանք՝  
ավանդող մատենադրական աղբյուրների գրական-անհատական  
ստեղծագործություններից, մատենագիր-հեղինակների մշակումնե-  
րից ու միջամտություններից:

Արեղյանի բանագիտական հետազոտություններն, ահա, ըն-  
թանում են մեթոդական նշված երկու ուղղությամբ, որով իսկ նա  
դանտում է մեզանում բանասիրական բանագիտության խոշորա-  
դույն ներկայացուցիչը:

### Ա. ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆԸ

#### 1. ՀԱՏ ԱՌԱՍՊԵԼԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՌՈՄՄՈՒՆԸ

Արեղյանի հայ առասպելաբանության ուսմունքը հիմնադր-  
վում է 1899-ին հրատարակած «Հայ ժողովրդական առասպելները  
Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» աշխատությամբ, թեպետ  
մինչ այդ դրած «Der armenische Volksglaube» ուսումնասիրու-  
թյան մեջ նա առիթից-առիթ թափանցում է հայկական առասպելնե-  
րի ոլորտը և իր հետազոտական նպատակների համար լուսաբանում  
բազմաթիվ առասպելական գրույցներ ու ավանդություններ, և ան-  
գամ, մի ընդարձակ գլուխ հատկացնում ամպրոպային գրույցնե-  
րին՝:

Բանահյուսական նմանօրինակ նմուշների մեջ հեղինակը բա-  
նահյուսում է նրանց բուն առասպելաբանական կորիզը և այն դե-  
տում իբրև ժողովրդի նախնական աշխարհայեցողության յուրովի  
արտահայտություն, իբրև բնության ուժերի և երևույթների անձնա-  
վորված գեղարվեստական անդրապատկերում:

Առասպելաբանության իր ուսմունքը Արեղյանը որոշ կողմերով  
զարգացնում է ու համարում 1899-ից հետո նա, մասնավորապես  
1930-ական թվականներին գրած «Հայ վիպական բանահյուսու-  
թյուն» աշխատությամբ, որից հեղինակը փոխանցում է «Հայոց հին  
գրականության պատմության» I հատորը (1944 թ.):

Սակայն Ի՞նչ էր իրենից ներկայացնում հայ առասպելագի-  
տությունը մինչև Արեղյանը:

Հայ առասպելագիտության սկզբնավորումը շատ հին է, այն  
տակավին ազերսվում է Խորենացու առասպելների եվհեմերական



ըմբռնումներին ու ալլաբանական մեկնութեան հետ և հասնում մինչև նորագոյն ժամանակները: Առասպելների գիտական ուսումնասիրության հիմքը դրում է հատկապես XIX դարի երկրորդ կեսին և կապվում նշանավոր բանասեր Մկրտիչ Էմինի անվան հետ<sup>1</sup>: Նրա հիշյալ աշխատությունը հայկական առասպելներ և առհասարակ հորինացու ավանդած վիպական հին բանահյուսության նմուշների առաջին լուրջ և ամբողջական գիտական հետազոտությունն էր:

Էմինը գալիս էր հերբելու գիտության մեջ տարածված այն հոսի տեսակետը, թե հայերի իբր չեն ունեցել սեփական ազգային երգեր: Նա հորինացու ավանդած բանահյուսական նշխարների ի մի բերումամբ, ոչ միայն հակառակն է պաշտպանում, այլև հմտալից հետազոտության ենթարկելով մեր վաղնջական բանահյուսության նմուշները, հայադիտության մեջ հիմք է դնում մեր հին վիպական բանահյուսության ուսումնորին: Հետագայի բոլոր բանասերները (Առ. Պալասանյան, Գ. Տեր-Մկրտչյան, Գյուլոբի, Ֆեթիբեր և ուրիշներ) հենվում էին գլխավորապես Էմինի ուսմունքի վրա, միայն պատճենները ճշգրտումներ մտցնելով այնանոց: XIX դարի վերջերին Գր. Խալաբյանը մի ծավալուն աշխատությամբ՝ եկավ հերբելու այդ տեսությունը: Հակառակ էմինի այն տեսակետի, թե հորինացու «Հայտնից պատմության» առաջին գրքը և երկրորդ գրքի մի որոշ մասը մեծ մասամբ ժողովրդական վեպից, դրույցներից ու երգերից է բաղված, Խալաբյանը, ինչպես արդեն նշվել է, հավաստում է, թե հորինացու վիպական բոլոր հատվածներն ու աղբյուրները շինում են, և հորինացու ձևերով շքինված ու սաղեցված<sup>2</sup> հին զրական հուշարձանների վիպական միջազգային տարբեր մտալիների հիմամբ:

Այս երկու արամագծորեն հակառակ տեսակետները կարիք ունենին գիտական լուրջ բնութագրի:

Արեղյանը վերադառնալով մանրակրկիտ հետազոտության է ենթարկում հորինացու «Հայտնից պատմության» մեջ պահպանված վիպական հատվածների խնդիրը և գալիս միանգամայն նոր եզրակացությունների<sup>3</sup>:

Նա անաչառ բնագատական հայացքով վերաբնեւում է հայ

հնավանդ բանահյուսության նմուշների նկատմամբ մինչ այդ արտահայտված տեսակետները և ժամանակի գիտության առաջավոր մեթոդներով ու հայացքով վերադաստնատում դրանք:

Առաջին լուրջ խնդիրը, որ առաջադրում է Արեղյանը, հորինացու մոտ առկա բանահյուսական բառերի, ածականների ու տերմինների (վէպ, զրույց, վիպասանք, առասպել, երգ, երգք առասպելաց, երգք վիպասանաց, ասել, վիպասանք, ի թիւս ասել, թուեկնացն երգք, և այլն) իմաստների ճշգրտումն ու պարզաբանումն է, սրունց սխալ ըմբռնումից էլ, բոտ Արեղյանի, բոտում են հիշյալ խնդրի վերաբերյալ եղած թյուրիմացությունները: Արեղյանը քննարային բազմաթիվ օրինակներով բացահայտում է հիշյալ բառերի հորինացու ըմբռնած առումները, որոնք բոլորովին այլ էին էմինի և Խալաբյանի ըմբռնումներին:

Նա փաստերով ապացուցում է, որ առասպել է կոչվում հորինացու մոտ ժողովրդական ամեն մի անհավաստի թվացող ստեղծագործություն, հետեաբար և այն կապ չունի ժողովրդական մեթոջը ըմբռնման հետ: Նա այնուհետև հիմնավորապես ճշգրտում է հորինացու Պատմության մեջ պահպանված բուն ժողովրդական ստեղծագործությունները, դատում դրանք իրեն՝ հորինացու մեկնություններից ու հավելումներին և վերականգնում զրանց իսկական կերպարանքն ու ոգին, այն իրավացի համոզմամբ, թե «հայոց առասպելների մասին զատկուց առաջ՝ միշտ պետ է որոշել, թե ուր՞նք են այդ առասպելները, այսինքն, բուն ժողովրդականն՝ անջատել նախնացու զարգարեայն՝ առասպելներից»<sup>4</sup>:

Հորինացու մոտ պահպանված վիպական-բանահյուսական զրվագները Արեղյանը բնութագրում է երկու հիմնական խմբի. ա) բուն առասպելների և բ) վիպական-պատմական զրույցների: Նա իսկական առասպելներ է համարում՝ 1. Վահագնի ծննդն ու երգը և վիշապամարտի մասին երգած զրույցները և զրանք անվանում՝ «Վահագնի առասպել», 2. Հայկի և Քնի պատմությունը և այն կոչում «Հայկի առասպել», 3. Անդրդա Տորբի մասին կցկրտուր պատմությունը և անվանում՝ «Անդրդա Տորբի առասպել», 4. Տիգրանի և Աթրահակի պատմությունը և այն կոչում՝ «Տիգրանի առասպել», 5. Արայի և Շամիրամի զրույցը և այն անվանում՝ «Շամիրամի առասպել», 6. Վարդգես մանկան վերաբերյալ վիպական երգը և

<sup>1</sup> Տե՛ս նրա «Վէպը Շոնչ Հայաստանի», Մոսկվա, 1850:  
<sup>2</sup> Գր. Халатян, Армянский эпос в Истории Армении. Мюнхен Хоренского, Москва, 1896:  
<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. հորինացու Հայոց պատմության մեջ (բնագատության և ուսման), Վաղարշապատ, 1899.

1 Մ. Արեղյան, Հայ ժոզ. առասպելները, էջ 93:

այն կոչում՝ «Վարդգրիս առասպել» և ի վերջո՝ 7. Սանատարի մասին ավանդությունները և անվանումը՝ «Սանատարի առասպել»:

Երկրորդ խումբը կոչում էլ ըստ խորհնացու՝ «Վիդասանք», որ ընդգրկում է խորհնացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի Երվանդի, Արտաշեսի, Սաֆնիկի, Արտավազդի, ինչպես նաև վիշապուղտան Արդաշանի (= Արդաանի) և մյուսների մասին եղած պատմությունները: Պատմա-վիպական այս զրվագները ևս նա բնույթով երկու բաղադրիչների է բաժանում՝ 1. պատմա-կենցաղականի և 2. առասպելականի, որոնք իրար հետ մեկ ամբողջական միություն են կազմում:

Որիչը կերպ ասած, Արեղյանը մեր վաղ շրջանի գրավոր հուշարձաններից մեկում պահպանված ավանդական վիպական զրվագները բաժանում է երկու կարևոր խմբի՝ 1. հայկական հնագույն առասպելների և 2. ավելի ուշ ստեղծված պատմա-առասպելախառն վեպի, որը մի տեսակ անցում է առասպելից զեպի ժողովրդական վեպի:

Հայկական առասպելների ուսումնասիրությունը Արեղյանը առաջ է անում համեմատական եղանակով, այսինքն՝ բուն հայկա-

կան առասպելական-դիցարանական երևույթներն ու բնութագրերը հետազոտում և հիմնավորում է որիչը ժողովուրդների համանման երևույթների համեմատությամբ, եվ այսպեղանք քննում է ժամանակի հայկական ժողովրդական հավատալիքների հետ համեմատելով, այն ճիշտ համարումով, թե «մեր արդի ժողովրդական գրույցներն ու առասպելները, որոնցից շատերը հենի մնացորդներն ու շարունակությունն են, կարող են պարզել մեզ մեր հին առասպելները»:

Օտար և հայրենի առասպելա-դիցարանական համանման երևույթների համեմատությամբ էլ Արեղյանը մշտնադատում է վերականգնում է հայկական առասպելների նախնական նկարագիրը:

**Վաճազնի առասպելը:** Արեղյանը առասպելների իր քննությունն սկսում է Վաճազնի երգից, այն նկատառումով, թե դա «Հայոց միակ դիցարանական առասպելն է» և այն էլ ժողովրդական ազբյուրից գրառած:

Վաճազնի դիցական-տատվածային բնույթը առկա էր նախ նրա մենդյան երգի մեջ, իբրև բնության ֆիզիկական երևույթների ծննդի ու մարմնավորողի, և ապա՝ մեր հին մատենագիրների (Ավաթանգեղոս, Բուզանդ, խորհնացի, Շիրակացի) վկայություններում: Բայց թե բնության ի՞նչ երևույթի մարմնավորում է կղզի ևս և կամ ի՞նչ պաշտամունք է ունեցել հին հույների հեթանոսական հավատալիքներում, — այդ խնդրի շուրջը բանասիրության մեջ տարբեր կարծիքներ էին արձարվել: Ոմանք, ասածու առարկայական նկարագրից կենելով, նրան համարել էին Հայոց արեղակնային տատվածություն (Ալիշան, էմին), ոմանք՝ պատերազմի ստոված (Գր. Խալաթյան), ոմանք էլ կենելով նրա իրանական գուգողի՝ Վերեթրադեայի պաշտամունքից՝ համարել էին որի և հաղթության աստված (Գիլցեր):

Արեղյանը դալիս է մերկելու այս բոլոր տեսակետները և հավաստելու, որ Վաճազնի երգի է հին հայրենի ամպրոպային ստովածությունը: Ի՞նչ հիմունքներով է ստացնորդում նա իր նոր տեսակետն առաջարկելիս:

1. Նախ՝ Վաճազնի երգը հատված առ հատված հնգվորդական տարրեր ժողովուրդների (հին հնդիկներ, իրանցիներ, գերմաններ) ամպրոպային առասպելների, աստվածների և հերոսների

1 Արեղյանն առասպելների այս բաժանումներն ու անվանումները հետագայում «Հայ վիպական բանահյուսության» և «Հայոց հին գրականության պատմության» հատարի մեջ վերանայում է ու փոփոխում: Ըստ այդմ Հայոց հին առասպելներն են՝ 1. Հայկի, 2. Արամի, 3. Տուրք Անդեղուցի, 4. Արա Գեղեցիկի և Շամիրամի, 5. Վահագն վիշապաբաղի առասպելները, այսինքն խորհնացու Պատմության առաջին գրքում առկա զրեթե բոլոր վիպական պատմությունն ու երգերը և մինևույն հաջորդյալ, որպիսին խորհնացու մաս է Աբազը, նա Տիգրանի և Ավազանի առասպելախառն վեպը, որ 1899-ին առասպելների շարքն էր դասել, այժմ սակազորում է «Վիդասանք»-ի բաժնում և այն դիտում ու քննում իբրև «Վիդասանք»-ի սկիզբ կամ առաջին ճյուղ՝ հետևյալ իրավիճակի հիմունքով. ինչպես բանասիրության մեջ կարծիք էր հայտնվել (Գիլցեր) խորհնացու փառաբանած վիպական Տիգրանը՝ Տիգրան Մեծն է, որը խորհնացու կամ իր արչուրի շփոթությամբ համարվել է Տիգրան 1, և Պատմության մեջ ստրվել զրվել է Այգարոսի ժամանակ Արեղյանը ասելովին 1899 թ. այս տեսակետը բազմաթիվ փաստերով ու փաստապեղծով խորացնում է և հիմնավորում՝ ապացույցելով, որ խորհնացու Պատմության առաջին գրքում առկա վիպական Տիգրանի պատմությունը պետք է վերագրել II գրքում պատմվող ըստ խորհնացու՝ Տիգրան Միջինին (իսկ՝ Տիգրան Մեծին), իսկ Վարդգրիսի մասին եղած վիպական երգը, որ կղզի էր Վարդգրիսի առասպելը, քննում է «Վիդասանք»-ին կից, իրավամբ իբրև «Վիդասանք»-ի ցիկլին պատկանող երգ:

2 Արեղյանը հետազոտում, ինչպես վերնում արդեն ասվեց, Տիգրանի վեպն է դնում իբրև «Վիդասանք»-ի սկիզբ, իսկ մնացած մասերը (Սևնաբուրև, Երվանդ, Արտաշես և Արտավազդ) քննում է հույն հերթականությամբ, որպիսին առկա է խորհնացու մաս:



ծաղման ու նկարագրի համապատասխան գծերի հետ համեմատելով բացահայտում է նույնությունների հասնող նմանությունները Իրանց են. երկնքի և երկրի երկուսն են, ըստ բնգհանուր առասպելաբանության ասվյալների, հետևում է ամպրոպային աստվածության մեծանոց. երկինքը ամպրոպային աստվածության հայր է ըմբռնվել, իսկ երկիրը՝ մայր: Այդպես է ծնվել ու գիտակցվել հնդկական ամպրոպային աստված Ինդրան: Երկինքը հին ժողովուրդների պատկերացումներում և արդի հայկական հավատալիքներով բմբռնվել է իբրև թծիրանի ծով: Հնդկական Ինդրայի մականունը ջրածին է (ապտհա), իսկ կայծակի աստված Անդին ջրերի որդի (= ապամ նապտա) է կոչվում:

Նույնն է նաև Վահագնը, որի մեռնոցն ըմբռնվում է իբրև երկրնորի ու երկրի և երկնային ծիրանի ծովի ջրերի երկուսնքի արդյունք: Ճիշտ այդպես ծովածին է և «Աստնա ծանր» ժողովրդական վեպի ամպրոպային հերոս Սանասարը:

Վահագնի ծննդյան երգում, այնուհետև, հիշատակվում է ծովից բարձրացող կարմիր եղեգներ, որից ծախ ու բոց է կննում և բռցերի միջից վազում է խաբույաչ մի պատանի: Վահագնի սերունդը բույսից (եղեգն) մտաավորացնա նույնանում է հնդկական կայծակի աստված Անդիի ջրերից ու ծանրից ու խոտերից ծնվելու հետ: Իսկ համեմատական առասպելաբանության մեջ սերկնային կրակը բույսերի հետ կապված է մտածվում», և երբևէն էլ եղեգը դիտվում է իբրև կայծակ: Բացի այդ, ամպրոպային օգրեկույթը ըմբռնվել է իբրև կրակի ու ծխացող ամպերի մի խառնուրդ: Վահագնի արտաքինը (ժնոր հերոս, բոցո մորուս, արեգակ աչքեր) գրեթե նույնն է, ինչ հնդկական Ինդրայի կամ գերմանական Քրոնի հերոջն արտաքինը, և երկուսն էլ, ինչպես Վահագնը, խաբույաչ պատանիներ են:

2. Տարբեր ժողովուրդների ամպրոպային աստվածների ու հերոսների գերը գուգադրելով Վահագնի արարքներին, որ քի ղեպ, ծննդյան երգի մեջ, թեպես չի հիշատակված, բայց հորենացու կողմից վկայված է, Արեգանը բույց է առել ասյն միևնույն դերը, որ կատարում է հայոց Վահագնը: Հնդկական Ինդրան, օրինակ, ծնվելուն պես վազում է երկնային ջրերը կապող շար վիշապ՝ Վրատարայի դեմ կռվելու. այդպես և իրանական սկզբնապես ամպրոպային աստված Վերեթրասնան: Ըստ հորենացու հաղորդման, նույնն է կատարում նաև Վահագնը:

3. Արեգյանը ամպրոպային կռվի և վիշապի բնդհանուր ա-

ռասպելները բաղգատելով վիշապների մասին եղած հայկական հին ու նոր հավատալիքների և գրուցների հետ, գործյալ ցույց է առելու հայոց առասպելական վիշապի ամպրոպային բնույթը, իբրև պատառառողմի, փոթորիկ կամ փոթորկալից ամպի շար մարմնավորում, որը նույնն է, ինչ բնդհանուր առասպելաբանության մեջ: Հետևաբար, Վահագնի կռիվը վիշապների դեմ ամպրոպային բարի աստծու կամ բարի հերոսի մարտունեն է ամպրոպային շար վիշապի դեմ, հերոսամարտ, որ ըստ հայկական նոր հավատալիքների, իր վրա է վերցրել Գարբիկ հերշտակը՝ հերշտակներով ու կայծակի՝ թրով:

Եվ այդպես. հին մատենագիրների մոտ պահպանված Վահագնի «Վիշապաբազ» մակդիրը Արեգյանը բննում է գործյալ հայկական հավատալիքների հողի վրա և ցույց է առել, որ դա նույն ժողովրդական «Վիշապ հանելու», վիշապ վեր բարդուն հավատքի հետ է կապվում, և ըմբռնվել է իբրև ամպրոպային աստծուն բնորոշող մի մակդիր, աստված, որ վիշապների վեր է հանում, վեր է բազում և ոչնչացնում. Ճիշտ այնպես, ինչպես իրանական Վերեթրասնան, որի սնունդն իսկ Ինդրայի մականունն է՝ Վրատահան (բառացի՝ մորաբուշապ սպանող):

Այդպես, բազմաթիվ գուգահեռներով ու բաղգատումներով Արեգյանը վերականգնում է Վահագնի իբրև հայոց վաղեմի ամպրոպային աստծու բնույթն ու նկարագիրը. դրանով նոր էջ բացում հայ գիտաբանության մեջ: Իսկ թե ինչու էր նրան արեգակնային Ապուլունին նման հատկանիշներ վերադրվում, Արեգյանն այն բացատրում է նախ՝ Ապուլունի ունեցած որոշ ամպրոպային գծերով և այդպիսով իրանական ամպրոպային և արեգակնային հրեկույթների ֆիզիկական նմանություններով, որոնց անձնավորումները ըստ ժողովուրդների առասպելներում փոխանակում են միմյանց:

Հայկի առասպելը: Հայագիտության մեջ՝ սկսած Մ. Էմինից կարծիք էր հաստատվել Հայկի առասպելի ժողովրդական ծագման և բնույթի մասին: Քեպես առասպելի թողված գրախոս աղբյուրից (Մար Արաս), ուղղակի ու կողմնակի կավաններ էին առաջադրվում նրա վիշապական բնույթն սպասուցելու:

Էմինն, օրինակ, հերքելով Մար Արասի գոյությունը, նրա աղբյուրի հետ առնչվող բոլոր վկայությունները համարում էր ժողովրդական աղբյուրներից բաղած: Իսկ Հայկի առասպելի ժողովրդական լինելու մասին ուղղակի վկայություն էին գտնում (էմին, Գ. Տեր-Մկրտչյան, Խաչաթյան) իր՝ հորենացու մոտ («Այս արդա-

ապացուցանել վանդիր հին ասացիալ գրոցաց)։ Արեղյանը, սակայն, սխալ է համարում բանասերների կողմից հիշյալ վկայությանը քննադատելու և համոզել փաստերով ու փաստարկներով ապացուցում, որ այն վերաբերում է ոչ թե Հայկի ամբողջ առասպելին, այլ միայն Հայկից առաջ Հայաստանում նախարկիկների գոյության հարցին, իսկ անդիր, հին գրույցներ ստեղծ նկատի ունի Ուլմսիդիոսը ուսի անդիր գրույցները, որոնց մասին Խորենացին հիշատակում է մինչև Հայկի առասպելը։ Հետևաբար, Խորենացու կողմից ոչ մի սկզբնական չկա Հայկի պատմությունը ժողովրդական գրույցներից բաղած լինելու մասին<sup>1</sup>։

Քայց բանասերները (էմին, Գ. Տեր-Մկրտչյան) իրավացիորեն այլ կովաններ էին մատնանշում (առասպելի մանրապատում բնույթը, վիպական դարձվածներ ու նկարագրություններ, անունների ժողովրդական ստուգարանություն, տեղագրական ամենագնացություններ, բանաստեղծական լեզու) առասպելի վիպական-ժողովրդական բնույթն ապացուցելու։ Իսկ նալաթյանն, ընդհակառակը, ժխտում էր ամեն մի վիպականություն և Հայկի պատմությունն համարում էր Խորենացու հերյուրածը։ Արեղյանն այս երկու տարամերժ կարծիքներից հենվում է առաջինի վրա, սակայն նշված փաստարկները լիիրավ հիմք չի համարում զեռես Հայկի ստասպելի վիպականության նկատի ու վերջնականապես հավաստելու համար։ Ուստի և զինում է առավել հիմնավոր կովաններին, և ամենից առաջ իր հետազոտման նախաօրիմ եղանակին՝ համեմատությունը։

Հայկի առասպելը համեմատելով Արևոսի ավանդած Մմբատի և Հնիփաղի, Աղաթանգեղոսի՝ Տրդատի և Գոթից թագավորի, Աստվածաշնչի՝ Գավթի և Գողթաթի, Ֆիրդուսու Սամի և Քերրուեի մշտն կոլիկների նկարագրություններին՝ հետ և բացահայտելով անհնչայա նմանություններ, հակառակ նալաթյանի այն տեսակետին, թե Հայկի

1 Սալայն հույն «Հայ ժողովրդական առասպելները» գրքի վերջին զիտում, (էջ 582), Արեղյանը նկատի առնելով Խորենացու մի սկիզբը իր գրավոր ագրուրի՝ Մար Արասի մասին (սՄար Արաս Կասիմալ պատմել, ի փոքրոց ումանց եւ յաննշախից արտես ի զուսանականե այս Կասիկ ժողովնայ ի զեռանի արդունեաց)՝ համոզել ապացուցելով հաստատում է, որ Մար Արասը ունեցել է եսև բանահյուսական ագրուրներ և Հայկից մինչև Արամ եղած պատմությունները գրելիս օգտվել է եսև «Գուսանականեց»՝ այսինքն բանահյուսական ագրուրներից (մե փարթիք, որ հայանել էր զեռես Գարաղայանը, սակայն առանց հիմնավորելու)։ Գրանով Արեղյանը թեպետ մտիք, բայց որոշակի վիպություն է տեսնում Խորենացու մաս Հայկի առասպելի բանահյուսական մասան վերաբերյալ, երբ ինքը կողմնակի կովաններով արդեն ապացուցել էր այդ։

պատմությունը հերյուրված է Խորենացուն հայտնի այդ գրույցներին հիմամբ, Արեղյանը հենց այդ նմանություններով ապացուցում է Հայկի առասպելի ինֆունույն վիպական էությունն ու ոգին։ Այդ նման գրույցները դիտում է իբրև «իրենց ձևով մի ժողովրդական վիպական ամփոփումն... թշնամի ազգերի մեջ եղած նախնական կոլիկներին, որոնց մեջ պարագլուխներն առաջին տեղն են բռնում», այսինքն արդյունք են հասարակության պատմական զարգացման միևնույն աստիճանի, որ ընդհանուր է եղել բոլոր ժողովուրդներին։ Բացի այդ, հիշյալ ընդհանրությունների արգասիք են այն ընդհանուր հոգեբանական մեծ երևույթի, երբ հին գրույցները միշտ նորոգում են և նոր իրադարձությունները ժողովրդի բերանին ստանում են արդեն պատրաստի հին նման գրույցներին ու առասպելներին կերպարանք»։ զրանով Վեր զրույցը հագնում է հին գրույցի հագուստ, որով և հինը փոփոխվելով հարստանում է<sup>2</sup>։

Նման տեսակետով հիմնավորելով վիպական բանահյուսության ընդհանրությունները և զրանով իսկ հավաստելով Հայկի առասպելի վիպական էությունը, Արեղյանն առասպելի վիպականությունը ապացուցում է նաև ձևական կովաններով։ Գրանք են. 1. երկրի զրդուրը երկու կողմերի հակառակ հարձակման ժամանակ, 2. Բելի-զիսպան ուղարկելը Հայկին, 3. հերաների՝ միմյանց հետ խոստովյամբ ու կոպտությանը խոսելը (իրև արդյունք նախնական ժամանակների կոպտա բարբերի), 4. Կազմոսի փախուստը Բելի բազմության առաջից և Հայկին՝ նրա հարձակման մասին գոտելը, 5. Բելի անկման վայրը զերեկոմանք կուշիը, այսինքն Բելի առասպելի կազմվելը հակառակի գերեկոմանների տարածված ժողովրդական ավանդություններին։

Սրանց բոլորը ընդհանուր վիպական մոտիվներ ու գծեր են, հատուկ շատ ժողովուրդների վիպական սանթոնգործություններին։ Արեղյանն այդ ամենին ավելացնում է նաև էմինի և Գ. Տեր-Մկրտչյանի առաջ բաշած համոզել փաստարկները (մակղիրների սովանությունը, գրույցի մանրապատում հանգամանքը, հատուկ անուններին ստուգարանություն), ինչպես և վանա ծովի շրջակայքում Բելի ուղարկելը բարացման մասին ավանդության առկայությունը, եղբայրացնում է, որ «Հայկի ու Բելի առասպելն ամենայն հավանապատմությամբ ժողովրդական հիմունք ունի»<sup>3</sup>։

1 Մ. Արեղյան, Հայ ժոզ. առասպելները, էջ 225։

2 Անզ, էջ 226։


3 Անզ, էջ 247։



Հայկի առասպելն համեմատելով օտար ժողովուրդների համա-  
նման առասպելական սյուժեների հետ, Արեղյանը եզրակացնում է,  
որ դա խիղախ որսորդի, քաջածիզ աղեղնավորի կոիվն է բռնակալի  
զեմ, րնուլթով միջազգային մի առասպել, որի զուգահեռներն են  
դանիացի քաջ Տոկոյի գրույցը, շվեյցարացի Տելի գրույցը, սկան-  
դինավյան Օդհին ասածու առասպելը և ուրիշները: Նշված առասպել-  
ների նախնական, դիցարանական հիմքը՝ լույսի կոիվն է ընդհան-  
դիչելովա ու ձմռան, որ նախ ըմբռնվել է իբրև աստվածային աղեղ-  
նավորի կոիվ, ապա առավել զարգանալով դարձել է քաջածիզ ա-  
ղեղնավորի կոիվ իր բռնակալ տիրոջ դեմ, որին սպանում է աղեղ-  
նավորը: Այդ գրույցն հետազայում, տարբեր ժողովուրդների մաս-  
նրանց պատմական կյանքին համապատասխան, տարբեր բնույթ  
ու երանգ է ձևեր բերում: Մեր Հայկի գրույցի հիմունքը, — լինի այդ  
գրույցը մի փոխառություն, թե հայոց մեջ նախաժամանակից ի վեր  
գոյություն ունեցող մի առասպել, — եզրակացնում է Արեղյանը, —  
պատմական չէ, այլ առասպելարանական, ծագած ընդհանուր ա-  
ռասպելարանական աշխարհայեցողությունից: Հետազայում միայն  
այդ առասպելը հայերի կամ թե նախահայերի՝ իրենց հարավային  
գրացիների, հատկապես ասորեստանցոց, գուցե և բարեկացոց հետ  
ունեցած հարաբերության պատճառով, կրել է պատմական աղղի-  
ցություն»:

Եվ անկախ առասպելի պատմականացումից, այնտեղ, ըստ Ա-  
րեղյանի, պահպանվում է տակավին նրա դիցարանական բնույթը,  
որ կրկն է զգալի օտար ասորա-բարելական արեղակնային ասա-  
վածության՝ Բելի զեմ (որից ծագում են աստվածներն ու մարդիկ)  
աստեղային դյուցազն Հայկի (նկատի ունենալով Օրիոն համաստե-  
ղության «Հայկ» կոչումը) մղած կովի մեջ:

Առասպելի պատմական կողմի մասին կարծիք էր հայտնվել,  
թե այնտեղ պահպանված է ասորական քաղաքակրթության, մշա-  
կույթի և կրոնի՝ հայերի վրա ունեցած զորեղ, սկզբում թշնամական  
ազդեցության հիշողությունը (Գեյցեր): Արեղյանն այդ տեսակետը  
զարգացնելով՝ առաջադրում է առավել հավանական մի նոր կարծիք,  
թե առասպելի մեջ հնարավոր է, պահպանվել է «Հայաստանի նա-  
խահայ բնակիչների՝ ուրարտացիների ասորեստանցոց դեմ մղած  
պատերազմների հիշատակը, որ հետո հայերը ժառանգել են ուրար-  
տացիներից»: Եվ նշված կարծիքը հիմնավորում էր պատմա-բանա-



Մ. Արեղյանի փիլիսոփայության դոկտորի դիպլոմը (1898)

1 Մ. Արեղյան, Հայ ժող. առասպելները, էջ 256—257:



Մ. Արեղյան, կինը՝ Շուշանիկ Արեղյան, Շուշանիկի մայրը՝  
Սեփյա Շահաբարունյան, որվին՝ Գաբիկ Արեղյան (1904)

գիտական այն իրողություններ, թե սեփական մի ազգ, բունելով մի ուրիշ ազգի երկիր, սեփականում է և սորա զբույցներն ու ավանդույթներն, հարկավ, փոփոխություններով<sup>1</sup>։ Այս առևանգները շարունակում է իր ուժը պահպանել հետագայում ևս<sup>2</sup>, սակայն մի նոր կարևոր հավելումով, այն, որ Հայկի առասպելը պահպանել է դրսից կարևոր հավելումով, այն, որ Հայկի առասպելը ներգաղթի հիշողությունը, ներգաղթի հայերի Ուրարտու կատարած ներգաղթի հիշողությունը, ներգաղթի որ հավանաբար ուղեկցվել է սխրալի մարտերով, որոնք նյութ են մտածակարարիլ զանազան երգերի ու զբույցների ևլ ապա, Հայկի առասպելի մեջ Արեղյանը աննում է հին սոսնատիրական հասարակությանը յուրահատուկ նրեություններ. Հայկը իբրև իր 300 հոգիանոց տոհմի ղլխավոր, տոհմապետ, որը տնօրինում է առաջնորդում է իր տոհմը։ Թացի այդ, առասպելի մեջ առկա է սոսնատիրական ժամանակներից եկող մի կարևոր գերապրուկ՝ Նախնիների պաշտամունք, ըստ որի տոհմի կամ ցեղի առաջնորդը՝ Հայկը դառնում է հայ ցեղի նախնին և նրա անվան հետ են կապվում երկրի ու ժողովրդի անունը և ուրիշ աշխարհագրական տեղեր<sup>3</sup>։ Եվ այսպես, ըստ Արեղյանի, սկզբնապես բնությունը նրեությունների՝ լուսին և դիշերվա ու ձմռան խավարի հակամարտությունը մարմնավորող առասպելը վնասույթովում ու վերախմտատավորվում է հասարակական կյանքի երևույթներով, դառնում է ըստ աղեղնավորի և բունակալ տիրոջ միջև մղվող մի հերոսապատում, որը Հայաստանում առավել պատմականանալով կապվում է հայկական կամ նախահայկական ժամանակների իրադարձություններին, վերածվելով օտար բունակալությանների դեմ մարանչող հայ ժողովրդի պատմական գոյության իրավաբանությունը հավաստող մի գեղեցիկ առասպելի, որի հիմնական գաղափարը հետագայում անցնում է մեր բոլոր ավանդական-ժողովրդական վեպերի միջով՝ ընդհուպ մինչև «Սասնա ծռեր»-ը<sup>4</sup>։

Արամի առասպելները։ Սրանց Արեղյանը «Հայ ժողովրդական առասպելներ»-ում չի անդրադարձնում, համարելով սառանձին սոսնատիրության կարոտ խնդիր, որանց հետազոտվում են հետագայում «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության և «Հայաց հին գրականության պատմության» մեջ։

1 Մ. Արեղյան, Հայ ժող. առասպելներ, էջ 252—253։

2 Տե՛ս Մ. Արեղյան, Հայաց հին գրական պատմություն, գիրք I, էջ 28։

3 Անց, էջ 22 և հետև։

4 «Սասնուցի Գավիթ», Հայ ժողովրդական կոթա, Քրիտիկադրամա, Երևան, 1920, էջ LXXI։



Հննվելով Արամի գրույցների ժողովրդական ծագման մասին խորհնացու հաղորդած վկայությունները, Արեղյանը գրանքը ևս բնուում է բանահյուսական մեկնակետով, բացահայտելով այդ գրույցների երկու կարևոր կողմերը՝ պատմականն ու դիցարանականը:

Արամի գրույցների մեջ նա անգրագարած է տեսնում Կապադովկիայի կողմերում հայերի երբևէ բնակված լինելն ու իրենց սահմանակից Մարաստանի և Ասորեստանի հետ ունեցած հարաբերությունները: Իսկ Ասորեստանի դեմ Արամի մղած կռիվը գրույցը համարում է «թերևս մի ավանդական հիշողություն... ուրարտական հզոր Արամ թագավորի, Սայամաեսար Բ-ի (860—825 մ. թ. ա.) հակառակորդի, և նրա ուղղական գործողությունների ընդդեմ ասորեստանցիների»<sup>1</sup>:

Առասպելականն այն է, որ գրույցներում Արամի հակառակորդն է դուրս գալիս ասորեստանցիների Բարբաժ աստվածը, իսկ Կապադովկիական Կեսարիայում՝ Տիտանյանները, հատկապես Պայսպիս Քաղյա Տիտանյանը:

Հննվելով Մարբլատի հետազոտությունների վրա և ընդունելով նրա տեսակետը, Արեղյանը գտնում է, որ Արամի ու Պայսպիս Քաղյա Տիտանյանի մղած կռիվը նույնն է, ինչ հունական Զևսի՝ Տիտանյանների և Տիփոնի դեմ մղած կռիվը, որ, լինելով հրաբխային երևույթների առասպելական մարմնացում, յուրացրել են արիմ-նեյթ (= հայեր), երբ աակալիին Կապադովկիայում էին բնակվում: Հիշյալ առասպելը Կապադովկիայի արիմները սկսպել են իրենց նախնու Արիմ անվան հետ, իբրև Արիմի կռիվ Տիտանների կամ Պի-զանանների դեմ: Հետագայում Արիմ անունը դարձել է Արամ, թերևս ուրարտացոց վերնում հիշված Արամ թագավորի անվան հիշողությամբ, կամ հավանորեն, աղբյուրությամբ Աստվածաշնչի մեջ հիշված «Արամ» անվան, որ «Է՝ արամնացոց — Ասորիքի և Միջագետքի բնակիչների նախնին»<sup>2</sup>:

Արամի, ինչպես և Հայկի առասպելում, Արեղյանը տեսնում է բնության ուժերն ու երևույթները անդրապատկերող առասպելի կերպարաբանություն, երբ այն պատմա-բաղադրական բովանդակություն է ձևոց բերում և նախկին բնության առասպելը վերածվում է հայոց նախնու մի կռիվի: Արիմ-Արամը՝ Հայկի մի երկրորդ արիպարն է, իբրև հայոց երկրի սահմանների պաշտպան, որից է ծագում է հայ

ազգի երկրորդ անունը՝ Արմեն: Փաստորեն Արեղյանը Հայկի և Արամի առասպելների մեջ անգրագարծված է տեսնում հայ ժողովրդի էթնիկական կազմի մեջ մտած էական բաղադրիչների՝ հայերի (իմաստահայտների) և արմենների երբևէ անկախ գոյություն և բնակված աշխարհագրական տեղավայրերի մասին պատմական հիշողություններ:

Անգղեյա Տուրքի առասպելը: Նախքան առասպելի բնութայնում, Արեղյանը կատարում է բանասիրական մի քանի ճշգրտումներ: Նախ՝ 1899-ին, խորհնացու «Հայոց պատմություն» տարրեր ձևագրելի բաղադրությամբ հավաստում է առասպելի հերոսի բուն անունը՝ Տուրք: Ապա, հետագայում որդեգրելով Գարագաշյանի կարծիքը հայոց Անգղեյ անունով աստծու գոյության մասին<sup>3</sup>, միաժամանակ պատմական նոր վկայություններ հիմնար պարզում է, որ «Անգղեյ աստվածը կոչվել է և Բագառնա, որ փոխառություն է հին պարսկերենից և նշանակում է «աստուածատու» կամ «ոչից աուր»<sup>4</sup>: Շատ հավանական համարելով նաև Տուրք կամ Տուրք անվան նույնացման տեսակետը միտանական և խեթական Տարքու կամ Տուրքու բուսականության և պտղաբերության աստծու հետ (Ն. Աղոնց, Ք. Ղափանցյան), Արեղյանը գտնում է, որ «այդ անունը (Տարքու, Տուրքու — Ս. Հ.) ժողովրդական ստուգաբանությամբ նույնացել է հայերեն «տուրք» բառի հետ, ըմբռնվել է իբրև «տուրք դից», և այն շքանկերում, ուր հայերենի հետ խառն գործածվելիս է կղել պարսկերենը, զա ապվել է նաև Բագադատա-Բագարատ, որ է «դից-պարսկերենը, զա ապվել է նաև Բագադատա-Բագարատ, որ է «դից-պարսկերենը» նա հավաստում է նաև, որ Տուրք աստվածը պաշտվելով Անգղեյ գավառի կողմերում՝ «պաշտամունքի տեղի նույնությունն պատահառով, հարաբերության մեջ դրվելով Անգղեյ աստծոց հետ, կամ նույնացել է նրա հետ («պղծելու Բագարատ և Անգղեյ»), կամ դարձել է Անգղեյի սերունդ — «Տուրք Անգղեյայի: Առասպելի հետագա զարգացման ընթացքում, սակայն, «Անգղեյայ» անվան իսկական նշանակությունը մթնել է, այդ ըմբռնվել է իբրև «ուրեղ» և առաջ է կկի... այդ հսկայի աղբյուրային նկարագիրը: Այդ ժամանակ սաչ է կկի... այդ հսկայի ծագումն Անգղեյից, ու նրան կապել են հսկա Հայկի հետ»<sup>5</sup>: Այն է առասպելի բանասիրական հիմնադրուման

1 Տե՛ս նրա «Թեոսական պատմություն հայոց», Ա, Թիֆլիս, 1895, էջ 250:

2 Մ. Արեղյան, Հայոց հին դրակ. պատմություն, հատ. 1, էջ 26: Հմմտ.՝ Երկեր, Ա, էջ 59:

3 Մ. Արեղյան, Հայոց հին դրակ. պատմություն, հատ. 1, էջ 27: Հմմտ.՝ Երկեր, Ա, էջ 59—60:

1 Մ. Արեղյան, Հայոց հին դրակ. պատմություն, գիրք 1, էջ 24: Հմմտ.՝ Երկեր, Ա, էջ 54:

2 Անգ, էջ 25: Արեղյան, Երկեր, Ա, էջ 55:

այն նոր տեսությունը, որ տալիս է Արեգյանը Անգեղյա Տուրքի անշուքյամբ: Իսկ բուն առասպելի վերլուծության մեջ, բացի նրա վիպական էությունը բացահայտող համեմատություններից, Արեգյանը հայ առասպելագիտությանը որևէ նոր բան չի ավելացրել:

Արա Գեղեցիկի և Եամիրամի առասպելը: Հայագիտության մեջ արդեն արծարծվել էր այն առասպելը, թե հայկական Աստղիկ դիցուհու պաշտամունքը սեմական, որոշակի՝ ասորական ծագում ունի, և Եամիրամի առասպելախառն ավանդության մեջ պահելով է Աստղիկի գրույցը (Ֆելցերո՞): Հիշյալ կարծիքը Արեգյանը հիմնավորում է նորանոր փաստերով ու փաստարկներով և զարգացնելով այն, ցույց է տալիս, որ հայոց Աստղիկի պաշտամունքը նույնն է, ինչ հին Արեկներում հայտարամյակներ սիրված ու պաշտված պողոթներովյան և ոիրո, ինչպես և ջրի դիցուհու պաշտամունքը, որ տարբեր ժողովուրդների մոտ, տարբեր ժամանակներում տարբեր անուններ է կրել: Նա Ասորեստանում, օրինակ, կոչվել է Միխոտա, Իշտար, Բաբելոնում՝ Իշտար, Փյունիկիայում՝ Աստարթե, Աշտարա, Գերկեսո. Ասորիքում՝ Գերկեսո, Ասորացախիս, Աստարես, հույների մեջ՝ Ափրոդիտես, պարսիկների մոտ՝ Անահիտա, Հայաստանում՝ Անահիտ: Այդ սիրո և հեշտության դիցուհին Հայաստանում պաշտվել է նաև Աստղիկ անունով և Անահիտի հետ սկզբնապես եղել են «միևնույն» դիցուհու տարբեր կոչումները, մեկը՝ դիցուհու Անասու մականունից, մյուսը՝ նրա սիրուր Արուսյակ-Աստղիկից:

Եամիրամն, ահա, ասորական Գերկեսոյի կամ ասորեստանյան Միխոտա դիցուհու զուտրն է, օժտված բնավորության միևնույն գծերով, ինչ իր մայրը՝ Գեղեցիկի, այլասիրտ, ռազմիկ և վավաչուտ: Եամիրամի անվան հետ Բաբելոնում կապված են եղել շինարարություններ, ինչպես և Փոքր Ասիայում և այլուր՝ բլուրներ, բարձրավանդակներ և այլն: Գերկեսոյի և նրա զուտր՝ Եամիրամի պաշտամունքը հնում մուսը է զործում Հայաստան և կապվում որոշ սոցալալարիների հետ: Գիցուհու պաշտամունքը բերում է նաև իր շուրջը հյուսված առասպելներ: Նվ այդ առթիվ Արեգյանը բննադատում ու հերքում է այդ առասպելները շինծու համարելու նալաթյանի տեսակետը, ցույց տալով, որ առասպելները առկա են ոչ միայն Խորենացու մոտ, այլև դրանք տարբեր ձևերով արձագանքվել են մատենագրական հին աղբյուրներում և պահպանվելով ժողովրդի բերանին, հասել են նույնիսկ մինչև XIX դար:

1 Տե՛ս նրա «Հետազոտության հայ դիցարանության, Վենետիկ, 1897, էջ 96:

Նվ տպա. Եամիրամի և Արալի, Իշտարի ու Փիլգամեշի (Քամուլուկի) առասպելների նույնության մասին զարծյալ եղվել էր մեր բանասիրության մեջ (Ֆելցերո): Արեգյանը բազմաթիվ համեմատություններով կրկին անդամ հիմնավորելով այդ կարծիքը, առաջ է մղում այն և ապացուցում, թե ինչպես սեմական դիցուհու առասպելը փոխանցվելով Հայաստան՝ կապվում է տեղական ավանդություններին և հավատալիքներին: Արալի՝ պատերազմում սպանվելու և սպիղիներ կողմից նրա հարության առասպելը տեղական ծագում ունի և երկար ժամանակ տարածված ու պաշտված է եղել հայոց մեջ: Ավելին, ուշ շրջանի հետազոտություններում Արեգյանն առավել հստակում է իր տեսակետները, հավաստելով, որ հանձին Արուսի մահվան ու հարության առասպելի, պահպանվել է Առաջավոր Ասիայում տարածված շերտասարդ աստուծու մահվան և հարության շատ հայտնի առասպելը», որի «հիմքն է գարնանային երիտասարդ բնության մահացման երևույթն արշանն ու ձմեռը և ազատ վերակենդանացումը հաջորդ գարնանը»: Սա դիցարանական առասպելի բուն էության բացահայտումն է, որ արդեն հաստատվել էր հայագիտության մեջ (Աղանց, Մտտիկյան, Վասիսեյան):

Արեգյանն, այդպիսով, նորենացու մոտ իբրև պատմական եղելություն վիպվող Արալի և Եամիրամի պատմի մեջ բացահայտում է նրա առասպելական-դիցարանական բնույթը, հերոսների հանրահայտ աստվածություններ լինելու պարզան և այս բնզանուր արեկյան առասպելի մեջ առկա բուն հայկական հավատալիքային տարրերը, ինչպես նաև ցույցահանում հայկական միջավայրում առասպելի գոյությունն ու ժողովրդականությունը՝ Խորենացուց առաջ և թե նրանից շատ հետո:

Սրանք են հայկական բուն դիցարանական առասպելները, որոնք Արեգյանի կողմից վերջնականապես հավաստվում ու ճշգրտվում են և ենթարկվում պատմա-բանադիտական բնզանուր բնույթին:

2. ՀԱՅ ԵՒ ՎԵՊԻ ՀԵՎԱՍՏԱՌԻՆ ՈՒ ՀԵՍՏՈՍՈՒՄԸ

«Հայ ժողովրդական առասպելները՝ աշխատության մեջ Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի վիճակն պա-

1 Տե՛ս նրա «Հետազոտության հայ դիցարանության», էջ 91—92:  
2 Մ. Արեգյան, Հայոց հին գրական պատմություն, հատ. 1, էջ 29:  
3 Ն. Աղանց, Հին հայոց աշխարհայացքը, տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948: Ազ. Մտտիկյան, Արա Գեղեցիկ, համեմատական, բնական ուսումնասիրություն, Վիեննա, 1930: Գ. Վալանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945:



առանձնեք, որոնք հորենացիին կոչում է «Վիպասանք», Արեղյանն, ինչպես տեսնեք, բնութիւնը բնութանում էր երկու բաղադրիչներ՝ պատմիչ և հենց պատմիչին և առասպելական կեր, նշելով միաժամանակ գրանց միասնական ամբողջութիւնը:

Հետագայում առավիջ հատկելով ու որոշարկելով իր տեսակետը, «Հայ վիպական բանահայտութիւն» մեջ արդեն նա այդ գրույցներն համարում է մի ամբողջական վիպ, որի սկիզբը տեսնում է խոյնացու Պատմութեան առաջին գրքում՝ Տիրգրանի մասին նշած գրույցներում:

Հետ այս, նա, հայոց առաջին մեծ վիպը համարում է Տիրգրանի, Մանատրուկի, Երվանդի, Արտաշեսի և Արտավազի մասին նշած առասպելախառն պատմաները, որոնք, ըստ Արեղյանի, կազմել են վիպական մի «բոլոր ամբողջութիւն», բայց ոչ գրական-գեղարվեստական: Եվ այդ հին վիպը իր առասպելական բնութիւնը պատճառով, հորենացու մտա ունեցել է կրկնակի անվանումներ՝ «Վիպասանք», «Երգք վիպասանաց», «Առասպել», «Երգք առասպելաց»:

«Վիպասանք»-ի առթիվ էլ Արեղյանը, 30-ական թվականներին արդեն, ժողովրդական վիպի ժանրային բնութիւն իր նախորդ տեսութիւնը համարում է մի նոր հատկանշով կա: նա այս անգամ ժողովրդական վիպը առասպելի հետ է համեմատում և գտնում, որ վիպը առասպելից տարբեր ծագում ունի: «Մինչ առասպելներն,— գրում է նա,— ունեն ավելի զիջարմական բնավորություն, շատ քիչ պատմական ազդեցություն են կրած և հաճախ փոխառուիցուն են ուրիշներին,— վիպն, ընդհակառակն, իր ծագումով, ընդհանուր առմամբ, բնիկ ազգային ինքնուրույն ստեղծագործութիւն է: Վեպը պատմական բանաստեղծութիւն է»<sup>1</sup> (ընդգծումն իմն է —Ս. Ն.):

Առասպելին հակադրելով ժողովրդական վիպն իր պատմականութեամբ, Արեղյանը, սակայն, վիպի ժանրային նշված բնութագրումն անվազանցում է մեկ շատ կարևոր հանգամանք կա. նա գրտնում է, որ վիպի ընդհանուր պատմությունն է, այս բառն ընդարձակ մտքով առած, լինի իսկական, թե կեղծ պատմություն: Եվ մեր «վիպ» բառը հնումն հենց այդ ընդարձակ նշանակութիւնն էլ ունեցել է: Այսինքն վիպի նյութը օտակա պատմականը չի համարում, այլ նաև կրկնակյականն ու բանահայտականը:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք I, էջ 37: Հմմտ.՝ Երկեր, Ա, էջ 94:

Ժողովրդական վիպի այս էական հատկանիշը շեշտելով հանդերձ, Արեղյանը, սակայն, առասպելից լրիվ չի մեկուսացնում վիպը: Վերջինս կազմութեան մեջ նշանակալից տեղ է հատկացնում նաև առասպելներին ու առասպելական գրույցներին, գտնելով, որ գրանք «հեշտութեամբ չեն մտաբանում ժողովրդի մեջ, այլ երկար պահվում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպելներին հետ կցվելով» մտնում են վիպի մեջ և զուգակցվում պատմականին ու վիպականին:

Եվ «Վիպասանք»-ի, իբրև անգրանիկ ժողովրդական վիպի բուն կերպարանք Արեղյանը համարում է պատմական ու առասպելական տարրերից բաղկացած, որ մի կողմից ժողովրդի մտանկ միտքը տարբերություն չի գրել իրական ու երևակայական պատմության միջև, մյուս կողմից սեփական պատմական եղիտություններն էլ մասամբ ստացել են առասպելական դուշն<sup>1</sup>: Այս յուրահատկութեան պատճառով էլ մեր առաջին ավանդական վիպին Արեղյանը տալիս է առասպելախառն վիպ» անվանումը:

Վիպի ծագման պատմական այն մեկնակետը, թե «ժողովրդական վիպը կրում է իր մեջ մի որոշ պատմական դարաշրջանի ազդեցությունն ու ոգին», թե «վիպի գործողությունը, ինչպես և գործող անձերը... ծագում է, առաջ է դալիս մի որոշ, կոնկրետ պատմական դեպքի, կղևութեան հետեաներով»<sup>2</sup>, Արեղյանին մղում էր նախ՝ բացահայտելու «Վիպասանք»-ի դարաշրջանն ու նրա պատմական բուն արմատները:

Հայոց առաջին ավանդական վիպի պատմական նյութը նա համարում է մ. թ. ա. II դարի սկզբներից սկսած մինչև Արշակունի առաջին թագավորները, 300 տարվանից ավելի ժամանակ ընդգրկող, հայ ժողովրդի կյանքում վճռական նշանակութիւն ունեցող սոցիալադարձարական մեծ տեղաշարժերը: Պատմական մի նոր ժամանակաշրջան էր դա, երբ անցում էր կատարվում տոհմային հասարակարկից դեպի ֆեոդալականը, երբ հայերն իբրև մի «համալուծու ցեղային ամբողջություն ուժ են զգում հանդես գալու իբրև անկախություն»:

Եվ Արեղյանը վիպական շրջանի սկիզբը հենց համարում է սոցիալական ու բաղադրական այդ փոփոխությունները: Ապա, երբ հիմնարկվում է հայոց անկախ պետականությունը (189 թ. մ. թ. ա.)

<sup>1</sup> Մ. Արեղյան, Երկեր, Ա, էջ 95:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք I, էջ 570:

և սկսվում է հատկապես Արտաշես Ա-ի հիմնադրած Արտաշատի թագավորության կամ Մեծ Հայաստանի բուն ծաղկումն ու վերելքը, հայ ժողովուրդն ապրում է ազգային ինքնուրույն պետական կյանքում: Դա մի վիպական-հերոսական շրջան էր նրա համար: Մինչև Արշակունիների հաստատումը (66 թ. մ. թ.) Հայաստանի ներքին ու արտաքին կյանքում կատարվում են մեծամեծ դեպքեր. հիմնը-վում են քաղաքներ, թագավորություններ, փոխվում են հարստություններ, մեծ աերությունների միջև աեղի են ունենում կռիվներ, որի հետևանքով Հայաստանը դառնում է երկարատև պատերազմների վայր: Պատմական այս իրադարձությունները խոր տպավորություն են թողնում ժամանակակիցների վրա: և ստեղծում քաղամտիվ երգեր, գրույցներ ու ավանդություններ:

Պատմական նշանավոր անձնավորություններն (Արտաշես Ա, Տիրգրան Մեծ, Արտավազդ, Արտաշես Բ, Տրդատ Ա և այլք) դառնում են հիշյալ ստեղծագործությունների կենտրոնական հերոսներ:

Արեղյանք քաղամտիվ փաստերով ցույց է տալիս, թե ինչպես տարբեր ժամանակների իրագործություններն ու հերոսները վիպական համաձայման են ենթարկվում մեկ անձնավորության և նրա արարների մեջ: Այդպիսին է վկայի գլխավոր հերոսներից մեկը՝ Արտաշեսը, որի անձի մեջ հարակցված են պատմական Արտաշես Ա, Արտաշես Բ, Արտաշես Գ և Տրդատ Ա թագավորների գործերն ու նկատագիրը: Միացման համար հանգույց է ծառայել պատմական գեղերի և հիշյալ թագավորների անունների, արարքների ու ճակատարի նմանությունը: Գրանցից են, օրինակ, Արտաշատի շինարարությունը Արտաշես Ա-ի կողմից և նրա հիմնովին վերանորոգումը Տրդատ Ա-ի կողմից. պալանների (չյուսեսականներ) արշավանքները և նրանց դեմ հայ թագավորների (Արտաշես, Տրդատ) մղած կռիվները և այլն: Ըսել վիպական երվանդը հիշողություն է Արտաշես Ա-ի նախորդի, Հայաստանի վերջին կառավարչի Սելևկյան տիրապետության ժամանակ, այլև ուրիշ նախորդ երվանդներին: Վիպական շղթայված Արտավազդը հիշողություն է Տիրգրան Մեծի որդու՝ Արտաշես Բ-ի հոր, հայոց Արտավազդ թագավորի, որին գերված է շղթայված տարիլ են նդիպտաս: Սնանատուկ թագավորը, որ կրեան է գալիս վկայի սկզբում իբրև Արտաշեսի հայր՝ հայոց Սանատուկ թագավորի հիշողություն է (մ. թ. II դար), որն աչբի է ընկել իր շինարարություններով և այլ բարեմասնություններով: Վիպական անձ է դարձել նաև Սանատուկի որդին՝ Վաղարշը, որը նա հռչակվել է իր շինարարություններով: Նա հզոր պարեսպներով ու

պատվարներով պատում է Վարդգեսավանք, որն հետագայում կոչվում է իր անունով՝ Վաղարշապատ:

Հիշյալ պատմական անձնավորությունների ու նրանց արարքների շարք հյուսված երգերն ու ավանդությունները, բառ Արեղյանի, կղև էն նախնական բանաստեղծություն, որն սկզբում, հարկավալ, չի կղևլ ամբողջական վեպ, մի ընդարձակ պատմվածք: Այլ դա կղև է տարրական ձևով, պարզ ու միամիտ մի բանաստեղծություն, փոքր թերթվածներ ու գրույցներ հերոսների ու նրանց քաղաքործությունների մասին... Ժամանակի ընթացքում այս սկզբնապես անչտա պատմական երգերն ու ավանդությունները, հարկավալ իրար և նախորդ դարերից ժառանգած երգերի և առասպելների հետ, առաջ են բերել մի մեծ վիպական ամբողջություն մի քանի ճյուղերով, կազմվել է վիպատանք կամ վիպասանություն<sup>1</sup>:

Մեր առաջին հին վեպը, բառ ծագման և կենցաղավարման տեղի, Արեղյանը բաժանում է երկու կարերը վիպական ամբողջության. Արտաշատյան և Արժավիրյան վիպական ցիկլերի: Այսպես՝ բառ այն տեղերը, որոնց կատարվել են վկայի նյութ դարձած պատմական նշանավոր երևույթները... որ իսկապես ապրել ու գործել են վեպի պատմական հերոսները»: «Վիպասանք»-ի մեջ մտնող ամենահին պատմական ավանդությունները վերաբերում են Արժավիրին, Երվանդաշատին ու Արտաշատին, այն քաղաքներին, որտեղ սկզբը են ստել վիպական երգերն ու գրույցները: Եվ բառ այդմ, երգ ու գրույցների Արժավիրյան ցիկլը նա ավելի հին է համարում, քան Արտաշատյանը, քանզի առաջինը իր մեջ է ներառնում նաև մինչև մ. թ. II դարը եղած պատմական հիշողություններ՝ Հայաստանում իշխող երվանդյանների մասին, Հիշյալ երկու վիպական ցիկլերը տարածված են կղև Արտաշատի ու Արժավիրի շրջակայքում, հեթանոսության պահպանման հետևանքով ստեղծվել ու շրջանում հարստանել են հենց Գողթան պղատում, որի նշանավոր վիպասանները դրանց են հարակցել նաև մարերի մասին հնարուն ավանդություններ: Մարերի մասին կղած հին ավանդությունները, ինչպես և Արժավիրյան ցիկլի երգ ու գրույցները, որոնք սկզբնապես առանձին առանձին խմբեր են կազմած կղև, կղևները, վիպասանները միացրել են Արտաշատյան ցիկլի հետ և կազմել մի վեպ: Այդ կազմված է կղև քաղաքական իշխանության միացման հետ: Այդ վաղ դարերում արդեն Արտաշատի տերությունը ձգտել և հարողն է ա-

<sup>1</sup> Վ. Արևիկյան, Հայոց հին դրակ. պատմություն, գիրք I, էջ 41; Հմմտ.՝ Երկեր, Ա, էջ 92:



ուաջ բերել Հայաստանի զանազան մասերի միացում, և Արտաշատը դարձել է ընդհանուր կենտրոն: Գրա համապատասխան՝ Արտաշատի շուրջը խմբված պատմական երգերն ու գրույցները իրենց մեջ ընդունելով և ուրիշ ավանդություններ, ձգտել են «համազգային» դառնալու: Այսպիսով առաջ է եկել մի ընդհանուր վիպասանություն Հայաստանի իշխողների մասին՝ եվ այս պատմական խոսքն փաստերով Արեղյանը դարձյալ հիմնավորում է հայոց հին վեպի կենցաղավարման ձևի և եզանակների մասին մի կարևոր տեսություն, բառ որի, հնում «վիպական բանաստեղծությունը մշակվել է պոետիստիստի արվեստավորների ձեռով, որոնք կուլվել են երգիչ, վիպասան և գուսան»: Ընդ որում «Վիպասանը»-ը կատարվել է վիպասանների կողմից բերան արած, բարձրաձայն արտասանությամբ («թիվ սահել») և այն «ոչ միայն պատմվել է, այլև մասամբ երգվել», ճիշտ այնպես, ինչպես «Սասնա ծռեր»-ը և ինչպես ուրիշ ժողովուրդների վեպերն առհասարակ:

Այսպիսի մատերիալիստական պատմահայեցողությամբ է Արեղյանը հավաստում հայոց առաջին հին վեպի գրույթունը և ապա բացահայտում նրա սկզբնավորման և զարգացման տեսությունը: Նա վիպի կազմավորման և զարգացման ընթացքը պատճառաբանում և բացատրում է պատմա-հասարակական և սոցիալ-բազալական որոշակի տեղաշարժերով: Եվ պատահական չէ, որ վիպական անջատ տարրերը մեկ միասնական ամբողջության մեջ համախորմը վիճու և կենտրոնանալու վիպական ընթացքը պատճառաբանում է դարձյալ հասարակա-բազալական զրդումեններով, այն կապելով դարգացող ֆեոդալիզմի և բարձրացող հայ կենտրոնացված պետականության շահերի ու խեղդիների միավորման հետ:

«Վիպասանը»-ը, բառ Արեղյանի, թեպետ մի ամբողջական վեպ է եղել, սակայն ոչ թե մեկ ընդհանուր թեմա ունեցող և զեղարվեստական մշակման ենթարկված վիպական երկ, այլ սոսկ փամանակի ընթացքում միմյանց հարակցված տարրեր վիպական երգեր ու պատումներ, առանց ներքին զեղարվեստական միասնության: «Վիպասանը»-ի մեջ, ինչպես և «Սասնա ծռեր»-ում, «պատմվել են զանազան միջադեպեր նույն հերոսի, կամ իրար հաջորդող հերոսների կյանքից, կապվելով համախ առանձին վիպական ճյուղեր: Այդ ճյուղերից յուրաքանչյուրն արդեն ունեցել է իր թեման, որով կազմել են

մի-մի առանձին միություն»: Մեր առաջին ավանդական վեպը Արեղյանը, բառ զործող հերոսների, բաժանում է վիպական ամբողջություն կազմող հետևյալ ճյուղերի:

1. Մեծն Տիգրանի վեպ կամ ճյուղ, որտեղ պատմական Տիգրան Մեծի շուրջը հյուսված վեպին ու պատմական երգերին հարակցվել են նաև ընդհանուր բնույթի առասպելներ, ստեղծելով մի ամբողջական պատմա-առասպելական վեպ:

Տիգրանի վեպը, բառ Արեղյանի, նախապես եղել է ժողովրդական, որը, սակայն, V դարում երկու անգամ գրական մշակման է ենթարկվել: Ինչ «Հիսուսն պիտոյից» կուլված ճարտասանական գրում, որից օրոպվել է Խորենացին և մեկ էլ՝ Խորենացու ձեռքով, նրա «Հայոց պատմություն» մեջ: Պատմական Տիգրան Մեծի և վիպական Տիգրանի համեմատություններով Արեղյանը ապացուցում է նրանց նույնությունը, ցույց տալիս պատմական իրողությունների և վիպական դրվագների համեմատությունը (Տիգրան Մեծի բարեկամությունը մարերի հետ, մարքոթ թագավորի փեսայացումը և ի վերջո թշնամությունը), որով իսկ հավաստում Տիգրանի վեպի «խոսրական պատմական արժեքը», մի պատմություն, որ սղանում է Խորենացու Հայոց պատմության կարևոր մասերից մեկը՝: Վեպի առասպելական կողմը քննելիս, Արեղյանը բացահայտում է ընդհանրական բնույթի մի ամբողջական առասպել, որն անկախ իր պատմական գունավորումից, պահպանել է ամպրոպային առասպելի բուն նկարագիրն ու բովանդակությունը: Դա Ածղահայի առասպելն է, որի ղիխավոր հերոսը՝ Ածի Դահական (վիշապ Դահակ) հափշտակում է ամպրոպային աստծու կնոջը կամ բորջը (իմա՝ արեղակին) և բանտարկում. բայց աստված կուլում է նրա դեմ, սպանում վիշապին և ազատագրում բորջը: Հիշյալ առասպելի զուգահեռները, որ նույն Ածի Դահակա հերոսի անվամբ սովա են հին հնդկների ու իրանցիների ամպրոպային գրույթներում, վկայում են մեր Ածղահայի առասպելի ամպրոպային բնույթը: Բացի այդ, Վահագն աստծուն Տիգրանի որդին համարելու բանահյուսական վիպությունից Արեղյանն հանգում է այն եզրակացության, թե Տիգրանի փոխարեն սկզբնապես վիշապ Ածղահայի դեմ կուլողը եղել է վիշապաբաղ Վահագնը, որն հետագայում առասպելաբանական մի ընդհանուր օրինաչափությամբ, հատկապես առասպելի պատմականացման հետևանքով, բաժանվել է երկուսի՝ հոր և որդու, որոնցից մեկի վրա փոփոխված ձևով պատմվել է նախկին առասպելը:

1 Ա. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, I, էջ 43: Հմմտ. երկեր, Ա, էջ 158:

1 Ա. Արեղյան, Հայ մոզ. առասպելներ, էջ 474:

ելով ալզ աչն ժամանակի, երբ վիզասանները գիտակցութեան մեջ սկսել են շփոթվել մարերն ու վիշապները, պատմականն ու առասպելականը: Մարդարանական ազգագրութեան լույսի տակ Արեղյանը հանգում է մի շատ կարեւոր հետազոտման. օճր կամ վիշապը նա գիտում է Մասիսի ստորամասերում բնակվող մարերի տոսեմ, այսինքն վիշապականց առասպելները մեջ բացահայտում նախնական սոսնձային հավատալիքների ակնհայտ զերապրուկներ: Դրանք, ըստ Արեղյանի, հարատեւել են երկար ժամանակ, նույնիսկ ավելա՛վ վայրում բնակվող մարերի հայացումից հետո, որ հանդես է եկել ցարդ երանց տրվող զսկ (իմա՝ զոհակ, որ նույնն է, ինչ վիշապ զանգը) կոչման մեջ:

Այդպիսով Տիգրանի վեպը, Արեղյանի տեսութեամբ՝ Տիգրան Մեծի շուրջ հյուսված պատմական երգերի և ամպորպալին առասպելի մի յուրակերպ համակցումն է, որ պատմականի ու առասպելականի փոխազդեմ համեմատման հետեանքով ստացվել է մի պատմա-առասպելական ամփոփ վեպ, որն ունի իր ընդհանուր իրազրութունը, որից ծագում է գործողությունը (համազույց, կույմիտեացիս և լուծում), մի բուն ժողովրդական լեզարվիտական պատում, որ անկախ իր կրած զրական մշակումից, ունի ժողովրդական ստեղծագործութեան բոլոր հատկանիշները:

2. «Վիպասանք»-ի երկրորդ գլխավոր միավորը Արտաշեսի վեպն է, որ ըստ Արեղյանի, Տիգրանի վեպին է աղերսվում մարերի նկատմամբ հայերի ունեցած հարաբերութեամբ: «Արտաշեսի վեպ» անվանումը, որ գնում է Արեղյանը «Վիպասանք»-ի երկրորդ մասի վրա, և թելադրված էր վեպում Արտաշեսի խաղաքած կենարտեական զերով, իր հերթին բաղադրվում է վիպական մի բանի ճշտընրի՛:

3. Արտաշեսի վեպի ճշտընրից մեկը՝ Սաճատուկի և Երվանդի

1 Ի ի զեզ «Արտաշեսի վեպը» վերագրերը, որ սակա է «Շաշ վիպական բանահյուսութեան» մեջ (տե՛ս Մ. Արեղյան, երկեր, Ա, էջ 115), «Շաշոյ հին զրակ. պատմութեան տառերի հատորում բացակայում է: Այն փոխաբերված է «Սաճատուկի, Երվանդ, Արտաշես և Արտավազդ» վերնագրեր ունեցող գլխով (էջ 50): Ապա, ինչպիսի «Շաշ ժողովրդական առասպելներ»-ում, աչգիտ էլ «Շաշ վիպական բանահյուսութեան» մեջ Արեղյանը հավատարիմ իր սուսմասիրութեան մեթոդը, «Վիպասանք»-ը բաժանում է երկու բաղադրիչների՝ պատմա-կենցաղային ու առասպելական սյուժեների, մատիվների ու կերպարների և բնում ըստ այդմ: Մեծընդ «Շաշոյ» հին գրականութեան պատմութեան տառերի գրքում, եկեղով գրականութեան պատմութեան նպատակներից, առասպելականն ու պատմականը բնում է միասնաբար՝ միևնույն վեպի կամ վիպական ճշտընր սահմաններում:

վեպն է, որ Արեղյանը գիտում է իբրև Տիգրանի վեպի շարունակություն: Այստեղ սույնպես առասպելները ու պատմական գրությունները համակցում է կատարվել: Առասպելական է մանուկ Սաճատուկի անվերը առավաճներից ուղարկված ինչ-որ սպիտակ կենդանուց. առասպել է նաև Երվանդի ու Երվանդի կենդանական (ցլային) ծագումը, որի զուգահեռներն առկա են հին ժողովրդների բանահյուսութեան մեջ և տեսեմիտական-սոսնձային հավատալիքների զերապրուկներն են:

Վիպական և մասամբ պատմական է Երվանդի ու Սաճատուկի որդիների թշնամությունը, Սաճատուկի տոհմի կոտորածը, Սանատուկի որդի՝ Արտաշեսի կոտորածի խուսափելն ու պարտից մոտ ապաստանելը և ի վերջո Արտաշեսի օտար զորքով երկիր մտնելը, Երվանդի սպանությունն ու թաղավորելը:

Այս ճյուղը նույնպես, ըստ Արեղյանի, «մի ամբողջական շրեղ վեպ է»՝ «բազմաթիվ վիպական մանրամասնություններով և միջադեպերով, որոնք միմյանց հետ միանում են մի ընդհանուր սյուժե-տով»:

4. Մի առանձին վիպական ճյուղ է Արեղյանն համարում Արտաշեսի ամուսնությունն ու զրա հետ աղերսվող կենցաղային սովորությունները: Դրանք են. կոխի ալանների հետ և խնամախոսություն, գլխագինի պահանջ և Սաթենիկի առևանգումը, հարսանեկան ձեսեր և սովորություններ, բուրն էլ զրեթն ու շրջանի կենցաղին առանձնահատուկ:

5. Շաշորդ ճյուղը, իբրև մի առանձին վիպական ամբողջություն, ըստ Արեղյանի, Արտաշեսի որդիների՝ Սմբատի և միմյանց դեմ զրդովելու պատումն է, ֆեոդալական ժամանակներին հատուկ ներքին պայքարով ու հակասություններով:

6. Մյուսը՝ վիշապագուներից պատերազմն է՝ ամբողջապես վիպական-առասպելական գծերով, ուր երևան են գալիս Սև լեռան (Մասիս) վրա բնակվող վիշապների և մարդկանց հետ նրանց ունեցած հարաբերությունների հետ իրա հավատալիքներն ու պատկերացումները: Այս ճյուղը, որի սկիզբն առկա է աակավին Տիգրանի վեպում, բնորոշվում է վիշապազուն Արգավանի և իր զարմերի, Արտաշեսի, Սաթենիկի ու նրա որդիների հետ ունեցած հարաբերություններով:

7. «Վիպասանք»-ի վերջին ճյուղը՝ Արտաշեսի մահն ու անձեքն է Արտավազդին, վիպական-առասպելական մի պատում, որն Արեղյանն իրավամբ համեմատում է «Սանան ձեռք»-ի վերջաբանի



հետ (Մհերի՝ հոր անեծքով բարալուսմ փակվելը) և հայոց առաջին ականգական վեպի ու նոր վեպի՝ «Սասնա ծռեր»-ի ավարտը համարում է գրեթե նույնակերպ: Արտավազի առասպելի մեջ Աբեղյանը բացահայտում է հերոսի բնավորության երկվությունը, հերոս, որն ըստ եղնիկի վկայության ու «Վիպասանք»-ի սկզբնական մտափոխների, նախապես բարի թագավորացն է, որ մարտնչում է վիշապների դեմ: Ըստ եղնիկի, Արտավազին բարալուսմ բանտոցները շար վիշապներն են կամ նրանց գործակիցները: Աբեղյանը պատմականորեն վիպական Արտավազին համարում է Տիգրան Մեծի որդի՝ Արտավազը, որին գերում է մարերի գաշնակից Անտոնիսը և շղթայակապ տանում եղիպոսու:

Կապված Արտավազի այդ պատմական դրույցը այնուհետև շփոթվել է Հրուզենի ձևով շղթայված Ածղահակի առասպելի հետ, որ հենց իրանցիներից փոխադրված է եղել հրաբխային Մասիս լեռան վրա, և Ածղահակ անունն փոխարեն անցել է Արտավազը:

«Զբույցի այս դարգացման հետևանքով՝ Մասիսի մեջ կապված վիշապ Ածղահակի, այդ շար ողբ առասպելն աղոզել է Արտավազի պատմական գրույցի վրա», որով նախկին բարի հերոսը, իր բարի դերի հետ մեկտեղ ձևոր է բերում նախանձու ու շար բնավորություն. նրան, ըստ «Վիպասանք»-ի, կապում են քաջքերը (նախապես բարի ոգիներ): Իսկ վիպասանները հերոսի բնավորության երկվությունը աշխատել են հիմնավորել ժողովրդական հավատալիքներով, թե վիշապաղուճները գողացել են մանուկ Արտավազին և նրա փոխարեն դե են գրել:

Այդպես՝ վերականգնելով հայոց առաջին հին վեպի թեմատիկ-գեղարվեստական մասերն ու միասնությունը, Աբեղյանը այդ միությունը բացահայտում է նաև գաղափարական տեսանկյունից: Նա «Վիպասանք»-ը համարում է դաբաշբանի՝ վաղ ֆեոդալիզմի իշխող գաղափարախոսության արտահայտություն: Հայ միասնական պետականության ստեղծումը առաջ էր բերում նաև պետական ու սոցիալական շահերի համապատասխան մի գաղափարախոսություն, որն արտահայտություն է գտնում ազգային գրից ու դրականությունից զուրկ ժամանակի գեղարվեստական, որոշակի՝ վիպական-բանահյուսական երկերում: «Վիպասանք»-ը, որի անջատ ու ցրված երգերն ու պատմանները, ըստ Աբեղյանի, միասնական պետականության հիմնադրման հետևանքով միավորվում են ու ձգտում սյուժետային միասնության, գաղափարական տեսանկյունից ևս արձագանքում են ժամանակի հասարակական շահերն ու մտայնությունը:

Հայաստանի պետական միասնությունն ու քաղաքական հզորությունը իր գաղափարական է հասնում Տիգրան Մեծի ժամանակ, երբ ստեղծվում են պատմական այդ նշանավոր անձնավորության շուրջ դրույցներ ու երգեր: Դրանց մեջ ամենաիրգրական ու հերոսական դերով փառաբանվում է մեծ աշխարհակալը, նրա անձն ու գործը, որ ըստ այդմ գտնում է կասարելության սրիպար: «Վիպասանք»-ի մեացած էջուղերի հերոսները ևս թագավորներ ու դորավարներ են, որոնք զենհատվում են և կերպավորվում իրենց արտահայտած ֆեոդալական ձգտումների ու շահերի համապատասխան: Երվանդի վեպում, օրինակ, հերոսը թեպետ քաջ է, օժտված բնավորության բազմակողմանի ու հարուստ դերով, սակայն բանի որ նա արքայական դահի օրինական ժառանգը չէ, ուստի և դատապարտվում է կործանման՝ գահի բուն ժառանգորդ արքայազն Արտաշեսի ձեռքով:

Այսինքն վեպն իր մեջ անդրադարձնում է իշխող արքայական հարստության (դինաստիա) շահերը, որոնց պարտավոր են հավատարիք մնալ իշխաններն ու նախարարները: Բացի ֆեոդալական այս գաղափարախոսությունից, «Վիպասանք»-ի մեջ արքայական ու ազնվական ժագում ունեցող հերոսներից ժողովրդական երգիչների կողմից ենթարկվել են գաղափարականացման (Արտաշես, Տիգրան, Սանատրուկ և այլն), զառնալով հանրության շահերի կրողներ և արտահայտիչներ:

Այս է մտավորապես հայոց առաջին ավանդական վեպի այն տեսությունը, որ գարգացրել էր Աբեղյանը տակավին 1899 թ. «Հայ ժողովրդական առասպելներ»-ում, և որն հետագայում առավել հրատակեց ու համակարգեց, «Վիպասանք»-ը դարձնելով հայ վիպական բանահյուսության գարգացման իր տեսության երկրորդ վիպական շրջանը:

3. «ՊԵՐՄԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԵ ԺՈՂՈՎՊՈՒԿԱՆ ՎԵՊԸ

Հայ վիպական բանահյուսության գարգացման երրորդ շրջանն, Աբեղյանի տեսությամբ, «Պարսից պատերազմ» ժողովրդական մեծ վեպն է:

Տակավին 1906 թ. «Հայ ժողովրդական վեպը» մենագրական հետազոտության մեջ «Սասնա ծռեր»-ի վիպական կերպարանափոխության պատմական ընթացքը բացահայտում այն տեսակետը, Աբեղյանը առաջ է քաշում և պարզացնում այն տեսակետը, թե Ազարանգեղոսի և Բուզանդի Պատմությունների վիպական հատվածները մի ամբողջական վեպ են կազմում: Նա բանասեր-բանագետ





ների կամ մտախիմների տարբերությունը<sup>1</sup>։ Քացի սյուսնների ու մոտիվների ծագման ու զարգացման հիշյալ սեղմ տեսությունից, Արեղյանը ուրվագծում է նաև նրանց հետագա սոսկ բանահյուսական բնաշրջությունը։ «Վիպական երեքեր ու գրույցներն իրենց զարգացման ընթացքում հետզհետե հետաքննվող իրենց հիմքի պատմական իրակություններից՝ ստանում են ընդհանուր բնավորություն և նմանում են իրար։ Այդպիսով կաղձվում են վիպական սյուսնիների որոշ ախտի, սքաններ, որոնց է հետևում են վիպասաններն իրենց ստեղծագործության ժամանակ։ Ուստի միևնույն սքաններով նման սյուսնիներ պատմվում են տարբեր վիպական անձերի վրա»<sup>2</sup>։

«Պարսից պատերազմ»-ի մեջ սյուսնների և մոտիվների դասավորման կամ զարգացման սկզբունքը Արեղյանն համարում է ղեկավարի ժամանակական հաջորդությունը, մեծ մասամբ պատճառական որոշակի կապակցությունը։ «Երբ պահված է եղելությունների բնական պատճառ-ժամանակական հաջորդությունը,— առում է Արեղյանը,— այն ժամանակ առաջ են գալիս ամբողջի մեջ նորաձոր կացություններ, սովորաբար զործող անձերի հակադրություններով։ Դրանով զործողության պատմվածքի մեջ շարժում է առաջ գալիս, որ և դրավում է ունկեղիքների ուշադրությունը։ Քացի այդ, նա նշում է նա մեկ առանձնահատկություն. դա, այսպես կոչված, վիպական լարվածությունն է, որ առաջ է գալիս հիմնական գործողություն մեջ նորանոր տարբեր հանգամանքների ստեղծումով, որոնց շնորհիվ զործողությունը նոր ընթացք է ստանում։ Գործողությունների զարգացման նման երևույթները Արեղյանը ոչ թե վիպական-զեղարվեստական հնարաններ է համարում, այլ իրական դեպքերի, եղելությունների անզրաբարձում, երբ կյանքի եղելությունների զարգացումը նույնանում է վիպական դեպքերի զարգացման հետ, այսինքն զեպքերի ամեն մի հաջորդ փուլը գտնում է նախորդի հետևանքը։ Ե՛վ այս է հենց, որ վեպի պատմվածքի մեջ բնականություն և հետաքրքրություն է ձևեցնում»<sup>3</sup>— եզրակացնում է նա։

«Պարսից պատերազմ»-ի երկրորդ ձևական հատկանիշը, վեպի զեղարվեստական ամբողջության կամ միություն հարցն է։ Քննելով այդ խնդիրը, Արեղյանը եզրակացնում է նախ, որ հայոց երկրորդ

հին վեպը բազկացած է նույն ցիկլիկ պատկանող փոքրիկ վեպերից, կամ առանձին պատմաներից, որոնց կապակցությունը կատարված է շատ նախնական ու պարզ ձևով։ Հետաքրքար, Ե՛վ ընդհանուր գործողության կապ տեսնել «Պարսից պատերազմ»-ի բոլոր տարբեր պատմաների միջև՝ իբրև միություն կենտրոն... կարելի չէ՞։ Այսուհանդերձ նա հավաստում է «Պարսից պատերազմ»-ի վիպական ամբողջությունը, թեպես ոչ զեղարվեստական առումով։ Ինչպես Ծճահանամե-ի մեջ տարբեր պատմաների միասնություն կենտրոնն է դարձել Իրանի և Քուրանի միջև մղվող դարավոր կռիվը, այնպես էլ հայոց երկրորդ ավանդական վեպի միությունը հայերի և պարսիկների պատերազմն է, որ իր շուրջն է համախմբել վեպի տարբեր պատմաները։ Արեղյանը ցույց է տալիս այս, թե ինչպես վեպի առաջին ճյուղի սկզբից հենց դրվում է այն ընդհանուր գրույթը, թեմասն, որից «իրև հիմնական պատճառից ծագում է գործողությունը, որով է ամբողջ վեպը միական երկ է դառնում»։ Դա հայոց Արշակունի և պարսից Սասանյան արքայական ճարտարությունների համաձայնությունն է, որ նախապես տոհմային շահերի բախում լինելուց, պատերազմական գործողություններ ծավալվելուց հետո, հետզհետե վերածվում է Շախատանի անկախության համար մղվող կենսո ու մահու մի դարավոր պատերազմի։ Վեպի կենտրոնական գազափարը՝ Երկրի պաշտպանությունն է ի դեմս Արշակունի ընկի վազափարական տոհմի, և այդ ընդհանուր գրությունը «անցնում է ամբողջ վեպի միջով, որի մեջ և կատարվում են սերունդների հաջորդությամբ բազմաթիվ իրողությունները։ Դրանով և միանում են վեպի առանձին մասերը»։ Այսուհի դարձյալ, Արեղյանը վեպի այդ առանձնահատկությունը բացատրում է իրական պատմական կյանքի հանգամանքներով։ «Դա նույն է և իրականության, իրական պատմական կյանքի էական խնդիրը. վեպն օրյեկտիվ իրականության ցուցանում է։ Այս ընդհանուր գրությունը, ընդհանուր բաժնի ու խնդիրը, միևնույն ժողովուրդների, պարսից և հայոց դարավոր ձրությունների իրար վերաբերմամբ, դա է վեպի միության գլխավոր կաղձը»<sup>4</sup>։

Այս տեսակետից Արեղյանն իրավացիորեն, միասնություն իմաստով, «Պարսից պատերազմ»-ն ավելի բարձր է դասում, քան «Մասնա մահը»-ը, որի տարբեր ճյուղերի միջև միասնություն կապն արտահայտվում է միայն հոր և որդու հաջորդությամբ<sup>5</sup>։ Տարբեր ճյուղերի միջև սերնդակցական այդ կապը անկա է նաև «Պարսից

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, 1, էջ 237: Հմմտ.՝ երկեր, Ա, էջ 280:

2 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, 1, էջ 237:

3 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, 1, 235: Հմմտ.՝ երկեր, Ա, էջ 282:

4 «Աղագրական հանդես», XVI դիրք, էջ 78:

պատերազմ»-ում, Ուտի Արեղյանը «Ստանա ծներ»-ի կենդանի օրինակով բացահայտում է հայոց երկրորդ հին վեպի ընդհանուր հատկությունը: Մամ-Կոնից մինչև Մանվել պատմվածքները կամ ճշուզերը նույնպես մեկ վեպ են կազմել և առավել հեշտաթյամբ, բանի որ սերունդների հաջորդությունից բացի, կա նաև սկզբից մինչև վերջը իշխող մի ընդհանուր գրություն, մի հիմնական գաղափար, մի ընդհանուր թեմա, որով հորինվել է առանձին դիպվածները մի շղթա, որի օղակները թեպետ և մեկը մյուսից անկախ, բայց և իրար հետ կապված են եղել:

Հին վեպի տարբեր սերունդների վերաբերյալ պատմաճյուր մեկ ամբողջական վեպ համարելով հանդերձ, Արեղյանը յուրաքանչյուր սերնդի պատում, ինչպես և «Ստանա ծներ»-ի յուրաքանչյուր ճյուղի իր հերթին համարում է անկախ վեպ, «որն ունեցել է իր ուրույն ընդհանուր գրությունը, իր թեման, որից ծագում և լուծում է ստանում իր գործողությունը, որ և շատ անգամ ազդում է նաև հաջորդ պատումի վրա»: Եվ նման դեպքերում տարբեր, անկախ պատումների համեմատաբար ավելի սերտ են միմյանց հետ կապվում: «Ճշրտ այս վիճակն ունի նաև «Ստանա ծներ»-ի ամբողջությունը իր բոլոր մասերով ու գրույցներով»:

Արեղյանը կարևոր տեղ է տալիս նաև վեպի գեղարվեստական մի շարք հատկանիշների՝ շարադրության կամ բացադրության եղանակի, ոճի և տաղաչափության բացահայտմանը:

Հայոց երկրորդ հին վեպում, ինչպես ավանդական վեպերում առհասարակ, նյութի շարադրման կտրերը եղանակներից են նկարագրին ու տրամախոտությունը, հատկապես վերջինը, որ իբրև կենդանի խոսք, լայն գործածություն ունի վեպում: Վիպական հերոսների ներքին հատկությունների նկարագրության մեջ ևս (գործող անձանց որակումը մակդիրներով, նրանց բաժանումը երկու խմբի, դրական՝ հայր և բացասական՝ պորսկներ) Արեղյանը բացահայտում է ավանդական վեպերին բնորոշ առանձնահատկություններ: Բձի և տաղաչափության հարցերը քննելիս, նա որոշ վերադասություններ է խնդրին մտնե՞նում՝ վեպի անմիջական բնագրի բացակայության և պատմիչների երկրանում նրա գրավոր ավանդման հանդամանքների պատճառով: Այդպեսուհիք, Արեղյանը կարողանում է այդ գրական միջնորդությունների ետևում և շարքում ցույց տալ վեպի լեզվի որոշակի տարբերությունը հին գրական հայերենից՝ դարարից, նրա պարզությունն ու բնականու-

թյունը, ժողովրդական սամկական ոճն ու ուղին, մանրամասնությունների պարզ ու ժողովրդական նկարագրություններ, կրկնություններ ու չափազանցություններ, մակդիրների և արտահայտությունների հետադարձություններ: Եվ այդ բացահայտում է հին վեպի առանձին հատվածների շարժած բնույթը, որ թեպետ Բուզանդի և Ազաթյանըղոսի մոտ արձակ ձևով է շարադրված, սակայն «շտափածությունը պարզ երևում է նրանց շատ տղերի մեջ»: Արեղյանը «Պարսից պատերազմ»-ի շափը նույն արձակ ոտանավորն է համարում, ինչ անկախ է ամերբազմաթիվ հոգևոր երգերի և վիպասանների մեջ, այլև «Ստանա ծներ»-ի ու վիպական երգերի: Այդ հիմունքով էլ նա տողատում է Բուզանդի և Ազաթյանըղոսի ավանդած «Պարսից պատերազմ» վեպի շատ հատվածներ:

Հայոց երկրորդ հին վեպի ձևական գեղարվեստական վերահիշյալ բոլոր հատկանիշների վերահաստատում և հետազոտումը Արեղյանը մեկ անգամ ևս հարակնորեն հիմնավորում է և բացահայտում «Պարսից պատերազմ»-ի ամբողջական վիպական նկարագրի: Նրա ժողովրդական-բանահյուսական ուղին ու բնույթը: Բայց պատմական ու զոդափարարական ի՛նչ մակարդակի վրա էր պահպանվել «Պարսից պատերազմ» ժողովրդական վեպը: Այս հարցը Արեղյանը դարձնում է իր հետազոտության բուն առանցքը և հանդում կարևոր հետախոյուններին:

Հայ բանահյուսության զարգացման վիպական այս երրորդ շրջանը համընկնում է Ֆեոդալիզմի ծաղկուն դարաշրջանին: Այն, ի տարբերություն նախորդ վիպական շրջանի, գրեթե զերծ է առասպելներից և ամբողջությամբ կապված է պատմական իրողությունների հետ, դառնալով դրանց բանաստեղծական վերարտադրությունը:

Հայոց երկրորդ ավանդական վեպը դիտելով իբրև զարգացած ախտականության շրջանի պատմական բանաստեղծություն, Արեղյանը հավատարիմ իր տեսությանը, նախ քննարկում է «Պարսից պատերազմ»-ի պատմական դարաշրջանը և պատմականությունը, այն, թե ե՛րբ և ի՛նչ բնույթի պատմական իրողություններ են արտացոլվել ժամանակի այդ կարևոր գեղարվեստական-բանահյուսական հուշարձանում:

Հայոց երկրորդ հին վեպը, դիտականի կարծիքով, ծագել է ու զարգացել Հայաստանի III—V դարերի բաղաբական ու սոցիալական պայմաններում, անդրադարձելով հիշյալ դարերի պատմական իրականությունը: Ընդ որում պատմական են գործող անձերը

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, 1, էջ 241:



մասամբ, որոշ եզրույթներն էր ընդհանրապես հասարակական կյանքի ձևը: Եւ ընդհանուր դժբերով, հստակորեն բնութագրում է զարարչընթացի սոցիալ-տնտեսական ու բաղաբաղական կյանքի պատկերը. երկրի ֆեոդալական մասնատվածություն, խոշոր հողատերություն և բնատնտեսություն՝ իրրև իշխող տնտեսական ձև. նախարար-ազնվականությունը ընդհանուր ենթակայություն իշխող Արշակունի քաղաքական հարստությանը: Արտարին քաղաքական նություն բնագավառում՝ սկսած երրորդ դարի կեսերից, ուժեղ ուղղմական ընդհարումներ՝ հարևան Մասանյան Պարսկաստանի և Հռոմեական մեծ կայսրության հետ: Ենթերին քաղաքական ու սոցիալական կյանքի բնագավառում՝ բրիտանոնիկյան պաշտոնական կրոնի հռչակում և երկրի սոցիալական կազմի մեջ տեղի ունեցող փոփոխություններ. եկեղեցական դասի և հողատիրության առաջացում. միջնադարյան ավաստիանություն երեք հիմնական դասերի՝ ազնվականության, եկեղեցականության և շինականության վերջնական ձևավորում. ներքին պայքար ու կոփվելի կենտրոնական իշխանության և ազատամբ նախարարների միջև, ազնվական տարրեր տեղի քաղաքական տարրեր խմբավորումների (հունասերներ և պարսկասերներ) միջև: Եվ այդ բոլորի ավելացումը հյուսիսային ցեղերի պարբերական ասպատակությունները երկրում և զրանց պատճառած ցնցումներն ու վայրիվերումները:

Ահա պատմական այն իրականությունը, որ առաջ է բերել տարրեր ավանդություններ, գրույցներ ու երգեր, որոնք համարվելով մեկ կենտրոնական խնդրի շուրջ, այն է՝ պայքար ընդդեմ պարսիկների՝ հանուն քաղաքական անկախության, դառնում են ավանդական վեպի պատմաների մի ցիկլ: Հիշալ պատմական իրականությունն, որ անզրպանքով է վեպում, իր էական գծերով տիպիկ ֆեոդալական է և իրական, անկախ հերոսների սակզմական արարքների և վիտայական ընդհանուր պատումների ու մոտիվների զտությունից: Դրանով իսկ երկրորդ հին վեպը տարբերվում է առաջինից: Եթե «Վիրապանք»-ում մեծ տեղ էր հատկացվում դերբեականին ու հրաշալիքին, վիշապների հին առասպելին, ապա «Պարսից պատերազմ»-ում զրանք գրեթե բացակայում են: Եվ այդ հանդամանքն Արեղյանը բացատրում է բրիտանոնյա պատմիչ Բուգանդի հատուկ միջամտությանը, որը «կատարելապես արհամարում է հիմնատեսական առասպելականը» և «եթե եղել են հրաշյուր պատմվածքներ, նա զրանք չի ստել իր պատմության մեջ: Բայց, ազդուամենայնիվ, Արեղյանը հիշալ երևույթի գլխավոր

պատճառը տեսնում է առարկայական իրադրությունների, բան անձնական միտումների մեջ: Եվ նա բացատրում է այդ այսպես. «Բայց որ գլխավորն է՝ այս պատմական վեպի երգերն ու զրույցներն իրենց զրվելու ժամանակ՝ երկար դարեր շեն ապրած եղել այն զեպերից ու անձերից հետո, որոնց վրա հորինված են զրանք: ...Վեպի այդ մասերը պակաս ժամանակ ապրած լինելով, պակաս էլ ենթարկված են ավանդական վեպի համար սովորական փոփոխությունների, աճումների և հարակցությունների և, այսպես ասած, առասպելականացմանը»<sup>1</sup>:

Վեպի պատմականը հավաստելուց և ընդհանուր բովանդակությունը վերականգնելուց հետո, Արեղյանն անցնում է դրա վերլուծությանը, այսինքն այն խնդրին, թե պատմական ինչպիսի՞ իրականություն, միջավայրի և դասակարգային ի՞նչ շահագրգռությունների ու զաղափարախոսության անզրպատկերում է «Պարսից պատերազմ»-ը:

Վեպը իր ամբողջության մեջ դիտելով իրեն ֆեոդալական Հասարակական ներքին կյանքի ու հարաբերությունների բանաստեղծական անզրադարձում, նա «Պարսից պատերազմ»-ի հիմնական թեմատիկան համարում է ռազմական ավանդականության կյանքն ու կենցաղը իր էական գծերով: Այնտեղ, ֆեոդալական հասարակության մյուս դասերից սակավազեպ են հանդես գալիս եկեղեցականները, իսկ երրորդ զասը՝ աշխատավոր ռազմիկը իր անտեսական-քաղաքական ու իրավական անազատ պայմանների պատճառով, ինչպես միշտ, մնացել է անուշազիր: Վեպում թեպետ բացակայում է գաղափարազային պայքարը, սակայն Արեղյանը Արշակավանի կառուցման և ավերման զրվադի մեջ նման մի պայքարի արձագանքն է տեսնում, սոցիալական մեկ երևույթ, որի մեջ անզրադարձ է զորվածների, նեղվածների, տառապյալների մասսայական բորոտացումը ճնշողների դեմ, երբ «Պարսից պատերազմ»-ի կոփմեջ մեջ ընդգծել նախարարների՝ հենվել է ճնշվածների վրա»<sup>2</sup>:

Արեղյանը վեպի կենտրոնական զաղափարն է համարում «երկրի պեղծպանությունն ի զեմս բնիկ քաղաքապետական տոհմի», որի մեջ արտահայտվել է վեպի սոցիալական իմաստը: Այդ զաղափարը, ըստ նրա, մարմնավորվել է իզգալական հերոսների օժեղ գծա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, I, էջ 175: Հմմտ.՝ Երկեր, II, էջ 192:

2 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, I, էջ 193: Հմմտ.՝ Երկեր, II, էջ 228:

գրված կերպարներում, որոնք նկարագրի մեջ աչքի է ընկնում սերն ու նվիրվածությունը իրենց տիրոջ պատվի ու շահի համար: Տիրապետության և տիրոջ պատվի նախանձախնդրության ցայտուն զրբաբերություններից են Շապուհի անտապակտի և Վասակի, Գրատամատի և Արշակի, սպանված թագավորի համար հայ զորքի վրիժառությունը պատերազմ վիպական դրվագները: Թագավորի անձի անձնանվանությունը և նրա անվանագրությունն ապահովելու գաղափարը, որ հատուկ է ուրիշ հերոսական վեպերի ևս, վիպական գեղարվեստական արտահայտություն է դուռի «Պարսից պատերազմ»-ի Մուշեղի և Պայի փոխարարություններում, Մուշեղի և Աղվանից Ունայր թագավորի, Մանվելի և Վարազդատի պատմությունում: Բայց այդ ամենով հանդերձ, հայոց երկրորդ հին վեպի կական ուղին Արեղյանն համարում է հերոսականությունը և այն դիտում դարձյալ սոցիալական տեսանկյունից, իրեն ֆեոդալական ժամանակների տիրոջ դասերի դասակարգային պահանջները հատուցող մի առաքինություն: Մարտնչել և մեռնել աշխարհի և բնիկ տերերի համար, ահա թե ինչ է մեր այս մեծ վեպի կենտրոնական գաղափարը: Աշխարհի և բնիկ տիրոջ համար մեռնելը տալիս է ռազմիկ հերոսների գաղափարականացմանը սոցիալական իմաստ, հարկավ, ավատական ժամանակի հասկացությունը: Գրանով Մամիկոնյան սպարապետները դառնում են վեպի գլխավոր հերոսները<sup>1</sup>: Արեղյանը, վեպի հերոսների մեծ մասին պատմական անձինք համարելով հանդերձ, նկատում է, որ նրանցից շատ բիշ բան է մնացել վեպում, որ նրանք ուժեղ շախմատ ենթարկվել են վիպական կերպավորման ու գաղափարականացման: Այդ հերոսները վեպի տոնցիտայական անձերն են և իրրե պաղպիսիներ, պատմական են: Նրանք իրականության իդեալական պատկերացումներն են և ստեղծված են 3—5-րդ դարերի սոցիալական պայմաններում, որոնք հերոսական բանաստեղծություն էին պահանջում պարսիկների դեմ պատերազմներից վերելու համար<sup>2</sup>: Այդպիսի մի իդեալական հերոս է Մուշեղ Մամիկոնյանը, «որ սպրում է իր տիրոջ և աշխարհի համար և չի թողնում անգամ մի կորու շախ գնաին Հայոց եզերից վտարել, այժինքն օտարացնել»: Եվ դա, ըստ Արեղյանի, «ֆեոդալական ժամանակի հայրենասիրությունն է, վիպական հերոսի ողևորության աղբյուրը: Այդ և վեպի գաղափարականացումն է ըստ բովանդակության»:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին դրակ. պատմություն, I, էջ 222.

<sup>2</sup> Անդ.

Վեպի հերոսների և բոլորազգակության գաղափարականացմանը նպաստում է նաև վիպական գործողությունների հատկապես պատերազմներում կովող զորքերի թվի և հայ զորավարների հաջիանակների վիպական շահագնացումը: Բոլոր կրիվներում հաղթում են հայերը, իսկ եթե մեկ-մեկ էլ պարտվում են, ապա պարտությունը արգարացվում է առարկայական հանգամանքներով կամ դավաճանություններով, ստանց կովող հերոսների որն է սխալով կամ թուլությունները, մասնավոր, որ այդ սակավ պարտություններն էլ ի վերջո պահվում են հայոց թագավորների և զորավարների հաղթանակով: Գրեթե բոլոր հայ հերոսներն անպարտ են, իսկ եթե ընկնում են նրանք, շքնկնում են միայն նենգության ու խարհության դո՛հ դառնալով» (Խոսրով Մեծ, Տիրան, Արշակ, Պայ, Մուշեղ):

Այլուտեղ էլ հենց Արեղյանը տեսնում է գաղափարականացման սոցիալական միտումը, երբ իրական-պատմական անձինք ու եղևություններ ենթարկվում են վիպական այնպիսի մշակման ու իդեալականացման, որ «տեսնվում վիպական իդեալական հերոսների կերպն չի դալիս պատմական անձինքը— թագավորներն և զորավարներն և նույնիսկ տնրություններն իրապես գոյություն ունեցած թուլությունը»:

Վեպը կազմելով հայոց արքայական ու սպարապետական տոհմերի հետ, Արեղյանը բացահայտում է նրա ծագման հասարակական-քաղաքական շարժառիթն ու նպատակը, որ այն, իրեն հերոսական բանաստեղծություն, ծագել է պարսիկների դեմ պատերազմող ռազմիկներին ոգևորելու համար. այնուհետև կրկին են իդեալական հերոսություն օրինակներ և զորքերին շնորհակալության համար, արդարացվել են պարտությունները: Վիպականների այդ միտումը թխղորդել ու քաջալերել է ռազմիկ ազնվականության վերնախավերից, հատկապես Արշակունիներից ու Մամիկոնյաններից, որոնք սիրենց նպատակների համար ստեղծել են տվել իրենց պատմությունը, իրենց գովարանական վեպը և շահագնացումներով, և միտումնավոր դո՛ւնավորումներով, և իդեալական մասացածին քաջազորություններով»:

Հիմնականում ճիշտ բացահայտելով «Պարսից պատերազմ»-ի գաղափարական բովանդակությունը, Արեղյանը, սակայն, 20—30-ական թվականներին ժողովրդական վեպերի մասին ընդհանրապես եղած սոցիալարանական մտայնության աղղեցությունն ասել, որը չափով նեղացնում է հայ ժողովրդի պարսից դեմ մղած դարավոր պայքարի շահանքությունները: Հայ ժողովրդի աղ-



գլխին ինքնության համար մղած հերոսական համազգային պայ-  
քարը մասամբ նեղացվել է և բացատրվել սոսկ թագավորի ու  
ազնվականության դասակարգային շահերով: Վկայում առկա հերո-  
սությունն ու անձնուրացությունը, հայրենի երկրին ու թագավորին  
հերոսների նվիրվածությունն ու համաարմատությունը, որ մարզկա-  
լին ընդհանուր բարոյական հատկանիշներ են և բոլոր հերոսավի-  
պերի գործող գրական անձանց կարևոր արժանիքներից, հաճախ  
դիտվում ու բացատրվում են սցիդալ-դասակարգային մեկնակիտից:

#### 4. ՎԵՐԻ ՏԵՂԱՆՆԱԿՈՒՄԸ ՏԱՐՈՒՄԸ

«Պարսից պատերազմ»-ի, իբրև անկախ ու ամբողջական ժո-  
ղովրդական վեպի հավաստումը, վերակազմումն ու հետազոտումը  
հայանագործություն էր հայ բանագիտության մեջ և վերջինի մտքի  
մի նոր նվաճում: Սակայն Արեղյանի սրբապաշտ միաբեր ձևեր բերա-  
ծով չի բավարարվում: Տակալին 1906 թ. իր «Հայ ժողովրդական  
վեպեր» ուսումնասիրության մեջ, հայ միջնադարյան պատմիչների  
երկերում նա նկատում է ու բացատրում «Պարսից պատերազմ»-ի  
հետագա դարերում ունեցած վիպական ճակատագիրը:

Նա ցույց է տալիս, որ «Պարսից պատերազմ»-ի շատ միջադե-  
պեր շարունակում են ապրել ու հարատևել երկրի այն կողմերում,  
որոնք շահագրգռված են եղել ավյալ զրույցներով: «Պարսից պա-  
տերազմ»-ի մնացորդ զրույցները Արեղյանը բաժանում է երկու տե-  
ղային ցիկլի՝ Սյունյաց և Տարոնու Առաջինն ընդգրկում է Սյունյաց  
Անդրկի և Քարիկի զրույցը, որ հարատևել է Սյունիքում և զրանցվել  
հետագա պատմիչների (Պետրոս Փերթոզ, Ստ. Օրբելյան, Մ. Կաղան-  
կատվացի) երկերում:

Մյուսը՝ Տարոնի ցիկլն ընդգրկում է Մուշեղի և Դեմետր ու Գի-  
սանն եղբայրների զրույցները և Հյուսիսային ազգերի դեմ Տրդատի  
մղած կռիվները, որոնք առաքելապետներով առկա են Աերեոսի և Հով-  
հան Մամիկոնյանի Պատմությունների մեջ:

Հիմնական ուշադրությունը դարձնելով «Մուշեղի վեպի» վրա,  
Արեղյանը մասնանշում է, թե ինչպես Բուզանդի ավանդած վեպը  
IV դարի նշանավոր գործիչ Մուշեղ Մամիկոնյանի վերաբերյալ,  
հույն հերոսի անունով փոխանցվում է հետագա դարերին և թե ինչ-  
պես դարերի պատմական կերպարանափոխությանը ենթարկվելով  
ու նորոգվելով, VII դարում ժողովրդից անցնում է Աերեսին, իսկ  
փոքր ավելի ուշ՝ Հովհան Մամիկոնյանին, իր մեջ ներառնելով արվ-

յալ ժամանակաշրջանի պատմական կյանքին բնորոշ նորոգ դեկր  
և հերոսներ: Բուզանդի մոտ առկա «Պարսից պատերազմ» համազ-  
գային վեպը նոր ժամանակներում արդեն տեղայնանում է, վիպա-  
կան գործողությունը նեղանում է և Պարսից պատերազմը դառնում  
է Տարոնի պատերազմ: Հերոսների անունները մասամբ պահպան-  
վում են, մասամբ էլ փոփոխվում: Իսկ Դեմետր և Գիսանն եղբայր-  
ների զրույցը, Արեղյանը համարում է հին վեպի Մամիկոնյանց  
նախնիների՝ Մամ-Կոնի զրույցի մի «մթնացած արձագանք հետին  
դարերի», կապված հին հայկական աստվածությունների անվան հետ:  
«Մուշեղի վեպի» օրինակով, որ «Պարսից պատերազմ»-ի կարևոր  
մասերից մեկն է կազմում, Արեղյանը ցույց է տալիս, թե ինչպես  
«հին վեպը կորցրել է ընդհանուր ազգային բնավորությունը և դար-  
ձել է տեղական զրույց Տարոնո, որի հետ է և Սասունը»: Հիշյալ  
վեպն Արեղյանն անվանում է «Տարոնի պատերազմ» և այն համա-  
րում հայ վիպական բանահյուսության զարգացման շուրջով շրջանը:  
Արեղյանը «Տարոնի պատերազմ» վեպը հատուկ ուսումնասի-  
րության առարկա է դարձնում իր «Հայ վիպական բանահյուսու-  
թյուն» աշխատության մեջ: Այստեղ նա բացահայտում է վերոհիշ-  
յալ զրույցների վիպական ընդհանրություններն ու զաղափարական  
բովանդակությունը, ապացուցելով, որ Սյունյաց Անդրկի զրույցը  
իր մեջ պահպանել է «Պարսից պատերազմ»-ի ընդհանուր գաղա-  
փարական ոգին, իբրև ավատական կենցաղի ու հոգեբանության մի  
բնորոշ արտահայտություն, երբ նախարարական տոհմերի «նախա-  
դահույթնան» խնդիրը և ֆեոդալական արժանապատվության բավա-  
րարումը դառնում է զրույցի գործողությունների զարգացման հիմ-  
նական ֆարսլան: Ապա, Դեմետր և Գիսանն եղբայրների զրույցը  
համարում է Մամիկի և Կոնակի վիպական պատումի մի հնագույն  
սարբերակ, որի մեջ պահպանված են զիջարանական առասպելի  
մնացորդներ՝ հայց ստորգետնյա Սանդրամունի աստվածության՝  
զիսավոր Դեմետրի պաշտամունքի վերաբերյալ: Հիշյալ աստվա-  
ծության մեջ, ըստ Արեղյանի՝ մակդիրն (զիսավոր = զիսանն) ու կո-  
նակը (Դեմետր) անջատվել են և դարձել երկու առանձին անձնա-  
վորություններ, որոնց հետագայում փոխանակել են Մամիկոնյան  
նախնիների անունները: «Երկու տարբեր առասպելներ շփոթվել են  
միմյանց հետ, և Գիսանեայ—Դեմետրի անունով պատմվել է Մամ-  
Կոնի զրույցը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին դրակ. պատմություն, 1, էջ 407: Հմմտ.՝ Երկեր, Ա,  
էջ 300.

Արեղյանը իր բանասիրական քննության կենտրոնական խնդիրը, ինչպես «Հայ ժողովրդական վեպ»-ում, այստեղ ևս դարձնում է Մուշեղի գրույցը, որ ընդարձակվել է Գալլ Վահանի և հաջորդների պատումներով: «Տարոնի պատերազմ»-ի վիպական գրվագները ուշադրով փաստերով Արեղյանն համարում է բուն ժողովրդական պատումներ, «որոնք զրկվել ամբողջապես ավանդական բանահյուսությունից են ծագում», թնայտ ենթարկվել են Հովհան Մամիկոնյանի որոշ խմբագրումներին ու հավելումներին: Ժողովրդական այդ պատումներն ու հերոսները, նրա կարծիքով, վիպական արձագանքն են V դարում պարսիկների դեմ Վահան Մամիկոնյանի և ապա փոքր ինչ ուշ՝ Վարդան Մամիկոնյանի վարած կռիվների: Պատմական Վահան ու Վարդան Մամիկոնյանների հիշողությունները պահպանվել են վիպական Գալլ Վահանի և հաջորդների (Սմբատ, Տիրան) կերպարներում:

«Տարոնի պատերազմ»-ի վիպական ընդհանուր ողին համարելով նույնը, ինչ «Պարսից պատերազմ»-ինը, Արեղյանը, սակայն, բացահայտում է նոր մոտիվներ, որոնք հատուկ են միմիայն «Տարոնի պատերազմ»-ին: Դրանցից առաջինը ռազմական խոսմամբ-կուլտյունն է, որ լայն տեղ է զբաղում վեպում, օգտագործվում է հայերի կողմից պարսիկների դեմ կռվելիս, երբ վերջիններս միշտ խարվում են և շարաշար պարտվում: Այդ՝ մեծ տեղ է զբաղում մարտերի նկարագրությունը և փոխադարձ ծաղրը, անարդանքն ու արհամարհանքը մարտերի ժամանակ:

Վեպում հայերը ոչ մի պարտություն չեն կրում, չկան անգամ դավաճաններ, որ կային «Պարսից պատերազմ»-ում, նրանք քաջ մարտիկներ են և համախմբված ու միմյանց պորովիր: Վեպում բացակայում է վիհանձնությունը թշնամու, անզամ նրանց կանանց ու երեխաների նկատմամբ, մի բան, որ կա և՛ «Պարսից պատերազմ»-ում, և՛ «Մասնա ծոեր»-ում: Բացի այդ, «Տարոնի պատերազմ»-ի մեջ կարևոր տեղ է ընդունում կրոնական տարրը, հատկապես տեղական սրբավայրի՝ ս. Կարապետի զերն ու նշանակությունը, սուրբ, որի հավատքի ու պատկերացումների մեջ երևան են զայն հեթանոսական Վահագնի հատկությունները:

Այդ բոլորով հանդերձ «Տարոնի պատերազմ»-ի էական գաղափարը երկրի (իմա՝ Տարոնի իր շրջակայքում) քաղաքական ու տնտեսական անկախության պահպանումն է, որի համար էլ պայքարում են ու կալվում վեպի հերոս Մամիկոնյանները: Այսինքն այն, ինչ ըն-

կած էր «Պարսից պատերազմ»-ի հիմքում, միայն հետագա դարերի պատմական ու քաղաքական ազդեցությունը ենթարկված:

Իսկ այդ նորը հանգում էր հետևյալին, երկրում այլևս չկա հայ լեռագույր, այլ գերիշխանը պարսից թագավորն է, Մուշեղը կոտում է պարսկական զահածառանդի համար, և նրա դեմ նեղություն է առնում պարսից թագավորը, իշխում են Մամիկոնյանները, որոնք ենթակա են տեղական մանր իշխանները: Մամիկոնյանների պարսրը պարսից դեմ ուղղված է ոչ թե Հայաստանի անկախության և Արշաունի թագավորների համար, այլ իրենց տեղական անկախությունը պահպանելու նպատակին: Պարսիկների հիմնական ձգտումն է «հպատակեցնել Մամիկոնյաններին և հարկի տակ դնել նրանց՝ քանդելով նրանց կրոնական սրբավայրը: Բայց հայերը միշտ հաղթող են դուրս գալիս, որով և փառաբանվում են Մամիկոնյան հերոսները: Եվ այդպես, զարգացման այդ նոր փուլի մեջ վեպի գրչության խնդիրն է գտնում «հարկախնամությունը և հարկի պատանուով ապաստանելն ու շենքարկվելը պարսիկներին», այսինքն այն, ինչ կազմում է մեր նոր վեպի՝ «Մասնա ծոեր»-ի գաղափարական նկարագրը:

Հայ վիպական բանահյուսության պատմական զարգացման վերջին՝ հիմնգերոց շրջանը Արեղյանը համարում է արդեն բանավոր ավանդված վիպական բանահյուսության կենդանի հուշարձանները՝ «Մասնա ծոեր» ժողովրդական վեպն ու վիպական երգերը:

Բ. ԿԵՆԴՐԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՆՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆԸ՝

#### 1. «ՄԱՍՆԱ ԾՈԵՐ»-Ի ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՐԵՍԱՎՈՐՈՒՄԸ

«Մասնա ծոեր»-ի տեսությունը սկզբնավորում է տակավին Մ. Արեղյանի անդրանիկ աշխատությանը՝ «Դավիթ և Մհեր»-ով (1889 թ.), որի առաջարկումով մասամբ ձայնակցելով Գ. Սրվաճառյանի նկատողություններին, հեղինակը, սակայն, զարգացնում է վեպի ընդարձակ ու բազմաճյուղ, ամբողջապես չափածո լինելու ուրույն տեսակետը, նա տողատեղով վեպը և այն հորինված համարելով 6—13 վանկանի աղստ ոտանավորով, վերջինս համեմատում է հայրենացու ավանդած հին վեպի չափածո հատվածների հետ, մասնաձևում է երկուսի էլ տաղաչափական նույնությունը: Առայժմ ստիպելով անհամար ասեմանելով հին ու նոր վեպերի սերտ հարաբե-



ուրջյունը, Արեղյանը միտածամանակ էական դիտողություններ է ա-  
նում վեպի պատմական մի բանի կողմերի մասին: Բայց Արեղյանի  
տեսությունը բուն իմաստով սկզբնավորվում է մարմնավորվում է  
նույն 1889-ին տպագրած «Աղգային վեպ» հետադոտությունում:

Եթե «Գավթի և Մհեր»-ով Արեղյանը Սրվանձախյանից հետո  
վաստակում էր հայ ժողովրդական վեպի հայտնագործման երկրոր-  
դություն պատվով, այսպե՛ս Աղգային վեպ»-ով՝ վեպի իսկական հե-  
տազոտողի նախապատիվը:

Հետևելով ժամանակի որս բանագիրտության, մասնավորապես  
Գրիմմ եղբայրներից որդեգրած Յ. Խ. Բուլտաի առասպելաբանա-  
կան տեսությանն ու Օրեստ Միլլերի որս ժողովրդական վեպի ու-  
սումնասիրության հիմնադրություններին, ինչպես նաև ստեղծագոր-  
ծաբար յուրացնելով իր հայ նախորդների վեպի մասին արտահայտ-  
ած կարծիքները, Արեղյանը ուսումնասիրության առարկա է դարձ-  
նում երկու հիմնական խնդիր. վեպի պատմական ատաղձը և դյու-  
ցակնական-դիցարանական հիմունքները, որոնք իրենց հերթին գա-  
լիս էին պարզաբանելու վեպի հնություն կամ ձևավորման մոտավոր  
ժամանակը:

Ընդունելով կյակեռ այն հիմնադրույթը, թե ժողովրդական վե-  
պը աշխարհագրական որոշակի միջավայրում կատարված պատմա-  
կան որոշակի իրադարձությունների զեղարվիստական արդյունք ու  
արտացոլում է, Արեղյանը վեպի առայժմ հայտնի՝ Սրվանձախյանի  
և իր գրառած պատումի կոնկրետ վերլուծումներով փորձում է  
հայտնաբերել վիպական գործողությունների աշխարհագրական մի-  
ջավայրն ու զրանց հիմք հանդիսացած պատմական իրողություն-  
ները:

Աշխարհագրական ինչպիսի՞ միջավայրը կարող է վիպական  
անցքերի տեղավայր հանդիսանալ. ա՛յն, պատասխանում է Արեղ-  
յանը, որի շրջանակներում վիպասանության արժանի սխրագործու-  
թյուններն ու հերոսական գործեր են կատարված եղել: Եթե շաչա-  
ստանում կա մի տեղ,— գրում է նա,— ուր ավերումներն այնքան  
մուտք չէ գործել, և ուր ազգային անկախության կտրիճ ողբն կեն-  
դան է մնացել թիչ ու շատ— մեր պատմության մեջ հիշվում են  
Սասունը և Տորոսի լեռները: ...Մասունցիք ունեցել են իրանց վե-  
պերի համար նյութ, որովհետև նրանք հերոսական կոմիներ են  
ավել թափարների և թուրքերի դեմ»:

1 «Մարտ», 1889, էջ 1596.

Ուրեմն՝ պատմական անցուղաբժի վնասական դերը վիպական  
բանաստեղծության ծագման խնդրում:

Արդ, որո՞նք են հայ ժողովրդական վեպի պատմական հիմնա-  
դիպքերը:

Արեղյանը հայ ժողովրդական վեպի մեջ տեսնում է պատմա-  
կան երկու կարգի իրողություններ, որոնք միմյանցից տարբերվում  
են թե՛ ժամանակագրական տեսակետից և թե՛ ալմադման բնույ-  
թով:

Սանասարի և եղբոր վիպական զբաղմունքների, այսինքն վեպի ա-  
ռաջին ճյուղի տեղական պատմական ատաղձը նա համարում է հայ  
նախարարական տների ծագման մասին եղած սոհմական ավան-  
դությունները, որոնք վկայված են իտրենացու և Լաստիվերոցու  
պատմագրական երկերով: Ըստ պատմիչների ավանդած հիշյալ  
գրույցների, որ Արեղյանի իրավացի հավաստումով ավերցված պի-  
տի լինի ժողովրդի և իրենց՝ ազնվական տների մեջ եղած ավանդու-  
թյուններից», վկայվում է, թե Աղձնյաց բոջոխներն ու սասունցիները  
իրենց ծագած են համարել Սանասարից, իսկ Արծրունիք՝ Աղբամե-  
լիցից, մի պարագա, որ զրեթն նույնանում էր հայ ժողովրդական  
վեպի տվյալներին:

Որդեղբելով նախորդ բանագետների այն տեսակետը, թե վե-  
պի առաջին ճյուղը՝ Սանասարի և եղբոր գրույցը ձևավորվել է Աստ-  
վածաշնչի համապատասխան գրույցի հիման վրա, այսինքն ունի  
զրեթական-զրբային ծագում, Արեղյանը, սակայն, նախորդներից մի  
բայլ առաջ է անցնում և իտրենացու հաղորդած քնած պատանուն  
թեկերով հովանի արած արժիլ առասպելական մոտիվի մեջ զրեթը-  
ված է գտնում Սանասարի և եղբոր մասին ավանդության մի բե-  
կոր Վրանով, ինչպես հետագայում հավաստում է ինքը՝ Արեղյա-  
նը, «հնումն, ամենաուշը իտրենացու ժամանակ, Սանասարի և իր  
եղբոր գրույցը զարձած է եղել բիրխական ավանդությունից անկախ  
մի նոր միջադեպի, հայ ժողովրդական մի նոր առասպելի կամ  
գրույցի նյութ»:

Այսինքն, բայց Արեղյանի, Սանասարի և Աղբամելի առավա-  
ծանչալին գրույցը ոչ միայն տեղայնացվել է շաչաստանում, այլև  
անկ ու զարգացել է տեղային վիպական նոր միջադեպերով ու  
տարբերով: Ուրեմն՝ վեպի առաջին ճյուղի ձևավորման վիպական

1 «Սասունցի Գավթի», Հայ ժողովրդական կղոս, Քրիտիզոգրֆիա, Երևան,  
1932, էր XXX.

ընթացքի մի նոր ուղադրով ահաւելուն, որ, ի տարրերութիւն նախորդներին, առաջ էր քաշում երկուստարդ հետազոտողը: Արժեքավոր էր նաև այն, որ Արեղյանը վեպի հնութիւնը որոշակիորեն ահանում էր տե՛՛մային ծագումները հավաստող առասպելական գրվագների մեջ<sup>1</sup>, քննելու նրա պատկերացրած տո՛՛մը դասակարգային միավոր էր ենթադրում (Աղձնայաց և Արժրունյաց իշխանական աներ), որ պատմական առաջին ուշ ժամանակների արդյունք էր: Մինչդեռ վեպն իրականում արացողում է սոցիալ-էթնիկական միավորները՝ Մասնո հայ ցեղախմբերի ծագումը:

Գաղթի էյուղում պատմական կյանքի երեւոյթներն առավել որոշակի էին գրանցւում, և Արեղյանը փորձում է վիպական գրվագները քննել և իմաստավորել պատմական կոնկրետ եղելութիւններով և վիպական պատումների ու հերոսների մեջ բացահայտել պատմական զեպքերի ու դեմքերի արձագանքները:

Այստեղ է, որ Արեղյանի ըննութիւնները դանում են առավել հասակ ու որոշարկիւած և գրվում կոնկրետ հիմքերի վրա:

Արդեգրելով վեպում միջնադարյան Հայաստանի պատմական կյանքի արտացոլման վերաբերյալ Սրվանձտյանի արտահայտած ընդհանուր ահապետը, Արեղյանն իր ըննութիւններով առավել ճշգրտում ու որոշակի է դարձնում այն և գտնում, որ վեպն անզրագարծել է Հայաստանի ուշ միջնադարյան պատմական իրողութիւնները, որոշակի՝ Բաղատունիների անկման հաջորդող XI—XII դարերի պատմական կյանքը:

«Բաղատունյաց անկումից հետո,— գրում է նա,— հարավային Հայաստանի հայ իշխանութիւններից նշանավոր է եղել Տորոսյան ընտնիքի մեջ Մասնու իշխանութիւնը: Մասնում նստում էին Մամիկոնյանների սերունդ համարվող իշխաններ, որոնք մյուսների պես կոթիվներ էին սալխ օտարների դեմ և, շնորհիվ կրկրի ամուր գիրքին ու իրանց անձնական քաջությանը, պահպանում էին անկախութիւնը»:

Ուրեմն, վեպի զխավոր գրվագներն ու, ինչպես կտեսնենք, հերոսներին ևս, Արեղյանը կապում է XI—XII դարերի Մասնու Մամիկոնյան իշխանների անվան ու ռազմա-քաղաքական գործունեութեան հետ: Այս հիմնադրույթը դարգացնելու միտումով Արեղյանը հիշյալ շրջանի ամենանշանավոր իշխաններից մեկի՝ Թոռնիկ Մա-



Մ. Արեղյան (1939)

<sup>1</sup> «Մարտ», 1889, էջ 1603:

<sup>2</sup> «Մարտ», 1889, էջ 1239:





Մ. Աբեղյանը՝ թուփով, Մ. Աբեղյանը, Մ. Աբեղյանը, Մ. Աբեղյանը, Մ. Աբեղյանը (1940)

միկոնյանի Սասնո իշխանությանն սպառնացող բռնակալ Փլշարտասի ղեմ վարած հաղթական կռիվներն ու Ամիր Քափրի կողմից Քոռնիկի նենգ սպանության հանցամասնները մանրամասնորեն զուգադրելով Գավթի ճյուղի վիպական գլխավոր գրվազներին, եզրակացնում է.

«Եթե շասներ թե Գավթը միևնույն Քոռնիկն է, միայն ժողովրդի բերանում դուշագնական հերոս դարձած, զոհն հավաստյալ կարևոր է ասել, թե Գավթի վեպը կազմվել է Քոռնիկ նման շատ հետազոտողի արտօրհանից, որ ունեցել է Սասունը միշին դարձում, և կամ այդ արտօրհանի ազդեցության տակ ժողովուրդը մագրել է ավելի հին վեպի մեջ յուր հոր ժամանակի հերոսական կռիվները, որ ավել է օտարների դեմ»<sup>1</sup> (ընդգծումն իմն է—Ս. Հ.)

Ընդգծված տողերում Աբեղյանը հետազոտական կոնկրետ դետազոտյամբ խտացնում է ժողովրդական վեպի ձևավորման ու զարգացման մասին ժամանակին արդեն տարածված այն ճիշտ տեսությունը, թե վիպական անձնավորություններն ու նրանց արարքները ձևավորվում են ավելադրյալ պատմա-աշխարհագրական միջավայրում գործած պատմական տարրեր զեմբերից ու նրանց արարքներից, նույնիսկ միմյանց հակասող անարբորիղմներով։ Միաժամանակ նա հավաստում է, որ մեր ժողովրդական վեպն, անկախ իր միջնադարյան խոր կնիքից, ավելի հին կարող է լինել։ Ուստի և Քոռնիկին նա համարում է «եթե ոչ իբրև պատմական հիմք Գավթի վեպին, զեթ իբրև այն անձնավորություններից մեկը, որոնց արարքների ազդեցության տակ փոփոխություն է կրել Գավթի վեպը, որ ավելի հին պետ է լինի»<sup>2</sup> (ընդգծումն իմն է—Ս. Հ.)

Վեպի ծագման հետազոտումը, որ սերտորեն աղերսվում է նրա պատմականությանը, Աբեղյանը դարձնում է հատուկ ջանքերի արարկա և միանգամայն իրավացիորեն հավաստում, թե «վեպի կրթը ճյուղերն ևս միատեսակ հնություն չեն վկայում, Արամիկի և Մհերի ճյուղերն ավելի հին են երևում, այնինչ Գավթի ճյուղը համեմատաբար ավելի նոր»։

Այս պնդումը, որը հետագայում անվերապահորեն որդեգրվեց հայագիտության կողմից, Աբեղյանը փորձում է հիմնավորել այն իրողություններով, որ վեպը առաջին, մասամբ և Մհերի ճյուղով շատ հին է և կապվում է սեպագրական ժամանակների արարտական տե-

<sup>1</sup> Մուրճա, 1889, էջ 1746:  
<sup>2</sup> Մուրճա, 1889, էջ 1740:

րությունների հետ և նույնիսկ յուր սկզբնամասում իրեն նյութ հիմք է ունեցել «այդ տնտեսականների իրար հետ, և ասորեստանացոց հետ ունեցած հարաբերությունները»։ Եվ առավել որոշակի պնդում է, թե «վեպի հնութունը հասնում է մինչև Ղ դարը Ք. առաջ, երբ որ այդում էր Անենբերիմը»<sup>1</sup>։ Այսինքն՝ որպես վեպի հնության չափանիշ, Աբեղյանը շեշտը դնում է վեպում պատմական եղելությունների և իրողությունների անզրադարձման փաստին, ուրիշ խոսքով՝ վեպի հասարակա-քաղաքական բովանդակությունը։

Այս դրույթով էլ նա որոշում է Գավթի ճյուղի հնութունը, զրույնելով, որ այնտեղ գերիշխողը բրիտանական աշխարհայացքն է և «բացի այդ... դուրս է դուրս ավելի միջնադարյան պատմական կյանքը.— այնպես որ կարելի է կարծել, որ Գավթի վեպը նոր ժամանակների ստեղծագործություն է և իրեն մի հատված մտել է Աբամելիքի և Մհերի ավելի հին վեպերի մեջ, որոնք սեպագրական ժամանակների հետ են կապված թե՛ տեղով և թե՛ անուններով ու անցքով»։

Պատմական տարրեր ժամանակաշրջաններ արտացոլող վեպական տարրեր պատումների հարակցման այս հնարավորությունը հայ ժողովրդական վեպում հավաստելով հանդերձ, Աբեղյանը, սակայն, Գավթի ճյուղի մեջ ևս խոր հնության հետքեր է տեսնում։ «Բուցց և այնպես.— գրում է նա,— չի կարելի ասել, որ Գավթի վեպը բոլորովին նոր է...

Գավթի վեպի հնության ամենից զիստավոր ապացույցը հենց այն է, որ նա յուր բուր մանրամասնություններով կատարյալ դուրս գաղնեբրություն է, և ոչ զուտ պատմական վեպ. իսկ յուր կյանքի պատմական շրջանում, միջին դարերում, մեր ազգը չէր կարող ստեղծել դյուցազներգություն, այլ միայն կարող էր հին դյուցազներգությունն ավանդել բերեբերուս և առլ ճուրն յուր ժամանակակից կյանքի երանգը»<sup>2</sup> (ընդգծումն իմն է—Ս. Հ.)։

Աբեղյանն իրավացիորեն հայ ժողովրդական վեպի մեջ հայտնաբերում է երկու կարևոր բաղադրիչներ՝ պատմական և դյուցազնական-առասպելական, որոնցից վերջինը վեպի զարգացման պատմական հաջորդականության առումով նախորդել է առաջինին և իրական կյանքի եղելությունների ազդեցության տակ աստիճանաբար պատմականացել։ Եվ վեպի այս յուրահատկությունից էլ ելնելով

էլ նա Սասունցի Գավթի և Մհերի վեպը համարում է «հեն-դյուցազնական և կեն-պատմական վեպ, որի մեջ դյուցազնականը և պատմական-իրականը խառնված են իրար հետ, թե շատ հին ժամանակի պատմականը և թե միջնադարյան ժամանակի պատմականը»<sup>1</sup>։

Մեր ժողովրդական վեպի ժանրային այս ճիշտ բնութենում էլ Աբեղյանին մղում էր քննելու վեպի մյուս էական տարրերը՝ դյուցազնական-առասպելական հատկանիշները։

Առաջին հերթին Աբեղյանը դիմում է վեպի կենտրոնական հնություններին (Սանասար, Աբամելիք, Գավթի, Մհեր) և նրանց բնավորության ու արարքների մեջ ցուցաբերում գերմարդկային խառնուրդի և դյուցազնական-առասպելական գծեր։ Սանասարի և Աբամելիքի արարքների մեջ, օրինակ, նա տեսնում է արդի բանագիտության հորոջրմամբ՝ «գուպտորական հերոսների» գործունեություն յուրահատուկ գծեր, իրեն կիկնտպիկ ամբողջինարարների։ Եվ ի պատիվ Աբեղյանի, պետք է ասել, որ թեպետ վեպի առկա երկու փոփոխաններում հերոսների դյուցազնական ծագման մասին տակավին ակնարկներ չկային, նա, սակայն, հենթադրում էր արդեն, թե «թերևս ուրիշ վարիանսներով Աբամելիքն ու Սանասարը սերված լինին մի որևէ աստուծուց, կամ իրանց ուժը ստացած լինին գերագույն գործությունից»<sup>2</sup>։

Իսկապես էլ, վեպի հետազայում զրառած պատումներում երևան եկավ հերոսների սերումը բնություն տարերբից, նրանց ջրային, ծովային ծագումը։

Գավթի ու Մհերի կերպարներում, մասնավորապես նրանց բնորոշող «սիլվանական ճիճ» մակդիրի և մասնավոր Գավթի «Մարութի բանձրիկ Աստվարածին» և իր աջ թևի «խաչ պատարագին» ուր թուր զիմունսներով երկնային զերպույն գործությունից ուժ ու օգնություն ստանալու վիզյական փաստերի մեջ Աբեղյանն իրավամբ տեսնում է դյուցազնական հերոսներին բնորոշող հատկանիշները։ Սույլ հերոսների կերպարներով չի սահմանափակվում Աբեղյանը, այլ վիզյական ասանձին խոսուն մտորվների ու առասպելական էակների ու առարկաների (ղեղերի, վիշապների մասնակցություն, Մարութա վանք, սրբազան հուռութք, կայծակի թուր, հրեղեն ձիեր ու նրանց ծագումը, որսորդություն, հովվություն, գոթանով վար անել, անմահական կաթնաքար, ուժ փորձել, դյուցազ-

<sup>1</sup> «Մուրճ», 1889, էջ 1747։

<sup>2</sup> «Մուրճ», 1889, էջ 1748։

<sup>1</sup> «Մուրճ», 1889, էջ 1749։

<sup>2</sup> Անդ, էջ 1751։



նական-վիպական ամուսնությունն և այլն՝ հայ ժողովրդական կենդանի հավատալիքների տեսադաշտի վրա կատարած հանգամանակից բնություններով ըստ ամենայնի վեր է հանում մեր ժողովրդական վեպի առասպելա-դիցարանական բաղադրիչները: Այդ վերածություններից պարզվում է, որ վեպի հիշյալ բաղադրիչների սնուցող հողն ու աղբյուրը եղել են հայ ժողովրդի հին ու նոր հավատալիքները, և վեպը ժողովրդի հոգևոր կյանքի զարավոր պատկերն է իր մեջ անդրադարձնում: Եվ ոչ միայն այդ, այլ իր հիմնական գաղափարախոսությունը ևս, Արեղյանի կարծիքով, վեպը բուն ժողովրդական ուսմական է: Անկախ այն հանգամանքից, որ ժամանակի առասպելարանական մի սրբամայով Գավթի և Մարա Մելիքի հակամարտությունը Արեղյանը դիտում է իբրև դուստրալների կրտսեր ու ավագ սերունդների միջև մղվող մշտապես պայքարի ու թշնամության հետևանք, այդուհանդերձ նա Գավթին համարում է «ժողովրդի գաղափարատիպ, ժողովրդի ցանկություն մարմնացում», որը կոչում է ատելի թշնամու՝ Մարա Մելիքի դեմ՝ ժողովրդին ապատարբելու համար:

«Սասնու տերերը,— գրում է Արեղյանը,— հանդիսանում են իբրև ժողովրդին սիրելի, ազնիվ տիպեր, որոնց գլխավոր ուշ ու միտքը նորա վերա է դարձրած, որ իրանց երկիրը պաշտպանեն օտար բռնությունների դեմ: Մարա մելիքները, ընդհակառակը, ժողովրդի համար սիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեփական ժողովրդի վերա բռնություններ են իշխում... Ահա այս՝ յուր ժողովրդի համար իսկ ատելի Մարա Մելիքը կամենում է իրեն հարկատու շինել Սասնու տերերին... գալիս է Գավթի վերաս»:

Այստեղ Արեղյանն արդեն բացահայտում է վեպի գաղափարական բովանդակության էական առանցքը, այն, որ վեպն անկախ իր առասպելա-դիցարանական երանգներից, բուն էությունը պատմական է և արտացոլում է հայ ժողովրդի մղած դաբավոր պայքարը օտար նվաճողների բռնի ներխուժումների և ժողովրդին ստրկացնելու նրանց բռնակալական միտումների դեմ:

Եթե այս ամենին ավելացվի և այն ուշագրավ բացատրությունը, որ տալիս է Արեղյանը ժողովրդական դուստրալական վեպի հարատևման փաստի մեջ հասարակական կոնկրետ միջավայրի խողացած կարևոր դերին, ապա ըստ ամենայնի կամբողջանա

սողովրդական վեպի և առհասարակ ժողովրդական բանահյուսության նկատմամբ սկսնակ բանագետի ունեցած հույսերի, բմբռնումների և շտեղծման ողջ համակարգն ու ելակետը:

«Մոկացոց և օսառնցոց բնիկը,— գրում է նա,— բնական է, որ մենք լսենք հին դուստրալական վեպի մնացորդներ, բացի բարձր պատճառներից, որոնց մատնացույց ենք եղել, և այն պատճառով, որ Հայաստանի այդ կողմերի ժողովուրդը միակ ժողովուրդն է, որ առանձնացած ինքնուրույն կյանքով է ապրել, որի մեջ քաղաքակրթական զարգացումը ոչ միայն հնումը, այլև նորումս դեռ ոտք չէ կոխել: Հին ժամանակներից սկսած՝ այդ կողմերի հայերը համարվել են իբրև լեռնական կես-վայրենի ժողովուրդ, որոնք կյանքը նման չէ եղել մյուս կողմերի հայերի կյանքին, և որոնք պահել են իրենց վարք ու բարքի բրտությունը: Ապա մեզբերելով թովմա Արծրունու մի վկայությունը X դարի սասունցյանների կենցաղի ու վարքուբարքի վերաբերյալ, ավելացնում է.

«Քովմա Արծրունու նկարագրած սույն նախնական պարզ և միանշանայն բիրտ կյանքով են ապրում և ցայժմ Տորոսի այդ կողմի հայերը, որոնք, մինչևևս ուրչել կողմի հայերը մի տեսակ ձերացած ու մաշված են, մեք ազգի ավելի երիտասարդ ու թարմ մասն են կազմում, ուստի և մինչև այժմ մոռացած չեն իրանց նախնու—Սանասարի և նորա ժառանգների վեպը»:

Այսպիսով, Արեղյանը դուստրալական վեպի կենցաղավայրման փաստը բացատրում է կենցաղավարող միջավայրի կյանքի նախնական հարաբերությունների պահպանումով, այդ կյանքի հետամնացությունը, որ դեռ կարող էր պարարտ հող ծառայել դիցարանական բմբռնումներին ու մտածողության համար: Այդ երեվույթն Արեղյանը ցույց է տալիս նաև այն կենդանի իրողության մեջ, որ հենց ինքը՝ վեպն Արեղյանին պատմող Մոկացի նահապետը, հավատացել է վեպին իբրև մի ճշմարիտ եղելության, իբրև մի ստույգագուտում պատմության, մատնանշելով, որ վիպական ժամանակներում մարդիկ արդար էին, «ինչ մրազ էնին՝ Աստված կրկատարեր»:

Ահա, նման կոնկրետ հայեցակետով է Արեղյանը բնում հայ ժողովրդական վեպը իր անդրամտնիկ հետազոտության մեջ, ուր, թեպետ հեղինակը անփորձության հետևանքով տեղ-տեղ խճուղվում է ժամանակի առասպելարանական տեսության մոլի ու մո-

1 ՄՄորն, 1890, էջ 39:

1 ՄՄորն, 1890, էջ 1749—1750:

լոր բավիղներում, սակայն, ընդհանուր առմամբ, կարողանում է դուրս գալ անձուկ սիակուզիաներից և ժողովրդի պատմական կյանքի կոնկրետ երևույթների հիման վրա է փորձում մեկնաբանել վեպի երկու էական բաղադրիչները՝ պատմական ստաղծն ու առասպելա-դիցաբանական արմատները:

Վեպի միայն երկու պատումների տեղադրության և հեղինակի տեսական պատրաստվածության ավյուլ մակարդակի պայմաններում, հարկավ, զեռ շատ բան որոշակի չէր կարելի սանել ու ապացուցել, բայց ինչ ասվել էր, ասվել էր բավական լուրջ ու հիմնավոր: «Ազգային վեպ»-ով զբվել էր մեր ժողովրդական վեպի գիտական ուսումնասիրության հիմնահարկը, որի վրա ապագայում իր՝ Արեղյանի, մասամբ և օրիշինների կողմից բարձրաշար էր մեր վիպագիտության վերնաշերտը:

Հայ ժողովրդական վեպի այս անդրանիկ հետազոտությանը հաջորդում են նորագույն պատումների հրատարակություններ, զբվում են վեպի առանձին կողմերին նվիրված ուսումնասիրություններ:

Վեպի հիշյալ և նոր այլ պատումների հիման վրա Արեղյանը հետազոտում բացահայտում է հերոսների զիցային բնավորության նորանոր դժներ և հավաստում ու հաստատում հայ ժողովրդական վեպում հին ամպրոպային առասպելների մնացորդների առկայությունը:

1899 թ. Արեղյանը «Der armenische Volksglaube» դոկտորական զինգրադային մեջ հայկական ամպրոպային դրույցների շարքում «Կայծակի հերոս Սանասար» ենթավերնագրի տակ զարգացնում է մի նոր տեսակետ՝ ապացուցելով վեպի հերոս Սանասարի ամպրոպային ծնունդն ու բնավորությունը: Առաջնորդվելով եվրոպական բանագիտության մեջ արժատավորված ամպրոպային առասպելաբանության տեսագծով և հիմնվելով նրա հետազոտական նվաճումների վրա, նա Վիլհելմ Սանհարզի հետևություններ փորձում է ամպրոպային առասպելներով մեկնաբանել երկվորյակ կերպարների դիցաբանական ծագումը: «Ժողովրդական վեպի մեջ, — գրում է նա, — Սանասարն, անշուշտ, մի փոքր մթնած, հանդիսանում է իբրև մի կայծակի հերոս և վիշապամարտիկ նա

ևս իր երկվորյակ եղբոր հետ ժողից է ծնված և կոչվում է ծովային: Այսպես անվանում է նա ինքն իրեն, ցույց տալու համար, որ ինքը հողերեն չէ: Երկվորյակ եղբայրների մայրը միևնույն կերպ է հղանում, ինչպես գերմանական հեթաթեների մեջ այն եղբայրների մայրը, որոնց համեմատել է Մանհարդ Բնդրայի հետ»:<sup>1</sup>

Նշելով հերոսների մոր ծովի ջրից հղանալու, Սանասարի ծովի տակից հրեղեն ձի, կայծակի թուր ձեռք բերելու, ծովատակի կաթնադուրից խմած ջրից զորեղանալու պարագաները, ինչպես նաև ծովի վիշապի զլխից թանկարժեք ակ հանելի և Պղնձե քաղաքի սև ու մուժ պալատում բանտված արևի նման վառվող ուղեկան ազատագրելը, Արեղյանն այդ ամենն իրավամբ համարում է ամպրոպային առասպելի մտախիմեր, «առասպել...», որի մեջ արեգակ-աղջիկը հայածվում է վիշապից, ինչպես այդ երևան է դալիս ամպրոպային կովի մեջ»:

Նույն 1899-ին հրատարակված «Հայ ժողովրդական առասպելներ» աշխատության մեջ Արեղյանը խոսելով ամպրոպային առասպելների ծովածին լինելու մասին, դարձյալ շնչեռում է ժողովրդական վեպի ամպրոպային հերոս Սանասարի ծովային ծրնունը, վիշապի դեմ նրա կռիվը և այդ կռիվ մեջ հղում ու անձրև հարուցելը դիտում իբրև ամպրոպային առասպելի տարածված մոտիվներ<sup>2</sup>:

Այսպես, մեր ժողովրդական վեպի առաջին ճյուղի կամ «կերտվորման դիցաբանական ծագումը հավաստելով հանդերձ, Արեղյանը նաև հետազոտում է նրա հնագույն շերտերը և ժամանակի առասպելագիտական բանասիրության նվաճումների համեմատ, վեպի առաջին ճյուղի ծագման մեջ հայտնաբերում ամպրոպային տարածված հնավանդ առասպելի բացահայտ մոտիվներ:

Մրան է ին մոտավորապես այն նոր տեսակետները կամ նախորդ տեսակետների նոր հիմնավորումները, որ կատարում է Արեղյանը «Ազգային վեպ»-ից «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրությունների միջև ընկած ժամանակաշրջանում: Դժվար չէ նկատել, որ հիշյալ տասնհինգամյակում վեպի հետազոտման ուղղությամբ Արեղյանի շահագրգռությունների կիրակներտոնը վեպի առաջին ճյուղի առասպելա-դիցաբանական հատկանիշներն են կազմում: Եվ այդ պարագան, եթե մի կողմից բացատրվում է նվիրույալում

<sup>1</sup> Բ. Խալաթյան, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, Փարիզ, 1901: Բ. Խալաթյան, Հայ ժողովրդական դրույցայական վեպը՝ հանդերձ բնագաղտնությամբ, Վենեսա, 1903, Սո. Կանալան, Մամիկոնյանց պատմություն, «Աբրահամ», 1906:

<sup>1</sup> M. Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, էջ 86:  
<sup>2</sup> Բ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 138—139:



ուսանելիս ժամանակի առասպելաբանական ուղղութիւնների խոր ու հիմնավոր ուսումնասիրութիւններով, ապա մյուս կողմից բացատրելի է այնու, որ հիշյալ ժամանակաշրջանում Արեւիյանի գիտական հետազոտութիւնների կենտրոնական խնդիրը հայ ժողովրդի առասպելներն ու հայատաւիբներն էին, որոնց զրգմամբ ու անշնչութեամբ էլ նա վեպի մեջ կարողանում է նշմարել նրա առասպելա-գիցարանական տարրերն ու գերազարկները:

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպի վերաբերյալ հետազոտական նման գիտանցով էր Արեւիյանը թեկնածուութեամբ XX դարը, երբ իր «Ազգային վեպ» անդրանիկ ուսումնասիրութեան մեջ օգտագործված երկու պատումի փոխարեն գիտութեանը հայտնի էր դարձել վեպի 13 նոր փոփոխակ ևս, նյութի մի պատկանելի բանակ, որ լիով կարող էր հիմք դառնալ նոր հիմնավոր հետազոտութիւնների: Եվ Արեւիյանը չի հապաղում այս անգամ ևս: 1904—05 թվականներին Գեորգիան ճեմարանում նա երբորդ անգամ է դասախոսում հայ ժողովրդական վեպի մասին և այդ համակարգված դասախոսութիւնն էլ 1905 թ. հանձնում է Երվանդ Լալայանին «Ազգագրական հանգեա»-ում տպագրելու Գա նրա «Հայ ժողովրդական վեպը» հոշակավոր հետազոտութիւնն էր, որի մեջ «Սասնա ծռեր»-ն ստանում էր իր բնա ամենայնի խորագրին և ճշգրտաբար գիտական մեկնարանութիւնն ու իմաստավորումը:

## 2. «ԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՆԱՆ ՎԵՊԸ»

Վեպի այս նոր ծավալուն հետազոտութեան մեջ Արեւիյանն ամենից առաջ յուրովսանն ամփոփում էր և զարգացնում «Սասնա ծռեր»-ի մասին մինչ այդ արժարժված այլ հետազոտողների նոր տեսակետները, խորացնում և առավել հիմնավորում իր արտահայտած նախորդ կարծիքներն ու հարցաբարձումները և առաջ բաշում ու հանգամանորեն հետազոտում բանագիտական-բանասիրական նոր խնդիրներ:

### Ա. ՎԵՊԻ ԺՈՂՈՎՐԴԱՆԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԳՐԸ

Առաջին կալիտասին խնդիրը, որից սկսում է իր նոր հետազոտութիւնն Արեւիյանը՝ վեպի աշխարհագրական տարածվածութեան և վիպասացների ու նրանց սոցիալական պատկանելութեան հարցերն էին:

«Սասնա ծռեր» վեպի առաջին հիշատակութիւնը Արեւիյանը գտնում է տակավին 1806-ին հրատարակված Ղ. Ինճիճյանի «Նոր

Հայաստան» գրքում, ուր հեղինակը «Սասնա ծռերի մասին» և «Սասնա ծռերի բերդ» անունները գտնում է Կաղզվան գավառում և ակնարկում Խանդավազի մասին պատմվող ինչ-որ ավանդութիւններ: Այս համատարակի բնութագրելով վեպի մինչև 1905 թ. գրառած պատմաներն ու նրանց ճյուղագրութիւնը՝ եզրակացնում է.

«...Վեպը սկիզբն առնելով Սասնա ծռում ու Տարոնում, պատմելով մէջէն Քաղնիքը և Մշու կողմերը, նշաթում, և ապա Բայազետում, որտեղից անցնել է ղեպի հյուսիս՝ Արճնի և Կաղզվան, ուր XVIII դարում արդեն կապված է եղել որոշ տեղի հետ: Այնուհետև մտած է Այրարատի, էջմիածնի գավառը, ուր տեղացիներն արդեն յուրացրել են և արևելյան բարբառով են պատմում: Վեպը ընտանի է և Արագածի լանջերում, Ապարանում: Մյուս կողմից՝ Շատախի, Ռշտունյաց ու Մոկաց կողմերում, ուր վեպն այժմ ամբողջ կենդանի է, անցնել է վան՝ կապվելով Մհերի դասն հետ, և այնտեղից Արագածի գագաթով մտել է պարսկահայր, հատկապես Խոյի և Մակիս կողմերը, ուր նույնպես ցույց են տալիս վեպի գործողութեան տեղերը»:

Պատումների տեղագրութեան հիման վրա զմովս վեպի տարածման աշխարհագրական այս սահմաններն ապացուցում էին. «որ վեպը բավական տարածված է Սասնայի և Տարոնից դուրս մյուս հայերի մեջ» և ապա այն, «որ վեպը բողել է յուր տեղական բնավորութիւնը և հայ ազգն բնգունել ու յուրացրել է այն»: Սա նշանակում էր ոչ այլ ինչ, քան այն, որ «Սասնա ծռեր»-ը ժամանակի ընթացքում վերածվել է համազգային, համաժողովրդական վեպի: Սա «Սասնա ծռեր»-ի կարևոր հատկանիշն էր, որ առաջինը հայ բանագիտութեան մեջ ապացուցում էր Արեւիյանը: Եվ ոչ միայն այդ. նա հատկակի ուշագրութիւն է հրավիրում այն հանգամանքին, որ վեպը պահպանվել ու պատմվում է աշխատավոր չքավոր խավերի ներկայացուցիչների՝ «թափառական զրգարներին»—«բորդ ու բամբակ զգողներին», զանազան դրաղմուրներով պարասպող պանդուխտների մեջ, որոնց հիմնական աշխատանքը, իբրև դուրացի մարդու, եղել է երկրագործութիւնը: Այդ վիպասացներին ունկնդրող հասարակութիւնը եղել է գյուղացիութիւնը, որի մեջ, ըստ արհեստի բնորոշիչի, զորարութիւն կամ մշակութիւն են արել նրանք: «Առաջողների և նրանց հասարակութեան այս վիճակից,— եզրակացնում է Արեւիյանը,— առաջանում

1 «Ազգագրական հանգեա», XIII գիրք. Թիֆլիս, 1906, № 1, էջ 18:

են վեպի երկու էական հատկությունները նախ վեպը ընկած և պատմում է Սասնու տերերի, հայ ազնվականների և իշխանների մասին, բայց չէր են ոչ մի ազնվական բան շունի իր մեջ, այլ ազնվական և նույնիսկ բազմաթիւ անվան տակ դուրս են գալիս մեր գյուղացիները: Վեպն ամբողջական խառնուրդ էր, գեղջկական չնավորություն ունի, հայ հասարակ ժողովրդի կյանքն ու հոգին ենք անելով այնտեղ, երա նիստովացրը, պարավաններ, բարբե-  
րը և տխրե՛) (ընդգծումն իմն է—Ս. Հ.):

Եվ այսպէս... «Սասնոցիներն իրենց կյանքն ու հոգին են պատկե-  
րացրել վեպի մեջ, և մենք այնտեղ գտնում ենք մեր գյուղացու  
կյանքի բազմազան կողմերը բավական մանրամասն ու սիրով նկա-  
րագրված»<sup>2</sup>:

Արեղյանն այստեղ անվազն երկու կարևոր հարց է շոշափում. նախ այն, որ ավանդական վեպի գաղտնիքաբարձրությունն ու բովանդակության վրա ներգործման վճանական նշանակություն ունի վիպասացի սոցիալական պատկանելությունը, և, որ առհասարակ վիպասացիներն ավանդական վեպի վերակերտման հեղինակներ են հանդիսանում: Ապա և այն, որ «Սասնա ծոներ»-ը ոչ միայն իր աշխարհագրական տարածումով է լայն ժողովրդականություն ձեռք բերել, այլև կենցաղավարման ուսմական-գեղջկական բնույթով, Հետեւաբար վեպը ներքին գաղափարախոսական որակով՝ բուն ոգով ու էությունով ժողովրդական, աշխատավորական-գյուղացիական նկարագիր ունի:

Բ. ՎԵՊԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՉԵՂՎՐԳՎԱԾՆԵՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԵՐԸ

Վեպի դրույցադնական վիպական ծաղկուն շրջանի վերջին սահմանագիծը դնելով XVI—XVII դարերը և այն կապելով միջնադարյան հասարակական մտայնության հետ, Արեղյանը վեպի գրուման ժամանակաշրջանի՝ XIX դարի երկրորդ կեսերի ազգային մտածողությանն այլևս բնորոշ չի համարում հրաշքների հավատա-  
վիրը: Ժողովրդի միայն մի մասը, պատմական ու աշխարհագրա-  
կան այսպիսիների բերումով, գտնվում էր տակավին միջնադարյան մտածողության սյուրսերում, ուստի և իր ընդերքում շարունակել էր ուսուցիչ վեպը: «Այժմ մեր ժողովրդի միայն շատ ետ մնացած ու

խավար մասն է հետաքրքրվում վեպով,—գրում է նա,—նա էլ այն գրություն մեջ է, որ շատ-շատ՝ պեթե է հին վեպը պահպանի և պահպանի հեղուկ հետ ժողովրդի մտքում... Վեպն այժմ ամենքը չլիտեն և որ գլխավորն է՝ ամենքն այլևս սիրով չեն լսում այն, այլ միայն մեկ-մեկ և տեղ-տեղ են պատմում»<sup>1</sup>:

Սրան ավելացրած նաև այն իրողությունը, որ վիպասացները այդ ժամանակ եղել են արդեն ստատահական մարդիկ, որոնք իրենց թերմաց են համարել, վարպետ ասացողներ համարելով միայն իրենց նախորդներին, ապա նաև այն, որ վիպասացներն իրենց խոստովանությունները տեղ-տեղ արդեն մոռանում են վեպը, չունեն նախորդների խոստովանությունն ու ճշգրիտ հարազատությունը իրենց պատմածի նկատմամբ,—այս ամենն ահա զալիս է ապացուցելու, ինչպես ճշտորեն նկատում է Արեղյանը, որ վիպասաց-  
ները ավելի ծաղկման շրջանն իրենցից առաջ են գնում»:

Մյուս կողմից, Արեղյանը կենդիվ այն իրողությունից, որ ազատ ոտանավորով պատմվող վեպում առկա են բիշ քանակու-  
թյամբ երգվող շափածո հատվածներ, ենթադրում է, թե դրանք հնում երգվել են որևէ գործիքի նվագակցությամբ և ավելի մեծ տեղ են գրավել, եվ երբ շարվեստավոր ասացողների տեղ... անցել են պատահական ասացողներ, վեպի լեզուն շափածոից դարձել է արձակ, կամ հին ոտանավոր տեղի է ավելի մի ոտանավորի, որի մեջ իշխող է արձակը... Այն հանգամանքը, որ վեպը համեմատաբար բիշ մասերում է երգվում այժմ, և որ մի քանի պատմվածքների մեջ ինչպեսև այդ մասերը կան, բայց չեն երգվում, ցույց է տալիս դարձյալ,—Երազկացունում է Արեղյանը,—որ մեր վեպը անվան շրջանի մեջ է... Եվ եթե բոլորովին անհնա չի կորել, միայն շնորհիվ այն հանգամանքի, որ 19-րդ դարում, և հետագայում դրա մնացորդները ժողովվել են ու հրատարակվել (ընդգծումն իմն է—Ս. Հ.):

«Սասնա ծոներ» ժողովրդական վեպի այս արտաքին հանգամանքների պարզարանումն ու նրանց հանած հետևությունները հետազոտողի հայացքն ուղղել են առաջն գեպի վեպի ծանրալին հատկանիշների բացահայտումը: Ընդհանուր գեղագիտության մեջ վաղուց էին ուրվագծվել ժողովրդական վեպի ծանրալին մասնահատկությունները, որոնք մասամբ նախորդ հետազոտողների (էմին, Փյառնանյան, Խալաթյան) կողմից և հատկապես իրեն Արեղյանի

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XIII գիրք, № 1, էջ 22:

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», XIV գիրք, Թիֆլիս, 1906, էջ 55:

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XIII գիրք, էջ 20:

<sup>2</sup> Անդ, էջ 25—27:



վեպին նվիրած անդրանիկ հետազոտություններով ներմուծվում էին ազգային գրականության անդաօտանը և դրանցով սահմանվում նոր հայտնաբերված «Սասնա ծռեր»-ի գեղարվեստական տեսակի (ժանր) նկարագիրը:

Վեպի ժանրային հատկանիշները պարզաբանելիս Աբեղյանը դիմում է վեպի և նեբիաթի համեմատությանը: Հարցադրումը պատահական չէր, քանզի հայ բանասիրության մեջ «Սասնա ծռեր»-ն առիթ էր սովել ուսանջ (Ա. Չոպանյան) այն շփոթելու հեքիաթի հետ:

1. Ընդհանուրը, որ առկա է թե՛ վեպում և թե՛ հեքիաթում, ըստ Աբեղյանի այն է, որ երկուսն էլ ժողովրդական ստեղծագործությունն են, «այսինքն իրականության բանաստեղծական ըմբռնումն ու արտահայտությունն»: Գրանով էլ, Աբեղյանի հավաստմամբ, վերջանում է նրանց նմանությունը. «մնացածով նրանք տարբերվում են իրարուց»:

2. Վեպի առաջին բնորոշ հատկանիշը Աբեղյանն համարում է նրա ազգային բնույթը, այն, որ նա «բնիկ ազգային է թե՛ յուր բնավորությամբ և թե՛ յուր ծագումով: Մեր վեպը... հայ ազգի ստեղծագործությունն է և կրում է մեր ժողովրդի կյանքի գրոշմը»: Մինչդեռ հեքիաթները մեծ մասամբ միջազգային ստեղծագործություններ են՝ ազգային գույնով երանգավորված<sup>1</sup>:

3. Ապա. «Հեքիաթի բնորոշ գիծն է հրաշալին, անիրականը: Այնտեղ բնության և բնկերական կյանքի բազմազան երևույթները պատկերանում են մտացածին, հաճախ ֆանտաստիկական կերպարներով՝ զարդարված ամեն տեսակ հրաշալիքներով: Ոչ պատճառը և ոչ էլ լսողը չեն հավատում հեքիաթի գործողությանը՝ իրականության, և շատ գեղեցիկ կերպով այդ հավատը բերողով է հեքիաթի այն երկրաչափական բանաձևով, որով սկսում են հեքիաթները. «Եղև է, չի եղև», «կար, չկար»: Հեքիաթներին չի հավատում պատճառը, որովհետև նրանց մեջ պատմված հրաշալին այլևս ժողովրդի կենդանի կրոնական հայացքի հետ չի կապվում:

Նրանք մի մասը հին հեթանոսական առասպելներից են գալիս, ուստի և նացած են ու անհասկանալի. մի ուրիշ մասը դրսեց կեպով լինելով՝ խորթ և օտար են. կան և հեքիաթներ, որոնք հին առասպելների շենքի բեկորներից, իրրև պատրաստի ատաղձից, կարկատած բաներ են և հաճախ անհեթանոսություններ<sup>2</sup>:

4. Ժանրային առումով միանգամայն ճիշտ բնութագրված հեքիաթներին Աբեղյանը հակադրում է ժողովրդական վեպը, գտնելով, որ թեպետ «նրա մեջ ևս կան հրաշալիքներ, բայց դրանք բացարձակում են ժողովրդի կենդանի հավատքով»: Վիպասացները հավատում են վեպին իրրև ճշմարիտ երևույթության: Վեպը սկսվում է «ողորմիտով», այսինքն վեպի հերոսներին, իրրև պարծանացած իրական անձնավորություններ, որոնքի տալու բանաձևով:

«Քացի այդ՝ հերոսների իրականության ապացույց համարվում են և նրանց անունով կոչված տեղերը, որ այս ու այնտեղ ցույց են տալիս», այսինքն վիպական հերոսների տեղաչեցումը: Եվ ոչ միայն այդ՝ վիպասացները վեպն համարել են «հայ ազգի պատմությունն»: «Եվ իսկապես,— ավելացնում է Աբեղյանը,— վեպն իրական պատմության հետ շատ ընդհանուր տարրեր ունի: Մինչ հեքիաթը, սակավ բացառությամբ, ոչ միայն ժամանակից, այլևս տեղից կտրված է, վեպը իրական պատմության հետ այն ընդհանուր ունի, որ նրա գործողությունները կապված են որոշ աշխարհագրական տեղերի հետ, և հատկապես այն տեղերի հետ, որոնք վեպի սկզբնավորության ու զարգացման շրջանում մեծ զեթ են կատարել մեր ազգի պատմության մեջ... Քացի այդ՝ վեպի հերոսները, ինչքան էլ առասպելական դուրյաղնական կերպարանք են ստացել, մարդկային ու պատմական են: Վեպի մեջ պատմվածքները ժողովրդի կյանքից առած պատմական նշանավոր դեպիվածներին հիշողություններ են, միայն բանաստեղծույն պատմված և այլափոխված»:

Վեպի և հեքիաթի այսպիսի դուրսդիր համեմատություններով Աբեղյանը պարզում է ոչ միայն ժողովրդական վեպի բնորոշ մի բանի՝ հատկանիշները, այլև ժողովրդական հեքիաթները, որոնց մասին, մինչև այդ, հայ բանագիտության մեջ շատ չեն բան էր սովել:

Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը ժողովրդական վեպի գլխավոր մասնահատկությունը համարում է նրա պատմականությունը, որ թեև ազդված էր հատկապես 1890—1900-ական իվականների սուս ու եվրոպական բանագիտության (Վս. Միրյեր և ուրիշներ) ևնախասական բժբրոնումներով:

Ժողովրդական վեպի՝ իրրև «պատմական բանաստեղծություն» կամ «բանաստեղծական պատմություն» բմբանիր Աբեղյանին

<sup>1</sup> «Ազգագրական հանգեա», XIII գիրք, էջ 28:

<sup>2</sup> «Ազգագրական հանգեա», XIII գիրք, էջ 29:

մղում է հիշյալ տեսագծով սահմանելու վեպի զեղարվեստական կազմավորման ընթացքը: Այս տեսությունը ևս նորություն չէր հայ բանագիտության ու Արեղյանի համար: Գեոսես «Ազգային վեպ»-ում օգտվելով ուսուրանողությունից, մասնավորապես Ֆեոդոր Բուլաինի ժողովրդական վեպերի ծագման ու զարգացման տեսությունից, Արեղյանը համառոտակի ուրվագծում էր վեպերի ձևավորման ու զարգացման ընթացքը: Այստեղ նա շեշտը դնելով ժողովրդական վեպերում առկա օտարումի և մեկմեկու հակասող անախորհիզմաների», վիպական հերոսների մեջ առասպելական ու պատմական տարրեր անձնավորությունների բնավորության գծերի համադրման գրգռ, դանում էր, որ «ժողովուրդը մոտանալով հին հեթանոսական դիցաբանությունը, յուր վեպի մեջ առաջել հնարան ունենալու համար՝ առասպելական էականը ու հավատարկները փոխարենում է պատմական հողի վերա և նրանց տալիս է ժամանակակից հասկացողության պատկերացումը»<sup>1</sup>: Սա այլ բան չէր, քան վեպերի ձևավորման վերաբերյալ առասպելաբանական մի տեսակետ, որ ուրվագծվել էր հիշյալ տեսության հիմնադիր Հակոբ Գրիմմի և նրա ուսու հետևորդ Բուլաինի կողմից: և, որը որդեգրել էր սկսեակ բանագետ Մանուկ Արեղյանը: Սակայն տաս տարի անց, 1899-ին հրատարակած «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հատուց պատմության մեջ» աշխատության մեջ, Ֆրանսիական ու գերմանական բանասիրությանը հմտացած Արեղյանը, հայ հին վիպական բանահյուսության նմուշների առնություններ, առաջ է բաշում վեպերի սկզբնավորման մասին ժամանակի գիտության մեջ ընդունված տեսությունը, որն իր էականությամբ դրույթներով սկզբունքորեն տարբերակվում էր նախորդից:

«Պատմական մեծ իրողությունները,— դրում է նա,— որոնք ազգային կյանքի համար կարևոր նշանակություն ունին, և կամ այնպիսի զեպեր, որոնք առանձնապես խորը տպավորություն են թողնում ժողովրդի երևակայության վրա, նյութ են դառնում ժողովրդական պատմական երգերի և ավանդությունների: Բայց ասոնք միայն անշատ վիպական երգեր ու ավանդություններ են և ոչ թե մտքողական և երևակայական մի վեպ... Այսպիսի վեպը կազմվում է ժամանակի ընթացքում: վիպական ոգու մի ընդհանուր հատկություններ, անշատ երկիրն ու ավանդությունները, որոնք առաջ են կելլ գանադան պատմական զեպերի ազդեցության տակ, ձրգ-

աում են հեռոգհետ միանալու: Այդ ժամանակ զրույցներն ու երգերը հաճախ ներքին փոփոխության են կենթարկվում և ոչ թե մերենալարար իրար կցվում: Բնականաբար, ամենից ավելի տուժում են հերոսների անունները, մի պատմական անվան տեղն անցնում է մյուսը: Առաջանում են անաբրոնիզմներ... նշանավոր հերոսներն ու սիրելի անուններն իրենց են բաշում ուրիշների վրա եղած կրկերն ու զրույցները: Նոքա դառնում են, այսպես ասած, վիպական խմորման կենտրոնը... Ժողովրդական վեպի վրա, որևէ, աշխատում են տարրեր սերունդներ, և մի վիպական անձնավորության համար նյութ են տալի բազմաթիվ պատմական անձեր: Սոցա արարքները միանում են, հարկավ, մի որևէ շոշափման կետ, հանգույց գտնելով: Ասել չի ուղի, որ ամենից շուտ միանում են համանուն պատմական անձերի մասին եղած ավանդությունները... Անուննան միայման համար իբրև հանգույց ծառայում է գլխավորապես՝ գանադան անձերի գլխին կկած կամ նոցա կատարած զեպերի համանունությունը: Նման զեպերի ազդեցություն տակ հին պատրաստի վիպական երգը, և նույնիսկ վեպը, յուր մեջ ընդունում է նոր տարրեր, նոր պատմական անցերից»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք այս ուրվագծից, խոր անգամ չկա նախորդ տեսության առասպելական էականի մասին: Ընդհակառակը, վեպի ձևավորման մեկնակետ է դիտվել միմյան պատմական իրողությունն ու անձը: Սա չի նշանակում, հարկավ, թե Արեղյանը հերքում է առհասարակ ժողովրդական վեպերում առկա առասպելաբանական տարրերը: Նա դրանց մասին հանգամանորեն կանգ է առնում նույն աշխատության մեջ «Վիպասանք»-ի առասպելական կողմի մասին խոսելիս<sup>3</sup>:

Խնդիրն այն է, թե ժողովրդական վեպերի ձևավորման մեջ, ո՞ր տարրն էր առաջնայինը դիտվում, պատմականը, թե՞ առասպելականը: Արեղյանն հակառակ տաս տարի առաջ իր որդեգրած տեսության, այժմ վեպի մեջ առաջնությունը տալիս է պատմական իրողություններին: Եվ զա պատահական չէր: Միջազգային բանագիտության մեջ արդեն իր դարն ապրել էր Գրիմմ եղբայրների հիմնադրած առասպելաբանական մեկնությունների տեսությունը և այն իր տեղն էր զիջել առավել իրական մարդաբանական ու պատմական ուղղություններին: Հասկապես ժողովրդական վեպերի դի-

<sup>1</sup> «Մուրճ», 1899, էջ 1755:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 312—314:

<sup>2</sup> Անց, էջ 325 և հետո:



տական մեկնարանութիւնները առջեւ են տարվում առավելաբար նրանց իրական-պատմական կողմերի մանրակրկիտ ուսումնասիրութեամբ:

Եվ ահա, 1905 թ. Արեղյանը «Մասնա ծոեր» վեպը քննելիս դարձյալ շարադրում է ժողովրդական վեպի ձևավորման ու ավանդման տեսութիւնը, այս անգամ արդեն բոլորովին նոր կողմերով համարված: Առաջին հարցը, որի վրա հատուկ ուշադրութիւն է դարձնում նա՝ ժողովրդական վեպի բանավոր կենցաղավարման հետևանքով կրած փոփոխութիւններն են:

Հովտատեղով, որ պատմական եղելութիւնները հիշողութիւն ձևով դարեր շարունակ ավանդելով վիպասանների բերանին ըզրալի փոփոխութիւններին են ենթարկվում, Արեղյանը, սակայն, դրանք բացատրում է ոչ իբրև վիպասանների բնահամույթի կամ ստեղծագործական Երևակալութեան աղբախիբ, այլ մեծ մասամբ և զլիսավորապես իբրև այլ պատմական նշանավոր դեպքերի ու անձանց մասին եղած գրույցների ու երգերի ազդեցութեան հետևանք:

Ժողովրդական վեպի սկզբնական ելակետը համարելով պատմական իրականութիւնը, Արեղյանը, հակառակ Անգղային վեպ»-ում իր պաշտպանած տեսակետի, վիպական զարգացումը տանում է իրական-պատմականից դեպի առասպելական-գյուցաղնակներ, դեպի իրական եղելութիւններին ու անձանց առասպելա-գյուցաղնակնական դունավորումը:

Պատմականի առաջնութեան ու գերակշռութեան մեջ Արեղյանը սինթեզում-համադրում է առասպելա-գիցարանական տարրերը՝ իբրև ժողովրդական վեպի պարտադիր, բայց երկրորդական եկամտա-բաղադրիչներ և ոչ իբրև ի ծն ժողովրդական վեպին հատուկ կազմարանական միավորներ:

Ժողովրդական վեպը նա զիտում է իբրև զեղարվեստական մի առավել բարդ երեսույթ, որի մեջ, պատմական ու առասպելա-գյուցաղնական բաղադրիչներինց զատ, առկա են բնիկ ու եկամտա ժողովրդական զեղարվեստական մտքի այլ արդասիրենք ևս, որոնք սակայն միաձուլւ են ու ենթակա վեպի բուն ազգային պատկերին ու ոգուն:

Վեպի ձևավորման ընթացքի տեսութեան մեջ Արեղյանը վեպի կազմարանական հիմքը համարելով սովյալ ժողովրդի պատմական կյանքի նշանավոր իրադարձութիւնները, զազափարակն զխաւթը շնչառ հենց դնում էր վեպի ազգայնութեան ու ժողովրդայնու-

թեան վրա, դրանք համարելով ժողովրդական վեպի ամենարեորշ հատկանիշները և դրանց մեջ տեսնելով նրա մեծագույն արժեքը: Ժողովրդական վեպը չազգի դարավոր կյանքի պատկերն է, նա ձգտումների ու իղեվների մարմնագումբ է. մի խոսով՝ վեպն ինք ժողովուրդն է՝ (ընդգծումն իմն է—Ս. Հ.):

Սա ժողովրդական վեպի այն նոր բնութեան էր, որ Արեղյանին կողմից պատմատեղով ու ճշուրտութիւլ էր բանագիտութեան պատմական ուղղութեան տեսութեան վրա և յուրովի արձագանքում էր դարավերջի ու ընթացիկ դարասկզբի հայ ժողովրդի ազգային ինքնորոշնութեան զազափարենքին և ազատագրական միտումներին:

9. «ՍԱՄԱ ԵՄԵՐ»-Ի ԵՄՅՈՒՄԸ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Աշխարհագրական միջավայրը: Ինչպես Անգղային վեպ»-ում, այնպես էլ այս ուսումնասիրութեան մեջ, իրականութեան նկատմամբ «Մասնա ծոեր»-ի ունեցած կենսական կապի առաջին զբոսորդը Արեղյանը գտնում է վեպում անդրադարձած պատմա-աշխարհագրական այն որոշակի տեղավայրերի մեջ, որոնց սահմաններում կատարվում են վեպի գործողութիւնները:

«Վեպի մեջ,— գրում է նա,— տեսնում ենք իսկապես մեր երկիրը՝ ինչպես որ կա և ոչ թե մի հերիաթային ֆանտաստիկական աշխարհ»:

Վեպի մեջ հիշատակվող աշխարհագրական տեղանունները համազորելով Մասնա և հարակից զավանների համապատասխան ստեղծներին, Արեղյանը որոշում է վիպական գործողութիւնների աշխարհագրական տեղերն ու սահմանները, այսինքն վեպի աշխարհագրութիւնը՝ պատմական որոշակի վկայութիւններով փաստարկվում: Պարզվում է, որ վեպի հերոսների տարած ու գործած աշխարհագրական միջավայրը Մասունն է իր սահմաններով, ուր մտել են Մշո դաշտն (Տարոն) ու Ճապաղուրը (Տարոնից արևմուտք), որոնք միասին վեպում կազմում են մի ամբողջական իշխանութիւն, որպիսին եղել է նաև պատմութեան մեջ: Վիպական ու տեղագրական փաստերի զուգարդումներով հավաստելով Մասնա յազարի ու բերդի իրական-պատմական գոյութիւնը, Արեղյանն անցնում է վիպական այլ տեղանուններին քննութեանը և հատկապես կարևոր եզրակացութեան հանգում Մար տեղանունն առնությամբ: Նա այստեղ հերքում է իր նախորդների (Սրվանձայան և

1 Անգղայական հանդես, XIII դիրք, էջ 30—32:

որիչներ) Մարը Մասուլի հետ նույնացնելու վարկածը և որոշելով Մարտ՝ Սասնա հետ ունեցած աշխարհագրական դիրքը և հակառակ «Ազգային վեպ»-ում իր արծարած այն տեսակետի, թե Մարը Մծուրը անվան աղավաղումն է, ապացուցում է, որ Մարը հենց ինքը Մարն է, այսինքն Եղիշատուր, որի մեկիբները էլուրյան հարբատության ժամանակ (1169—1250 թթ.) տիրել են Սասունն ու Հայաստանի արևմտյան մասը:

Այս կարևոր եզրակացությունը հիմնավորվում է և այնու, որ վեպում հիշատակված են գրիթի բուրբ այն կենտրոնական քաղաքները (Գիարբեթի, Հայկաթ, Մեքքաթ, Մեղիհե և այլն), որոնք մտել են հիշյալ տերության սահմանների մեջ: Այդ տեղանունների հետ հիշատակվող Քաղզադի խալիֆություն, Մուսուլ, Ջզիթ մուլ քաղաք, Խլաթի Քաղզադություն, Խլաթ քաղաք, Նեմրութ սար, Մանազկերտի բերդ, Ոստան, Ոստանա կապան, Վան, Կապուտկոզ, Աղավաթ քար, Կաղզվան, Կապուլաթ բերդ, Արզում, Վերաստան, Հաղբրեյան, Իրան, Իրանա քաղաք Քավրիդ, Բանդու-մասի դետ և այլ աշխարհագրական անունների ստույգագրությունը Արեղյանին հանդիպում է այն հետևություն, որ սվեպի ամեն մի գործողություն կապված է որևէ տեղի հետ, որ իրապես կա և մեր երկրի պատմության մեջ մեծ դեր է կատարել, հատկապես... այն շրջանում, երբ Սասունը նշանավոր է հանդիսացել: Այս հիմնարկություն էլ Արեղյանը աշխարհագրական անունների հիշատակության օրինակություններից պատմական շատ կարևոր եզրահանգումներ է կատարում: Վեպում հիշատակված իշխանություններից զուգադրելով նրանց ստույգ պատմական թվականները (Քաղզադի խալիֆություն՝ 750—1258 թթ., էտլյան կամ էլուրյան Մարտ մելիքներ՝ 1169—1250 թթ., Խլաթի Շահի Արմեններ՝ 1100—1207 թթ., Մուսուլ՝ 1127—1234 թթ., Ջզիթի ամիրները՝ XI—XIII դդ., Ատրպատականի ամիրները՝ 1136—1225 թթ.): Նա գտնում է, որ դրանք մեզ պարզ կերպով տանում են մինչև 13-րդ դարու կեսը, թաթարների արշավանքների ժամանակները:

Այդ ժամանակից հետո եղած իշխանությունների հիշողությունը գրիթի չկա վեպի մեջ, եղածներն էլ, ինչպես Աջու Շահ, Մուլլան Մուրադ, էական նշանակություն չունեն: Վեպն իսկապես յուր հաստատուն կերպարանքն ստացել է մինչև 13-րդ դարու կեսը և այնուհետև խոշոր և էական փոփոխության չի ենթարկվել: (ընդգծումն իմն է — Ա. Ն.):

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XV դիրք, Թիֆլիս, 1907, էջ 5:

Վեպի վերջնական ձևավորման ժամանակը որոշող այս նշանավոր հետևությունն է հանգում Արեղյանը Մասնա ժողով պատմա-աշխարհագրական անունները բննիչ, մի կարևոր ելակետ, որը տանելու էր վեպի պատմական հիմքերը բացահայտուն և նրա ծագման և զրոյացման ժամանակաշրջանի ինդիկը պարզաբանելուն:

Պատմական առաջը: Եթե նախորդ շրջադրման ժամանակ աշխարհագրական անունները Արեղյանին հուշում էին պատմական որոշակի ժամանակաշրջան և իրողություններ, որոնք դալու էին հայաստելու վեպի ձևավորման ավարտի վերջնաժամկետը, ապա այժմ վիպական անձնանունների բնությունը նրան ամենու է դեպի միջնադարյան Հայաստանի պատմության խորքերը, ակնարկում պատմական որոշակի դեմքեր, որոնց արարքները պայտիորեն համընկնում էին վիպական համանուն կամ նմանանուն հերոսների գործողություններին: Գրանով Արեղյանը որոշարկում է վեպի իրական-պատմական հենքի սկզբնակետերն ու որոնք միջուկը: Անձնանունների բնությունը հայաստելու, վեպում առկա պատմական անձնավոր հիշողությունը Արեղյանը համարում է VI դարի նշանավոր անձանց ու նրանց կատարած գործերի արձայնները, այսինքն Քաղզադի խալիֆություն կամ ավելի հիշտ՝ Հայաստանում արարքների տիրապետության ժամանակաշրջանում աչքի ընկնող պատմական դեմքերն ու զեպերը:

Արարական արշավանքների սկզբում միջնադարյան Հայաստանի պատմության մեջ իր իմաստուն քաղաքական գործունեությամբ ու քաջությամբ աչքի է ընկնում Քեռադրոս Մշտունին, որի վիպական արձայնները Արեղյանի իրավասուրեն տեսնում է Կապուտկոզի (Մշտունիք) իմաստուն Քեռի Քորոսի կամ Քեաթորոսի անձի և արարքների մեջ:

Վեպի պատմական առաջին սկզբնակետերը տեսնելով արարական արշավանքների և դրանց դեմ բարձրագույն քաղաքական մարտունեների մեջ, վիպական կենտրոնական հերոսների անուններն ու նրանց արարքները, սակայն, Արեղյանին ես են բաշում զեպի հաջորդ հարյուրամյակները, երբ արարական զերիշխանությունը Հայաստանում տիրապետող ուժ էր դարձել՝ ժայռատիճան սահմանափակելով տեղական իշխանությունների քաղաքական ու տնտեսական իրավունքները, երբ օտարերկրյա կեղեքումն ու հարբատահարությունը ժանր լուծ դասնալով ժողովրդական զանգվածներին ուսերին՝ նրանց մղում էր ասպատակական կորվելիքի: Պատմա-



Կան նման իրադրություններ է բնորոշում VIII—IX դարերի Հայաստանը, մասնավորապես Տարոնն ու Սասունը, որոնց իշխողները՝ Մամիկոնյանները, ապա և Բագրատունիները գլխավորում են շաբարացիների դեմ ապստամբությունները, որոնց պատճառը լինում են միշտ ծանր հարկերը:

«Սասնա ծռեր»-ի պատմական միջուկը կամ վիպական խմորման կենտրոնը, սակայն, Արեղյանը համարում է IX դարի կեսերի Սասնո նշանավոր ապստամբությունն ու զրան հաջորդած եղբրական ցեղով զբվագները, որոնք նյութ են ծառայել ժողովրդական զրույցների և արժանացել պատմագիրների առանձնահատուկ ուշադրությանը:

Վիպական անձնանուններից ու նրանց արարքներից զնայով զնայի պատմությունը, Արեղյանը Գավթի ճշուղի գլխավոր հերոսների անուններն ու նմանակները հատկանշառնացված է գտնում հարկահանություն արիթմով 851—852 թվականներին Սասունում բռնկված ապստամբական կռիվների շուրջը, կռիվներ, որոնք իրենց ստեղծաբարձրական բնույթով նույնանում են «Սասնա ծռեր»-ի Գավթի ճշուղի վիպական գլխավոր կոնֆլիկտին:

Արեղյանը վիպական Գավթի, նրա հորեղբայրներ Ձենով Հովհաննի և Վերգոյի պատմական նախատիպերը գտնում է IX դարի կեսերի Սասնո և Տարոնի Բագրատո Բագրատունու որդիների Գավթի Աշոտի և նրա եղբորորդի Հովհաննի կերպարներում, պատմական անձինք, որոնք ղեկավարում են 852 թվականի ապստամբությունը և գտնում նրա նշանավոր հերոսները: Իսկ Գավթի ճշուղի վիպական գլխավոր կոնֆլիկտը, որին Արեղյանն իրավամբ տալիս է ստեղծական զուսավորում՝ կռիվն է հարկահանության համար, որը կազմում է 852 թ. ապստամբության բուն շարժառիթը: Վիպական գլխավոր զնայների ու պատմական նշանավոր իրադարձությունների բնույթի ու զրգարապատճառների, ինչպես նաև զրանք գլխավորող վիպական ու պատմական անձնավորությունների առնչությունները նույնացում են նմանությունները, այլևս կասկած չլինի կարող թողնել զրանց սերտ առնչության նկատմամբ, և Արեղյանն իրավացիորեն հավաստում է, որ IX դարի կեսերի Տարոնի և Սասնո պատմական իրադարձությունները կազմում են «Սասնա ծռեր» ժողովրդական վիպի էական պատմական միջուկը: Սա մի խոշոր հայտնագործություն էր՝ փաստերի համառ ու մանրակրկիտ բնութագրումներով ապացուցված, որն անկերպայրեն ընդունվեց ու արժանացավ հայագիտության մեջ:

Վնայի պատմական կորիզի հայտնաբերմամբ ստեղծվեց մանրակրկիտ Արեղյանը, այլ վիպական ու պատմական փաստերի մանրակրկիտ բնութագրումներով բայլ առ բայլ ցույց է տալիս այդ կորիզի ստեղծանական կեղևավորումը հետագա դարերի պատմական նշանավոր իրադարձությունների ազդեցության տակ: Արեղյանն հատկապես կանգ է առնում IX և հետագա դարերում Տարոնի և Սասնո հետ անմիջապես ազդեցող պատմական անցուղարձերի, անձանց ու իշխանությունների վրա, մասնավորապես Մրվանյանների (X դար), սելջուկյան արշավանքների (XI դար), Գավթի Անհողի մի ստեղծած լուսվա թագավորություն (XI դար), Թոռնիկի Մամիկոնյանի XI դարում ստեղծած Սասնո անկախ իշխանությունը, Թուրքերի դեմ մղած նրա հերոսական կռիվների ու նեկզ պսոնությունը, ինչպես նաև Սասնո իշխանության XII դարում հարևան արևելքի իշխանությունների, Խլաթի Շահի Արմենների հետ ունեցած հարաբերությունների, XIII դարում Սասնո անկախության անկումը և կաթիլ թագավորությանը ենթարկվելու վրա, թագավորություն, որին արդեն տիրում էին Եգիպտոսի (Մար) էլիզաբան մելիքները: Արեղյանը ցույց է տալիս, որ պատմական նշված իրադարձություններն ու զնայները վիպական իմաստավորումներով նստվածքներ են տվել վնայի պատմական միջուկի շուրջը, միջուկ, որ սկսվում է 9-րդ դարի Սասնո պատմությունը: Հաջորդ դարերը ազդել են միայն միջուկի կերպարանափոխության վրա, իսկ նախորդ դարերը արաբացուց տիրապետության ժամանակ համեմատաբար սակավ նյութ են տվել վնայի համար: Իսկ պատմական զնայների արձագանքները վնայում, ինչպես արդեն տեսնել ենք, Արեղյանը XIII դարից հետո չի գտնում, այն արդարացի համոզումով, թե սկսվե... էական մտնում է իրեն հիշողություն մինչև 13-րդ դարը կապարկած զնայերի»:

Պատմական փաստերի այս համառ բնութագրումն է Արեղյանին հնարավորություն տալիս համեմատելու «Սասնա ծռեր»-ի վիպական զնայներն ու հերոսներին կերպարները VII—XIII դարերի Տարոնի և Սասնո պատմական նշանավոր զնայերի ու անձնավորությունների հետ և սահմանելու վնայի և պատմության հարաբերությունը:

Իր որդեգրած տեսական զնայներով մեջ իրար բերելով պատմական ու վիպական համապատասխան փաստերը, Արեղյանը գալիս է այն ընդհանուր հետևություն, որ վնայի բուն պատմական մա-

1 «Ազգագրական հանգես», XV դիրք, Թիֆլիս, 1907, էջ 23:

սը Գավթի ճյուղն է, որը կազմում է «Սասնա ծռեր»-ի վիպական կենսությունը:

Վեպի և պատմության համեմատությունները կատարելիս Արեղյանը գտնում է, որ ա «Բաղդադի խալիֆան վեպի մեջ նույն զերն է կատարում, ինչ որ պատմության մեջ»։ Միայն Գավթի ճյուղում նրան փոխարինել է Մարա Մեկիբը, որը հետագա դարերի Եզրիտոսի (Մար) էլություն հարստության պատմության հիշողությունների արդասիր է:

բ) Խալիֆայի զորավար թշնամի ու դաժան Բուլայի հիշատակն ու զերն է վերապահված վեպի Բաթմանա Բուլային, որին Մարա Մեկիբը հանձնարարում է սպանել պատանի Գավթին:

գ) «Հաւրկանաճուրյան կոիվը վեպի մեջ ևս, ինչպես պատմությանը, բռնում է առաջին տեղը սասունցիների և Բաղդադի խալիֆայի (Մարա Մեկիբի) հարաբերության մեջ»։ Այսինքն վեպի և պատմական անցուղարձերի սոցիալ-պատմական շարժառիթները նույնանում են, և վեպը գտնում է պատմական բուն շահագրգռությունների գեղարվեստական անդրադարձումը:

դ) Քեպես վեպում մոռացվել է հարկահանների անունը, սակայն Մարութա վանքի ավերող հարկահան Կուղ Բաղինի կամ Բաղինի անվան մեջ Արեղյանը նշմարում է Մրվանյան հարստության հիմնադիր Ամիրի Բաղ ամիրայի անվան հիշատակությունը, որ ավերում է Տարոնը և Մշո եկեղեցում սուկալի կոտորում հոգեորականներին: Նոր կոտորածների հեղինակի անունը դուրս է մղել հեին և բուն է նրա տեղը:

ե) «Վեպի գլխավոր հերոսը՝ Գավթի, դա Գավթի Բագրատունին է», որն հավանաբար, մեծ սխրագործություններ է կատարել և զոհու իր կենդանության օրոք նյութ է ծառայել ժողովրդական զրույցների, որտեղից էլ նրա «Գավթի արքա» կամ պարզապես «արքա» կոչումը:

զ) Ձենով Հովհանը հիշողություն է հուսթեցի Հովհանի, որը կղել է Գավթի Բագրատունու հորեղբորդին և մեծ ժողովրդականություն է վայելել: Նա վեպում մոռավորապես նույն ազգակցական զերն է կատարում, ինչ պատմության մեջ, դառնալով Գավթի հորեղբայր, մեծ եղբայր կամ բեռի:

է) «Գավթի և իր եղբայրների գերությունը Մարա Մեկիբի մոտ հիշողություն է պատմական Աշուտ, Գավթի և Հովհան Բագրատունիների գերությունը: Միայն վեպը բնականաբար, իր հերոսին մասնով հասակում է դնում գերություն մեջ»:

Մարա Մեկիբի հորից Գավթի ազատվելը Ձենով Հովհանի օգ-

նությունը՝ Արեղյանն իրավացիորեն արձագանքն է համարում պատմական Հովհանի՝ գերյալ հորեղբորդիներին ազատագրելու կատարած փորձի:

Այնուհետև, Մարա Մեկիբի և Գավթի միջև կապը Արեղյանը արձագանքն է համարում արար հարկահան Մուսեի և Գավթի Բագրատունու հորաբող ամուսնության, «Յասն Վերջ» երկրորդության մակերդով անունը՝ Աշուտ Բագրատունու և Վիգեն իշխանի անունների և Սասունը ելաթի գերիշխանությանը հանձնելու հիշողության, և այլն:

Անկախ այն հանգամանքից, որ վերջին համեմատությունները, մասամբ և մի երկուսը, որ հարկ շահարեցիք հիշատակելու, սակավ համոզի: Են, այդուհանդերձ Արեղյանը հիմնականում ճիշտ է սահմանում «Սասնա ծռեր» վեպի՝ պատմական անձանց ու իրադարձությունների հետ ունեցած հարաբերությունը: Եվ կարևոր այն է, որ նա հայ բանագիտության պատմության մեջ վերջնականապես կորոգանում է որոշել «Սասնա ծռեր» վեպի գոյացման բուն պատմական ժամանակաշրջանն ու ղեպերը: Գրանք IX—XIII դարերի Սասնա և Տարոնի նշանավոր իրադարձություններն են՝ տեղական իշխանությունների ու ժողովրդի՝ արքա, թուրք, սելջուկ հարուստահարիչների ու ասպատակիչների դեմ մղած հերոսական կռիվները, որոնք զլխավորել են Սասնա և Տարոնի Բագրատունի և Մամիկոնյան իշխանները: Արեղյանն, ահա, «Սասնա ծռեր» վեպը հիշյալ ժամանակաշրջանի և մասամբ նախորդ դարերի պատմական նշանավոր անցուղարձերի վիպական-գեղարվեստական արտացոլումն ու ընդհանրացումն է համարում, վեպ, որ հարագատ ճշգրտությունով վերարտագրում է Հայաստանի միջնադարյան պատմության սոցիալ-քաղաքական իմաստարանությունը:

#### 9. ՎԻՊԱՆԱՆ ԽԱՎԱԿՐՈՒՄԵՆԸ

Որքան էլ ճիշտ է բացահայտվում «Սասնա ծռեր»-ի պատմական միջուկը, այդուհանդերձ վեպը սուկ այդ միջուկով չի սպառվում: Եվ Արեղյանը հմտորեն շերտ առ շերտ բացում է վեպի միջուկն օղակող կեղևը, որքան յուրաքանչյուր շերտի տեղը ու ժամանակը, միջուկին հարելու նրանց զրգապատահանները:

Առաջին հետևությունն այն էր, որ «Սասնա ծռեր»-ն «իր բազալը շարերով ու հիմնական ոգով», շատ ավելի հին է, քան IX դարը: Եղբայրանդամն առաջին ապացույցը՝ Սանասարի և եղբոր



գրույցի մի բեկորը տակալվին «Աստվածաշունչ»-ում արձանագրված վեներու փաստն էր: Թե ինչպե՞ս է Սանատարի և Էդրոր զրույցը կապվել հետագայում Գավթի վեպին և ինչ կերպարանափոխության և հեթարկվելի — այս հարցերը պարզաբանելու համար Արեղյանը դիմում է բանասիրական պրպտումներին: Նա միջնագրայան պարպասում է: «Վակիդիի ՎՄիշարեթի և Հայաստանի նվաճման պատմությունը» գրքում հայտնաբերում է Խյաթի և Սալմաստի իշխան Ջարվանդի դուստր Տարունի և Սանատունի (= Սասուն) իշխան Սանատարի որդի Մուշի վերաբերյալ վիպական մի պատում, որն անվանում է «Տարունի վեպ»:

Հիշյալ գրույցը կենթարկելով բանասիրական և պատմական բնութագրերի, Արեղյանը ցույց է տալիս, որ «Տարունի վեպ»-ը ծագել է հայկական հին առասպելներից և միջնագրում հայերից անցել է արաբներին, կապվել արաբական արշավանքների հետ և պատմական դրչն ու երանդ ստացել: Արաբական միջավայրում գրույցն զգալի փոփոխություններ է կրել թե՛ ղեպերի ընթացքի և թե՛ ընդհանուր զաղափարախոսության տեսակետից, արձագանքելով արաբների արշավանքների քաղաքական միտումներին ու խլամիս:

«Տարունի վեպ»-ի և հայկական առասպելների ցնդակցությունն Արեղյանը ապացուցում է հորենացու մոտ պահպանված հին գրույցների և «Տարունի վեպ»-ի համեմատություններով: Նա «Տարունի վեպ»-ի առասպելական անձերի հարաբերության մեջ տեսնում է «կից զավառների միջնադարյան հարաբերության հրշակություն»:

Բացի այդ, Տարունի գրույցի մեջ Արեղյանը տեսնում է Խանդութի ճյուղի մի հնագույն պատում: Նա ցույց է տալիս Խանդութի ճյուղի և Տարունի գրույցի մի շարք նմանություններ (երկուսն էլ Խյաթի թագավորի դուստրերն են, երկուսն էլ կին զուցազներ են, երկուսն էլ պայման են դնում մրցահանդեսներում իրենց հաղթողների հետ ամուսնանալու, երկուսի փեսացուներն էլ (Մուշ, Գավթի) սկզբում պարտվում են, բայց հետո սիրվում, ամուսնանում, և այլն):

Հավաստելով, որ Տարունի գրույցը Խանդութի ճյուղի մի հնագույն պատման է, Արեղյանը գտնում է, որ «Սասնա Սանատարի որդի Մուշի անվանը, Սասնա 9-րդ դարի երկրորդ կեսից հետո, Գավթի արքայի ղեպի ազդեցության տակ, փոխանակել է Գավթի անունը»:

Արեղյանը «Տարունի վեպ»-ը համարում է մի վիպական միջնագրի օղակ վեպի Սանատարի և Գավթի ճյուղերի միջև, որ առասպելական անունները աստիճանաբար պատմականացել են, համարվել ու Տարուսացել վիպական նորանոր զրվագներով: Սակայն նա հավաստում է նաև, որ այդ առասպելական անուններն իրենց հերթին են պատմական են և կապվում են Հայաստանի ավելի վաղ շրջանի պատմական իրադարձություններին:

Այն վեպի տարրեր «Սասնա ծեփ»-ում: Արեղյանը հավաստելով ու վերականգնելով «Պարսից պատերազմ» ու «Տարունի պատերազմ» հայ հին ժողովրդական վեպերը, որոնց բնութագրումն արդեն տեսել են նախընթաց բաժիններում, այժմ վիպական ժառանգականության կապ ու զարգացում է սահմանում նշված հին վեպերի և «Սասնա ծեփ» նոր ժողովրդական վեպի միջև:

Նա ապացուցում է, որ «Սասնա ծեփ»-ը հին վեպի նոր կերպարանափոխությունն է պատմական նոր ղեպերի ազդեցությամբ, իսկ «Տարունի վեպ»-ը համարում է հին վեպից նորին փոխանցման մի պատում, որի մեջ Տարունի և Սասունի տեղ Մուշեղը դարձել է Սանատարի որդի Մուշ, որը Սասունի տեղն է, սեպ Տարունը ևս է մղված՝ դառնալով նրա նշանաձր կամ կինը: Ուրիշ խոսքով՝ վեպի զլխավոր կենտրոնը Տարունից արդեն փոխադրված է Սասուն և Մուշեղի հին վեպը միացած է Սասնա ավանդությանը: Իսկ թե ինչու է նման փոփոխություն կատարվել, Արեղյանը հիմնավորում է այն համոզել պատճառաբանությամբ, թե «հին Մուշեղը միանգամայն և Սասնա տեղն է և նրա նախնի երկու եղբայրների (իսկ՝ Մամիկ-Կոնակ — Գեմետրե և Գրսանե — Ս. 2.) Հայաստան գալու և Սիմ լեռան ստորոտում՝ Տարունում բնակվելու ավանդությունն ըստ էության միևնույնն է, ինչ որ Սանատարի և յուր եղբոր ավանդությունը»:

Առաջին մնացորդը հին վեպից նորի մեջ, որ նկատում է Արեղյանն, այն է, որ արդեն «Տարունի վեպ»-ում հին պարսիկներին փոխարինում են արաբները. այն նույնությամբ առկա է «Սասնա ծեփ»-ում, միայն ուշ շրջանի արաբներն են դրանք, այսինքն Բաղդադի արաբական խալիֆայությունը, որի հետ Սասնա ու Տարունի իշխանները մերձ հարաբերություններ են ունենել:

Ավելին, Արեղյանը նոր վեպի կենդանի օրինակով ցույց է տալիս, թե ինչպե՞ս պատմական ղեպերի ազդեցությամբ, վեպի հին տարրերը նորոգվում են և հին ստիկներին փոխարինում են նորերը՝ Ալյուսիս. «Բաղդադի խալիֆաներն, իբրև ավելի հին ժամանակի հի-

1 «Ազգագրական հանգես», XV դիրք, էջ 44—45:

շողովյուն, տեղի են տալիս նորագույն եզրիցուսի, Մարս մեխիբեն-  
րին: Սակայն բանը որանով չի վերջանում, հինը միանգամից տեղի  
չի տալիս նորին և ոչ էլ ետքն է միանգամից հաստատվում: «Ենչքան  
էլ հին հերոսին կամ ազգին,— զրում է Արեղյանը,— փոխանակում  
են նորերը, հինը երկար ժամանակ զեռ մնում է այս կամ այն  
պատմվածքի մեջ կամ մենակ, կամ նորի հետ միասին, մինչև հե-  
տը հետևեալ մեզ մղվելով միմեանում է և վերջը նույնիսկ մոռացութեան  
արժույթ: Այս տեսնում ենք նոր վկայի մեջ Քաղզազու խալիֆաների  
վերաբերմամբ. նույնը պետք է բնդունենք և պարսիկների համար»:

Հին վկայի մյուս մնացորդը նորի մեջ այն է, որ թշնամի պար-  
սիկ հերոսներից կտ մղված ձևով «Սասնա ծռեր»-ում հանդես է գա-  
լիս Շապուհ արքան՝ Շապի աբակ, կամ Շրպրեան Խորասական  
անվանաձևերով: Նա նույնպես նոր վկայում հանդես է գալիս իբրև  
սուրի գլխավոր հերոսի՝ Գավթի, հին վկայի Մուշեղի փոխանակի,  
բայց միայն որպես մրցարդ փահչկան: Իրոշ պատումներում Շապի  
արքա Փահչկանին փոխարինում են Քաղզազի խալիֆան և Մարս  
Մեխիբը, աշխենք սուխները հաջողությամբ փոխանակում են մի-  
մյանց պատմական դեպքերի ազդեցության տակ, ավելի հինը կտ  
է մղվում և միադրվում, նորերն առավել ցայտուն ձևերով են զըր-  
ուսողովում:

Հին վկայի մյուս մնացորդը՝ Մուշեղի և Պապ թագավորի հիշա-  
տակն է, որ առկա է «Սասնա ծռեր»-ում: Հին վկայի այդ երկու նշա-  
նավոր հերոսները նոր վկայում դարձյալ նեմամցել են և կտ մղվել,  
թեպետ Պապը մնացել է զեռև հայոց թագավոր, իսկ Մուշեղը՝ որ-  
պես Մշո տեր ու թագավոր:

Արեղյանը հին մնացորդ է համարում նաև Քեոի Քորոսին, որի  
անվանը IX դարու դեպքերի ազդեցությամբ մի բանի պատումնե-  
րում փոխանակել է Խոթեցի Հովանի անունը՝ «միայն դա այն ա-  
տիճանի զեռ կտ չէ մղել Քեոի Քորոսին, ինչպես Գավթի Մուշեղին: Քեոի Քորոս և Ձենով Հովան իրոր նույն գործող անձն են վկայի  
մեջ», միայն տարբեր անուններով:

Ինչպես արդեն ասվել է, Արեղյանը գտնում է նաև, որ «Քեոի  
Քորոսի կամ Քեաթորոսի անվան մեջ պահված է Քեոորոս Բշտու-  
նու հիշատակը: Այն հանդամները, որ Ձենով Հովանի անունը փո-  
խանակում է Քեոի Քորոսին, ցույց է տալիս, որ վերջինիս անունը  
9-րդ դարու երկրորդ կեսից առաջ արդեն մտած է եղել վկայի մեջ:

Հավանորեն նույնիսկ 7-րդ դարի վերջում, կամ 8-րդում, երբ պար-  
սիկների տեղ սկսել են մտնել արարները»<sup>1</sup>: Եվ Քեոի Քորոսն էլ իր  
հերթին կարող է փոխանակած լինել մի ավելի հին անվան:

Հին ու նոր վկայի հերոսների նմանությունը համեմատությամբ  
Արեղյանը ցույց է տալիս վկայի աստիճանական զարգացումն ու  
կերպարանափոխությունը այդ տեսակետից ևս և դալիս է այն եզ-  
րակացություն, թե այդպիսով «վկայի մեջ հետզհետե մտնում են  
նոր տարրեր, և նորը կամաց-կամաց կտ է մղում հինը,— Գավթիթը՝  
Մուշեղին, Ձենով Հովանը՝ Քեոի Քորոսին կամ Քեաթորոսին,  
Մարս Մեխիբը՝ Քաղզազու խալիֆային, Քաղզազու խալիֆան՝ հին  
Շապուհ արքային, Դուսրիկ կամ լոկ խաչապաշա Հայոց թագավո-  
րը՝ Պապին,— բայց մինչև այժմ այս կամ այն պատմվածքի մեջ  
մնում են զեռ հին անունները»:

Հերոսների անուններից գատ, Արեղյանը անդրադառնում է  
նաև այն փոփոխություններին, որին ենթարկվել է վկայը իր ամ-  
բողջությամբ ու բնույթով՝ համազգային վկայից վերածվելով նեղ  
շրջանակներում ամփոփված սեղանական վկայի:

«... Մենք տեսնք,— զրում է նա,— որ հին վկայից Մուշեղի  
հյուղը գտնում է նախ Տարոսի վկայ, որի հետ է և Սասունը. ադա  
վկայի գործողության տեղը փոխադրվում է Սասուն, և Տարոսը մի-  
այն երկրորդարար արվում է կաված Սասուն իշխաններին»<sup>2</sup>:

Եվ ոչ միայն այդ. Արեղյանը գտնում է նաև, որ «եւոր վկայն յուր  
սգով ու միջադեպերով կտ հին արձագանքներն է կրում յուր մեջ»:  
Միմյանց հետ բաղդատելով հին ու նոր վկայերի ամենանշանավոր  
միջադեպերն ու հյուղերը, նա հավաստում է, որ «Սասնասրի և յուր  
եղոր հաստատվելը Տավրոսի վրա նույնն է ինչ որ Մամիկ-Կոնակի  
պատմությունը. Սասնասրի որդի Առուծածև Մհերի որդի սարի  
պատմությունը նույնն է ինչ որ Մամիկ-Կոնակի սերունդ Վաչեի  
մասին պատմածը... Բակ Գավթի վեպն յուր էությունը նման է Մու-  
շեղի վեպին»: Ապա, հին վկայի պարսիկներից ու Կարապետի վաշերի  
ավերման և կրոնավորների կոտորելու միջադեպը զրեթե նույնն է,  
ինչ որ «Սասնա ծռեր»-ում Մարութա բարձր Աստվածածնի վրա  
Կոթազդեհի հարձակման և կրոնավորների կոտորելու կամ ու Կա-  
րապետի վրա Քաղզազի խալիֆայի հարձակման պատմությունը:  
«Հին Մուշեղի վկայի մեջ հայերը ենթարկվում են պարսիկներին և

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XVI դիրք, էջ 98:

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XVI դիրք, էջ 100:

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», XVI դիրք, էջ 101:



արբալորդին՝ Պապ պատանդությունից դառնում է Մուշեղի Հնտ՝ նստակու յուր հոր տեղը: Կոր վեպի մեջ Սասունն ենթարկվում է Մարա Մելիքին և Յ. Վերդուն է Գավթի Հնտ գերութունից դառնում՝ նստակու հոր բերդում. կոխվ անողն աշտանդ Մուշեղն է, այստեղ Գավթի՞: Մուշեղն ու Գավթիբը երկուսն էլ կոյի մեջ չեն սպանվում, այլ անզեն ժամանակ, անակիկալ հարձակումից: Մուշեղի մահվան վրեժն անում է գերութունից վերադարձող եղբայրը՝ Մանվելը, իսկ Գավթի մահվան վրեժը՝ որդին՝ Մհերը, որը նույնպես գերության բանասարկությունից Հնտու է գալիս պատժում հորն սպանողին և կոխում Կուլ Բազնի քուռների Հնտ՝ ապահովելով Սասունը, ինչպես Մանվելը կովելով պարսիկների զեն մ ապահովում է երկիրը:

Այս և մի քանի այլ զուգադրումներից Հնտու Արեղյանն իրավացիորեն եզրակացնում է, որ ընթր վեպը յուր խոշոր էական գրծերով շատ նման է Հին վեպին և մասնավորապես Մուշեղի Հյուզին. այնպես որ եթե նոր վեպի մի քանի անունների տեղ զենեք Հին անունները, որոնք, ինչպես տեսանք, ետ են մղված նոր վեպի մեջ, երկու վեպի նմանությունը նույնություն կզառնա և կմնան այնպիսի տարբերություններ, որոնք աննշան են՝:

Իսկ զգած տարբերություններն էլ Արեղյանը բացատրում է վեպի ապրած բանահյուսական կյանքով: «Այդ տարբերությունների մեջ,— գրում է նա,— պետք է շնշտել այն, որ Հին վեպի շատ մեղեր և միջադեպեր չկան նորի մեջ,— դրանք, հասկանալի է, մտացության են արված,— և ապա այն, որ նոր վեպի մեջ ևս կան միջադեպեր, որ Հին մեջ չկան»<sup>1</sup>: Այդ վեպի կարգի միջադեպերը Արեղյանը համարում է օղյուցազնական առասպելներ և գծերը, որոնք կարող էին և հետագայում մտաբ գործած լինել Հին վեպի մեջ, կամ եթե Հնի մեջ զգած էլ լինեին, անշուշտ դանց առնված կլինեին մասնենդիների կողմից և չլին հիշատակվի:

Այսպիսով, Արեղյանն առաջինը մեր բանագիտության մեջ գիտականորեն Հիմնավորում և ապացուցում է հայ Հին ազգային վեպի՝ «Պարսից պատերազմ»-ի գոյությունը և ապա նշում նրա վիպական-կառուցվածքային սերտ աղբյուրն ու նմանությունը «Մասունա ծոբը» նոր ժողովրդական վեպի հետ: Նա ապացուցում է միա-

ժամանակ, որ պատմական զեպերի ազդեցությամբ Հին ազգային վեպը աստիճանաբար կորցնում է իր համազգային բնույթը, հայտնակալանությունից անկման Հնտ նեղանում, տեղափոխում է և կապոված միմիայն Տարոնի ու Մամիկոնյանների Հնտ, նախկին թըշնամի պարսիկները փոխարինվում են նորերով՝ արաբներով, և վեպի գործողության հիմնական ոգին ու ուղղությունը դառնում է արաբների զեն մղած կոխվը: Այնուհետև IX դարի երկրորդ կեսերին Սասունում ու Տարոնում տեղի ունեցած քաղաքական զեպերի ազդեցության տակ վեպը հիմնովին կերպարանափոխվում է, իսկ հաջորդ դարերի ազդեցությամբ, մինչև XIII դար, զգալի փոփոխությունների ենթարկվելով իր հաստատուն կերպարանքն է ընդունում: Ուրեմն «Մասունա ծոբը»-ը «Պարսից պատերազմ»-ի կերպարանափոխությունն է, վեպ, որի մեջ «ապրում են... Հին վեպի տարերքն ու ընդհանուր ոգին»:

և. ՀԻՆ ՀԱՎԱԿԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՍՊԵՆԱԿԱՆ ՄՈՏՆՆԵՐԸ «ՄԱՍՈՒՆԱ ԾՈՒՆԸ»-ՈՒՄ

«Մասունա ծոբը»-ի վիպականացած պատմական բաղադրիչներին փոփոխությունն ու վարզացման բացահայտումները տակավին չլին ամբողջացնում վեպի զազափարական և վիպական կերպարանափոխության պատկերը:

«Մասունա ծոբը»-ի տարբեր պատմաներում առկա էին բազմաթիվ սյուժեներ, մոտիվներ, կերպարներ, հավատալիքային իրավություններ կամ վիպականացած պատմական կերպարներում գրեկորված էին այնպիսի գծեր ու հատկանիշներ, որոնք ժողովրդի զարգավոր կյանքի պատմական իրադարձություններով չէին մեկնաբանվում: Գրանց հիմքերն ու սկզբներն այս անգամ դիտարկանք որոնում ու գտնում է ժողովրդի հոգևոր կյանքի պատմության մեջ, մասնավորապես նրա առասպելաբանական պատկերացումներում ու Հնամենի հավատալիքներում: Այսինքն վեպի պատմական բնություններին Արեղյանը զուգադրում է նաև առասպելաբանականը, իր վերլուծությունները դարձնելով առավել ամբողջական ու հարուստ: Վեպը դիտելով ու բնկնելով ժողովրդի Հին առասպելական պատկերացումներին ու կենդանի հավատալիքների տեսազարտի վրա, Արեղյանը սուպուցուցում է, որ «Մասունա ծոբը»-ում տեղադրվել ու վիպական իրադարձությունների Հնտ ներառվել են Հին «Վիպասանք»-ի առասպելները նույն Հերթականությամբ, որպիսին առկա է Խորենացու մոտ:

1 «Ազգաբարձան հանդես», XVI դիրք, էջ 102:

2 Անց:

3 Անց:

Նա հին առասպելներէ մնացորդ է համարում վեպի այն միջադեպը, երբ Գառնիկ Որբիկը (=Գալիթ) չի սպանում Բաղդադի խալիֆային (=Մարա Մելիք), այլ կենդանի բռնում բերում է և դարձնում իր մօր ծառան: «Այնուհետև Բաղդադի խալիֆայի, Գառնիկ Որբիկի և սրա մօր համար պատմվում է նույն զրույցը, որ մեր հին «Վիպասանքի» մեջ առնում է վիշապ Արդավանի, Արտավազդի և Սաթենիկի մասին»:

Բաղդադի խալիֆան, ըստ Արեղյանի, փոխարինել է Արդավան-վիշապին, Գառնիկ Որբիկի մայրը՝ Սաթենիկին, իսկ Գառնիկ Որբիկը՝ Արտավազդին: Նա գտնում է, որ այս նույն առասպելի շարունակությունն ու վերջը սակաւ է մեր վեպում, քայն է Արտավազդի՝ յուր հօր անեծքի տակ փակվելը Մասիսի մեջ», որը նույնն է Գալիթ որդի Մհերի հօր անեծքով Տուպան բլրում փակվելու զրույցի հետ: Տարբերությունն հենց այն է, որ առասպելը պատմւում է ոչ թէ Գալիթ, այլ նրա որդու Մհերի մասին, իսկ միևնույն անձի երկփեղկվելը՝ հօր ու որդու միջև վիպական տարածված ու ընդհանուր հատկանիշ է:

Արեղյանը հատուկ վերլուծության ենթարկելով Սանասարի առասպելը, նորանոր փաստարկներով առավել խորացնում է ու մանրամասնում իր նախորդ եզրակացությունները Սանասարի անձի ու մղած կռիվի ամպրոպային բնույթի վերաբերյալ և ցույց տալիս, որ Սանասարը ոչ միայն իր ծնունդով է ամպրոպային, ծովածին, այլև իր արարներով: Սանասարի մղած կռիվը Պղնձե քաղաքի թագավորի դեմ, Քառասուն շնուղ Մամին ազատելու և հետև ամուսնանալու, ինչպես նաև ծովային վիշապի դեմ կռիվի և նրա բերանից թանկագին տկը հանելու միջոցնեպ, Արեղյանի իրավացի պնդումով, նույն մոտիվն է՝ ընդհանուր առասպելաբանության մեջ տարածված ամպրոպային բարի հեղույի ամպրոպի շար անձնավորման՝ վիշապի դեմ մղած կռիվ, որ տարվում է վիշապի կողմից բանտարկված գեղեցիկ աղջկա, կամ հախճապկմած թանկարժեք քարի (կրկունն էլ արեգակի փոխարենուններն են) ազատագրման համար: Այսինքն, դա նույն առասպելն է, ինչ պատմվում է Վառձազնի հայր դարձած դուռցակն Տիգրանի վերաբերյալ, որ կռվելով վիշապ Աժդահակի հետ, սպանում է նրան և ազատում իր քրոջը և գերում վիշապամորը:

Արեղյանն, այդպիսով, գտնում է, որ «հին առասպելները գրե-

թի ամբողջպես մտել են նոր վեպի մեջ, այն էլ նույն դասավորությամբ, որ ունեն այդ առասպելները մեր հին «Վիպասանքի» մեջ»:

Պատմական հիշողությունները մեկ կողմ թողնելով, Արեղյանը նոր վեպի մեջ մտած է համարում երեք առասպել.

1. վիշապ Աժդահակի դեմ Տիգրանի մղած կռիվ, քրոջ ազատագրման և վիշապամոր դերման առասպելը, որ նույնանում է Սանասարի առասպելին.

2. վիշապների դեմ Արտաշեսի որդի Արտավազդի մղած կռիվ, նրանց հաղթելու և վիշապների զլխավորի հետ մօր՝ Սաթենիկի սիրողության մասին առասպելը, որ մոտավորապես նույնն է, ինչ Գառնիկ Որբիկի Բաղդադի խալիֆայի դեմ մղած կռիվը, նրան գերիլը և մոր ծածուկ սիրողությունը նրա հետ.

3. Արտավազդի՝ հօր անեծքի հետևանքով Մասիսի վիհում փակվելու առասպելը, որ նույնանում է Մհերի՝ հօր անեծքով Տուպան բլրում փակվելու առասպելին: Վիպական հարակցման այդ երևույթը մի կողմից բացատրելով ժողովրդի ընդերքում առասպելներին հիմք ծառայող հին հեթանոսական հավատալիքների կենդանի դոչատելու մյուս կողմից՝ պատմական զրույցների համեմատությամբ գյուցաչնական առասպելների նորոգման և հարատեման իրողությամբ, Արեղյանը փաստորեն «Սանա ծառ»-ի օրինակով բացահայտում է հայ վիպական բանահյուսության մեջ առասպելական սյուժեների և կերպարների ժառանգական դարդացման կենդանի օրինաչափություններ:

Ճիշտ է, հավատարիմ մնալով վեպի պատմական մեկնաբանման իր զավանած սկզբունքին, նա հին առասպելները մեր նոր վեպի միջոցը, կենտրոնը, էական օսղմը չի համարում, այլ միայն վեպի մեջ արտաբերից հազրած եկամտա տարրեր, այդուամենայնիվ, պատմական վեպի համար առասպելական սյուժեների նման հարակցումներն ու զարգացումը համարում է միանգամայն քնական ու օրինաչափ: Եվ առասպելական սյուժեների, մոտիվների ու կերպարների այդ պատմական փոխակերպություններին ու զարգացման արմատները նա բացահայտում է վեպի կրօնա-բարոյա-խոսական աշխարհայացքի և գաղափարախոսության յուրահատուկ համապարտման մեջ:

Արեղյանը նշում է երկու տարրեր աշխարհմբրոնումների առկայությունը վեպում. մեկը հին հեթանոսականն է, մյուսը՝ համեմատորար նոր բրիտոնեականը: Ընդ որում այդ երկու գաղափարա-

<sup>1</sup> «Աղջազգական Հանգես», XVII դիրք, Թիֆլիս, 1908, էջ 22.



կան ուղղութիւնները ոչ մայն իբրար շնն հակասում, այլ լրացնում և փոխադարձաբար իմաստավորում են միմյանց: Հնից հեղզ առասպելները, որքան էլ կենդանի լինեն, այդուհանդերձ, շատ բանով արդեն մթնած ու անհասկանալի են մնում ուշ շրջանում ապրող բրիտանական կրօնն ընդունած ժողովրդի համար: Ուստի որպեսզի ժողովուրդը հավատա հին դուցազների արարքներին ու զորութիւնը, «այդ ամենը,— գրում է Արեղյանը,— պիտի պատմեր յուր կենդանի աշխարհայեցողութիւն համեմատ և դուցազներին պիտի կապեր յուր այժմյան կենդանի բրիտանական հավատքի հետ»: Ավելին, Արեղյանն առավել իբրական օրինաչափութիւն տեսողաշտի վրա է դնում ու քննում այդ խնդիրը, գրելով, թէ «ճիշտ ինչպէս հեթանոսական աստվածների արարքներն ու հատկութիւնները վերագրվել են բրիտանական սրբերին, և վերջիններս անվան տակ դեռ ապրում և հավատացվում է հեթանոսութիւնը, նույն ձևով և մեր վեպի դուցազները և նրանց առասպելները բրիտանական գրույն են ստացած և հարմարեցված նոր ժողովրդական գաղափարներին, ուստի և դեռ կենդանի մնում են մեր վեպի մեջ»:

Վեպի կրօնա-բարոյախոսական գաղափարների փոխակերպութիւնների և նրա տարբեր բնույթի հարակցումների քննութիւնը Արեղյանը բացահայտում է «Մասնա ծներ»-ի վիպական մի քանի կոնկրետ հատկանիշներ: Այսպէս, ժողովրդական վեպերում առհասարակ վիպական հերոս-դուցազունների արարքներին զօրավիդ են կանգնում աստվածներն ու գերբնական էակները, թե՛ անուղղակի և թե՛ անմիջական մասնակցութիւն ձևով:

Ժողովրդական վեպի՝ էպոսի այդ կարեւոր հատկանիշը առկա է «Մասնա ծներ»-ում, հարկավ, ոչ այն շափով, ինչպիսին էպոսի տիպար հանդիսացող «Իլիական»-ում կամ «Ոդիսական»-ում, այլ այնքան, որչափ թույլ են տալիս հայ ժողովրդի ուշ շրջանի բրիտանական ըմբռնումներն ու հին հեթանոսական հավատալիքները:

Արեղյանը բացահայտում է մեր վեպի հենց այդ յուրահատկութիւնը, այն, թէ ինչպէս հին դիցաբանութիւն հիման վրա ձևավորված դուցազնական-վիպական միջադեպերն ու հերոսները բրիտանական կրօնի տղիցութիւն տակ որոշակի փոփոխութիւնների ենթարկվելով պահպանում են թե՛ հին հեթանոսական գծերը և թե՛ նոր բրիտանական հավելումները:

Ինչպէս բոլոր դուցազներդութիւնների մեջ, այնպէս էլ «Մաս-



Մ. Արեղյան (1935)

1 «Ազգագրական հանգես», XVII դիրք, էջ 27:

Մարտի 1908 թ. Բյուս

« Աւարտելի դատիք »  
Կայ խոչընդոտում. վրայ ընտել.

1. Հայ գրադարանը Տիպոգրաֆիայի 1890-ական թվականներին ըստ ռուսացապետ շատ ցածր կիսադատարարի կողմից համարված հանկի կայ խոչընդոտումը բանադրված անօրինակ և չարացման գործի վերաբերյալ և չարացման գործի վերաբերյալ խոչընդոտումը և վրայ ընտել: Անհատներին բանադրված ու չարացմանը, Տիպոգրաֆիայի Բախմանը, Քրեական և Կրթական կոմիտեի կողմից « խոչընդոտումը » խոչընդոտումը « խոչընդոտումը »  
Այ կիսադատարարի վրայ:  
Անապատումը բանադրված  
Գրադարանը Արևելադարանը. Կր իր Կրեմլ

Մի էլ Մ. Արևելայի «Մասնագործական» «Մասնագործական» կայ խոչընդոտումը կիսադատարարի կողմից

կա տեղի-ում Հերոսների արարքներն ու գործերը նախասահմանված են ստանու կողմից և կատարվում են նրա գիտությունը ու հոգևորությունը: Աստված թեպետ անմիջապես չի մասնակցում վրդական գործողություններին, սակայն նա անհրաժեշտ անօրինակ է Հերոսի բարե և անարևոտները, հատկապես, երբ Հերոսը անմիջապես ազդեցություն կամ ազդեցակիցության ամենամեծը գիտնում է նրա օգուտները: Այդ պատճառով էլ ազդեցություն մեծ աղբ է բռնում վերջում և գերբնական գործության այն միակ բանալին է, որով Հերոսները սկսում են իրենց ծանր ու զոհարարի և անարևոտները եվ այդ ազդեցությունը ոչ թե կենդանական տեղիական են, այլ բուն ժողովրդական, բնույթով հեթանոսական, որպիսիք են այդ հին ծանր բանադրության սակազորությունները:

Վերջում ամեն ինչ կատարվում է գերբնական գործության կամքով՝ «Աստու հրամանով», բայց այդ գերբնական ու հրաշալիք, որ իշխում է մեր վեպի մեջ, հերթաբաժին հրաշալիք չէ. դա կապված է ժողովրդի կենդանի հավատքի հետ, ժողովրդի համար իրականություն է, ինչպես իրար եղել և ապրել են իրենք Հերոսները: Արևելայի երևան է հանում ժողովրդի կենդանի հավատալիքներով պայմանավորվող վերջական մեկ ուրիշ անսահմանափակություն է. Հերոսներն օժտված են ի ծնն սատվածային տարբերվումը. ուստի և աստված միշտ լսում և կատարում է նրանց խնդիրը: Հերոսների գերբնական սատվածային ուժը վերջում երկու կերպ է բացատրվում՝ հեթանոսական և քրիստոնեական աստվածներով:

Ըստ հեթանոսականի, Հերոսներն սատվածային ուժով են օժտված, քանզի ծովածին են, այսինքն բնության տարերբից, քրից են ծագել և ունեն դիցային բնավորություն. ուստի և նրանք միշտ չքով են զորածում, դանում հախ ու անխոցելի: Իսկ ըստ քրիստոնեական հավատքի՝ Հերոսները զորավոր են, որովհետև օժտված են սատվածային տարբերով. ձրի շնորհով: Վերջին հավատքով է, որ ցարդ հարատևում է, բացատրվում Հերոսների գերբնական գործերը ու արարքները: Բայց այդ խնդրի դեռ մեկ կողմն է: Արևելայի ցույց է ապրիս, որ թեպետ Հերոսները սատվածային շնորհով են զորածում, բայց դա նրանց չի դարձնում կրավորական, կամազուրկ, այլ զրանով հանգրծ նրանք անձնակամ են, ինքնիշխան, ազատ են իրենց գործողությունների մեջ և նույնիսկ մի քանի անգամ մեղանում են սատվածային կամքի դեմ:

«Վերջական հանդես», XVII դրք, 1908, էջ 28.  
225



«Շնորհքն ու անձնիշխանությունն... հաշտեցրված են մեր վիպի մեջ, բնատուր ժառանգական ուժը իրիկ մնացական շնորհք՝ հերոսի կամբքից դուրս է, իսկ ներգործականի մեջ կամքն ազատ է, որով հերոսները շնորհքի կամ աստվածային հրամանքի կույր խաղալիք չեն դառնում և ստանում են ներքին բարոյական արժանազորություն»<sup>1</sup>։ Ուրիշ խոսքով՝ դրվում է և ընդգծվում վիպական հերոսների կերպարների անհատականության զեղարվեստական խրնդիրը։

Չնայած հերոսների անձնիշխանությանը, այդուհանդերձ ներքանք մեծում են աստժու հպատակներ, որն ապացուցում են իրենց երզմնապատկառությամբ, իբրև «դուրսգաղնական բարոյական առարկություն»։ Իսկ նոր երզմնազանց են լինում, կորցնում են աստվածային շնորհքը և պատժվում։ Աղբյուս երզմնազանց է լինում Գավիթը, այդպես Մեծ Մհերն ու իր կիներ, որ և դառնում է նրանց մահվան պատճառ։

Վեպի հին դուրսգաղնական նկարագիրն առավել ամբողջացնելու համար Արեղյանը վեր է հանում մեկ ուրիշ հատկանիշ էս. վեպում աստված թեպետ հանդես չի գալիս, բայց նա ղեպչերիին ժանակացում է իր սրբերի ու հրեշտակների միջոցով։ Սրբերն ու հրեշտակները, որոնք հին հեթանոսական աստվածություններ են, մասնակցում են վիպական իրադարձություններին, օգնում կամ օժանդակում են հերոսներին, ճիշտ այնպես, ինչպես հունական էպոսում աստվածները։ Ուրեմն՝ մեր վեպը, այդ առևակետից կա՞ լիովին համապատասխանում է դասական էպոսի չափանիշներին։

Վեպում հանդես են գալիս Գարբիել հրեշտակը, որ փոխանակել է հեթանոսական Գրողին, և սուրբ Մարգրիտը, որ հայաց հեթանոսական հողմի աստվածության քրիստոնեական կերպափոխումն է։

Սուրբ Մարգրիտ բնավորության և Մասնա ծուրից նրա ստացած արագահաս օգնության ձևերի մեջ Արեղյանն ի հայտ է բերում ծուրի և ս. Մարգրիտից արարանական ցեղակցությունը, այն, որ հողմերի աստվածությունը միշտ էլ օժանդակել է ամպրոպային հերոսներին կամ աստժուն վիշաղամարտերի ժամանակ, որպիսի հարաբերությունը պահպանված է մնում ամպրոպային հերոս Մասնաբարի սերունդներին՝ հողմի աստվածությանը փոխարինող ս. Մարգրիտի ցուցարներած մշտական օգնության մեջ։ Այս զիջաբանու-

թյունը վեպում քրիստոնեաբար է բնորոշված, ուր ս. Մարգրիտ հանդես է գալիս իբրև քրիստոնեական սուրբ՝ ծուրի մուրազահաս օգնական։ «Բայց այդ քրիստոնեական իսկապես անունով է միայն քրիստոնեական, էությունը նույն հին հեթանոսականն է»։

Այսպես, բազմաթիվ փաստերով Արեղյանը բացահայտում է ժողովրդական վեպի գաղափարական ու բարոյախոսական մի շարք հատկանիշները, իբրև արտահայտություն այն դարաշրջանների, որոնց արտացոլվել են վեպում և որոնց միջով կենցաղավարել ու անցել է վեպը՝ իր վրա առնելով ավյուր պատմական ժամանակաշրջանների նյութական ու հոգեոր կյանքի գույունն ու պատկերը։

Այս է կական զծերով Արեղյանի դարգացրած հայ նոր ժողովրդական վեպի՝ «Մասնա ծուր»-ի գիտական այն ուսմունքը, որ ցարդ շարունակում է տիրապետող մեղու հայագիտության մեջ։ Եթե սե՛լ ժողովրդական վեպ»-ում Արեղյանը մի կողմից դեռական խորակին բնություններով ու փաստերի ընձեռած արտահայտական կուս հետևողականությամբ վերջնականացնում հիմնավորում է «Մասնա ծուր»-ի ծագման ու զարգացման ամբողջական պատկերը, զերբառն խոսքով ամբողջում դնում ու լուծում վեպի հետ կապված գրեթե բոլոր էական խնդիրները, ապա մյուս կողմից՝ նույնպես խորությամբ ու հետևողականությամբ նա ուրվագծում է հայ հին ու նոր ժողովրդական վեպերի գիտակերպական դարգացման դարափոք պատմությունը։

Եթե փորձենք ամփոփել Արեղյանի հայ ժողովրդական վեպի գաղափարական տեսությունը, ապա մոտավորապես կստացվի հետևյալ պատկերը.

III—IV դարերում պարսկական բնագլխատության ու ստեղծությունների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը հիմք է ծառայել «Պարսից պատերազմ» աղբյուրն մեծ վեպին, որը գրավոր ձևով պահպանվել ու մեզ է հասել Ազաթնգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Մերսուի Պատմությունների մեջ։ «Պարսից պատերազմ»-ը իր մեջ է ամփոփում Արշակունյաց Հայաստանի և Մասսաջան Պարսկաստանի միջև մղվող դարավոր կռիվների վիպական պատկերը և իր դրվազներով կապվում Արշակունի թագավորների և Մամիկոնյան սպարապետների անունների հետ։ Վեպը երկար ժամանակ ապրելով ժողովրդի բերանին, փոխանցվում է հետագա դարերին, պատմական նորանոր զեպերի աղբյուրություն ենթարկվում է փոխակերպություններին, հին հերոսները նա են մղվում կամ մոտացվում, նորերն են փոխարինում նրանց ու հա-

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», XVII դիրք, էջ 30:

ըրստացնում զեպրեբը պատմական նոր իրադարձություններով, և ի վերջո հայոց միասնական պետականության՝ Արշակունիների վերջնական անկումից հետո վեպի ստախանաբար կորցնում է իր միասնությունն ու համազգային բնավորությունը: Հայոց թագավորները զուրս են մղվում վեպից, և վերջինս տարբեր դրույցների ձևով համախմբվելով Տարոնի և Սասնո տերեր Մամիկոնյանների անվան և Տարոնում կատարված ուշ շրջանի պատմական զեպրեբի շուրջը, տեղայնացնում է, և «Պարսից պատերազմ» համազգային վեպը դառնում է տեղական վեպ՝ «Տարոնի պատերազմ»:

Ավելի ուշ՝ VII—VIII դարերի պատմական զեպրեբի՝ արաբական արշավանքների ու նրանց դեմ Տարոնի ու Սասնո իշխան Մամիկոնյանների մղած պայքարի ազդեցությունը վեպը նոր փոփոխությունների է ենթարկվում: Հին թշնամի պարսիկների փոխարինում են արաբները, հին հերոսների տեղ անցնում են նորերը, սակայն հերից ումանը (Մուշոզը, Բակուր) շարունակում են հարասեկն ու պատմական նոր սեր ու նպասակ ստանձնել: Հին վեպը զգալիորեն կերպարանափոխվում է և հաջորդ IX դարի՝ Սասնո ու նրա նոր տերերի՝ Բաղրատունիների բարձրացման հետ միաժամանակ, վիպական գործողությունները տեղափոխվում են Սասուն, կապվում Սասնո ու հարակից գավառների աշխարհագրական տեղավայրերի և պատմական նոր զեպրեբի ու հերոսների հետ: Վեպի վրա ուժեղ ներգործում են IX դարի կեսերի արաբների հարկահալնություն ղեմ մղած ապստամբությունները, հատկապես խոսիցի լեռնալանների հերոսամարտերը, որոնք զորեղ կերպարանափոխության են ենթարկում վեպը: Նոր զեպրեբի խոր ազդեցությունը պատմական նոր հերոսները ետ են մղում հին անուններին՝ Բուլի-Թի՛ Մուշեղին, Ձեռնով Հովանը՝ Քեռի Քորոսին (իմա՝ Քեռոզորոս Յուռուտուն), Մարա Մելիքը՝ Բաղդազի խալիֆային, իսկ նորերի հետ շարունակում են ետ մղված ձևով պահպանվել նաև հին անունները՝ Վեպը տեղայնանալով ու սերտորեն ազդեցվելով Սասնո հետ մեծ փոփոխությունների է ենթարկվում և դառնում է նոր վեպ՝ «Սասնո ծոեր»: Վերջինս ամբողջապես հին կերպարանափոխությունը լինելով հանդերձ, հին տարրերն ու քննահանուր ոգին պահել է իր մեջ, քանզի Սասունն անբաժան է եղել Տարոնից և Սասնո IX—XIII դարերի զեպրեբը նման էն եղել հին վեպի պատմաներին: Նոր վեպն աշխուհետ էն ենթարկվում է հետագա դարերի պատմական զեպրեբի ազդեցությանը և XIII դարից հետո այլևս էական փոփոխության չի ենթարկվում:

Նոր վեպը իր կյանքի զարավոր հույուումների ընթացքում՝ անտարբեր չի մնում վիպական բանահյուսության ևսլ տեսակների նկատմամբ: Են իր մեջ է ներառնում դուուցաղնական ամբողջական առասպելներ և առասպելա-դիցարանական այլևայլ դրավներ, որոնք երկալ շարունակում են պահպանվել զեռես հին-հեթանոսական հավատալիքներով ապրող ժողովրդի բերանին:

Այլ կերալ պատմական իրողությունների վրա ձևավորված վեպը աստիճանաբար ձևոք է բերում դուուցաղնական-առասպելական գծեր և իր վերջնական տեսքով դառնում դուուցաղնական-պատմական վեպ:

Բայց վեպը սոսկ վիպական կյանքով չի ապրում, այլ լինելով իրական կյանքի հանգամանքներով պայմանավորված ժողովրդական մտքի ու երևակայության զեղարվեստական արտագրություն, ակտիվորեն ներգործվել է հայ ժողովրդի զարավոր նյութական ու հոգեոր կյանքի տարբեր կողմերից, իր մեջ ներառել նրա բաղմագորյան կյանքի իմաստն ու բովանդակությունը և վերածվել ժողովրդի կյանքն ու հոգին զեղարվեստորեն արտացոլող մի իսկական հայելու:

Արեղյանն, ալգպիտով, ժողովրդական վեպը դիտում է իբրև մշտապես դարգացող ու փոփոխվող մի կենդանի մարմին, որը սերտորեն ընթանալով ժողովրդի զարավոր պատմությանը զուգընթաց, իր մեջ է ներառել նրա տարբեր զարաշրջանների հասարակական գոյի ու գիտակցության էական տարրերը և ենթարկվել վիպական շերտավորումների:

Ալգպետ, ահա, տակալին 1905 թ. Արեղյանը մեղանում զարգացնում է վիպական զրվաղների ու կերպարների անընդհատ փոխանցումների ու կերպարանափոխությունների ժառանգականության մի ամբողջ տեսություն, հայ վիպա-պատմական զարավոր բանահյուսության որոշակի իրողությունների ու փաստերի հիման վրա՝

«Հայ ժողովրդական վեպ»-ում Արեղյանը վիպական գեներտիկայի շրջանառության ժամանակակետերը դնում է III—XIII դարերում, էլինելով նշված ժամանակաշրջանի հայոց պատմության վիպական-բանահյուսական արզյունը հանդիսացած մեծ վեպերի («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», «Սասնո ծոեր») րեձևում այլալներից: Բայց միաժամանակ «Սասնո ծոեր»-ում «վիպասան»-ի հին առասպելների կերպափոխված սյուժեների ու կերպարների առկայության Արեղյանի կատարած հմտալից բացա-



հայտնմներն արդեն վիպական-սյուժետային կապ են հավաստում մի կողմից «Մասնա ծներ»-ի, մյուս կողմից՝ մ. Բ. ա. ստեղծված «Վիպականը» կոչված պատմա-առասպելական վեպի միջև, մի պարագա, որը և հետագայում հիմք սիտի տար Արեղյանին պատմա-սիպարանական կապ ու առնչություն սահմանելու տարբեր ժամանակաշրջանների վիպա-բանահյուսական արգասիքների միջև:

### 3. ՏԵՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԿԱ ՁԱԿՄԱՆՈՒՄԸ

«Հայ ժողովրդական վեպ»-ով Արեղյանը փաստորեն գրել էր արդեն հայ վիպական բանահյուսության զարգացման իր տեսության կայուն հիմքերը, որոնք առավել բնոգրկուն ու ավարտուն ձևով ամրոզացան 1933-ին հյուսած «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության մեջ:

Բացի այդ, հիշյալ աշխատությանը՝ Արեղյանը «Սասնա ծներ»-ին նվիրված զգևոր մի շարք կողմերով համարյալ ու հարստացնում է 1905-ին ավարտած «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության զլուխներն ու հիմնադրույթները: Համարմանն հիմք էին ծառայել մի կողմից 1905-ից ի վեր վեպի նոր դրսած պատմմանը, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները, հայագիտական նոր հետազոտություններն ու օտար սիկրետները:

Ամենակարևոր նրբությունը, որ բերում է այս նոր հետազոտության մեջ Արեղյանն այն է, որ առանձին զլուխներ է հատկացնում «Մասնա ծներ»-ի զեղարվեստական հատկանիշների քննութանը<sup>2</sup>: Այստեղ շուշափվում են վեպի զեղարվեստական այն կողմերը, որոնց նախորդ հետազոտությունների մեջ Արեղյանը բնավ ուշադրություն չէր դարձրել: «Մասնա ծներ»-ի արվեստի յուրահատկությունները վերլուծելիս նա հելնում է վեպի բուն զազափարական բովանդակությունից, որը և պայմանավորում է նրա կերպարների բույնն ու սյուժետիկան: Այսպես, «Մասնա ծներ»-ի կենրոնական հերոսների զազափարական կերպավորման առաջին յուրահատկությունը Արեղյանն համարում է անձնավորության պատմական դերի շափա-

զանցումը և նրա իդեալականացումը: Հերոսի մեջ ժողովուրդը դնում է իր հավարական ուժը և նրան դարձնում իր ձգտումների ու իղձերի իդեալական մարմնացումը: Ահա թե ինչու, թեպետ վեպի սյուժետային ցանցի մեջ կարևոր տեղ են բռնում մարտը, հերոսի ամուսնայրույթը և մտնված վեբժնագրությունը, այդուհանդերձ, աշխատավոր ժողովրդի՝ դուրսգրության ձգտումն ու իղիար պատմաբանը և ու ավարտությունը չեն, այլ խաղաղությունը, խաղաղ կյանքի ձգտումը: Եվ մարտի սյուժետն վեպում իմաստավորում է հենց այդ խաղաղության տենչի գաղափարով: Հերոսն ստիպված է կռվում, որովհետև թշնամին խանգարում է նրա անդրբն ու աշխատանքը և նա մարտի է հելնում, որպեսզի վանի թշնամուն և ապահովի իր խաղաղ կյանքն ու աշխատանքը:

Վեպի այս զեղարվեստական ու զազափարարանական ճշմարտությունն է, ահա, բազմաթիվ օրինակներով ու դիպուկ բնութագրումներով բացահայտում Մանուկ Արեղյանը:

Խոսելով վեպի զեղարվեստական այլ արժանիքների մասին, դիտնականն առանձնապես կանգ է առնում գործողության զինամիկ զարգացման, դրա ընթացքի լարվածության, վիպական պատկերավոր նկարագրությունների ու դիպուկ արժամատույնների, վեպն ավանդող բանասաց-վիպասանների գործողությունների առարկայական բնթացքին շմջամտող, առան ու արտաբուսա անտարբեր վիպական ոճի վրա, դրանց միջոցով բացահայտում ու հավաստում «Մասնա ծներ»-ի պարզ ու բնական, միաժամանակ խոր ու տպավորիչ, բարձր արվեստը:

«Մասնա ծներ» վեպի իր դասական ուսմունքը, Արեղյանը ետյժն այդ 30-ական թվականներին փորձում է զարգացնել նաև սոցիալաբանական մեկնակետերով:

Տուրք տալով ժամանակի բանագիտության մեջ իշխող ծայրահեղ սոցիալաբանական մտայնությանը, Արեղյանը Վ. Մելիք-Օհանջանյանի հեղինակագրությանը «Մասնա ծներ»-ի առաջին հատորի ներածության մեջ գտնում է, թե «Մասնա ծներ»-ն «սիկրետային աղբյուրական վեպ է, կղել—իշիլ է դուրազախական միջավայրը, վերջնականապես «ժողովրդականացել», սիրվել ու պահպանվել դուրազու խրճիթում և հասել նույնիսկ մեր օրերը»:

Նա վեպի դարավոր զարգացման, պատմական տարբեր ժամանակաշրջանների խավավորման իր տեսության փորձում է հազ-

<sup>1</sup> Մանուկ Արեղյան, Երկեր, հատ. Ա, Հայ վիպական բանահյուսություն, 2092-94 հրատարակչ., Երևան, 1966:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 457—478, տե՛ս «Վեպի սյուժետիկան և «Արվեստը» զլուխները:

<sup>3</sup> «Մասնա ծներ», խմբագր. պրոֆ. դր. Մ. Արեղյան, աշխատակցությանը Վ. Մ. Օհանջանյանի, Ա. հատոր, Պետհրատ, Երևան, 1936, էջ 5:

ցընել նաև սոցիալարանական զգեստ, օրնգելով, թև վեպն ապրել է նաև սոցիալ-դասակարգային կյանքով և իր վրա կրել է տարբեր դասակարգերի գոյի ու գիտակցությունների կնիքը: Վեպի այդ կարծեց-յալ սոցիալարանական դարգացումը Արևիկյանը որակում է իրրև յուրահաստակի դիալեկտիկական շարժում, որի մեջ «պարզ երևան են գալիս մեր վեպի ներքին հակասական ձգտումներն ու կողմնաբաշտ կողմերի անցումը մեկը մյուսին: Ակզրնապես ազնվականության վեպն անցնում է գյուղացիներին... և դառնում է գյուղական վեպ, որի մեջ իշխում է աշխատավորության ոգին ու իդեոլոգիան, նրա հակապատերազմական ձգտումները»<sup>1</sup>:

Արևիկյանի այս մեկնակետը արտահայտությունն էր ուսու նախորդ ու ժամանակակից բանագիտության մեջ արժանավորված էպոսը Ֆեոդալ-ազնվականական բանաստեղծություն համարելու տեսակետին<sup>2</sup>, որի հեղինակներն ու համարողներն էին Կելզմուլայալայից ու Վա. Միլլերից սկսած մինչև Կրավչով ու Մարսիո Գորկի:

ժողովրդական վեպի<sup>3</sup> և առհասարակ բանահյուսական որևէ ժանրի հեղինակությունը սոցիալական որոշակի դասակարգի հետ կապելը գիտականորեն ու պատմականորեն չի արդարացվում, բանկի բանահյուսական ստեղծագործությունները ժողովրդի մարդկանց վիպասանների ու երգիչների հեղինակություն են, որ դարերի ընթացքում տեղից-տեղ և սերնդից-սերունդ ավանդվելով փոփոխվում են, վերամշակվում ու վերածվում համաժողովրդական ստեղծագործությունների: Դրանք, ապրելով դարավոր բանահյուսական կյանքով, իրենց մեջ արտացոլում են ոչ թե սոսկ մեկ դասակարգի քաղաքական-սոցիալական շահախնդրություններն ու դասափարախոսությունը, այլ վեպը կամ դրոյսը դարերի ընթացքում վերամշակող ժողովրդի սոցիալ-քաղաքական նկատառումները, նրա պատմականորեն արդարացի իդեալներն ու ձգտումները:

Հետևաբար, ժողովրդական վեպի և գրույցի ստեղծագործումը նեղացնելով կապիլ մեկ խալի կամ դասակարգի սոցիալական մի-

<sup>1</sup> «Սասունցի Գավիթ», Հայ ժող. էպոս, բիրիթորաֆիա, պրակ առաջին, կազմեցի Մ. Բարսյան և Ս. Միքայելյան, Երևան, 1939, էջ LXXI:

<sup>2</sup> Հմմտ. В. А. Келзюла, Курс истории русской литературы, часть I, кн. 11, М., 1911, էջ VI—VIII. В. Миллер, Очерки русской народной словесности, том III, М., 1924, էջ 27—29. «Литературная энциклопедия», том II, М., 1929, էջ 16—18. Р. Ульфович Зюкович «Рубинштейнские сказки» «Сербский эпос», редакция исследования и комментарий Н. Крацова, Академия, 1933, էջ 15 և այլուր, М. Горький, Собр. сочинений, том 27, М., 1953, էջ 308 և այլուր:

չափայրի, նրա նեղ դասակարգային շահերի ու դասափարախոսության, կամ մեկ դասակարգից մյուսին փոխանցվելու հետ՝ դիտականորեն իրավացի չի կարող լինել: Ահա թե ինչու հիշյալ տեսակարծանքում բննագիտություն<sup>1</sup>, հաճախ ժայռահեղ անարդարացի պնդումներով ու մեկնաբանություններով: Այդ տեսակետն արժարժող գիտականներն իրենք ևս լռելյայն կամ բացահայտ խոստովանություններով սկսեցին աստիճանաբար հրաժարվել իրենց կարծիքներից<sup>2</sup>: Արևիկյանը, որի 1906—1908 թվականներին տպագրած «Հայ ժողովրդական վեպը» դասական աշխատությունը դեռ էր սոցիալարանական ժայռահեղ մեկնաբանություններին, և «Սասնա ծռեր»-ի ազնվականական ծագման ու սոցիալական փոխանցման պնդումը սոսկ ստոր էր ժամանակի ընդունված կարծիքներին, հենց 1939-ին հրատարակած իր «Սասունցի Գավիթ» մատենագրության» բուսերեն թարգմանության մեջ հրաժարվում է վեպը ազնվականությունից գյուղացիությանը փոխանցվելու իր նախորդ տեսակետից, որ առկա էր նշված աշխատության հայերեն բնագրում<sup>3</sup>:

Նույն այդ մատենագրության մեջ նա բացահայտում է «Սասնա ծռեր»-ին և հայտը հին վեպերին ու առասպելներին յուրահաստակ մի ընդհանրական հատկանիշ, պայմանավորված հայ կյանքի դարավոր պատմության յուրահաստակությամբ: Դա օտար հարստահարիչների զեմ հայ ժողովրդի ազգային ինքնության, ազատության և ինքնապաշտպանության համար մղած դարավոր կռիվների թեման է, որ արտացոլվել է մեր վիպական բանահյուսության մեջ, ամենավաղ հուշարձանից՝ Հայկի առասպելից սկսած մինչև վերջին ամենամեծ ներք՝ «Սասնա ծռեր»-ը:

<sup>1</sup> «Правда», 15 нояб., 1936 г.

<sup>2</sup> Ներք. Մի Լեակցիոն Յեթրայի զեմ, «Ներքային Հայաստան», 1937, № 71: «Սասունցի Գավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Հ. Մերչյալ առաջաբանը, Երևան, 1939: Հ. Մամիկելյան, Էպոսի ժանրային առանձնահատկությունները և հայ ժողովրդական վեպը, «Սասունցի Գավիթ», Երևանի պետհամալսարանի հրատարակչության, Երևան, 1939, էջ 39—55:

<sup>3</sup> Ուսու բանագիտության մեջ աղբյուրի են, որքանի, Յու. Սոկոլովը, ն. Կրավչովը և որիներ: Հմմտ. Ю. М. Соколов, Русский былинный эпос, «Литературный критик», 1937, № 9, «Русский фольклор», М., 1940. II. Н. Крацова, Идейное содержание сербского эпоса, см. «Славянский фольклор», М., 1951, էջ 303:

<sup>4</sup> ՏՊՎ. «Даваид Сасунский», Юбилейный сборник посвященный 1000-летию эпоса, изд. Армафа, Ереван, 1939, էջ 93:



Կենդանի գոյատևող հայ վիպական բանահյուսության մյուս տեսակը, որ Արեղյանը դարձնում է ուսումնասիրության հատուկ առարկա, վիպական երգերն էին: Գրանց հետազոտությանը նա ձևափոխում է լիներալ դարձյալ 30-ական թվականներին «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության անշուք մասը<sup>1</sup>:

Հայոց հին գրականության և վիպական բանահյուսության ընձեռած ավայաների հիման վրա, Արեղյանը առաջին անգամ հայ բանագիրտության մեջ առաջադրում է և լուծում մի շատ կարևոր խնդիր՝ այն, թե 1- «Որո՞նք են մեր գրականության մեջ այն սկզբը՝ նախ և վիպական տարբեր, որոնք ծագել են կոնկրետ եղելությունների անմիջական արձագանքության տակ և որոնցից հետագայում օգտվել են վիպասանները մեծ վեպերի համար», և 2. թե «Ենչպիսի աստիճանական զարգացումով բառ բովանդակություն և ըստ ձևի... պատմական և վիպական երգեր մեր գրականության մեջ հետզհետև մտտեցել են, դիցուք, «Սասնա ծռեք»-ի վարիանտներից մեկին»: Ուրիշ կերպ ասած, առաջ է բաշխում հայ վիպական բանահյուսության զլխավոր տեսակներից երկուսի՝ վիպական երգի ու վեպի սկզբնավորման ու աստիճանական զարգացման խնդիրը:

Վիպական երգերի կազմավորման նախնական տարրերը, Արեղյանն համարում է «լայնաց բանաստեղծությունը» կամ լալիքի երգերը, որոնք կատարվել են սոք հանդեսներում արվեստավոր կին սոցիալապետների՝ ձայնարկուների կողմից, հասկապես թաղավորների և այլ նշանավոր անձնավորությունների կոթի ժամանակ: Եվ քանի որ ողբը երգով ու նվագով է կատարվել, ուստի և «կոթի երգեր են հորինվել ու տարածվել»: Գրանք եղել են վիպական ժամանակակիցում դրից ու գրականությունից զուրկ ժողովրդի՝ «միակ պատմական հիշատակարանները»: Մեռելների կոթի երգերը և ողբերն սոցիալապետական բովանդակել են հանդուցալի կենսագրությունից վերցրած նշանավոր եղելությունները, բանաստեղծական մշակման, որը ծաղկեցնման ու շարժականացման ենթարկված: «Լայնաց բանաստեղծություն» վիպական ծաղման համարտի, հին վիպություն-

ներից է Քուզանդի ավանգամ Գնելի սպանության ողբի պատմվածք, բառ որի «Գնելի սպանման վեպը հենց նրա հուզարկավորության կոթի ժամանակ է հորինվում, երգվում և տարածվում»: Այդ ամենի վրա Արեղյանն հիմնավորում է վիպական բանահյուսության ծաղման մի հույժ կարևոր դրույթ, այն, որ «վիպական պատմական երգերը... մասամբ ծագած են հենց այդպիսի կոթի երգերից, «լայնաց բանաստեղծությունից», այն էլ վիպված եղելություններից անմիջապես կամ բիշ հետո... Այդ երգերն անմիջական բանաստեղծական հիշողություններ են կատարված դեպքերի: Գրանց հեռ միաժամանակ և պատմվել են եղելությունները, և երգ ու գրույց միասին են ծաղկել»<sup>2</sup>:

Վեպերի առաջացման «երկրորդ և ավելի կարևոր տարրը, աղբյուրները» Արեղյանն համարում է զուսանների վիպական, պատմական երգերը, որ ասվել են հնուց ի վեր խնջույքների, ուրախության հանդեսների և զինարքուրի ժամանակ: Գուսանները, որ բայի սիրտ և խրախուսանքի երգերից, երգել են նաև վիպական երգեր, այդպիսով կոչվել վիպասաններ, պալատական և ազնվական խընջույքներին վիպել են, ըստ Արեղյանի, ոչ միայն իրենց հովանավոր թաղավոր կամ իշխանի համար, այլև երգել են հենց նրանց իրենց, փաստաբանելով նրանց իբրև բաշարի հերոսների: Գրա համար զուսանները ծաղկեցնում, մեծացնում էին հովանավորողների արարները, հարկավ, հիմնվելով զխավորապես իրենց տեսանքներ ու լուսամների վրա»<sup>2</sup>:

Բացի հովանավոր հերոսներից, վիպական երգերում փառաբանվել են նաև նրանց նախնիները, որին հիմք են ծառայել հին ավանդական դրույցները, կոթերի ու վիպական երգերը: Եվ այդ հին զուսանական-վիպական երգերը Արեղյանը զիտում է իբրև ֆեոդալական ժամանակների ազնվական կենցաղի ու բարբի բանաստեղծական արտահայտություն, երգեր, որոնցից էլ «անպայման... իբրև սկզբնական աղբյուրից, ծագում է «Պարսից պատերազմ» վեպի մի որոշ մասը, ուր «միասնական կերպով պատմվում են Արշակի ու Վառանի հաղթությունները»:

Արեղյանն, այդպիսով, վեպերի նախնական տարրերը, բաղձավել խոսուն փաստերով հիմնավորված, համարում է լայնի և

<sup>1</sup> Ուսումնասիրությունը ապագրվել է երկու անգամ. մեկ՝ 1940 թ. ՍՍՏՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» № 4—5-ում (էջ 45—70) «Վիպական երգեր» խորագրով. մեկ էլ՝ 1966-ին՝ Արեղյանի «Երգեր»-ի Ա հատրում (էջ 487—513)՝ նույն վերնագրով, իբրև հայ վիպական բանահյուսության պատմական զարգացման վերջին՝ հիզերորդ շրջանի արգասիք:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Վիպական երգեր, «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 49, նրկեր, հաս. Ա, էջ 491:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Վիպական երգեր, «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 52:

կոծի երգերը, իրենց հետ կապված գրույցներով, և այս գրանցով, ինչպես և կոնկրետ եղելություններով սնվող հին զուսանների վիպական պատմական երգերը: Թե ի՛նչ նկարագիր են ունեցել այդ հօրյա վիպական երգերը և պատմական ու վիպական զարգացման ի՛նչ աստիճանական փոփոխությունների են ենթարկվել դրանք, Արեղյանը բացատրում է առավել ուշ ժամանակներում ստեղծված համանման երգերով, որոնք և կազմում են մեր վիպական բանահյուսության տվյալ տեսակը՝ ժանրային բոլոր հատկանիշներով:

Առաջին հին վիպական երգը, որ հասել է գրավոր ավանդմամբ, վերաբերում է XIII դարին, այսինքն պատկանում է նույն վիպական շրջանին, ինչ որ «Մասնա ծոբը»-ն իր պատմականության զարգացման վերջին էտապում: Դա «Լևոնի երգ» կոչվածն է, որ հորինված է Կիլիկիայի հայոց Հեթում Ա թագավորի որդի Լևոնի թագավորների մոտ զերի ընկնելու և զերթոյունից ազատվելու առիթով: Պատմական եղելության և վիպական փաստերի համեմատությամբ Արեղյանը բացահայտում է այն տարբերությունը, որ արդյունք է պատմական զեպիի բանաստեղծական վերամշակման ու փոփոխության և վիպական հերոսի հասարակական շահագրգռություններով պայմանավորված միտումնավոր գաղափարականացման: Երգը զիտելով իր սոցիալ-քաղաքական միջավայրում և գաղափարով համարելով իր դարաշրջանի արդյունքը, Արեղյանը միաժամանակ հավաստում է «Լևոնի երգ»-ի ձևական նկարագիրը՝ նրա «այրենի շափով» նրկատող տներով հորինված լինելն ու բնարական-վիպական բնույթը:

Եվ այսպես, պատմական երգերի զարգացումը Արեղյանը իրավացիորեն կապում է կոնկրետ պատմական իրականության հետ, երբ XV դարից սկսած հայ անկախ պետականության անկման հետ հայ ազնվականությունը դադարում է կարևոր հասարակա-քաղաքական զեպի խաղալուց, «պակասում են նաև հայերեն լեզվով երգերը պատմական նշանավոր երևույթների մասին, և հին ավանդական երգերն էլ մոռացվում են»: Դրանով նա չի բացատրում, հարկավ, նոր պատմական երգերի ստեղծման ու գոյության հնարավորությունը, այլ հակասաբար, գտնում է, որ «այդպիսի հայերեն երգեր հորինելու արվեստն ու պահանջը չի վերացվում», և Տեր Գուլաստովի ու Լուիս Մելիքովի շրջեր հյուսված պատմական երգերի կոնկրետ օրինակով ապացուցում է դրանց հորինելու և պահելու ավանդության հարատևությունը:

Եվ այդ ամենից առաջ գլուղաջիական միջավայրում, քանզի

գլուղաջիությունը իր նահապետական վիճակի պատճառով առավել անանդապահ է գտնվում իր հին սովորությունների ու բանահյուսական մշակույթի նկատմամբ, այդ թվում նաև պատմական երգերի: Բայց քանի որ «երբ կյանքի մեջ տեղի չէին ունենում այնպիսի սեփական հասարակական մեծ դիպվածներ, որ իբրև նյութ ծառայեին նոր արժեքավոր պատմական երգերի», ուստի և գլուղաջիություն միջավայրում որևէ կոնկրետ կենցաղային դիպվածի առիթով հորինվում են փոքրիկ խաղեր, սիրվում ու տարածվում: Դրանք ևս Արեղյանն համարում է պատմական երգեր, քանզի հորինվել են «մի պատահած դիպվածի մասին», բայց միայն գլուղական պատմական երգ», որ ունի իր կենցաղավորման շատ նեղ, սահմանափակ շրջանը: Դյուղական այդ տեղական երգերը, Արեղյանի կարծիքով, «ծագումով ու արվեստով նույնն» են, ինչ Լևոնի վերության պատմական երգը: «Լևոնի երգ»-ի, ուշ շրջանի պատմական և դյուղական երգերի օրինակներով Արեղյանը ապացուցում է նրանց ընդհանրությունները՝ իբրև քնարական-վիպական երգեր, որոնք պատմական երգերի սկզբնական փոքր տեսակներ են» միայն, և որոնց զարգացման հետագա աստիճանը առավել ընդարձակ վիպական երգերն են:

Դրանցից Արեղյանն առաջինը բնում է «Մոկաց Միրզա»-ն և դրանում, որ՝ ա. այն «ֆեոդալական ժամանակի մի երգ է», և հետևյալում երևում է տողավերջի «են» (երբման «ին») միակերպ հանգիսից: Բ. «Գեո Բնարական-վիպական երգ է» և ունի լիրիկական կրկնակ. ց. մեծ երգ է և կազմված է ոչ թե հայ քնարական երգերին հատուկ հայրենի շափի երկատող տներով կամ ժողովրդական խաղիկ-քառյակներով, այլ այնտեղ տեղ է արդեն «այն վիպական շափը, ազատ ոտանավորը, իշխող ութվանկանի տողերով, որոնք ունենք և մեր հին առասպելները, հին ու նոր վեպերի մեջ». դ. «Երգը բաժանվում է 3—9 տողերից կազմված փոքր ճառվածներին, որոնցից հետո ասվում է կրկնակը»:

Այդպես, «Մոկաց Միրզա»-ի օրինակով Արեղյանը ցույց է տալիս հայ վիպական երգերի զարգացումը՝ պատմական փոքր երգերից զեպի ընդարձակ վիպական երգը: Եվ այդ ու միայն ձևական-գեղարվեստական, այլև բովանդակության և գաղափարի տեսակետից: «Մոկաց Միրզա»-ն զիտելով իբրև պատմական մեծ դիպվածի զեղարվեստական վերարտադրություն, որ համապատասխանում է մեծ վեպերի մեծ միջադեպի, Արեղյանը միաժամանակ հավաստում է, որ երգն իր մեջ ընդհանրացնում է պատմական այն իրողությունը:



նը, երբ «օտար բռնապետները, ամենահին ժամանակներից ի վեր, գանազան միջոցներով ոչնչացրել են ավել տեղական հայ ազնվականությունը»:

Վիպական երգի զարգացման հաջորդ աստիճանը Արեղյանը տեսնում է «Կարոս խաչ»-ի մեջ, ուր թեպետ դարձյալ կրկնակով ատկա է քնարական տարբը, սակայն երգն առավել ընդարձակ է ու զարգացած, հատվածներն ավելի մեծ են, կազմված 4—20 տողերից, սակավ բացատրությամբ «ին» անգրով վերջացրել: «Կարոս խաչ»-ի նորությունն այն է, որ ինչպես աղագուցում է Արեղյանը, «կազմված է սկզբնապես իսբարուց անկախ մասերից», այսինքն այն, ինչ հատուկ է մեծ վեպերին և որոշակի՝ «Սասնա ծռեր»-ին: Այդ երկու անկախ մասերից առաջինին, որ կրոնական զրույցի ձևովով առկա է դեռևս Ստ. Օրբելյանի «Պատմություն» մեջ, միացել է մի երկրորդ անկախ մաս, ուր պատմվում է մեծ վեպերում նկարագրվող և հայ կյանքում հաճախ կատարվող՝ այլազգիների կողմից եկեղեցիների կողպուտը: Այդ երկու մասերի հարակցում են բնորոշությունը, որ դարձել է մի ընդարձակ ու գեղեցիկ վիպական երգ, եկեղեցական միջավայրում ենթարկվել է որոշակի զարգափարականացման, դառնալով կրոնական երգ: Դրա էական զարգափարը կրոնական է, այն, որ եկեղեցին է հայ ազգի հովանավորը և, որ եկեղեցուն կամ խաչին դիպուկը «կապտուհատվի հենց երա զերենական զբրույթունից»: Անկախ հիշյալ զարգափարների հնությունից, Արեղյանն այլ փաստերով ապացուցում է, որ «Կարոս խաչ»-ը անդրադարձրել է Հայաստանի առավել ուշ շրջանի պատմական իրականությունը, երբ հայկական անկախության անկումով հայ ազնվականությունը լրիվ բարոյալքման ու քայքայման էր ենթարկված, և եկեղեցին հանդես էր գալիս իբրև ազգի հովանավոր ու միավորող:

Գաղափարական իմաստով «Կարոս խաչ»-ից հետո իբրև տրամաբանական զարգացման հետագա աստիճան՝ Արեղյանն համարում է Գրիգոր Նարեկացու մասին եղած պատմական երգերը, որը հանդես են գալիս աշխատավոր գյուղացիներ ու մշակները, որոնց իր հրաշագործություններով ժառանգում է Գրիգոր Նարեկացին: Այսինքն, այդ երգերում հերոս են դարձել Գր. Նարեկացին և նրան սրբազործող ժողովուրդը, իր ձեռումներով ու ցանկություններով: Ձեռակն-գեղարվեստական անուկեփեց Նարեկացու մասին երգերը սկզբնապես անջատ են եղել, որոնք հարակցվել են մեկ ամբողջության, մեկ անձի վրա երգված լինելու պատճառով, դիտ-

վելով իբրև մեկ անձնավորության հաջորդաբար կատարած արարքներ: Վիպական այդ հատկությունը, ինչպես նաև երգի ազատ ստանալու և անհանգ լինելը բնորոշ է նաև «Սասնա ծռեր»-ի պատումներին և դրանով մոտենում է նրանց: «Նարեկացի»-ն թեպետ կրկնակ շունի, բայց պարբերաբար կրկնվող բացականչությունների մեջ առկա է դեռևս քնարականության տարբը:

Վիպական երգի զարգացումը վերջին կատարյալ աստիճանը Արեղյանը տեսնում է «Ասլան աղա»-ի մեջ, որի սյուժեն թեպետ ընդհանուր վիպական բնույթ ունի, սակայն ամբողջապես «մշակված» և պատմված է ազգային ձևով ու գույնով, հարմարեցրած հայկական հավատալիքներին, նոր մշտադպեհի հարակցությամբ: Արտաքուստ լինելով միջնադարյան ֆեոդալական կյանքի ու կենցաղի արտահայտություն, ներքնապես Արեղյանն այն համարում է մտնված երևույթի հնագույն առասպելական պատկերացումներից մեկը, երբ մահը, ըստ հայկական հավատալիքների, դիտվել է իբրև կոխվ հոգեմտի զեմ, և երբ մեռնողը կարող է հոգեգործ լինել, եթև նրա հոգու փոխարեն մեկ ուրիշն ուզվան իր հոգին առաջ Առասպելական այս հավատալիքն, ահա, սյուժետավորվելով միջնադարյան ֆեոդալ-ազնվականության կյանքի բնորոշ գծերով, դարձել է ազնվական բնավորությամբ երգ, բայց ըստ Արեղյանի, հետագայում անցնելով գյուղացիությանը, զարգափարական նոր երանգ է ձևեր բերել և Ասլան աղային վերածել աշխատավոր մարդու կյանքի ու շահի համար մարտնչող հերոսի: Ուրեմն, վիպերը զարգափարական ընդհուպ մոտենում է «Սասնա ծռեր»-ին, ուր Գավթին արտահայտում է աշխատավոր ներքնախավիքի շահերն ու ձեզքումները: Ոչ միայն զարգափարական, այլ ձևով ևս «Ասլան աղա»-ն խիստ մոտենում է «Սասնա ծռեր»-ին: «Ասլան աղա» վիպերի մեջ Բնաական տարբ իսպառ բացակայում է, և շեղը պատմված է նախնական վիպական կրկնություններով: Վիպերի փոփոխականից մեկն ամբողջապես երգվել է, իսկ մյուսը՝ մասամբ երգվել է և մասամբ պատմվել: Հիշյալ երգի օրինակով էլ Արեղյանն հետևեցնում է, թե «վիպական երգերը, որոնք սկզբում ամբողջապես երգվել են, հետագայում վերածվում են երգ ու պատմրվածքի, այսպ, ինչպես «Սասնա ծռեր»-ի մեջ է, երգվում են միայն այն կատրները, որ հերոսներն էլ երգել են: Եվ վերջապես, ինչպես դարձյալ նույն «Սասնա ծռեր»-ի ուրիշ պատումների մեջ է, երգը վերանում է և իշխում է միայն պատմափոքը»:

1 Մ. Արեղյան, «Վիպական երգեր», «Տեղեկագիր», № 4—5, էջ 69, երկրի, հատ. II, էջ 512:

Վիպական բանահյուսության այս տարրեր բնույթի ու տարրերի ժամանակների փաստերը զենելով մեկ միասնական շղթայի մեջ, Արեղյանը փորձում է վերականգնել վիպական բանահյուսության, մասնավորապես վիպական երգերի և ժողովրդական ավանդական վեպերի զոյացման ու զարգացման հաղարամյա պատմությունը:

Նա հայ բանահյուսության վիպական որոշակի փաստերի հիման վրա ստեղծում է ժողովրդական վիպերգերի ու վեպերի ծագման ու տիպարանական զարգացման տեսությունը, որ ամփոփված են հետևյալ հինգ կետերում:

1. «Կատարված դեպքերի անմիջական ազդեցության տակ» ծագած յայտի ու կոծի, ինչպես և դուստնների սկզբնական պատմական երգերը վիպական այն նախնական տարրերն են, որոնք հորինված են կանոնավոր ոտանավորով, բաղկացած են մեկ կամ երկու երկատող տներից (բոյժ) և ունեն քնարական բնույթի կրկնակներու Գրանց մեջ պատմվում են տվյալ թեմայի տարրեր կողմերի մասին:

2. «Միմանցից անկախ յայդ երգերը... իրենց ընդհանուր կերպերնակով և նրգված նյութի նույնությամբ հարում են իրարու» և կազմում փոքր-ինչ ավելի մեծ երգ, մասերի թույլ կապակցությամբ («Լուսի երգը»):

3. «Զարգացման հետագա աստիճանի վրա վիպական երգերն ընդարձակված են և հարինվում են արզեն ազատ ստանավորներով», ինչպես մեծ վեպերը: Երգը զեռ բաժանվում է մեծ ու փոքր հատվածների, որոնք վերջանում են կրկնակով: Բովանգակությունը զեռ մեկ դեպքի պատմություն է, ինչպես «Սասնա ծռեր»-ի մեկ միջադեպ («Մեկաց Միրզայ»):

4. Հաջորդ փուլում արզեն երևան է գայիս «երկու տարրեր տարրերի զեղարվեստական հաբակցությունը», որ վեպերի կառուցվածքի տանձնահատկություններից է, որով առավել ընդարձակվում է պատմվածքը, և հարակցումը կատարվում է ոչ թե մեթենալարաբ, այլ նյութի վերամշակությամբ: Առկա է զեռ քնարական կրկնակը («Կարոս խաչ»): Նույն հարակցումը կատարվում է նաև տարրեր երգ-զրույցների հետ՝ հերոսի նույնությամբ և «տեղից-տեղ զնալու ընթացքով» («Նարնեկեր»)։ Այս զեպքում կրկնակ չկա, բայց պահպանվում է զեռ որչ քնարականությունը:

5. Եվ վերջապես վերջին աստիճանում, վիպական երգը զբրկվում է կրկնակից ու քնարականությունից, դառնում է մեկ ամբողջ-

չական երգ, կամ երգախառն պատմվածք՝ ազատ ոտանավորով, ինչպես «Սասնա ծռեր»-ը: Հարակցումը կատարվում է տարրեր, մասամբ ընդհանուր բնույթի զրույցներից, ինչպես «Սասնա ծռեր»-ում («Ասյան ազա»):

Գրանով պատմական-վիպական երգը աստիճանաբար մտնելում է «Սասնա ծռեր»-ին, որը շատ ընդարձակ շափերով զարգացած է ու հարակցված:

Երգերի նշված պատմական զարգացումը Արեղյանը համարում է երկար ժամանակի արդյունք և երգերից յուրաքանչյուրը՝ արգասիք զարգացման տարրեր փուլերի ու ձևերի:

Արեղյանի այս տեսությունը բանասիրական մշակվածությամբ, փաստերի տրամաբանական կառուցվածքով ու տեսական ոգով, հայ վիպա-պատմական բանահյուսության զոյացման ու զարավոր զարգացման մի նորագույն ուսմունք էր և մի այժեքավոր ներդրում՝ հայ բանագիտության մեջ: Այն նախ էր քրտցնելու հայ վիպական բանահյուսության զարգացման նրա պատմական անույթները:

Եթե «Սասնա ծռեր» վեպի ձևավորման ու զարգացման իր նախորդ տեսության մեջ նա բենեօլյան էր առնում վեպի պատմատասայելարանական բովանդակության զարգացումը, ապա «Վիպական երգեր»-ում արզեն նա առաջ է քաշում և հիմնավորում հայ վիպական բանահյուսության տիպարանական ու զեղարվեստական կողմերի ծագման ու զարգացման տեսությունը: Եվ այդ երկուսով նա ամբողջացնում է մեր վիպա-պատմական բանահյուսության նկի ու բովանդակության զարգացման գիտական ուսմունքը:

Այսպես, ուրեմն, հայ վիպա-պատմական բանահյուսության բանավոր կենցաղավարող նմուշները զուգորդելով զրավոր ավանդված հին բանահյուսական հուշարձաններին, Արեղյանը իրեն հատուկ խորաթափանցությամբ նկատում ու բացահայտում է բազմաթիվ ընդհանրություններ, արտաբին զեղարվեստական և ներքին զապարարանական փոխադարձ կապ ու աղերսակցությունները: Նա հայ վիպա-պատմական բանահյուսության տարրեր զարաջընդներին արդյունք հանդիսացող և տարրեր ձևերով հարատևող նմուշները զիտում է իրեն մի ամբողջություն և կենդանի պատմատիպարանական զարգացման փոխադարձ կապ ու աղերսակցությունները:

Ըստ այսմ էլ նա հայ վիպա-պատմական բանահյուսության զրավոր ու բանավոր ավանդված ողջ ժառանգությունը բաժանում է վիպական հինգ շրջանների: Երբանարածանան սկզբունքը մի կողմից խարխիվում է հայ էթնոսի սկզբնավորման ու նրա սոցիալ-



քաղաքական կյանքի պատմության, մյուս կողմից՝ վիպական բանաստեղծության տեսակների (համայնական ազդեց, առասպել, վիպական երգ, ավանդություն, վեպ) ու ազգագրական հասկացությունների ժազգման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների վրա:

Արեղյանի պարբերացման առաջին շրջանն ընդգրկում է հմայական զարբեներն ու առասպելները, իրեն նախնական վիպական բանաստեղծության արտահայտություն առհասարակ է մասնավորաբար՝ հայկական ցեղերի նախապատմական ու վաղ պատմական ժամանակների գեղարվեստական հոգեոր արտահայտության արդյունք:

Երկրորդ շրջանն ընդգրկում է առասպելախառն վեպը, ըստ Խորենացու կոչման՝ «Վիպասանք», որը ժանրային բնույթով անցումն է առասպելից վեպին, իսկ պատմականորեն՝ արգելափակ հայ ժողովրդի ազգային վերջնական ձևավորման ու քաղաքական ինքնուրույնության ծաղկման ժամանակների (մ. թ. ա. II է մեր թվականության II դարեր):

Երեքրդ շրջանը՝ «Պարսից պատերազմ» երկրորդ հին վեպն է ընդգրկում, որն ամբողջապես պատմական է, բանաստեղծական արտահայտություն ֆեոդալական ծաղկուն ժամանակների է արտացոլումն ու արդյունքը՝ III—IV դարերի Հայաստանի պատմական իրականության:

Չորրորդ շրջանը՝ «Տարսնի պատերազմ» վեպն է, զարգացմամբ նախորդի՝ «Պարսից պատերազմ»-ի տեղայնացումն է Տարսնում ու Սասնում, պատմական նոր իրադարձությունների տակ կիրպարանափոխված. այն արտացոլումն է VI—VII դարերում՝ պարսից նվաճողների դեմ Տարսնի (նաև Սասնի) իշխանությունների իրենց անկախության համար մղած կռիվների ու պայքարի:

Եվ վերջապես հինգերորդ շրջանը՝ «Սասնա ծռեր» վեպն ու վիպական նոր երգերն են, որոնցից առաջինը լինելով նախորդ երկու վեպերի վիպական կիրպարությունը, իր մեջ է անդրադարձրել IX—XIII դարերում Սասնի և մյուս հայ իշխանությունների իրենց ազատության ու ինքնության համար օտար հարստահարիչների (արաբներ, մասամբ քուրեր և թաթարներ) դեմ մղած կռիվներն ու ապստամբական հերոսամարտերը:

Հայ վիպական բանահյուսության զարգացման Արեղյանի այս տեսությունը, որ հենվում էր միջադարյան բանագիտության և փիլիսոփայության տեսական նվաճումների վրա, իր մեջ էր ներառում մի կողմից Հակոբ Գրիմի մարդկային մտածողության առաջ-

վիպականից աստիճանաբար դեպի իրականն ու ռեալիստականը անցնելու տեսությունը, մյուս կողմից անդրիական մարգարեական զրոյոցի՝ մարդկային հասարակարգի նյութական ու հոգեոր կյանքի արդյունքների պարզազոյնից դեպի բարդն ու կատարյալը դարգանելու էվոլյուցիոնիստական թեորիան, ապա և մարքսիստական ուսմունքի հասարակության տեսնական զարգացման և զրան համապատասխան հասարակական գիտակցության ձևերի փոփոխման ու առաջնիցի տեսական գրույթները: Եվ ամենից կարևորն այն էր, որ Արեղյանն ինչպես այլուր, այնպես էլ հայ վիպական բանահյուսության զարգացումը բնեկիս, այն դեռում է որոշակի իրական պատմական հոգի վրա, որով տարբերվում է Գրիմի մարդկային մտածողության զարգացման տեսության վերացական սխեմատիկ մից: Հայ վիպական բանահյուսության արգասիքները դեռևս չէին արտահայտություններ և ելնելով դրանց ծագումնաբանական հիմքից ու արտահայտած գաղափարախոսությունից, Արեղյանը զրանք դեռում է ու բնեում Հայաստանի պատմության կոնկրետ այն ժամանակաշրջանների սոցիալ-քաղաքական կյանքի ռեալ երևույթների տեսագրաբան վրա, որոնց վիպական-գեղարվեստական անդրապակներումն են հանդիսացել բանահյուսական ավյալ հուշարձանները: Եվ նա հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի պատմության զարգացմամբ է մեկնաբանում հայկական առասպելները, վիպերի ու վիպական երգերի աստիճանական զարգացումն ու ձևափոխությունները, մի օրակից մյուսին փոխանցվելը:

Արեղյանի բանագիտական նշված տեսության մեջ նկատելի է հայ վիպական բանահյուսության զարգացման զարգացման էրեք հիմնագիծ, պայմանավորված հասարակության սոցիալական ու քաղաքական կյանքի զարգացումով՝ սկսած նախնական առմամատիրական համայնական հասարակարգից մինչև ցեղային մեծ միություններն ու ազգային զարգացած միասնական պետականությունը՝ իր աարբեր անտեսակարգից (ստրկատիրություն և ֆեոդալիզմ՝ զարգացման տարբեր փուլերով):

ա) Հասարակական մտածողության կամ աշխարհայացքի փոփոխություններ. նախնական կրոնա-առասպելականից դեպի նրա աստիճանական իրավադատականացումը, աստվածների, սրանց գրե-հերոսների ու վիշապ-դեմոնների մարդկիանացում, սրանց դերերական արարքների բնականացում և պատմականացում:

բ) Սոցիալ-գաղափարաբանական փոփոխություններ, վիպա-

կան բանահյուսության հուշարձաններում առկա տոհմա-ցեղա-  
յին նախնադարյան ըմբռնումների օրինաչափ փոխակերպություն  
համազգային, համամոզովորդական և սոցիալ-դասակարգային գա-  
ղափարներով, դուրսացնել հերոսների բնահատուկ-մարդկային բարո-  
յական շահագրգռությունների փոխարկում՝ որոշակի ցեղային, ազգային,  
դասակարգային շահերով և զբաղել համապատասխան հերոսների  
զագափարականացում, վիպական ստեղծագործություն-  
ների զարգացում սեղանացումով և համազգայնացումով՝ Հայկի  
համամարդկային առասպելի, Արամիլիբյան և Արտաշատյան վի-  
պական ցիկլերի սեղանացումը, «Պարսից պատերազմ» համազ-  
գային վեպի սեղանացումը Տարեհում հանձին «Տարեհի պատե-  
րազմ»-ի և վերջինիս զարգացումն ու համազգայնացումը հանձին  
«Սասնա ծռեր»-ի:

դ) Վիպական ժանրերի տիպարանական փոփոխություններ,  
ստասպելի փոխակերպում՝ առասպելախառն վեպի և վերջինիս կեր-  
պափոխությունը վեպի՝ Լյուտի, պատահած ղեկավարի շուրջը վի-  
պական կերպերի, ավանդությունների ու զրույցների առաջացում,  
նրանց ստախճանական ցիկլավորում և համակենտրոնացում մեկ  
կամ մի քանի անձանց կամ նշանավոր իրադարձությունների շուրջ,  
և մեծ վիպասանությունների ձևավորում:

Հայ վիպական բանահյուսության համակողմանի զարգացման  
սեռություն մեջ Արեղյանը բացահայտում է նաև այդ բանահյու-  
սության ներքին զագափարական բովանդակությունը, այն դիտա-  
լով իրեն հայ ժողովրդի պատմական գոյության, ազգային ինքնու-  
թյան ու անկախության համար մղած զարավոր մարտման ու  
պայքարի մի զեղարվեստական տարեգրություն: Հայ վիպա-պատ-  
մական բանահյուսության զագափարարանությունը, որ բխում էր  
հայ ժողովրդի պատմական զարավոր կեցությունից, հետագայում  
Արեղյանին հիմք է ծառայում հայ հին գրականության երկրորդ  
շրջանը դիտելու իրրև մարտման գրականության մի պարբերա-  
շրջան, գրականություն, որի մեծ մասի զեղարվեստական առաջ-  
ձեղ զավիտ էր հայ հին վիպական բանահյուսությունից:

Նվ աղյուսե, Արեղյանը հայ վիպական բանահյուսության զը-  
բավոր ու բանավոր ավանդված տարբեր հուշարձանները, նմուշնե-  
րըն ու բեկորները դիտում ու բնում է բազմակողմանի զարգաց-  
ման մեջ, իրրև կենդանի ու հարաշարժ մի մարմին, որ շարունակ  
զարգանում ու առաջ է մղվում մասերի անընդհատ փոխանցումնե-  
րով ու կերպարանափոխություններով, հաստատումներով ու ժըխ-

տումներով, հակազրույթուններով ու համազրույթուններով, ծա-  
զումներով ու կործանումներով, մի խոսքով, մի կատարվալ  
դիտակտիկական զարգացում՝ խարսխված հայ ժողովրդի բազմա-  
դարյան նյութական ու հոգեբար կյանքի կոնկրետ երևույթների և  
վիպական ժանրերի ներքին յուրահատկությունների վրա:

Այս է ընդհանուր գծերով հայ վիպա-պատմական բանահյու-  
սության մասին այն ուսմունքը, որ հիմնարկ է հայագիտության  
մեջ Մանուկ Արեղյանը իր շուրջ վաթսուհամյա զիտական գործու-  
նությունը:

Արդ, ո՞րն է այդ ուսմունքի գիտա-պատմական նշանակությունը:

1. Արեղյանը առաջինը հայագիտության մեջ ճշգրտում է ու  
վերականգնում հայ դիցարանական-գյուցազնական առասպելները,  
դրանց հետազոտությունը զուր բերում ազգային նեղ սահմաննե-  
րից դեպի բայն միջազգային առավարկ:

Հայ առասպելարանության մասին մինչ այդ արտահայտված  
կցկտոր կարծիքներն ու ննացած անսակտները նա զուր է բե-  
րում միջնադարյան վիճակից և ժամանակի գիտական առաջավոր  
մեթոդների և ուսմունքների (պատմա-համեմատական, մարդաբա-  
նական ու սոցիալարանական) հիման վրա ստեղծում հայ առա-  
պելարանության գիտական մի կուռ ու ամբողջական ուսմունք:

2. Բանասիրական ու պատմա-բանագիտական մանրակրկիտ  
հետազոտություններով Արեղյանը պարզում ու հավաստում է հա-  
յոց հին ժողովրդական երեք մեծ վեպերի («Վիպասանք», «Պար-  
սից պատերազմ», «Տարեհի պատերազմ») անկախ գոյությունն ու  
դարավոր հարատևումը և ստեղծում մի ամբողջական նոր ուսմունք  
հայոց հին վեպերի մասին:

3. Իր բազմամյա զիտական գործունեության ողջ ընթացքում  
նա զբաղվում է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի բազմակող-  
մանի հետազոտությամբ և հայագիտության մեջ հիմնադրում մեր  
նոր ժողովրդական վեպի մեծագծեր ուսմունքը:

Եթև այս ամենին ավելացնենք նաև հայկական վիպական կը-  
գերի դասական հետազոտությունն ու հայ վիպական բանահյուսու-  
թյան պատմական տեսության ստեղծումը, այդ միտնդամայն  
պարզ կդառնա Արեղյանի վիթխարի էպիտաշնե դերը հայ վիպա-  
կան բանագիտության զարգացման մեջ:



## II. ՀԱՅ ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. ԳեղՋԳԱԿԱՆ ՍԻՐՈ ԵՐԳԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Եթե հայ վիպական բանագիտությունն սկզբնավորվում էր հին բանահյուսության գրավոր նմուշների հետազոտությամբ, ապա ժողովրդական բնարական բանահյուսության նկատմամբ գիտական շահագրգռություններն անշուշտ են առավելաբար ժողովրդական կենդանի երգերին: Առաջին լուրջ օրինակը դարակենթին տալիս է Ղևոնդ Ալիշանը իր «Հայոց երգք ոսմիականք»<sup>1</sup> ժողովածուով, թեպետ ժողովրդական երգերի գրառումը սկսվել էր մինչև Ալիշանը<sup>2</sup>: Ժողովրդական երգերի գրառումն ու հրատարակումը նոր թափ ու ծավալ է ստանում հատկապես անցյալ դարի 70-ական թվականներից հետո, այսինքն Գ. Սրվանձոտյանի առաջ բերած բանահավաքչական մեծ շարժման հետևանքով, բայց այդուհանդերձ այդ երգերը, մինչև ընթացիկ դարասկզբները մնում են չհետազոտված:

XIX դարի վերջերին և առանձնապես XX դարի սկզբներին ժողովրդական երգերն իրենց սիրված եղանակների պատճառով արժանանում են համակողմանի ուշադրության: Դրանց ուսումնասիրության սկիզբն ու հետագա ճակատագիրը աղերսվում է Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի անուններից: Եթե Կոմիտասով սկզբնավորվում է հայ ժողովրդական երգերի մեղեդիների գրանցման ու ուսումնասիրման պատմական մեծագործությունը, ապա Աբեղյանով՝ նույն այդ երգերի բանասիրական հետազոտությունը. և այդ ոչ թե միմյանցից անկախ ու անհամաձայն, այլ համատեղ ու ծրարոված: Ասվել է արդեն, որ երկուսի համատեղ շանքերով սկիզբ էր դրվում հայ ժողովրդական երգերի համահավաք ժողովածուն կազմելու գործին: Իրենի հետագա բերումով, թեպետ այդ միասնական նախաձեռնությունը չի իրականացվում, սակայն սկսած գործը չի մնում անարդյուն: 1904 թ. «Արարատ» ամսագրում և ապա առանձին գրքով լույս է տեսնում Աբեղյանի «Ժողովրդական խաղեր» վերնադասությամբ մեր գյուղական սիրո երգերին նվիրված անգրանիկ ուսումնասիրությունը<sup>3</sup>: Դրանով հայ իրականության մեջ հիմք

է դրվում ժողովրդական երգերի բանասիրական-բանագիտական ուսումնառն, որն այլևայլ կողմերով հարստացվում է և կատարելագործվում նրա հետագա աշխատություններում:

Գյուղական սիրո երգեր ասելով Աբեղյանն ամենից առաջ հասկանում է տարբեր կրկնակներով երգվող այն բազմահազար բանակաները, մասամբ և եռյակներն ու երկյակները, որ լայնորեն տարածված ու կենցաղավարում են գեղջուկ երիտասարդների շրջանում: Եվ գյուղական այդ փոքրիկ երգերը, նա, երևելով դրանց ժողովրդական «խաղ» անվանուից՝ կոչում է «խաղիկներ»: Ժողովրդական խաղիկների հետազոտության մեջ Աբեղյանը ծանրանում է հետևյալ խնդիրների վրա. 1. խաղիկների ժանրային ծագումն ու բանաստեղծական նկարագիրը, 2. խաղիկների ձևաբանական փոփոխություններն ու զարգացումը, 3. գեղջուկական կյանքի ու կենցաղի անդրադարձումը ժողովրդական խաղիկների մեջ:

Ժողովրդական սիրո երգերի նախնական հիմնաստիպը առհասարակ բառատուղն է, մասամբ եռատուղն ու երկատուղը, որոնք համապատասխան ժողովրդի վաղ հասարակական պարզ կացութանն են, բավարարում են ժարդիային միտքն ու զգացմունքները: Դրանցից, որպես նախնական «սառմիջ զարգացել է ժողովրդական ընդարձակ երգը»: Հայ գեղջուկական սիրո երգերի օրինակով Աբեղյանը ցույց է տալիս, որ մեր խաղիկները իրենց նկարագրով պատկանում են երգերի զարգացման այդ վաղ աստիճանին, թեպետ նրանք հաճախ կենցաղավարում են ընդարձակ կերպարանքով:

Այդ փոքրիկ ու պարզ երգերն ունեն դարձ կամ կրկնակ (հանգեղ), որոնք «պարզում են բանաստեղծության միտքը, բայց անհրաժեշտ են գլխավորապես երաժշտական տեսակետից»: Դրանք բանաստեղծության հետ միասին առաջ են բերում երկրորդ անհրաժեշտ երաժշտական քաղաքական նախազասությունը: Երգի կղանակները «սովորաբար որոշվում են և կոչվում» կրկնակներով:

Մագուսով բոլոր խաղերը «հանպատասխան, հանկարծական բերումներ» հորինված ստեղծագործություններ են, որ արտահայտել են հորինող երգչի՝ սվարիկնապես ծնված, քաղեական տպավորու-

որ բնարված կեն ժողովրդական երգերի բնահատոր հատկանիշներն ու գեղաչափապատկան-տաղաչափական խոհրդերը: Հետագայում, երբ Աբեղյանն արդեն կազմում է ժողովրդական խաղիկների հավաքածուն, այն գրեթե ամբողջությամբ զնուր (կ'որք ներածության մեջ, գրան ավելանցելով նաև ժողովրդական երգերի բովանդակությունն ու թեմատիկան հետազոտող երգ գրությունը) (ՏՃՆ Մ. Աբեղյան, ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 110):

<sup>1</sup> Վենետիկ, 1852:

<sup>2</sup> ՏՃՆ Ա. Գևորգյանյան, Աբեղյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, նաև նույն հեղինակի՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն», պրոֆ Ա. Առաքելի իրավունքով, Երևան, 1945:

<sup>3</sup> Հիշյալ հետազոտությունը նախատեսված էր Աբեղյանի և Կոմիտասի կողմից նախաձեռնվող ժողովրդական երգերի ժողովածուի համար իբրև ներածություն,

Սյան տակ առաջացած զգացմունքը, դրանով արտահայտելով ժամանակի և միջավայրի կենցաղային բարբերը և տրամադրությունները: Այդ խաղիկները հորինվել են միայն մեկ անգամ երգվելու համար. բայց, ինչպես ժողովրդական բանահյուսության մյուս տեսակները, այդ երգերն ևս, կիև հնարը են հղել և թարահայտել են ժամանակակիցների ոչ վաղեցիկ սրամտորությունները, չեն անհետացել առաջին անգամ երգվելուց կամ իրենց հեղինակի մահից հետո: Ունկնդիրներին որևէ մեկը սովորելով խաղը նույնությամբ կրկնում է կամ անգիտակցաբար փոփոխում զեպի լավը կամ վատը: «Եվ մի անձի՝ րոպեական տրամադրություն արտահայտելու համար ստեղծված երգն այնուհետև պահվում է ուրիշների հիշողության մեջ, թափառում է գավառն գավառ՝ հարմարվելով, որքան կարելի է, տեղական բարբառներին, և անցնում նույնիսկ երկրի երկիր, թարգմանվելով լեզվի լեզու և հարմարվելով տեղի ու ժամանակի բարբերին»: Խաղը համարելով «ճախնական ժամանակներից ցայտօր մտային լինելուց բանաստեղծական ձև», Արեղյանը խորհի հուսովան է վերադրում ժողովրդական խաղիկներին, որոնք «ոչ միայն բերններն են անցնելիս ևն փոխվում, այլև սերնդն սերունդ, զարեզար ավանդելիս»: Այդ փոփոխության, ինչպես և դուր գալու հանգամանքի մեջ էլ Արեղյանը տեսնում է խաղերի պահպանման և կենսունակ մնալու երևույթը: Ուստի երգը «զարեզար դուր գալու համար պետք է վերանորոգվի, վերաստեղծվի՝ հարմարվելով սերունդների կյանքին ու բարբին, նիստուկային և լեզվին»:

Ժողովրդական խաղիկների ժանրային պարզ նկարագրի մեջ Արեղյանը բացահայտում է նրանց հորինվածքի (composition) առանձնահատկությունները. խաղիկների կառուցվածքի ամենաբնորոշ բանաստեղծական հատկանիշը նա համարում է առհասարակ ժողովրդական երգերին հատուկ զուգահեռականություն (parallelisme): Ըստ այդմ խաղիկները ամենատարրական կազմություններ խաղի երկու զուգահեռ անդամների՝ առարկայական իրականությունից վերջրած արտաքին պատկերի և երգչի հոգեկան ապրումների ամբողջությունն է: Ընդ որում արտաքին զուգահեռ պատկերը հիմնականում նախորդում է երգչի ներքին զգացմունքներին, իսկ երբեմն էլ կարող է հետնորդել:

1 Ժողովրդական խաղիկները, զուգական փոքր երգեր իրենց փոփոխականությամբ, խորագրերն սրբ. գ-ր Մանուկ Արեղյան, մասնակի աշխատակցությամբ Ամբիտաֆ, Երևան, 1940, էջ 51.

«Որքան հարողությամբ հարմարեցրած են իրար երգիկները այս երկու զուգահեռական մասերը, և որքան սերտ ու ներքին է այս երկու մասի կապակցությունը, այնքան ավելի զեղեցիկ է խաղը»: Եվ խաղերի ազնատունն ու խմաստի անբռնելի դասնալը, մեծ մասամբ հետևանք է երգի այդ զուգահեռ անդամների ներքին կապակցության խախտման:

Արեղյանը, հատկապես բնութային տունելով խաղի առաջին զուգահեռ անդամի բնույթն ու երկրորդի հետ ունեցած հարաբերությունը, դրսևորման երեք ձևեր է բացահայտում:

Առաջին և պարզ ձևը այն է, երբ խաղի առաջին մասի մեջ լինում է որևէ, մեծ մասամբ բնութային նկարագրություն, որին հաջորդում է «երգչի սրտում վայրկենապես ծնված զգացմունքը մի սրամիտ խոսքով կամ բառախաղով: Խաղի այդ երկու մասի միջև կազմ կապն հաճախ զգվար է բարձրվում, որ հետևանք է տեղական կյանքի ու կենցաղի, վարք ու բարքի թերմացություն:

Երրորդ ձևն այն է, երբ խաղի սկզվածքը, արտաքին պատկերը մի բաղդատություն է, համեմատություն երկրորդի հոգեկան կյանքի երևույթն արտահայտող մասի նկատմամբ: Ընդ որում համեմատությունը կատարվում է կամ նմանությամբ կամ հակադրությամբ:

Երրորդ ձևն արդեն նախորդ երկուսի մի բարդ ու յուրակերպ միասնությունն է, երբ խաղի առաջին մասը երկրորդ անդամի նկատմամբ միաժամանակ թե՛ շրջապատի նկարագրություն է և թե՛ բաղդատություն: Տվյալ դեպքում խաղի երկու մասերի կապակցությունն առավել զեղեցիկ ու խմաստալից է լինում:

Կառուցվածքի այդ հիմնական զեղեցիկ էլ Արեղյանը վերլուծում է խաղերի հորինվածքը և բացահայտում նրանց բանաստեղծական արվեստի հատկությունները:

Արեղյանը բացահայտում է ժողովրդական խաղիկների տաղաչափական հատկանիշները ևս: Ըստ այդմ խաղերը լինում են երկատող, եռատող և քառատող, իսկ վանկերի բանակի, տաղաչափական հասածի և հանդերի դասավորության նկատմամբ՝ բազմազան են:

Ամենափոքր տաղաչափական միավորը խաղիկների մեջ՝ հնգավանկ տողերն են, որոնք հազվադեպ են հանդիպում, իսկ ամենամեծը՝ 12 վանկանի տողերն են, որոնք որպես տաղաչափական միավոր թեպետ բնորոշ չեն խաղիկներին, բայց երբեմն ուլիմ-

1 Ժողովրդական խաղիկները, էջ 53:



վանկ տողին ավելանում է մի բառավանկ ոտք և կազմում 12 վանկանի սակավ զործածական տող:

Տաղաչափական տեսակետից ամենատիրված ու տարածված խաղերն են յոթավանկ քառյակները՝ արևելահայերի և ուրալական քառյակները՝ արևմտահայերի մեջ:

Հայ ժողովրդական երգերի մի մասի տաղաչափական էական հատկանիշները բացահայտելով, Արեղյանը հանդուս է այն կարևոր երթակայություն, որ էական տարբերություն չիս մեր ժողովրդական և գրական բանաստեղծության շարհերի մեջ: Իսկ հանգերի հարցում նա իրավամբ ժողովրդական երգի հանգերն ավելի դարդացած ու հնչուն է համարում, քան գրականը:

Այնուհետև Արեղյանն անցնում է ժողովրդական խաղիկների կրած փոխակերպությունների և գրանք առաջ բերող հասարակական և հոգեբանական հիմքերի բացահայտմանը:

Ժողովրդական խաղը, բանաստեղծական մյուս տեսակների նման, բերնեբերան անցնելով ու դարձնելով սերնդի սերունդ ավանդելով հեթարկվում է գրական և բացասական փոփոխությունների: Այն հղկվելու և կատարելագործվելու հետ մեկտեղ նաև աղճատվում է ու բարձրվում:

Ժողովրդական խաղի աղճատման և փոփոխությունների հիմնական պատճառները Արեղյանը տեսնում է հետևյալ խախտումների մեջ.

ա) երբ խաղի մեջ լնգվական-բառային փոփոխություններ են կատարվում.

բ) երբ խաղի երկու զուգահեռ անդամների միջև հարաբերությունը մթաղնվում կամ ուշանում է, որի հետևանքով խաղը «կորցնում է իր սկզբնական ընդհանրությունը», կամ էլ առաջին զուգահեռական պատկերը «իր նշանակությունը կորցնելով դառնում է մի անասկ ձև»:

գ) երբ փոփոխվում են հանգերը կամ հանգ կազմող բառերը, որոնք սովորաբար կայուն տաղաչափական տեսք են հաղորդում խաղին.

դ) հաճախ փոփոխության է ենթարկվում բառային 3-րդ անհանջ տողը, որ հաստատուն կերպարանք չունի և այդ առաջ է բերում խաղի մեջ տարբեր փոփոխություններ.

և) երբ միևնույն հանգով կազմված տարբեր խաղերի հաստատունը հարում են միմյանց և կազմում մի առանձին իմաստալից և անիմաստ փոփոխակ.

դ) երբ խաղի տողերի դասավորության շրջում է կատարվում.

է) երբ սակզբնասպես մի շարիով հորինված երգը եղանակի պատճառով շուտ է դալիս մի արիչ շարհի», որով ամբողջ խաղը փոփոխության է ենթարկվում.

ը) երբ մի խաղը մի բարբառից փոխանցվում է մյուսին և հարմարվում տեղական բարբառի հնչյունարանական, ձևարանական ու բառակազմական ձևերին:

Այս և ուրիշ երկրորդական փոփոխությունների պատճառով առաջանում են միևնույն խաղի հանջող կամ անհանջող բազմաթիվ նմանակներ ու տարբերակներ, որոնց բաղդատության շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել խաղերի եթե ոչ սկզբնական օրինակը, ապա առավել իմաստալից և զեղեցիկ փոփոխակները:

Եվ Արեղյանը բազմաթիվ հանգամանքների հաշվառումով, տարբեր վարիանտների բաղդատությանը վերականգնում է մի շարք խաղերի իմաստալից փոփոխակները:

Խաղերը նշյալ փոփոխությունների զուգահեռ ենթակա են նաև արտաքին աճման, կամ ըստ Արեղյանի՝ դարձացման: Զարդացումը խաղի ձևարանական փոքր միավորի վերածումն է ասավել մեծ միավորի, որ կատարվում է երկու եղանակով՝ կցումով և աճումով:

Կցումն այն է, երբ երկու միմյանցից անջատ երկյակներ հարում են իրար և կազմում մի ամբողջական բառային կցման համար հիմք են ծառայում կամ երկու խաղերի իմաստների նամուրկունը կամ էլ նրանց մեջ եղած բառերի նույնությունը: Կցումով առաջացած խաղերը իրենց մեխանիկական դարձացման պատճառով մեծ մասամբ իմաստալից և զեղեցիկ չեն:

Աճումով զարդացած խաղերն համեմատաբար իմաստալից են, քանզի նրանց զարդացումը կատարվում է ոչ թե մերենալարաբ, այլ անջատ երգվող եռյակի կամ երկյակի վրա մեկ կամ երկու տողի հավելումով, տողեր, որոնք առանձին չեն ավելում, իմաստով սերտորեն աղերսվում են երկյակներին և եռյակներին:

Իհնում է նաև զարդացում հակասակ ուղղությամբ, երբ բառայակը վերածվում է եռյակի կամ երկյակի, բայց խաղերի զարդացման ընդհանուր հղանակը Արեղյանն իրավամբ համարում է պարզից դեպի բարձր կատարված ընթացքը:

Արեղյանը հայ ժողովրդական երգերի մեջ բացահայտում է զարդացման մեկ եղանակ ևս, որ աղերսվում է խաղերի կենցաղավարման բնույթի հետ: Յուրաքանչյուր խաղ առանձին երգ է,

բայց կենցաղում երգելիս կամ պարելիս, սովորաբար չեն բավարարվում թեկուզ և մեկ քառյակով, այլ միևնույն եղանակով երգում են շատ խաղեր իրեն մեկ երգ: Միևնույն կրկնակով՝ այն է միևնույն եղանակով համապատասխան չափի տարբեր խաղեր երգելուց էլ առաջանում են մեծ երգեր, որոնք, սակայն «մի ընդհանուր բան ունին, այն՝ որ նույն եղանակով ու կրկնակով են երգվում, և որ մեծ մասի բովանդակությունը սերն է: Էլ ուրիշ ներքին կուպակցություն չունեն»<sup>1</sup>:

Արեղյանը անկախ քառյակներից նման պատահականությամբ երգեր կազմվելու հանգամանքը դիտում է ոչ թե ժողովրդական ընդարձակ երգերի ընդհանուր հատկանիշ, այլ իրեն խաղերից երգերի առաջացման մեկ եղանակ, բանդի խաղերի այդ «հարազատությունը միշտ կույր պատահանությունով և արտաքին չի լինում. անկախ երգերը միշտ լուի մեթենաչորեն չեն միանում իրար հետ»: Ընդհակառակն, «մի խաղ մյուսին հարազատում է նաև գիտակցորեն, և խաղերը հարազատվելիս կրում են ներքին փոփոխություն, խկապակցվերանշարվում են միասին մի ամբողջություն կազմելու համար»: Այսինքն, խաղերը երբևն հարազատում են նաև սրովանդակության համեմատա՞:

Արեղյանը խաղերից ժողովրդական մեծ երգերի զարգացումը բաժանում է երեք հիմնական տեսակի:

ա) Հարազատություն ղեպ՛ի կամ անձի ազդեցությամբ, երբ միմյանց են հարում և միանում այն խաղերը, որոնք սասվել են օրինկ համանման ղեպ՛ի կամ անձի առթիվ: Եվ հարազատության այդ եղանակի մեջ Արեղյանն իրավացիորեն տեսնում է «վիպական հնարեզության տարրերը»: Անձի կամ գիպվածի որոշակի բնույթի համապատասխան հարազատող խաղերը միանում են մի ներքին առնչվածությամբ, կազմելով ղեպ՛ի կամ անձի շուրջը պատվող մի ընդհանուր բովանդակություն: Բայց նման երգերում արտաքին կապը, աների դասավորությունը գեոսն պատահական է և կենթակա տեղաշարժերի: «Խաղերի այս տեսակ համախմբումները մի ղեպ՛ի կամ անձի շուրջ՝ լուի փորձեր են անկախ փոքր երգերից մեծ ամբողջական երգեր առաջ բերելու: Նման երգերը կոչվում են ղեպ՛ի հերոսի անունով: Փրանցից են, օրինակ, գուլարեցի Արշակի և մասապարեցի Զուլույի երգերը:

բ) Հարազատություն բանձի և խոսքերի ազդեցությամբ, երբ «մի

խաղի մեջ եղած մի բան կամ խոսք հրշոջնում է մի ուրիշ խաղի մեջ եղած նույն կամ համանման բանը կամ խոսքը և զրանք հաջորդաբար միանում են և երգվում իրեն մի ամբողջական երգ: Այդ կերպ կազմված օրգերի տեսին իրարու ալիելի են հարմարվում, բան ղեպ՛ի կամ անձի ազդեցության տակ միացաններինը», բայց արվեստի տեսակետից այդ երգերն էլ անհաշու են, բանդի հիմնրված են արտաքին հարազատության վրա:

գ) Իսկ երբ հաշվի է առնվում հարազատող բաների բովանդակությունը, այսինքն երբ հարազատությունը կատարվում է բովանդակության ճիման վրա, այդ ղեպ՛ում երգի «սաները կազմում են իմաստալից ամբողջություն»: Արեղյանը մեր ամենահաշու ժողովրդական երգերը համարում է կազմված այս վիճակն տեսակի հարազատությամբ:

Եվ երգերի բազմաթիվ օրինակները վերլուծումով Արեղյանը հիմնավորում է խաղերից ընդարձակ երգերի զարգացման իր բացահայտած օրինակափոխությունները:

Ժողովրդական երգերի կազմությունը վերականգնելուց հետո Արեղյանն անցնում է այն կարևոր խնդրի քննարկմանը, թե կյանքի ինչ երևույթներով ու տարրերով են բովանդակավորված ժողովրդական բնասերգության այդ փոքրիկ նմուշները:

Հարուստ ու բազմազան օրինակներով Արեղյանն ապացուցում է, որ խաղերի մեջ անզրադարձված իրականությունը գյուղաշխարհն է իր գրեթե բոլոր բնորոշ կողմերով: Խաղերը լինելով մեծ մասամբ զեղչուկ պատանիների ու պատանուհիների սիրո բանաստեղծություն, ամենից առաջ անզրապատկերել են իրենց մեջ այն կենցաղային բարբերն ու սովորույթները, որոնք աղերսվում են զեղչուկական միջավայրին բնորոշ սիրո և ամուսնության ղեպ՛ի հետ: Այդպես, խաղերի մեջ զգալի տեղ է զբաղում սիրած յար, հատկապես նրա մարմնի և հաղտոսի գովքը, որ լինելով մեր բանահյուսության վաղնդական մտփվներից մեկը, ուշադրավ է դասնում ազգազրական տեսանկյունից, իրեն անցյալի գյուղական կենցաղում գործածվող հաղուստեղների նկարագրությունն և վիպությունն: Խաղերն, այնուհետև իրենց մեջ են անզրադարձելու զրանց հեղինակների աշխատանքային տարյան ու միջավայրը, հատկապես գյուղական կյանքին բնորոշ երկրագործությունը իր գրեթե բոլոր կողմերով ու երևույթներով, այդպիսործությունը, անասնապահությունը, աղս զեղչուհիների աստնին աշխատանքներն ու կենցաղը և զեղչուկական կյանքի հետ կապվող մի բանի արհեստները:

<sup>1</sup> Ժողովրդական խաղերներ, էջ 92.

<sup>2</sup> Անց, էջ 92.



ժողովրդական խաղերը անդրադարձրել են նաև դյուղի ստ-  
ջիլական կյանքը իր տարրեր կողմերով: Գրանցից հատկանշա-  
կան են դյուղի ստջիլական շրտաժյուրումը և տարրեր վերաբեր-  
մունքը հասարակական տարրեր խավերի ներկայացուցիչների նը-  
կատմամբ, աշխատավոր խավերի կեղեքումն ու հարստահարումը,  
ստջիլական անմխիթար կյանքի նկարագրությունները, պանդրխ-  
տությունը և այլն:

Ի վերջո խաղերի մեջ զգալի չափով արտացոլվել է նաև հայ  
դյուղացուն շրջապատող բնությունը իր տարրեր նրևույթներով,  
ժողիկներով, բույսերով, կենդանիներով ու թռչուններով:

ժողովրդական խաղերի բովանդակության տարրեր կողմերի  
բացահայտումով Արեղյանը փաստորեն վեր է հանում ժողովրդ-  
դական ընտրելության այդ փորձ տեսակի ազդագրական, կուլ-  
տուր-պատմական և ճանաչողական կարևոր արժեքը:

Եվ այդպես, հիմք ընդունելով ընդհանուր բանագիտության մեջ  
ապացուցված ժողովրդական երգերի սկզբնական տարրերի կերպի  
և նկարագրի մասին եղած ուսմունքը, Արեղյանը հայկական հա-  
րուստ նյութով բացահայտում է ժողովրդական սիրո երգերի ծա-  
ղումն ընդհանրապես և հայկական սիրո խաղերի աճումն ու զար-  
գացումը մասնավորապես: Արեղյանը ժողովրդական երգերի ապ-  
րած բանահյուսական կյանքը դիտում է իրրև մի շարժուն ու հա-  
րափոփոխ երևույթ, իրրև նախնական պարզ ձևերի աստիճանական  
զարգացում ու բարդացում, կրք տարրեր ձևեր փոխարկվում են  
մեկը մյուսին, շարունակ աղճատվելով ու կատարելագործվելով,  
բարձրվելով ու կազմավորվելով:

Երգերի, և առհասարակ ժողովրդական բանահյուսության մյուս  
տեսակների նկատմամբ Արեղյանի պատմական հայացքն ու ըմ-  
բռնումները չեն սահմանափակվում լոկ ժանրի տիպարանական  
զարգացումը բնելով, այլ նաև ծավալվում են տվյալ ժանրի և  
առարկայական իրականության միջև եղած փոխհարաբերություն-  
ների բազմակողմանի բացահայտումների շուրջ: Արեղյանը երգերը  
քննելով հայ ժողովրդի պատմական կյանքի տեսադաշտի վրա,  
ցույց է տալիս, որ անկախ իրենց թեմատիկ-սիրային և ժանրա-  
լին-բնարական բնույթից, դրանք անտարրեր չեն գտնվել ստեղծող  
երկրիների ապրած իրականության նկատմամբ, այլ իրենց հնարա-  
վորությունների սահմաններում անդրադարձրել են իրենց մեջ  
ժողովրդի կյանքի տարրեր իրողություններ:

Գրանով Արեղյանը ժողովրդական երգերը (և ոչ միայն երգե-  
րը) դիտում է իրրև հասարակական գիտակցության գեղարվեստա-  
կան այն ձևերից մեկը, որն արտացոլում է առարկայական իրա-  
կանությունը և ձևեր բերում կուլտուր-պատմական կարևոր արժեք:

Ք. ՀԻՆ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅՈՒՆԸ

ժողովրդական քնարերգության Արեղյանի ուսումնասիրած  
երկերը տեսակը՝ էին գուսանական-ժողովրդական երգեհոն են, ո-  
րոնք պահպանվել են զբավուր և բաժավուր ավանդմամբ:

Հին գուսանական երգերի ըմբռնում, որի մասին բազմաթիվ  
հիշատակություններ կան մատենագրական աղբյուրներում, մինչև  
ընթացիկ դարի 30-ական թվականները հայտնություն մեջ կառ-  
վում էր հիմնականում Մովսես Խորենացու «Հայոց պատմության»-  
ն գրավոր այլ աղբյուրներում անկա վիպական երգերի պատասխի-  
չների հետ: Արեղյանը հաստիկ հետազոտությանը եկելով ապացու-  
ցելու, որ մեղ է հասել հայոց հին գուսանական աշխարհիկ քնա-  
րերգությունից մի հարուստ ժառանգություն, որ պիտանությանը թե-  
պիտ վաղուց հայտնի, բայց մի ճակատագրական իյուրիմացու-  
թյամբ վերազրվել էր վանեցի մի համեստ աշուղի՝ նահապետ Քու-  
սակինի:

Ձորեղ ապացույցներով նա մեկընդմիջ հերքում է հայ քա-  
նարության մեջ արդեն կարծրացած այդ վարկածը, որին ր ղեկ,  
ստանց հիմնավոր վերաքննության, տուրք էին տվել մի քա-  
նի գրական նշանավոր դեմերը, և մեր միջնադարյան ժողովրդա-  
կան քնարերգության զոգարիկ նմուշները, վերատին դարձնում է ի-  
րենց բուն տիրույթ:

1 «Հին գուսանական ժողովրդական երգեր», Երևան, 1931:

2 Հայ քնարության մեջ եղված երգերի հրատարակ գալուց Ի վեր կա-  
նածի է կնթարիկի գրանց անհասական սուղծագործություն (իսկյու պարագանե  
Տարրեր բանասերների կողմից (Կ. Կոստանյան, Մ. Արեղյան, Հ. Բաղդասյան),  
Քեղեք լրվի շինվածարված, այդ երգերում նկատվել է ժողովրդական ու ու սղի-  
ն գրանց համեմատվել ու անգամ նայնուցվել են Արեղի, Ղանի կողմերում տարած-  
ված ժողովրդական երգերի հետ: Սակայն բավարար կոմունների բացակայության  
դրանուստով հարցը երկուր ժամանակ բայց է մտում, մանավանդ որ 1902-ին Ար-  
եղյանյանը Նիկոնիցի ապագրամի վրա աղեկացնելով բազմաթիվ ետ նմանակերդ  
դրադրի երգեր, հրատարակում է «Նահապետ Քուսակի դիմանը» ժողովածուն, ապա  
Ջրանսերեն Բաղդասյանիով տարածում է այդ երգերը նահապետ Քուսակի անունով:

Ի՞նչ կովաններով էր Արեղյանը հերքում հին գուսանական երգերը Քուչակին պատկանելու վերահիշյալ վարկածը:

1. Երգերի բոլոր ձևազրի աղբյուրներում և այդ երգերը առաջին անգամ Քուչակին սոսկ խոսքով վերապրող Ա. Տեկանցի ժողովածուի՝ համապատասխան երգերի կամ ձևազրերի հիշատակարանների մեջ (բացառությամբ մեկ երգի<sup>2</sup>) նա՛հայտա Քուչակի անվան խոցառ բացակայությամբ:

2. XVI դարում ազրած աշուղ նա՛հայտա Քուչակից հասած հայերեն և թուրքերեն մի խումբ երգերի գոյությամբ, որոնք իրենց կրոնա-բարոյախոսական բովանդակությամբ, տիպիկ աշուղական ոճով ու նկարագրով ոչ մի կապ չունեն «Քուչակյան» կոչվող երգերի հետ<sup>3</sup>:

Հիշյալ բացահայտ իրողություններից բացի, Արեղյանը իր առաջադիր տեսակետն ապացուցում է «Քուչակյան երգերի» բնուսիրական մանրակրկիտ հետազոտություններով:

1. **Ոտանվորը:** «Քուչակյան երգերի» շատ ձևազրերում այդ տակերը վերնագրված են «Տաղ սիրոյ», «Տաղ հայերէն վասն սրբախօթեան», «Հայրենի կարգաւ» և այլն, իսկ հաճախ տաղերում գործածվում է «հայերէն» կամ «հայրէն ասէլ», որով պարզվում է, որ այդ տիպի երգերը «հայերէն» կամ «հայրէն» են կոչվել հայկական մի շատ ինքնատիպ հատկանշի պատճառով:

Արեղյանն այդ յուրահատկությունը գտնում է հիշյալ երգերի տաղաչափական կառուցվածքի մեջ, որին ի զեպ, նա անդրադարձել էր տակավին 1904 թվականին<sup>4</sup> և դրանից էլ առաջ<sup>5</sup>:

«Հայրենի կարգը» նա հենց համարում է այդ երգերի ոտանա-



Մ. Արեղյան (1939)

1 Ա. Վ. Տեկանց, Հայերգ, մեղեդիք, սաղր և երգք, Թիֆլիս, 1882:

2 Տեկանցի հրատարակած մեկ հատիկ երգի շափածո հիշատակարանի մեջ միայն կա Քուչակի անվան հիշատակություն. երգի այլ տարբերակները կամ անուսուտ են, կամ էլ ուրիշ անուններ ունեն (Սարգվազ, Կիրակոս Արեղ): Բրավաշորեն ենթադրվում է, որ Քուչակը եղել է այդ երգի կատարողը միայն (Տե՛ս Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, էջ 14):

3 Հմմտ. Լավն. Փողոնյան, Քուչակ նահապետ երգեր, Թիֆլիս, 1903, էջ 17—21, Տ. Նավասարդյանց, Հայ ժողովրդական հերթեր, 2 դիրք, էջ 77 և հտն., Օ. Եղաճյան, նահապետ Քուչակի հայաստա թուրքերեն տաղերը, «Թուրքեր մասնագետներ», Մ 5, 1960, էջ 465 և հտն.:

4 Տե՛ս նրա «Ժողովրդական խոցեր», ուսվածք, Վլադարչապատ, 1904, էջ 27 և հտն.:

5 Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, 1931, էջ 6, տե՛ս տողատակի մանրություններ:





ըստ Արեղյանի հավաստիացման, բացակայում է ուրիշ ժողովուրդների բանաստեղծական շարքերի մեջ:

«Գա անպայման բնիկ հայկական ոտանավոր, հայկական բառաթիվ է եղել, հայերենի մեջ առաջ եկած կամ, կթի օտար ծագում էլ ունեցել է, շատ հնուց սիրված է եղել մեր գուսաններից ու ժողովրդական երգիչներից և հայկական է համարվել, որ այդպես «հայերեն», «հայրեն» է կոչվել»<sup>1</sup>:

Այդպես, բացահայտելով հայրենների տաղաչափական առանձնահատկությունները, Արեղյանը կողմնակի այլ փաստերով ևս ապացուցում է, որ դրանք եղել են հին ժողովրդական գուսանական երգերին հատուկ, և այդ ոտանավորի գործածությունը մեր գրականության մեջ, որ հավաստված է տակավին X դարից (Նարեկացի), բացատրվում է ևս ժողովրդական բանաստեղծության թողած ազդեցությամբ:

2. Ազուն: Երկրորդ և կարևոր ձևական կովանը, որ գալիս էր հերթելու հայրենների «բուշակյան» առասպելը, նրանց ոչ միակերպ լիզուս էր, լիզվական տարբեր շեղանկություններով: Արեղյանը լիզվական մանրակրկիտ ու փաստացի քննություններով ապացուցում է.

ա) Հայրենների մեջ իշխող լիզում միջին կայերենն է:

բ) Նրանց մեջ «չի երևում հին լիզվի գրական ազդեցություն»<sup>2</sup>. կան միայն մի քանի զրարար բառաձևեր, որոնք հետևանք են հայրենների հորինման ժամանակ հին լիզվական ձևերի տակավին կենդանի լինելու և ժողովրդի մարդկանց բերանին նոր ձևերի հետ դրանց դուզահեռ գործածվելու:

գ) «Մինչդեռ հայրենների մեջ չի երևում հին լիզվի գրական ազդեցություն, միջին հայերենով հորինող քնարերգուներն, ընդհակառակն կրում են զրարարի անմիջական ազդեցությունը, միջին լիզվի մեջ խառնելով հին լիզվական ձևեր»:

դ) Հայրեններում միջին հայերենի համատեղ կան նաև «տեր արևմտյան հայերենի կամ տարբեր բարբառների ու ենթաբարբառային շատ ձևեր», որոնք միաժամանակ չլին կարող մեկ հեղինակի կողմից օգտագործված լինել:

ե) Կան շատ հայրեններ, որոնք «հորինված են միջին և նոր հայերենի խառնուրդով»<sup>3</sup>. պետք է կարծել, որնմեն, «թև խառն լիզվով հորինվածները մեծ մասամբ միջին հայերենից նորին անցման

չբանին են պատկանում, մինչդեռ միջին մաքուր լիզու ունեցող երգերն ալիխ հին ժամանակի գործ են»:

Եվ ոչ միայն այդքան. Արեղյանը հայրենների մեջ առկա լիզվական տարբերությունները դիտում և բացատրում է ալիալ երգերի ապրած բանահյուսական կյանքով, այսինքն, թե այդ երգերը թերեթեալան վաճառվելով, ժամանակի ընթացքում լիզվական փոփոխությունների են ենթարկվել:

Նա միմյանց դուզադրելով միևնույն հայրենի տարբեր վարիանտները, բազմաթիվ օրինաչափ փաստերով բացահայտում է նույն երգի մեջ ժամանակի ընթացքում կատարված լիզվական փոփոխությունները, երբ լիզվական հին ձևերը փոխարինվում են նորերով, երբ «մի բարբառային ձև կամ բառ փոխված է մի ուրիշ բարբառով»: Ընդհանուր եզրակացությունն այն է, որ շատ հայրեններ նախապես հորինված են եղել միջին հայերենով և «հետո միայն կրել են նոր հայերենի կամ բարբառային ազդեցություններ»: Երբ լիզվի և տարբեր բարբառների ձևերը, որ կան այդ հայրենների մեջ, սկզբնական հորինողից չեն ծագում, այլ այդ լիզվական շեղանկությունները հետևանք են այդ տաղերի լիզվական վերանորոգման»<sup>4</sup>:

3. Տարբերակներ: Ամենից առաջ Արեղյանն ընդգծում է հայրենների ձևական մի կարևոր հատկանիշը, նրանց տարբերակների առկայությունը, որ հատուկ է բանահյուսական տեսակներին, իբրև որդյունք նրանց բանավոր կենցաղավարման: Ապա, ցույց է տալիս, որ հայրենները ևս ժողովրդական խաղիկների նման ենթարկվելով փոփոխությունների, առաջ են բերում միևնույն երգի համար այնպիսի տարբերակներ, որոնք ունեն տարբեր բովանդակություն:

Բաղադատելով և ուսումնասիրելով հայրենների տարբերակները, նա դրանց մեջ ևս բացահայտում է համանման հատկանիշներ, որպիսիք առկա էին ժողովրդական քառյակներում: Հայրենները խաղիկների նման հորինվել են հանպատրաստից՝ շրջապատի անմիջական տպավորության տակ, երգչի հոգու մեջ ծնված մի փոքր զգացումից: Ապա, երգը անցնելով բերներերան, շրջապատի և երգչի գոտիային փոփոխության պատճառով առաջ է բերում միևնույն երգի զանազան տարբերակներ, որոնք ընդլայնվում ու բովանդակությամբ զգալիապես տարբերվում են միմյանցից: Սակայն էականորչ միայն այդ տարբերակների գոյությունն է, այլև զլխավորապես

<sup>1</sup> «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 43:

<sup>2</sup> «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 75:



Հայրենիների զարգացման այն օրինաչափություններն են, որոնք հատուկ են ժողովրդական երգերին անհասարակ:

4. Հայրենիների զարգացումը: Եվ Արեղյանն հարուստ ու բազմապիսի օրինակներով ցույց է տալիս, որ Հայրենիների մեջ առանձին տներ ու սոսիեր գտնվում են անբնօրինակ շարժման մեջ. միևնույն տանը կամ սոսիեր երևան է գրանց տարբեր երգերի մեջ՝ նոր իմաստավորմամբ ու հնչմամբ, կամ էլ ապրում է անկախ գոյություն (սուս): Տողերի և տների այդ շարժումն վիճակն իրավացիորեն մեկնաբանվում է երանք ապրած բանավոր կյանքով, երբ հայրենիների երգիչները մոռացված սոսիեր կամ տաներ լրացնում են ուրիշ երգերից, կամ էլ դրանք հորինելիս, ինչպես ժողովրդական խաղիկների հեղինակները, ազատ կերպով օգտվում են արդեն եղած տարբեր երգերի սոսիերից ու տներից: Հայրենիների մեջ նման հարաշարժ վիճակում են գտնվում երգի առաջիկ մեծ միավազները՝ քառյակները, որոնք սկզբնապես անկախ հորինվելով, հետագայում տարբեր երգիչների մոտ, հոգեբանական տարբեր զուգորդումներով միակցվում են և կազմում ծավալով ավելի մեծ երգեր: Երգիչների հիշողության մեջ տարբեր ստեղծում շարունակում են պահպանվել թե՛ այդ երգերի սկզբնական տարբերը՝ քառյակները առանձին-առանձին և թե՛ դրանց միավորված, զարգացած ձևերը՝ իբրև առանձին և թե՛ դրանց զուգորդմամբ են առաջացել, լինում են իմաստով տարտամ ու մուրթ, իսկ երբեմն էլ ձևով ու իմաստով վերամշակվում են երգչի կողմից՝ իբրև գեղարվեստական մեկ ամբողջություն, վերածվելով մի նոր արակի: Սակայն Հայրենիների զարգացումը այդ առիթանի վրա ես չի մեռու. տարբեր ու անկախ քառյակներն ու ությակները ձգտում են առավել մեծ ամբողջությունների մեջ միավորվելու, որ դարձյալ պայմանավորված էր այդ երգերի կենցաղավարման ընտելությամբ: Միևս և ուրախության այդ Հայրենիները երգվելով ինչույժների և ուրախ հանդեսների ժամանակ, բնականաբար, իրենց փոքր ծավալի պատճառով չէին կարող հագեցնել երկանների պահանջը, ուստի տարբեր Հայրենիներ երգիչների կողմից երգվել են ետևետև, հաճախ սուկ մեկ հատիկ քառի, կամ հանգի զուգորդությամբ: Այդպիսով առաջ են եկել տարբեր անկախ երգերի ընդարձակ տարաշարքեր:

Եվ ինչպես դրանք երգվել են և ունեկերվել, այնպես էլ դրանով են: Արեղյանը խոսուսն փաստերով ցույց է տալիս, որ Հայրենիները մեզ հասել են 22 հման ընդարձակ տաղաշարքերով, որոնք

մեզ տարբեր Հայրենիներ միացել են բառերի, հանգերի, երբեմն էլ իմաստների զուգորդմամբ, ձգտելով մեկ ամբողջության, ճիշտ այնպես, ինչպես բանահյուսական տպագիր ժողովածուներում բանահավաքների գրառած մեր ժողովրդական երգերի ընդարձակ շարքերը: Այսինքն, Հայրենիների հետ կատարվել է միևնույնը, ինչ ժողովրդական խաղիկների հետ:

Հայրենիների հետ կատարված վերահիշյալ փոփոխություններն ձևազարկական ծագում վերագրելու հնարավոր միտումը, Արեղյանն իրավացիորեն հիմնադրել է համարում, քանզի գրական-անհատական, նույնիսկ ժամանակին շատ սիրված ու երգված ստեղծագործություններն անգամ, տարբեր ձևազարկում այդ ընտելի և այդքան շատ փոփոխությունների չեն ենթարկվել: Հնարավոր չի համարում նա նաև այնպիսի մի կարծիք, թե՛ Հայրենիներն սկզբում հորինած լինի մի բանաստեղծ, ապա մեկ ուրիշը հետագայում տարբեր ձևերով ու վարիանսներով դրանք վերամշակած, տարբեր լեզվական ձևեր, տարբեր սոսիեր ու տներ, իմաստալից ու անիմաստ ձևով, ներմուծած լինի դրանց մեջ: «Հայրենիների այդ բոլոր հատկությունները,— եզրակացնում է Արեղյանը,—... մեզ բերում են այն հետևություններ, որ դրանք բերանացի ավանդված սոսիեր են եղել և մեկ ժամանակի ու մեկ անհատի ստեղծագործություն չեն, այլ, ընդհակառակն, դրանց վրա աշխատել են բազմաթիվ սերունդներ, և դրանք փոփոխություն, վերամշակություն ու զարգացում կրել են բնականաբար, երգիչների բերանին, երգվելու ժամանակ, այն էլ զարբեր ընթացքում: Ուրիշ խոսքով այդ փոքրիկ սոսիերն ստեղծել են ժողովրդական երգերի կյանքով և իբրև ժողովրդական երգեր կրել են անոնված զանազան ժամանակներում ու տեղերում և գոնազան ստեղծական ձևերով. ուստի և մեկմեկուց տարբեր տաղաշարքերով ու բազմազան վարիանսներով, ճիշտ ինչպես մեր ժամանակի ժողովրդական երգերի ժողովածուներն են»:

Սա Արեղյանի առաջին ընդարձակ հետևությունն ու ընդհանրացումն էր, որով նա «Քուչալյան» սոսիերի խնդիրն հիմնականում լուծված էր համարում: Սակայն, նա այդքանով չի բավարարվում, այլ ավելի հարցը խորացնում է և արծարծում այլ ուղղություններով:

5. Ժողովրդական երգերի և հայրենիների ընդհանրություններ: ա) Ո՛հ ը: Արեղյանը ժողովրդական երգերի հետ Հայրենիների ունեցած առաջին ազդերը տեսնում է Հայրենիներում ժողովրդական

1 «Էին գուանական ժողովրդական երգեր», էջ 115:

կենդանի լեզվին հատուկ զարգացման և սենի առկայության մեջ. բայց դա էական չի համարում, քանզի նման հատկանիշ կարող է հատուկ լինել նաև անհատական դրական ստեղծագործություններին: Ուստի այն առանձնահատուկն ու բնորոշը ուժի տեսակետից, որ միմիայն ժողովրդական ստեղծագործություններին և հատկապես երգերին է հատուկ և, որը հանդես է գալիս հայրենեկությունում, Արեղյանն համարում է հետևյալները.

1. Ժողովրդական բանավորական-երգանցուցական բանավորական անեծք, երգում, օրհնանք, փաղափանք և այլ ասացվածքների առկայություն, որ ամեն պահ հորովում է ժողովրդի մարդկանց բերանին և կազմում նրանց լեզվի աղն ու համբ.

2. Եվազական-փաղափառական բաների համախառն գործածություն, որ ժողովրդական երգերի բնորոշ հատկանիշներից է.

3. Վեպոգի կամ որոշիչ ածականների, այն էլ միայն սովորական մակդիրներ դարձած ածականների, չափազանց ասկավ գործածություն, որ բնորոշ է ժողովրդական երգերին: Գրական և բարդ ածականների գործածություն կա ինչպես հայրենեկությունում, այնպես էլ ժողովրդական երգերում.

4. Ժողովրդական երգերին առանձնահատուկ մոտիվների առկայություն:

Բ) Կնոջ արտաքինի նկարագրությունն և զանազան երբ: Արեղյանը լայն ընդհանրություն է տեսնում նաև ժողովրդական երգերում և հայրենեկությունում առկա կնոջ արտաքինի նկարագրի, նրա պատկերավորման միջոցների ու եղանակների միջև: Այդ արտահայտչաձևերը, որոնք իրավամբ պայմանավորված են նախնական աշխարհայեցողությամբ ու բնորոշումներով, կապվում են հին-նախնական բուսական և երկնային լուսատուների սիմվոլիզալի հետ և ձևեր են բերել ընդհանուր բանաստեղծական արժեք: Գրանք դարձել է նաև քարացած պատկերներ ու համեմատություններ, որոնցով զովարակվել ու նկարագրվել է սքրած էակը՝ կինը: Բանաստեղծական հիշյալ արտահայտչաձևերը դնո հնում ժողովրդականից անցնում են բանաստեղծներին և կինը թե՛ հին ու նոր ժողովրդական երգերում և թե՛ հին բանաստեղծության մեջ երգվում է հար և նման արտահայտչաձևերով:

1. Արեղյանը փաստացի բազմաթիվ դուզադուբություններով ցույց է առաջի, թե ինչպես կնոջ արտաքինը, հատկապես նրա անեծք, հասակը, ծոցը, դեմքը, աչքերը, հոնքերը, մազերը, շրթունքները, բերանը, ատամները, լիզուկ, մատները, ձեռներն ու թևերը,

մեջքը, վիզը և անգամ քայլվածքը հայրենեկությունում և ժողովրդական երգերում պատկերվում և գովաբանվում են նույն կամ նման մոտիվներով, պատկերներով և համեմատություններով:

2. Մինչդեռ հին բանաստեղծների (Նարեկացի, Աղմամարցի, Քլկուրացի և այլն) վրա նկատելի է Աստվածաշնչից եկող հրեական «երգ-երգոց»-ի դրական ազդեցությունը, հայրենեկների և ժողովրդական սիրո երգերի մեջ, սակայն, դրանք խստաբանականում են: «Երգ-երգոց»-ի մեջ, օրինակ, և մեր հին բանաստեղծների մոտ շատ հաճախ կնոջ անձի դեղծեցությունը նկարագրվիս, սեմեմատության համար մեջ են բերվում մի շարք բանկապին ֆուեր, երկրներ և նույնիսկ Բաղամեր, գետեր ու լիճներ: Մինչդեռ այդ մոտիվը հայրենեկությունում և ժողովրդական երգերում բնավ չկա: Այստեղից էլ Արեղյանը բացահայտում է հայրենեկների և ժողովրդական երգերի մեկ այլ ընդհանրություն:

3. Եթե հատուկ տեղանունները հին բանաստեղծների ու երգչիների մոտ ծառայում են կնոջ արտաքինը գովաբանող լոկ մաշված, քարացած արտահայտչաձևեր ու համեմատություններ, սպա դրանք հայրենեկությունում ու ժողովրդական երգերում կապվում են կոնկրետ պատմական հիշողությունների, երկրությունների հետ, վերադասարկելով երգչի աչքածն ու տեսանքը:

4. Մինչդեռ հին բանաստեղծների ու երգչիների մոտ սիրած կնոջ հազուապ ու կապուստի մասին շատ բիշ բան է ասվում, հայրենեկների և ժողովրդական երգերի մեջ այն զգալի տեղ է գրավում և Լրգվում համանման մոտիվներով:

Հայրենեկների ու ժողովրդական երգերի ձևական այս ընդհանրություններից, Արեղյանն անցնում է նրանց բովանդակության նույնություններին ու նմանություններին, հատկապես ժողովրդական կյանքի ու կենցաղի նկատմամբ այդ երգերի ունեցած հարաբերությունները:

Հիշյալ ինչորում Արեղյանի առաջին ընդհանրացումն այն է, որ հայրենեկները համեմատած հին բանաստեղծների առերին հետ, սրանք քերդհանրապես ունին միակերպ և ազբառ բնավորություն, նրանց մեջ չի երևում ժողովրդական կենցաղը, հայրենեկներն, ընդհանրապես, ճիշտ ինչպես արդի ժողովրդական երգերը, բազմակողմանի են և հարուստ են իրական կյանքի դանազան գրություններով ու գործողություններով. ժողովրդական սովորություններով ու բարքերով: Գրանք մեծ մասամբ բանաստեղծություններ են պատահած, ապրած այնպիսի մանր դեպքերի, այլապես զգացումների



ու հոգեկան վիճակների, որ միշտ կրկնվել են կյանքի մեջ, քանի իրիշու են միեմուր բարբերքը<sup>1</sup>: Եվ դրանով էլ բացատրվում է այն խրոնոսթիանը, որ սնունդ գծերը, համախ նույն բառերով և գրեթե նույն սողերով, արտահայտված կան և՛ հայրենների և՛ մեր արդի ժողովրդական երգերի մեջ: Պատճառը, Աբեղյանը համարում է այն, որ հայրենների «հեղինակները եղել են ժողովրդական երգիչներ»:

Նա հարուստ փաստերով և ժողովրդական խաղերի համեմատությամբ բացահայտում է ժողովրդական կյանքի բնորոշ բազմաթիվ կենցաղական գծեր, որոնք արտացոլվել են հայրենների մեջ: Դրանցից են, օրինակ, սիրույց հիվանդանար և որևէ կամակով (հաճախ խնձոր) հիվանդին այցի դեպքը, աղչկա՝ փողոցի կողմի դռնակից տղային նայելը, աչքով-ուներով անելն ու սմանք ժիճազելը<sup>2</sup>, փողոցում սիրած աղչկան պատահելն ու բռնի համ-բուրելը, փոխուցարձ սիրո խանդարումը աղչկա հարազատների կողմից, ծածուկ սիրողություն և բամբասանք այդ սոսթիվ, բռնի ամուսնացումը, վարձանք և աղչիկ փախցնելը, ամուսնք տանիքներին բնելը և սիրահարների դադանի հանցիպումը տանիքներին, զիջերով նշանածին այցելության գնալը և այլն:

Այս և բազմաթիվ նման կենցաղային գծեր, որ արտացոլվել են հայրեններում և, որոնց զուգահեշտը գրեթե նույն բառերով և նույն սողերով առկա է ժողովրդական խաղիկների մեջ, Աբեղյանին բերում են այն հնահույններ, թե հայրենները ոչ միայն իրենց ձևական հատկանիշներով, այլև սենթրին կողմով, բովանդակությամբ ևս անշատվելով հին քնարերգուներից՝ նույնանում են ժողովրդական երգերի հետ: Եվ որ հայրենների խաղիկների հատկությունն ևս նույն է տալիս, որ դրանք բազմաթիվ հեղինակների բանաստեղծություն են: Այս նպատակաշարժումն Աբեղյանը հիմնավորում է հայրեններին և ժողովրդական երգերին բնորոշ երկու կարևոր հատկանիշներով.

«Մի կողմից,— գրում է նա,— դրանց (իմա՝ հայրենների— Ս. Հ.) ամեն մեկի մեջ լավում է անճեական հույզի շեշտը, դրանք գրեթե բոլորը իսկական մամուր ԲԵՐԵՐՈՒՄԻՆ են, բանաստեղծի իրեն սեփական ապրումների, սեփական հոգեկան վիճակների արտահայտությունները, որոնց յուրաքանչյուրի մեջ մենք զգում ենք երգչի սրտի արոփումները: Մյուս կողմից՝ այդ բազմաթիվ սակո-

րի բովանդակությունն աչիբան բազմազան է, նրանց մեջ երևան կված հոգեկան վիճակները և ատհասարակ դրոթություններ... այն-բան այլազան են, որ այդ բոլորը իրենց ամբողջությամբ չեն կարող մեկ մարդու ապրումներ լինել: Հայրենների այս թվացող հատկությունն Աբեղյանը, ինչպես արդեն ասել էր, բացատրում է սույն թե նրանով, որ դրանց հեղինակը, մեկ անճատ բանաստեղծ, կրգել է ուրիշների բազմազան զգացումներն ու այլազան հոգեկան վիճակները, այլ նրանով, որ այդ երգերը բազմաթիվ հեղինակների գործ են: Ամեն մի բանաստեղծ իր հորինած երգի մեջ, բնականաբար, իր անճեական զգացումների, իր սեփական դրոթյան արտահայտող է դարձել, ուրիմն մարդու քնարերգություն է հորինել, բայց և այլևայլ բանաստեղծների կարող էին և պետք է, որ այլևայլ այլազան ու բազմազան վիճակներ և ապրումներ ունենային ու երգեին: Դրանից է առաջանում, ա՛հա, հայրենների թե՛ մարդու լիարերջություն, անճեական բանաստեղծություն լինելը և թե՛ սխտածանակ նրանց այլազանությունը<sup>3</sup>:

Ճիշտ նույն հատկություններով են օժտված նաև ժողովրդական սիրո երգերը՝ խաղիկները, որոնք «ստեղծագործություն են բազմաթիվ հեղինակների, ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց»: Ընդ որում հայրենների մեջ ևս կան կանանց լիարերջ հոգիներ, որոնք բանաստեղծությունների ստեղծագործություն են կամ էլ սկզբնապես տղամարդկանց կողմից հորինվածների կանանց հետագա վերամշակումներ:

Ահա, նման բազմակողմանի հիմնավորումներով Աբեղյանը անստեղծելիորեն ապացուցում է հայրենների ստեղծագործության կուկիտով, ժողովրդական բնույթը, նրանց բանահյուսական որոշակի ոգին ու նկարագիրը:

Երկրորդ կատեոր խեղդեր՝ հայրենների պատմական հնություն կամ ծագման հարցն է, որ Աբեղյանը բնեում է հայ ժողովրդի պատմական կյանքի որոշակի երևույթների տեսադաշտից:

Չենվելով հին մատենագրական սովյալների վրա, Աբեղյանը ապացուցում է, որ հին լալի<sup>4</sup> կամ կոծի երգերը հորինված են եղել հայրենի շափով և նարեկացին արդեն X դարում հետևելով դրան, «Մերերգության մատյանի» որոշ հատվածներ գրում է հիշյալ շափով: Բացի այդ, նույն նարեկացին իր տաղերում («Տաղ Արարիկապոսի») բնության զեղեցիկությունը, իսկ Շնորհալին XIII դարում՝ Մարիամ կուլչի ՍԼԻՍՏՈՒՄ՝ երգելիս դարձյալ օգտա-

<sup>1</sup> «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 142:

<sup>3</sup> «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 159:

գործում են հայրենի շափր, որից Արեղյանն իրավացիորեն եզրուկացնում է, թե «Նսումն այդ շափրով (իմա՝ հայրենի—Ս. Է.) հորինված են եղել ոչ միայն մեռելի ողբեր, այլ նաև սիրու երգեր»: Ապա, դարձյալ, մատենագրական այլ վկայությունների հիման վրա Արեղյանը հանգում է գրական մի շատ կարևոր նկատման, այն, սոր մեր հոգևոր երգի է աշխարհիկ երգի անշատումն եղել է ոչ միայն բովանդակության, այլև ձևի, ոտանավորի մեջ, որ «մեր հոգևոր երգի» շարականների մեջ մինչև 12-րդ դարը գտնում ենք միայն ազատ տակտավոր հորինվածքներ (տակավաձևի), և ավելի ազատ ոտանավորներ յամբական ոտերևով... ազատ դիմածական ոտանավորներ, յամբական ազատ անզամավոր ոտանավորներ,— բոլորն էլ այնպիսի բանաստեղծական շափր, որ մեր լեզվի մեջ հնչում են... պրոզային մտորիկ: Ահա այդ հին հոգևոր երգի շափրի հետ համեմատած՝ մեր հին աշխարհիկ երգերի շափրը (հայրենի շափր, 5—5 և 4—4 անզամավոր ոտանավորներ) «ավելի ոթմիրիկ են, և ըստ ինքյան էլ շատ երաժշտական են: Բայց շափրով հին հեղեղեցական բանաստեղծները խորշիկ են այդ բանաստեղծական շափրեր բանեցնելուց և բանեցնողներին էլ «անփակ բերանները պարտավել են», որովհետև աշխարհիկ երգիչներն այդ շափրով հորինելիս են եղել սիրու երգեր», նվ այդ ամենից Արեղյանը հետևեցնում է, որ «մեր աշխարհիկ քնարերգությունը մինչև 11-րդ և 12-րդ դարերն առանձնապես զարգացած է եղել, քանի որ մեր լեզվի մեջ ամենից ոթմիրիկ շափրը երկատող տներով՝ առաջ են բերել, բանեցրել ու զարգացրել են ոչ թե կեղեցական երգիչները, այլ սիրու երգիչները և նույնիսկ բանաստեղծ լավան կանայք, այն էլ հակառակ կեղեցու, թշնամական վերաբերմունքին: Այդ աշխարհիկ երգիչները մինչև անզամ հանգի կիրառությունն են մտցրել իրենց բանաստեղծության մեջ, թե որ դարից սկսած, մենք այդ չգիտենք, բայց 10-րդ դարում արդեն եղել են հանգավոր հորինված աշխարհիկ երգեր»<sup>1</sup> :

Դրանք, բերանացի ավանդման պատճառով, չեն պահպանվել, բայց XIII դարից սկսած, «եր մեր գրավոր բանաստեղծությունը հետզհետե աշխարհական է զանոնում, երևան են գալիս միջին հայրենեով հորինված հայրենիքն առանձին անհատների անունով, սկզբում խրատական բնավորությամբ, հետո նաև պանդխտության և սիրու երգեր»:

<sup>1</sup> «Հին գիտական ժողովրդական նորք», էջ 164:

Այդպես, հավաստելով հայրենի շափր հնությունը, ժողովրդական ծագումն ու բնույթը, Արեղյանը վկայում է, որ հայրենի շափրով հորինված ժողովրդական հնագույն երգը հասել է XIII դարից և դա մեղ արդեն հայտնի Առնի վիպական երգն է: Հայրենիքի մեջ պահպանված բազմաթիվ ուղղակի պատմական վկայությունների (Սարա թայան, Հարեզ, Մուրատ Խորասան, Հոսոմ) և պատմական իրադրությունների համապատասխան զուգորությունների հիման վրա ցույց է տալիս, որ մի շարք հայրենիք իրենց հնությամբ հասնում են XIII դարը և իրենց մեջ պահպանել են Հայաստանում և նրա սահմաններից դուրս այդ շրջանում կատարված պատմական նշանավոր իրադրությունների վերաբերյալ հիշողություններ: Ապա՝ հայրենիքում պահպանված տեղանունների հիման վրա Արեղյանը փորձում է վերականգնել նույնիսկ հայրենիքի հնային ակնհերթ բնակության երկիրն ևս, և ընձեռված սուղ տվյալներից կրակազնում, որ հայրենիքը հայրենիքն անկնում է մի լայն սփվ վրա. կենտրոնական Մեծ Հայաստան, Վանա լճի շրջակայք և այդտեղից էլ դեպի հյուսիս՝ Բազրեանեզ, Կարս ու Անի, ապա և երկու եկրատների հովիտը:

Երրորդ կարևոր խնդիրը, որ դնում է լուծում է Արեղյանը՝ սիրու և ուրախության հայրենիքի հեղինակների, այդ երգերի կենցաղավարման նպատակի ու բնույթի հարցն է:

Մատենագրական հարուստ ու խոսուն փաստերով Արեղյանն հիմնավորում է այն կարծիքը, որ հին աղնվակնություն և հարուստ քաղաքացիների խնջույքներին ու ուրախության հանգստներին, որ ուղեկցվել են լիտի պարերով, կարավներով ու երգերով, գուսանների ու վարձակների կողմից կատարվել են ոչ միայն հին հիթանոսական վիպական երգեր ու առնպելներ, այլ նաև շվայտ գինարուցների ժամանակ՝ «արքերություն», այսինքն ուրախության և սիրու երգեր: Երկու կարգի երգերն էլ (հիթանոսական-վիպական, սիրու և ուրախության) խոսելի են համարվել խոսակերտ կեղեցականներից, իրենց հիթանոսական ու ժայռահեղ աշխարհիկ, մարտնական բնույթի ու բովանդակության պատճառով: Ուրախության և սիրու երգերը, որ երգվել ու նվագվել են գուսանների ու քաղաքացիների կողմից, «հորինված են եղել ոչ թե հին գրարար լեզվով, որ 10-րդ դարից առաջ արդեն տարբեր է եղել ժողովրդական լեզվից, այլ ժամանակի կենդանի խոսակցական լեզվով, որ է 12-րդ դարից սկսած՝ գրական լեզվի է վերածվում»:

Միջին հայրենեով հորինված գուսանական այդ երգերն ու



երանց արվեստը, հետագա դարերում ևս չի մոռացվում. դրանք լայնորեն կենցաղավարել են Անիում և Կիլիկյան Հայաստանի բազմաքանակով հիմնադրողներին (Կոստ. Նրզնկացի, Մարտիրոս Խարասարցի, Հովհ. Բլլուրանցի) սիրո և ուրախության տաղերում պահպանված բազմաթիվ ուղղափառ և կողմնակի վկայություններով Արեւիկյան հավաստում է, որ գուսաններն ու նրանց արվեստը նոր անուններով շարունակում են պահպանվել զեռ ուշ դարերում և ժողովրդական կերպերը անվան տակ հասկացվել են խնջույթներում կատարվող սիրո և ուրախության երգերը:

Եվ Արեւիկյան իրավամբ գտնում է, որ այսքան սիրված ու տարածված գուսանական երգերը, չէին կարող իրենց բերանացի ավանդման պատճառով խսպառ կորչել, մանավանդ, որ XIII—XIV դարերում արդեն նույնիսկ կրոնավոր բանաստեղծներից (Կ. Նրզնկացի) «Միրու բաներ» են պահանջել: «Մի սնգամ որ առանց ալլարանութիան... գրաւոր սիրու երգեր ունենալու պահանջ կար, արդեն պետք է գուսանների ուրախության կամ սիրու երգերն էլ գրի առնելու պահանջ լիներ, և հենց որ տաղարաններ են կազմեցվում, դրանց մեջ պետք է մտնեին նաև հին գուսանական երգերը: Եվ մտել են: Մեր Հայրենիքը հենց այդ հին երգերից են»:

Այդպես, հավաստելով Հայրենիքի հին գուսանական ուրախության խնջույթի երգեր լինելը, Արեւիկյան իր այդ տեսակետն հիմնավորում է Հայրենիքի մեջ արտահայտված գաղափարներով ու աշխարհայացքով:

Մատենադարանի բազմաթիվ փաստերով հաստատված պատմական այն իրողությունը, թե գուսանները... հեռու են եղել եկեղեցուց ու կրոնից, բարեպաշտությունից ու ժողովրդությունից, և որ եկեղեցին շարունակ հակառակ և հակաօժող է եղել գուսանության», տարբեր ձևերով անդրադարձել է Հայրենիքի մեջ: Նախ՝ Արեւիկյանը Հայրենիքից վերջրած բազմաթիվ փաստերով ապացուցում է.

ա) Հայրենիքի հեղինակների կրոնական ծանոթություններն ու գիտելիքները եղել են խիստ սահմանափակ:

բ) Հայրենիքի հեղինակները չեն մտնում շրջապատի շին եղել և անտարբեր են եղել եկեղեցական ծեսերի ու հավատալիքների նկատմամբ:

գ) «Հայրենիքի մեջ... չկա հին ճգնափորական հայացքն ու

զգացմունքը սիրու վերաբերմամբ, չկա հոգու և մարմնի կրկնը, որ հատուկ է մեր հին բանաստեղծներին և պղտորում է նույնիսկ հին սիրու երգիչների սիրտը: Հայրենիքի... մեջ սերը երգվում է հանգիստ, անխառն որևէ կրոնական երկուցից»:

դ) Հայրենիքի մեջ արամիտ երգիծանքով ծաղրվում են վանական խառակեցությունն ու հոգեդրսականությունը և նույնիսկ եկեղեցին ու սրբերը:

Արեւիկյանը ցույց է տալիս նաև, որ Հայրենիքի մեջ բազմաթիվ խոսուեն մոտիվներով ու պատկերներով անդրադարձել է, հակառակ եկեղեցու պատվիրաններին, գուսանության բարոյաժողովուրդը ընդհանրապես չէր ընդունում զինարար, սեր, վայելք, հեշտանք և նույնիսկ կիրքն ու կրքի հագնեցումը: Մյուս կողմից, Արեւիկյանը, Հայրենիքի, իբրև գուսանական երգերի, ընձևում փաստերի հիմամբ, շոշափելի կերպով ցուցահանում է եկեղեցու կողմից այնքան խաստրոն հալածվող և եղովվող գուսանության երգած ու քարոզած գաղափարները, նրա որդակի «գայթակղությունները», որոնց մասին մինչ այդ մեր գիտելիքները սահմանափակվում էին մատենագրական շոր վկայություններով:

Այդպես, հիմնավորելով Հայրենիքի իբրև սիրո և ուրախության հին գուսանական երգերի իր տեսակետը, Արեւիկյանը հանդուժում է այն կարեւոր եզրակացությունը, որ գրանք (Հայրենիք) «Տակասակ լինելով եկեղեցու բարոյաժողովուրդը ընդհանրապես չէր ընդունում զինարար, սեր, վայելք, հեշտանք և նույնիսկ կիրքն ու կրքի հագնեցումը: Մյուս կողմից, Արեւիկյանը, Հայրենիքի, իբրև գուսանական երգերի, ընձևում փաստերի հիմամբ, շոշափելի կերպով ցուցահանում է եկեղեցու կողմից այնքան խաստրոն հալածվող և եղովվող գուսանության երգած ու քարոզած գաղափարները, նրա որդակի «գայթակղությունները», որոնց մասին մինչ այդ մեր գիտելիքները սահմանափակվում էին մատենագրական շոր վկայություններով»:

Քաղաքի հիմնադրողները հակադիր աշխարհայացողություններ ունեցել են: Այդ է պատճառը, որ մինչդեռ դրանց մեջ երևան են գալիս, այն էլ մեծ չափերով, աշխարհականի կյանքից և նույնիսկ նրա ուրախության խնջույթներից շատ բնորոշ կողմեր,— հոգևորական դասակարգից ոչ մի այնպիսի դիմ չենք գտնում, որ կարելի լիներ տակ, թե այս կամ այն տաղը հոգևորականի բանաստեղծություն է, իբրև իր զատակարար կյանքի ու աշխարհայացողության արտահայտություն»:

Քաղաքի հիմնադրողները հենցաղափարման օտցիալական միջավայրի խնդիր, Արեւիկյանը, դրանց մեջ անդրադարձված կյանքի ու կենցաղի որոշակի տվյալներից ելնելով, միանգամայն հստակ ու նշարտացի որոշում է, որ Հայրենիքը շինականի՝ գյուղացիության բանաստեղծություն չէ, այնուհետև մեր արդի ժողովրդական քաղաքների պարզությունը և մանավանդ պարզամտությունը,

1 «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 184.

1 «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 198.

ալլ, որ «դրանք, իրենց բովանդակությամբ, զգեվականության և քաղաքացույցական բանաստեղծություն են, ինչպես և պետք է լինեն իբրև հին գուսանական երգերի մանցորդներ»<sup>1</sup>:

Հայրենների կոլեկտիվ ժողովրդական ստեղծագործություններ լինելու իր տեսակետը Արեղյանն ի վերջո հիմնավորում է մի դորեղ և անհերքելի կոպտով, այն է՝ այդ երգերը ժողովրդի բրնանին մինչև XIX դարը հարատևելու հանգամանքով:

Հայ բանահավաքները (Սրվանձախ, Ըանիկյան, Պալյան, Գուլումճյան) XIX դարի երկրորդ կեսերին և XX դարի սկզբներին Ակնի, Վանի, Խարբրդի, Ալաշկերտի, Բասենի կողմերից գրառում են «անտունի» ընդհանուր անվան տակ հայրենների բազմաթիվ նմանակներ ու տարբերակներ, որոնց մի քանիսի մեջ նույնիսկ հիշատակվում է դրանց հին անունը՝ հայրեն— «հարեն» կամ «բաշ հարեն» ձևերով<sup>2</sup>:

<sup>1</sup> «Վրաստանյան առաջին մեթոդա ճեղքողները, լիարդանալով Հերբեյ Արեղյանի փաստարկները, երա այս կարծիքը հորոշում են տակնդու-նադեռ-նախա ճեղքողների տեսակետ», ճեղքողին, արտեր աշխատել են Քուլակի առեք-ժաղրթությունն սցառործել հորտա իրենց սե գործի՝ ուսուցիտն ուսույալական մեկնարանություն տալով երանա («XIII—XVIII դարերի հայ գրականություն», կազմեց Մ. Մկրյան): Քն ո՞րն է Արեղյանի հիշյալ տեսակետը «անցքնախառնական» ու «տակնդու-նադեռ-նախալական», այց թողում են հեղինակի խղճին:

Ավելորդ համարելով վիճարկում այց հիմնագործ մեղադրանքը, Ախատեր միայն, որ Արեղյանն հայրենները համարում է գուսանական ժողովրդական երգե-այսինքն գուսանների՝ ժողովրդի այց սփռք ու սննդն մարդկանց ստեղծագործություն, որոնք երգել են նաև աղեվականների ու հարուստ քաղաքացիների հանդիսներին, գուսաններ, որոնց երգերը իրենց աշխարհիկ հեմեոսական բովանդակության պատճառով հակառակ էին միջնադարյան քրիստոնեական սակեոսական ոգուն ու աշխարհայացքին, իսկ իրենք էլ խոտորն ենթարկվում էին կնկնզեոս համանքին ու բանագրանքին:

<sup>2</sup> Մալոսոյան մատենագրանի եոր ձևեր ընդված ձևագիր տաղարաններից մեկում (№ 10208), որի հետքունը հանում է մինչև XVII դար, «Մարաներ կրգը» կոչված տաղաչարքերի նախադրության մեջ, գրելը հիշյալ երգերը, բուն նշ-դեմակների պատկանելության և ընդգրկել, բաժանում է երեք զյուլներին, որոնցից վերջինը անվանում է «անչայտ անուամր սասցոգրի, աշխարհուրն բաոտք և ան-չարմարականք և չարմարականք, որոց ոմանց սասցուածցոս «Անտունի» անուն: Այց երրորդ զյուլում, բացառությամբ մի քանի այլ կարգի տաղերի, մանցածները հայրենների տաղաչարքեր են, որոնք, ինչպես պարզվում է հիշյալ վկայությունից, գնանա XVIII դարում, զուցե և դրանց առաջ, տաղարաններում արդեն կոչվել են իրենց երկրորդ անվամբ՝ անտունի (իմա՝ անտունի), եր քան, որ առումով հաս-վատված էր միայն XIX դարի վերջերի բանավոր վկայություններով: Ապա, հին մատենագրական տվյալներով առաջին անգամ բառացի վկայվում է, որ հայրեն-

Արեղյանը հավաստելով անտունիների և հայրենների նույնու-թյունը, գտնում է, որ սիրտ և ուրախության հին գուսանական եր-գերը՝ հայրենները հարատևում են ժողովրդի մեջ իբրև ժողովրդա-կան երգեր՝ անտունիներ, «միմանակաց անկախ ու իրար հետ կց-վելով և շարունակ փոփոխվելով, մեծանալով ու փոքրանալով, սի-րու երգը մահերգ, վիճակի երգ դառնալով կամ ընդհակառակը»-այսինքն՝ դրանք այսրիկ են իսկապես ժողովրդա-բանահայտական կյանքով:

Ապա, Արեղյանը հայրենների և արգի ժողովրդական երգերի համապատասխան գուզադրություններով բացահայտում է նին նայրենների և նոր ժողովրդական երգերի ճառարերությունը: Այ-սինքն այն, որ հին գուսանական երգերի շատ մտտիվոր, բանաս-տեղծական միևնույն շարքում ու պատկերներով, կամ երբեմն էլ շարի խախտված հանդես են գալիս արգի ժողովրդական երգերի մեջ, երբեմն մի քանի վարիանտներով, որպես ոչ միայն սիրո եր-գեր, «այլև լացի, օրորոցի, վիճակի և նույնիսկ հարսանեկան եր-գեր»՝ Գրանցի Արեղյանը հնարավոր է համարում հանգել հայրեն-ների իտր հնությունն հավաստող այն կարևոր հետևություններ, թե հիշյալ ժողովրդական երգերին «համապատասխան հայրեններ, այլև ուրիշներ, կնդկ են հենց լացի, վիճակի, հարսանեկ և այլն, և որ Ակնի ողբասաց կանանց հայրենի լավով հորինված բազմա-թիվ լացի անտունիները հին սլալական կանանց» նույն լավով հորինված սլալիքի բանաստեղծություններն» են, որոնք հասել են մինչև 16-րդ դարը և ապա մինչև մեր օրերը, հարկավ, միշտ վե-րամշակված ձևով, լացի ու հարսանքի և այլ երգերը դառնալով սի-րու երգեր, և ընդհակառակն»:

Բազմաթիվ գուզադրություններից հետո Արեղյանը եզրակաց-նում է.

անտունիների հեղինակներն անհայտ են (աննայտ անուամր սասցոգրն): Բացի այց, հայրեն-անտունիների մի մասը իրենց սիրային ազատ բովանդակության պատճառով, նույնիսկ XVII դարի գրիչի հայացքով տեղաբարձականք—անհար-մար, անգուտան է համարվել, այսինքն՝ արեգես, ինչպես հին գուսանական եր-գերը հեղի աշրում: Եվ վերջապես՝ հայրեն-անտունիների շարքը հիշյալ տաղա-րանում սկսվում է հանելով ծանցվաթյամբ՝ «հանգերն նուագարանոր», որ վկայում է, թե հայրենները երգվել են նվագարանների նվագակցությամբ, այսինքն՝ ինչպես ինչույցների և ուրախության հանգեսների երգեր:

Մատենագրական այս վերջին ուղղակի վկայությունները գալիս են ի նորո հաստատելու Արեղյանի վերջ շարաբոված տեսակետների խելությունը:

Է Հին գուսանական ժողովրդական երգեր, էջ 227:



ա) «Հայրենների լեզուն մտակ է Ակնում պահված անտունների լեզվին» և այդ այն պատճառով, որ անտունիները մինևույն հին հայրեններն են, ուստի և «սկզբնապես եղև են միջին հայերենով և հետագայում միայն, բերանացի պահված լինելով, Ակնում վերածվել են Ակնի բարբառին», բայց միաժամանակ պահել են միջին հայրենի լեզվական շատ ձևեր, որ չկան Ակնի բարբառում:

բ) «Միջին հայրենով հորինված հայրենները մինչև տաղարանների մեջ, ոչ ոչ բան 16-րդ դարը, գրի առնվելը՝ երկար բերանացի ապրելով՝ արդեն լեզվական փոփոխության են ենթարկված եղև բարբառների և նոր լեզվի աղբյուրվյալը»: Այդ փոփոխությունը շարունակել է տեղի ունենալ նաև հետագայում, սերբանացի ապրող նույն հայրենի (անտունու) մեջ մինչև 19-րդ դարի վերջին քառորդը, երբ մինևույն տաղը մի երկրորդ անգամ է գրի առնված»: Այդ երկրորդ շրջանի փոփոխություններն ավելի մեծ չափերով են կատարվել:

ց) Անտունիների մեջ սովա է դեռևս հայրենի շափր. բայց ոտանավորի ուրիշ մասն ավելի թույլ է և հանգրեք էլ զգալապես պակաս են:

դ) Անտունիների երգիչները, ճիշտ ինչպես հայրեններին՝ միանգամայն ազատ են վարվում տների ու տողերի, ինչպես նաև բառակների և ամբողջ երգերի հետ, դրանք ավելացնելով, դուրս գցելով և կամ փոխանակելով այլ հայրենների համապատասխան մասերով: Այսինքն, բառակները, տներն ու տողերը, ինչպես հայրեններին մեջ, գտնվում են միշտ շարժուն վիճակում: Այդպիսով, անտունիների մեջ շարունակելով է հայրենների արվեստի հին ավանդությունը, և անտունիների երգիչները դեռ դիտեն երգելիս վերածախել և վերաստեղծել այդ հնավանդ երգերը. թե իրենցից նոր հորինելով տներ ու բառակներ, աշուղտ, նաև մեծ երգեր, և թե օգտվելով հին հայրեններից, իբրև պարտատի նյութից:

ե) Հայրենների արվեստի հարատևության պատճառով էլ, Ակնի և Վանի ժողովրդական երգերի մեջ կան ընդարձակված պանդուխտության երգեր, որոնք կազմված են մի քանի հայրենների հարակցումով: Պանդուխտության երգերի նման լայն զարգացումը հայրեններից Արևիլյանը բացատրում է սոցիալ-պատմական դրդապատճառներով, այսինքն այն հանգամանքով, որ XVI դարում և առաջ, երբ գրավել են հայրենները, պանդուխտությունը դեռևս հայ կյանքում լուրջ սոցիալական շարիքի շէր վերածվել և նոր վերաբերյալ երգերն էլ, բնականաբար, մեծ զարգացում ու ծավալ չէին

կարող ունենալ: Հետագայում, երբ պանդուխտությունը դառնում է մեր ժողովրդական կյանքի լուրջ ցավերից մեկը և այն էլ ազդասության հետևանքով, համապատասխան երգերն արդեն զարգացման լայն ձևեր ու ծավալ են ստանում:

Արևիլյանի ընդհանուր եզրակացությունն այն է, որ հայրենները սկզբնապես լինելով գուսանական, այսինքն «սիրու և ուրախության, զուցե և ավելի վաղ դառնում են միաժամանակ նաև քաղաքացիական բանաստեղծություն»: Հետագայում, երբ հայ ազերվականությունը մեռնում է, այդ երգերն ու նրանց արվեստն ապրում են քաղաքացիների մեջ, իսկ գուսանները շարունակել են այդ երգերը երգել քաղաքներում, սպա քաղաքապետներում և զյուդիքում խնչույքներին և հարսանիքներին: Եվ ինչպես ամեն մի բանավոր ստեղծագործություն, այդ տաղերն ու նրանց արվեստն ևս, հին արվեստավոր երգիչ-երգուհիներից, այսինքն գուսաններից և վարձակներից անցնում և պահվում են քաղաքացիների և զյուդապիներին մեջ, «ուրիշ խոսքով՝ դրանք ընդհանրանում և ժողովրդականանում են, և այս, հարկավ, ամենահին ժամանակներից ի վեր: Այս երկար դարերի ընթացքում, բնականաբար, միշտ նորանոր տաղեր են հորինվում նույն տիպով և արվեստով, հաճախ հին տվարյան մոտիվներով և նույնիսկ հին երգերի տողերով ու տեքստով. իսկ հին երգերը, եթե չեն մոռացվում, շատ սերունդների բերանին ապրելով՝ վերամշակվում, նորոգվում են թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով ու լեզվով և իրար միանում բազմազան համակցություններով:

Եվ այսպես մինչև այդ հին տաղերի գրի առնվելը և սպա մինչև մեր օրերը իբրև անտունիներ կամ այլ երգերու Այդ է պատճառը, որ այդ բազմաթիվ փոքր երգերը, որոնք բազմաթիվ էլ անհրաժեշտ մնացած երգիչների, մասամբ էլ երգուհիների, զուցե նաև գրագետ բանաստեղծների ստեղծագործություն կամ զանազան փոփոխակներով վերամշակվելու են դարերի ընթացքում, իրենց մեջ կրում են աշխարհականներ, առանձնապես, բուրգաբացու և աղերվականի կենցաղը, մի քանի մասնակի ժողովրդական երգերի ողջն ու ուճը, միաժամանակ և հին գուսանական երգերի՝ «տակասիչները»:

Այդպես, Արևիլյանը «Հին գուսանական ժողովրդական երգեր» հետազոտությամբ մեկերդմիշտ հերքելով հայ բանասիրության

1 «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 258-260:

մէջ արմատաւորված «Քուչակյան երգերի» անասուիչը, անասուր-կելի շինմամբ ունենրով ապացուցում է, որ «Հայրենները կրչված ՚Նամական երգերը «Ճայոց հին աշխարհիկ Գահերգության մնացորդներն» են և ոչ մի առնչություն չունեն XVI դարում արքայ նահապետ Առլոյ Քուչակի ՚Նամ:

Այլ տեսակների հաստատմամբ Արեղյանը ՚Նայ ժողովրդական քնարերգության մէջ փաստորեն վերականգնում էր մի ուրլուն ու զինեցիկ քնագալստ, բանահյուսական մի մեծ ու կարևոր շրջան, որ կապող օղակ է ՚Նանդիսանում ՚Նայ բանահյուսության զարավար զարգացման պատմական աարրեր փուլերի միջև:

Արեղյանը նահապետ Քուչակին վերագրվող տաղերը՝ ՚Նայրենները հետազոտում և բննում է (բացառյալ բանասիրական-բանալիմնային հատվածները) միենույն սկզբունքներով՝ ինչ ժողովրդական խաղիկները, Այսինքն, նա այդ տաղերը դիտում է պատմութան հայտնական զարգացման մէջ. նրանց կրած փոփոխությունների տեսագալտի վրա, բացահայտելով բանահյուսական ստեղծագործություններին միանգամայն հատուկ օրինաւափություններ. նա ոչ միայն ՚Նայրենների արտաքին-տիպաբանական զարգացման մէջ է ցուցահանում նրանց բանահյուսական ժողո-

վորդական միտումն ու տարերբը, այլև բովանդակության, որտեղ արտացոլված է գտնում ժողովրդական կյանքի ու կենցաղի բազմապես ՚Նանգամանքները: ՚Նայրենների նկատմամբ բանագիտական նման պատմական մտտեցումն առավել հասակվում, ճշգրտութւում և ՚Նինմամբում է Արեղյանի մատերիալիստական մեթոդաբանության սկզբունքների զուգակցման մէջ, երբ նա ՚Նայրենների՝ իբրև ՚Նին գուսնական երգերի ծագումն ու զարգացումը դնում և բննում է ՚Նայ ժողովրդի բազմադարյան կյանքի պատմական որոշակի իրողությունների ՚Նիմքի վրա՝ նրա կենցաղի, ՚Նոգբանության, աշխարհայացքի սերտ առնչությամբ:

Մեթոդական ու մեթոդաբանական նման սկզբունքները հատուկ են ոչ միայն Արեղյանի ժողովրդական քնարերգությանը նկիրված հետազոտություններին, այլև, ինչպես տեսել ենք. նրա բանագիտական ուսմունքին ա՚Նասարակ:

Եվ այդպես, խոր ու բազմակողմանի հետազոտելով ՚Նայ ժողովրդական բանահյուսության էական բազադրիկները՝ նրա վիպական ու քնարական տեսակները, Արեղյանը զարգացման նոր թափ ու թիփը է հաղորդում տակալին իր խանձարուրային վիճակում գտնվող ՚Նայ բանագիտությանը: Արեղյանի հետազոտությունների շնորհիվ թոթովախոս ՚Նայ բանագիտությունը, մի բանի տասնամության բնթացքում, ձևեր է բերում իր բար էական հատկանիշները, հասունանալով ստանում ժամանակաշրջանի գիտական պահանջները բավարարող մի ինքնուրույն որակ և իր գիտական սիստեմով ու մակերդակով հավասար է դասվում ժամանակի եվրոպական և ուսսական բանագիտության մակարդակին:

Արեղյանի շնորհիվ ՚Նայ բանագիտությունը վերջնականապես աղատարարվում է հարակից գիտությունների (ազգագրություն, գրկականություն, պատմություն, բանասիրություն) գերությունից, դուրս է գալիս զարգացման սեփական մայրուղի և ստանում իր ինքնուրույն նկարագիրն ու որակը:

### III. ՌԻՍՈՒՆԻՔ ԶԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՍՎԱՏԱԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արեղյանի ռիսական ժառանգության մէջ մի առանձին արժեքավոր մաս են կազմում ազգագրական ուսմունասիրությունները: Հետաքրքրությունը զեպի ժողովրդի ազգագրական կյանքի երբ-վույնները թելագրված էր, մի կողմից, ժողովրդական բանահյուսության նկատմամբ Արեղյանի նախասիրություններից, մյուս կողմից՝

<sup>1</sup> Ծովն այն է, որ Արեղյանի այդ ծանրաշին հետազոտությունից հետո, մինչև օրս էլ, մի աններել անսարքերությամբ Ֆայլ է արվում օմանց, թե՛ գործազան գասարքերում և թե՛ առանձին ժողովածուների մէջ մեր միջնագարյան ժողովրդական աշխարհիկ քնարերգության զեղեցիկ նմուշները՝ ՚Նայրենները վերագրելու նահապետ Քուչակին:

Այտուղ խոսքն, հարկավ, գիտական սկզբունքների պաշտպանության կամ ազնիվ համոզմունքներին չի վերաբերում, քանզի ՚Նայրենները Քուչակին վերագրելու մեծ նախաննախոր Արշակ Չոպչանյանն անգամ, որին հետևում են այդ անասուկեր պաշտպանողները, Արեղյանի աշխատությունից հետո գրեթե հրժարելից իր անսակների: Տակալին 1928-ին Փարիզում ՚Նայտարակած «Հասարակր Էնր Քուչակի» առաջարկեն ժողովածուն Ա. Չոպչանյանը գրել էր «Նայ ժողովրդական բանագիտության թափն ու պակէջը կրնակի խորագրի տակ: Ժողովածուի առաջաբանում Չոպչանյանը Էնրիվ հանդերձ «Քուչակյան երգերի խիստ ժողովրդական բնույթը, արդատմանային, դրանք համարում է անՆաս հեղինակի ստեղծագործություն: Բայց միամտանակ համոզված Հայտարարում է, որ «ԱնՆար է, որ առտեց ճեղհնակի ըլլա Վանցի Քուչակը, ինչպես կը Հայտարարն Արիտասեն Վ. Տիկանք՝ շեք գիտի ինչ փաստի զիս հիմնվելով» (էջ 6): Ընքերով երգերի բուչակյան հեղինակութունը, Չոպչանյանը շարունակում է պայմանականորեն դուրս կոչել Քուչակի անունով, մինչև որ Մ. Արեղյանի աշխատությունից հետո, 1940 Ս., կրք հրատարակում է Էնրվան երգերի ստվար հավաքածուն, այն վերնագրում է «Նայրեններու քուրասանն»:



ժամանակի արևմտամտորդական գիտության մեջ ազգագրության ու բանահյուսության միասնական բրնձնուկներին<sup>1</sup>: Եվ ընդ էլ պատահական չէր, որ Արեղյանը հայ ժողովրդական հավատալիքների հետազոտությանը ձեռնամուխ հղավ այն ժամանակ, երբ արժեքն հռչակված էր թե՛ իբրև բանահավաք և թե՛ իբրև բանագետ-հետազոտող. պատահական չէր նաև այն, որ առկալիքն շուտով նախիրված հայ ազգագրությունը նրա ուշագրությունն էին արժանանում ժողովրդի հոգևոր մշակույթի երևույթները՝ հավատալիքները, որոնք անմիջապես ազդեցվում էին ժողովրդական բանահյուսությանը:

Հայկական հավատալիքների հետազոտությանը, ինչպես ասել ենք, Արեղյանը ձեռնամուխ է լինում Գերմանիայում ուսանելու տարիներին, իր «Der armenische Volks Glaube» աշխատությունը<sup>2</sup>:

Առարկան, որ դարձել էր երիտասարդ գիտնականի գերմաներեն հետազոտության հիմքը, բուն ժողովրդական հավատալիքներն էին, որոնք առկա էին ժողովրդի կենցաղային սովորություններում, ծեսերում, վարք ու բարքի, նիստ ու կացի և բանահյուսական

<sup>1</sup> Ազգագրական երևույթների հաշվառումը և ուսումնասիրությունը Արեղյանի բանագրական հետազոտությունների մեթոդական կապիտուլից է: որ նա հատկապես որոշակի ձևակերպել է «Հայ վիպական բանահյուսության» ներածականում:

<sup>2</sup> «... Բնական ուսումնասիրության ժամանակ նկատի պիտի ունենա՞ ինչ որ առհասարակ սերտ կապված է այն կամ այն բանահյուսական տեսակի հետ. նախնական աշխարհայնացությունը, կրոնը՝ առասպելների, շատ հին զրույցների ու վեպի, ինչպես և նմայական ազդեցիկների համար. պարսի ու կասեակը՝ ժողովրդական երգերի համար. գանազան կենցաղային երևույթներ, սովորություններ, ձևեր՝ վեպի, հարսանիքի և այլ երգերի համար: Եվ վերջապես՝ քանդակա արվեստ և ուղղորդյուն առևին հսկա ընդհանրապես ազգագրությունն ընդունվող մտով: Կենդանի՞ ես միաժամանակ և ժողովրդագրատություն պիտի ուսումնասիրեմ...» (ընդգծումն իմն է— Ս. Լ.: Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 13):

<sup>3</sup> Արեղյանի սույն աշխատությունը հայ ժողովրդական հավատալիքներին նվիրված անդրանիկ հետազոտությունն էր, որ իր ուսումնասիրության առարկայով ու բնույթով սկզբունքորեն տարբեր էր Ղ. Արեղյանի «Հին Հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց» (Վենետիկ, 1895) և Հ. Գեյցերի «Zur armenischen Götterlehre» (Լայպցիգ, 1896) աշխատություններին: Առաինի նվիրված էր միջնադարյան հայ մատենագիրների երկերում պահպանված հայոց հին հեթանոսական կրոնին ու հավատալիքներին վերաբերող վկայությունների բացահայտմանը, իսկ երկրորդը՝ հայ գիթարանության էություն, բնույթի ու կրած ազդեցությունների պարզաբանմանը. նրանում էլ հետո կին բուն ժողովրդական հավատալիքները ընկելու նպատակից ու լեզուից:

ստեղծագործությունների մեջ: Ընդամենը մի բանի տասնամյակ առաջ սկզբնավորված հայ ազգագրությունն ու բանագիտությունը առկալիքն սակավ էր: ընդհանուր նման մի հետազոտության համար: Այդուհանդերձ հրապարակի վրա առկա և անմիջապես իր կողմից հավաքած փաստական նյութի հիման վրա Արեղյանը կարողանում է ազգագրական ու բանահյուսական ցրված նյութի միջին առանձնացնել ժողովրդական հավատալիքներին վերաբերող վկայությունները, զրանք ննջարկել թեմատիկ խմբավորումներով, վերականգնել հայ ժողովրդական հավատալիքների ամբողջական պատկերը: Հարցերը, որոնք հետազոտվում էին Արեղյանի կողմից, հետևյալներն էին.

- I. Հոգու հավատք և մտելուպաշարություն. ա) Հոգին իբրև շունչ, բ) Տեսիլք և երազ, գ) Անշատված հոգու կերպարանները, դ) Ուրվականներ և նրանց շար աղբյուրությունը, ե) Ոգիներ, զ) Ոգիները որպես լույս, ոգիները որպես կրակ, է) Բարության կամ մոմենտը և երկու պահպան հրեշտակներ, ը) Մահ, թ) Հոգու համափոքությունն անդրաշխարհում, ժ) Հոգու դատաստան, թա) Ասանձին մեռելների պաշտամունք, ժբ) Ոգիների (=ուրվականներ) պաշտամունք, ժգ) Ոգիների պաշտամունք՝ կապված աստղերի հետ, ժդ) Երկինք կամ զրախտ ու գոխք:

- II. Լույս և խավար. ա) Գիշերամայրը, բ) Գիշերային լսությունը, գ) Աղոթքը իբրև պահպանությունն ու բուժման միջոց, դ) Երեկոյան աղոթք և տան պահպաններ, ե) Քնելու աղոթք և տարփախ ոգիներ. ճբրազ ճշմարիտ, գ) Քնածաղիկ և բնի ոգիներ, է) Լուսաստղ և տանու արքազար, ը) Արշալույս, թ) Արեգակ, ժ) Լուսին և արեգակ, ժա) Լուսին, ժբ) Սրիկալիք:

- III. Զակատագրի հավատալիք. ա) Աստղեր, բ) Ժամանակ, գ) Զակատագրի սահմանումները (1. Մահ, 2. Ամուսնություն), դ) Բախտ:

- IV. Ջրի և բույսերի պաշտամունք. ա) Աղբյուրների պաշտամունք, բ) Մասերի պաշտամունք, գ) Ջրի և ծաղկի տան. ժողովրդական ուսմանտիկա:

- V. Կռակապաշարություն. ա) Սուրբական կրակ, բ) Կրակն ու շուրը իբրև երկվորյակներ, գ) Օջախի կրակ և օջախի (=թնորի) պաշտամունք, դ) Կրակի պղծում. Արևադարձի կրակ:

- VI. Օձապաշարություն

- VII. Ամպրոպային գրույցներ. ա) Ամպրոպային վիշապ, բ) Ամպրոպային կոխի, գ) Մովհիար, դ) Կայծակնային հերոս Մա-

սար, դ) Կալժակ և կալժակի սիմվոլ, ե) նրաշա և երաշտի ձևերը:

### VIII. Հոգվի ոգի

IX. Ջրի, անտառի և լեռան ոգիներ. ա) Հրեղեն ձի, բ) Հընարք (= Կնճադ), գ) Փերի և հայկերժաճարտուր, դ) Քաջք, ե) Գներ:

X. Աղբյուրներ (ղյուրաբեռ) և շար ողբներ. ա) Գալլ և գեթ-կապի աղբյուր, բ) Մարդագալլ, գ) Ալբեր և ձնեղյան կույսեր, դ) Հիվանդության ոգիներ և ոչաք աշքո:

Հայ ժողովրդական հավատալիքների սկիզբն ու զարգացումը Արեղյանը դիտում ու պատճառաբանում է հայ ժողովրդի ապրումային պատմական կյանքի հանգամանքներով: Ըստ այդմ նա հայ ժողովրդական հավատալիքները բաժանում է երեք գլխավոր տարրերի. հեթանոսության, քրիստոնեության և մասձեղականության: Գրանցից հիմնականն ու բնորոշը առաջին երկուսն է համարում, իսկ վերջինը սոսկ քաղաքական հանգամանքներով պայմանավորված որոշ ազդեցություն միայն Արեղյանը, սակայն, հայկական հավատալիքները մեկուսի ու կղզիացում էր ուսումնասիրում: Հետևելով ժամանակի ազդեցության ամենաառաջատար ուղղություններ էր. Թալլորի մարդաբանական դպրոցի սկզբունքներին, Արեղյանը, ինչպես այդ դպրոցի մյուս ներկայացուցիչները, մեթոդապես հենվում է եվրոպական գիտության մեջ առաջինը, մեթոդապես համեմատական եղանակի վրա<sup>1</sup> և հայ ժողովրդական հավատալիքներն ու սնտիապաշտական բնույթները բնում է հեղինակության աշխարհի համանման երևույթների համեմատությամբ: Հիշյալ մեթոդով կատարված ժողովրդական հավատալիքների հեռադրությունը, առանձնահատուկ արժեք էր ձեռք բերում նրանով, որ արտաքուստ պատահական կամ սոսկ տեղական թվացող հավատալիքային երևույթները դրվում են ու դիտվում համընդհանուր օրինաչափությունների զարգացման շղթայի մեջ և վերականգնվում դրանց առավել ընդհանրական և բուն հնախոսական նկարագիրը: Այս տեսակետից Արեղյանը ամենից շատ ընդհանրություններ է բացահայտում հայրի արդի ժողովրդական և հին պարսիկների հեթանոսական կրոնի մեջ: Առաջնորդվելով հայ ժողովրդի հնագույն անցյալի պատմական իրակություններով, ժամանակի հեղինակության (հատկապես համեմատական կրոնագիտության և լեզվաբանության)

նվաճումներով, Արեղյանը ժամանակի եվրոպական հայագիտության մեջ արժատավորված հայ-իրանական սերտ ազդակցության տեսակետի համաձայն, բաղմամբով փաստերով ցույց է ապրիտ հին իրանյան կրոնի հայկական հավատալիքների վրա թողած ազդեցությունը:

Եվ այդ ամենից առաջ լույսի ու խավարի և դրանք անձնավորող շար ու բարի ոգիներին մշտական պայքարի հավատալիքի մեջ, որ, իրանական դոստիլովի սկզբունքն ու էությունը լինելով հանդերձ, նշանակալից տեղ է գրավում նաև հայ ժողովրդական հավատալիքներում, թեպետ երբեմն քրիստոնեական դույն ու երանջ ստացած:

Բացի իր այս ընդհանուր արժանիքներից, «Հայ ժողովրդական հավատքը» աշխատությամբ առաջին անգամ առաջարկվում է ապացուցվում էին մի շարք կարևոր տեսակետներ, որոնք հետագայում պետք է արժատավորվեն հայագիտության մեջ:

Այդպես, 1. նշված աշխատության մեջ առաջին անգամ Արեղյանն էր առաջարկում և համոզել փաստերով հաստատում, որ ժողովրդական սուրբ Մարդիսը ժամու անձնավորումն է և ժամու հին աստվածության ներկայացուցիչ<sup>2</sup>։ զրանով նա բացահայտում էր հին հայկական դիցաբանության կարևոր երևույթներից մեկի առկայությունը արդի ժողովրդական հավատալիքներում:

2. Նա էր դարձյալ այստեղ բացահայտում մեր ժողովրդական վեպի հերոս Սևոստարի ամպրոպային բնավորությունը և սպայուցում նրա կալժակային հերոս և վիշապամարտի լինելը, ինչպես նաև Սևոստարի ծնունդն ու մղած հերոսամարտերի պատումը դիտում իրրև ամպրոպային հնագույն առասպելի բեկոր ու վերապրուկ<sup>3</sup>:

3. Արեղյանի կողմից ժանրային ու բանասիրական հակիրճ բնութագրման էր ենթարկվում ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից մեկը՝ հմայական աղոթքները (= ղուրթաթերթը), բացահայտվում էին նրանց ընդհանրություններն ու տարբերությունները գրավոր հմայիչներից և մեկնաբանվում նրանց կրոնա-հմայական իմաստն ու բովանդակությունը<sup>4</sup>, և այլն:

Հայ ժողովրդական հավատալիքների նկատմամբ Արեղյանի

<sup>1</sup> M. Abeghian, Der armenische Volksglaube, էջ 93.

<sup>2</sup> Անդ, էջ 86—85.

<sup>3</sup> Անդ, էջ 113 և հետև.

<sup>4</sup> ԸՎ՝ Дрежелле Коккьяра, История фольклористики в Европе, М., 1960, էջ 396.



գիտական շահագրգռությունները կարծես թե նշված աշխատությունք սպասվելու էին, հիմ կյանքի վերջալույսին, ժահվանից երկր տարի առաջ նա ասպարեզ չգար «Վիշապներս կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Գերկեսո զիցուհու արձաններ» (1941 թ.) բանավիճախին աշխատությունքը Ալետոզ, Տոյկական լեռնաշխարհում հուշակված ձկնակերպ բարև կոթողների հնագիտական ու սպագրքական վաղնջական նշանակությունը պարզարանելու համար գարձայ ի նորը վերաբնեմության են ենթարկվում հայկական հին ու նոր ժողովրդական հավատալիքները:

Արեղյանը հարուստ ու խոսուն փաստերով և արամբանական համոզիչ փաստարկներով գալիս էր հերքելու որոշ հնագիտների մտտ (Մառ, Յա. Ամիրճով, Բ. Պիրոտովիչի) արմատացած այն սրբալու վարկածը, թե իբր պատմական Հայաստանի սահմաններում հայտնաբերված «Վիշապ» կոչվող ձկնակերպ բարև կոթողները ամպրոպային վիշապ-գեմոնի արձաններն են: Նշված կարծիքի կողմնակիցները գտնում էին, որ իբր ամպրոպային վիշապ-գեմոնը սկզբնապես եղել է ջրի և պտղաբերության բարի աստվածություն և հետագայում՝ քրիստոնեության ժամանակաշրջանում է միայն շար բերնովել:

Ենկելով ձկնակերպ բարև կոթողներին ժողովրդի տված «Վիշապ» անվանումից, նրանք այդ բարեկոթողները շփոթում էին առասպելական վիշապ-գեմոնի հասկացության հետ և փորձում էին ուղ շրջանի ժողովրդական անվանումն ու վաղ հնագիտական հուշարձանների նախնական պաշտամունքային նշանակությունը հաշտեցնել միմյանց:

Սակայն, Արեղյանը հենվելով հայ ժողովրդական հավատալիքների, ժեսերի, սովորությունների, բանաստեղծության, ինչպես նաև այլ ժողովրդների համանման պատկերացումների լեձնաած նյութի վրա և երևելով զրանց բանասիրորեն հղարված ալյալանիցից, ապացուցում է.

ա) Ամպրոպային օգիբույթի առասպելական շար բերնումը՝ վիշապ-գեմոնը ի սկզբանե արթև բոլոր հնագույն ժողովուրդների վաղնջական պատկերացումներով, թե՛ վաղ հեթանոսական և թե՛ ուղ քրիստոնեական ժամանակաշրջաններում՝ շար է գիտակցվել:

Այն, հնուց անտի բմբունվել է իբրև երկնային բերն սրգելակող, արեղակին բանասերող մի շար էակ, որի զեմ մարտում են ամպրոպային բարի հերոսները և անձրև ու արեղակի լույս են ուղարկում մարդկանց:

բ) Վիշապ-գեմոնը թե՛ հին հայերի և թե՛ արդի ժողովրդական պատկերացումներով հանդես է գալիս տարբեր կենդանիների (օձ, ուղար, ձի և այլն) կերպարանքով, բայց ո՛չ՝ երբեք ձկն:

գ) Վիշապ բառը հայերենում արտահայտում է տարբեր իմաստներ, որոնցից մեկն է՝ «մեծ, անգահա, հսկա», որով անվանել են հնում կետերին կամ մեծ ձկներին, կոչելով զրանց «վիշապ-ձուկ» կամ «վիշապձուկ»:

դ) Հայաստանում գտնված ձկնակերպ բարև արձանների «Վիշապ» անվանումը տրված է «մեծ, անգահա, հսկա» առումով, այն էլ ուղ շրջանում միայն և որանք (= արձաններ) ոչ մի կապ չունեն առասպելական վիշապ-գեմոնի հետ:

Արեղյանը հերքելով նյութական մշակույթի այդ ուղարկված հուշարձանների ենթադրյալ կապը առասպելական վիշապ-գեմոնի հետ, առաջ է բաշում մի նոր տեսակետ, որով «Վիշապ» կոչված բարև կոթողները անձրև է Հին Արևելքում սիրված ու տարածված սիրտ և պտղաբերության, ինչպես նաև ջրի աստվածության պաշտամունքին, որի հին հայկական արտահայտություններն էին Աստղիկ և Անահիտ զիցուհիները (անձրևական Միլիտան, Եշտարը, Աստարտեն, Գերկեսոն):

Պատմական վկայություններով նա ցույց է տալիս ձկնակերպ «Վիշապ» կոթողների աղբոր սեմական Գերկեսո զիցուհու ձկն մարմնով կամ ձկնակերպ կառուցված արձանների հետ, որ զրվում էին ձկնառատ սրբազան լեձի մոտ, ինչպես վիշապ-կոթողները՝ սուղման առումների կամ շրամբանների կողքին:

«Վիշապ» կոչված ձկնակերպ կոթողները Աստղիկ-Գերկեսո զիցուհու պաշտամունքին աղբորելով, Արեղյանը, որքան էլ հին Հայաստանի այդ նյութական մշակույթի հուշարձանների հնագիտական-պաշտամունքային ծագումը կանխակալ ու ընդհանուր սրբախմատիկ դատողություններից զնում էր որոշակի պատմական հողի վրա, որքան էլ այն քննում էր հայ ժողովրդի ասրած պատմական հողեր կյանքի իրական կրեոլիսներին հետ շաղկապված, արգուհանգեթ, ինչպես ցույց են տալիս նորահայտ «Վիշապ» կոթողներն ու կորսուղուց հետազոտությունները՝ նշված հուշարձանները:

1 Հմտ. Ս. Я. Марр и Я. И. Смирнов, Византия. Труды Государственной Академии истории материальной культуры, том I, 1931.  
Б. Б. Пиотровский, Византия, Каменные статуи в горах Армении, Изд. Арм. филиала АН СССР, Ленинград, 1939.

• 1 Հմտ. Ա. Մեջակունյան, «Վիշապ» բարեկոթողների և վիշապմարտի զի-

իրենց ծագումով վերագրվում են պատմական առավել վաղ ժամանակաշրջանների պաշտամունքային սինկրետիկ իրողություններին, քան սեմական Կերեանոյի կամ Հայկական Աստղիկի առավել զարգացած Նեփանոսական պաշտամունքն է: Հնարավոր է, սակայն ենթադրել, որ Աստղիկ-Կերեանոյի պաշտամունքը իր արմատներով սերած լինի ձկնակերպ արձանների վաղնջական պաշտամունքից և դարձած վերջինս զարգացած ու հետևազույն արտահայտությունը:

Արեւիկյանի աշխատության ամենաարժեքավոր կողմը ձկնակերպ բարակոթոզների վիշապ-դեմոնի հետ ունեցած կապի ու այդ դեմոնի բարի աստվածություն լինելու և ենթադրյալ պաշտամունքի հերքումն է, քան նոր աստվածության հետ անշույռ ապացույցը, մի վերջնական հերքում, որ հետագայում հեռանկարներ բացեց «վիշապ» կոթիվները դիտելու իրեն բուրբուսի մի այլ աստվածության պաշտամունքի նյութական մնացորդներ<sup>1</sup>:

Արեւիկյանի նշված երկու աշխատությունները հայ ժողովրդական հավատալիքներին ուսումնասիրության մարդում մեծարժեք ներդրումներ են: Դրանք հանդիսանում են հեղինակի բանագիտական նախասիրություններից դեպի ազգագրագիտությունն անցնելու արժանաբանական օգուկն ու փոխանցելի հանգույցը:

Կրթամեթոդական մասին, «ՀՄԹ ԳԱ Տեղեկագիր», 1952, N 5, էջ 73 և հտ.՝ Լ. Քառակյան, Ք. Խոչատուրյան, Ա. Քալանթարյան, Կրթահայտն պաշտամունքային կոթոզներ Գեղամա լեռներից, «ՀՄԹ ԳԱ Տեղեկագիր», 1964, N 8, էջ 85 և հտ.՝ Առավել ուլազորով Կ, սակայն, 1963-ին Փսոնիի Շնագիտական արշավախմբի հաշտարժեքած «վիշապ» կոթիվի զանգվածային մի թվերը՝ Մեծառյի որդի Արզիշտիկի (ձ. Բ. ա. VIII դարի առաջին կեսը) սեպագիր արձանագրությանը Ինչպես հիշյալ խոստանկերական փաստից իրավացիորեն ենթադրում են Ք. Առաքելյանն ու Ն. Հարությունյանը, սեպագիր արձանագրությունն առավել ուշ շրջանի է, քան այն կոթոզ «վիշապ» քարտեզագր. սրի ծագումն այդպիսով ի վիճակում է աճելի վաղ, քան ձ. Բ. ա. առաջին հարաբանակի (ՏԿ՝ Ե. Արաքելյան, Н. Аргутинская, Урартская клинообразная надпись из Гарин, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 2, էջ 290 և հտ.՝):

<sup>1</sup> ՏՃ՝ Ակադ. Գր. Վարիանցյան, Արա զեղեցիկի պաշտամունքը, ՀՄԹ ԳԱ հրատարակչ., Երևան, 1944: Այստեղ հեղինակը «վիշապ» քարտեզագրից կապում է նախահայկական և հայկական մեծնոց և հարույն անեռ թեմիայն, հետագայում և քրիստոնեության ու երկրագործության սինկրետիկ աստվածության՝ Արայի հետ:

## Գ Լ Ո Ւ Ն Ե Բ Կ Բ Ա Ր Գ

### ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. ԱՐԵՎՃԱՆԸ ՔՆՆԱԳԱՏ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ

ՏՕ-ական թվականների հայ գրաբնագատական միտքը նոր վերելք էր ապրում՝ պայմանավորված մեր կյանքի ու գրականության նորանոր երևույթներով: Նախանշյանի սկզբնավորած ուս. լիստական զեղազիտության ավանդիկներ առավել զարգանում են ու խորանում հիշյալ շրջանի գրաբնագատության մեջ: Նախորդ շրջանից եկող զեղազիտական ընդհանուր ճշմարտությունները հեռանում են ժամանակի գրական կոնկրետ նյութի վրա՝ վերաճելով կենսական սկզբունքների: Հայ գրականությունը, որ գրական բազմապիսի երկերով օրավոր աճում է ու հասունանում, անհրաժեշտորեն առաջ է քիշում զեղազիտական նորանոր խնդիրներ, որոնք իրենց հիմնավորումն ու լուծումն են ստանում գրաբնագատության կողմից: Հիշյալ տասնամյակում և հաջորդ՝ 90-ական թթ. վաղամասերի սկզբին գրական ուլազորով դեմքերի ու երկերի հետ առաջադիվ են իջնում նաև բազմաթիվ ձախողված հեղինակներ խեղճ ու պարզունակ ստեղծագործություններով, լուրջ խնդիրներ էր ստաշտարում գրաբնագատությանը. վերջինս պարտավոր էր լքարեն կշռադատել և խստորեն ու անշառն բնեղ գրական անզատունի վիճակը, ընտրել և խրախուսել լավն ու խոստումնալիցը, գատապարտելի վասն ու ձախողակը: Եվ այդ արվելու էր, հարկավ, զեղազիտական որոշակի սկզբունքներով, կյանքի ու գրականության զարգացման ընդհանուր միտումի հաշվառմամբ: Պատմական այդ գրատախանասու խնդրին է նեոնամուխ լինում շատերի հետ նաև նրիտասարգ բնագատ-հրապարակախոս Մանուկ Արեղյանը:



Իր գրաբնագատական տեղաբնիկ էլուզիներից իսկ Արեղյանը հանգես է գալիս իբրև սեպուխտական զեղազրույթի մեջ սկզբունքներով առաջնորդող, բնագատի իր ներգործուն զերը գիտակցող, խստապահանջ ու անաշու մի գրադատ: 1889-ին Ասորյանի «Սեվաբապետ» վեպին նվիրված բնագատական իր անդրանիկ հոդվածում<sup>1</sup>, նա առաջ է բաշում և հիմնավորում սեպուխտական սկզբունքների և արիստոկրատիան զեղազրույթի կարևոր խնդիրը: Քննադատելով Ասորյանի սեպուխտական սկզբունքները, Արեղյանը բնագատական իր անդրանիկ հոդվածում է, որ բավական չէ «վեպի մեջ եղած բոլոր անցքերն ու իրողությունները իբր եղած լինին, որպեսզի դրվածքը գտնան իրական (իմա՝ սեպուխտական—Ս. Հ.) վեպ. ամեն եզրույթուն քիչ ու շատ վիպական ձևով պատմված, դեռևս վեպ չէ»:

«Վեպը,— շարունակում է Արեղյանը,— զեղաբնագատական գրվածք է, իսկ զեղաբնագատ պահանջում է, որ իրականության մեջ եղածներից այնպիսի հատվածներ ընտրվին, որոնք կյանքի որևէ կողմի բնավորական (իմա՝ արիստոկրատիան) և կարևոր են կազմում, և այդ հատվածներն այնպես շարակարգվին, որ մեկը մյուսի հետ անբռնան և սերտ կապվելով, մի գեղեցիկ և լրացած սմբողջություն կազմեն: Մի իրողություն, որ կարող է նույնիսկ իսկություն կատարված էլ լինել, վեպի մեջ մտնելով, կարող է վեպի զեղեցիկ շինքը խանգարել, եթե նա վեպի նյութի հետ կենդանի հարակցություն չունի. իսկ ընդհակառակը, վիպասանն եթե տեսնում է իրոք կատարված եզրույթունը (եթե նա անպատճառ եզրույթունն պետք է նյութ ատեն յուր վեպին), ինչպես Սարգիս է չլրացնում յուր ընտրած նյութը, պետք է լրացնեն որիչ անցքերով, որոնք պետք է հերոսների բնավորությունից բխեն և որոնք քննարկական նկարագրված եզրույթուն հետ չեն կատարվել, բայց որիչ անպատճառ բնավորություն ունեցող անձների ձևերով կարող են կատարված լինել կամ կատարվել: Գա չէ նշանակում երևակայություն մեջ բնիկ, ինչպես կարծում է պ. Ասորյանյանը. այդպիսի բովանդակված արտահայտություններից են բաղադրվում սիպուխտը»:

Այլ խոսքով՝ Արեղյանը պնդում է սեպուխտական զեղազրույթուն այն պահանջները, թե սեպուխտը իրական զեղաբնագատի սուկ լուսանկարչական վերապատկերում չէ, այլ զեղաբնագատական-սեպուխտագործական ուղղություն, որ սիպուխտը եզրույթունը չէ, այլ

բովանդակված եզրույթունների հավելումից բխող բնորոշ ու առանձնահատուկ: Եվ, որ կարևորն է, դեռևս է սիպուխտական հանգամանքների և արիստոկրատիան բնավորությունների փոխհարաբերության խնդիրը, որանց փոխադրվածավորվածությունն ու կարևոր միջնակցի: Ասորյանի վեպի կենդանի փաստերի վերլուծման հիման վրա Արեղյանը կարևոր տեղ է հատկացնում վիպական երկի սյուժեին՝ կենդանի գործողությունը, նրա ծավալմանն ու զարգացմանը:

Վեպի կարևոր թերություններից մեկն էլ այն է համարում, որ «իրողությունը (իմա՝ սյուժե—Ս. Հ.) շատ զանգաղ է առաջ դնում, պատահականությունը լուծման, ինչպես նաև զարգացման մեջ մեծ տեղ է բռնում», որպիսի հանգամանքով էլ պայմանավորված է կերպարների անկենդանությունը. զանդառաշարժությունն ու անհամոզիչ նկարագիրը: Եվ ոչ միայն այդ. Արեղյանը ժամանակակից վեպի թերություններից մեկը իրավամբ համարում է սպասմանգական գրվածքի առարկայականության» բացակայությունը, այն, որ հեղինակներն հասնախ իրենց անհարկի մտքերով ու զեղումներով բնորոշարկում են վիպական պատումը, խղելով զեղաբնագատ ընթացքն ու զարգացումը: «Ընթերցողը,— գրում է Արեղյանը,— վեպի մեջ իրական պատկերն է ուղում տեսնել և ոչ թե հեղինակի սանձը, որ բոտ ինքյան ոչ որի կարող չէ հետաքրքրել»:

Ակախությունն արձագանքելով ժամանակի հայ սեպուխտական զեղազրույթունը հրամայական պահանջներին, Արեղյանը չի բավարարվում յուր վիպական երկերի արվեստի խնդիրներով. դրանց հետ միաժամանակ նա առաջ է բաշում և կարևոր տեղ հատկացնում նաև զեղաբնագատական երկի զարգացման րովանդակությունը, գրական ստեղծագործության և կյանքի գործուն փոխհարաբերության հարցին: Նա Արեղյանի «Գործունեք» վեպի մատենախոսականում<sup>2</sup>, օրինակ, վեպի արժեքը տեսնում է գլխավորապես նրա ստեղծարարական րովանդակության մեջ, այն բանի, որ վեպում առկա է հասարակության դասակարգչությունն երկվեղելված երկու հակադիր ծառայարևանների կյանքի իրապատում, ճշմարտացի նկարագրությունը:

Արեղյանն իբրև սեպուխտություն, հատկապես ընդգծում է այն, որ Արեղյանը իր վեպի հիմքն է դարձրել մարդկանց աղքատությունն ու քղաքաղությունը: Եվ նրա՝ իբրև սեպուխտ վիպասանի արժանիքն է:

<sup>1</sup> Վեր-գար, 1889, № 176.

<sup>2</sup> Վեր-գար, № 203, 204.

գրա մեջ է տեսնում, գրելով, թե նա (Լեոն—Մ. Ը.) արդեն կարողանում է բմբուկ կյանքի երակները և այդ երակներն արտահայտելու լիզուն ունի: Սակայն միամտանակ ըննադատում է Լեոնին միակողմանիության համար, այն բանի, որ նա բավարարվելով լոկ իրական կյանքի պատկերների ճշմարտացի վերարտադրությամբ, չի բացահայտում հասարակության այդ հոսի երևույթները ծնող սոցիալական զրգապատճառները և գրանցելով պայքարի միջոցներ չի ստացարկում: Այլ կերպ ասած, Մ. Արեղյանը կարևոր տեղ է տալիս կյանքի նկատմամբ գրականության ակտիվ ներգործուն զերին և առաջգործում է գեղարվեստական ստեղծագործության հասարակական-գաղափարական միավորության գեղարվեստական կարևոր խնդիրը:

«Կորածներին» մեջ, — գրում է նա, — իզուր է որոնել մի առանձին նպատակվոր գաղափար, մի տեղեկեցիա. հեղինակն ուրիշ ուրիշ չէ սպում անել յուր վեպով, բայց կիթ, իբրև յուսանկար, պատկերացնել յուր երևակայության մեջ վերարտադրած աղքատության աշխարհը յուր տխուր կողմերով, առանց Բենեյու, թե ինչի՞ց է առաջանում այդ ազդատույունը, առանց ազդատույուն դեմ կովելու միջոցներ անդարկելու, և ոչ իսկ հասարակության սուրբ կարողացող անդամների հարաբերությունը դեպի աղքատները» (ընդգծումներն իմն են — Մ. Ը.):

Սա տեսական-գրականագիտական մի յուրը հայեցակետ էր, որ մայրեկցում էր վաթսուհակնների գաղափարներին և հայ զբոսականության վերելքի նոր շրջանում գալիս էր նորովի իմաստավորելու հասարակական կյանքի երևույթների վրա գրականության ներգործուն զերը, մոտենալով ընդհուպ արդի բժշկականներին: Գրականության զերի նման բարեբանում էր անուշտ պատճառը, ոչ Արեղյանը մեծ արժեք էր տալիս մամուսականից թեմատիկայով գրված սեռախառնական վեպերին, մասնավորապես Բաֆֆու սՄինն ալյակես, մյուսն այնպես՝ անավարտ վեպին:

Եվ ալյակես, 80-ական թվականների վերջերին, երբ Բաֆֆու կտավազական ազդեցությունը ու հեռանդությունը մասնավորապես արևելահայ գրական միջավայրը ողողվում է վիպական ստեղծագործություններով, սկսնակ ըննադատ Արեղյանը, զեղազիտական որոշակի հայցներով, բնագրատական իր անշարժիկ ելույթներով մեջ պաշտպանում ու զարգացնում է սեռախառնական վեպի տեսա-

կան առողջ ու մշտարիտ հիմունքները, որոնք արդեն կանխորոշում են Արեղյան-գրականագիտի դավանած հայացքներն ու հետագա ուղղությունը:

Անալիստական զեղազիտության նման սկզբունքներով էլ, ահա, Արեղյանը հաջորդ տասնամյակին մոտենում ու զննատում է նաև ժամանակի հայ բանաստեղծության սկսնակ ներկայացուցիչներին ու նրանց անդրանիկ բերթվածները:

90-ական թվականների սկզբի հայ գրականությունը, եթե վիպագրության մարզում տակավին չէր նշանավորվում նոր, ակնատու կրկերով, պաշտոնաստեղծության մեջ, ընդհակառակը, նոր զարգացում էր ապրում ճիշտ է, դեռևս բանաստեղծական սակավաթիվ հայտը ստեղծագործությունների հետ գրական անդաստեղծ ողողված էր զորը ու անդույն ոտանավորներով, սակայն արևելահայ բարեբանությունն առհասարակ բուն էր արդեն իր անշղջ վերելքի ու առաջադիմության ապագա կարկատուն զեմքերի շնորհիվ:

1890 թ. Մոսկվայում լույս է տեսնում Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, որն անմիջապես զբաղվում է սնոր-գարձ-ի երիտասարդ ըննադատի ուղադրությունը: Գրական երևույթներին սեռախառնական զեղազիտության բարձր պահանջներով մոտեցող Արեղյանը սկսնակ թումանյանի մեջ տեսնում է նրա բանաստեղծական գրեթե բոլոր բարեմասնությունները: Սա թումանյանի առաջին և մեծ արժանիքը տեսնում է նրա շուտփութ բանաստեղծական թեմատիկայի մեջ: «Պ. Թումանյանի միտքն ու զգացմունքն զբաղվում են ավելի ժողովրդական աշխարհով, — գրում է նա: — Ժողովրդական կյանքի տխուր վիճակը, տգիտությունը, սևոտիապաշտական հավատալիքները և սրանցից առաջացած կորստաբեր միտքները, պանդխտությունը, ժողովրդի կարրնական, բաշամարտիկ սգու անկումը, — ահա այն խնդիրները, որոնք զբաղվել են բանաստեղծի ուշք ու միտքը, և որոնք զեղեցիկ արտահայտություն են գտել նրա գրվածքների մեջ»:

Թումանյանի բերած ժողովրդական կյանքի կենդանի պատկերները թարմություն էին մացնում տարտամ զաղափարներով ու վերացական բարոյներով խճողված ժամանակի բանաստեղծության մեջ: Իրական կյանքն իր յուրով ու սովերներով հորդում էր թու-

<sup>1</sup> «Նոր-գարձ», 1891, № 31.

<sup>2</sup> Հովհաննես Թումանյանց, Բանաստեղծություններ, Մոսկվա, 1890, Մատենադարանի հրատարակչություն, «Նոր-գարձ», 1890, № 196, 197.





Համեմատարար ավելի բարձր է, քան թե ուրիշներինը», քանզի նա լրջորեն աշխատել է բանաստեղծությունների լեզվա-արտահայտչական եզրանակների բարեխալմաման վրա: Մատուրյանի քերթվածների բանաստեղծական ցնձառաման մեջ Արեղյանը քննադատում է մերժում է ժամանակի բանաստեղծների հետևությունը գրված կեղծ-պատեսյան ոճի հետադարձական վերամբարձ սուսանավորների, որոնցից խորհուրդ էր ստալիս Քամանյանին հետո մնալ:

«Այդպիսի... ոտանավորները,— գրում է Արեղյանը,— ոչ բանաստեղծի ներքին, հոգեկան վիճակի ու զգացմունքի արտահայտություն են, ոչ էլ նրա հասարակական դրություն: Ոչ որ մեր բանաստեղծների դեմ չի փրփրում ու չի հայածում նրանց. ոչ որ էլ չի պահանջում նրանցից, որ սիրենց արբազան, մաքուր երգ փոզոց հանեն, բուռ մեծատան քաղիք ու անարգ գործեր զովատեն:» Եթե մեր հասարակությունը մի պահանջ ունի մեր բանաստեղծներից, այդ այն է, որ մեր բանաստեղծները լինին իսկական բանաստեղծներ և զեղեցիկ սուսանավորներ գրեն:»

Բանաստեղծությունը անձնական ու հասարակական անկեղծ ներշնչանքի զեղարվեստական արտահայտություն դիտելու զեզադատական այս ստույգ տեսանկյունից էլ Արեղյանը դրական է գնահատում Մատուրյանի մի շարք բանաստեղծությունները («Քշվածքներ», «Եռդա-շողող», «Գեռակ», «Սու շեմ երգում» և այլն), որոնք լինելով անկեղծ զեղման ու զգացմունքի արտահայտություններ, օգեղեցիկ արձագանք են հասարակական ժողովրդական ընդհանուր զգացմունքների ու կարիքների: Եվ որ զիտվորն է՝ Արեղյանը նկատում և շատ բարձր է գնահատում Մատուրյանի թարգմանչական արժանիքներն ու կուլտուրան, որով հիրավի նշանավորվում է նա մեր դրականության մեջ:

«Ես մեր (Մատուրյանի) — Ս. Ը.) թարգմանական բանաստեղծությունները,— գրում է Արեղյանը,— մեծ մասամբ զեղեցիկ են և կարելի է տեսլ, որ մինչև այժմ եզրած թարգմանական ոտանավորներին մեջ առանկալարց տեղ կարող են բռնել... Մատուրյանի գրեթե բոլոր թարգմանությունները համահասարակ զեղեցիկ են, բոլորը մեր ես լեզվի և արտահայտության ճաշակ ու կենդանություն կա:»

90-ական թվականների հայ բանաստեղծության հաստատուն վերելքը դրական քննադատության մեջ մտտետակ չէր արձագանքում: Գրական տարբեր երևույթները դարձնում էին մեզ առաջ էին բերում մտքերի բախում, հաստատունների ու մերժումների մի ամբողջ համակարգ: Արեղյանը, որ սզգրից իսկ աչքի էր

ընկնում իր ուզգամիտ անաչառությամբ, իրականությունը, երկվայթն ու փաստը միշտ բարձր էր գատում քննադատի անձնական ճաշակից, նախախորություններից ու նկատմաներից, խտասպայան գատասպարտում է քննադատի հասարակական բարձր ու ազնիվ կոչումը սանահարողներին, մերժում անձնական շարժառիթներով պայանավորված ամեն մի քննադատություն:

«... Կերտիկուր,— գրում է նա,— քննադատությունը գարձընում է իր անհատական ճաշակների արտահայտություն, իր ընթերցանություններից իր մեջ զտրված զգացմունքների հիշատակարան և նույնիսկ վերժխնջրություն կամ բարեկամական զովատների մի ստիժ. կամ մի քննած երկի մեջ տեսնում է այն, ինչ որ ինքն է ցանկանում, որ երկի միջին լինի, ուրիշների կրկնը քննելիս լրբարար իր նս-ն է ցույց հանում, կամ իր սխտությունը ծախում: Քննադատությունը այդպիսով հետևում է իր սահմանումից, բանի որ քննադատն իր առարկան թողած, ինքն իրեն մասին է գրում»:

Գրաքննադատության այս անձնականության գատասպարտումը, որ խոսում էր հեղինակի աչքիչ ու անաչառ ճշտումների մասին, իր լիակատար գործնական արտահայտությունն է գտնում Արեղյանի դրաննադատական ողջ գործունեության ընթացքում: Քննադատի հասարակական դերը և զգային բանաստեղծության զարգացման չեքմ նախանձախնջրության նշանարանով Արեղյանը սկսեցին բանաստեղծներին զնահատելիս՝ թուլի, վատի, անորակի մերժման հետ միաժամանակ, հոգատար ու խնամքով որոնում էր, գտնում ու արժեքավորում բանաստեղծորեն հաջողված չուրբանչուր աարը, մինչև իսկ թոթովանք՝ այն ճիշտ համադրումով, թե ամբ բանաստեղծությունը, որ զեռ մանուկ է, շատ ընկանորեն մանկամարկ թոթովանքներով ևս պիտի է սկսն լեզուն բանայ: Արհատահել այդ թոթովանքները— կնշանակն բանաստեղծական գրականության զարգացումն արհամարհեն, քանի որ այդ թոթովանքների վրա պիտի առաջանա այբական լեզուն»:

Այս այս արդարացի մոտեցմամբ էլ նա ծուռանալով գրականագիտ Մինաս Քիրրիյանի՝ Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունների անդրանիկ զբրույլին տված բացասական, մերժողական գնահատականի դեմ, բուռ էություն արժեքավորում է կրտասարդ բանաստեղծի պոետական ուշադրվ թոթովանքները: Արեղ-

1 Ենդր-գար, 1897, Ձ 71:  
2 Ենդր-գար, 1900, Ձ 4:



յանք չի ընդունում հատկապես Քերբելայանի կտրուկ ժխտողական վերաբերմունքը զեպի Հակոբյանը: Մի սկանալի նկատմամբ շատ խոստացանք լինելը, այն էլ մեր բանաստեղծության տվյալ մահարկային պայմաններում, Արեղյանն անիրավացի է համարում: «Քնշուշտ, պ. Հակոբյանք,— դրամ է նա,— ոչ բուն զգացումներ ունի, ոչ էլ երևակայության թոփշը, և ոչ իսկ զգացումների և դադարների նորություն է բերում մեր բանաստեղծության մեջ, բայց մի՞թե ամենայն բանաստեղծ, այն էլ նոր սկսող մեկը, այդ հատկություններն ունի»: Բայց «ասել թե պ. Հակոբյանի բանաստեղծություններից այս կամ այն ոտանավորը ոչինչ չի առում ընթերցողի սրտին— ես չեմ կարող»:

Եվ Արեղյանը մեջբերելով ու վերլուծելով Հակոբյանի մի բանի բանաստեղծությունները («Ուխտ բարեկամության», «Շայ աղբիկան», «Քրդի շունը», «Գլուխկան բալլագա», «Աղոթք» և այլն) ցույց է տալիս նրանց նկատելի բանաստեղծական արժանիքները: Միաժամանակ բացառապետիկ Հակոբյանի զբոսայի սկենհայտ թեթևությունները, Արեղյանն ի վերջո նպաստավոր կարծիք է հայտնում սկանալ Հակոբյանի ապագայի նկատմամբ և գտնում, որ «եթե սովամ առանավորները գեուս մանկական դողդողուն քալիք են միայն, թեպետև այդ քալիքից մի թանիս իրենց արժեք ունին»:

Այսպես, ուրեմն, Արեղյանը միանգամայն ստույգ, առարկայական շափանիչներով է զնահատում ժամանակի մի շարք նշանավոր գրողների ու բանաստեղծների, գեահատականներ, որոնք մարդարեակն իրողություններ դարձան հայ գրականության զարգացման ընթացքում:

Արեղյանի տեսական-քննադատական հայացքների զարգացման մեջ մի նոր աստիճան է նշանավորում եվրոպայում ուսանելու տարիներին զբված (1895—97 թթ.) «Գրական դպրոցներ» ծավալուն աշխատությունը: Վերջինս, թեպետև մեծ մասամբ քաղաքություն է արեմտակիրսպական, հատկապես ֆրանսիական գրականության ամենակենսու պատմաբանների ու տեսարանների աշխատություններից, սակայն հեղինակի գրականագիտական ճաշակի, բմբանմաների, տեսական հայացքի նկատմամբ ունեցած առանձնահատուկ ստեղծագործական վերաբերմունքի, և ամենակարևորը, աշս կամ այն խնդրի վերաբերյալ արտահայտած մտքերի ու գատողությունների տեսակետից, բոտ ամենայնի ուշագրավ դործ է:

Այստեղ է, որ Արեղյանի նախորդ կցկաուր տեսական ու քննա-

դատական դիտողություններին փոխարինելու է գալիս ժամանակի եվրոպական գրականագիտության առաջավոր նվաճումների վրա խորսխված մի կոտ ու ամբողջական տեսություն, որ հայ գրականության խնդիրներն ու երևույթները բննարկվում և նախկալորվում են ընդհանուր գրականագիտական օրինաչափություններով ու շափանիչներով:

Արեղյանը նշված աշխատության մեջ գրական դպրոցների և ուղղությունների պատմական տեսությունը շարագրելուց բացի, շոշափում է զեղագիտական ու գրականագիտական մի շարք ընդհանուր տեսական խնդիրներ:

Արվեստի կատարելությունն, բոտ Արեղյանի, հարաբերական հասկացություն է, քանզի իրականություն մեջ կատարյալ արվեստ գոյություն չունի: Համաձայնվելով հանգրծ արվեստի կատարելությունը անձնական կամ հասարակական ճաշակով մեկնաբանելու թուշ տեսարանների կարծիքին, Արեղյանը միաժամանակ ընդունում է արվեստի կատարելության առարկայական շափանիչի գոյությունը, դա զեղարվեստական և երկի ձևի ու բովանդակության համապատասխանությունն է: Մեկայն, Արեղյանը զեղագիտական շափանիչները, հասկացություններն ու ճաշակը անշարժ ու քարացած չի համարում: «Յուրաքանչյուր գրական դպրոց և նշանավոր քննադատ,— դրամ է նա,— յուր տեսակ է հասկանում արվեստի կատարելությունը կամ կլասիկական արվեստը. դի գրականության մեջ ես ոչինչ հաստատ ու անշարժ կանգնած չկա. ինչպես գրականության բուր տեսակները, այգպես և բննագատությունը շքսպիտությունն... մեջ է: Մարդկանց յուրաքանչյուր սերունդ աշխատում է լուծել արվեստի կատարելության կլասիկական խնդիրը, և լուծում է յուրբով ին տարբեր կերպով, բան լուծել է նախորդ սերունդը»:

Գրականության զարգացման ու առաջադիմության ճանապարհին Արեղյանը կարևոր նշանակություն է տալիս գրական ազդեցություններին, գրական նախորդ սերնդի և ժամանակակից օտար գրականության ավանգների օգտագործման շափի ու եղանակների խնդրին: Գրականության զարգացման պատմական ընթացքն բոտ Արեղյանին, թեպի էլ մեկուսացած պրոցեսն չէ, այլ հարստու փոխազդեցությունների, փոխադարձ շփումների, դիտակցված ու շփուտակցված համանմանություն մի մշտաշարժ լինելություն, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում ունի իր որոշակի ու յուրահատուկ գծերը:

Նմանողությունը դիտելով իբրև մարդկային հոգեբանություն, բնաստական երևույթ առհասարակ, Արեղյանը գտնում է, որ նույն երևույթն է առկա նաև գրական նմանողության մեջ, ուր միշտ ստորինը բարձրագույնին նմանվելու ձգտում է հանդես բերում, կամ մի օտար նմանվում է մի ուրիշ օտարի:

Առաջին կարգի գրական նմանողությունն Արեղյանը դիտում է իբրև կյանքից կտրվածություն, իբրև կազապարում անցյալի, հեի, զբաշխիչ շրջանակներում: Մինչդեռ երկրորդ զեպրում նմանողությունը գրական կենդանի ընթացք է, երբ մի թույլ զարգացած գրականություն հետևում է առավել զարգացածներին, սովորում և օգտագործում է նրա ուսանելի կողմերն ու առաջադեմ ավանդները: Եվ ժամանակի հայ գրականությունն, բոտ Արեղյանի, այս երկրորդ վիճակի մեջ է գտնվում տակավին և շատ բաներ ունի սովորելու առաջավոր ժողովուրդների գրականությունից:

Բայց և այնպես Արեղյանը գրական նմանողությունը ստրկական հետևությունն ու առաջից պատճենահանումը չի համարում, այլ լավի, առաջավորի ընդորինակում և ստեղծագործական յուրացում, մի այնպիսի նմանողություն, որ զարգացման մի նոր ու ինքնուրույն աստիճանի բարձրացնեք սովյալ գրականությունն ու տվյալ հեղինակին: Նմանողությունը համարելով գրականության զարգացման արգակներից մեկը, Արեղյանը, սակայն չի չափազանցում կամ գերազնահատում այն. գրական նմանողության զերը ընդգծելով հանդերձ, նա զլիավոր նշանակությունը տալիս է գրականության հիմքն ու էությունը կազմող բնությանն ու հասարակական կյանքին:

Գրականությունը պետք է լինի բնական ու հասարակական կյանքի նմանվողն ու արտահայտիչը: Վնասմասիրիչ բնությունը, սովորել նրան ճանաչել, բնության ու կյանքի մեջ խորը թափանցել, փորձել յուր սեփական ջանքերով յուր երկերի մեջ հավասարմությունը վերարտադրել բնությունն ու կյանքը, որ և բնության մի մասն է կազմում—ահա ամեն մի արվեստավորի պարտքն ու պաշտոնը<sup>1</sup>:

Այստեղից էլ Արեղյանն առաջ է քաշում կյանքի և գրականության փոխադարձ կապի հարցը, հետևելով Է. Թենի<sup>2</sup> գրականության վրա բնական ու հասարակական միջավայրի ազդեցության տեսությունը: Ուղենիշ ունենալով Թենի պնդումը, քի սեի արվեստի երկ, մի արվեստագետ հասկանալու համար պետք է ճշտությունը պատ-

կերացնել նրանց ժամանակի բարբերի ու մտքի ընդհանուր վիճակը», Արեղյանն առավել զարգացնում է այդ՝ կարևոր տեղ հասկացնելով «բնկերական (իմաստահասարակական—Ս. Ը.) կյանքի պայմաններին»:

«Գրականությունը կյանքից զուրս չէ,— գրում է նա,— այլ ընդհակառակն, նա մյուս զեղարվեստների հետ միասին կյանքի ամենից լավ արտահայտությունն է: Շեքսպիրի դրամաները մի քանի քաղաքի հայելի են, որի մեջ անդրադառնում է ԺՊ-րդ զարու Անգլիայի ամբողջ քաղաքակրթությունը, իսկ Ռասինի տրագիդիաները մի ճշգրիտ պատկեր են Լուդովիկոս ԺԳ-ի ժամանակի ֆրանսիական մտքի և բարբերի համար»<sup>3</sup>:

Գրականության՝ հասարակական կյանքը անդրադարձնողի զերի նման ըմբռնումով էր պայմանավորվում Արեղյանի ժամանակի գործոնի պահանջը: Ամեն մի կատարյալ գրականություն, բոտ նրա, պետք է արտահայտի հեղինակի ապրած ժամանակաշրջանի հասարակական կյանքն իր բազմատեսակ հարաբերություններով ու շրջապատություններով: Չրողը պետք է լինի իր ժամանակաշրջանի հասարակական շահերի արտահայտիչը: Եվ այդ կապակցությամբ էլ քննադատում է կլասիցիզմն ու ռոմանտիզմը, որոնցից առաջինը թևատիկայի տեսակետից առհասարակ կտրված էր իր ժամանակից և հետավոր անցյալն էր գարծնում ստեղծագործության առարկա, իսկ երկրորդի ներկայացուցիչներից ոմանք իրականությունից զժողհեղով ձգտում էին դեպի պատմական անցյալը, ոգևորվում նրանով, որ և ի վերջո, նրանց հասցնում էր պատմական անցյալի իրականացնումն:

Արեղյանը նման ձգտումն համարում է հետադիմական. նա մեծ արժեք է տալիս ժամանակակից կյանքի թևատիկայով գրված երկերին, քան պատմական վեպերին, այն ճիշտ դիտավորությամբ, ինչ պատմական վեպերում փաստորեն բուն պատմական կյանքը իր էությունը ու խորությունը բացակայում է. կա սակ պատմական գունավորում, իսկ նկարագրվող կյանքի թև՝ արտաքին և թև՝ հերոսների ներքին հատկանիշները սովյալ զարարչաանի իրական պատմականը չեն, այլ հեղինակների ապրած ժամանակաշրջանի՝ ժամանակակից կյանք ասելով Արեղյանն ամենից առաջ հասկանում էր բուն ժողովրդական կյանքը իր բոլոր կողմերով: Հետամուտ

<sup>1</sup> «Նոր-գաբո», 1896, № 39.

<sup>1</sup> «Նոր-գաբո», 1896, № 108.

<sup>2</sup> «Նոր-գաբո», 1897, № 63.



գրականության իր շեշտված դեմոկրատական բնույթն ունենալով, նա գտնում է, որ գրականության անուղղ մայրն ու կենտրոնը աղբյուրը ժողովուրդն է: Քննադատելով կլասիցիզմի տեսարան Բուալոնի այն տեսակետը, թե «ոչինչ մեզ հաճելի չէ, բացի նրանից, որ կարող է կոշտ-կոպիտ ժողովրդի դատադրության անհաճո լինել», Արեղյանը արդարացիորեն կլասիցիզմի մեծաշույն քննադատողն անունով է տեսական այդ պնդման մեջ, որով ժե բանաստեղծությունն... հեռանում է յուր կենտրոնը աղբյուրից—ժողովրդից:»

Գրականությունը պետք է ժողովրդային լինի ոչ միայն բնատիրկայով, այլև բուն որով, էությունը և զեղարվեստական նպատակագրումով, մի պարագա, որի մեջ էլ Արեղյանը տեսնում է գրականության իսկական ժողովրդայնությունը:

«Մի գրականություն երկու պայմանով կարող է ժողովրդական լինել,— գրում է նա,— նախ, որ գրականությունն յուր ներշնչումները ժողովրդական երևակայությունից պետք է բաղի, կամ թե այդ գրականությունը ժողովրդին հասկանալի լինելու համար պետք է որոշված լինի»<sup>1</sup>:

Այս համոզմունքով էլ նա բարձր է գնահատում Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, ուր վերարտադրված են հասարակ ժողովրդի կյանքն ու կենցաղը, բարբերն ու սովորույթները:

Գրականության ժողովրդայնության հետ է սերտորեն աղերսվում նրա ազգայնությունը, քանզի ժողովրդայնության ամեն մի գիծ, իր բնոճանրությամբ հանդերձ, ունի սեղանական որոշակի դուրս ու երանդ: Ժողովրդական-հասարակական կյանքի լայն պատկերումը գրականության մեջ, միշտ էլ որոշակի տեղական ու զեղարվեստական բնույթ ունի, կապվում է որոշակի ազգի կյանքի երևույթներին, որոնք ունեն իրենց շեշտված առանձնատեսակությունները: Գրականության ազգայնությունը, ըստ Արեղյանի, որոշակի ազգի տեղական կյանքի երևույթների անզրադարձումն է զեղարվեստական պատկերների ու կերպարների միջոցով: Եւ սովյալ ազգային լեզվով ու ռեական առանձնատեսակ երանդներով: Այսինքն, ազգայինը գրականության մեջ՝ զա այն յուրահատկությունն է, որով տարբերազատվում են տարբեր ժողովուրդների գրական ստեղծագործությունները: Ազգայնությունը հասարակական անհատականությունն է, որ իռնչպես պատմական հասկացություն է՝ պայմանավորված բուրժուական նոր հարաբերություններով: Տեսական կյանքում

անհատի բարձրացումն ու ինքնիշխանությունը տանում է հոգևոր կյանքի, նաև գրականության մեջ անհատականության բարձրացմանը: Մտմանտիզմը դիտելով իբրև հասարակական նոր հարաբերությունների արդյունք, որն ամենից առաջ հակադրվում էր կլասիցիզմի գրական կանոններին և բարդում էր ազատություն արվեստի մեջ, Արեղյանը նշում է, որ ազատությունը նշանավորվում է անձնականության, անհատականության բարձրացմամբ, անհատականություն, որ միջնագրում շեշտված ու ոչնչացված լինելով՝ տեղի էր տվել հոգի հասարակականությանը: Նոր գրականության մեջ անհատականությունը առաջ է բերում գրական ձևերի ու ժանրերի բուն զարգացում: Ազատ մտաբեր ու զգացող անհատը գտնում է գրականության կենտրոն, հետևաբար և գերիշխող են գտնում գրողի անհատական մտքերն ու զգացմունքները: Անհատականության խնդիրը պատմական նման տեսակետներից դիտելով, Արեղյանը բացահայտում է գրականության մեջ անձնականի ու հասարակականի վսխահարաբերության վերաբերյալ իր գրականագիտական բնորոշումները: Նա գտնում է, որ ամեն մի անձնական զգացմունք գեոեկսի կարող գտնուել գրականության նյութ, բանի որ գրողն ինքը պատկանում է հասարակությանը և դրան է այդ հասարակության համար: Հետևաբար, բանաստեղծի անձնականը ինչ-որ շահով պետք է լինի ընդհանուր հասարակական. նրա մտքերն ու զգացմունքները պետք է լինեն ոչ թե նեղ ու եզակի, այլ՝ հուզեն ու ոգեկուրչեն և ուրիշներին:

«Բանաստեղծը,— գրում է Արեղյանը,— միայն մեր թույլ ձայնի, մարդկանց ընդհանրության հշուտն ու թնդուն արձագանքն է և պիտի լինի: Նա արձագանքի հետ և իրականության հայելին պիտի լինի. և իբր արձագանք ու հայելի այն միայն պիտի անդրաձայնի և արտացոլացնի, ինչ որ իրենից դուրս էլ գոյություն ունի: Մեծ բանաստեղծները նրանով են միայն մեծ, որ կարողանում են այդպես վարվել: այսինքն իրենց սիրտն արտապնդելով հանդերձ, նրանք ընդհանրության արձագանքն են լինում»<sup>2</sup>:

Մասնավոր կրթերն ու զգացմունքները բանաստեղծության նյութ կարող են գտնուել այն ժամանակ միայն, երբ ունեն ընդհանուր, հաստատուն և հավիտենական հատկանիշներ: Եվ Արեղյանը արվեստի կատարելության չափանիշներից մեկն էլ հատարում է անձնական մտորումների, զգացմունքների ու շահագրգռությունն-

<sup>1</sup> «Նոր-գար», 1896, № 104.

<sup>2</sup> «Նոր-գար», 1897, № 54.

րի գեղարվեստական զուգակցումը հասարակականի հետ, երբ առաջինը դառնում է երկրորդի կոնկրետ անհատական արտահայտությունը: «Կատարյալ է այն առարկայական արվեստը,— գրում է նա,— որով բանաստեղծը ընդհանուր մարդկայինն է արտահայտում. մեծ և զորեղ է այն քնարականությունը, անհատական կամ ենթակայական արվեստը, որով բանաստեղծն իր անձնական զգացմունքները երգելով ընդհանուր մարդկության ներկայացուցիչն է դառնում»: Երբ խախտվում է անձնականի և հասարակականի զուգարվեստական հիշյալ հավասարակշռությունը, այս գեղարվեստական երկը զրկվում է իր բուն արժեքից: Այժմ էին. որոշ սեսարականների կարծիքով ումանտիզմի անկման գլխավոր պատճառը հիշյալ հարաբերության մեջ անձնական-զգայական կողմի շարժազանցումն էր, որը տարալ գրականության հասկենտորոնցում:

Մասը են համատու գծերով այն հանգուցալին խնդիրները, որ շոշափում էր «Գրական զարոցներ» աշխատության մեջ Ենայի ու Փարիզի համալսարանների ուսանող Մանուկ Աբեղյանը: Հիշյալ տեսակետները, որ հենվում էին ժամանակի եվրոպական գրաքննադատության մեջ նոր արմատավորվող Գարսիինի և Հեկկեկի բնական շրջափոխության, ինչպես նաև Սենտ Լիլիերի ու Կյուլբեի միջավայրի ազդեցության բնագիտական ուսմունքների վրա, իրենց էությունը մատերիալիստական էին և դալիս էին նպատակու դարավերջի հայ առաջնական քննադատական մտքի զարգացմանը:

Եթե իր քննադատական հոգիվաներում 80—90-ական թվականների հայ գրականության նշանավոր դեմքերին Աբեղյանը դեռահատում էր ռեալիստական գեղագիտության շարժիչներով, այս «Գրական զարոցներ» աշխատության մեջ ամփոփում ու տեսակաանորեն բացահայտում է իր գրականագիտական համոզմունքները: Հանգամանորեն վերաբարդրելով կլասիցիզմի և ումանտիզմի պատմությունն ու տեսությունը, վերջիններին սահմանափակությունների քննադատությանը Աբեղյանը հաստատում ու հավաստում է ժամանակի տիրապետող գրական ուղղության՝ ռեալիզմի կենսական հիմունքները:

Գրականագիտական այդ սկզբունքներով էլ, ահա, Աբեղյանը հետագայում մտանում ու հետազոտում է հայ հին ու նոր գրականության պատմությունը, ստեղծելով իր գրա-պատմական դարակազմիկ համակարգն ու տեսությունը հայագիտության մեջ:

## 2. ԱՐԵՂՅԱՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ

### Ա. ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՏՄԱՐԱՐ

Անցյալ դարի 90-ական թվականների վերջերին ստանձնելով էջմիածնի Գևորգյան ճեմարանի հայոց գրականության ուսուցչի պաշտոնը, Աբեղյանն իր դասախոսություններում աստիճանաբար մշակում է մեր գրականության պատմության մի ուրույն դասընթաց, որն հետագայում ընկնում է հիշյալ բնագավառն ընդգրկող նրա աշխատությունների հիմքում:

Հայ գրականության պատմության, մասնավորապես հին շրջանի, զրկու շարքը զբաղեցրել է Աբեղյանին տակավին ճեմարանական գործունեության սկզբներին: Սակայն մենագրական առանձին հետազոտությունների բացակայության, հետևաբար և գրական շատ խնդիրների ընդարձակմամբ լինելու պատճառով, նա ժամանակավորապես թողնում է այդ մտադրությունը: Հետագայում, սակայն, ժամանակ առ ժամանակ նա սնորհաբանում է ավել խնդիրներ, որի արտահայտություններից անգրանիկն հանդիսացավ 1908—1909 թվականներին «Արարատ»-ում շարունակաբար տպագրված «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից» աշխատությունը: Ե՛իշտ է, «Ուրվագծերը» նվիրված էր մեր նոր գրականությանը, սակայն նրա շոշափած ժամանակաշրջանն ու արտահայտման անմիջական հին շարունակությունն էին և շատ կողմերով տակավին հինն էին պատկանում: Գրանք ընդգրկում էին XIX դարի առաջին երեսնամյակի դարաբար գրականությունը, որի մեջ շատ բաներում զգացվում էր զեռ հինն ընկնելու Կարևի է ասել, որ հիշյալ աշխատությունը յուրօրինակ և առաջին լույք նախապատրաստություն էր Աբեղյանի հայոց հին գրականության հետազոտում դրած պատմության: «Ուրվագծեր»-ի հեղինակը թեկուտ հավանություն չունեմ իր գործը զիտելու իբրև գրականության պատմություն<sup>2</sup>, սակայն գրանք իրենց շոշափած խնդիրներով ու հարցադրմամբ նոր աստիճան էին հայ նոր գրականության պատմագրության հանապարհին, որը մեղանում նոր էր միայն սկզբնավորվել:

«Ուրվագծեր»-ում Աբեղյանն առաջ էր քաշում գրա-պատմու-

1 Մ. Աբեղյան, Հայոց հին գրա- պատմություն, գիրք 1, էջ 1:

2 «Արարատ», 1908, էջ 850, տե՛ս առաջատիկ ծանոթությունը:



կան երկու կարևոր խնդիր. առաջինը հայ նոր գրականության սկզբնավորման ժամանակի հարցն էր, մյուսը՝ XIX դարի առաջին երեսնամյակի գրական զեմքերին ու երևույթներին տրված նոր գնահատականներն էին, որոնցով բնորոշվում էր մեր նոր գրականության ձևավորման ընթացքն ու բացահայտվում էին նրա զարգացման հիմնական միտումները:

Մեր նոր գրականության սկիզբը զննելով XVII դարում և դեռ դրանից էլ փոքր-ինչ առաջ, Արեղյանն այդ հին տեսակետը նորովի է հիմնավորում և մեկնարանում:

Հայ գրականության հնի և նորի սահմանարաժանումը նա դիտում է ոչ իբրև սոսկ գրական երևույթ, այլ ամենից առաջ գրականությունը պայմանավորող պատմա-հասարակական կյանքի ու գիտակցության մեջ կատարվող փոփոխություն:

XIV—XVI դարերի հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական կյանքի անմխիթար պայմանները, համատարած տգիտության ու խավերի, ապա և հոգևոր կյանքի կատարյալ անկման մեջ էլ Արեղյանն իրավամբ տեսնում է հնի հոգեվարքն ու մահացումը: Սակայն միաժամանակ, հին քաղաքակրթության անկման մեջ Արեղյանը եկատում է նորի սաղմերը, որոնք սկզբնապես հանդես են գալիս հնի կերպարանքով, իբրև հնի վերածնություն: Եվ այդ ամենից առաջ լուսավորական շարժման և ուսումնա-կրթական օջախների հիմնարկության, վանքերի և եկեղեցիների լայն շինարարության ծավալման մեջ, որ սկիզբ է առնում XVI—XVII դարերից ի վեր: Հակառակ գրականության մի քանի պատմաբանների, որոնք հայտնուցում են վերածնության սկիզբն ու զարգացումը կապում էին գաղտնիաշայտության հետ, Արեղյանը այն զննում է բուն երկրում և կապում Ամբերդի Սարգիս եպիսկոպոսի (վաճ. 1620 թ.) և Տրապիզոնցի Տեր կերպուսի (վաճ. 1621 թ.) անուններին, որոնք Տաթևի մոտ հիմնում են Սյունյաց Անապատը և բուն երկրում կրթություն ու լուսավորություն տարածում: Եվ հերքելով Մխիթար Աբրահամի ու Մխիթարյաններին նոր գրականության սկզբնավորողներ համարելու կարծիքը, Արեղյանը գտնում է, որ «Մխիթարյաններն և ինքը Մխիթար Աբրահամ սկիզբ չեն, այլ ծնունդ և շարունակող են այն մեծ շարժման, որ առաջ է գալիս Հայոց եկեղեցու մեջ 17-րդ դարում և տևում է մինչև 19-րդ դարու կեսերը և այս կողմն ետ»<sup>1</sup>:

Լոր գրքաբե գրավանդարան առաջացումն ահա, Արեղյանն ի-

րավամբ կապում է անցյալի մշակութային կյանքի որոշ կողմերի վերանորոգման հետ և դիտում որպես վերջինիս արդյունք ու պարագայում: Եուրջ երկուհարյուրամյակ հարստեղ այդ նոր գրաբար գրականությունը, սկսած իր առաջին ներկայացուցիչներ Սիմեոն Զուղալեցիով և Առաքի Գալիբեցիով՝ վերաջրած Արևել Քաղաքում, Արեղյանը դիտում է իբրև մի նոր անբյուրան շրջանի գրականություն, որը XIX դարում արդեն իր գրական խնդիրներն ավանդում է աշխարհաբար գրականությանը, «որպարեց աշխարհաբարին անցման շրջանում»: Արեղյանը եղբակցանում է, թե «Մեր նոր գրականությունն սկսվում է 17-րդ դարում, և այս վերջին երեք դարերը շարունակությունն են միմյանց: 17-րդ դարն է միայն, որ շարունակող չէ նախորդին, այլ միայն վերածնող»<sup>2</sup>:

Այդպես, հայ նոր գրականության սկզբնավորումը զննելով XVII դարում և տվյալ շրջանի գրական արտադրանքի քննարկումը նպատակից դուրս համարելով, Արեղյանը ծանրանում է հիմնականում XIX դարի առաջին բառորդի գրաբար նոր բանաստեղծության վրա. իբրև կապող, փոխանցիկ օղակի գրաբար և աշխարհաբար գրականության նոր գրաբար գրականության «բիշտոլ գաղափարն ու զգացումը» համարելով կրոնասիրությունն ու հայելեասիրությունը,

<sup>1</sup> Աբրահամ, 1906, էջ 893: Այս տեսակետն Արեղյանը հետագայում վերանայում է Հայ հին գրականության պատմությունը գաղափարացնելիս XVII—XIX դարի առաջին երեսնամյակի գրականությունը դիտում է իբրև Հայոց հին գրականության զարգացման վերջին 4-րդ շրջան, այն անվանելով «եկեղեցական գրականության վերածնության»՝ նոր կրոնական շարժման հետևանքով XIV—XVI դարերի անվանից հետո նոր գրաբար և աշխարհիկ գրականությունները (տե՛ս ՍՍԽԳ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիրք», № 5—6, 1941, էջ 85), կամ էլ «Երականության ներդրումը XVII—XIX դարերում» (տե՛ս «Հայոց հին գրականության պատմություն», գիրք II, 1946, էջ VIII), թեպետ Արեղյանը շատ քիչ շարադրելու այս 4-րդ շրջանի գրականության պատմությունը էր զարմել շատ ասպիներ առաջ, տակավին 10-ական թվականներից (տե՛ս նրա «Եկեղեցականության հայոց հին բանաստեղծության», Փիլիսո, 1917, «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության», Երևան, 1923):

XVII—XIX դարերի գրականությունը հին գրականության եղբակցի շրջանը դեռելը, կարծում ենք, առավել ճիշտ է հիմնավոր. քանզի այդ նորոգված գրաբար գրականությունը թեպետ հասարակական ու կուլտուրական նոր շարժումների սրբապիտր, սակայն թե՛ լեզվով, թե՛ բովանդակությամբ և թե՛ մանրանք, գաղափարներով ամբողջապես հնի կրկնություն ու վերադարձություն էր զարգացած հիմնականում կրոնա-եկեղեցական ազդաներով: Իսկայնա նոր գրականության շուրջը զբաղվում է XIX դարի սկզբներին, հասկապես վանեցեցու և Ալամ-գարայանի պեղծույթի մեջ, որ փայլուն կերպով հիմնավորում է Արեղյանը:

<sup>1</sup> Աբրահամ, 1906, էջ 890:

Արեղյանը XIX դարի առաջին երեսնամյակի զրական առանձին զեմքերի բնությամբ բացահայտում է արդեն մի քանի նոր մտորվել-ների ու գրացումներ, որոնք գերիշխող են դառնում հետագա աշխարհաբար բանաստեղծության մեջ:

Մինչև Մխիթարյանների բանաստեղծությունը, Արեղյանն առանձին նորություններ չի տեսնում ո՛չ Պոյակցի Տեր Կոմիտաս բա-հանայի ու Ասատրասցի Աբրահամ վարդապետի կրոնա-հայրենասիրական ներշնչներում և ո՛չ էլ Գրիգոր Գապասախայլանի սիրո ու բնության ծանծանձիկ երգերում: Առաջին լուրջ նորությունը, Արեղյանը տեսնում է Դուկաս Բեճնյանի «Ամարանոց Բիզանդական օւղեցույց-գրքի շախաձո մասում, և այն էլ ոչ թե բանաստեղծական կատարման, այլ սոսկ նյութի, թեմայի քննարկյան մեջ: Առաջին անգամ մեր նոր դարար զրականություն մեջ բանաստեղծության ստարկա են դառնում բնությունն ու նրա տեսարանները, և միայն այդքան, որ ըստ Արեղյանի «մի նորություն է և մի քայլ առաջ է տանում մեր բանաստեղծությունը»:

Մխիթարյան մեացած վարդապետների սյուզիան, բացառու-թյամբ Արսեն Բաղրատունու, Արեղյանն իրավամբ անարժեք է հա-մարում, մանավանդ, որ այն մեծ մասամբ հորինված է բռնահան-գեթով և զվարճայի ժամանցի համար: Մինչդեռ Արեղյանի կարծի-քով բանաստեղծության բույնը ստեղծությունն ու իրական կյանքն է: Իսկ Մանվել Զախարյանի ստանավորները մասնավորապես և Մխիթարյանների սյուզիան առհասարակ հեռու են բանաստեղծա-կան այդ կենարար սկզբներից:

Մխիթարյան բանաստեղծներից Արեղյանն արժեք է տալիս միայն Արսեն Բաղրատունու, քայց ոչ իբրև բանաստեղծի, այլ որ-պես պատմական նշանավոր զեմքերի Արեղյանը հերքում է Բաղրա-տունուն նշանավոր բանաստեղծ համարողների կարծիքը, իրա-վամբ գտնելով, որ այդ կրթված ու զարգացած մարդու պոեզիան «ոչ մի շարժում չի մտցնում մեր բանաստեղծության մեջ»: Քայց Բաղրատունին արժեքավոր է իբրև գրական նորարար. նրա «ամե-նամեծ ծառայությունը մեր զրականության համար» այն է, որ նա... կեղծ զասական ուղղությունը մտցրել է մեր բանաստեղծության մեջ»<sup>1</sup>, այսինքն՝ Բաղրատունին հանդիսանում է «այ զրականու-թյան մեջ կեղծ կրտսիցովի հիմնադիրը, եվ ոչ միայն այդ. Արեղ-յանը Բաղրատունու մյուս զրական նորարարությունն է համարում կրոնական օրատորիաներ, թատերադրություններ հորինելը:

«Բաղրատունին յուր... կրոնական գրամանկրով մի մեծ նո-րություն է մտցնում մեր զրականության մեջ, մի բուրբուղի նոր տեսակ, որ մինչ այդ գոյություն չի ունեցել մեղնում»<sup>2</sup>: Արեղյանը Բաղրատունու պոեզիայի առանձին կողմերի մեջ ևս նկատում է լուսավոր գծեր և զրանք գեհնատում ըստ արժանավույն: Բաղրա-տունի բանաստեղծի պոետական ամենաէական արժանիքը Արեղ-յանը տեսնում է երկու հանգամանքի մեջ. նախ այն, որ Բաղրա-տունին «մնություն սիրող է, գիտն զգալ և նկարագրել բնությունը», և ապա այն, որ «նա հասարակ ու սրողայինկ նյութերն ևս հարուստ ու ճոխ լեզվով արտահայտել գիտն»: Բաղրատունուն Արեղյանը մեր նոր զրականության մեջ առաջիններից է համարում, որ կարողա-նում է իսկական բնություն վերարտադրել, լինի դա ընդարձակ նկարագրություններով, թե կարճ պատկերներով ու համեմատու-թյուններով:

Բաղրատունու բանաստեղծության ամենամեծ զարգացումը Ա-րեղյանը համարում է «Հայկ դիցապեոս»-ը, որի մյա կանգ չի տո-նում, իբրև XIX դարի երկրորդ երեսնամյակի զրական արտագրանք: Բաղրատունիով Արեղյանն ավարտում է Մխիթարյանների սյուզիան և անցնում զրական երկու նշանավոր զեմքերի՝ Հովհան Վանանդեցու և Հարություն Ալամդարյանի գեհնատությանը:

Հայ նոր զրականության սկզբնավորման պատմության մեջ Ա-րեղյանը կարևոր տեղ է հատկացնում Հովհան Վանանդեցուն: Վերջ-նիս քնորոշ համարելով իր ժամանակակիցների մտավոր ու կուլ-տուրական զարգացման օահմանափակ մակարդակը, նա միասնա-տեսակ նշում է Վանանդեցու բնատուր խելքով, բանաստեղծական վառ երեակայությունը և խոսքի հարուստ կուլտուրայով օժտված լինելը, որով Վանանդեցին կարողանում է ստեղծել հայոց պատ-մական անցյալի թեմաներով վիպական լայնաշունչ բնութագրեր («Արփիական», «Սևակի դարս և այլն»), որոնք իրենց բանաստեղծա-կան ակնհայտ թիրություններով հանդերձ, մեծ նորություններ էին բերում մեր զրականությանը:

Վանանդեցու մեծադույն վաստակը, այդ նկատումով Արեղ-յանն համարում է շոշափած զարգափարսների և զգացումների նո-րությունը, որով նա «իսկապիս խոշոր նարամածություններ է բերել մեր բանաստեղծությանը»: «Երանով է իսկապիս սկսվում մեր նոր բանաստեղծությունը, որովհետև նրա գրվածքների մեջ առաջին

1 «Արարատ», 1909, էջ 260:

1 «Արարատ», 1909, էջ 266:



անգամ գտնում ենք մեր 19-րդ դարու գեղեցիկ գրականության գրեթե բոլոր գլխավոր դադափարներն ու զգացումները<sup>1</sup>։

Վանանդեցու բերած թեմատիկ նորություններից առաջինն, բոս Արեղյանի, հայ ժողովրդի ազգային բաղաբախան անցյալն է. «Երբ անող սկսվում է, այսպես սասձ, Հայոց Բագախան անցյալի բանաստեղծությունը»։

Արեղյանը կարևոր նշանակություն է տալիս Վանանդեցու հիշյալ նորամուծությանը, բանիկ դարեր շարունակ երկրի բաղաբախան կյանքը դուրս էր մնացել բանաստեղծների տեսադատից։ Վանանդեցին առաջինն է իր հայացքն ուղղում հեռավոր անցյալի աշխարհիկ բաղաբախան կյանքը, գրական ստեղծող հանելով «մեր պատմության առասպելական դրացաններին»։ Արեղյանն իրավամբ այդ նորությունն հռչակում է որպես «մի մեծ հեղափոխություն... մեր բանաստեղծության մեջ» (ընդդրումն իմն է.— Ս. 2.)։

Արեղյանն հիշյալ նորարարությանը մեծ արժեք էր տալիս այն նկատառումով, որ Վանանդեցին անցյալի բաղաբախան կյանքի բանաստեղծական վերարտադրամբ, ուշադրություն էր հրավիրում հայ ժողովրդի արդի բաղաբախան դրություն, նրա այժմյան հայրենիքի վիճակի վրա։ Այսինքն, բանաստեղծն սկսել է մտածել ազգի և հայրենիքի մասին, «համեմատել նեղակա վիճակն անցյալի հետ և երգել ազգային մասին»։ Իսկ դա նշանակում էր, թե Վանանդեցու պոետիան, անկախ իր կրոնական որոշ գծերից, ազդվում էր հասարակական կյանքի իրական ճգնաժամներից և զգացումներից։

Արեղյանը Վանանդեցու երգած հայրենասիրական մոտիվներին ու զգալի արժեքների տրամաբանական ուշահարցմամբ հանդուս էր այն կարևոր եզրակացությունը, որ հանձին Վանանդեցու «մեր բանաստեղծությունն արդեն գտել է իր իսկական խորը զգացմունքի աղբյուրը, դա հայրենասիրությունն է իսկական ընդարձակ իմաստով, որ միանգամայն իր բոլոր թափով պալիս է բարձրացնելու մեր քերթվածները և զորեղ շեշտեր հնչել տալու նրանց»։

Ավելին. Արեղյանը Վանանդեցու հայրենասիրության մեջ տեսնում է հայ նոր գրականության զարգացման սպառա բոլոր սաղմերը։ «Նվճարված Վանանդեցու այդ շեշտերն (իմա՝ հայրենասիրական— Ս. 2.) մեջ,— գրում է նա,— մենք գտնում ենք և՛ Ալիշան և՛ Գամառ-Փաթիկյան և՛ Պեշիկբաշլյան և՛ նույնիսկ Աբովյան»<sup>2</sup>։

Արեղյանը բացահայտում է Վանանդեցի-բանաստեղծի մեկ ուրիշ հատկությունն ևս՝ Բագախանությունը։ Վանանդեցին ոչ միայն բերթող է, կրոնական ու հայրենասիրական զգալի արժեքներ ցուցող, այլև սեփական ժողովրդի իրական հոգսերով ապրող, նրա կարիքները վերացնելու որոշակի միջոցներ առաջադրող բանաստեղծ։ Նա իրեն իսկական հայրենասիր, ազգի վերաշինության հարցն է առջ քաշում, որի մեջ կարևոր տեղ է հատկացնում կրթությանն ու լուսավորությանը։ Եվ հիշյալ աղևիվ ձգտմանն ու նպատակին էլ նա նվիրում է իր բանաստեղծությունները։ Վանանդեցին ազգի վերաշինությունը տեսնում է նաև նրա ազգային միասնության ու համերաշխության, միաժամանակ և ինքնագաշտպանության մեջ, վերջինս առիթով առաջադրելով դերն ունենալու անհրաժեշտությունը։ Գրանք արդեն ազգային ազատագրության զաղափարներին այն սաղմերն էին, որոնք հետագայում կազմեցին մեր բանաստեղծության կենսատու երակը։

Արեղյանի ամենազարգ զրլի տակ Հովհան Վանանդեցին բանաստեղծական իր բոլոր արժանիքներով հայ նոր գրականության պատմագիտության մեջ զրվում է իր նոր կուժման բարձրության վրա, վերաստանում իր պատմական այն մեծ իրավունքը, որով «նա առաջին անգամ մեր բանաստեղծությունը մտնեցնում է կյանքին և մոտայնիցնում կյանքի համար»։ Այսինքն՝ Վանանդեցին դառնում է հայ նոր գրականության նախակարգակերպ։

XIX դարի առաջին քառորդի հայ գրականության մյուս նշանավոր ներկայացուցիչը Հարություն Ալամդարյանն է, որով Արեղյանը եզրափակում է հիշյալ շրջանի գրականության պատմության արվագժերը։

Եթե՛ Հովհ. Վանանդեցին վիպական մեծ շնչի տեր բանաստեղծ էր և իր վիպական ոգով «նա միանգամայն մեր թմբած, սառն ու անշունչ բանաստեղծությունը հողի ու շունչ է տալիս», ապա Ալամդարյանն արդեն քնարերգու բանաստեղծ է, անկեղծ ներշնչանքով, պարզ ու ինքնաբերական զգացմունքներով ապրող մի պոետ։

Արեղյանը Ալամդարյանին համարում է գրական վերահիշյալ մասնակաշրջանի միակ քնարերգուն, որի ներշնչման աղբյուրը անձնական ապրումներն ու զգացումներն են, հատկապես սիրեցյալ կնոջ վաղաժամ մահն ու պատճառած տառապանքները։ Այդ պատճառով էլ Ալամդարյանի բանաստեղծության թեմատիկային հա-

<sup>1</sup> «Արարատ», 1909, էջ 427.

<sup>2</sup> «Արարատ», 1909, էջ 432.

1 «Արարատ», 1909, էջ 438.

տուկ են «քնարերգութիան ամենամեծ բեմաներից երկուսը՝ սեռ և մասն, և այս միացած մի սրտի մեջ, միաժամանակ զգացած և ի մի ձուլված մի սիրած անձի համար»<sup>1</sup> (ընդգծումն իմն է—Ս. Չ.):

Այնպիսի քնարերգութիան դրականագիտական նուրբ վերլուծումներով Արեղյանը բացահայտում է բանաստեղծի ապրումների հուզիչ բնականությունը, հոգեկան անկեղծ տաղանդները, որոնք սաղմոսների տողերի համար տաղաչափված նրա աղբյուրների մեջ անզամ կենդանի են, սրտատուչ ու գրավիչ: Դրանով Այսամ-դարյանն, ըստ Արեղյանի, «միանգամից բարձրացնում է նաև մեր կրոնական սառն բանաստեղծությունը» իսկական քնարերգութիան մակարդակի:

Արեղյանն, այդպիսով, առաջին անգամ հայ գրականության պատմագիտության մեջ էական ու բնորոշ գծերով ուրվանկարում է անցյալ դարի առաջին կեսին հայ նոր գրականության զարգացման ընթացքը, այն դիտելով իբրև միջանցիկ օղակ նախորդ երկու հարյուրամյակների զբաղմունքների և XIX դարի հայ նոր աշխարհաբար գրականության միջև, երբ հինն աստիճանաբար, զարգացող կյանքի պայմանների ազդեցությամբ տեղի է տալիս նորին՝ ձևեր բերում իր նորօրյա գրեթե բոլոր գծերն ու հատկանիշները: Հիշյալ շրջանի գրականության զլխավոր գեմքերն ու դարգացման օրինաչափությունները Արեղյանի զբլի տակ նոր իմաստավորում են ստանում և դրվում պատշաճ բարձրության վրա՝ նշանակյալից մի կարևոր փուլ մեր նոր գրականության պատմության մեջ:

Հայ նոր գրականության պատմության հարցերին Արեղյանը մի վերջին անգամ անդրադառնում է 1912 թ., Հովհաննես Հովհաննիսյանի գրական դիմանկարով:

Մեր նոր գրականության պատմագիրները (Անտ. Վ. Փայլազյան, Լ. Մանվելյան) այս կամ այն շափով գնահատել էին Հովհաննիսյանի տեղն ու դերը հայ նոր քնարերգության մեջ: Մական հիշյալ գնահատումների թուղթիկ, կրեմն էլ ոչ ճիշտ լինելու պատճառով, դրանցից ոչ մեկն էլ ըստ արժանիւնի չկարողացավ բացահայտել Հովհաննիսյանի պոեզիայի բուն արժանիքները, նրա բանաստեղծական ոգու զարգացման ներքին միտումներն ու օրինաչափությունները, զեղարվեստական գրական մեծերն ու եղանակները:

Արեղյանն առաջինը եղավ հայ գրականության պատմագրու-

թյան մեջ, որ ամենայն ճշտությամբ գնահատեց ու արժեքավորեց Հովհաննիսյանի պոեզիան, բացահայտեց նրա բանաստեղծական արվեստի ողջ հմայքը:

Արեղյանը Հովհաննիսյանին համարում է հայ նոր բանաստեղծության «առաջին իսկական մարտի քնարերգուն», որը կոչված էր կատարելու պատմական մի խոշոր դեր: Հայ նոր քնարերգությունը, հանձին Հովհաննիսյանի, պղծում էր իր իսկական ճանապարհը, որով պիտի ընթանային հաջորդներն ավելի ու ավելի հարթելով և ընդարձակելով բացված շափերը<sup>2</sup>:

Հայ նոր քնարերգության բաժվիրայի պոեզիան Արեղյանն, անշուշտ, դիտում էր ոչ որպես մի հանկարծահաս հրաշք կամ հասարակական կյանքից մեկուսացած մի երևույթ, այլ իբրև հայ բանաստեղծության բնականոն զարգացման ընթացքի մի հաջորդական ու տրամաբանական աստիճան, որը մի կողմից՝ գրական ավանգրեթով հենվում էր իր նախորդների՝ Պատմականի և Շահապիթի վրա, մյուս կողմից՝ դառնում էր իր ժամանակի հասարակական հույզերի ու հոգեբանության անձնական քնարական արձագանքը: Հովհաննիսյանի բանաստեղծության ստաջին կարևոր հատկանիշն Արեղյանն համարում է ընդհանուր մարդկային, ազգայինի ու հասարակականի սերտ միաձուլում անձնականի հետ: «Գա մի նոր տեսակի քնարերգություն էր, ավելի զգայուն ու սրտատուչ, ավելի ներքին ու խորին, որ ավելի բան է ասում մարդկանց սրտերին, որովհետև բխում է մարդու իր սրտի խորքից»<sup>2</sup>:

Արեղյանը Հովհաննիսյան-բանաստեղծի հոգեկան հիմնական տրամադրությունն համարում է վիշտն ու թախիծը. նրա քնարի տակ ազգային հասարակական աղսուներն ու ցավերը հնչում են խիտ կսկածադիրն ու թախճոտ: Միաժամանակ Հովհաննիսյանը բանաստեղծական խանձվածքով հոսեռեռ-իդիլիստ է, շարունակ ներդաշնակության ու զեղեցիկ ձոտող և զաժան իրականության ու զեղեցիկ իդիլիայի այդ հակադրությունից էլ, ահա, բխում է նրա մի օրվը բանաստեղծական հատկանիշը՝ եղերերգությունը: Արեղյանը Հովհաննիսյանի պոետական-պատմական կարևոր արժանիքը հենց նրա նարը եղերերգու լինելու մեջ է տեսնում, քանզի նախորդ բանաստեղծությունը իր շոշափած հասարակական-ազգային ընդհանուր ինչիլիաներով հոգեկցիկ էր մարդկանց ուղեղները և կարիք էր պատգովում մարդկային-անհատական վշտի ու հույզի բանաստեղծություն: Առաջին եղերերգուն դառնում է Հովհաննիսյանը: Դրա-

<sup>1</sup> «Արարատ», 1909, էջ 723:

<sup>2</sup> «Արարատ», 1912, էջ 347—363, 515—524:

<sup>1</sup> «Արարատ», 1912, էջ 345:

<sup>2</sup> Անգ, էջ 349:



նով հանդերձ Արեղյանը ցույց է տալիս, որ Հովհաննիսյանի պոեզիային հատուկ է մեծ հաստատու ու հույսը մի լավագույն ապագա կյանքի, որին ձգտում է բանաստեղծը և սփոփանք է գտնում այդ հույսով:

Արեղյանը Հովհաննիսյանի պոեզիան բնենում է ու վերլուծում իր զարգացման մեջ, իրրև բանաստեղծական ոգու մի ներքին աստիճանական փոփոխություն՝ պատմա-հասարակական, սոցիալ-քաղաքական կյանքի տեսադաշտի վրա, բանաստեղծի անձնական վիշտն ու թախիծը մեկնարանելով հաճախ ազգային հասարակական ազդեցիկներով: Արեղյանն Հովհաննիսյանի հատկապես 90-ական թվականների պոեզիան գնահատում է որպես հայ ժողովրդի ազգային ուժու արձագանք, իսկ իրեն՝ բանաստեղծին՝ «մեր զրժրախտ օրերի վշտի բեղմնավոր երգիչ»: Հետևելով Հովհաննիսյանի բանաստեղծական ոգու զարգացման ընթացքին, նա ցույց է տալիս, որ բանաստեղծի աշխարհայացքի ընդլայնման հետ միասին նրա տրամադրությունների մեջ փոփոխություններ են կատարվում, և նա անցնում է մի նոր բնադավա՝ զեպյ խոհական-փիլիսոփայական բանաստեղծությունը: Այստեղ ի վերջո նա իր սփոփանքը գտնում է հավերժական մայր բնությունը միանալու, ձուլվելու պանթեիստական գաղափարի մեջ:

Արեղյանը Հովհաննիսյանին մեծ գեր է վերապահում նաև նոր բանաստեղծական լեզվի մշակման ասպարեզում: Նա հիմք գնելով մեր արևելյան քնարերգությունը՝ միանգամայն և ավելի աչքերվացնում է ու ճաշակավոր դարձնում նաև մեր քնարերգության ձևն ու լեզուն<sup>1</sup>:

Արեղյանի «Հովհաննես Հովհաննիսյան» զրապատմական գիմանակարով, որ իր խոր փիլիսոփայական-արվեստագիտական վերլուծումներով մի ուշադրավ երևալի էր հայ գրականության պատմադրություն մեջ, ավարտվում են հեղինակի շահագրգռությունները հայ նոր գրականության նկատմամբ:

Ք. ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՌԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ՀԻՍՏՈՐԻՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

1. ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՇԵՍԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ հին գրականության խնդիրները Արեղյանի հատուկ հետադրություններին են արժանանում ընթացիկ դարասկզբի տասա-

կան թվականներից սկսած և այնուհետև մնում են անբաժան հեղինակից մինչև նրա արդասավոր կյանքի արևամուտը:

Առաջինը այդ ուղղությունը դառնում է «Շտարականների մասին»՝ մենագրական հետադրությունը՝ նվիրված մեր հին հոգևոր երգին:

Արեղյանը պատմական կարևոր տեղ է հատկացնում հոգևոր բանաստեղծությունը, որով սկզբնավորվում է մեր հին պոեզիան: Սակայն և սկզբից իսկ ցույց է տալիս այդ բանաստեղծությունը միակողմանիությունն ու ներքին աղքատությունը, բանաստեղծություն, որն իր ծագմամբ իսկ խղից ամեն մի առնչություն նախորդ հեթանոսական, «կյանքի զվարթ աշխարհայեցողությունը» աուելյուն բանահյուսության հետ և ազգային ժողովրդական կյանքի փոխարեն իր սնուցման հիմքն ու ակունքը դարձնելով «մեր» Աստվածաշունչն ու նրա ավանդությունները: Նա իրավամբ գտնում է, որ հայոց հին բանաստեղծությունը շղարձավ հայկական կյանքի հոգեբանության ու ժողովրդական աշխարհայացքի արտահայտություն:

Հավաստելով հոգևոր բանաստեղծություն Ժանրային էությունն ու նպատակը՝ իրրև սօրհներգություն, որ ընդհանուր եկեղեցու մեջ ծնված և դարգացած է բրիտոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար», Արեղյանը գտնում է, որ սկզբնական շրջանում հոգևոր բանաստեղծության տարբեր եղել են սոսկ սաղմոսներն ու սու. Գրքի մի բանի օրհնությունները: Սակայն բրիտոնյաների հոգևոր եռանդը չի բավարարվել սոսկ հին երգերով ու բացականչություններով և IV ու V դարերում հորինվում են փոքրիկ երգեր, որոնք շրջառվում են հայրենիքի մասին կամ ս. Գրքի օրհնություններից հետո: Այդ նոր երգերի նյութը և նույնիսկ արտահայտչական միջոցները վերցված են դարձյալ Աստվածաշնչից ու սաղմոսներից:

Հոգևոր բանաստեղծությունը կապվելով եկեղեցու հետ, իսկ հայ եկեղեցին համարելով ընդհանուր բրիտոնեական եկեղեցու արտահայտություններից մեկը, Արեղյանը գտնում է, որ հայ հոգևոր բանաստեղծությունը մեղ մտա շինքնաբույս չի եղել», «այլ ինչպես բրիտոնեությունը գրսից է եկել, նույնպես և նրա բանաստեղծությունը: Եվ այդ տեսակետից նա մեծ գեր է հատկացնում հունական օրհնություններին, որին սկզբնական շրջանում հետևել է հայ

<sup>1</sup> «Արարատ», 1912, № 7—8, էջ 720—732, № 9, էջ 823—836, № 10—11, էջ 1002—1025, № 12, էջ 1146—1162:

<sup>1</sup> «Արարատ», 1912, էջ 321:











ված, նույնիսկ մեղաւանհան համարված բնութիւնն ուրեմն,— գրում է նա,— ստանում է իր իրավունքը: Նա կենդանանում է: Բնութիւնն հրգին արդեն համարվում է մի աստվածային փառաբանութեան զործ կատարել, որովհետեւ բնութիւնն ինքը փառաբանում է Աստուծուն<sup>1</sup>:

2. Բանաստեղծի զերն ու կրօնը, բառ նարեկացու, այն է, որ նա օժտված է աստվածային ձիրքով, ներշնչված է աստուծոց և նրա խոսքը հենց աստուծու ձայնն է, մարդկային բերանով արտաբերված: Այսինքն, կարեւոր տեղ է հատկացվում անմիջական, անկեղծ ներշնչանքին, այն բանին, թէ տվյալ պահին աստվածային բնութիւնը կամ ինքն աստված՝ ինչպե՞ս կ'իտտի բանաստեղծի մեջ, և բառ այդմ էլ նա կերպի: Սկսույիսի գիտակցութեանից,— գրում է Արեղյանը,— բանաստեղծութիւնը դառնում է արդեն կենդանի շունչ, ինքնաբերաբար արտահայտութիւն անհատական զգացմունքի ու տղայությունից: Եվ նարեկացու որքը լավագույն արտահայտութիւնն է անձնական քնարերգութեան, որտեղ բանաստեղծը «մի կողմից խոսում է սեփական ներքին ապրումներից, մյուս կողմից՝ չի խորշում բնութիւնից»: և այդ երկուսի համակցումն էլ առաջ է բերում խելական բանաստեղծութիւն<sup>2</sup>:

3. Նարեկացին իր զեղազիտական ընկալումների մեջ կարեւոր արժեք է տալիս անձնական զգացմունքները ընդհանուրի, հասարակության ոչուն ու ապրումների զուգորդելու, անհատական միջոցով հանրայինը կերպավորելու, վերարտադրելու զազափարին: «Նա իր Ողբերգութեան համար պարզապէս հայտնում է, թէ անձնային դասի և հասակի, իր ժամանակի բոլոր բրիտանոնների հոգին է նեղակայացնում՝ «Նշտակեալ յիբուն պատկերին»: Եվ այդ ոչ թէ վիպական-առարկայական ձևով, այլ իր անձնական ապրումներով խորապէս զգացած ու վերարտադրած:

4. Ի վերջո նարեկացու հալացքների մեջ կարեւոր դեր է հատկացվում բանաստեղծութեան արժեքային կամ զեղեցիկ ձևին: Բանաստեղծական արվեստի նրա բրբոնունջը հանդում է զեղարվեստական երկի ձևական բազմապատկան մեջ նրա ունենալիք մի-աստիճան, ամբողջութեան խնդրին, որ ամփոփի ձևակերպված է Ողբերգութեան մատանն»-ի վերաբերանի հետևյալ խոսքերի մեջ. «Ստացելու հիմնեցի, կատուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի»:

դիզի, բարդեցի, ցուցի հաստատելով ի ճեշակերտութիւն միագոյ իրի գրագլմաստեղենան գրուսու գրուրեան այս ստիերի արգաստարի»: Եվ Արեղյանն իրավամբ նարեկացու առաջ բաշած զեղաստեղծական վերահիշյալ գրույթները հռչակում է որպէս «մի ամբողջ սեւտութեան բանաստեղծական արվեստի մասին... որը XIX դարի երկրորդ կեսին ավելի պարզի ու զարգացրել էն Ֆրանսացի բնագատները»<sup>3</sup>:

Նարեկացու զեղարվեստի տեսութեան առաջացումը Արեղյանը պատմականորեն կապում է ճարտարապետական արվեստի ծագման հետ, արվեստ, որն «իր համաշխարհային և ներքին ուժեղ արտահայտութեամբ» արդեն խարսխվում էր տեսական կալույն ու որոշակի հիմքերի վրա, որից զուրկ չէր կարող մնալ բանաստեղծութիւնը<sup>4</sup>:

Նարեկացու գլուխգործոցը՝ «Մատենան ողբերգութեան» երկը Արեղյանը բնութմ է իմաստավորում է ժամանակի իշխող կրօնա-ճղնավորական մտայնութեան՝ միտախիղճի տեսադաշտի վրա և պատմական ու տրամաբանական միանգամայն ճիշտ կյակեւունքով այն արժեքավորում է իբրև մեր ամենախոշոր կրօնա-միատիկական բանաստեղծական բերթվածը, որտեղ միտախիղ-մենակայաց հնդիսակր, սրախ խորքում կուտակված մեղքից անհանգստացած, աղթթխան ճեւտութեամբ ու խորին զղբմամբ իր հոգու փրկութիւնն է հայցում անուշառ ու արդար դատավորիք՝ աստուծոց:

Չեղինակի հետապնդած նույնապէր միայն արդարացումը չէ: Այլն արարձրագունն բարիքի՝ ձնոր բերումը, որ է՝ «անբաժանելի միտայն Աստվածութեան հետ, որ անձնայն կատարելութեան լուստարիւն է, ստանալ մի աստվածային անողորմելիւն»: Այս ձըգտումը, որ հատուկ է բոլոր միտախիղ-ճղնակայացներին, կազմում է հենց նարեկացու-բանաստեղծի բուն էութիւնը, ուր, բառ Արեղյանի, «բրիտանոնական միտախիղճը թե՛ տեսականորեն և թե՛ գործնեպուս կատարչալ արտահայտութեան է գտել»:

Ամբողջ երկը բանաստեղծի ներքին բուն ու փոթորկուն զոացմունքների, մեղանման ու զղջած Ժանր ապրումների, բանաստեղծական հրաշալի պատկերներով ներկայացված ներքին մի գոթիւն ու անընդհատ շարժում է, որ իր հորձանքի մեջ է անում բնութիւնային:

Արեղյանը բաղմամբիվ օրինակների զեղադիտական նուրբ

1 «Աղագրական հանգես», XXXI դիրք, էջ 106:

2 Անց, էջ 107:

3 «Աղագրական հանգես», XXXI դիրք, էջ 109:

վերլուծումների մեջ բացաճատում է նարեկացու բանաստեղծական միջավայրի հանճարը, նրա հույզերի ու ապրումների անզնային խորությունը, երևակայության մեծ ուժն ու սուշեցուցիչ թափանչները, բազմաթիվ նուրբ ու բազմախոս բանաստեղծական նոր բաների հորինումը և տաղաչափական նոր ու տարբեր ձևերի սօգտագործումը: Ի վերջո՝ Արեղյանը սահմանում է այն ավանդական կայսն ու հարարերությունը, որ առկա է նարեկացու և նախորդ հոգևոր բանաստեղծության միջև նա գտնում է, որ նարեկացու ասպարեզը իրենց զվարթ բնավորությամբ Քրիստոսի օննդի և հարության տերունական տոների ժամանակ կատարվող ուրախ ու ցնծալի շարականների զարգացումն են հանդիսանում: «Մինչդեռ Ողբերգությունն, ընդհակառակն, ապաշխարության երգ է և զգամունքով ու ձևով մոտենում է ապաշխարության և ընդհանրապես «Ողբումն» կոչված շարականներին: Գա խկապես այդ շարականների կատարելատիպն է, միայն ինֆանտուկ ձևով»<sup>1</sup> (ընդգծումն իմն է! — Ս. Հ.):

Այս սերտ ազդեցիկ միջոցով, Արեղյանը փաստորեն հիմնավորում է «Ողբերգության մատյան»-ի ժանրային նկարագրի՝ իրեն ապաշխարության «մաղթանք ու աղերս... միանգամայն և օրհնեղություն», որ հասուկ է մեր շարականներին, միայն մարմնավորված բանաստեղծական մեծ լավերի ու բացառիկ արվեստի մեջ:

Այդ բոլորով հանդերձ և բանաստեղծական արվեստի խոր ըմբռնման շնորհիվ, ըստ Արեղյանի, «Ողբերգության մատյան»-ի մեջ, որ իսկապես մեր առաջին մեծ բանաստեղծական երկն է, արվեստավոր կերպով մեղանու ձև են ստացել ոչ միայն անհատական, այլև ընդհանուր մարդկային հավիտենական գաղափարներ ու զգացումներ, ապրումներ ու անբռնելիք, և այս՝ 11-րդ դարու սկզբում, այն ժամանակ, երբ նվորպական նոր ազդերը ոչինչ կամ գրեթե ոչինչ չունենին: Նա մեր հոգևոր բանաստեղծությունն այդ կարգով միանգամայն բարձրացրել է իր հանճարով, ամփոփելով այն ամենը, ինչ որ նախորդ դարերում մեր հոգևոր քնարերգության մեջ կար արտահայտված, մի այնպիսի ինքնահասուկ ձևով, որին նմանել չեն կարողացել»<sup>2</sup>:

Նարեկացուն նվիրված Արեղյանի հետազոտությունը մի խոշոր երևույթ էր հայ գեղագիտական մտքի պատմագիտության մեջ: Այն գալիս է նոր լույս սփռելու հին գրական դեմքերի ու երևույթների

<sup>1</sup> «Ազգագրական հանգես», XXVI դիրք, էջ 124:

<sup>2</sup> «Ազգագրական հանգես», XXVI դիրք, էջ 110:

վրա և բոլորովին նոր հայացքով դիտելու և գնահատելու գրանբե՛ «Շարականներ»-ով ու «Գրիգոր Նարեկացի»-ով փաստորեն սկզբնավորվում էր մեր հին գրականության այն նոր պատմագիտությունը, որ իշխում է արդի հայագիտության մեջ և կապվում է Մանուկ Աբեղյանի անվան հետ:

Հայ հին գրականության գիտական հետազոտության ճանապարհին մի իսկական երևույթ է Արեղյանի միջնադարյան տակալների ուսումնասիրությունը: Վերջինս ձեռնարկելով տակալին 1917-ին, իրեն հրապարակային ղեկուցում՝ Արեղյանն այն որոշ վերամշակումներով սպազորում է 1935-ին՝ «Հայ միջնադարյան առականներ և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» վերնագրով:

X—XIII դարերի հայ ժողովրդի պատմության և գրականության զարգացման ընդհանուր տեսագաղտի վրա Արեղյանն ուրվագծում է առակի, իրեն գրական ժանրի սկզբնավորման ու զարգացման բնթայցը, մի գրական երևույթ, որ հայ հին գրականության մեջ առաջ է բերում որակական փոփոխություններ:

Գրականության մեջ առականի ներթափանցման երևույթը Արեղյանը պատճառաբանում է սոցիալ-տնտեսական ազդակներով (միջնադարյան քաղաքների բարգաձման, բանտեսացես ու մտավորացես՝ հասարակական նոր խավի՝ քաղաքացության բարձրացում, արհեստների և արդյունաբերության ծաղկում) պայմանագրով ձև հասարակական կյանքի ու մտածողության աշխարհակալեացումը: Ուշ միջնադարյան Հայաստանի աշխարհականացող կյանքն ու մտածողությունն առաջ է բերում գրականության աշխարհականացման պահանջ: Վերջինս բավարարման գործում պատմական կարևոր դեր է միանկիվ ժողովրդական բանահյուսության տեսակներից մեկին՝ առակներին, որոնք Գոշի և Այդեկցու հնորեթիվ կեղեցիական գրականության մեջ ներթափանցելով, ժանրի նոր արժեքավորումը աստիճանաբար աշխարհականացնում են այն: Առականները դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարրերը մեր հին գրականության մեջ մտցնելու, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում է ժողովրդին, ենթարկվում աշխարհիկ հոսանքին»<sup>3</sup>:

<sup>1</sup> ՏՅ՝ «Շարեղես», 1917, № 24:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց միջնադարյան առականներ և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ: Արտատպված «Հինը կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները ժողովրդի 1 հատորից, Երևան, 1925, էջ 19:



Հասարակական կյանքի երևույթներից առաջինը, որ առահնե-րում անդրադատվելով էր առհնում Արեղյանը, միջնադարյան Հայաստանի «ազնվականությունն և աշխատավոր ուսմիկ դասի հա-րորդների խնամն է և երկրորդի պայքարն առաջինի դեմ», այսինքն՝ բուն դասակարգային հարաբերություններն ու պայքարը: Ֆեոդալ-ազնվատիրական իրավակարգի լայն տեսողաշտի վրա, առահնե-րից վերջացած խոսուն փաստերով, Արեղյանը բացահայտում է միջ-նադարյան Հայաստանում տիրող դասակարգային փոխհարաբե-րությունների բազմապիսի ձևեր, որոնց մեջ երևան են զայիս տե-րող ֆեոդալ-ազնվականության ճնշումն ու շահագործումը «նու-աստք» հայատանների նկատմամբ, աշխատավոր շինական դասի իրավազրկությունն ու ընչարկույթությունը, որոնք ի վերջո առաջ են բերում դասակարգային ինքնազրկուցությունն արթնացում և մղում դասակարգային պայքարի: Արեղյանը առահները դիտում է իրրե պատմա-գեղարվեստական կարևոր վավերագրեր, որոնց թիվ՝ սյու-ժետայինն է թե՛ խրատական-մեկնարանական մասերի մեջ ի հայտ եկող սոցիալական իրադրությունները համարում է կյանքում պա-տահած եղևություններ:

Սոցիալական անհավասարության, դասակարգային հակա-մարտության ու պայքարի երևույթներից բացի, Մխիթարի և Վարդանի առահներում անդրադարձվել են միջնադարի գյուղի և մա-դաբի, ինչպես նաև բազաբային տարբեր արհեստների ու արհես-տավորների միջև եղած հարաբերություններն ու ներքին խուլ հա-կամարտությունը: Առահն համարելով «ամենից առաջ բազաբա-ցիական (իմաստ՝ բազաբային բնակչության) — բազաբայինների» (Մ. 2.) գրականություն», Արեղյանը բացահայտում է բարձրացող բազաբի և հետամնաց գյուղի միջև եղած խուլ պայքարը, որ արտահայտ-վում է շինականների միասնությունն ու ագիտությունը ծաղրող բազմաթիվ առահներում, ինչպես նաև բազաբային տարբեր ար-հեստների և երկրագործության հակադրությունը մարմնավորող առահների մտախնդրություն:

Ապա, որոշ արհեստների զովարանման և որոշ արհեստների թերահանահաման տարբեր մտախնդրող մարմնավորող առահների մեջ Արեղյանը տեսնում է միջնադարյան բազաբային տարբեր համարությունների միջև մղված մրցումն ու որոշ հակասություն-ների արձագանքները:

Միջնադարյան առահների մեջ անդրադարձել են նաև իշխող հոգևոր դասի վարք ու բարքը, նրա նկատմամբ ճնշված աշխատա-

վոր խավերի ունեցած վերաբերմունքը: Արեղյանը առահների մեջ անդրադարձված իրականության երկտրների հիման վրա ապացու-ցում է պատմական մի կարևոր իրողություն, այն, որ արդեն XIII դարում ժողովրդի աչքում «եկեղեցականությունն ընդհանրապես բնկած է պատկերանում»: Փոխվել է ժողովրդի նախկին հայացքը հոգևորականության նկատմամբ. աշխատավոր զանգվածները եկե-ղեցականների մեջ տեսնում են նրանց ներքին սոցիալական էու-թյունը. ուստի նրա դեմ էլ պայքարում է աշխատավորությունը, և այդ պայքարն երևան է գալիս հաճախ ծաղրով<sup>1</sup>:

Արեղյանը Գոշի և Վարդանի առահների բազմաթիվ օրինակ-ներով ցույց է տալիս, թե ինչպես ծաղրի զանազան միջոցներով խարազանվում է քահանայական դասի ընչարազդությունն ու ձու-լությունը, կեղծավորությունն ու խարբրատությունը, զորությունն ու կաշտակներությունը, որկրամուլությունն ու աղահույսությունը: Այս ա-մենիկ ըմբռնումն ու դիտակցումը աշխատավոր ժողովրդի կողմից սնույմ է նրան եկեղեցականի նկատմամբ իր սոցիալական վիճա-կի զերազանցության ըմբռնանքը, որ իբրև նոր ոգու արտահայտու-թյուն խոսուն կերպով իր մարմնավորումն է գտել հիշյալ առահ-ներում: Եվ ոչ միայն այդ. Արեղյանը ցույց է տալիս, որ կրոնի հարգն առհասարակ բնկել է ժողովրդի աչքում: «Հինն ճգնավորա-կան խոսակեցությունն այլևս ոչ միայն հարգանք չի վայելում և աղ-զեցություն չի թողնում, այլև, ընդհակառակն, ծաղրի առարկա է»: Եվ հակառակ դրան, «առահների մեջ շատ ուժեղ կերպով արտա-հայտվում է արդեն աշխարհական կյանքի ձգտումը... Քահանայու-թյան ուսումը, օրհներգությունն ու սաղմոսն այլևս չեն գրավում, զի սուղ և արամություն են պատահում: Թեպետ դեռ գիտեն, որ այս աշխարհի արամությունը հետո այն աշխարհում տրախություն է բերում, բայց և այնպես այդ քարոզին լսող, հետևող չկա»<sup>2</sup>:

Արեղյանը ցույց է տալիս նաև ժողովրդական զանգվածների բննագատական վերաբերմունքը զեպի հոգևորականությունը, ստուն անտարբերությունը զեպի եկեղեցին ու հին զավանաբանական խեղդաները, և աշխարհիկ կյանքի ուժեղ ձգտումն ի վերջո նրանց մեջ մշակում է մի նոր ոգի, ըստ որի նախապատվությունը տրվում է մարմնին, ապա հոգուն, որ մի նոր հոսանք էր նշանավորում մեր գրականության մեջ:

1 Մ. Արեղյան, Հայոց միջնադարյան առահները, էջ 35:

2 Անդ, էջ 37:

Առակները մեզ անդրադարձված միջնադարյան սոցիալական հարաբերություններից մեկն էլ Արեղյանը համարում է ազգամիջյան հարաբերությունները, հասկապես հայերի վերաբերմունքը մասնավորապես հարեանների ու եկվոր ցեղերի նկատմամբ: Գրանք գրեթեովել են մասնավորապես հողերականություն և ազնվականությունը գաղափարախոս Մխիթար Գոշյի առակներում և իրենց մեջ են ամփոփում, բայց Արեղյանի, հետևյալ գաղափարները.

ա) ալլադիները կրոնի և կրոնական ձևերի ծագում.

բ) հայ և օտարազգիների խառն ամուսնությունների դատապարտում.

գ) զոլուալոր վերաբերմունք զեպի մասնակախանները և անվասահունություն նրանց նկատմամբ.

դ) խաղաղություն և խնամարտություն քարոզ ալլադիի թշնամիները հանդեպ, բայց և հարկ եղած դեպքում՝ կեղի և ընդվզում.

Այս են սոցիալական հարաբերությունների այն հիմնական ձևերը, որ գրեթեոված է գտնում Արեղյանը հայ միջնադարյան առակներում: Այդ բուրրից հետո նա եղբայրացիում է, թե «12-րդ դարում Հայաստանում գոյություն է ունեցել աշխատավոր դասակարգի պայքարն ընդդեմ ազնվականության և էկեղեցականության: Եվ թեպետ հոգևորական և բարձր ազնվականության բարեկամ Մխիթարը ճշտությունը և ամբողջությունը չի տվել սալո գասակարգային կովի իրական ընդարձակ պատկերը», «Բայց թե իրոք եղել է մի հեղափոխական շարժում, այդ շատ մեկին տեսնում ենք առակների մեջ»<sup>1</sup>:

Արեղյանն, ուրեմն, 1917 թ. և դեռ գրանից էլ առաջ, հին գրական երևույթները, մասնավորապես առակները բնում և հետագոտում է սոցիալաբանական առողջ մեկնակետից, բացահայտելով նրանց մեջ միջնադարյան Հայաստանի սոցիալական հարաբերությունների բավական ընդարձակ պատկերը: Նա դրանով իմաստավորում և գրա-պատմական մեծ արժեք է վերագրում անշնչան գրական տեսակ թվացող միջնադարյան առակներին:

Հայոց գրի ու գրականության սկզբնավորման հանդուցային խնդրին է նվիրում Արեղյանն իր հետո՞ր՝ «Մերոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը հետազոտությունը»: Նա հեն-

վում է միմիայն ամենավատահայն ու վավերական գրավոր աղբյուրի, Մաշտոցի մամանակակից, նրա աշակերտ Կորյուն վարդապետի գրած Մաշտոցի կենսագրության վրա:

Հիմք ընդունելով գլխավորապես «Կարթ Մաշտոցի»-ն, Արեղյանը հայ գրերի գյուտի վերաբերյալ եղած պատմական ու բանասիրական թյուրմտացությունները պարզաբանելիս ելնում է հենց Կորյունի երկից, հետագա աղբյուրներին անգրադառնալով այնքանով միայն, որքանով գրանք որևէ ձևով ազդեցվել են իր շոշափած խնդիրներին:

Հայագիտության մեջ Մաշտոցի մասին գրվել էին շատ ուսումնասիրություններ, նրա անձի ու կատարած պատմական մեծագործության վերաբերյալ արտահայտվել էին թեր ու զեմ տարբեր տեսակետներ: Արեղյանը ամփոփում է միևն ինքը բնարկվող խնդրի վերաբերյալ եղած զիտակախ աբյուրները, բայց ոչ թե քանակային-առարկայական առումով, այլ բնագաղափար. ճշտում է մի շարք տեսակետներ, և, որ կարևորն է, Մաշտոցի և նրա կատարած մեծ գործը գիտում է հայ գրականության սկզբնավորման ու դարացումն տեսանկյունից:

Համոտոտակի շարագրելով IV դարի վերջերի Հայաստանի պատմա-բուրաբանական իրագրությունը և վերջին տեսագաղափարը՝ Մաշտոցի կյանքի ու գործունեության հիմնական գծերը, Արեղյանը ճշգրտում և վերջնականապես հիմնավորում է Մաշտոցի անձնագրությունը ու պատմական մեծ գործի հետ աղբյուրող մի շարք կարևոր փաստեր ու խնդիրներ:

Նա ապացուցում է.

ա) Մաշտոցի, հունարենից բացի, նաև պարսկերենի և ասորերենի խմացությունը.

բ) Մաշտոցի ազնվական ծագման հնարավորությունը.

գ) Մաշտոցի ճգնության մեկնարանը Փողթնում և մասնավորապես Մարտինի գյուղի մոտ գտնվելու հավանականությունը:

Ապա՝

դ) Գանիելյան նշանագրերը, հակառակ հայագետներից ուսանց հայտնած կարծիքի, չեն եղել հին հայկական տառեր, այլ եղել են օտար գրությունների գրեր, որոնք փորձել են հարմարեցնել հայոց լեզվին, բայց չի հաջողվել: Գրանով հերքվում է նախամեսրոպյան շրջանի հայերեն գիր ու գրականության գոյության ենթադրությունը, բայց չի մերժվում օտար նշանագրերով հայերեն գրելու հնարավորությունը:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց միջնադարյան առակները, էջ 51:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Մերոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, «Սովետական գրականություն», 1941, № 1, էջ 47—51, № 2, էջ 41—51:



ե) Արեղյանը մերժում է Մեծորդ Մաշտոցին Գանձիկյան նշանագրերը սոսկ լրացնողի և կատարելագործողի զնր վերագրելու տեսակետը և Կորյունի հավաստի վկայությունների հիման վրա ապացույցում, որ Մաշտոցն ինքն է իտիճել հայոց այբուբենը, կարգավորել կամ դասավորել այն, անվանել է տառերը (այբ, բեմ, զեմ, դա...) Եչանակիկ, այսինքն ձևավորել է դրանք, հնչյունական տեսակետից դարձրել կատարյալ այբուբեն՝ մի հնչյունին մի տառ սկզբունքով, և վերջապես նույն նշանագրերը հորինել է կապերով, վանկերով, այսինքն կազմել է նաև գիրկապով կարգալ սովորեցնելու դասագիրքը:

զ) Հակասակ արտահայտված մի բանի տեսակետների, Արեղյանը նոր փաստարկներով ու փաստերի արամարանությունից բխող հետևություններով վերականգնում է հայագիտության մեջ արգեն արժանիքով ամ կարծիքը, որ Մաշտոցը հայկական այբուբենին հորինել է ոչ թե Մամոսատում, այլ ասորական Եզեխիա քաղաքում, և, որ Մամոսատում միայն վիճաբանական տեսակետից կատարելագործել է հայոց այբուբենը:

է) Մերժելով հույն գրագիր Հոսիանոսին հայկական այբուբենի հորինման մեջ կարևոր զնր վերագրելու վարկածը, Արեղյանը համոզիչ փաստերով ցույց է ապշտ, որ Հոսիանոսը օգնել է Մաշտոցին միայն զեղազրական տեսակետից վերջնականացված ձևավորելու, զծագրելու հայկական այբուբենը, և որ դրանով հույն գրագիրի արածը սոսկ տեխնիկական միջամտություն է եղել:

ը) Արեղյանը բացահայտում է Մեծորդ Մաշտոցի պատմական համակողմանի կերպարը, իբրև գյուտարարի, քրիստոնեություն ու լուսավորություն տարածող առաքյալի, թարգմանչի ու ուսուցչի, հասարակական մեծ գործիչ, որով Մաշտոցը դրվում է իր պատմական կոչման իսկական բարձրության վրա:

Գրքի գլուխի և հայ գրավոր գրությունից սկզբնավորման հարցն առհասարակ Արեղյանը դիտում և գնահատում է հայ ժողովրդի պատմության հետագա օղջ ընթացքի տեսադաշտի վրա և բացահայտում դրանց պատմա-քաղաքական իմաստն ու խորհուրդը, ցույց տալով հայ ժողովրդի կյանքում դրանց ունեցած կուլտուրապատմական վիթխարի արժեքն ու նշանակությունը: Հայոց այբուբենի գլուխի պատմական անհրաժեշտությունը Արեղյանը հիմնավորում է ազգային-քաղաքական և սոցիալ-գասակարգային մի շարք զրգապատճառներով:

Առաջին և զլխավոր պատճառը նա իրավամբ համարում է երկրի

քաղաքական իրավիճակը: IV դարի վերջերին Հայաստանը վերջնականապես բաժանվելով Պարսկաստանի և Հռոմի միջև, թեպետ տեսականորեն որոշ չափով կազդուրվում է, բայց քաղաքականապես, սոցիալին ինքնուրույնություն, անկախություն ու միություն տեսականով թուլացել և նույնիսկ անկիսն դուռն էր հասել: Չեր վերջացել Իրանի ու Հռոմի իդիոլոգիական պայքարը Հայաստանում: Եվ այդպես, դրանց դեմն առնելու համար կարևոր միջոց էր սրբատունությունը և եկեղեցին հայերին լեզվով: Որեմն, սեփական լեզվով ու գրով եկեղեցին իբրև ազգային քաղաքական միասնության հիմք և օտար զաղափարախոսության դեմ պայքարելու կարևոր միջոց:

Երկրորդ կարևոր զրգապատճառը Արեղյանը համարում է սոցիալ-գասակարգայինը, երբ սեփական զիր ու զրականության ստեղծման մեջ երկրի հոգևոր ու աշխարհիկ տերերը քաղաքական սովյալ իրադրության մեջ տեսնում են իրենց գոյության և հետագա հարատևության կարևոր պայմանը:

Արեղյանը պատմական բացավողմանի հիմնավորումներով ցույց է տալիս IV դարի վերջերին և V սկզբներին Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական այն յուրահատուկ պայմանները, որոնց մեջ հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները, հանձին կաթողիկոսի և թագավորի, արագ կողմնորոշվում են զեպի սեփական զիր ու զրականություն ունենալու զաղափարը:

Հայաստանի քաղաքական երկատման հետևանքով, երկրի արևելյան մասում, հայ եկեղեցու զնմ պարսից զրգաշտությունից ուժեղացող հայածանքն ու սպունավիքը մի կողմից, մյուս կողմից՝ ասորի եկեղեցու զզբեղ ազդեցությունը՝ թի՛ կուլտուրապես՝ զիր ու զրականության միջոցով, և թի՛ քաղաքականապես՝ հայ եկեղեցին իր զերիշխանության տակ առնելու յուրը ձգտումով, հայ եկեղեցու գոյությունը զնում էին հարցազանի տակ:

«... Որեմն կար մի ուժեղ պայքար մի կողմից հայ եկեղեցու և պարսիկ իշխանության ու մոզության միջև, մյուս կողմից՝ հայոց ու սորոց եկեղեցիները: Հենց այս պայքարի մեջ աշտուրություն ունենալու համար պետք էր Հայաստանում ուժեղացնել քրիստոնեությունը և հաստատ հիմքերի վրա զնել այն՝ ընդգծել զրադաշտական կրոնի նվաճողական հարձականները...»

Մյուս կողմից՝ պետք էր պայքարել ասորական ունձգությունների դեմ: Պետք էր հայ եկեղեցուց ու զպրոցից մերժել ասորերենը և ստեղծել ինքնուրույն ազգային եկեղեցի: Պրա համար էլ հարկավոր էր հայկական զիր ու զպուրություն:

Ընդհանուր դիմագրությունն ու Բիելունք ստեղծելու համար նույնը պետք էր առաջ բերել նաև Վրաստանում ու Ազովաբերում, որոնց եկեղեցիները կառված էին հայերի հետ և նույն սպառնալիքի տակ էին: Այդ պատճառով Մաշտոցը հուզում է նաև վրացական ու աղվանական դպրության համար»<sup>1</sup>:

Այսպես, Հռոմեական կաշտրության գերիշխանությունն սակ գրա-նքվող Արևմտյան Հայաստանում հայ եկեղեցու պաշտոնական լի-զույն էր հունարենը, որի շնորհիվ հայ եկեղեցին կախման մեջ էր պահվում հունականից: «Այդպիսով հայոց եկեղեցին կորցնում էր իր միությունը և թուլանում էր: Այդ ձեռնառու չէր հայ բարձր հոգե-վորականությունը: ... Այդտեղ էլ հունական ազդեցությունը ջլա-տելու համար՝ պետք էր ուժեղացնել հայերենը հայ զրի ու դպրու-թյան միջոցով և դպրոցի ու եկեղեցու ժամատվյալն մեջ մտցնելով հայերենը»: Սակայն մյուս կողմից էլ երկրի բազմաթիվ բաժան-ման հետևանքով, «հայ եկեղեցին արեւելքում կտրված էր մեծում հարաբերությունից հունական եկեղեցու հետ, առհասարակ հունա-կան ուսումից, որին սկզբից ի վեր սերով հետևում էին»: «Այդ կտրվածությունը մտահոգություն էր պատճառում հունասեր մարդ-կանց: Պետք էր ուրեմն հայերեն թարգմանությունների միջոցով մտավոր հաղորդակցությունը շարունակել հույների հետ»<sup>2</sup>. այ-սինքն՝ ուժեղացնել հույների հետ կուլտուրական հարաբերությունը:

Այս պայտիսի բաղձաթիվ սոցիալ-բազմաթիվ գործոններով Արեւելյանը պատմականորեն պատճառաբանում է հայ եկեղեցական դասի խիստ շահագրգռվածությունը սեփական դիր ու գրականու-թյան ունենալու խնդրում:

Մի շահագրգռություն էր դա, որ սկզբից եկթ հովանավորվում ու նյութական գործուն աջակցություն է արժանանում աշխարհիկ իշխանության կողմից, որը պարսից հետ ունեցած հակամարտու-թյան մեջ, բաղաբերում նոր պայմաններում կորցնելով որսից՝ հը-ռոմալիզմի ներքին սպառնալիք երբեմնի օժանդակության ակնկալիքնե-րը, իր հույան ամբողջապես դնում է ներքին հենարանի վրա, այ-սինքն՝ «ներքին ուժերը զորացնել և նրանց վրա հենվելով կուլտու-րական պայքար մղել պարսկական ձորումների դեմ: Այդ ներքին հենարանն էր ամենից առաջ հայոց եկեղեցին, որի միջոցով մի ընդհանուր միության իդեոլոգիական կապ կարող էին ունենալ բա-ժան-բաժան մանր ֆեոդալները»<sup>3</sup>:

Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հայ դպրության նը-կատմամբ ունեցած այս միասնական շահագրգռությունների մեջ Արեւելյանը բացահայտում է հայ զրբի ստեղծման բազմաթիվ ու սոցիալ-գաղափարական արժանուրիք:

Այնուհետև Արեւելյանը վեր է հանում զրբի դուտի և նոր բու-կարդանավորված հայ գրականության կուլտուր-պատմական նշանա-կությունը հայ ժողովրդի պատմական ձևկատարի տեսանկյունից: Գրբի դուտով և հայ դպրության սկզբնավորումով, Մաշտոցի ու Սահակի անխոնջ գործունեության շնորհիվ մշակվում է սեփական ազգային գաղափարախոսությունն, առաջ է զայիս «ինքնագիտակ-ցությունն եկած և լավ պատրաստված ու հոգեպես զինված մի սե-րունդ, որ չէր կարող հեշտուրջյամ սկզբնավորումով, Միավում մի գրբի կուլտուրական, մեկ-մեկ նաև ազգմական կոիվ (Վարդա-նանց պատերազմը և Վահանանց զինյալ մարտումը) Սահակի ու Մաշտոցի աշակերտների և սրանց աշակերտների ընդհամ պար-սկական և առարկան, հետագայում նաև հունական ոտնձգությունն-ներին»: Եվ Արեւելյանը հայոց զրբ ու գրականության մեջ իրավամբ տեսնում է հենց սկզբից եկթ հայ ժողովրդի դպրության և նրա ազ-գային ինքնագիտակցության պահպանման համար մղվող պայքա-րի մի հզոր զենք, որ գործազրկում է սկզբում պարսից, առարկան և այսպես հունական ոտնձգությունների դեմ:

«Քաղաքական անկախությունը կորցնելուց բիջ առաջ սկսված այս պայքարի գործը,— գրում է Արեւելյանը,— հետագայում ավելի ևս ընդարձակվում է, և կարողանում են զրանով պաշտպանել հայ-կական առանձնահատկությունները: Կազմվում է ազգային ինքնա-զուտի եկեղեցի, որ դարեր շարունակ կատարում է իր ժամանա-կի համար յուսավորական զեր իր կուլտուրական գործունեությամբ ու հիմնարկներով»<sup>4</sup>:

Այստեղ է ա՛հա, որ Արեւելյանը ապիս և հայ գրականության սկզբնավորման և հետագա զարգացման իր հույակավոր մարա-ման տեսության բնորոշումը:

Գրավոր դպրության սկզբնավորումը գիտելով իբրև մեր զը-րականության զարգացման երկրորդ շրջափուլ, առաջինն համարե-լով ավանդական բանահյուսությունը, Արեւելյանը մեր հին գրակա-նության այդ շրջանը բնութիվով համարում է «եկեղեցական, մա-սամբ ֆեոդալական», որը ձևով ու բովանդակությամբ խիստ տար-

1 «Մովսեսական գրականություն», 1941, № 2, էջ 50:

2 Անդ:

3 Անդ:

1 «Մովսեսական գրականություն», 1941, № 2, էջ 51:

2 Անդ:



բերվելով հանդերձ ավանդական բանահյուսությունից, «իր էական առաջնությունը պահպանելով», սակայն «հանդիսանում էր իրեն շարունակությունն «Պարսից պատերազմ» միայն: Եթե կարծես զլիա՛վոր մտադրվե՛ն էր ղենթով կոմի պարսիկների դեմ ազգային անկախության համար, այս նոր գրականությունն ինքը մի ղենթ էր հանդիսանում կուլտուրական պայքարի համար ընդդեմ պարսիկների, ապա արտերևերի և այլ բունպատկությունների, քաղաքականապես անշատ և հաճախ սեփական պետականություն և տերիտորիա չունեցող ժողովրդի ազգային միությունը պահպանելու և նույնիսկ դեպի ազգային ինքնուրույնություն հրահրելու»:

Արեղյանն, ուրեմն, Մաշտոցի գործի պատմական ամենամեծ ու գրական արդյունքը համարում է սեփական ազգային զգրությունն ստեղծումը, որն այնուհետև հայ ժողովրդի կյանքում զարձավ ազգային ինքնությունը պահպանելու և զարգացնելու պատմական ամենանշանավոր գործոնը:

Արեղյանը, սակայն, Մաշտոցի մեծագործության պատմական նշանակությունը չի սահմանափակում վերոհիշյալով, այլ արտահայտում է ժողովրդի մշակութային կյանքի կարևոր այլ հանգամանքների մեջ: Գրանցից առաջինն այն է, որ Մաշտոցը շատ տեղերում հիմնում է վանքեր, որոնք դառնում են գիր ու գրականություն ուսուցանելու մեր առաջին դպրոցները: Մաշտոցի գյուտից հետո, Մաշտոցի հիմնարկած վանքերում օտար լեզուների (ասորերեն, հունարեն) տեղակ անցնում է հայերենը, որով «վանքերն ազգայնանում են և դառնում են հայկական դպրոցներ»: Երեսուրդում էին հայերեն լեզվով դրագետներ ու քարոզիչներ և «զբրիչներ»: Վանքերում է կենտրոնանում նաև ժամանակի գիտություններն ու գրականությունը: Այդպիսով, փաստորեն Մաշտոցը դառնում է հայ դպրոցների հիմնադիրը մեզանում: Եվ ոչ միայն այդ «Մաշտոցի ու Սահակի ու նրանց աշակերտների ջանքերով ստեղծվում է եկեղեցական հայերեն լեզուն, որ ընդունվում է երկու կողմերի հայերից և՛ արևելքում և՛ արևմուտքում: Գրա հետևանքով նա պահպանում է միությունը հայերի մեջ միշտ և ամենուրեք»:

Այդ եկեղեցական լեզուն, սակայն, միաժամանակ մեր գրական լեզուն էր, որով կատարվում են առաջին թարգմանություններն ու որով հետագայում զարգանում է հայոց հին ու հարուստ գրականությունը, «որ դանազան իշխանությունների ենթակա հայ ժողո-

վրդի համար դառնում է ընդհանուր հոգևոր կյանքի, համազգային միության ամենամեծ պատմական գործոնը: Իսկ այդ ինքնուրույն գրականության հիմնադիրները ինքը՝ Մաշտոցը ու Սահակի և Մաշտոցի աշակերտներն էին»:

Եվ այդպես, Արեղյանը, սպասելու ու համակողմանի բացահայտելով Մաշտոցի անձն ու, մանավանդ, կատարած գործի պատմական խոշոր նշանակությունը, այն միաժամանակ դիտում է հայոց հին գրականության պատմության տեսանկյունից և հավաստում Մաշտոցի կատարած վիթխարի դերը հայոց գրականության սկզբունքավորման ու զարգացման մեջ, գրականություն, որ իր պատմական խնդիրներով, իրեն ժողովրդի ազգային ինքնության պահպանման և օտար առնձզույթունների դեմ պայքարի միջոցի, լիովին համապատասխանում էր պատմական այն անհրաժեշտությանը, որով ինչպիսիք էր հայոց այբուբենի գյուտը:

## 2. ՓՈՐՁԵՐ ԼԱՅ ԼԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՏԱՆԱԿԸ ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ

Հին գրականության նշանավոր դեմքերին ու երևույթներին ներկրված առանձին ուսումնասիրություններից զատ, Արեղյանի հետախույզումների մեջ կենտրոնական տեղ են զբաղում նաև հայ հին գրականության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունները:

Անցյալ դարավերջին, տակավին իր ճեմարանական գասախոսությունների մեջ, Արեղյանն ուրվագծում էր հայ հին գրականության սկզբնավորման ու զարգացման պատմական ընդհանուր տեսությունները:

Հին գրականության առանձին հարցերին նվիրված հետագա ուսումնասիրություններում, նա, աստիճանաբար լրացնում, մշակում և նոր օրինաչափությունների բացահայտումով վերջնականապես հստակում է իր այդ տեսությունը, որի ամբողջական ուսուսանելի շարադրանքը հանդիսացավ 1917-ին Հայ գրողների կովկասյան ընկերության գրական երեկոսերին կարդացած նրա նշանավոր գասախոսությունը<sup>2</sup>:

Հայոց հին գրականության պարբերացման խնդիրը հա-

1 «Սովետական գրականություն», 1941, № 2, էջ 51:

1 «Սովետական գրականություն», 1941, № 2, էջ 51:

2 «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության», Գասախոսություն, Մանուկ Արեղյանի. Թիֆլիս, 1917:

յագիտութեան մեջ սկզբնավորում է անցյալ դարի բանական թվականների վերջերին, երբ առաջագրվում է հայ գրականության պատմությունը գրելու անհրաժեշտությունը: Պարբերացման, ինչպես և գրականության պատմագրության նախափորձը պատկանում է Մխիթարյան միաբան Սուրբաս Սոմալյանին, որի 1829 թ. լույս տեսած իտալերեն «Պատկեր Հայոց գրականության»<sup>1</sup> աշխատության մեջ հայ հին գրականությունը պարբերացվում էր բոլոր հարյուրամյակների, և յուրաքանչյուր դարի տակ անխորք դրվում էին բոլոր հեղինակներն ու նրանց դործերը, անկախ վերջիններիս բնույթից: Սոմալյանը հայ գրականության սկիզբը դնում էր շորթորդ դարում և գրականության պատմության շարադրանքը հասցնում մինչև XVIII դար: Սոմալյանի հետևյալում է նրա պատմության հիման վրա գերմանացի հայագետ Կառլ Յրիգրիի նոյմանը իր «Փորձ Հայոց գրականության պատմության» գրքում<sup>2</sup> ստույգորեն հետևում է Սոմալյանի պարբերացման սկզբունքին, որն հետագայում նույնությամբ օրգելվում է Ստ. Նազարյանցը հայ գրականության պատմության իր համառոտ ակնարկի մեջ<sup>3</sup>, միայն մեկ վերապահությամբ: Նազարյանցը հայ հին գրականությունը հասցնում է մինչև XIII դար, այսինքն մինչև գրաբար լեզվի անկումը՝ XIII դարը համարելով հայ հին գրականության ոսկյա ժամանակների վախճանը: Գրականության նշյալ երեք պատմաբաններն էլ հայ գրականության սկզբնավորումը տեսնում են ժողովրդական բանահյուսության, հատկապես երգերի մեջ, բավարարելով հպանցիկ անհանդերձ միայն:

Հայ գրականության պատմության գիտական պարբերացման առաջին լուրջ փորձը պատկանում է դորձյալ Մխիթարյան հայր Հովսեփ վարդապետ Գաթրճյանին<sup>4</sup>, որը փորձում է հայ հին ու նոր գրությունը պարբերացնել՝ ելնելով աւրբեր ժամանակների գրականության բնույթից: Գաթրճյանը հայ գրականությունը բաժանում է երկու պատմական մեծ ժամանակաշրջանների, կամ, ըստ իրեն՝ «միջոցների»<sup>5</sup>. առաջինը համարում է մինչքրիստոսնությունը (մինչև

305 թ.) և դաժ գրությունը՝ բանավոր և գրավոր. երկրորդը՝ քրիստոսնության ընդունումից հետո՝ մինչև XIX դարի կեսերը ընկած ժամանակամիջոցը, այն ևս համապատասխանաբար բաժանելով երկու շրջանների: Առաջին շրջանը համարում է քրիստոսնության ընդունումից մինչև գրերի գոյուրը և դաժ օտար լեզվով ու դուրձ գրականությունը, իսկ երկրորդ շրջանը՝ հայերեն գրությամբ ու լեզվով V—XIX դարերի գրությունը:

Գաթրճյանը բուն հայ գրականությունը պարբերացնում է նաև ըստ բնույթի, ելնելու ունենալով սուկ օտար ազդեցությունների: Ըստ այդմ նա V—XIV դարերի հայ գրականությունը դիտում է իրրև «Հունական քրիստոնեական մատենագրության ազդեցության»՝ զբաղանություն. իսկ XIV—XIX դարերի հայ գրականությունը՝ որպես միջին և նոր ժամանակների առանտ-գերմանական ազդեցությունների գրականություն: Գրականության պատմության պարբերացման Գաթրճյանի սկզբունքն, այդպիսով, հազճահարում էր գրականության նախորդ պատմաբանների ժամանակաբանական պարբերացման միակողմանիությունը, և, որ կարևորն է, հիմնական շեշտը դնում էր գրականության զարգացման ընդհանուր բնույթի վրա: Այս գրական սկզբունքը, սակայն, Գաթրճյանի մոտ սխալ ձևով էր բովանդակավորվում: Նա ամբողջ հայ գրականությունը բնութագրում է իրրև օտար ազդեցությունների արդյունք, մի բան, որ նրա պարբերացման հիմնական թերությունն է կազմում:

Գաթրճյանի պարբերացումը սուկ սքեմատիկական մի նախագիծ էր, որ բացի առաջին մասից՝ անպիր բանահյուսությունից, հեղինակի կողմից չմարմնավորվելից գրականության ամբողջական պատմության մի նոր շարադրությամբ:

Հին գրականության պարբերացման հաջորդ փորձը կատարում է Ստ. Պալասանյանը<sup>6</sup>: Վերջինս, հակառակ նախորդի, թնայտ շովից գրականության պատմության պարբերացման մի նոր սեսություն, սակայն նա ևս ժողովրդական բանահյուսությունն ու գրականությունը դիտում է սերտ միասնության մեջ և հայ գրականության առաջին շրջանը համարում է հենց բանավոր գրականությունը, այսինքն՝ ավանդական բանահյուսությունը:

Պալասանյանի ժամանակակից Մխիթարյան միարան Գարեգին Զարբանալյանը հայ գրականության պատմության իր

<sup>1</sup> «Quadro della Storia Letteraria di Armenia estesa da mons\*, Placido Suktia Somal, Venezia, 1829.

<sup>2</sup> «Versuch einer Geschichte der armenischen Literatur», von Fr. Neumann, Leipzig, 1836.

<sup>3</sup> «Беглый взгляд на историю Гайканской литературы до конца XIII столетия», адюнкт-профессора Назаряна Казань, 1844.

<sup>4</sup> «Գաթրճյանի մատենագրության հայոց, գրեց Հ. Հովսեփ վ. Գաթրճյան, Վրենս, 1851.

<sup>5</sup> «Գաթրճյանի հայոց գրականության», աշխատակից Ստեփան Պալասանյան, Հատ. I, Բանավոր գրականություն, Թիֆլիս, 1865.



երկհատոր աշխատության մեջ<sup>1</sup>, հետևելով նախորդներին, գրականությունը պարբերացնում է ժամանակագրական և լեզվի փոփոխության սկզբունքով:

Զարբանայանն իր պարբերացումն առավել հասակում և բացահայտում է առաջին դրքի («Էին մատենագրություն») նրբորդ լրացված և վերամշակված հրատարակության ժամանակ (1886 թ.): նա ամբողջ հայ գրականությունը Սոմայլանի նման բաժանում է առանձին գարերի և յուրբանչյուրի տակ բնծում ավյալ հարյուրամյակի գրական արտադրանքն առանց որևէ բնորոշության կամ բացառության: Այս, պարբերացման հիմնական էլակետը համարելով լեզուն, Զարբանայանը, Գաբրիելյանի օրինակով, հայ գրականությունը բաժանում է հետևյալ շրջանների. 1. անգիր բանահյուսություն («Գողթման երգեր և հին առածներ»): 2. գրավոր մատենագրություն, որն իր հերթին բաժանում է ևս երկու շրջանի. ա) մինչև գրերի գյուտը եղած օտար և հայ մատենագրություն և բ) բուն հայկական կամ հայոց գրերով մատենագրություն:

Զարբանայանը բուն հայ գրականությունը ևս հին ու նոր շրջանների միջև բաժանում է ըստ լեզվի հասկանիչի: Նա հին գրականությունը (ինչպես Ստ. Նազարյանցը) դնում է IV—XIII դարերում, այսինքն մինչև միջին հայերենի գրական լեզվի աստիճանին բարձրանալը, որից հետո եկող գրականությունը՝ XIV—XIX դդ., համարում է նոր գրականություն: Ուրեմն, մեր հին ու նոր գրականության բաժանման սահմանագիծը, ըստ Զարբանայանի, բնկնում էր XIII դարի վերջերը, կաթոբի, որ հայագիտության մեջ, ինչպես նշվեց, արդեն արժարժվել ու կիրառում էր գտել նազարյանցի կողմից<sup>2</sup>:

Զարբանայանն, այդպիսով, հայ գրականության պատմության պարբերացման հարցում մի բայլ ետ էր նահանջում իր նախորդներից. պարբերացումը գրականության բնույթից բխեցնելու փոխարեն նա կազում էր արդեն Գաբրիելյանի կողմից իսկ նուստպարտված գրականությունն ըստ հարյուրամյակների բաժանելու սկզբունքից:

Վրթ. Փափազյանը 1910 թ. իր «Պատմություն հայոց գրականության» հին գրականության ընդգրկող առաջին շորս հասվածներին մեջ, նախորդներին պիտ գրականության պատմությունը բաժանում է երկու շրջանի՝ ժողովրդական բանահյուսության և գրավոր բանահյուսության, բոլոր գրականությունների սկիզբն համարելով ժողովրդական բանահյուսությունը: Իսկ հայ գրականությունն առհասարակ Փափազյանը բաժանում է ժամանակագրական շորս մեծ միավորների. 1. Հին շրջան (սկզբից մինչև XI դար), 2. Միջին դար (XI—XVII դարեր), 3. Նոր շրջան (XVII դարից մինչև Արտվինյան), 4. Նորագույն շրջան (Արտվինյանից մինչև XX դարակիցները): Հայ հին գրականության վերջին պատմագիրն էր Աբրահամ Զամինյանը<sup>3</sup>, որն հին գրականության պարբերացման խնդրում բունամբ շեղանակելով իր նախորդներին, հատկապես Զարբանայանից, հին գրականությունը պարբերացնում է ըստ հարթագրական գարերի, այն տարբերությամբ, սակայն, որ յուրբանչյուր հարյուրամյակի գրական արտադրանքը առավել բաժանում է ըստ բնույթի ու բովանդակության, նախապես տալով ավյալ հարյուրամյակի ըստբանական ու մշակութային կյանքի ընհանուր բնութագրերը:

Զամինյանի «Պատմություն»-ը, իսկ պարբերացման իմաստով այն ոչ մի նորություն չբերեց հայ գրականության պատմագրությանը:

Այդպես, ուրեմն, ավելի քան մեկ վաթսուամյակի ընթացքում հայ գրականության տարբեր պատմաբանների հին գրականության պարբերացման բոլոր փորձերի մեջ նկատվում է մեկ միասնական սկզբունք. հայ գրականության սկիզբները բաժանելու անխախտ սեռնում են հին ավանդական բանահյուսության մեջ և համապատասխանաբար գրականությունը բաժանում են երկու հիմնական շրջանի՝ անգիր և գրավոր պարբերություն:

Այս է այն հիմնական ավանդը, որ փոխանցվում է նախորդներից գրականության հարյուր պատմաբանին՝ Մանուկ Արեղյանին: Սակայն, հին գրականության պարբերացումից առաջ, Արեղյանը ճշգրտում է ու բորշտրվում շրջանաբաժանման ենթակա առարկայի սահմանները: Գրականության նախորդ պատմաբանների մոտ հայ հին պարբերությունն ըմբռնվում էր իբրև հայոց հին մատենագրություն առհասարակ: Անշույթի հայ գրավոր գրերն ամբողջ մշակույթը, ըս-

<sup>1</sup> «Պատմություն հայերեն գրություններից, ի պես ուսման ազգային վարժարանաց, Ա. Հին մատենագրություն», Վենետիկ, 1865. «Բ, Նոր մատենագրություն», Վենետիկ, 1878:

<sup>2</sup> Տե՛ս նաև «Обозрение истории Гайканской письменности в новейшее время», Степан Назарянца, Казань, 1846.

<sup>3</sup> «Հայ գրականության պատմություն», որից Աբրահամ Զամինյան, Ա մաս, Նոր նախերեսն, 1914:

կրսած պատմագրութեանից, վերջացրած բժշկութեամբ, իմաստասիրութեամբ ու բանաստեղծութեամբ արժանանում էին գրականության պատմաբանների քննութեանը, առանց որևէ խտրութեան կամ բացառության: Առարկայի նման շտաբերակված բնութմանը Արեղյանը պալես է հակադրելու իր նոր տեսակետը:

1917-ին, «Հայոց հին բանաստեղծության ընդհանուր տեսութեան» մեջ, նա սկզբից իսկ հայ հին գրավոր մատենագրութեանից տանձնացնում է սոսկ գեղարվեստական զբաղմունքները, իբրև մի ինքնուրույն ու ամբողջական բնագավառ: Այն կոչում է «Հայոց հին բանաստեղծություն» և սահմանում էրա սեփական զարգացման բնույթն ու օրինաչափությունները:

Առարկայի բնութմանը հենց սկզբից սահմանադատվելով իր նախորդներից, Արեղյանը բնականաբար առաջ է բերում գրականության նոր մոտեցումներ ու չափանիշներ, որոնք պետք է նոր լույս սփռեն հայ հին գեղարվեստական գրականության էությունն ու զարգացման վրա:

Հայոց հին բանաստեղծության վերահիշյալ տեսության մեջ Արեղյանը սահմանագծելով հայ հին գրականության տիրապետության շրջանները, նախորդների օրինակով ու սեփական համոզմունքներից զրգված, առարկան բաժանում է երկու հիմնական բաժինների՝ անգիր բանայտագրական և գրավոր զարգացման: Հերոշիս սահմանները նա ժամանակագրական առումով V-ից հասցնում է XIX դար: Առաջին անգիր կամ նախագրական շրջանն, ըստ Արեղյանի, ընդգրկում է մ. թ. ա. II դարից մինչև մ. թ. IV դարն ընկած ժամանակամիջոցը, որ հատկանշվում է, որ ժողովրդի կայանքում սեղի ունեցած պատմական կարևորագույն իրադարձություններով, որոնք էլ կազմում են հիշյալ շրջանի վիպական բանահյուսության առարկան: Այս շրջանի ժողովրդական բանահյուսությունը իր երկու զիսակներ՝ վիպական և բնորակաբարձրելիքով Արեղյանը համարում է հայ «ազգային նախնական բանաստեղծությունը»:

Երկրորդ բաժինը՝ գրավոր զարգացումը, ըստ բովանդակության ու բնույթի, Արեղյանը բաժանում է երեք շրջանի: Առաջինը ժամանակագրական առումով բնորոշում է V—XI դարերի գրականությունը՝ Պր. Նարեկացին ներառելով. Արեղյանն այն անվանում է կելիցեցական գրականություն իր բոլոր տեսակներով, որ կոչված էր բռնա կնկնողական նպատակների համար, որոնցից առաջինն ու զիսակներ էր հեթանոսության տեղ տարածել բրիտանոսությունը: Երկրորդ շրջանն, ըստ Արեղյանի, բովանդակում է XI—XVII

դարերի գրականությունը, որը թողնափում է նախորդի կրոնական օգին, բնույթով դառնում է հեթանոսականի վերածնություն՝ աշխարհիկ օգու վերջնական հաղթանակով: Իսկ վերջին նորագույն շրջանըն Արեղյանը համարում է XVII—XIX դարերի գրականությունը, իրը առաջ է դադիս հին կյանքի ու գրականության վերածնությունը և հին նմանողությամբ գրականություն:

Ահա մեր հին գեղարվեստական գրականության կամ բանաստեղծության զարգացման այն հիմնական պարբերաշրջանները, որ սահմանում էր Արեղյանը 1917-ին և դեռ դրանից էլ բավական առաջ:

Հայ հին գրականության այս պարբերացումն արդեն որոշակիորեն սահմանադատվում էր գրականության նախորդ պատմությանների փորձերից: Բացառյալ հին գրականությունը անգիր և գրավոր շրջանների ավանդական բաժանման, Արեղյանը պարբերացման մնացած բոլոր շրջաններում ինքնուրույն էր: Հակառակ իր նախորդների ձևական կամ երկրորդական մեկնակետերի, Արեղյանը հին գրականությունը պարբերաբաժանելիս նշում էր նրա որակական հատկանիշներից, զարգացման ներքին օրինաչափություններից և դրանք պայմանավորող պատմա-հասարակական միջավայրից:

Հայ հին գրականության պարբերացման բնամարդում Արեղյանի բերած մեծագույն նորությունն այն էր, որ նա մեր հին գրականության դարավոր զարգացման մեջ հայտնաբերում էր ու իմաստավորում մի նոր ու նշանակալից շրջափուլ, դա XI—XIII դարերի գրականությունն էր, որ Արեղյանը հիմնավորում էր որպես հայ ազգային ինքնուրույն վերածնության արտահայտություն: «Հայ վերածնությունից գրականություն» հասկացությունն, այնուհետև, խորացվում ու առավել է հիմնավորվում Արեղյանի կողմից և, անկախ որոշ տարակարծություններից, մեկընդմիջտ արժատավորվում հայագիտության մեջ:

### 3. ԱՅՆ ՀՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՐԿԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արեղյանի պարբերացման խնդրով էլ սահմանափակվում, սակայն, Արեղյանի բերած նորությունը հայ հին գրականության պատմագրությունը: Պարբերացումն ինքը հետևանք էր այն կարեւոր նորություն, որ կատարեց Արեղյանը հիշյալ բնագավառում: Դա ամենից առաջ այն հայացքն ու մոտեցման եղանակն էր, որն-



ցով Արեղյանն, ինչպես հին բանաստեղծության ընդհանուր տեսութեան, այնպես էլ նախորդ մենագրական հետազոտությունների մեջ բնեւում էր որպէս երևույթներն ու խնդիրները:

Արեղյանը հայ հին գրականութեանը մտնելուն էր պատմափիլիսոփայական գրականագիտության տեսանկյունից, հանձնի Պալատականի և Գաթրեճյանի ունենալով իր արժանաւոր նախորդները:

«Հայոց հին բանաստեղծութեան ընդհանուր տեսություն», ինչպես նաև հին գրականութեանը նվիրված նախորդ հետազոտությունների («Մարականների մասին», «Մ. Գրիգոր Նարեկացի» և այլն) մեջ Արեղյանը հայոց հին գրականութեանը դիտում է իբրև մի կենդանի ու հարստփոփոխ երևույթ, իր վերելքների ու անկումների մեջ, միշտ պայմանավորված արտաքին-նշտմանական և հողեր կյանքի հետզամանքներով:

Նա հայոց հին գրականության ծագումն ու զարգացումը դիտում է քննում է հայ էթնոսի ծագման, հայկական վաղ քաղաքակրթության ձևավորման վրա զորեղ ազդեցություն բաղձ հարկւման առաջադեմ և տիրապետող իրանական, սեմական և այդ ներկենական քաղաքակրթությունների սերտ ազդեցությունների լայն տեսադաշտի վրա:

Ավանդական հին բանաստեղծությունն, ըստ Արեղյանի, հարեւան ժողովուրդներից ազդելով հանդերձ, հայ էթնոսի վերջնական կազմավորումով, իր մեջ արտացոլում է վաղ հայկական պատմական կյանքի երևույթները և ձևեր է բերում ազգային ինքնուրույն նկարագիր սեվ այսպես, 2-րդ դարում Ք. ա., — դրում է նա, — հիմք է դրվում հայ բանաստեղծություն իր ինքնուրույն բնավորությամբ, մի բանաստեղծություն, որ կապված է եղել հայ ազգի պատմական կյանքի հետ և որանից բխելով՝ երա այդ կյանքն և իրականին է պատկերացրել իր մեջ<sup>1</sup>:

Մեր վաղ շրջանի այդ սպարը ու միամիտ» բանահյուսությունը, իրավամբ համարելով «մեր ազգային նախնական բանաստեղծությունը», Արեղյանը գտնում է, որ այն իր երկու բաղկացուցիչ վիպական և քնարական տեսակներով, շարձավ «հիմունքը մեր ապագա դրավոր բանաստեղծության»: Անգիր բանահյուսության և դրավոր բանաստեղծության այդ անբնական խզումը նա բացատրում է երկու տարբեր աշխարհայացքների ու գաղափարախոսու-

թյունների հակամարտությամբ, որ իր մեջ մի կողմից խտացում էր ավանդական բանահյուսությունը իր հեթանոսական զվարթ սրամաստեղծություններով ու հայացքներով, մյուս կողմից՝ գրավոր բանաստեղծությունը, որ սկզբից ենթանցնելով հոգևորականության ու եկեղեցու ձևերը, դարձավ արտահայտիչը բրիտանական աշխարհայացքի ու գաղափարների: Երկու աշխարհայացքությունների ու գաղափարախոսությունների այս խզումն ու հակամարտություն էլ, ահա, Արեղյանն էական հիմք է դարձնում բաժանելու անգիր բանահյուսությունը գրավոր գրությունից, հակասակ իր նախորդների ձևական մոտեցման, երբ հաշվի էր առնվում երկու շրջանների սոսկ արտաքին՝ անգիր ու գրավոր բնույթը:

Հայ բանաստեղծությունը զարգացման երկրորդ՝ գրավոր շրջանում ևս ավանդական բանահյուսությունը չի դադարում իր գոյությունը: Նա իր հեթանոսական գաղափարներով ու հավատալիքներով, կյանքի նկատմամբ ունեցած զվարթ աշխարհայացքով շարունակում է դեռ երկար հարստելը, միշտ ամենուրեք արժանանալով եկեղեցու և հոգևորականության արճամարճանքին ու հայածանքներին: Մյուս կողմից՝ նոր սկզբնավորված եկեղեցական գրականությունը իր բոլոր տեսակներով ամենուրեք բրիտանական էր տարածում և հերքում ու հայածում հեթանոսական հավատալիքներն ու գաղափարախոսությունը, ազգային վիպասանության, առասպելների ու երգերի տեղ գնում ու տարածում Աստվածաշնչի պատմությունները, «հին ճրեական օրհներգությունն ու սաղմոսները:

Այնպես ահա, մեր գրականության սկզբում հենց բացվում է մի խոր վիճ մի կողմից՝ սկզբնական բուն հայ անգիր բանահյուսության մեջ, որ ինքնուրույն էր և ցույցանում էր իր մեջ ազգային կյանքը, և մյուս կողմից՝ նոր գրավոր բանահյուսության մեջ, որ չունի ինքնուրույնություն և կապված չէ ընդհանուր ազգային կյանքի հետ, — այլ միայն ս. Գրքի հետ և ազգային եկեղեցու կյանքի հետ<sup>2</sup>:

Հայ ավանդական բանահյուսությունն ու եկեղեցական գրականությունը զնահաակելով ու բնորոշելով բոլորովին նոր՝ ազգային կոնկրետ իրականության ու հոգեբանության արտացոլման շափանիշով, Արեղյանը մեր գրավոր շրջանի գրականության զարգացման մեջ, մյուս կողմից, կարևոր դեր է վերապահում անգիր բանահյուսությանը և հայ հին գրականության բովանդակության ամենաընդհանուր գիծը համարում է այդ անգիր բանահյուսության ու զը-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության, էջ 8:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 12:





տականության հաստատում և անկեղծ ներշնչանքի սրբազործում, աչք արև, որ բանաստեղծության բնման դառնում է իրական կյանքի նկարագիրը, բնությունն ու մարդը, հասկանալիս կինը իրենց ղեկավարություններով:

Բանաստեղծության մեջ առաջ են գալիս բնարևոգության նոր տեսակներ, սուպաշխարհիկ շարականները զարգանալով գառնում են ամբողջ ողբերգություններ, իսկ ուրախ շարականները գառնում են ապերե<sup>1</sup>:

Գրական ստեղծագործության զարգացման ընթացքի մեջ որոշիչ համարելով գաղափարական բովանդակությունը, Արեղյանն իրավամբ գտնում է, որ այս տեղաշարժերը ղեկուս շին կերպարանափոխում մեր հին բանաստեղծությունը, այլ միայն ազդանիշ էին բանաստեղծության գալիք փոփոխություններին:

«11-րդ դարի սկզբից արդեն,— գրում է նա,— մեր կյանքի և մտածողության մեջ մտնում է մի Հեղաշրջում, որով կրոնական-ճգնաժամական ոգին սկսում է տակավ առ տակավ տեղի տալ աշխարհական ոգու առաջ<sup>2</sup>»:

Ուրեմն՝ հոգու և մարմնի գաղափարական պայքարում գերակշռությունն անցնում է հոգուց մարմնին՝ մի տեղաշարժ, որն իրական կյանքում ուներ իր առարկայական հիմքերը:

Մտերիքի ու աշխարհայացքի մեջ կատարվող այդ փոփոխությունը Արեղյանը հիմնավորում է X—XI դարերի Հայաստանի արևմտական, քաղաքական ու մշակութային կյանքում կատարվող տեղաշարժերով՝ հարչուրամյա համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանում նրկրի բաղաճների ու շահաստանների ծաղկմամբ ու բարգավաճմամբ, արհեստների, արդյունագործության, առևտրի բուռն վերելքով, հարուստ քաղաքացիության կյանքի ձևափոխումով, շինարարական ընդհանուր վերելքով:

Մյուս կողմից՝ արիւղ կրոնական գաղափարախոսության բնագավառում, մտերիքի մեջ, իրական կյանքում և վանական կենցաղում իշխող միտախիկ ճգնաժամական աշխարհայացքը ղեկուս X դարում հասնում է զարգացման կատարելության և նույնիսկ ծայրահեղության, «ուստի և ճգնաժամական սկզբունքը, իր ծայրահեղության մեջ, բերում է իր ժխտումը<sup>3</sup>»:

ազանդավորական վարդապետությունն ու շարժումը, որը «ծայրահեղության հասած մի բողոք էր ճգնաժամական կյանքի, եկեղեցու կարգերի ու գաղափարների դեմ, նման Պրովանսում ծավալված Այրիզոյան աղանդի<sup>4</sup>»:

Գառաշրջանի այդ ազատախոս մտայնությունը XI դարի վերջերին արդեն առաջ է բերում «մի նոր արվեստի պահանջ», և շուրջ հաննես Սարկավազը ստեղծում է արվեստի մի նոր տեսություն, որի հիմնական սկզբունքն այն էր, որ թե սարվեստը, ուրեմն և բանաստեղծությունը, նմանողություն է բնության, և թե բնական մեծերն ու մարդու, ուստի և բանաստեղծը պիտի աշխատի նմանվել բնությանը: Այսպես կյանքի և բանաստեղծության մեջ բնությունը մեծ արժեք է ստանում<sup>5</sup>:

Գեղարհտական նման հայացքի ու ըմբռնման հետևանքով բանաստեղծությունից ու մտանկագրությունից առհասարակ մի կողմ են նետվում ճոռոմ ու խրթնարան ոճն ու ձևերը, և սկսում են իշխել պարզությունն ու բնական մտածողությունը: «Այս ձգտումը ստանում է նաև դեպի կենդանի խոսակցական լեզուն, որ արդեն բավական հեռու էր գրականության մեջ ընդունված լեզվից և գրականության մեջ երևան էր գալիս 12-րդ դարից արդեն<sup>6</sup>»:

Նյութական կյանքի ու հասարակական դիտակցության մեջ տեղի ունեցած հիշյալ պատմական փոփոխությունների բազմակողմանի հաշվառումով, Արեղյանը հավաստում է XI դարից արդեն Հայաստանում նոր ու թարմ մտավոր մի հասանքի առկայությունը, որի մի զորեղ արտահայտություններին է հանդիսանում միջնադարյան հայ աշխարհիկ բանաստեղծությունը:

Վերոհիշյալ մտավոր շարժումն ու փոփոխված ոգին բնականոն զարգացման ղեկավարում պետք է տաննին աշխարհիկ սիրո ու զվարթ վայելքների բանաստեղծության առաջացման: Սակայն այդ չի կատարվում, քանզի մի կողմից սելջուկյան թուրքերի արշավանքներն ու ավերածությունները, մյուս կողմից հունական քաղաքային ոտընկերությունները փոխում են այդ նոր մտավոր վերելքի ուղղությունը: «Ժամանակի աղետալից վիճակը ստիպում է մարդկանց նորից հարգանք և կրոնի մեջ գտնել միևիպարություն և իրենց զժրախտ կյանքի բացատրությունը»: Եվ այդ գտնում են հին բրիտանական

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հնդհանուր տեսություն..., էջ 19:

<sup>2</sup> Անդ, էջ 19—20:

<sup>3</sup> Անդ, էջ 19:

<sup>4</sup> Մ. Արեղյան, Հնդհանուր տեսություն..., էջ 20:

<sup>5</sup> Անդ, էջ 21:

<sup>6</sup> Անդ:

այն զազափարի մեջ, թիկ մարդիկ մեզք են զործում և Աստված պատժում է նրանց՝ մեզքի համար»։ Հետևաբար պետք է ապաշխարել, որպեսզի աստված պատիժը վերացնի։

Հասարակական նման մտայնությունը առաջ է բերում և իր բանաստեղծությունը՝ ողբերգությունը։ Եթե մինչ այդ անհատական մեզքն էին ողբում և ապաշխարում էին մարմինը տանջելով հանուն հոգու փրկության, որի բանաստեղծական մեծագույն արտահայտությունն էր նարեկացու «Ողբերգություն»-ը, ապա այժմ ապաշխարությունը լինում է ազգի փրկության համար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թե մարմինը մեղցցելով, այլ բարեի մաքրության և աստվծի կյանքով» (ընդգծումն իմն է— Ս. Ը.)։

Հայերի ու աշխարհի նկատմամբ ունեցած այս տարբեր վերաբերմունքի մեջ էլ, ահա, Արեղյանը տեսնում է բանաստեղծության այդ նույն տեսակի զազափարական սայրերությունը և հանձնի Արիստակես Լաստիվերացու «Ողբերգության», նկատում է, որ «աշխարհն աղբն առացել է առձե՛ք, և «ամենակրոնասեր մարդ, ինչպես Արիստակես Լաստիվերացին սիրում է աշխարհը...» (ընդգծումն իմն է— Ս. Ը.)։

Արիստակես Լաստիվերացուն նա իրավամբ համարում է «մեր աշխարհական կյանքի առաջին ողբերգուն», թեպես կրոնական ձևով արտահայտված։ Իսկ նրա «Ողբը» իր զազափարով համարում է բանաստեղծության մի նոր տեսակ՝ հայրենասիրական ողբերգություն իր երկու պատկերների՝ «փռավար ու զվարթ անցյալի և անշուք ու տխուր ներկալի» հակադրությամբ, որով սկիզբ է դրվում ժառանգ թաղաբախտ իշխանությունը վերականգնելու երազին»։ Հայրենասիրական ողբերգությունն իբրև բանաստեղծության տեսակ հարատևում է հայ գրականության մեջ, միայն ժամանակին համապատասխան փոփոխելով բովանդակությունն ու ողբին։

Բանաստեղծության նման զարգացումը, այսինքն այն, որ «ըստ պատված աշխարհիկ կենսության բանաստեղծության տեղ՝ 11-րդ դարում տխուր և լաւազին հայրենասիրական ողբերգությունն է ծագում»՝ Արեղյանը համարում է մեծանշանայն բնական և առաջընթաց բալլ, թե՛ կոնկրետ պատմական և թե՛ ընդհանուր փիլիսոփայական առումով, նախ դրանով նշանակում էր, որ Երանաստեղծությունը կյանքին էր հետևում և այն «կրոնական զգացումից հե-

1 Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 23:

տա գտնել էր իր ընտանականության կարեւոր և մեծ թեմաներից մեկը»՝ հայրենասիրությունը, որ արդեն կրոնական չէր. և ապա այն, որ բանաստեղծությունը ժխտա կրոնականից միանգամից թռիչք չէր կարող անել զեպի մաքուր աշխարհականը, բանի որ բանաստեղծները զեռ եկեղեցական էին», կաշկանդված պատշաճի ու անպատշաճի հասկացություններով, կյանքի նկատմամբ ունեցած միակողմանի հայացքով և զազափարների ու զգացումների նեղ շրջանակներով։

Այդուհանդերձ, Արեղյանն արդեն XI դարում հավաստում է բանաստեղծության անցումը կրոնականից աշխարհիկին, որի հաջորդացություն արտահայտությունն էր դանձում դրական մի նոր տեսակի՝ առակի մշակումը։ Վերջինս բարոյախոսությանը ու խրատով միանգամայն պատշաճում էր հոգեբանական բանաստեղծների կույժումը։ Առաջին օրինակը առկա է Շնորհալին իր հանելուկներով, ապա Մխիթար Փոշն ու Վարդան Այգեկցին։ Առականների հետ միաժամանակ և զրանից էլ առաջ սկիզբ է առնում խրատական և իմաստասիրական բանաստեղծությունը, որոնք «խրատական լինելով հանդերձ՝ երբեմն իսկական ընտանեկանություններ են, որովհետև զրված են անձնական տրամադրությամբ, ջղոտ և խոր զգացած»։ Ներությունը՝ գրական հիշյալ տեսակների ձևական մուտքը չէր միայն, այլ այն նոր շնչի, ոգու ու զազափարների մեջ էր, որ իրենց հետ բերում էին դրանք։

«Առաջին անգամ այս բանաստեղծությունների և ավելի ասակների մեջ,— գրում է Արեղյանը,— գտնում ենք բուն ժողովրդական ողբի, հասարակ դասի իրական կյանքը՝ փոխված աշխարհացրով, հաճախ կենդանի խոսակցական լեզվով։ Չկա այլևս հին եկեղեցասիրությունը։ Հին ձգնալորական խստությունն արդեն ծաղրի առարկա է. հավատքի վեճը այն չի հետաքրքրում նույնիսկ հոգևւորականներին,— մի կյանք, որ զվարթ ծիծաղող ու ծաղրող է, վարականքով, սառն զեպի կրոնն ու եկեղեցին։ Մյուս կողմից՝ հանդես է գալիս ժողովրդի զանազան դասերի հարաբերությունը, բըննադասական ողբի, զգրհույնն եղած դրությունից, սոցիալական խնդիրներ, աշխատավոր դասի բողոքն ու անխելոք և անպատշաճ խնդրում և վայելող եկեղեցականի և դատարկապորտ ու անպետք և նույնիսկ վնասակար աղնվականի։ Եվ վերջապես, ընկերական անհավասարությունների և հայտն ազգի կրած տառապանքների

1 Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 24:



պատճառով երևում է մինչև անգամ երկբայության ոգին, խիստ բողբոջի ձևով ընդդեմ Աստուծու, կամ, Հեթանոսաբար, Ճակատագրի վճռի: Մարդիկ ոչ միայն, ինչպես առաջ էր, կասկածում են Աստուծու դատաստանի արգարության մասին, այլև բանաստեղծության նյութ են դարձնում այն<sup>1</sup>:

Գրական փաստերը ղեկավարելով գրականագետի և պատմաբանի տեսակետներով, Արեղյանը մի կողմից՝ բացահայտում է բանաստեղծության մեջ հորդած աշխարհիկ կյանքի ոգին, մարդու իրական շահագրգռություններն ու հոգսերը, մյուս կողմից՝ բանաստեղծությունը դիտում է իբրև իրական կյանքի ու հարսերությունների անզրպարձման մի նշարիտ հայելի և գրանով վերակենդանում XII—XIV դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական ու բարոյա-բաղաբական կյանքի պատկերը նրա կարծիքով XII—XIV դարերում մեղանում առաջ է դալիս Եմի նոր աշխարհակեցողություն, կրոնական կաշկանդումից ազատություն, որ իր խորին ազդեցությունն է թողնում բանաստեղծության վրա: Այդ նոր աշխարհալացքի արդյունք է համարում Արեղյանը XIII—XIV դարերի երեք նշանավոր բանաստեղծներ՝ Ֆրիկի, Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների ստեղծագործությունը, որտեղ արտացոլված է տեսնում վերածնության ամենամեծ հումանիստական նվաճումը՝ մադրկային անհատականություն բարձրացումը:

«Մենք տեսնում ենք, — գրում է Արեղյանը, — որ անհատն ընդհանրությունից անջատվելով ստանում է իր արժեքը և ցուցաբերում է իրեն, հոգալով իր հիշատակի համար, ծնվում է անձնական բանաստեղծությունը, որի համար նյութ են դառնում բանաստեղծի իրեն զգացումները, սերն ու ասելությունը, բախան ու դժբախտությունը: Մարմնին տրվում է իր իրավունքը, դրա հետ և սկսվում է բնօրինակ և սիրո երջը, եկեղեցականի գրած, վարդ ու սոխակի պատկերով կամ առանց գրան. բայց բնությունն այլևս ալլարանության համար չէ, այլ ինքն իր համար: Եվ վերջապես հեծեծալով բարձրանում է աշխարհի ունայնության և մահվան ցավագար երգը, բոլորովին տարբեր Գր. Նարեկացու մահվան երգից, իբրև մր-խիթարություն սոցիալական կամ ազգային անարդար և անհավասար դրություն, կամ իբրև վախճան անհատական առնչալից ունայն կյանքի—մի երգ, որ շունչի մամանակակից Պրովանսի գրականու-

թյունը և որ ֆրանսիական գրականության մեջ երեսն է դալիս 15-րդ դարի երկրորդ կեսին միայն<sup>2</sup>»:

Պատմական իրականությունն մեջ տեղի ունեցած կյանքի և աշխարհայացքի փոփոխությունն այդպիսով, բայց Արեղյանի, առաջ է բերում համապատասխան հեղաշրջում մեր միջնադարյան բանաստեղծության մեջ, վերջինս ատիճանաբար աշխարհականանում է և ձևը է բերում իր գրեթե բոլոր կարևոր թևաները: «11-րդ դարից մինչև 14-րդ դարի սկիզբները, — գրում է նա, — շնայելով քաղաքական անբարեհաջող վիճակին, մի տեսակ ինքնուրույն վերածնությունը աշխարհիկ միտքը թափանցում է եկեղեցականի բանաստեղծության մեջ, և մեր քնարերգությունը Նարեկացու Ողբերգությունից հետո՝ զարգանում է ձևը բերած լինելով գրեթե բոլոր կարևոր թևաները՝ կրոնական միասիական զգացումն ու մտածությունը, հայրենասիրություն, բնությունն ու սեր, աշխարհի ունայնությունն և մահ, անձնական հանգամանքներ, և նույնիսկ բողբոջ սոցիալական անհավասարության գեմ, երգիծանք վատ կարգերի: Մի կատարյալ հեղաշրջում, որ բնկնում է Պրովանսի նույնպիսի բանաստեղծության հետ միաժամանակապես<sup>3</sup>»:

Այսպես, ահա, հայ հին գրականության պատմության մեջ տարբեր անուններով հորջորջվող և բայց էություն շրջահայտված XII և հետագա դարերի բանաստեղծությունը Արեղյանը բնում է նոր պատարանություն, որով բացահայտվում է հին գրականության մի ամբողջ պատմաշրջան՝ իբրև հայկական ինքնուրույն վերածնության արգասիք<sup>4</sup>: Եթե Արեղյանի հայկական վերածնության հիմնավոր-

1 Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 26 և հետ:

2 Անգ. էջ 27:

3 Արեղյանի հիմնարած հայկական վերածնելի այս տեսությունը, որ 1917-ից է վեր առավել խորացվեց ու հիմնավորվեց Հեղինակի տարբեր աշխատություններում, հետագայի շատ գրականագետների կողմից քննարկվում է ու զարգացվում, սոսեց մտա հանելով երբեմն շոփազանցությունն նման մի աշխատանք է Վ. Զալյանի «Армянский Ренессанс», М., 1963 (Նույնի հայերենը, Երևան, 1964) գիրքը, որ Հեղինակը որոշ չֆրա ու բնջեղված անակետերի հետ մեկտեղ առաջ է բաշում այնպիսի մտքեր ու փաստարկներ, որոնք հետո են առաջադր խնդիրը քաղաքականությանը: Տարբերակ է, որ Հեղինակն իր աշխատության մեջ յուրյան է մատուցում հայկական վերածնելի տեսության հիմնադրի ու մշակույթի անունը: Այնպես է գրադ գալիս, որ Զալյանն ինքն է հիշյալ խնդրի առաջ բաշղել ու հետազոտողը:

Բացի այդ, երբեմն սխալ են ներկայացնում հայկական վերածնության հարցի սկզբնավորման պատմությունը Այսյան, 1957-ին Մյունխենում հրատարակված

1 Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 25 և հետ:

մամբ մի նոր դարադրուի էր բացվում հայոց հին բանաստեղծութեան մեջ, ապա այդ վերածննդի ինքնուրույն ժաղման հազաստիացմամբ՝ մեկնեղմիշտ սնանկ էին հուշակվում հայ հին քրակա-նութեան երևույթները օտար ազդեցություններով բացատրելու միտումները:

XII—XIII դարերում խաչակրաց արշավանքների և Կիլիկիան Հայաստանի նյութային հետ ունեցած շփման հետևանքով մասամբ բնդունելի համարելով ավելի շրջանի հայ գրականության վրա եվրոպականի ազդեցության հնարավորությունը, Արեղյանն այդուհանդերձ եվրոպական ազդեցությանը վճռական զեր չի վերադա-հում: Նա երևում է փաստացի այն մշտնադատ հիմնավորումից, որ էրբ XIV—XV դարերում Փրանսիայում սիրային բանաստեղծու-թյունն արդեն կատարյալ անկում է ապրում և վերադարձել էր իր նախկին վերացական շինծու ձևերին ու ալլաբանությանը, Հա-յաստանում, բնդհակառակ, սիրո էրբը XIII—XIV դարերում լի-ովին ազատագրվում է ալլաբանությունից և XIV—XVII դարերում ի ղեմա Կ. Սրբեկացու, Հովհ. Քիլոսրանցու, Գր. Աղթամարցու և Ն. Հովսեփանի ստեղծագործություններին, մի կատարյալ ծաղկում է ապրում: Բացի եվրոպականից, Արեղյանը հայ բանաստեղծության վրա գտնում է նաև արևելյան, հատկապես պարսկական և արա-բական ազդեցությունների հետքեր: Եվ այդպես միայն, իսկ հայ հին բանաստեղծության զարգացման գործում նա հատկապես վճռական զեր է վերադառնում ներքին ազդակներին, որոնցից մեկն

«Հայկական վերածնության հարցի ուսումնասիրությունը ետքորդյան Հայաստա-նում աշխատության մեջ, Նեղինգի (Լ. Մերսլան) հայկական վերածնության գիտական խորքի սկզբնավորումը կազմում է մերսի 920-ական թվականների հետ, գրվելով, թե «Հայկական վերածնության գաղափարը 20-ական թվականների սիրո ստեղծ, և սեղան հաստատապես պնդում, թե էրբ «նախախորհրդային հայ պատ-մագրության մեջ ուղղորդի խնդր չկար» (էջ 26): Ըստ երևույթին Նեղինգը ան-տեսյակ է Արեղյանի 1916-ին ճրատարակած «Մ. Գրիգորի նորեկացին» և մասնավորա-բարձր 1917-ին սպաղարած «Ընդհանուր տեսության հայոց հին բանաստեղծության» աշ-խատեղյուններին: Նա սեղանի չէ նաև 1923-ին ճրատարակված Արեղյանի «Հայոց միջնադարյան ստակները և սոցիալական հարաբերությունները երանք մեջ ուսումնասիրությունը, այլպես չէր զրի (Նիտոն անհնալով Արեղյանի «Համասո-տություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության դաստիարակության» ճրատա-րակման թվականը), թե էրբ «Արեղյանը միայն ստանով տարի սպասելուց հետո՝ համարձակության ունեցավ վերադառնալու այդ հարցին (այսինքն՝ վերածնության-ը—Ս. Ը.) 1941 թ. և արևահետ՝ 1942 թվկին» (էջ 19): Այսպիսի անհիմն պնդու-մներ անկողջ առաջ, Նեղինգը պարտավոր էր նախապես լավ ծանոթանալ ավելի հարցի դաստիարակը:

էր նաև ժողովրդական բնաբերգությունը: Վերջինս XV դարից ի վեր թափանցում է գրականության մեջ՝ հանձնի «Քրուակյան» կոչված երգերի, որոնց մեջ լսվում է ռուս ժողովրդական սիրո և բնութայան էրբը, առանց որևէ կրոնական խառնուրդի»:

Եվ մեր հին բնաբերգությունը երկնքից կատարելապես իջնում է երկիր, դառնում աշխարհիկ և XVII դարում նաղաշ Հովսեփանի մոտ արդեն ձևեր է բերում իր հիթանոսական զվարթ բնավորու-թյունը: Այդտեղ մեր հին բանաստեղծության հակասական ձգտու-մները «Բեխտոնեական ոգին և աշխարհասիրությունը հաշտված են», իսկ նույն հարյուրամյակում, երկնքի և երկրի հակամարտու-թյունը ներսես վարդապետ Մոկացու կողմից սեռականապես լուծ-վել էր հօգուտ երկրի, և հայ մտքի ու բանաստեղծության մեջ XVII դարում արդեն իշխում էր աշխարհիկ ոգին:

Այսպես է Արեղյանը գնահատում և բնութագրում XI—XVII դարերի հայ բանաստեղծությունը, այն համարելով զարգացման մի բարձր փուլ հայ գրականության մեջ, աղջյունը հայ կյանքի ու աշ-խարհայացքի ինքնուրույն վերածնության:

Այդ դարերի գրականությունը, ըստ Արեղյանի, հետագայում «իր լեզվով և բնավորությամբ չի շարունակվում»։ Հարևան մաս-մեզական պետությունների պատճառած ավերածությունների հե-տևանքով երկրում հայ միտքի ու գրականությունն ապրում են մի իսկական անկում. «Մի երկրորդ անգամ էլ մեկնում ծաղկում է վանական կյանքը՝ նորոգելով հին կրոնական աշխարհայեցողու-թյունը և ստեղծելով հին նմանողությամբ և զուգափարենքով մի նոր դարար գրականություն»:

Մեր բանաստեղծության զարգացման հարցը շրջանն ահա, ինչպես նշվել է, Արեղյանն համարում է XVII—XIX դարերի գրա-կանությունը, որն անվանում է «հին կյանքի ու գրականության վե-րածնություն և հին նմանողություն գրականություն»:

Հնի այդ վերածնությունը հայ ժողովրդի կյանքում կարևոր հա-մարելով հանգրծել, Արեղյանն իրավամբ, պատմական զարգացման ստակառուից այդ շարժումն համարում է «իրապես մի հետադիմու-թյուն»:

1 «Քրուակյան երգերի (ինս՝ հայրենների) մասին Արեղյանը նման եզրակա-ցություն էր նուրից ստեղծել 10-ական թվականներին, որն հետագայում Նշարովից ու բյուրեղացով երա «Հին դասական ժողովրդական երգեր արդեն բնաբերված հետազոտության մեջ:

2 Մ. Արեղյան, Ընդհանուր տեսություն..., էջ 34:

3 Անդ:



Այսպէս, ահա, բանաստեղծութեան ծագման ու զարգացման մեջ առաջնությունը տալով նրա բովանդակութեանը, ոգուն ու զարգափարին, իսկ դրանք համարելով պայմանավորված հասարակական կյանքի երևույթներով ու հարաբերություններով, Արեղյանը հայ հին գեղարվեստական գրականությունը պարբերացնում և հետազոտում է բառ նրա զարգափարների, գրանց հակասությունների ու պայթարի, որոնք առաջ են մղում ու զարգացնում միջնադարյան հայ գրականությունը, պայմանավորելով անգամ գրական տեսակների ու ձևերի փոփոխությունները:

Սման մտտեցումներով հետազոտելով հայ միջնադարյան բանաստեղծությունը, Արեղյանը հետևում է գրա-պատմական երեւույթների զարգացման ճշգրիտ արամարանությունը, բացահայտում հայ բանաստեղծության զարգացման դարավոր պրոցեսը, սահմանում նրա հաջորդական օրինաչափությունները և գրականության պատմական զարգացման ողջ ընթացքը դիտում է իրրե մարմնի և հոգու, երկրի ու երկնքի, աշխարհիկի և կրօնականի մի հարստ և պայթար, փոխնփոխ հաղթանակներով, վերելքներով ու անկումներով, որ ի վերջը պսակվում է երկրային, աշխարհիկ, մարտնական գաղափարների ու զգացմունքների հաղթանակով:

Գրականության զարգացման Արեղյանի մշակած տեսությունը խոշոր առաջնիաց էր հայագիտության մեջ: Հին գրականության հետազոտությունը զրկում էր պատմա-հասարակական ու սոցիալ-քաղաքական լայն ասպարեղի վրա և պարզորոշ ցուցահանվում գրական երևույթների բոլոր փոփոխությունների կապն ու պատճառակցությունը հասարակական կյանքի ու գիտակցության մեջ կատարվող տեղաշարժերով:

Գրականության զարգացումը դիտելով կոնկրետ հայ երկրի ու ժողովրդի կյանքի ու ճակատագրի սերտ առնչությամբ և համարելով նրա ղոյն ու դիտակցության գեղարվեստական անդրադարձման արգասիք, Արեղյանը հայ բանաստեղծության ոգին ու նկարագիրը (չմխտելով նրանց վրա օտար ազդեցությունների թուղած հետևանքները) համարում է հայկական ինքնուրույն երևույթ, որով վերջ էր տրվում գրականության նախորդ պատմաբանների հայ գրականության վրա օտար ազդեցությունների գերազնահատման ու ճիշտ տեսությանը: Արեղյանի՝ օտար գրականությունների, հատկապես եվրոպականի, մասնավորապես Ֆրանսիականի հետ արած համեմատությունները, զայն էին ապացուցելու մեր գրականության ինքնուրույն զարգացումը և նույնիսկ գրական առան-

ձին երևույթների ծագման անկասկածելի ու վաղնիությունը եվրոպականից:

1923 թ. արդեն երևանի համալսարանի հայ հին գրականության համատու զասքնիացի (ազգագիտիզ) մեջ<sup>1</sup>, Արեղյանի նույն աչք տեսությունը համարվում է ու հարստացվում, բացի բանաստեղծությունից նաև հին գրականության մյուս տեսակներով, հեղինակների ու նրանց երկերի կոնկրետ գնահատություններով, որով կերպավորվում էր, առայժմ թեպետ կոնսպեկտային ձևով, հայ հին գրականության ապագա պատմության ընդհանուր կմախքը:

Նորն այստեղ այն էր, որ Արեղյանը V—XI դարերի եկեղեցական գրականությունը բաժանում էր չորս մեծ խմբի. 1. քաղցմանական և կրօնական գրվածքներ, 2. պատմագրություն, 3. հոգևոր երգ և 4. վերջինս զարգացումն հանդիսացող նարեկացու բանաստեղծություն: Գրականության ծագումնաբանության տեսակետից առաջնությունն հատկացված էր քաղցմանական և սկիս ինքնուրույն, կես կոմպիլյատիվ բնավորությամբ՝ կրօնական եմանդակական գրականությանը:

Հայոց հին գրականության հաջորդ մեծ շրջանը՝ XI—XVII դարերի գրականությունն Արեղյանն անվանում է «գրականության աշխարհականացում» և այն բաժանում չորս բաժինների, որպիսին ուրվագծի ձևով առկա էր արդեն «Ընդհանուր տեսության» մեջ: Առաջին բաժինը նվիրված էր կյանքի և աշխարհայացքի փոփոխությունը, որով հիմնավորվում էր գրականության աշխարհականացումը, երկրորդն անվանված էր հայրենասիրական ուրբեզություն, իրրն բանաստեղծական նոր տեսակ ու թեմատիկա, որ մտածուցում մեր գրականության մեջ հանձին կատարվեցուցու և հետագայում ներսես Ենրհայու և ուրիշների կողմից: Երրորդ բնագավառը կողվում էր ուսուցական գրականություն և առակներ, իսկ չորրորդը՝ աշխարհիկ բնուրբություն, որ բնաբերվում էին Ֆրիկի, Հովհաննես և Կոստանդին Նրկեկացիների, Մկրտիչ Նաղաշի, Հովհաննես Քլկուրանցու, Գրիգորիս Աղամանցու, այսպես կոչված Քուշակի և Նաղաշ Հովնաթանի սահղագործությունները:

Նախորդ աշխատության հետ համեմատած՝ այստեղ ոչ մի ուրություն չկար, բացառյալ վերջին շրջանի՝ XVII—XIX դարերի

<sup>1</sup> Մ. Արեղյան, Համատուության հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմություն, Պետհրատ, Երևան, 1924:

գրականության, որ առաջինում չէր ներառված ու բննարկված:  
Հայ Հին գրականության պարբերացման և վերածնության  
խնդիրը մինչև «Հայոց Հին գրականության պատմության» երևան  
գալը, մի վերջին անգամ՝ 1941-ին դարձյալ արժանանում է Արեղ-  
յանի բննությանը<sup>1</sup>:

Պարբերացման հարցում Արեղյանը կրկին պահպանում է իր  
1917 թ. տեսակետը, այն տարբերությունը միայն, որ հիմն աշտեղ  
խոսքը գլխավորապես միջնադարյան բանաստեղծության պարբե-  
րացմանն էր վերաբերում, այսպես այստեղ այն տարածվում է ամ-  
բողջ գրականության վրա: Պահպանված էին մնում գրականության  
զարգացման նույն շրջանները, բայց բովանդակության խիստ ընդ-  
լայնումով, առանձին շրջանների բնորոշումների մեջ լրացումների  
և նոր ձևակերպումների հավելումով:

Հայ Հին գրականության իր նախկին պարբերացման առանձին  
շրջանները Արեղյանն այժմ բովանդակավորում է ձևակերպում է  
հետևյալ կերպ. «Ա. սկզբից մինչև 5-րդ դար: Ավանդական բա-  
նաստեղծություն, ֆեոդալական բովանդակությամբ և ձևով, վեպ  
(էպոս), որ նոր մշակությամբ և նոր ստեղծագործությամբ հարա-  
տեսում է մինչև մեր օրերը իբրև ժողովրդական բանաստեղծություն»:

Բ. 5—11-րդ դար: Եկեղեցական գրականություն, եկեղեցա-  
ֆեոդալական բովանդակությամբ, եկեղեցական ձևով և տեսակ-  
ներով:

Գ. 11—17-րդ դար: Գրականության աշխարհականացումը,  
արդյունք հայկական ինքնուրույն վերածնության՝ քաղաքների աճ-  
ման հետևանքով, ձգտում դեպի աշխարհիկ կյանքն ու բնությունը,  
մերժում կղերա-միստիկական գաղափարախոսության, գրական  
նոր թևաներ և նոր տեսակներ, ժողովրդական լեզվով:

Դ. 17—19-րդ դարի առաջին կրթորդը ներառյալ: Եկեղեցական  
գրականության վերածնություն նոր կրոնական շարժման հետևե-

<sup>1</sup> Գրական հիշյալ շրջանը Հին գրականության մեջ տեղադրելու հարցում, ըստ  
Արեղյանի, Արեղյանը երկար տատանվել է. նա, ինչպես տեսանք, մեկ հիմնավորել  
է հիշյալ շրջանը Հին գրականության մեջ տեղադրման սխալ լինելը, մեկ հակա-  
ռակ իր նախորդ հիմնավորման, այն տեղադրել է Հին մեջ, մեկ դուրս է թողել,  
և ի վերջո «Հայոց Հին գրականության պատմություն»-ը քրեյու նախօրերին, հաս-  
տատարապես ներառել է իր ծրագրի մեջ, իբրև Հայ Հին գրականության զարգացման  
վերջին շրջան: Բայց վերահաս մտնելու պատճառով հիշյալ պարբերաշրջանը գրա-  
կանագիտորեն աչքուպ էլ մնացել է չմշակված:

<sup>2</sup> Պրոֆ. Գ. Մ. Արեղյան, վերածնությունը Հայոց Հին գրականության մեջ,  
ՍՍՏՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, 1941, № 5—6:

վանքով 14—16-րդ դարերի անկումից հետո: Նոր գրաբար և աշ-  
խարհիկ գրականություններ, տարբեր հոսանքներով և ազդեցու-  
թյուններով<sup>1</sup>:

Այս նոր պարբերացումն, ուրևմն, ընդգայնված էր ոչ միայն իր  
ընդգրկմամբ, իբրև Հայ Հին գրականության զարգացման ամբող-  
ջական պատկերի, այլև՝ ողով ու էությունը. գրականության տար-  
բեր շրջանների բնութագրման մեջ կարևոր տեղ էր հատկացված  
գրականության հասարակական կողմին՝ սոցիալ-դասակարգային  
կազմադրանքին ու բովանդակությանը:

Արեղյանն առավելապես ծանրանում է վերածննդի խնդրի  
վրա, այդ նպատակի համար առաջ բերելով «Համառոտության»  
համապատասխան դուրսն ամբողջությամբ և ՍՄ. Գրիգոր նարե-  
կացի» հետադրություններից մեկ հատված: Այդուհանդերձ նա մի  
բանի նոր գիտադրություններով առավել հատկանում ու ճշգրտում է  
Հայ Հին գրականության վերածնության իր նախորդ տեսությունը:  
Այս հարցի կապակցությամբ նա հիմնականում առաջ է բաշում  
երկու կարևոր խնդիր. ա) հայկական վերածնության ազգային  
բնույթը, և բ) նրա սկզբնավորման ժամանակը: Արեղյանն ամենից  
առաջ շեշտում է հայկական վերածնության ինքնուրույնությունը,  
այն համարելով «ազգային գրականության շարունակական դար-  
կացումն...», արդյունք այն ռեալիստական շարժման, որ հարյուր-  
ամյա խաղաղության ընթացքում առաջ էր եկել՝ սկսած 10-րդ դա-  
րի կեսերից»:

Վերածնության արտահայտություններից մեկն արվեստում նա  
համարում է նարտարապետությունը, իսկ գրականության մեջ՝ «դու-  
սանների ուրախության երգերը՝ հայրենները, որոնք վերածնության  
նախակարգվածներն են»: Այսպես, ընդունելով մեր գրականության և  
ընդհանրապես արվեստի վրա տար. հատկապես արևելյան կուլ-  
տուրական հոսանքների ազդեցությունը, Արեղյանը, սակայն, ի-  
րավամբ չի ընդունում X—XI դարերում Հայ իրականության մեջ  
անտիկ արվեստի և գրականության աշխարհի ծանոթության հաս-  
տատարական գրականությունը: «Որի հետևանքով կերպարանափոխվել մեր եկե-  
ղեցական գրականությունը»: Հայկական վերափոխված գրականու-  
թյունը նա համարում է արդյունք «հեթանոսական դարերի բուն  
աշխարհիկ ողով և աշխարհայեցողության» վերածնան, հակառակ  
կրոնա-եկեղեցականին: Հայ վերափոխված գրականության գլխա-

<sup>1</sup> «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 83—86:



վոր հատկանիշներն Արեղյանը նույնն է համարում, ինչ եվրոպական վերածնության գրականության մեջ, իսկ այդ շրջանի հայ գրական արտադրանքը՝ «հայ բաղաբացության, հայ բուրժուալիստի գրականություն»<sup>1</sup>:

Հայկական վերածնության սկզբնավորման ժամանակի խնդրին Արեղյանը մոտենում է դեալեկտիկական այն օրինաչափությամբ, թե ամեն մի երևույթի մասնացումն իր բարդավանման մեջ է, և ըստ այդմ էլ հայ վերածնության սկիզբը տեսնում է տակավին X դարի երկրորդ կեսերին, հին կրոնա-եկեղեցական ուղղությունների ծաղկման ժամանակ, հատկապես ճարտարապետության և Գրիգոր նաբեկացու երկերի մեջ: «Գրիգոր նաբեկացին,— գրում է Արեղյանը,— իր էությունը պատկանում է նախորդ գրական շրջանին, բայց նրա երկերի մեջ արդեն երևում են վերածնության սաղմերը, ոչ այնքան բովանդակությամբ, որքան ձևով»<sup>2</sup>:

Արեղյան ուրեմն, Արեղյանը նոր լրացումներով ու փաստարկներով բուրբում էր հայկական վերածնության իր հին տեսությունը, որի սոցիալ-տնտեսական ու զաղափարախոսական փաստացի հիմնավորումը տվեց երկու տարի անց՝ 1943 թ. «Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկիզբներում իրեն հիմք հանց հին գրականության վերածնության շրջանի»<sup>3</sup> մեծարժեք հետազոտության մեջ: Վերջինս նույնությամբ դետեղվեց նրա «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորում:

Այստեղ Արեղյանը պատմագրական և հնագիտական, հատկապես Մատի և Օրբելու՝ Աստի պեղումների բնձնած փաստացի հարուստ հին ու նոր տվյալներով, բացահայտում էր հայկական վերածնության ծաղկման ու զարգացման սոցիալ-տնտեսական, կուլտուր-զաղափարախոսական արմատները: Նա X—XI դարերի խաղաղ շինարարության շրջանում Հայաստանում արագ բարձրացող անտեսություն, բարդավաճ բաղաբանների, ծաղկող արհեստների ու առևտրի, բաղաբանի բնակչության արագ բարձրացման և հարստացման, նրանց ճոխ ու շքեղ կենցաղի, զվարթ կյանքի, ուրախ ժամանցների, հոյեղորականության աշխարհիկ փարթամ կյանքի ձգտման, նրանց բարույական անկման մասին վկայող համառ ու

անհերքելի փաստերի մեջ իրավացիորեն տեսնում էր հին կյանքի ու բարքերի կատարյալ փոփոխություն, որն առաջ էր բերում սոցիալ-բաղաբան, իրավական ու բաղաբանական լուրջ տեղաշարժեր: «Ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի՝ ազնվական և եկեղեցականության կողքին,— կողակացնում է Արեղյանը,— տնտեսապես, այսպես և մտավորապես բարձրանում և դիրք է ձեռք բերում նոր դասակարգը—հարուստ բաղաբանությունը, որ նույնիսկ մրցում էր ֆեոդալների հետ: Սոցիալ-բաղաբանական կատարյալ մրցում էր հասարակագրի փոխվելով՝ փոխվում է և հասարակական պոետիկան, իրավունքի հասկացությունը, այսպես և զաղափարախոսությունը կրոնի, մորալի-բարոյականության, արվեստի ու գրականության վերաբերյալ, նախորդ շրջանի զաղափարախոսությանը հակադիր: Հեաղհանել իշխանության և «Իրավունքի լուրջ» ուղղվել ֆեոդալներից անցնում է լուրջազ առևտրի վրա»: Մտեղծվում է դեմոկրատիկ հոսանք բնորոշ ֆեոդալական հասարակագրի»<sup>4</sup>:

Այլ միջնագրի հայ հասարակության զոյի ու գիտակցության մեջ անդի ունեցող այդ փոփոխություններից Արեղյանը հեղափոխական արժեք էր վերստահում ազանդավորական շարժումներին, հատկապես թնդրակեցիների ազնվին, որն, ըստ նրա, լինելով «եկեղեցուց անկախ ազատ մտածողության» արտահայտություններից մեկը, դառնում է մարմնավորված մի «պայշար նոր զաղափարախոսության համար՝ ընդդեմ նախորդ շրջանի զաղափարախոսության, որի պաշտպանն էին իշխողները—եկեղեցին և ազնվականությունը»: Պատմական բաղաբանական փաստերի գիտական նոր լուսարանությամբ, թնդրակեցիների շարժումը Արեղյանը գնահատում է իրեն սծայրահեղության հասած մի բողոք վանական ու ճգնավորական կյանքի, եկեղեցական իշխանության, եկեղեցու կրթության ու զաղափարների դեմ»<sup>5</sup>, «հակահեղեցական մի շարժում», որ հետևանք էր ոչ թե կրոնա-զաղափարախոսական վերացական դրողունների, այլ կոնկրետ սոցիալ-դասակարգային ու հասարակական մորալի՝ բարոյականության մեջ կատարված տեղաշարժերի՝ «Իսկ,— գրում է Արեղյանը,— եղև է նախ՝ բաղաբանության փարթամ զարգացման և աշխարհիկ կյանքին հակվելու հետևանքը. այսպես՝ եկեղեցականության վրա բարձր, հոգեբանականներից շատերի դեղժումները, կեղծավորությունը, եկեղեցական իշխանու-

<sup>1</sup> «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 87:

<sup>2</sup> «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 88:

<sup>3</sup> «Տեղեկագիր», 1940-41 թ. Հայկական ֆիլիալի, Երևան, 1943, № 1:

<sup>4</sup> «Տեղեկագիր», 1943, № 1, էջ 43—44:

Յյան ճնշումները, բուն վերարժիւնները ղեկի ազատ մտածողութիւնը— այս ամենը որդի էին դրանցից զժողովներին հակառակ դիրք բռնելու<sup>1</sup>: Եվ ապա՝ թնդրակցան ազանդի մի երրորդ պատմական միտում էլ է բացահայտում Արեղյանը. այդ շարժումը ձրգտում էր նաև եկեղեցու «Տիմոնովին վերանորոգութեան—եկֆորմացիայի», «չառ ալեկի վաղ, բան Լուսինի և ուրիշների գործունեությունը»: Պատմական նման բազմակերպ գործունեից ծագած թնդրակցան շարժումը Արեղյանը դնահատում է իրբև «մի հեղափոխական ընդդիմադրություն... իշխող դասակարգի դեմ, մի դասակարգային պայքար, որ անխնայ արտի բնաշինչ անել աշխատեին իշխողները»<sup>2</sup>:

Ահա X—XI դարերի Հայաստանի կյանքում կատարվող այդ բազմաբովանդակ խմորումներին ու անդաշարժերին Արեղյանը պատմական մեծ նշանակություն է վերապահում: Գրանք, ըստ Արեղյանի, գաղափարախոսութեան մեջ, երկրի պատմական վայրիվերումների հետևանքով, լուրջ վերափոխություն են մտցնում, թեպետ դանդաղ, բայց կայուն ու տևական ձևով, երբ բնութեանն ու իրական կյանքին սկսվում է աստիճանաբար առավելություն տրվել, երբ հոգին ետ է մղվում մարմին առաջ, և «երավազուրկ մարմինն ու բնությունը ստանում են իրենց իրավունքը»: Գաղափարախոսութեան մեջ կատարված այս փոփոխությունը դանդաղ ու աստիճանաբար անդրազանուում է գրականութեան մեջ, մինչև որ երկար դարգացումից հետո «երկրավորին տրվում է առավելություն»:

Հայ հին գրականութեան առանձին խնդիրներ շոշափող Արեղյանի վերջին հետազոտությունը՝ «Շվիհաննես Սարկավազ վարդապետան» է, որ տպագրվեց 1944-ին Հայկ. ՄԱԻ ԳԱ «Տեղեկագիր»-ում<sup>3</sup>, ապա նույնութեամբ մտավ «Հայոց հին գրականութեան պատմության» երկրորդ գրքի մեջ:

Արեղյանը Սարկավազ վարդապետին համարում է «մեր վերանայության նոր մտավոր հասարակ առաջին արտահայտիչներից մեկը» ոչ միայն դիտությունը մատուցած իր նշանավոր ծանայություններով, իրբև գիտնական, փիլիսոփա, մատենագիր, ժամանարդես ու մանկավարժ, այլ զլիսավորապես նրա զեղարվեստական գործերով, որոնց մեջ անդրադարձել են բանաստեղծի նոր ու թարմ

գաղափարներն ու զեղազտական բովանդակները: Սարկավազ վարդապետի պատմական առաջին խոշոր ծանայությունն Արեղյանն համարում է այն, որ նրանով է սկզբնավորվում հայրենասիրական գաղափարախոսությունը հայ գրականութեան մեջ: Հիշյալ գաղափարախոսությունն արդյունք էր կոնկրետ պատմական իրականության, այսինքն իրական կյանքի հանգամանքների, երբ սելջուկյան թուրքերի գործած խոզութությունների հետևանքով հայ ժողովուրդը գանգավածարար վայրատված հեռանում էր բուն երկրից: Եթև Արիստակես Լատիվերտցիի ողբում էր երկրին հասած այդ զժախտությունը միայն, ապա նրա կրտսեր ժամանակակից Սարկավազ վարդապետը արդեն ջգրված հայ ժողովրդին հավաքելու՝ «անհն ու գաղափարն է մարմնավորում Ղևնդյանց շարականի մեջ, մի ձգտում, որ անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն աղու է» և երկար դարեր հոգևոր անունը է ծառայել հայրենի երկրից բնահանված ժողովրդի զանգվածների համար, որոնք դեռ սուշերը կարող էր զարձնում էին ղեկի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստանը: «Տառապանքից աղատվելու և Հայաստանում մնալու» հայրենասիրական այս գաղափարն ու իղձը, Արեղյանն իրավամբ համարում է նոր մտավոր հոսանքի արգասիք, երբ բանաստեղծությունը «կրտնական զգացումից և հայրենասիրական ողբից հետո գտնում է արդեն իր կարևոր և մեծ թեմաներից մեկը»՝ հայրենասիրությունը, որ արդյունք լինելով իրական կյանքի պայմանների, հարատևվում է գրականութեան մեջ դեռ երկար՝ մինչև XIX դարը, բանի որ «հայ ժողովրդի վիճակը նույնն է մնացել 13-րդ դարից մինչև առ ի 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները»: Ճրված ու հավանված ժողովրդին բուն երկրում համախմբելու հայրենասիրական այդ թեման, Արեղյանն իրավամբ, բովանդակության տեսակետից, «մի ամբողջ գրական տեսակ է» համարում, որ սկիզբ է առնում մեր գրականութեան մեջ «Սարկավազ վարդապետի այն ըստ երևույթին աննշան հոգևոր երգից»: Սարկավազի նոր մտավոր հոսանքի՝ վերածնունդի արտահայտիչ լինելը արականութեան մեջ արվեստագրական նոր վերածնունդի մեջ հասած միակ բերվածի գրականագիտական ու արվեստագրական նոր վերածնունդի մեջ Արեղյանը բացահայտում է արվեստի (մասնավորապես երաժշտության ու բանաստեղծության) ծագման մի նոր տեսություն, որն իր էությունը ու բնույթով հա-

1 «Տեղեկագիր», 1943, № 1, էջ 51:

2 Անդ, էջ 52:

3 № 1—2, էջ 31 և հաև:



կառակ էր հին կրօնական աստվածային «հայտնութիւն» ու զերբ-նական շնորհատուութեան նախապատճառի տեսութիւնը: Ըստ Սարկիզի տեսութեան, արվեստը իր ծագումով «բնութեան նմանութեան ու արդյունք է», և «բանաստեղծութեան արդարւոր բնութիւնն է»: Արվեստագետներն ու բանաստեղծները «նմանվելով բնութեանը ստիճարում են իրենց արվեստը, բայց չեն հասնում իրենց արվեստի նախազգալի արվեստը» և «միշտ ցած են մնում բնութիւնից»: Իսկ արվեստագետի էրզիլու շնորհքը «բնականի պարզէ է», այսինքն բնատուր է:

Բնութեան ու բնականին վճռական տեղ հատկացնելու այս մեկնակեցութեամբ Արեղյանը դիտում և դեհատում է պատմա-փիլիսոփայական տեսանկյունից, իբրև արդյունք վերածնվող մտափոք նոր հոսանքի, վկայությունն այն կորուստի, «որ եղել է ձգտում դեպի բնութեան և ուղիղտեսլիվում իրեն մեջ, որով զլիսավոր նշանակութեանը արվում էր ոչ թէ հայտնութեան, այլ բնութեան գիտողութեանից բանականութեամբ ձևեր բերած ճշմարտութիւններին: Դրա արդանքն է եղել արվեստի ծագման նոր տեսութիւնը և առհասարակ մի նոր արվեստի պահանջը»: Եվ Սարկիզի վարդապետի պատմական մեծ արժեքը Արեղյանը տեսնում է գրական այդ նոր տեսութեան առաջընթացն և հաջող իրագործման մեջ: Բնութեան, այսինքն իրականութեանը նմանվելու, հնարակեցութեամբ Սարկիզի առաջընթացն նոր արվեստի այս պահանջը «սարգին մի մեծ նորութիւն էր մեր գրականութեան մեջ և կարող էր ծագել միայն վերածնութեան դարում, իբրև հետևանք այն նոր ոգու և ազատախոհութեան, որ առաջ էր եկել կյանքի մեջ»:

Սարկիզի այդ տեսութիւնը, որ եղել է հասարակական ընդհանուր ձգտումների իմաստասիրական-գեղարվեստական արտահայտութիւնը, ըստ Արեղյանի, անհետևանք չի մնում, այլ XXI և հետագա դարերում բանաստեղծները, թիկնուղ հոգեբանական, այլևս չէին կարող գիտակցաբար շնորհազարմանի բնութիւն և իրական կյանք և շնորհի հայտնաբերութիւնն իր գաղափարախոսութեամբ: Գեղարվեստական այդ նոր հայացքը ամենից առաջ ազդում է բանաստեղծութեան վրա, աստիճանաբար մատենագրութիւնից դուրս են մղվում ճոռում ու սեթեթե ձևերը, և «պարզութիւնն ու բնական մտածողութիւնը սկսում են իշխել ընդհանրապես»: Այդ էլ հենց Սարկիզի վարդապետի տեսութեան կենսունակութեան մե-

ծագումն ապացուցն էր. դրանով էլ Սարկիզի տեսութիւնը ձևեր է բերում պատմական խոշոր արժեք:

Այդպես, Արեղյանը, մի կողմից շուրհանես Սարկիզի գաղափարախոսութիւնն ու գեղարվեստական տեսութիւնը նոր մտափոք հոսանքի արդյունք համարելով, մյուս կողմից, սակայն, Սարկիզի տեսութեան ու գաղափարախոսութեան մեջ բացահայտում է հայկական վերածնութեան բուն ոգին ու հատկութիւնները: Դրանով Արեղյանը Սարկիզի կողքը մի նոր ու զորեղ կույտ է դարձնում վերածնութեան իր տեսութիւնը պատմա-փիլիսոփայական ու գրականագիտական հայեցակետներով խորացնելու և հիմնափոխելու համար:

Այսպես, աճա, հայ հին գրականութեան անդամատնում Արեղյանի կատարած մոտ կեղտաբայ տարբեր բնույթի աշխատանքներն ու հետազոտութիւնները նվիրված էին մեր հին գրականութեան հանգուցային խնդիրներին, գրական նշանավոր գեմերին ու երկնութիւններին, որոնք լինելով հայ հին գրականութեան գիտնող արտահայտութիւնները տարբեր զարազաններում, իրենց մեջ էին խառնում և բնորոշում մեր հին գրականութեան պատմութիւնը, նրա զարգացման միտումներն ու ուղղութիւնը՝ սկսած նրա սկզբնավորման ակունքներից մինչև նոր ժամանակները:

Արեղյանի այդ հետազոտութիւնների մեջ առաջ քաշված տեսութիւններն ու եղբաճանգումները, գրական երևույթներն ու գեմերին նրա տված նոր ու թարմ գնահատութիւնները դարձան այն պարարտ հողը ու կայուն հիմքը, որոնց վրա բարձրացավ նրա գաղափարակաճի «շայտց հին գրականութեան պատմութիւն»-ը:

#### Գ. ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Հայ հին գրականութեանն ու բանահայտութեանն նվիրած հետազոտութիւնների մեջ Արեղյանը հանգել էր արգեն այնպիսի արդյունքների, որոնցով պարզ ուրվազգծվում էր հայ հին գրականութեան ամբողջական պատմութիւնը՝ իր զարգացման գրեթե բոլոր էական օրինակաբանութիւններով:

Այդուհանդերձ, հայ հին գրականութիւնը կարող էր դիտական վերլուծական համակարգման և ամբողջական հետազոտութեանն Այդ գործին է ի վերջո ձևոնաստի լինում Արեղյանը «շայտց հին գրականութեան պատմութեան» աշխատութեամբ:

1 «Տեղեկագիր», 1944, N 1—2, էջ 47:

2 Անք:

1 Մ. Արեղյան, շայտց հին գրականութեան պատմութեան, գիրք I, Երևան, 1944, գիրք II, Երևան, 1946:

Հայ հին գրականության առարկայի ըմբռնումը դասական հայագիտության մեջ, աննշան բացառությամբ, նույնանում էր Հայ հին մատենագրությանը: Արեղյանը հին գրականության առարկա խորնդիրենբրին նվիրած իր հետազոտությունների մեջ, ինչպես իսաբան, հետևելով եվրոպական գրականության պատմության հարուստ փորձին ու ավանդներին, առարկայի ըմբռնման մեջ նոր մտոեցում է ցուցաբերում: Նա ամբողջ հին գրականությունից, սկզբում իրեն ամենահիմնականն ու առաջնայինը, դատում է զուտ գրական-գեղարվեստական ստեղծագործությունները, ապա՛յն թե՛ դրանց առանձին մանրակրիտ հետազոտությունը (առասպելներ, ժողովրդական վեպ, հոգևոր երգեր, նարեկացու ստեղծագործություն, առակներ, հայրեններ) և թե՛ դրանց պատմական զարգացման բնդհանուր տեսությունը (սեփոհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության): Սակայն, դրա հետ մեկտեղ, նա Հայ հին գրականության պատմության գաղափարի մեջ ներառնում է նաև զրական մյուս տեսակները (պատմագրություն, պերճախոսություն, վարքագրություն և այլն), առաջնությունը միշտ և ամենուրեք տալով գեղարվեստական գրականությանը: Առարկայի նման ըմբռնման տեսական ձևակերպումը նա տալիս է «Հայոց հին գրականության պատմության» առաջարկում: Գեղարվեստական երկերը համարելով գրականության պատմաբանի հետազոտության բուն առարկան, Արեղյանը միաժամանակ նշելով հին գրականության առանձնահատկությունից, ուր բանաստեղծականն և ոչ բանաստեղծականը կազմում են մի շտարբերակված միություն», ուր մաքուր գեղարվեստական գործերը փոքր քանակ են կազմում՝ հին գրականության պատմության հետազոտության առարկա է համարում և դարձնում բոլոր այն երկերը, որոնք այս կամ այն չափով, թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ աղբյուրում են գեղեցիկ գրականության հետ: Առաջնությունը տալով գեղարվեստական զովանդներին, նա երկրորդական տեղ էր վերապահում վիպաբանություններին, իրեն «Հին գրականության վիպական պատմներ», բայց «ոչ մաքուր գեղարվեստական երկեր», պերճախոսությունը (ձառեր), որոնք կրոնական բովանդակությամբ հանդերձ, «Նորիված են հետադարձված վրանձ ալվեստով», պատմագրական երկերին, որոնք հորինված հաճախ հետադարձական ձևերով, պերճ ոճով, և երբեմն էլ իրենց մեջ վերամշակությամբ ներառնելով ավանդական վիպական դրույցներ ու պատմներ, վեր են ածվել բանաստեղծականի և պրոզայիկո խառնուրդի:

Հայ հին գրականությունը շնչկուտացնելով ժամանակի բարձր զարգացման հասած օտար կուլտուրաներից ու գրականությունից և այն զինելով նրանց հետ ունեցած սերտ աղերսի մեջ, Արեղյանը նշանակալից տեղ է հատկացնում նաև թարգմանական գրականությանը, իրեն հայ գրական մշակույթի կարևոր ու բաղկացուցիչ մասի:

«Հայոց հին գրականության պատմության» մեջ հիմնականում պահպանելով նախկին պարբերացումը, Արեղյանը, սակայն, մի շատ կարևոր նորություն էր մտցնում այնտեղ: Դա նրա «մաքստման գրականության» տեսությունն էր, որը զարգացրել էր նա զետ 1941 թ. «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» հետազոտության մեջ:

Ինչպես իր պարբերացման ելակետային սկզբունքի մեջ առհասարակ, այնպես էլ տվյալ խնդրում, Արեղյանը նկատի է առնում ոչ թե գրականության երկրորդական, ձևակա հատկանիշները, այլ գաղափարական բովանդակությունը՝ «նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությանը»: Այս մտոեցմամբ էլ վերանայելով իր նախորդ պարբերացման երկրորդ շրջանը («Եկեղեցական գրականություն»), առավել խոր ու բազմակողմանի զինելով տվյալ շրջանի գրականության բուն ոգին ու զարգացումը, նա հիշյալ շրջանը վերանվանում է «Եկեղեցա-խաղաղական մատանական գրականություն»:

Այս շրջանի գրական-բանահյուսական տարբեր հուշարձաններում գիտնականը հայտնաբերում է մի նոր ինտելեկտուալ միտում, այն է՝ «ազգային խիստ մաքստում նախ» պարսից Սասանյան տերության ու հուլյան, հետո՝ արաբական բնասպետության զեմպ: Այսինքն քաղաքական մաքստում, որ գալիս էր տվյալ շրջանի վիպական ավանդական բանահյուսությունից և իր խոր հիմքերն էր գրում նաև գրականության մեջ: Սակայն «մյուս կողմից»,— դրում է Արեղյանը,— այս շրջանի գրականության համար բնորոշիչ է նաև եկեղեցական դասի ձգտումն ու պայքարն իր գաղափարախոսությունը հաստատելու հայ ժողովրդի մեջ, մինչև որ 10-րդ դարի երկրորդ կեսին թուլանում է օտարների զեմ մաքստումը, գերիշխում է եկեղեցական աշխարհայեցությունը, որին ենթարկվում են նաև իրենց իշխանությունների մեջ վերականգնված ազնվականները: Այսինքն, արտաքին-քաղաքական մաքստման հետ մեկտեղ ստկա է



Նաև ներքին կրոնական աշխարհայացքի և իշխանության հաստատման համար մղվող մի պայքար: Գրա, ինչպես նաև աշխարհիկ դադափարների, հայրենասիրական ողու առկայծումների և շաղգային անկախությունն ու ընդհանուր շահերը պաշտպանելու ուժեղ ձգտման գրական-գաղափարական իրավությունների վրա է խարսխում Արեղյանը մարտման իր տեսությունը:

Աղբյուս, ուրեմն, գրական-դեղաբովանական փաստերն ու կրեվտյաները սխտեմավորելով բոտ նրանց պատմա-հասարակական բովանդակության յուրահատկությունների, Արեղյանն ի վերջո բուանդծում է հայ հին գրականության պատմության մի կատուցիկ համակարգություն, ուր մեր հին գրություն հեղինակներն և հուշարձանների տեղաբաշխումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

**Առաջին շրջան:** Պարբերաշրջանը բնութագրող խորագիրքն է. «Նախնական առասպելա-պատմական բանահյուսություն». ընդգրկվող ժանրերն ու բաժիններն են. ա) Հին առասպելներ՝ ներառյալ նախնական աշխարհայացքն ու հավատալիքները, հմայական աղոթիկերը, սեռոտի գրույցները և այլն. բ) Ավանդական վեպ: Սըրանց մասին մանրամասն խոսված է նախորդ գլխում:

**Երկրորդ շրջան:** Ընդհանուր բնորոշիչ խորագիրքն է. «Կենդեցա-Բաղաբակն մաբաումե գրականություն». ստորարածանված է հետևյալ բաժինների ու ենթարածինների՝ հեղինակներով հանդերձ.

ա) Մաբաում պարսկական և հունական ձգտումների դեմ: բ) Թարգմանական գրականություն (մի բանի բնորոշ նմուշներով):

գ) Առաջին հեղինակներ (հիշյալ շրջանի գրականության ընդհանուր բնութագրություն).

1. Մահակ Պարբե, 2. Մերոպ Մաշտոց, 3. Եղնիկ Կողբացի և միջնադարյան բրիտանենական աշխարհայացք:

դ) Առաջին պատմավիբեր.

1. Կորյուն վարդապետ, 2. Ազաթանդեղոս, 3. Փալստոս Բուդանդ:

ե) Ժողովրդական վեպ («Պարսից պատերազմ»՝ ընդհանուր բովանդակությամբ, գաղափարական ու զեղարվեստական մանրակրկիտ վերլուծումներով):

զ) Դասական պատմաղիբներ.

1. Մովսես Խորենացի, 2. Եղեղե, 3. Ղազար Փարպեցի:

է) Վկայաբանություններ.

1. Թագիոս Առաքյալ և մանդուխտ կույս, 2. Շուշանիկ վարդնիբ:

բ) Դավանարանական պայքարի գրականություն (ընդհանուր գաղափարախոսություն, հեղինակներով և գործերով):

թ) Բանաստեղծություն.

1. Կոմիտաս կաթողիկոս, 2. Դավթակ Քերթուդ: Անանիա Շիրակացի:

ժ) Պատմագրություն.

1. Սերեոս Եպիսկոպոս:

ժա) Վիպական բանահյուսություն.

1. Զրույցներ «Պարսից պատերազմ» ցիկլից, 2. «Տարոնի պատերազմ»:

ժբ) Մարաոում արարական բննալիստության դեմ.

1. Ղեղեղ պատմագիր, 2. Հովհաննես կաթողիկոս Գրասխանակիրոցի:

ժգ) Տոհմային պատմագրություն.

1. Թովմա Արծրունի, 2. Անանուն պատմագիր, 3. Մովսես Կաղանկատացի:

ժդ) Վկայաբանություն.

1. Վահան Գողթնացի:

ժե) Վիպական բանահյուսություն.

1. Պատմական գրույցներ:

ժզ) Հոգեոր երգ (ժագումը, պարզացումը, ձևն ու բովանդակությունը):

ժէ) Խաղաղ շինարարության դար.

1. Սանփանոս Տարոնեցի Ասողիկ, 2. Գրիգոր Նարեկացի:

**Երրորդ շրջան:** Ընդհանուր վերնագիրքն է. «Վերածնություն գրականություն». այն ստորակարգվում է հետևյալ բաժինների.

ա) Կյանքի և աշխարհայեցության փոփոխություն:

բ) Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ.

1. Գրիգոր Մաղիստրոս Պահլավունի, 2. Արիստակես Լաստիվերոցի, 3. Հովհաննես Սարկավազ վարդապետ, 4. Դավիթ Այվակոս:

գ) Ժամանակագրություն.

1. Մատթեոս Ուսույեցի և ուրիշներ:

դ) Աշխարհիկ ողու վերածնում.

1. Ներսես Շնորհալի, 2. Ներսես Լամբրոնացի:

ե) Առակագրություն.

1. Մխիթար Գոշ, 2. Վարդան Այգեկցի և «Առակը Վարդանայ»,
3. Սոցիալական հարաբերություններն առականների մեջ:

դ) Պատմագրություն և ժամանակագրություն:  
է) Բանասեղծություն:

1. Մանփաննոս Օրբելյան, 2. Խաչատուր Կեչառեցի, 3. Տրիվ,
4. Հովհաննես Նրզնկացի, 5. Կոստանդին Նրզնկացի:

- բ) Եկեղեցական գրականության վերջալույսն և արևմտաբ.
1. Ճիզգեր անկման առաջն առնելու համար, 2. Առաքել Մյուսեցի:

Այստեղ վերահաս մահը ընդհատում է Արեղյանի մշակած հայրց հին գրականության պատմության պարբերաշրջանների շարադրանքը, որն, ըստ հեղինակի նախատեսած ծրագրի, շարունակվելու և ընդգրկելու էր հետևյալ գործերն ու հեղինակներին.

3. Առաքել Բաղիշեցի:

Յ) Վիպական գրականություն.

1. Ֆարման Մանուկի սիրավեպը:

ժ) Տաղասացություն.

1. Մկրտիչ Նաղաշ, 2. Հովհաննես Քլշուրանցի, 3. Գրիգորիս Աղլաւարցի, 4. Անանուններ, 5. Գուսանական տաղեր (հայրեններ):

Ապա վերջին շ Ր Բ Ր Ո Ր Ղ ամփոփել շ Բ Զ Ա և Ը՝ «Փրակաւնության ճորգովը 17—19-րդ դարերում»:

Պարբերացման համար կախկտ ընդունելով գրականության բովանդակությունն ու այնտեղ արտացոլված պատմական իրականությունը, Արեղյանը նախադրական շրջանի հայ ավանդական բանահյուսությունը դիտում է իբրև նախնական առասպելաբանական աշխարհայացքով հայ ժողովրդի պատմական վաղ իրականության գեղարվեստական անդրադարձում, այն մկրտում «առասպելապատմական» բնութագրական անունով և գնում իբրև զրապատմական ընթացքի սկիզբ: Հաջորդ պարբերաշրջաններում, դարձյալ միևնույն կախկտով, ավանդական բանահյուսությունը հավասարապես քննում է գրական երկերին ղուպահո, հաշվի առնելով հատկապես նրանց դրավոր ավանդման հանգամանքը:

Արեղյանի պարբերացման մեջ ցայտուն դրսևորվել են հայ գրականության դարգացման բոլոր պատմական փուլերը իրենց գաղափարաբանական ներքին նկարագրով ու որակական անցումներով: Հայ հին գրականության ամենաքննորոշ շրջանները ընդգրկված են II և III պարբերաշրջաններում: Գրանց մեջ է մտնում V—XVII

դարերի գրականությունը, որն ըստ իր ներքին գաղափարաբանական միավորության ու բնույթի, գրական տեսակների առաջացման ու բարգավաճման, իր պատմական զարգացման որոշիչ փուլերով, իրավում էր կատարում է որակական տարբեր ընդհանրություններին: Ինժ ներկորդ պարբերաշրջանին (V—XI դարերի գրականությանը) առավել բնորոշ է պատմագրությունն ու դավանաբանական, մեկնաբանական, վարքագրական և գրականության սյրոգայիկ այլ տեսակները, այսպե ևրորդ պարբերաշրջանին (XI—XVII դարերի գրականությանը), սկսած երկրորդի վերջերից իսկ՝ բնորոշն ու առանձնահատուկը դառնում է բանաստեղծությունը, որի իշխող ողին ու մոտիվներն աստիճանաբար վերածվում են աշխարհականացման:

Հայ գրականություն սկզբնավորումը տեսնելով տակավին ծոզովրդի վաղնջական գեղարվեստական մտահայեցությունների՝ նախնական դյուբա-հմայական բանածեերի, սնահավատական զրույցների, բնության ու հասարակական կյանքի երևույթները վերաբարձող դիցաբանական-դյուցազնական առասպելներ, պատմա-առասպելաբանական վեպերի ու զրույցների մեջ, Արեղյանը, սակայն, ունի զրական ընթացքը կապում է զրավոր զարույթյան երևանգայու հետ, երբ թարգմանությունների միջոցով ընդհանուր գրական ավանդներն ու տեսակները փոխանցվում են նոր ձևավորվող հայ զարույթյանը: Սեփական գիր ու գրականություն ունենալու շահագրգռությունների մեջ առաջնությունը տալով եկեղեցուն ու հոգեվորականությանը, Արեղյանն հենց այդ հանգամանքով էլ բացատրում է նախնական թարգմանությունների կրոնական բնույթը: Այդ թարգմանություններով քրիստոնեական գաղափարախոսությունն ու եկեղեցա-ծիսական կարգն ու աղթները թափանցում են հայության մեջ: Բայց ոչ միայն այդ թարգմանություններին նա մեծ արժեք է վերապահում ընդհանուր կուլտուր-պատմական տեսակետից: Նախնական թարգմանությունների ամբողջով ստեղծվում է թարգմանական գործը շարունակելու ավանդություն, որով և 5-րդ դարում արդեն առաջանում է հայկական թարգմանական ճոխ գրականությունը: Եր այս ուղղությունը հայկական հին գրականությունը շարունակում է պահել հին հայերենով և հետագա դարերում, կրեմներն ուժեղ, կրեմնն թուլացած կամ ժամանակավոր կերպով դադար առած... Գրանով ընդարձակվում է հայ գրագետների ու գրողների մտավոր հորիզոնը. նրանք սահմանափակված չեն մնում այրենական մեջ, այլ շարունակ հաղորդակից են դառնում արևմտյան քրիստոնյա աշխարհին, երկամ ժամանակ նաև ասորիկանին, ձևոր



են բերում նոր հասկացություններ և նոր աշխարհայեցություն: Այդ նպատակում է բնականորեն հայ կուլտուրայի զարգացմանն և ազգային ինքնազգիտացությունն առաջ բերելուն<sup>1</sup>:

Քարմանական գրականության ունեցած նշանակության կուլտուր-պատմական նման բմբռնումով Արեղյանը բացահայտում է թարգմանությունների խաղաղացած պատմական խոշոր գերը հայ նոր ձևավորվող գրականության սկզբնավորման և հետագա զարգացման մեջ: Ընդհանուր եկեղեցական գրականությունից V և հետագա դարերում կատարված թարգմանությունների միջոցով, բացի ազգայիններից ու հոգևոր երգերից, հայ գրականությանն են փոխանցվում հետևյալ գրական տեսակները. բաղբ, կանոն, քառյակ, ճառ, շատագովություն, մեկնություն և այլն: Այդ տեսակներից զատ, հայ գրականության մեջ են անցնում փիլիսոփայական, դավանաբանական, ճարտասանական և քերականական բնույթի երկեր, ինչպես նաև գրական մի նոր տեսակ՝ պատմությունը, որ այնքան մեծ զարգացում է ստանում հայ գրականության մեջ: Պատմական գրվածքների թվին են պատկանում նաև վկայաբանություններն ու վաճառությունները: Գրական այս տեսակների միջոցով էլ, ահա, հետագայում զարգանում է հայ հին գրականությունը:

Նոր սկզբնավորվող հայ գրականության մեջ թարգմանություններին նման մեծ զեր վերապահելով հանդերձ, Արեղյանը ցույց է տալիս թարգմանություններին դուրբիաց հայ ինքնուրույն գրականության միաժամանակյա առաջացումը, բանի որ հայ առաջին թարգմանիչներն իրենք հենց առաջին հեղինակներն էին: «Մեր առաջին թարգմանիչները, — գրում է Արեղյանը, — սկիզբն է տնում նաև հայկական ինքնուրույն դպրությունը 5-րդ դարում»:

Նոր սկզբնավորված հայ գրականությունը Արեղյանը իրավամբ համարում է եկեղեցական՝ քարոսաշարժություն զխավորապես եկեղեցական դասի, որ ուներ իր գրելու հատուկ ձևերը, իր սեփական նպատակն ու ձրոտումները և իր գրական տեսակները:

Հայ գրականության ընդհանուր վիճակը նրա ծագման սկզբում նա բնութագրում է իրրև «կատարյալ ինքնատիպ կերպարանքից» զուրկ մի դպրություն: «Ես ձևով մասամբ հետեղություն է ընդհանուր քրիստոնեական գրականության, մեկ-մեկ նաև քաղաքական (կոմպիլատիվ) բնավորությամբ»: Նոր ձևավորվող գրականության այս ընթացքի մեջ անգամ Արեղյանը բացահայտում է նրա գրական

պատմական կարևոր գերը հայ գրականության հետագա զարգացման տեսանկյունից: «Հայ գրողները, — գրում է նա, — յուրացնում են բոլոր գրական տեսակները, որ կային քրիստոնեական գրականության մեջ: Այսպիսով՝ նրանք մասվոր հաղորդակցության մեջ էին մնում ասորիների և առանձնապես լիգուրացիների հետ և գրականության միջոցով հնարավորություն ունեին արևմտյան մասվոր հասանքներն ընդունելու»:

Հայ գրականության ձևավորումը դիտելով պատմական կոնկրետ հանգամանքների մեջ և հարևան համասարաբ բարձր զարգացած քաղաքակրթություններին դրեղ ազդեցությունների ուրբտում, Արեղյանը մյուս կողմից շեշտում է և հավաստում մեր նոր զարգացող գրականության ուրույն ազգային բնույթը: «Ենչքան էլ մեր առաջին գրողները, — գրում է նա, — հետևում էին ուրիշներին, բայց և այնպես նրանց երկերն ընդհանրապես մշակված են ազգային բովանդակությամբ, կապված են իրենց միջավայրի և զարաչքանի իրական պայմանների հետ և բխում են ժամանակի պահանջից... Մեր գրավոր դպրությունն օտար գրականություններին աղիցությունը կրելով հանդերձ՝ իր ներքին լուծվամբ բուն պարզության է, որի միջուկը կազմում է իրենուրոպական պայքար ու մարտում այլազգի իշխողների դեմ՝ ազգային ինքնուրույնությունն ու անկախությունը պահելու համարը»:

Արեղյանը առանձին հեղինակների բնություններով բացահայտում է հայ հին գրականության ձևավորման ու զարգացման բնթացքը, թե՛ ըստ գրական տեսակների, թե՛ ըստ թևատիկայի և թե՛ ըստ զաղափարախոսության: Այդ վերլուծումներից պարզվում է, որ հայ հին գրականությունը V դարում արդեն առաջին հեղինակների (Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Կորյուն, Նզդիկ) ինքնուրույն գործերում իսկ ձևով է բերում իր գրիկն բոլոր գրական տեսակները (կանոն, ճառ, բուրթ, հոգևոր երգ, հակաճատություն, վարքագրություն, խրատ, պատմություն) և կարևոր թևաները, որոնք հետագա դարերում նոր կերպավորում ու զարգացում են ըստանում:

Հակաճատության, իրրև դրական տեսակի, որոշակի ու մասնատման բնությունն Արեղյանը կատարում է հանձին Նզդիկ Կող-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, գիրք 1, էջ 114:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, գիրք 1, էջ 114:

<sup>2</sup> Անդ:

բացու ընդ ձ ազանդոց» երկի, որի ոճական արվեստի վերլուծման մեջ նա բացահայտում է զեղարվեստական հատկանիշներ: Ուղղված լինելով հույն իմաստասերների տեսական հայացքների, դրանց հիման վրա ձևավորված բրիտանական ազանդների, ապա պարսից զրազաշտական կրոնի սկզբունքների, ինչպես նաև հայ ժողովրդական հավատալիքների քննադատությանն ու հերքմանը, փաստորեն հայ մասնագրությունը Եղիկի այդ երկով, ինչպես նկատում է Արեղյանը, գրեթե սկզբից անցնում է տեսական խնդիրների արծարծման: Բացահայտելով ընդ ազանդոց-ի կրոնա-իմացարանական արմատները, այսինքն զրազաշտական-դուալիստական աշխարհայացքին և հիմնադրական տարրապատկան ընդգծելով Եղիկի պաշտպանած աստվածային մեկ բարի էությունը, մարդկաներուն աշխարհայացքի, մարդու անձնիշխանության և դրա հետևանքով ծագած նրա եղբրական վիճակի զազափարական էությունը, Արեղյանը հանձնի Եղիկի մեղանում տեսնում է միջնադարյան բրիտանական աշխարհայացքի խոշոր տեսաբանին: Եղիկի ընկերով արդեն,— գրում է նա,— բրիտանական աստվածաբանությունը, միջնադարյան բրիտանական աշխարհայացքը հաստատված է մեր գրականության մեջ ամբողջական տեսությամբ և հակառակորդներին արված ուժեղ հարվածներով»:

Եթե հույն փիլիսոփաների ուսմունքների, միջնադարյան կրոնական ազանդների ու ժողովրդական հավատալիքների հերքումները կրում էին հիմնականում կրոնա-աստվածաբանական բնույթի, ապա պարսից զրազաշտական կրոնի դեմ ուղղված Եղիկի հակաձառություն մեջ Արեղյանն իրավամբ տեսնում է քաղաքական նկատառումներ: Հայերին ազդովին իրենց մեջ համաձուլելու պարսիկների աշխուժացող քաղաքական ձգտումների դեմ էր փաստորեն ուղղված Եղիկի գիրքը, որը հայ մտավորականության ձևերին մի պարտուստ զննք էր տալով իրենց մարտնչու ընդդեմ մոգական ոտնձգությունների և նրանց կրոնի դուալիզմի»:

Արեղյանը զրական մշուս տեսակներից առանձին հետազոտության առարկա է դարձնում հատկապես պատմագրությունը, այն նկատառումով, որ պատմագրությունը կաղմելով մեր հին գրականության կարևոր բաղադրարար նյութը սկզբից մինչև վերջ՝ այսինքն

քրե V—XVIII դար, իր մեջ պարունակում է պատմական վիթխարի թանկարժեք նյութ հայ և օտար ժողովուրդների պատմության հետազոտության համար: Գրականության պատմական ընթացքը, որ սերտորեն աղերսված է պատմության հետ, չի կարելի պատշաճ չափով որոշել ու բացահայտել առանց պատմական երևույթների, իրադարձությունների ու զեղարների պարզաբանման: Բացի այդ, ինչպես նշվել է արդեն, պատմագրությունը արժեքավոր է հատկապես զրական տեսակնոցից: Հայ պատմագրության մեջ կան զործեր, որոնք թիսկական զրական երկեր են, հորինված զեղեցիկ ձևով, հարուստ են զեղարվեստական տարրերով, պատկերավոր արտահայտություններով: Կան այնպիսիները, որոնց մեջ թեև խառն են զրական և ոչ-զրական տարրերը, բայց կան ամբողջ հատվածներ, որոնք զրական արժեք ունեն: Պատմագրական որոշ երկերի նման հատկանիշներն, ուրեմն, անհրաժեշտ էին դարձնում դրանց զրապատմական հետազոտությունը:

Այս տեսակետից առանձնակի արժեք են ստանում Կորյունին, Ազաթանզեղուսին, Փ. Բուզանդին, Մ. Խորենացուն, Եղիշին, Ղ. Փարպեցուն, Սերետին, Ղևոնդին, Հովհ. Գրախանակերտցուն, Թովմա Ածրունուն, Անանուն պատմագրին, Մովսես Կազանկատուացուն, Ասողիկին հատկացրած գլուխները:

Հիշյալ հետազոտությունների նվիրված լինելով V—X դարերի պատմագրական երկերին, զայիս էին մի կողմից լուսարանելու զրականության մաքրուման շրջանի պատմական իրականությունը, մյուս կողմից՝ հայ պատմագրության, այդ թվում նաև զեղարվեստական արձակի տարրերի սկզբնավորման ու զարգացման աստիճանական ընթացքը, որ մինչև հայ աշխարհիկ արձակի ու բանասանգծության երևան գալը, զրևերվում էր հիմնականում պատմագրական երկերում:

Մաքրուման շրջանի հայ պատմագրությունը, բառ բովանդակության ու բնույթի, Արեղյանը բաժանում է 5 հիմնախմբի. 1. Առաջին պատմագրեր, որ համախմբված են ու հետազոտված նոր ձևավորվող հայ պատմագրության անդրանիկ հեղինակներ՝ Կորյուն, Ազաթանզեղուս, Բուզանդ. 2. Գառնական պատմագրեր, որտեղ ուսումնասիրված են զարձայ V դարի հեղինակներ՝ Մ. Խորենացին, Եղիշին, Ղ. Փարպեցին, որոնց երկերը որոշակի հետք թողեցին ապագա հայ պատմագրության զարգացման վրա. 3. Մատուցում արարական բովանդակության ու զնն. որ ընդգրկված են VIII—X դարերի պատմիչներ՝ Ղևոնդը և Հովհ.

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք 1, էջ 129:

2 Անդ, էջ 132:

3 Անդ, էջ 134:



Գրասխանակերտցին. 4. Տսխմայիք պատմագրություն. որանց համախմբված են IX—X օր. պատմիչներ՝ Քովմա Արծրունին, Անանուն պատմագիրը և Մ. Կարանկատուացին. և Վերայն՝ 5. Խաղաղ շիեաբարության դար, որի պատմագիրն է Արեղյանը համարում Ստեփանոս Տարոնեցի Ասողկիկն (X դար): Այս հինգ խմբերից զուրս է մնում միայն Անբեսը (VII դար), որի «Պատմությունն» իր բովանդակությամբ մասամբ վերաբերում է պարսից և մասամբ՝ բյուզանդական ու արաբական բննապետությունների դեմ ուղղված մարտումների:

Արեղյանը պատմիչների երկերը քննելիս չի բավարարվում սուկզրանց զեղարվեստական կողմերի բացահայտմամբ ու արժեքավորմամբ: Պատմագրական երկերի զեղարվեստական հատկանիշներին զեհատությանը պատշաճ տեղ հատկացնելով հանդերձ, նա պատմիչների կյանքն ու գործերը ուսումնասիրում է իրենց ամբողջության մեջ, թե՛ բանասիրտն և թե՛ պատմագիտորեն:

Պատմագիրներին հետադոտելիս և առնասարգել, Արեղյանը հայ բանասիրության ձևեր բերած նշանակալից արշյունքների, երբեմն էլ անմիջապես իր իսկ կատարած բանասիրական քննությունների հիման վրա որոշում կամ ճշգրտում է պատմիչների կենսագրական տվյալները, ապրած ժամանակը, գրություն ժամանակն ու պարզապես, պարզում երկերի աղբյուրները, բազադրիչ մասերի հարաբերության և նրանց վավերականության խնդիրը, հաճախ քննադատության ենթարկում արժարժված սխալ կարծիքները և առաջադրում նոր տեսակետներ: Հարկավ, ոչ բոլոր հեղինակներն ու նրանց ոչ բոլոր երկերն են հասկանալի պատմաոնեցում արժանանում բանասիրական նուշնաշափ քննությունների, բայց Արեղյանի քննական անհրժեշտ քննություններից հետո է միայն նա անցնում բուն խնդրին՝ պատմագրական երկերի պատմական, գրական-գեղարվեստական և բնզհանուր կուլտուրական արժեքի բացահայտմանն ու զեհատությանը:

Քննական նման մոտեցումով է դիտականն արժեքավորում հայ առաջին հեղինակ Կորյունի՝ «Վարք Մաշտոցի» երկը: Հայ գրի ու գրականության այգարացի ժամանակաշրջանի հասարակական հոգեբանությունն ու բարբերը բմբունելու զարմանալի նուր զգացողությամբ, նա կարողանում է համոզիչ կերպով պատճառարանել ու բացատրել Կորյունի ստեղծագործական տվյալանշնիրը, շա-

բազրանքի թերութունները, իրթնարան ոճն ու աստվածաշնչային բազլածքների աատությունը: Իրոշ պակասություններով հանդերձ, Արեղյանը բարձր է զեհատում Կորյունի երկի հատկապես պատմա-աղբյուրագիտական արժեքը: «Դա («Վարք Մաշտոցի»-ն—Ս. Հ.) հայ պատմական կյանքի նոր զարաշրջանի սկզբնավորությանը ծանոթանալու նկատմամբ՝ ունեցել է և ունի շատ մեծ կարեւորություն: Դա հայոց գրականության սկզբնավորության միակ ժամանակակից և վավերական հիշատակարանն է»:

Եթե Կորյունի երկի պատմական արժեքը Արեղյանը հիմնականում տեսնում է հայ գրականության սկզբնավորման գործում նրա իտաղացած կարեոր գերի մեջ, ապա հայոցը հեղինակի՝ Ագրանգեղոսի «Պատմության» զեհատությունը կատարվում է առավել լայն ու բազմակողմանի տեսագծերով: Հանձին «Վարք Մաշտոցի»-ի հայ ինքնուրույն գրականությունը փաստորեն սկզբնավորվում էր հայ նշանավոր մշակութային գործիչ վարսագրությունար: Այս ավանդույթը շարունակվում է նաև հայոց պատմագրական հուշարձանում, որ զգալի տեղ էր հատկացվում հայոց եկեղեցու հիմնադիր՝ Գրիգոր Լուսավորչի լեզենդային կյանքին ու կրոնա-կեղեցական գործունեությանը: Բայց ավանդույթի պատմական արժեքը սակ երկի ժանրային ձևի մեջ չէր, եթե Կորյունի երկով շարազրվում էր հայ գրի ու գրականության ստեղծման պատմությունը, ապա Ագաթանգեղոսի երկով՝ հայոց բրիտանոնական դարձն ու եկեղեցու սկզբնավորումը: Հետևաբար, Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը Արեղյանը արժեքավորում է նախ՝ կրոնական զաղափարախոսության և ապա՝ եկեղեցական պատմության տեսակետներից: «Այդ գրքի մեջ,— գրում է նա,— շատ զգալի կերպով արվում է բրիտանոնության գովքն ու շատազովությունը հեթանոսության դեմ... Պարզ երևում է, որ այդ գիրը հորինված է իբրև մի օրինակ անվահեր մաքսոման բնզդեմ հեթանոսական կրոնի և սրա ուշնաջման իր պաշտոնական պաշտամունքի տեղեբում»: Այդ երկը պալիս էր բավարարություն տալու զարաշրջանի կրոնական ձրգություններին և հայ հոգեոտականության սեփական եկեղեցու հնությունն ու անկախությունը փալիտալոգ տրամադրություններին: «Ագաթանգեղոսի Հայոց պատմությունն եղել է հայ եկեղեցական դասի ձգտումն արտահայտող առաջին գրական երկերից մեկը, եթե ոչ առաջինը: Դրա մեջ փաստարանված է կ' բրիտանոնությունը, կ' հա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, գիրք 1, էջ 155—156.  
2 Անգ, էջ 163.

յոց եկեղեցին, և հայ կաթողիկոսական աթոռ վաղարշապատում, նրա ժառանգական աթոռակալներն իրենց ծագումով: Ամեն ինչ այդ գրքի մեջ դիմում է գլխավորապես այդ նպատակին»<sup>1</sup>:

Սակայն Արեղյանը Աղաթանգեղոսի «Հայոց պատմության» արժեքը սուկ կրոնական-եկեղեցականով չի սահմանափակում: Երկը, բացի Լուսավորչի վարքից, ծագած լինելով պատմական ավարյութներից ևս, բնականաբար, պետք է իր մեջ պարունակեր հայ պատմական անցյալին վերաբերող թանկարժեք տվյալներ: Իրանցից նա մասնանշում է հատկապես հայոց դարձի կուլտուրական կարևոր իրադարձության պատմության, հին Հայաստանի տեղադրություն, նախարարական կարգի, հայկական դիցարանության, պաշտամունքի վայրերի և առհասարակ ներքին կյանքի մասին և դաժ մեծարժեք վկայությունները: Նա Աղաթանգեղոսի երկին բնդահարկան հայոց պատմության համար համարում է կարևոր աղբյուր: Բայց և միաժամանակ այն գնահատում է գրական տեսակետից, իրեն գրական երկի «Իս իր արամայտություններով, իր ձևի ու կենդանի ոճով, հաջողությամբ իրար հետ կապակցված գեանդան պատմվածքներով ու դրույցներով, հրաշապատմներով, թեատրաբերքի վիպական մի պատմվածք» է, «բնական մի վեպ», որ աղգած մեք գրականության և առհասարակ մտայնության և շատ մինչև 19-րդ դարի կեսերը, նույնիսկ հետո»<sup>2</sup>: Եվ Աղաթանգեղոսի մեծանշակում պատճառարանում է վիպական տարրերի առատությունը, որ սերում է «բուն ժողովրդական բանաստեղծությունից», «Պատմության» հեղինակը կամ խմբագիրները մեծապես օգտագործել են նաև պատմական նշանավոր անձանց ու իրադարձությունների շարքը հյուսված ժողովրդական վիպական բանահյուսությունը:

Այս վերջին տեսակետն Արեղյանն առավել խորացնում է V դարի հաջորդ հեղինակի՝ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն»-ը բնեկրի: Առավել զարգացնելով նախորդ բանասերների տեսակետները, Արեղյանը գտնում է, որ Բուզանդի «Հայոց պատմության» հիմնական աղբյուրը եղել է ժողովրդական բանահյուսությունը:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք I, էջ 165;  
<sup>2</sup> Անց, էջ 163.

ությունը, մասնավորապես ավանդական դրույցները, լեզուները, վեպերը և նույնիսկ երգերը: Ավելին, նրա կարծիքով Բուզանդը «օժտված է եղել վիպասանական շնորհքով, եղել է իսկապես մի դրամատիկ վիպասան, որ սովորած է եղել շատ դրույցներ և իմացել է բերանացի վիպել շատ պատմուհիներ «Պարսից պատերազմից»... Եվ այս իր այդ իմացածների և բերանացի պատմածների ու լսանքների հիման վրա նա հորինել է իր գիրքը»<sup>1</sup>: Նա գրեթե բացառում է Բուզանդի երկի համար գրավոր որևէ աղբյուրի օգտագործման հնարավորությունը:

Արեղյանը Բուզանդի օտարործած բանահյուսական աղբյուրները բնույթով ու բովանդակությամբ բաժանում է երկու խմբի: Աշխարհական և եկեղեցական պատմվածքների: Առաջիններն բաժանում է «կազմում են մի ամբողջություն, մի մեծ ավանդական վեպ», որ նա բնութագրում է առնում ի դեմս «Պարսից պատերազմ»-ի, իսկ երկրորդները՝ անկախ դրույցներ ու հիշողություններ են՝ հեղինակի ձեռքով մասամբ հաջցած վեպից առած նյութի մեջ: Բանասերները, նույր ժողովրդականությանը նա նկատում է, որ քրիստոնյա պատմիչը ժողովրդական վեպի նյութը երկարել է որոշ կրոնական դրամատիկականացման, որը, սակայն նկատելի է և դուրսով հնարավոր է անջատել, «տանց վեպի ամբողջական բովանդակությանն առանձնապես վնասելու»<sup>2</sup>:

Արեղյանը Բուզանդի «Հայոց պատմության» հիմքը ժողովրդական բանահյուսությունն համարելով և հենց այդ պատճառով նրա գրական արժանիքներն ընդգծելով՝ հանդերձ, միաժամանակ այն գնահատում է պատմագիտորեն և բացահայտում այդ գրավոր, ուշարժանի բացառիկ նշանակությունը Հայաստանի ֆեոդալական ժամանակաշրջանի ներքին կյանքի ուսումնասիրության համար: Նա իր նյութը ընդգծելով ժողովրդական բանահյուսությունից, ընդարձակ շարժելով անդրադարձում է «մեր ժողովրդի, առանձնապես աղնավականության ներքին իրական պատմիչը, նրա բարոյական, կրոնական ու բազաբական հայացքն իրերի վրա, նրա բնավորության որոշ գծեր, հայրենասիրությունը, սոցիալական վիճակը, նույնիսկ սովորույթները, կենցաղը, հավատալիքները և այլն»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք I, էջ 171;  
<sup>2</sup> Անց, էջ 171—172;  
<sup>3</sup> Անց, էջ 172:



Արբուն էլ որ Բուզանդի երկը ֆեոդալական Հայաստանի ներքին կյանքի ուսումնասիրության համար Արեղյանն անկաշկանդ օգտագործման աղբյուր է համարում, պատմական անցուղարձերի նկարագրության աստիճանական առումով, սակայն, նա խիստ վերապահություն է անում: Գիտնականը իրավամբ գտնում է, որ Բուզանդի երկը հիմնված լինելով բանահյուսական նյութի վրա, պատմական ակնարկն ու եղևույթյունների նկատմամբ թույլ է տվել բանաստեղծական մոտեցում, ուստի և զրանք պատմական ստույգ իրողություններ ընդունելը՝ իրավացի չի կարող լինել:

Նման քննական հայացքով գնահատելով մեր առաջին պատմագիրների երկերը, որոնք պարարտ հող հանգիսացան հայ ապագա պատմագրության զարգացման համար, Արեղյանն անցնում է մեր դասական պատմագիրների ուսումնասիրությանը: Եթև նախորդ հեղինակների երկերի վրա, լինելով իր վիդական բանահյուսության անտոլոգիան սկզբունքներից, նա համեմատարար վերացիկ է կանգ առնում, զրանք նյութի քննությունը հիմնականում վերադարձնելով «Պարսից պատերազմ» ժողովրդական վեպի տեսությանը, սպազ դասական պատմագիրների ուսումնասիրությունը կատարում է համակողմանի մանրամասնությունը: Պատճառը ոչ միայն վերջիններիս ներկայացրած պատմական նյութի բնույթն էր, այլև գալիք պատմագրության և բնդհանրագիտության նկատմամբ մանրամասն ներկայացրած մեծ ազդեցությունը:

Գնահատելով պատմագիրների հետազոտումը Արեղյանն սկսում է «Հայոց զրականության առաջին հուշակվոր մատենագրություն»՝ Մովսես Խորենացիով: Առանձնակի մանրակրկտությունը քննելով բերթողահոր անձի ու զործի նկատմամբ բանասիրության մեջ արժարժված հարցուրամյա իրարամերձ տեսակետները և ետր ուսումնասիրությունների զրական արդյունքներով վերադնահատելով զրանք, նա կրկին անգամ հաստատում է հայագիտության մեջ արդեն հիմնավորված հորինացու V դարի հեղինակ լինելն ու նրա օգտագործած աղբյուրների վավերականությունը: Ի մի բերելով հորինացու «Հայոց պատմության»-ը նվիրված իր և ուրիշ հայագետների տարբերակի հետազոտությունների արդյունքները, նա բացահայտում է և գնահատում բերթողահոր պատմահայեցողության առանձնահատկությունները, աղբյուրների օգտագործման մեթոդն ու եղանակները, «Հայոց պատմության» նյութն ու ժամանակագրական սահմանները, նրա պատմագիտական ու զրական արժանիքները: Խորենացու պատմահայեցողության մեջ, փաստերի բանասիր-

յական քննություններով, Արեղյանը երևան է հանում հեղինակի Լեհաստական վերաբերմունքը պատմական ստանձնի իրողությունների և օգտագործած աղբյուրների նկատմամբ: Խորենացու քննարկական ոգին մասնավորապես զրոհելովում է իր մեկնաստ Սահակ Բագրատունու ուղղված նամակի և «Պատմության» վերջում զրած նշանավոր «Ողբի» մեջ, ուր սրտացավ հարեհասերի խստաթյամբ իրավացիորեն դատափնելովում է թե՛ անցյալի հայ իշխող դասի՝ սոցիալ-բազարական անհուսակար վիճակն ու փրոջ հոտի բարբերը: Այդ միևնույն ոգին Արեղյանը երևան է հանում նաև պատմիչի օգտագործած աղբյուրների գնահատության մեջ, ուր Խորենացին ժամանակի ընդունված գիտական եղանակներով մեկնատարում, «Շշմարտում է» վկայաբերված բանահյուսական ստեղծագործությունները: Արեղյանն առանձնապես մեծ արժեք է տալիս Խորենացու, իրրև պատմիչի, ճշմարիտ և ստուգապատում լինելու ձգտմանը, որ նա, ժամանակի կրոնական մտայնության և ևստվածաշնչի լեզվեղները արբազործված իրականություն ընդունելու պայմաններում, ինքնու ձգտումն է պատճառը, որ հունական բարձր դպրոցներում կրթված, ժամանակի միջազգային մտավոր հոսանքներին քաշտանդչակ ու հարողակից Մովսես Խորենացին, առաջինը հայ պատմագրության մեջ, կիրառում է ժամանակագրությունը և պարտադիր կերպով երշաատակում իր օգտագործած աղբյուրները:

Գրականության պատմաբանը մատենաշնչով հանդերձ հայ բանասիրության մեջ արդեն բացահայտված հայ Արշակունիների հարստության սիրիքը Խորենացու կողմից մ. թ. ա. II դարում գնելու ժամանակագրական սխալը, համեմատություններով պարզում է, որ «Խորենացու զրած իշխանական սոհմերի կարգը» համընկնում է օտար աղբյուրների տվյալներին: Գրանավ ընդգծվում էր Խորենացու «Հայոց պատմության» պատմական արժանավատահայությունը:

Գիտական առանձնակի կարեորություն են ներկայացնում Խորենացու երկի պատմական ու զրական արժեքի Արեղյանի կատարած բացահայտումները:

Խորենացու երկի մեծագույն պատմական նշանակությունն այն է, որ ժամանակի միջազգային պատմագիտության պահանջներին

համեմատ, առաջին անգամ ստեղծվում է հայոց ամբողջական ու համակարգված պատմությունը՝ սկզբից մինչև V դար: Ճիշտ է, հայոց պատմության հնագույն շրջանի վերաբերյալ պատմական արժանահավատ աղբյուրների բացակայության պայմաններում հորենացիները թվում են զրոյանց: Առաջին դիրքն ու երկրորդ դիրքն մի մասը շարադրել է ըստ Աստվածաշնչի ավանդությունների և հայ բանահյուսական ստեղծագործությունների ավյանների, այդուհանդերձ այն երկար դարեր էղել է շատ սիրված, կարգացված և համարվել է միակ արժանավատահարյուր՝ սակայն մինչև 440 թվականը ժամանակաշրջանի համար: Եվ նույնպես պատմիչները մեծ շահով օգտվել են նրանից և հետևել են նրան:

Արեղյանը քննական հայացքով վերագնահատելով հորենացու երկի պատմական արժանավատահարյուր հարցը և մատնանշելով բաղձաբերի պակասությունները, այդուհանդերձ գտնում է, որ «Հայոց պատմությունը չի կորցնում իր նշանակությունը, այլ վերագնահատվելով՝ նայելով մասերին տարբեր կերպով է արժեքավորվում»: Նա աղբյուրադիտական մեծ արժեք է տալիս հորենացու երկին հատկապես IV դարի վերջի և V դարի Հայաստանի պատմության համար: «Հայաստանի երկուսի բաժանվելուց հետո, — զգրում է նա, — կատարված քաղաքական դեպքերի պատմության համար Մ. հորենացու Պատմությունն առաջին աղբյուրն է»<sup>1</sup>:

Արեղյանը հորենացու երկը գնահատում է նաև բանահյուսական աղբյուրագիտության առումով. «հնագույն ավանդական բանահյուսության համար, — գրում է նա, — հորենացին միակ աղբյուրն է»<sup>2</sup>:

Գիտնականը շատ բարձր է գնահատում հորենացու երկի պատմական նշանակությունը հին ու միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի ուսումնասիրության տեսանկյունից: «Ենչպիսի ուսումնասիրություններ էլ որ անելու լինեն Հայաստանի ներքին կյանքի պատմության վերաբերյալ, միշտ զիմում են և պիտի զիմեն ներքա (հորենացու) — Մ. Հ.» Պատմությունը»<sup>3</sup>:

Անորոշառևայով թերթողահոր երկի գրական արժանիքներին խնդրեն, Արեղյանը երևան է հանում գեղարվեստական-դազապիս-

րական այն էական հատկանիշները, որոնք վճահական զեր են խաղացել նրա դարավոր կենսունակությունն ու լայնորեն սիրված լինելուն: հորենացու «Հայոց պատմության» հորինման հասարակական շարժառիթն իրավամբ տեսնելով V դարի Հայաստանի քաղաքական անկման հետևանքով առաջ եկած հին անկախության վերականգնման մտավոր ձգտումը հորողրելու և զարգացնելու մեջ, Արեղյանը երկի գաղափարական առանցքը համարում է հայրենասիրությունը: Այս էական գաղափարը, որ անցնում է երկի մեջ՝ բուզկերից մինչև վերջ, մարմնավորվել է հայ անցյալի առասպելական և պատմական անձանց՝ բանաստեղծական միջոցներով հորենացու նկարներում կերպարներում և պատմական անցյուրաթների գեղարվեստականացած նկարագրություններում: Բանաստեղծական երկի մի գասական նմուշ է Արեղյանն համարում Հայկի առասպելի հորենացու գեղարվեստական մշակումը: Այդպիսի բանաստեղծական արժեքներ նա շատ է մատնանշում «Հայոց պատմության» մեջ և ըստ այդմ բացահայտում հորենացու արվեստի մեկ այլ հատկանիշը՝ սեական և բանաստեղծական արտահայտչաձևերի բազմազանությունը, որ պայմանավորված է նկարագրվող նյութի այլազանությունով: Այլ կերպ ասած, գրականության պատմաբանը ի հայտ է բերում հորենացու պատմիչների բովանդակության և ձևի վարպետ համապատասխանացում, ուր «ձևը հետևում է բովանդակությանը»: հորենացու ոճի մեջ, իրավամբ նշելով հունարան հայերենից կեղծ որոշ խրթնարանությունները, ընդհանրապես նրա լեզուն ու ոճը պարզ ու հեղված է համարում: «Նրա (հորենացու) — Մ. Հ.) ոճը, — գրում է Արեղյանը, — ինչքան էլ համախ զարդարուն ու պերճ է, բայց ընդհանուր առմամբ ըստ պարզ, մեկին է, թեթև, շատ կանոնավոր ու զուրիք, միանգամայն և ախորժելի, կրկն շար ու ցամաք ... Առհասարակ նրա ոճի մեջ չկա շինություն և սեթեթեթանք, այլ ամեն ինչ նրա գրել տակից բխում է բնականորեն: Չզգացվում է, որ նա ասլրում է իր գրքում, և այդ է հենց սղզում ու պարվում և նույնիսկ հմայում. ընթերցողը համակվում է նրա զգացումով»<sup>4</sup>:

հորենացու հորինելու հիմնական հղանակը համարելով վիպականությունը, Արեղյանը մատնանշում է նաև բանաստեղծական նկարագրությունների նրա մեծ վարպետությունը (Արարատյան

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, I, էջ 283:

2 Անդ, էջ 279:

3 Անդ, էջ 282:

4 Անդ, էջ 284:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, I, էջ 288:

2 Անդ, էջ 288—289:



դաշտի, Երվանդակերտի, Շամիրամակերտի, Զիրավի հակառակ-  
մարտի նկարագրությունները և այլն): Խորհնացու ոճի մեջ նա բա-  
ցահայտում է նաև նամակային ոճի, տրամախոսության, հոեու-  
րական արտահայտչաձևերի վարպետ կիրառություններ, որոնցից  
հատկապես վերջինը հաճախ փոխառնելով ուրիշներին, սակայն  
այնպիսի վարպետությամբ է վերածաշակում և «հարմարեցնում...  
իր ճաշակին և իր բնդհանուր ոճական բնավորությանը», որ «բնավ  
չի տուժում մեր Բերդղաճոր ոճի ինքնուրույնությունը... Այսպիսի  
ղեկավարում էլ նա մնում է վարպետ գրող»<sup>1</sup>:

Արեղյանի զրչի տակ հատկավերջով վերամտմանվորվում է  
Խորհնացի գիտնական-պատմաբանի, հայրենասեր քաղաքացու,  
մատառղի ու գրողի ամբողջական կերպարը, արժեքավորվում այն  
տեղն ու զենքը, որ ունի Խորհնացին հայ գրականության և բնդհան-  
րապես մշակույթի պատմության մեջ:

Պարսից բունապետության դեմ ուղղված դադափարական մա-  
քամանը զուգընթաց, V դարում տեղի է ունենում նաև դինված  
մաջառում՝ ի դեմս վարդանանց պատերազմի, որի պատժիչն ս.  
չատուրգուն է դառնում մեր մյուս դասական «հեղինակը»՝ Նղիշեն:  
Ներքինով վերջինիս V դարից սեղախախտելու բանասիրական ա-  
նարդարացի պեղումները, հաստատելով իր նկարագրած անցու-  
թյունները, ինչպես նաև վիճարկելով հայ բանասիրության մեջ  
արժարժիվ Նղիշենի օճան վարդանանց և Հայոց պատերազմին»  
գործը սոսկ զրական երկ համարելու կարծիքը, Արեղյանը ցույց է  
տալիս, որ այն, անկախ իր գեղարվեստական անուրանալի արժա-  
նիքներից, ամենից առաջ պատմություն է, այն էլ լուրջ ու համա-  
կողմանի պատմահայեցողությամբ զրված: Նղիշենի երկի պատմա-  
գիտական արժեքը նա տեսնում է վարդանանց պատմություն  
ժազման քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնա-դադափա-  
րարանական դիմավոր շարժառիթների պատմականորեն առաջի ու  
բազմաեղանակի պատմաոտարանությունների մեջ, ուր էրևան են  
զային պարսկական և հայկական պետական շահերը և նրանց ան-  
խուսափելի բախումները: ՉՔրանով հենց.— զրում է Արեղյանը,—  
մեր այս Հեղինակը մի հմուտ պատմագիր է, որ լայն քաղաքական-  
տնտեսական հայացք ունի իր պատմած ժամանակի ղեկավարի  
վրա»<sup>2</sup>:

Պատմագիտական նույնքան մեծ նշանակություն է տալիս ղե-  
նականը պատմությունից արդյունքների կամ հետևանքների նդի-  
շի կատարած բացահայտումներին, որ գրեթեբոլորում է զարմյալ հե-  
ղինակի նուրբ ու հստակ պատմահայեցողությունը: Ապատմու-  
թյան արդյունքներն էին: Ըստ Նղիշենի՝ հայերի համար քրիստոնեու-  
թյան ազատ պաշտամունքի իրավունքը, հարկերի վերացում, հայ-  
կական այլուձևի արքունի պարտիի թեթևացում, բունագրված  
կենդանական ու աշխարհիկ սեփականության հաստատում, այսինքն  
բավարարություն է տրվում հայերի անտեսական ու կրոնա-եկեղե-  
ցական պահանջներին: Վերացվում է ամեն ինչ, որ պատմաա էր  
նդել հայերի պատմությունը»<sup>3</sup>: Եվ քանի որ հայերի նպատակը չի  
նդել պատմությունը քաղաքական անկախություն ձևեր բերելը,  
ուստի և Արեղյանն իրավացիորեն եզրակացնում է, թե Հայոց պա-  
տերազմում Վերջնական հաշվով հաղթությունը հայերն էին տա-  
րել, քանի որ կ' կենդանցին, կ' հայ ազնվականությունը վերստա-  
նում էին իրենց անտեսական և այլ իրավունքները»<sup>4</sup>:

Նղիշենի երկի գեղարվեստական արժանիքները բացահայտե-  
լիս, Արեղյանն ամենից առաջ պարզում է նրա զրական նպատակա-  
միտումը: Այն պատմություն լինելով հանդերձ, սեռապարտություն է.  
մի ճարտասանական պատմություն»<sup>5</sup>, որ բացի պատմություն ուսու-  
ցանելուց, հետապնդում է կրոնա-քաղաքական և հայրենասիրական  
դատախարակության նպատակներ. «ենթեչնել ազատության, քաղու-  
թյան ոգին, սոցիորի հերոսությունը, բնդհակաակին՝ ստեղի դարձ-  
նել ղավանանությունը, բունությունը»<sup>6</sup>—այս է Նղիշենի երկի նպա-  
տակը, որի իրագործման համար էլ, հեղինակը գիտնում է զեղար-  
վեստական-արտահայտչական տարբեր միջոցներին: Արեղյանը  
մատնանշում է հատկապես Նղիշենի «Պատմության» ճարտասանու-  
կան ոճն ու կատարվածքը, պատմական անձանց վարպետ բնութա-  
րանումները, ղեկավարի գեղարվեստական նկարագրությունը և քնա-  
րական բազմաթիվ շեղումները: Սեղիշեն ունի գեղեցիկ ղգացումը,  
— զրում է նա,— և աշխատում է, որ իր երկը կրի գեղեցիկ ղրու-  
մը: Նրա ղրվածքի մեջ սղգրից մինչև վերջն իշխող է ղգարվեստը:  
Դործողությունն առաջ է տարվում մասերի ներդաշնակ բաժանու-  
մով, երկրորդական, բայց կենդանի, բնական մանրամասնություն-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, 1, էջ 291,  
<sup>2</sup> Անդ, էջ 300:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, 1, էջ 302,  
<sup>2</sup> Անդ,  
<sup>3</sup> Անդ, էջ 303:

ներով, զարգարուն ու ծաղկուն ոճով, նկարին պատկերներով ու հանդիսավորությամբ: Եարդգրում է մերի արագ թափով, կորովի, եռանդուն և աշխույժ. մերթ քանդագ ու բազդարուն: Թեպետև երբևէ փոր-ինչ ճապաղ է, բայց նրա երկն իր ամբողջությամբ վաշխուչ է ու գրավիչ, հաճախ նուշինակ հափշտակիչ: Գրա պատճառն այն է, որ այնտեղ տանն ինչ բխում է անկեղծ ու խորին զգացումից, լկա շինծու արվեստակութիւն: Բնականորեն առաջացած են և բնաստանծական պատկերներն իրենց բազմազան երանգներով, և հարուստ ճարտասանական ձևերն ուժեղ ու զիպուկ խոսքերով<sup>1</sup>:

Այսպես է բնութագրում Արեղյանը եղիշէի երկի զեղարվեստական ոճն ու հորինվածքը, և այն իր ձևով համարում «մի ամբողջութիւն կազմող քնարական վիպասանութիւն»:

V դարի հայ պատմագրութեան վերջին դասական ներկայացուցիչ՝ Դազար Փարպեցու գրա-պատմական բնութագրման ժամանակ, Արեղյանը իր բնութեան կենտրոնն է դարձնում Հեղինակի վաճանկ Մամիկոնյանին ուղղած «Թուղթ» ու «Հայոց պատմութիւն»-ը: Առաջինը Արեղյանն իրավամբ համարում է «մի հուշակապ գրական արձան» և այն գնահատում որպէս կարեւոր աղբյուր, ինչպես Հեղինակի կենսագրութեան, այնպես էլ ժամանակի սոցիալ-պատմական իրականութեան անդրադարձման տեսակետից: «Թուղթ»-ը «մի զորեղ ամբաստանադիր է իր ժամանակակից հոգեվորականութեան մի դասի, միաժամանակ և մի շատ կարեւոր պատմական հիշատակարան»<sup>2</sup>: «Թղթի» բնութիւնը Արեղյանը բացահայտում է V դարի Հայաստանում Պատարակ-բաղաբական երկու հակադիր հոսանքների՝ պարսկական և աղղային-հայկական կողմնորոշումների<sup>3</sup>: Սահակի և Մեսրոպի ժամանակ գոյութիւն ունեցող հունասերների և նրանց հակառակորդների պայքարը, ըստ Արեղյանի, «Ծ-բզ դարի երկրորդ կեսին, ավելի ևս սաստկացած է եղել, դառնալով հունական գիտութիւն սիրող աղղայինների ու պարսկասերների կռիվ»: Այդ կուլտուրական պայքարը հետագայում ավելի է աճել ու ընդլայնվել՝ վերածվելով հասարակական երկու մեծ հոսանքների պայ-

քարի: Դազարն, ահա, եղել է աղղային-հայկական կողմնորոշման կրողներից, հակառակորդներից ամբաստանվել է և գրել իր պաշտպանական «Թուղթ»-ը: Վերջինի Արեղյանի տված այս նոր լուսարանութիւնը կարեւոր նշանակութիւն է ձեռք բերում V դարի Հայաստանի հասարակ-բաղաբական հոսանքների պատմութեան ուսումնասիրութեան համար:

Փարպեցու մյուս երկի՝ «Հայոց պատմութեան» քննութեան մեջ Արեղյանը նենվելով հայ բանասիրութեան հետազոտական ավելու-նեւերին, մատնանշում է, որ Փարպեցու «Պատմութեան» համար աղբյուր են ծառայել ոչ միայն Կորյունի, Խորենացու, Եղիշէի երկերը, այլև տոհմային ավանդութիւններն ու ժողովրդական զրույցները: Եվ քանի որ Փարպեցին իր երկը գրել է վաճանկ Մամիկոնյանի հանձնարարութեամբ, ուստի և երկրորդ ու երրորդ զրվագներում հերինակի իշխող միտումն է Մամիկոնյան տոհմի գովարանութիւնն ու բարձրացումը, հանձին վարդան և վահան Մամիկոնյանների պատմական սիրագործութիւնների: Փարպեցու տոհմասիրութեանից անկախ, Արեղյանը պատմական մեծ արժեք է վերագրում նրա «Հայոց պատմութեանը», մասնավորապես երկրորդ զրվագին, որ նկարագրվում են վաճանկ Մամիկոնյանի հերոսամարտերն ու մաքառումը պարսից զեմ: Այդ զրվագը, գիտնականի գնահատմամբ, «ամենահարուստ և հավաստի աղբյուրն է մի երեսուն-երեսունհինգ տարվա պատմութեան վարդանանց պատերազմից հետո»<sup>4</sup>: Մինչև-դեռ վարդանանց պատերազմի զեպերը նկարագրող երկրորդ զրվագի պատմական գնահատութեան մեջ, Արեղյանը հակադրվելով հայ քննական պատմագիտութեան արտահայտած տեսակետներին և իրավացիորեն նշելով Եղիշէի «Պատմութեան» համեմատ նրա և իրավացիորեն նշելով Եղիշէի «Պատմութեան» համեմատ նրա և իրավացիորեն նշելով Եղիշէի երկին երկի արժեքավոր լրացումները, այդուամենայնիվ Եղիշէի երկին պատմական ավելի մեծ արժեք է տալիս, քան Փարպեցու «Ենչքան էլ,— գրում է նա,— Եղիշէն բանտանեղծ-պատմիչ է, նա իբրև պատմիչ ավելի հմուտ է և ավելի պարաստութիւն ունի, քան ճարտասան պատմիչ Դազարը»<sup>5</sup>: Եվ նա համեմատութեան համար, Եղիշէի «Հայոց պատերազմի» պատճառների պատմագիտական լայնամիտ և ստույգ գնահատութիւնները հակադրում է Փարպեցու առաջ բերած զրույցին, ըստ որի «Հայոց պատերազմի» պատճառ

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, գիրք I, էջ 318:

2 Անց, էջ 336:

3 Անց, էջ 329:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, գիրք I, էջ 306:

2 Անց, էջ 314:

3 Անց, էջ 317:



կել է Վարդավազանի բանասիրությունը հայոց գեմ՝ պարսից արքանիքում:

Բայց Արեղյանը միաժամանակ բացահայտում է Փարպեցու երկի պատմական մի շատ կարևոր արժանիքը՝ Վարդանանց պատերազմից հետո Հայաստանում կատարված ուղղմա-բաղադրական իրադարձությունների սոցիալական միտումի ճշմարիտ ըմբռնումն ու անդրադարձումը: Վահանյանների մաքառումը ուղղված էր զբխալորային պարսիկների կողմից հայ ազնվականությանը բարոյազրկելու և բաշխելու, ինչպես նաև Հայաստանում դանդաղ և աստիճանաբար մողական կոտոր տարածելու ձգտումների դեմ: այսինքն դիմված պայքարը ուներ եկեղեցա-ֆեոդալական հիմունքներ: Եվ Փարպեցին իր «Պատմություն» մեջ արտացոլել է այդ մաքառման ստույգ սոցիալական զրգարանները:

Փարպեցու «Հայոց պատմություն»-ը ցնահատկով գրական արվեստի սեռահետից, Արեղյանը երևան է հանում ճարտասանական եղանակների, հատկապես ճառարտություն վարպետ կիրառությունների, ճանրերի շնորհիվ հեղինակը իր մտածմունքներն ու գաղափարներն է դնում հերոսների բերանին, արտահայտում պատմադրի իր գլխավոր միտումը և եզրափակողական պայքար... մղում պարսից կրոնի կամ բաղադրականության դեմ և քրիստոնեական կրոնի զույժն ու պաշտպանությունն է անում»:

Արեղյանը մատնանշում է նաև Փարպեցու շնորհալի պատմական, պատմական անձանց բնութագրելու և հակադիր կերպարներ ստեղծելու բացահայտ ձիրքը, ճարտասանական ոճի հնու նաև կենդանի խոսակցական, ուսմկարանական ձևերի օգտագործումը:

Չազար Փարպեցիով ավարտվում է V դարի հայ պատմագրությունը, որից հետո գրեթե մեկ հարյուրամյակ, մինչև VII դարը, մեղանում պատմագրական սրբէ կրկ երևան չի գալիս: VII դարում հանդես է գալիս մի պատմագիր՝ Սերնուս կալսեպոստը, որի «Պատմություն» էլ իր հաջորդ բնութային առարկան է դարձնում Մանուկ Արեղյանը: Նա չի անդրադառնում Սերնուսի անձի ու գործի բանասիրական կողմին, որն արդեն 1939 թ. արձանացել էր Սոս. Մալխասյանցի բնագրական բնութայնը: Արեղյանին, ինչպես այլուրեք, այստեղ ևս հետաքրքրում է պատմագրական երկի պատմական և դրական արժեքների հետազոտությունը: Նրա Սերնուսի երկը ցնահատում է նախ՝ ընդհանուր և ապա՝ հայ պատմագրու-

ության տեսանկյունով: Ընդհանուր պատմագրական արժեքն այն է, ըստ Արեղյանի, որ ինչպես հայ մյուս պատմիչների գործերը, այնպես էլ Սերնուսի երկը, լինելով ամիալողմանի կերպով հայոց պատմություն» միաժամանակ նաև պատմական կարևոր տեղեկություններ է հաղորդում հայրի հնա ազգամա-բաղադրական սերահարաբրություն ունեցած մյուս ժողովուրդների մասին: Հետևաբար «հայ պատմագիրները, որոնց թվում է Սերնուսը, մեծ արժեք են ստանում... ընդհանուր պատմության տեսակետով»: Բացի այդ, Արեղյանը Սերնուսի երկը օտոտնձանա կարևոր» է համարում հայոց պատմության համար այն նկատառումով, որ այնտեղ երկու մեծ պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի աշխարհակեր պատերազմների տեսագրալի վրա ուրվագծվում է VI—VII դարերի Հայաստանի ընդհանուր վիճակը և հայ զորքի ու ազնվականության խաղաղացած դերն ու ունեցած կերակրական ճակատագիրը պարսիկների, հույների, ալյա և արարների տերությունների մեջ: Թաղամա-բաղադրական իրադարձություններից բացի, Սերնուսի «Պատմություն» մեջ անդրադարձվել են հիշյալ շրջանի Հայաստանի կրոնա-կենդեցական կյանքի տարբեր կողմերը՝ կենդեցական շինարարություն, դավանաբանական վեճեր, կրոնական հալածանքներ և այլն, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ կենդեցու պատմության համար:

Սերնուսի երկին թեպետ գրական-դեղարվեստական առանձնահատուկ արժեք չի տալիս Արեղյանը, բայց բանահայտական ազդուրներից սերող պատմական առանձին զույցների՝ Թնոզորա թշտուն, Սմբատ Բագրատունու, Մուշեղի և այլոց մասին կղած վիպական պատմություններն նա անվերապահորեն վերադրում է դեղարվեստական արժեք ու նշանակություն և նրանցում բացահայտում կենդանի պատմելանոճ ու ժողովրդական արտահայտչանքներ:

VII դարի կեսերից ի վեր Հայաստանում սկսվում է պատմական մի նոր շրջան, արարական արշավանքների մոտ երեքհարյուրամյակ անոց արբալիստության ժամանակաշրջանը, որ բնորոշվում է բունպետության դեմ ուղղված հայ ժողովրդի կուլտուրական ու գիտական մարտություններով: Եվ քանի որ Արեղյանի բնորոշումը՝ «մանակի հայ բանաստեղծությունը ամփոփված լինելով հողեր կերպում շչի դառնում արտահայտիչ այս երկարատև շրջանի», ուստի «արարական կեղեքումների և ազատաբե ժողովրդի բնովրում-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, I, էջ 337:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, I, էջ 330:

ների ընդարձակ պատկերը՝ անդրադառնում է «Հին զարգացած գրական տեսակի»՝ պատմագրության մեջ<sup>1</sup>։ Այս շրջանի նշանավոր հեղինակներից են ամենից առաջ Ղևոնդ պատմագիրն ու Հովհաննես Գրսուխանակերտցին։

Եթև առաջինի «Պատմության» մեջ արարների զարգնությունները, կեղերությունները, ծանր հարկահանություն և զբանջ դեմ ուղղված դիմադրական-ապստամբական կռիվների կենդանի ցնցող պատկերները ցուցահանումով, Արեղյանք մի կողմից ի հայտ է բերում արարների ռազմական գործողությունների կրոնական ու քաղաքական միտումների (իսլամի գերազանցությունը և հայ ազնվականության ոչնչացում)՝ Ղևոնդի պատմագիտորեն թեպետ ճշմարիտ, բայց սահմանափակ ըմբռնումները, մյուս կողմից բացահայտում նրա վարարման ոճի կարուկ պարզությունը, թեթևությունը, երբեմն անձնական տար կիրքեր ու ժողովրդական բանահյուսությունից սերող վիպական պատմությունների կենդանի շունչը<sup>2</sup>, ապա նրա հաջորդի՝ Հովհ. կաթողիկոս Գրսուխանակերտցու «Պատմության» քննությունն ու գնահատությունը գիտնականը կատարում է իսկական գրական ստեղծագործության գնահատման հարկանքով։ IX—X դարերի արաբական տիրապետության շրջանի այդ նշանավոր եկեղեցական հասլածված գործի աստանգակն ու տառապալից կյանքի դրվագները տեսադաշտի վրա ուրվագծված էր Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակը, գրեթե իր բոլոր էական ճանգամաբններով։ Ուստի և նրա «Հայոց պատմության»՝ հեղինակին ժամանակակից վերջին քառասնամյակի պատմաբանի (IX դարի վերջին տասնամյակներից սկսած) նկարագրությունները Արեղյանն իրավամբ գնահատում է իբրև ինքնակենսագրություն և գրական երկը։ «Շովհաննես կաթողիկոսի այդ երկն իր մի խոշոր մասով,— գրում է նա,— ոչ թե ստիկ պատմություն է այս բառի սովորական իմաստով, այլ ինքնակենսագրություն կամ հիշողություններ, և իբրև այդպիսին՝ սեղմ բովանդակությամբ է առաջ տանում, այնքան ավելի ծավալուն ոճով և իրական կյանքի գծերով է առաջ բերում իր ժամանա-

կակից պատմությունը։ Ամեն հատվածներն այդ երկի լի են հեղինակի սպրտմեներով, հաճախ նրա կրած նեղություններով, նրա ցավագին վշտահարությամբ ժամանակի տխուր ու թշվառ կացություն համար։ Կարողալիս շարունակ ստանալ և զգում ենք հեղինակին, որ շատ զգայուն է զնայի ուրիշների սառսպանքները։ Գրա համար և նա սղղում է, երբեմն նրա խոսքը նույնիսկ հուզիլ է իր մանրամասնություններով... նրա սրտից անպակաս է նաև ասեղությունը զեպի երկրի ավերիչներն ու դավաճանները»<sup>3</sup>։

Գրսուխանակերտցու «Հայոց պատմության» զեղարվեստական կողմերի բացահայտումները Արեղյանն ամբողջացնում է նրա ուճական հատկանիշների քննությամբ ևս, որի անշուրթյամբ նա նաև գտնում է գրա-պատմական մի շատ նշանավոր հետևություն։ Գրսուխանակերտցուն համարելով «բերթողական արվեստին վարժված գրող», ոճը՝ ճարտասանորեն զեղեցիկ, «պարզարարուն դրածվածներով», ճոխ, պատկերավոր արտահայտություններով, նմանող վրայուններով» հազցեցած, հաճախ ճռտարտությունների հասնող ծայրահեղությունը, Արեղյանք նշում է միաժամանակ, որ նա, ինչպես նաև իր նախորդ (Ղևոնդ) ու ժամանակակից (Փովաճ Արծրունի) պատմիչները բնօրինակում են իրենց նախորդող, հատկապես V դարի հեղինակների արտահայտության ձևերն ու խոսքերը, «նույնիսկ մտածելու և հորինելու եղանակը, գաղափարություններն ու կարծիքները»։ Երևույթը Արեղյանք բացատրում է հայոց լեզվի պատմական զարգացման ճանգամանակով, այնու, որ ժայզ դարում դրսևորան արդեն սովորովի դպրոցական լեզու է եղելը, մինչդեռ կյանքում խոսել և նալ լեզվով։ Այսինքն, գրական և խոսակցական լեզվի միջև լուրջ տարբերություն է մտել, անգամ սուրբյուսուսակցական կամ գրեթե (Կեղծ Ծայուճ Թագրատունու «Պատմություն»-ը)։ Լեզվի երկվությունն աղղել է նաև ոճի վրա։ Հին լեզվով գրելիս դպրոցներում տասնել են քերթողական արվեստ, «հին մատենագիրների վրա հրահանգվելով, որով և մեր հին մատենագրությունը դառնում էր նմանողության և նույնիսկ բնօրինակության առարկա։ Նմանում էին ոչ միայն նախորդներին լեզվին, այլև նրանց ոճին, գործածում էին նրանց դարձվածները, խոսքերը, մտածություն ձևերը, պատկերները և այլն»<sup>4</sup>։

Նշված երևույթի պատմական հիմունքների բացահայտմամբ

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, գիրք I, էջ 428։

<sup>2</sup> Անդ, էջ 428—433։

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, I, էջ 437։

<sup>4</sup> Անդ, էջ 439։



Հովատուելով հին լեզվի աստիճանական մահացման և նոր լեզվի գրական աստիճանի բարձրանալու փաստը, Արեղյանն արդեն կանխանշում էր հայ գրականության մեջ լեզվի և մատենագրության տեսակետից՝ գալիք արմատական հեղափոխումների անխուսափելիությունը:

Գրական գեղեցիկ արտահայտչամեթոդների ներքո Արեղյանը ի հայտ է բերում և գնահատում Գրասխանակերտցու երկի պատմական արժեքն ու հեղինակի պատմագրական հայտքը: Նա մեծ նշանակություն է տալիս պատմիչին ժամանակակից իրադարձությունների նկարագրությանը, ուր հեղինակը քաղած է անուս իր ազբած ժամանակի, մի 30—35 տարիների, ումեղ զմազրված ընդարձակ պատկերը: Գրա մեջ անդրազարձած են մի կողմից՝ Հայաստանի իրական ներքին դրությունը, մյուս կողմից՝ արաբական բռնությունները, որոնք ծայր աստիճանի են հասնում այդ շրջանում, ապա նաև իշխանների կոիվն արաբների դեմ<sup>1</sup>: Այդ, ինչպես նաև հայ իշխանների անմիաբանության, միմյանց հանդեպ ունեցած ստոր թշնամանքի ու միջնախարարական կոիվների, դասակարգային հակամարտությունների առարկայական իրողությունների նկարագրության լույսի տակ Արեղյանը ի հայտ է բերում հայրենի երկրի գլխին ծանրացած զժբխտությունների պատճառների նկատմամբ պատմիչի ունեցած ըմբռնումներն ու վերաբերմունքը:

Գրասխանակերտցին իրավամբ երկրի ավերածությունների պատճառը տեսնում է իշխանների անմիաբանության, թշնամանքի և սեփական թագավորին զավելու ձգտումների մեջ, որի դեմ, պաշտոնի բերումով ամեն կերպ պայքարել է ինքը՝ կաթողիկոս Գրասխանակերտցին:

Հովհաննես Գրասխանակերտցու ժամանակակից պատմիչներից են Քովմա Արժուհին և Անանուս պատմագիրը, որոնց երկերը իրենց զգալի արժեքով միտումով ուղղված լինելով Արժուհիների նախարարական տոհմի բարձրամանը, Արեղյանի կողմից իրավամբ մկրտվում են «Տոհմային պատմագրություն» անունով: Նա, Քովմայի «Պատմություն» մինչև 850 թվականը հասնող հին մասը պատմական առումով անարժեք է համարում, մինչդեռ երկրորդ մասը, որում նկարագրված անցքերին ժամանակակից ու պահպանակ է հեղինակը, «արժեքավոր մի աղբյուր է այդ ժամանակի հա-

մար: Նա ստուգապատում գրող է, նրա գրածները մասամբ ճշտվում են և արարական աղբյուրներով<sup>2</sup>:

Քովմայի երկի ոճը բնորոշելով «ոչ միակերպ, մերթ պարզ ու գլուրին, մերթ մթին շարահյուսությամբ՝ խորա ու բորտ արտահայտություններով, անսովոր բառերով կամ բառերի ավելորդ կուտակությամբ» խճողված, Արեղյանը նրան հակադրում է բավական հմուտ, շատ կարգապահ ու ճանապարհորդած Անանուս պատմագրի «շնորհքով... ճարակավոր և... նույնիսկ գեղեցիկ» պատմիչանոնը: Թեպետ Անանուսը միտումնավոր տոհմային պատմիչ է, Արժուհիների հասցեին զովեստներ շալլող ու մեծաբան, բայց նրան Արեղյանը համարում է «Բեկական գրող», «իբ համեմատարար պարզ ու թևիկ, կանոնավոր, բնական ու հարթ ոճով»: «Նա գիտե իր խոսքը համեմել հարմարավոր իմաստալից սասցվածներով կամ գատնություններով, կամ զարդարել պատշաճ նմանություններով»: Ուսանավանի, Աղթամար կղզու կառույցների, Աղթամար բազարի և Աղթամարի եկեղեցու մասին նրա պատմագիր Արեղյանի գնահատմամբ՝ «մեր հին գրականության լավագույն նկարագրիչներից են»<sup>3</sup>:

X դարից հայտնի են ևս երկու նշանավոր պատմագիր՝ Մովսես Կաղանկատացին իր «Աղվանից պատմություն», որ Արեղյանի կարծիքով «Բեկական պատմագրություն չէ, ոչ էլ ժամանակագրություն», այլ տարբեր աղբյուրներից անբնագատ օգտված նյութերի մի բողաղություն, և Ստեփանոս Տարննցի Ասողիկը՝ իր «Տիեզերական պատմություն»: Վերջինս պատմական արժեքը Արեղյանը տեսնում է X դարի խաղաղ շինարարության լոթնասունհինգի տարիների պատմության շարադրման մեջ, ուր զգալի տեղեկություններ են արվում Հայաստանում կատարված շինարարության, զվանքների, նրանց վանահայրերի ու նշանավոր վարդապետների մասին», նկարագրվում է վանական կյանքի կարգականոնը, նորաշին վանքերն ու նրանց մեջ ժողկող ուսումը<sup>4</sup>:

Գրական առանձին արժեք է վերագրում Արեղյանը Անանուս գրուցագրի՝ Արժուհի իշխան Գրիգոր Գերենի մասին հաղորդած վկայական գրույցներին:

IX դարի հեղինակ Շապուհ Բագրատունուս սխալմամբ վերա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, գիրք I, էջ 448:

2 Անգ, էջ 454—455:

3 Անգ, էջ 516:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, I, էջ 439:

գրված դրույցների հիշյալ շարքի բնութման մեջ Արեղյանը նախ առաջացուցում է դրանց ժողովրդական ծագումն ու բնույթը, բացահայտում սամկական պարզ լեզուն ու ոճը, անարվեստ բնականությունն ու կենդանությունը: Բայց, որ կարևոր է, Արեղյանը պատմական Գրիգոր Գերենի մասին հշտաված ժողովրդական գրույցների շարահարթական բովանդակության բնութման մեջ, Գրիգոր Գերենի կենսասիրության, վանական-ճգնավորական խտասկեցութեանն հակառակ ուրախ կերտխումի, կյանքի վաշխլբի և կուսակրոնության սոսնահարման փաստերի մեջ կրեան է հանում տակավին X դարում կյանքի և աշխարհայացքի փոփոխության բացահայտ նշանները: «Վերածնության շունչ է զգալիում այս գրույցի մեջ այն ժամանակ հենց,— գրում է նա,— երբ Հայաստանում... զարգանում էր վանականության ու ճգնավորության ոգին, բայց և մյուս կողմից լինում էր կյանքի և աշխարհայեցության փոփոխություն»:

Պատմագրության հատուկ արժեքավորումը Արեղյանի կողմից, ինչպես նշվել է արդեն, պայմանավորված էր պատմագրական երկերի մեջ հին միջպական բանահյուսության ամբողջական գործերի սակայությունը և լայն օգտագործումով, բանահյուսություն, որ կազմելով մեր հին գրականության մասը, զեղարվեստական բաժինը, թափանցելով գրավոր գրություն մեջ, ըստ հեղինակների մաշակի և ունակությունների գրականացվելով ու երբեմն էլ գրական վերամշակության ենթարկվելով, զարձակ էր պատմագրության բաղկացուցիչ մասը: Հնուեարք, հայոց հին ժողովրդական վեպերի ու միջպական գրույցների Աղաթանգեղոսի, Բուզանզի, Խորենացու, Սերետի, Հովհան Մամիկոնյանի և Անանուն գրույցագրի պատմագրական երկերից առանձնացումն ու հետազոտումն ինքնիկ առաջադրում էր բանահյուսության և գրականության փոխանություն գրա-պատմական կարևորագույն խնդիրը, որ առաջ է բաշտում և պարզաբանում Մանուկ Աբեղյալը: Հին գրական տեսակների հետ փոխիփոխ, հանգամանալից հետազոտության է ենթարկվում նաև ավելայ զարաշրջանի միջպական բանահյուսությունը, որն իր մեջ էր անգրագարձբել օտար բունտափրությունների գեմ ղողոված մարտանուն նույն ոգին, ինչ բնորոշ էր ժամանակի գրականությանը:

Եթե առաջին պարբերաշրջանում միջպական բանահյուսությունն աչքի էր ընկնում իր շեշտված աշխարհիկ ոգով ու զարգափարսոսությունը և արտահայտում էր աշխարհիկ խավերի ոգորումներն

ու մարտումը սեփական զույլության և ազգային ինքնության պահպանության համար, իսկ պատմագրությունը՝ աշխարհիկ ու հոգեվոր գասերի ներքին ու արտաքին պատմությունը, նրանք շահակն ու ձգտումները՝ հիմնական միտում ունենալով ազգային պահականության և կեղեցու պահպանությունը, ապա կեղեցական գրականության մյուս տեսակները՝ վկայաբանություններ, թղթեր, հակամտություններ և լայն, սոսկ կրոնի և ազգային կեղեցու շահերն էին հետապնդում, որ վերջին հաշվով հանդում էր ազգային ինքնությունությունն ու անկախությունը պահպանելու մարտանուն: Եվ Արեղյանի գրա-պատմական հետազոտության հաջող թեման են դառնում կեղեցական գրականության հիշյալ տեսակները, հատկապես վկայաբանությունները, որոնք իրենց անուրանալի զեղարվեստական արժանիքներով հանդիսանում են մեր հին զեղարվեստական արձակի ուշագրավ նմուշները: Դրանցից հետագրության են արժանանում միայն երեքը՝ «Քաղցու Առաքյալ և Անուրխուս Կույս», «Շուշանիկ Վարդենիս» և «Վահան Գողթնացի»: Արտահայտություններ տարբեր զարաշրջանների ու կեղեցական-բաղաբանի տարբեր ձգտումների: Եթե առաջին և նմանները նպատակ սևեկին հնաճեցու հայ կեղեցու ծագումը և դրանով իսկ հիմնավորելու զավանարանական պայթյալում հայոց կեղեցու գրաված սնկախ դիրքը, ապա մնացած երկուսը արտահայտում էին քրիստոնեական կրոնի հաստատ մնալու ձգտումը՝ ընդդեմ պարսկական կրոնի և սրտական իսլամին հավատափոխվելու ստիպումների:

Այս զաղափարական հատկանշից զատ, Արեղյանը կարևոր արժեք էր վերադրում Շուշանիկի վկայաբանությանը, որ Մանուկուս Կույսի և Հոփսիմիկի վկայաբանությունների հետ հայ գրականության մեջ, թեպետ կրոնական ձևով, կեոջ ներքին բարեմանությունների, նրա հոգեկան կրթվի, բարոյական մարքություն և զույլը կամքի զեղարվեստական արտահայտություններն են: Շուշանիկի վկայաբանությունն ինքնին մի հարուստ պատմա-զեղարվեստական վավերագիր է անցյալի կեոջ ընտանեկան կենցաղի. այն «Լուսյես մի ընտանեկան գրամ է, սրտաճմլիկ, միանգամայն և սարսուռլի նկարագիր այն զաթանությունների, որոնց ենթակա են կեղև թույլ և անօգնական կանայքն իրենց բունակալ ամուսինների ձևով...»

... Բայց դա միաթանամակ և զորեղ բողոք է այն ստրկական գառն լիճակի գեմ, որ կանայք ունեցել են նույնիսկ բարձր ազնվա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, I, էջ 472:



կան տեսրում, Այս վկայարանությունն իսկապես առաջին և զեղեցիկ վիզյակն է կենշ ազատագրման մասին հայոց զբաղանդարյան մեջ՝ (ընդգծումն իմն է—Ս. 2.):

Հայ հին զբաղանդարյան զարգացման հարորդ արտահայտությունն Արեղյանը տեսնում է, ասացինք, եկեղեցական զբաղանդության այլ տեսակների (Տակաճատություն, Քուզթ, ճառ) մեջ, որոնք ունեն ընդհանուր զավանդարանական բնավորություն: Գրանք, իրենց բնույթի ու զարգացման իրավամբ համաձայն, զիտականք կոչում է «Իտականարանական պաշարի զբաղանդություն», իբրև արտահայտություն սրվող հակաբարեկեղծական պայքարի Այդ պայքարն Արեղյանն իրավամբ համարում է «փոխակերպումն այն մարտման, որ 5-րդ դարի սկզբից ի վեր հայերը վարում էին ընդդեմ հույների՝ իրենց ազգային ինքնուրույնությունն Արեմուտքում պահելու համար»: Ինքնուրույն պետականությունը կորցրած ժողովրդի ինքնությունը պահպանելու համար կարևոր էր անփական ազգային եկեղեցու գոյությունը: «Հայերի համար էլ.— գրում է Արեղյանը.— զավանդության խնդիրն ստանում է ազգային բազմաբանական նշանակություն: Հոռոմների սպիտակությունից զերծ մնալու և ազգային միությունը պահպանելու համար՝ պետք էր զավանդական զատվել նրանցից: Այդ էր պահանջում հայերի, ինչպես նաև պարսից պետական քաղաքականությունը»:

Այս պայքարն արտահայտող V—VII դարերի զավանդարանական զբաղանդությունը զատում է մի զորեղ զենք ազգային եկեղեցին, հետևաբար և միությունը պահպանելու համար. այդպիսով, սղզային բազմաբանական մտքառումը կյանքում և զբաղանդության մեջ ձևեր է բերում նաև կրոնա-զավանդարանական բնավորություն:

Գրական հիշյալ տեսակների հետ միաժամանակ մեղանում ծագվում է նաև բանաստեղծությունը, որը սկզբնավորվելով V դարում և կրելով գլխավորապես հուրեր բնույթ, հետագայում զարգացման նորանոր ձևեր է ընդունում: Հայ բանաստեղծության զարգացման պատմության մեջ Արեղյանը մինչև նարեկացին կարևոր տեղ է հատկացնում երկու բանաստեղծի՝ Կոմիտաս Կաթողիկոսին և Գավթակի Փերթողին (VII դար), որոնցից առաջինի մոտ, հանձինն «Անձինք նուիրնայր»-ի հուրեր կրել իր ավիտտով ձևեր է բերում իսկական բանաստեղծական արժեք: Իսկ Գավթակի Փերթողի «Ողբը

ի մահն Զեանշերի» քերթվածին Արեղյանը պատմական մեծ արժեք է վերագրում, այն համարելով մեր առաջին աշխարհիկ բանաստեղծության արտահայտությունը վաղ միջնադարում: Ապա, Գավթակի «Ողբը» Արեղյանն սպացույցն է համարում հին աշխարհիկ բանաստեղծության գոյության և հանգում է այն ընդհանրացմանը, որ եթե աշխարհիկ բովանդակությամբ բանաստեղծություններ մեղ չեն հասել, դա ոչ թե հերքում է նրանց երբևիցե գոյությունը, այլ «բորովհետև արտագործներն եղել են կրոնավոր և իշխողն եղել է կրոնական ոգին, ուստի նման բովանդակությամբ քերթվածները չեն պահվել»:

Այնուհետև, հին բանաստեղծության զարգացման տեսության մեջ Արեղյանը գրեթե նույնությամբ պահպանում է այն գրույթներն ու տեսակետները, որոնք առաջ էին քաշվել իր կողմից տակավին 10-ական թվականներին:

Այստեղ միայն հարկ է նկատի առնել հետևյալը.

Գր. նարեկացուն հարորդած բանաստեղծները՝ Ներսես Ենորհալու, Ստ. Սրբելյանի, Խաչ. Կելեռացու, Ֆրկիի, Հովհաննես և Կոստանյանի Երզնկացիների, Առաքել Սյունեցու և Առաքել Բաղիշեցու ստեղծագործությունների զարգացման ու զեղարվեստական հատկանիշները բննելիս, Արեղյանը իր ուշադրությունը սևնում է մտավոր այն նոր հասանքի հիմնական սկզբունքների կերպարանությունների ու զարգացման վրա, որ հայ միջնադարյան բանաստեղծության մեջ սկզբնավորվել էր Գր. նարեկացուց: Նշված բանաստեղծների երկերը վերլուծելիս, նա հաճախակի համեմատություններ է կատարում նրանց և նարեկացու արտահայտած համապատասխան թեմաների, զարգացման ու բանաստեղծական ձևվերի հետ և յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործության մեջ բացահայտում հատարակական կյանքի ազդակներով պայմանավորված թեմաների, զարգացման ու զբաղանդության պատմական տարեմանական զարգացումն ու փոխանակությունները Այսպես, նարեկացուց հետո երկրորդ մեծ բանաստեղծի՝ Ներսես Ենորհալու ստեղծագործությունը վերլուծելիս, Արեղյանը հիմնական շեշտը դնում է զբաղանդային նորարարության վրա, որ բերում էր հայ գրականության մեջ ն. Ենորհալուն՝ բանաստեղծության նախորդ մակարդակի համեմատությամբ: Հայ բանաստեղծության զարգացմանը Ենորհալու մատուցած առաջին կարևոր ծառայությունը Արեղյանը տեսնում է ազգայնական բազմազան ձևերի կիրառության և կատարելագործման մեջ, չափեր, որոնցից շատերը հայ գրական

1 Մ. Արեղյան, Հայոց հին զբաղ. պատմություն, I, էջ 354:

2 Անգ. էջ 359.

նությանը հայտնի են միայն Ենորհալու միջոցով: Ենորհալուց է սկզբնավորվում հանդի և աշխարհիկ շափերի կիրառությունը մեր բանաստեղծության մեջ, թեև դրանց մասնակի կիրառության զննարկը հայտնի էին մինչև Ենորհալին: Ենորհալին հայ բանաստեղծության մեջ բերում է նաև դրական նոր տեսակներ (պատմական պոեմ, շափածո ներբողյան, հանելուկ և այլն) և զարգացնում ու կատարելագործում է հենքերը:

Բանաստեղծության ձևերի ու տեսակների հիշյալ նորարարություններից զատ, Արեղյանը Ենորհալու ստեղծագործություններում բացահայտում է ոճական և դադափարական այնպիսի իրակություններ, որոնք տարբեր էին նարեկացուց և դալիս էին բնորոշչուս դարաշրջանի բանաստեղծության իրական պատկերը:

Ենորհալու «Յիսուս որդի-ն վերածնելիս, Արեղյանը նրա վրա նարեկացու «Ողբերգության մատյան»-ի թողած ակնհայտ ազդեցությունը և երկուսի մեջ էլ թեմայի և զգայունների նույնությունը մասնանշելով հանդերձ, միաժամանակ ցույց է տալիս «Յիսուս որդու» ոճի և ոգու զգալի տարբերությունը նարեկացու երկից: Մինչ նարեկացու «Մատյանը» գրված է «վերամբարձ պացցով ու թոփչբով», «սրտի այրուբով ու ճենճերմով», «տոշորոզ ու կրակոտ զղբամար», այս Ենորհալու երկը «մեղմ է, տխուր ու քերուշ... հանդարտ ու փափուկ», թեև ոչ պակաս ազդու, քան նարեկացու Ողբերգը:

Արտահայտչական ձևերի այս տարբերությունը Արեղյանը մասամբ բանաստեղծների անհատական խոսնվածքով պատճառաբանելով հանդերձ, էական պատճառը, սակայն, ցույց է տալիս երկու բանաստեղծների այդքան տարբեր դարաշրջանների հասարակական կյանքի ու մտայնության տարբերության մեջ: Եթե X դարում, համեմատաբար խաղաղ մի ժամանակաշրջանում, իշխող կրոնա-ճգնավորական ոգին իր օմիտակական ցավազար ձգտումներով՝ շափազանցության էր հասել և ապաշխարության ջրով միտումը արտահայտում էր զգայացունց բուռն ու զորեղ խոսքով, որի բանաստեղծական հանճարեղ մարմնավորումն է նարեկացու «Մատյանը», այս XII դարում վերածնության հեղաշրջող հոսանքը զգալիորեն զորացել էր, «Մասնագրական ալլաղիներին եղբրական տիրապետությունները» ցնցել ու վարկիվերել էին Հայաստանի ու հայ ժողովրդի վիճակը, որպիսի հանգամանքները ազդել էին նաև դարաշրջանի կրոնական ոգու վրա: Նախկին ճգնավորական խոսակեցությունն ու ողբազին ապաշխարանքի եռանդը զգալիորեն թու-

լացել էին. «չկար կրոնական հարբածությունն իր արտաքին ծանր ու կեղերիչ ձևերով»: Կրոնավորությունը մի տեսակ աշխարհիկ էր դարձել, բարեպաշտ ապաշխարողը դարձել էր ներանձնավոր, շեղում ու խաղաղ մի հավատացյալ: Եվ Ենորհալու «Յիսուս որդի-ն դառնում է դարաշրջանի կրոնական մտայնության լավագույն արտահայտությունը, իր «թե՛ րովանդակությունը և թե՛ ոճով» համապատասխանելով հեղինակի «և իրա նմաններին երբբինին»<sup>1</sup>:

Ենորհալու «եղիսոյ որդի»-ի բարձրարվեստ ու խորիմաստ վերլուծության մեջ, Արեղյանը հեղինակի օգտագործած իրական պատմական նյութի, իրական կյանքի պատկերների ու ուղղմական գործողությունների ուսուխտական նկարագրությունների, հայրենի երկրի բաղաբական լավագույն ապագայի երազի, աշխարհիկ կյանքի ծարարի ու հաղթանակի գաղափարների վարպետ բացահայտումների մեջ ամբողջացնում է Ենորհալի բերթողի դիմանկարը՝ «Մեր բանաստեղծությունը,— գրում է նա,— 12-րդ դարի կեսին արտին երկրից իջել էր երկիր և դարձել կյանքի և բնության զեղջիկ արտացոլումը ոչ միայն իր ընդհանուր էությունում, այլև բովանդակության մանրամասնությամբ, ինչպես և բնական ու սյուր ձեվով, շնորհալի Քերթողի փափուկ, արտմական կամ լուրջ հույզով և անուշ, արտաշարժ շեշտերով, որոնց ստեղծողը բնավ չէր դիմում արվեստակալ պերճուկյան ու փայլի, ավելորդ դարդարանքների: Ամեն ինչ թեև ու ճաշակավոր, անբոնազրոտ ու կենդանի»<sup>2</sup>:

Հայ միջնադարյան բանաստեղծության մեջ աշխարհիկ ոգու աստիճանական տիրապետման հետագա ընթացքը Արեղյանը բացառաբաց լայն բացահայտում է հաջորդ դարերի բանաստեղծների երկերը քննելիս:

Եթե Ստեփաննոս Օրբելյանի XIII—XIV դարերի սահմանադրված հորինած «Ողբի դիմաց կարծողիկին» և Օրբելյանին ժամանակակից հաշ. Կենսեցու «Ողբ վաս իշխանաց» երկերն Արեղյանն համարում է ժամանակի պատմական իրականությունն ու հասարակական արամագրությունները անզրադարձնող բերթվածներ և դրանց մեջ նշմարում է նախորդներին՝ Սարկավայո վարդապետի և Ենորհալու ազդային-հայրենասիրական դադափարարանության դարագացումը<sup>3</sup>, այսպե՛ս նրանց ժամանակակից Ֆերիկ ստեղծագործու-

<sup>1</sup> Մ. Արեղյան. Հայոց հին դրակ. պատմություն, գիրք II, 1946, էջ 101:

<sup>2</sup> Անդ, էջ 120:

<sup>3</sup> «Նա (Օրբելյանը—Ս. Ը.) և հաշտաոր Կենսեցին և Նրանց նման ժամոռոց արևելքները ամփոփվելով իրենց մեջ՝ աշխարհում էին մի նոր ազգային գազա-



Յլուծներում արդեն նա մեծ արժեք է տալիս հայ ժողովրդի այդ միևնույն ազգային-քաղաքական ու տնտեսական անբարենպաստ հանգամանքներով պայմանավորված սոցիալական դժգոհության ու բողոքի հուժկու նվազներին, որոնք անժանութ էին նախընթաց ողջ հայ գրականությանը:

«Նա (Ֆրիկը—Ս. 2.)— գրում է Արեղյանը,— մեր գրականության մեջ հասարակական և ազգային-քաղաքական խնդիրների առաջնահարց ընարերգուն է», «մեծ հայրենասիրական բանաստեղծ, ժողովրդի ցավերով վշտահար մի երգիչ և լավագույն ազգային ապագայի ձգտման, թաթարական լծից ազատվելու իղձի մի քարեղիչ: Նրա գրավորությունն ավելի մեծ է այնու, որ նա ազգային խնդրի հետ միաժամանակ և իրար հետ կապակցված ու միակերպ ուժով, գրադրում է նաև հասարակական-տնտեսական, դասակարգային և ընդհանուր մարդկային խնդիրներով: Եղակի ուժգնությունը և խորի ատելությունը աղաղակ է բարձրացնում աշխարհում իշխող ու հարստացող կուրիա ուժի դեմ, բուռն դարույթով նկարում կեղծերդ պարսեին, շահագործող ուժգնու ու նրա վայրագությունը: Հեղուկությամբ երգիծում բախտավոր, ազեա քահանային ու նրա պերճությունն ու վայելքը, և քնքշությամբ արգահատում խեղճներին, թույլերին ու կեղծավածններին, միշտ ձգտելով մի լավագույնի, մի իդեալի»<sup>1</sup>:

Ֆրիկի արժարժած սոցիալական, ազգային-քաղաքական մտածելների և մանավանդ «Գանգատ» բանաստեղծության վիճարանական ձևն ու շոշափած խնդիրները Արեղյանը զննատեսում է գրագրական տեսանկյունից: «Գանգատ»-ի ձևն ու նյութը համեմատելով նարեկացու «Ողբերգության մատյան»-ի հետ և մատուցանելով ձևական նմանություններ, նա միաժամանակ բացահայտում է երկու մեծ բանաստեղծների շոշափած խնդիրների տարբերությունը: Եթև նարեկացուի մտահոգված է իր և իր նման կրոնավորների «կորած հոգու» անգորաշխարհայն փրկության և արտահայտել է իր դարի վանական-կրոնական կյանքի ու միստիկական

անուրջները», ապա Ֆրիկի մտահոգության առարկան է «ժողովրդի իրական դժբախտ կյանքն այս աշխարհում և նրա մարմնավոր փրկությունը տառապանքից»: Ֆրիկն էլ «արտահայտում է իր ժամանակի ազգային և հասարակական իրականությանն, իր ժամանակի մտածողների ու ձգտումների»: Երկու մեծ բանաստեղծների շոշափած խնդիրների տարբերությունն էլ Արեղյանը դարձնում է զաղափարական այն սահմանագիծը, որ բաժանում էր և միաժամանակ կապում միմյանց նարեկացու և Ֆրիկի ապրած դարաշրջանների հասարակական մտայնությունն ու միտումները: Եվ Ֆրիկի ստեղծագործությունը լրիվ հիմք էր տալիս Արեղյանին քննարկելու ժամանակի բանաստեղծության զաղափարախոսական նկարագիրը, հաստատելով, թե «մեր բանաստեղծությունն երկուսից ինչնելով աշխարհականացել է արդեն և դարձյալ կապվել իրական աշխարհի կյանքի, երբի հետ»: Միաժամանակ վերացահոյություն էր անում, որ «այդ տեղ չի նշանակում, թե արդեն արտվությունը կատարելապես զրկում էր երկրին»: Դրա համար բավարար հիմք կար և դա, առաջին հերթին Ֆրիկի հոգևոր-կրոնական, բարոյա-խրատական բովանդակությամբ բանաստեղծություններն էին, տիպիկ միջնադարյան բնավորությամբ:

Միջնադարյան հայ բանաստեղծության մեջ աշխարհիկ զաղափարների զարգացման հաջորդ աստիճանը Արեղյանը ցուցահանում է Ֆրիկին ժամանակակից Նովիանենս Երզնկացու իմաստասիրական աթերում: Միջնադարյան կրոնական զաղափարախոսության բուն կորիզը կազմող հոգու և մարմնի հարաբերությունն ու պայքարը, որի մեջ միշտ առաջնությունը վերապահվում էր հոգուն՝ ի վնաս մարմնի, Նովիանենս Երզնկացու մոտ այդ պայքարը լուծվում է մարմնի օգտին: Արեղյանը նման ըմբռնման մեջ իրավամբ տեսնում է հայ քնարերգության զաղափարական հեղաշրջումը:

«Այսպիսի աշխարհայեցությունը վերջ է տրվում հին կրոնական քնարերգությանը, որ միստիկական բնավորություն ուներ և արտահայտվում էր անվերջ ողբասացությամբ ու մարմինը մեղսցնելու նիգերով... Մարմինն ստանում է իր իրավունքը: Մրանից հետո մի քայլ էր մնում, որ բանաստեղծը մարմնի օգուցն աներ, և մեր բանաստեղծությունը թողնելով իր մասը բնավորությունը՝ դառնար լուսաշող ու զվարթ»<sup>2</sup>: Այդ արդեն Նովիանենս Երզնկացուն չէր

փարախոսությունը զարգացնել և դրանով առաջ բերել ազգային հասարակական շարժում, այն, որ ցրված Հայեր ժողովրդին մայր հայրենիքի մեջ, և Հայաստանում, հատկապես Վաղարշապատում լինի ազգի ոչ միայն կենդանական, այլև քաղաքական կենտրոնը (Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 217):

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 265, 273:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 274—275:

<sup>2</sup> Անց, էջ 305, 306:

վիճակված, այլ նրա հետևորդներին, և առաջինը՝ Կոստանդին Երզնկացուն:

Հայ բանաստեղծության աշխարհականացման ճանապարհին Արեղյանը վճռական գեր է վերապահում Հովհ. Երզնկացու հայրենակցին ու կրասեր ժամանակակցին՝ Կոստանդին Երզնկացուն:

Բանաստեղծի ստեղծագործության հուշակապ վերլուծման և արժեքավորման մեջ, Արեղյանը շեշտը դնում է Կոստանդինի այն բերթվածներին ու մտալիներին վրա, որոնց մեջ երևան են գալիս միջնադարյան բանաստեղծության զարգացման բացահայտ աշխարհիկ գրեկորումները: Նա հատկակի բնութայն է ննթարկում Կոստանդինի արեգակի, զարնան և լուստ բաները, բացահայտում գարնանային կյանքով ու բուրմունքով լցված բնության մեղու և բնույշ տեսարանները պատկերելու և զովեզովելու բանաստեղծի բացառիկ տաղանդը և ցույց տալիս, որ նման բերթվածները բնույթյան օճենեղգություն են և հիմնականում ազատագրված են նարեկացու բնության տաղերին հատուկ կրոնական այլաբանությունից: Որքան էլ հեղինակը արեգակը, լույսն ու զարուրը երգում է քրիստոնեական սիմվոլիկայի անանկուններից, այդուհանդերձ նման երգերը կրոնական կաշկանդումներից ձերբազատված ու ինքնուրույն բնության երգեր են, որոնք Արեղյանն իրավամբ համարում է զրական մի նոր տեսակի՝ բնույթյան բնարեգություն նորամուծություն մեր հին բանաստեղծության մեջ<sup>1</sup>:

Կոստանդինի բնության երգերում և հատկապես վարդ ու սոխակի այլաբանական սիրավեպում Արեղյանը ցուցահանում է բանաստեղծի մյուս կարևոր թևան՝ սիրո գովաբանությունը: Վարդի և սոխակի այլաբանական սիրավեպը համեմատելով Կոստանդինից 250 տարի հետո հանդես եկած իտալական վերածննդի նշանավոր բանաստեղծ Տորկվատո Տաստիչի՝ «Ալատազրված Շրուսարեմ»-ի համապատասխան մտախիմների հետ, Արեղյանը գտնում է, որ ընչամիտ երկու բանաստեղծներին մոտ առկա նյութի նույնության, Կոստանդինի գերթվածի մեջ սերը նույնիսկ այնքան վիճ ու վսեմ է, դիզա հեռաանք չէ փափկության դրախտում, այլ, բոտ կրոնական հայացքի, բխելով Սեր աստծուց՝ դարձած է հավերժ կենդանության աղբյուր, մի աստվածային ստեղծագործ կենդանարար ու զեզեց-

կացնող զորություն ամբողջ բնության համար<sup>2</sup>, Իսկ XIII—XIV դարերի հայ գրականության համար Կոստանդինի հիշյալ սիրավեպը Արեղյանը համարում է «մեր հին բանաստեղծության մի աննման, մի փարթամ փթթած ծաղիկը, որ թեև այլաբանությամբ, բայց այնպես զուսման էր ու վճիտ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցրիվ իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է աշխարհիկ բովանդակությունը»<sup>3</sup>:

Մերո այդ աշխարհիկ զգացումները որոնելով պետք է գտնելին իրենց գրեկորման ընտան ակերբ: Եվ Արեղյանն իրոք ցույց է տալիս, թե ինչպես Կոստանդինը Հովհ. Երզնկացու նման ևս հոգու և մարմնի հակամարտությունը երգելիս, մարմնին տալիս է իր իրավունքը և արամբանորին իր հարող երկու սիրային տաղերում գովեբզում է արդեն մարմինը, սիրուհու մարմնի գեղեցկությունը և այն էլ բանաստեղծական անկողծ ներշնչանքով: Համեմատելով սիրո այդ բաները ս. Կույսին գովեբզող նարեկացու տաղերի և դուսանական սիրո հարեմների հետ, Արեղյանը գտնում է իրավամբ, որ նարեկացու առ ս. Կույսն ունեցած միատիկ սիրուց անցումը Կոստանդինի իրական մարմնական սիրուն, կատարվել է բնականորեն՝ զուսանական երգերի ու միատիկական բանաստեղծության աղղեցությունը: Եվ դա երևում է իրական սիրո առարկայի աստվածացումից, այն տարբերությամբ, սակայն, որ եթե միատիկը իր սիրո առարկային՝ աստծուն ձգտում էր միանալ մահվանից հետո միայն, ապա Կոստանդինի մոտ միացման այդ ձգտումը արտահայտվում էր սիրուհու հետ խնջույթի և ուրախության նստելու, այսինքն՝ հարսանիքի բաղձանքով<sup>4</sup>:

Արեղյանը Կոստանդինի ստեղծագործության վրա ցույց է տալիս դուսանական երգերի ոչ միայն դադափարական, այլև ձևական-տաղաչափական աղղեցությունը: Այս բոլորով հանդերձ, եթե նկատի առնենք նաև այն, որ Կոստանդինը Ֆրիկի նման ևս քնարերգության ներկայացուցիչ է և իր բաներում շոշափում է անձնական այլաբան ապրումները, որ Արեղյանը իրոք համարում է անհատի բնորոշությունից անջատվելու, իր արժեքն ստանալու և իրեն պաշտպանելու և ցուցադրելու նոր աշխարհայացքին համապատասխանող երևույթ, ապա պարզ կդառնա նրա բանաստեղծության պատմական նշանակությունը:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 317:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 324:

<sup>2</sup> Անո, էջ 327:

<sup>3</sup> Անո, էջ 338 և հոն.:



Կոստանդին Երզնկացիով Արեղյանը բոլորում է վերածնության շրջանատեղծության զարգացման մոտ 300 տարի տեղը առաջին շրջափուլի տեսությունը, երբ կրոնական բանաստեղծությունը տակավոր առ տակավոր աշխարհականացավ ձեռք է բերում գրեթե բոլոր էական բնմաները, զարգափարեերն ու զրական տեսակները:

Հայ բանաստեղծության զարգացման հետագա ճակատագիրը թեպետ կապվում է Հայաստանի համար ավերմունքներով, կոտորածներով, տեղահանումներով բնորոշվող XIV—XVII դարերի պատմական իրականության հետ, բայց Արեղյանը ցույց է տալիս, որ էրկրի անուսա-բաղաբական և կուլտուրական ընդհանուր անկման պայմաններում անգամ, առանձին հեղինակների կողմից շարունակվում է հայ բանաստեղծական մտքի անընդմեջ վերելքը՝ շատ բնորոշ ու փայլուն բանաստեղծություններով», «կրոնական ու այլ բովանդակությամբ» վիպական թերթվածներով, սերավիպով ու նովելներով հասկանալով:

Հայ եկեղեցական բանաստեղծության վերջալույսի ամենակարկառուն դեմքը Արեղյանը համարում է XV դարի հեղինակ՝ «Տաթևեան Սյունեցուն», որի զրական ժառանգության ամենանշանավոր բանաստեղծական կոթողը «Աղամզիրբն» է, մի եռադրեր վիպական-կրոնական թերթված, որ թեպետ մեծ տեղ են բռնում սքզլաստիկական մեկնությունն ու դատողությունները, բայց այն, մասնավորապես երկրորդ գիրքը, «եր վիպական մասով մի սիրուն նորություն էր մեր կրոնական բանաստեղծության մեջ»:

Գրականության պատմարանի հայացքով, Առաքելի երկը նորություն էր ամենից առաջ ընդհանուր գրականության մեջ էր շուրջափած թեմատիկայով. դա դրախտի կորստի թեման է, «Ինչ որ շատ ուշ դարձած է բանաստեղծության առարկա այլ ազգերի մեջ»: Բայց նորությունը միայն թեմայի մեջ չէր, այլ աստվածաշնչային սեղմ ու ցամաք գրույցի բանաստեղծական կենդանացման ու ճոխացած վերամշակման, որի հանդամանալից թեմությունը Արեղյանը վեր էր հանում Առաքելի երկի զրական-զեղարվեստական արժանիքները, այսպե և գեահաստում այն «Աղամզիրբ»-ը համեմատելով նարեկացու «Ողբերգության մատյան»-ի և Ենորճալու «Յիսուս որդու» հետ և համարելով այն «մեր երրորդ կրոնական բանաստեղծական մեծ երկը», նա ցույց է տալիս, որ եթե նարեկացու

և Ենորճալու ողբերգությունները թնարբղություններ էին, այսպե «Առաքելի գործը մի առարկայական բանաստեղծություն է: Այդ էր ժամանակի պահանջը: Կրոնական ոգին չէր մեռած, բայց սառած էր. մարդկանց հարկավոր էին կրոնական բանաստեղծական գրքվածներ, ոչ թե նրանց վրա աղթելու և իրենց մեղքերն ողբալու համար, այլ գլխարձույթամբ կարգալու և սովորելու»: Այսինքն, եկեղեցական գրվածքների անգամ, նոր մտավոր հոսանքի վերածման հետևանքով դանդում էին զեղարվեստական հաճույքի և զաստիարակության առարկա, այլ խոսքով՝ ձեռք էին բերում զրական-զեղարվեստական արժեք և նշանակություն:

Բացի Առաքելի Բաղիշեցուն նվիրված անավարտ դիվից, ուր հեղինակի ղեղը մայրաքաղաքին Ստամբուլ... թերթվածը Արեղյանի կողմից բնութագրված է իբրև օսմանցի թուրքերից պատուհաստում բրիտանյա լքված ժողովուրդների, մասնավորապես հայերի քաշալեմման ու քաղաքական ազատության հուսադրման մի քաղաքացիական բանաստեղծություն, XV և հետագա դարերի հայ բանաստեղծության ընթացքն ու զարգացումը «Հայտը հին զրականության պատմության» երկրորդ գրքում ներկայացված է Արեղյանի 1899—1900 թթ. և հետագա տարիներին Գևորգյան ճեմարանում կարգացված դասախոսություններով: Սրանց մեջ թեպետ տակավին շատ բան մնում էր լքացահայտված և չամակարգված, այդուհանդերձ XV—XVII դարերի բանաստեղծների թեմությունը տարվում էր համապատասխան հայ հին գրականության զարգացման հեղինակի հետագալում սահմանած տեսության, որի ընդհանուր ուրվագիծը պարզ է եղել Արեղյանին տակավին իր գիտական գործունեության վաղ տարիներին:

XV—XVII դարերի բանաստեղծներ՝ Մկրտիչ Նազաշի, Քերովրեի, Հովհաննես Թլիզուրանցու, Գրիգորիս Աղթամարցու և Նազաշ Հովհաննեսի ստեղծագործությունների մեջ, Արեղյանը բացահայտում է մի յուրօրինակ թեմատիկ ընդհանրություն. դա մաներգությունն ու սիրելզությունն է, որ բնորոշում է հայ երկհարյուրամյա աշխարհի բանաստեղծության պատկերը, փոխանցվում հեղինակից հեղինակ և զաղափարապես զարգանում ու փոփոխվում: Նա՝ թեմատիկայի այս ընդհանրությունը դարձնում է իր թեմությունների արժամարանական առանցքը և դրա վրա կառուցում հայ բանաստեղծության երկրորդ ընթացքի պատմությունը:

1 Մ. Արեղյան. Հայտը հին զրակ. պատմություն, գիրք II, էջ 373:

1 Մ. Արեղյան, Հայտը հին զրակ. պատմություն, գիրք II, էջ 387:

Մասնորոշման հիմքը Արեղյանը տեսնում է աշխարհի ունայնության գաղափարի մեջ, որ բնորոշ լինելով նախընթաց դարերի հայ բնաբերդությանը, Մկրտիչ Նաղաշի (XV դար) մոտ արգեն փոխարկվում է իրատական ընդհարմարության մասձվան երգի Բայց Նաղաշի աշխարհի ունայնության ու մասձվան երգի գաղափարական նպատակը Արեղյանը հակադրում է նարեկացու աշխարհուսացության ձգտումներին: Եթե նարեկացին բարոյում էր ուրանալ մարմինը հանուն հոգու փրկության, ապա Նաղաշը ողորում է աշխարհի անցավորությունը, որ բխում էր նրա աշխարհասիրությունից: Աշխարհը աշխարհի ունայնության համար, ուստի է նա ցավագին, սրտառու շեշտերով ու կենդանի պատկերներով երգում է երեսասարգի մասը, նրա անհուն կարոտը կյանքի նկատմամբ:

Նույն այդ թեման, իր բանաստեղծական ձևով ու բովանդակությամբ Արեղյանը կատարելության է հասած համարում Քերտվրի մի տաղում, որ զարնալ ներասասարգի մասձվան կենդանի ու ցնցող նկարագրությունների մեջ ի հայտ է գալիս մարդու ուշնությունը մասձվան դիմաց: Բազ հաջորդ բանաստեղծի՝ Հովհաննես Բլկուրանցու (XV—XVI դդ.) մասձվան երգերում Արեղյանը երևան է հանում մի այլ գաղափար՝ մանվան առասպել և առեւտրյունը մանվան նկատմամբ: Եվ այդ գաղափարն Արեղյանը պատճառաբանում է բանաստեղծի կենսասիրությամբ, որպես ու զվարթ ապրելու բուն տենչով: Վերջինս է սերտորեն աղերսվում սիրու վայելքի գաղափարը, որի երգն էլ կազմում է Քլկուրանցու բնարի ամենահնչուն լարը:

Արեղյանը կյանքի ու սիրու վայելքի գաղափարով է հիմնավորում Քլկուրանցու լավատեսությունն ու աշխարհասիրությունը՝ անգամ մասձերգելիս: Քլկուրանցու սիրու երգերում շարզեն մարմինն է իշխում իր թանձարացած, կրթավոր, ցանկական պահանջով, մարդը երկնային ուրարներից իջել է իրական աշխարհը և իրական կյանքի վայելքը<sup>1</sup>: Եվ Քլկուրանցու սիրու քնարերգության մեջ Արեղյանը կարևոր արժեք է տալիս կնոջ դեղեցիկ մարմնի գովքին, որ թեպետ գալիս էր հայ նախընթաց բանաստեղծությունից, բայց Քլկուրանցու զրլի տակ ձևով է բերում բուրբոլին նոր արամազորություն ու հնչողություն: Կնոջ ներքինը գրկվե ոչ մի արժեք չունի բանաստեղծի համար, էականը մարմինն է և Եսերն այլևս մի ներքին մտերմական ուժ չէ, հոգեկան գաղտնի ցավերի ու վշտի ազդուր,

այլ ֆիզիկական հույզի մի բունկում միայն դեղեցիկ կնոջ տեսիլը<sup>2</sup>: Ու վերջապես մարմնական սիրու պատճառած ավայտանքների ու տառապանքների ցուցահանումով, որ Քլկուրանցու սիրու քնարերգության բնորոշ մտախիչներից է, Արեղյանն անցնում է մեր հին բանաստեղծության լրիվ աշխարհականացումը՝ սիրու և վայելքի իր բուն ձգտումներով:

Քլկուրանցու կրոտեր ժամանակակցի՝ Գրիգոր Աղքատաբեցու քնարերգության մեջ մասձվան է սիրու միևնույն մտախիչների ավայտությունը շեշտելով, Արեղյանը մատնանշում է առանձնապես նրա բանաստեղծությունների զեղարվեստական ավելի դեղեցիկ ձևն ու բրուտն ավյունով և մարուր ու խորացրած բովանդակությունը: Եթե Արեղյանաբեցու մասձվան երգում նա բացահայտում է բանաստեղծի բողոքը մասձվան դեմ և միաժամանակ՝ անհուն սերն ու կարոտը կյանքի վայելքի նկատմամբ, ապա նրա սիրու երգերում՝ անկեղծ ավյունով, շրջո ծաղկուն նրանգներով նկարված սիրու առարկան ու նրա հանգեղ պատճած բերնը, մարուր և աղնիվ առարկաները: Աղքատաբեցու սիրու երգերում Արեղյանը բացահայտում է մի հասկանիչ՝ կնոջ ներքին բարեմասնությունների գովքը, որ առաջին անգամ է մեր բանաստեղծության մեջ հանդիպում:

Հավաստելով հայ հին բանաստեղծության մեջ խրախճանքի երգերի գոյությունը և առաջ բերելով ու գնահատելով ուշ միջնադարյան նման բնույթի անանուն կամ հեղինակալին մի բանի տաղերի նմուշներ, Արեղյանը շխարհածանքի ամենից նուրբ և աղնիվ ու ճաշակավոր երգիչ է համարում XVII դարի բանաստեղծ Նաղաշ Հովհաննեսին: Գողթնեցի այդ առաջասացի ուրախության երգերը նա գնահատում է իրեն Եմեր հին բանաստեղծության ամենից զվարթ երգեր, ...որոնց մեջ կյանքի հրձվանքն արտահայտված է ամենուրեք, միաժամանակ և աղնիվ շեշտերով<sup>2</sup>: Խրախճանքի նախորդ երգիչների ուսողի սին պարծանքը շունի Հովնաթանի և ոչ ինչ ուրիշների աշխարհի ունայնության ողորմ Նույնաթանի և ոչ ինչ ուրիշներից է, որի համար աշխարհի ունայնության գաղափարը հենց պատճառ է դառնում անցողիկ ու կարճատև կյանքը ուրախ ու զվարթ վայելելուն: Մարմինը պարզով ու արաշխարհում անհնչելը Հովնաթանի համար արժեք չունի, Եմարմինն իր պահանջն ունի և նրան բավականություն պիտի տալ իր պա-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 407.

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, II, էջ 407.

<sup>2</sup> Անգ, էջ 431.



Նաչի համեմատ. հոգին էլ իրն ունի, նրան էլ «արդարութեան խօսքերը» կատարելով պիտի բավականություն տայ<sup>1</sup>: Այլ խոսքով՝ ինչպես նշվել է արդեն, Հովնաթանի մոտ «բրիտանական ոգին և աշխարհասիրություն... հաշվված են... և վերջ է տրված մեր հին բանաստեղծության ցավադին շեշտերին»<sup>2</sup>: Այդ միեւնույն հայացքը երևան է դալիս նաև Հովնաթանի բնության և սիրո կրօնքում, ուր կհեն ու բնությունը «կյանքի խնշույթի մի մասն» են կազմում, զանում աշխարհի վայելիքի մի միտանական մարմնացում: Այսպիսի հետեւություններն էին Արեղյանին բերում այն վերջնական մտահանգմանը, թե «նազաչի կրօնքով մեր քնարերգությունը կատարելագույն աշխարհականացել է, նա արդեն նոր ժամանակի կրօնք է»<sup>3</sup>:

Հովնաթանով, ըստ Արեղյանի պարբերացման, բոլորում էր հայ բանաստեղծության զարգացման վերածննդի շրջանը: Չորրորդ՝ զրականության նորոգման պարբերաշրջանում, այսինքն XVII—XIX դարերի ժամանակաընթացքում, Արեղյանը «եկեղեցականների և եկեղեցական նյութի մեջ» բանաստեղծություն չի գտնում: Այս շրջանում բանաստեղծության անօրինությունն անցնում է աշխարհաբար լեզվով և մեծ մասամբ տեղական բարբառներով կրօնք ժողովրդական կրօնքներին, որոնցից Արեղյանը կանգ է առնում միայն կրկուսի՝ Խասպիկ Երեցի (XVII դար) և Սայաթ-Նովայի (XVIII դար) վրա: Առաջինին համարելով կրոնական և բնության կրօնք, բանասերը հանդամանորեն քննության է առնում միայն Սայաթ-Նովայի ստեղծագործությունը, այն օրակելով իբրև քնարական-աշուղական բանաստեղծություն:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերը բաժանելով հիմնականում երկու խմբի՝ խոհա-խրատական և սիրային կրօնքի, Արեղյանը առաջինների մեջ բացահայտում է մեր միջնադարյան բանաստեղծության կական թեմաներից մեկը՝ հոգու և մարմնի հակադրությունն ու պայքարը, որը իր կրկնությունը շարունակ տանջում ու անհանգրստացնում է բանաստեղծին: Հոգու և մարմնի այդ երկվական հակասության մեջ, ըստ Արեղյանի, ի վերջո բանաստեղծի մոտ դերբայացություն է ձևեր բերում հոգուն զավանկելու գաղափարը, որ վերաճում է աշխարհափոխության սեւ մեր կրօնքի վերջապահ

բաշխում է վանք»<sup>4</sup>: Իսկ Սայաթ-Նովայի սիրո կրօնքը գնահատելիս Արեղյանը բավարարվում է բանաստեղծական մի քանի կարևոր նկատողություններով միայն: Իրավամբ հավաստելով, որ կրօնքի սիրային քնարերգության մեջ կենտրոնական տեղը բռնում է սիրո առարկայի՝ «կենտրոն արտաքին զեղեցկության գոգրը», իսկ վերջինս կերպավորման բանաստեղծական ձևերը՝ XV—XVI դարերի հայ, ինչպես նաև արևելյան կրօնքից փոխառած, նա Սայաթ-Նովայի ներկայացրած կնոջ արտաքին նկարագրի մեջ գրեթե անհատականության կնիք չի գտնում: Ոչ միայն արտաքինի նկարագրության, այլև «հաճախ զգացումների արտահայտությունների մեջ» Արեղյանը «տարբերություն» չի նկատում. «զգացումները,— գրում է նա,— միեւնույն ձևով կամ ֆորմուլով են արտահայտվում»: Բայց և այնպես Արեղյանը արգարացիքներեն հավաստում է, որ Սայաթ-Նովան թեպետ սերը կրող է կանխանման ձևերով, բայց զուտ անձնական շեշտերով, այդ սերը մի իդեալական գաղափար չէ, այլ մի իրական նյութական զվարճություն»<sup>5</sup>:

Այս ամենը ճիշտ է, հարկավ: Բայց Արեղյանը, անշուշտ, ուսումնասիրության սեղմ կոնտեպեկտային ձևի պատճառով, բավարարվում է միայն ճշմարտության հավաստումով. նա գրականագիտորեն չի ընդլայնում ու խորացնում այդ բանաձևային պատկերների և այլ արտահայտչաձևերի տակից փյալատակող բանաստեղծի անձնական, զուտ սուբյեկտիվային բուռն ու վարակիչ տրամադրությունները, որոնցով անհատականում, առանձնանում ու բարձրանում է Սայաթ-Նովան:

Այդպես, տարբեր հարյուրամյակների, տարբեր խառնվածքի ու անի բանաստեղծների ստեղծագործությունների հանդամանակից բնությունների մեջ, Արեղյանը պատմական ու արամբարանական կրու հետևողականությամբ բացահայտում է միջնադարյան հայ բանաստեղծական մտածողության կրոնականից դեպի լրակատար աշխարհիկը վերթնաց գծով կատարվող զարգացումը, որի վերացարկած տեսությունը նա օվիլ էր արդեն 1916 թվականին:

Բանաստեղծությունից բացի, առանձնակի արժեք ունեին վերածնունդի շրջանի գրական մյուս տեսակների և պատմա-մշակութային տարբեր իրականությունների Արեղյանի կատարած քննությունները, որոնց մեջ երևան էին հանգում մի կողմից հայ հին

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 430:

<sup>2</sup> Անդ, էջ 429:

<sup>3</sup> Անդ, էջ 436:

<sup>4</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 466:

<sup>5</sup> Անդ, էջ 465:

գրականության հետագա համակողմանի զարգացումը, մյուս կողմից՝ հայ կյանքի ու մշակութային տարրեր բնագավառներում նոր մտավոր հոսանքի արմատավորման ու վերածնունդի ամբողջական պատկերը:

Վերածնության շրջանում բանաստեղծության աշխարհականացման, բուռն զարգացման ու բարգավաճման հետևանքով պատմագրությունը, որ նախորդ շրջանում օժտված էր գեղարվեստական բացահայտ հատկանիշներով, այժմ, բացառությամբ Լաստիվերոցու «Պատմության», աստիճանաբար զրկվում է բանաստեղծական արժանիքներից, սեղմվում գեղարվեստի ժամանակագրական նկարագրության շար ու ցամաք ձևերի մեջ և փաստորեն վերածվում է ժամանակագրության: Այստեղ, անշուշտ, զեր է խաղում, ինչպես նշում է Արեղյանը, նաև ազդեցությունը ընդհանուր քրիստոնեական գրականության, ուր արդեն այդ ժամանակ սիրված ու տարածված է եղել տարեգրությունը կամ ժամանակագրությունը: Բայց փոփոխությունը միայն արտահայտչական էր, բնորոշվում է փոփոխվում է նաև հայացքը պատմական իրադարձությունների դեմահաման նկատմամբ, այսինքն պատմահայեցությունը: Եվ այդ իրողությունը Արեղյանն ամենից առաջ բացահայտում է XI դարի հեղինակ Արխատկես Լաստիվերոցու «Պատմության» մեջ, ուր, ինչպես տեսիլ ենք արդեն, Լաստիվերոցին, թեպետ կրոնական ձևովով, ազգի ուժը նրա ներքին բարոյականությունն է համարում և նրա փրկությունը, հակառակ ճգնաժամական ոգու, գտնում է այս աշխարհում՝ իր իսկ ներքին բարոյական կազմակերպվածության բարձրացման շնորհիվ՝ դիմադրի մարմնական դորություն ստանալու մեջ<sup>1</sup>:

Այս նոր ըմբռնումով է Արեղյանը պատճառաբանում Լաստիվերոցու աշխարհասիրությունն ու հայրենասիրությունը, որ նա ցայտուն կերպով դրսևորված է գտնում հայրենի շեն ու բարերբքաղաքների, անդատանների երբեմնի բաղաբույական անկախության, նրանց կործանման ու ավերմանի կարոտագին ու սրտակեղծ ողորի մեջ: «... նա ոչ թե աշխարհի ու կյանքի ունայնությունն ու ուշնշությունն է երզում, ինչպես Փրիգոր նարեկացին իր Ողբերգության մեջ, այլ աշխարհի, Հայոց գեղեցիկ ու շեն աշխարհի ուշնշացումը: Ունայնության գաղափարի նշումը անգամ չի երևում նրա մեջ... նա

սիրում է իրական կյանքը: միայն նա ցամաքում ու լավիս է, չի ուզում, որ այդպես ավեր լինի, և ցանկանում է, որ աշխարհը մնար իր նախկին դրության մեջ: Ահա նրա վշտի ու հեծեծանքի աղբյուրը— աշխարհասիրությունն ու հայրենասիրությունն»<sup>2</sup>:

Արեղյանը Լաստիվերոցու «Պատմությանը» առյուծ է բանաստեղծական մեծ արժեք, նախ՝ իրական կյանքի պատկերների ճշգրտությամբ, բայց սրտահույզ ու զեղչցիկ վերարտադրման, նույր ու վարակիչ քնարականության և ապա արտակեղծ ու մորթորեն հայրենասիրական ողբեր հորինելու համար: նա իսկապես բանաստեղծ պատմիչ է, որի պատմագրական երկին Արեղյանն ավելի բանաստեղծական արժեք է վերագրում, քան պատմականը<sup>3</sup>:

Լաստիվերոցիով փաստորեն ավարտվում է հայ գեղարվեստական պատմագրությունը, բայց նրա աշխարհասիրությունն ու հայրենասիրությունն զաղափարները առավել խորանում, հարստանում են նորանոր կողմերով, ինչպես գալիքի բանաստեղծության, այնպես էլ պատմագրության ու ժամանակագրության մեջ:

XI—XII դարերի հեղինակ Մաթթես Ուտեյցու «Ժամանակագրության» քննությամբ Արեղյանն արդեն ցայց է տալիս հայ պատմագրության որակական անցումը ժամանակագրության: Ուտեյցու երկը մի անցման շրջադարձի օղակ էր, որը թեպետ մի կողմից շարունակում էր պահպանել մասամբ նախորդ շրջանի պատմագրության, հատկապես Լաստիվերոցու բերմը պղպցմունքն ու շունչը: մյուս կողմից, սակայն, Ուտեյցին ներքին կապակցությունից զուրկ զեպերի ու իրադարձությունների ժամանակագիր է: Արեղյանը Ուտեյցու երկում ցուցահանում է Լաստիվերոցուն հատուկ հարենասիրությունը, երբեմն ողբասացությունը, իսկ պատմական առանձին անցուղաբանքի պատճառների ճիշտ դեմահաման հարցում «Ուտեյցինի բարձրանում է պատմագրի աստիճանի. նա հիշում էր մտնել է պատմական իրականությունը և զեղչցիկ արտահայտել է այդ»<sup>4</sup>: Թեպետ Ուտեյցու «Ժամանակագրության» մեջ Արեղյանը նշում է բազմաթիվ ավերաբաշտական իրողությունների անկախություն, և զրանց նկատմամբ հեղինակի նախապաշարված դյուրահավատությունը, այդուհանդերձ նա գտնում է, որ Ուտեյցու երկը օրը հարուստ բովանդակությամբ շատ կարևոր մի աղբյուր

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 64:  
2 Անդ, էջ 37:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, II, էջ 39:

2 Անդ, էջ 42:

3 Անդ, էջ 69:



է պատմութեան համար»<sup>1</sup>; Գրական տեսակետից ևս Արեղյանն այդ երկում մի շարք արժանիքներ է բացահայտում. ինչպէս՝ պարզ ու անպաճույճ ոճ, «կենդանի և աշխույժ, նույնիսկ ազդու» նկարար-տեսիլուններ, որ սերում է ժողովրդական բանահյուսութիւնից, հայրենասիրական ազնիւ պոետիկութից բունված «գեղեցիկ գրական հատկանիւն» և այլն<sup>2</sup>:

XII դարի մյուս ժամանակագիրներին (Գրիգոր Երեց, Սամուէլ և Մխիթար Անեղիներ) վրա Արեղյանն այլևս կանգ չի առնում, այլ անցնում է XIII դարի հայ պատմագրական երկերին, որոնցից առանձնապէս նախընտրում է շորսը՝ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ը, Վարդան Արեւելցու «Պատմութիւն տիեզերական»-ը, Մաղաբիա Արեղայի «Պատմութիւն վասն ազգին նետողաց»-ը և Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական»-ը:

Արեղյանն առանձնապէս բարձր է գնահատում Կիրակոս Գանձակեցու «Պատմութեան»՝ հեղինակին ժամանակակից ռազմա-քաղաքական իրազարմութիւններին նկարագրութեան պատմական արժեքը. «Նրա (իմա՝ Կիրակոսի—Ս. Հ.) հաղորդած հարուստ տեղեկութիւններն բնդհանրապէս մեծ արժեք ունին և՛ արեւելյան, և՛ արեւմտյան Հայոց, ինչպէս և Վրաց պատմութեան համար... Նրա այլ գործն իր ամբողջութեամբ մեր առաջ բաց է անում մի շատ կարեւոր պատմական դարաշրջանի պատկերը», այսինքն «Յաջողութիւններին» պատկերը: Անգամ Կիրակոսի «Պատմութեան» մեջ սուկա սին գրուցներին Արեղյանը կարևոր արժիք է վերագրում այն իմաստով, որ դրանք «Բրեւնց կողմից պարզում են այն ժամանակի և իրեն՝ Կիրակոսի, հետը նաև իր ժամանակակից մտալորականների հասկացողութեան մակարդակը»<sup>3</sup>: Ազգագրական ու լեզվա-պատմական առանձնակի արժեք ունեն Յաջողութիւններն ու Նրանց լեզվի մասին Կիրակոսի հաղորդած ստույգ տվյալները:

Գրական հորինվածքի առումով, սակայն, Արեղյանը արժանիքներ չի գտնում Կիրակոսի երկում, բանզի այն «մի կարգավոր լալ ամբողջական նրկ չէ». այնտեղ «գեղպերն իրար ետևից պատ-

մբովում են բավական խառն դասավորութեամբ»<sup>4</sup>: Բայց Արեղյանը գնահատում է նրա պարզ, անպաճույճ պատմելատճը, առանց ճանր-աստատական դարգաբանքների ու վերամարմնութեան: Շնորհ երկի մեջ,— գրում է Արեղյանը,— կան շատ հատկանիւններ, որոնք մենակ, առանձին առած շատ գեղեցիկ ու դրավիչ են իրենց պարբերութեամբ ու անկեղծութեամբ, երբեմն անգամ իրենց միամտութեամբ և հեղինակի կենդանի ասորումներով<sup>5</sup>:

Վարդան Արեւելցուն գնահատելով իբրև «մեծ ու արդունաշատ ուսուցիչ», զրական մեծ վաստակ ունեցող հեղինակ, Արեղյանը, սակայն նրա «Տիեզերական պատմութիւն»-ը գրական երկի առումով անգամ Կիրակոսի «Պատմութիւն»-ից ցած է համարում<sup>6</sup>:

Նրա «Պատմութիւնն» էութեամբ ժամանակագրութիւն համարելով, Արեղյանը Վարդանի այլ զարկունքներից տակալին ընդգրկում տեղեկութիւններին պատմական նշանակութիւն է տալիս, իսկ Հուլայում էլ լայնի հետ ունեցած հեղինակի հանդիպման զրույցի լի-զուռ գնահատում է իբրև միջին հայերենի լեզվական բոլոր ձևերը և անգամ արեւելյան աշխարհագրաբի «ուսմ» վերազարմութեամբ խոնարհման ձև պարունակող վաղ մատենագրական հուշարձան<sup>7</sup>:

Մաղաբիա Արեղայի «Պատմութեան» նյութը մեծ մասամբ նույնն է՝ աւարկով, ինչ Կիրակոսի ու Վարդանի հաղորդումները Յաջողութիւնների մասին, Արեղյանը միաժամանակ մատենաշում է երկերի ներքին կյանքի վերաբերյալ շատ արժեքավոր տվյալներ, որոնց նա պատմական կարևոր նշանակութիւն է վերագրում: Իսկ գրական առումով Մաղաբիայի երկն ավելի բարձր է գատում, բան Վարդանի «Տիեզերական պատմութիւն»-ը: Այդ առավելութիւնը նա տեսնում է երկի պարզ ու հառապահ հորինվածքի, կենդանի ու հասկերի ունի, ժամանակի խոսակցական լեզվի կիրառութեան և սուղա-վորիչ, կենդանի ու սրտատուչ որոշ պատմութիւնների առկայութեան մեջ<sup>8</sup>:

Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն»-ը էութեամբ թեպետ տոճուային պատմագրական երկ է, բայց Արեղյանը բացահայտում է մի շարք էական արժանիքներ, որոնք բացակայում են նախորդ պատմիչների մոտ: Օրբելյանին բնութագրելով «կրոնասեր և ս-վանդապա՛», «միաժամանակ և հայրենասիր, դրժոնեալ, հետա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, II, էջ 62:

2 Անդ, էջ 67—68:

3 Անդ, էջ 193:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, II, էջ 195:

2 Անդ, էջ 196:

3 Անդ, էջ 201:

4 Անդ, էջ 205:

5 Անդ, էջ 206:

բրբերի, հմետ ու լուրջ» անձ, «զարգացմամբ ու հասկացողութեամբ բարձր բան շատերը ժամանակակիցներինք», Արեղյանը նրա «Պատմութեան» գլխավոր արժանիքը տեսնում է պատմական արժանատիւնը տվյալների և ստույգ վավերագրերի (Յղիբեր, շրջաբերականներ, կալցիվագրեր, հրովարտականք և այլն) օգտագործման մեջ: Արդյունքների նման ընտրությանը Արեղյանը պատմագրական մեծ նշանակություն է վերագրում: Պատմական վավերագրերինք բացի, Օրբելյանն օգտագործել է նաև ժողովրդական բանավոր աղբյուրները, որոնք թեպետ ինքը պատմություն չի համարել, բայց Արեղյանը դրանց մեջ ևս տեսնում է կուլտուր-պատմական կարեւոր արժեք:

«Այսպիսիությունների և ավանդական բանահյուսության գրառումն ևս,— գրում է նա,— կազմում է հարցաօտեր Ստեփաննոսի Պատմության արժանիքների մի կողմը. գրանցով վառ զույնով պատկերանում է մեզ տեղական ազգային կյանքը»<sup>1</sup>:

Օրբելյանի երկի մյուս էական արժանիքն Արեղյանը համարում է պատմության առարկա հանդեսացող Սիսական նահանգի աշխարհագրության շարադրանքը, որ հին պատմիչների մոտ հազվադեպ է հանդիպում:

Նա զնահատում է նաև Օրբելյանի պարզ ու թեթև ոճը, օգտագործած բազմազան աղբյուրներից սերող ոճական բազմազանությունը:

Հատիվներացուց եկող հայրենասիրությունն ու աշխարհասիրությունը, որ անցնում է XIII դարի հայ պատմագիրների ու ժամանակագիրների երկերով մեկ, Արեղյանն այնուհետև զրևերոված է դնում հաջորդ դարերի պատմիչների երկերում:

XV դարի հեղինակ Քավմա Մեծովնցու «Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց» երկը գրական սեսակետից զնահատելով իբրև անարժեք ու հատարակ մի ժամանակագիրություն, պատմական առումով, սակայն, հատկապես XIV—XV դարերի Հայաստանի «չարաբաստիկ ժամանակի թվալուսությունների տխուր պատկերը» օգգայուն սրտով և կենդանի ցուցադրելուս իմաստով՝ Արեղյանը կարևոր է համարում Հատկապես նա բարձր է գնահատում Մեծովնցու հաղորդած պատմական ստույգ վկայությունները, երկրի բազաբական անբարենպաստ պայմաններում Հովհան Որտանե-

ցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերանների անդուլ բաներով ծավալվող լուսավորության ու գիտության շարժման, ինչպես նաև Մեծովնցու «Յիշատակարան»-ում վերարտագրված XV դարի հայ կենդեցական դասի բարոյական բայքայման, ցեղծունների, խարզավանքների, կաշառակիրության, ցուփ ու հեշտասեր կենցաղի մասին հաղորդումները: Մեծովնցու երկով ավարտվում է վերածնության շրջանի հայ պատմագրությունը, որը հաջորդ երկհարյուրամյակի ընթացքում, երկրի բաղաբական ու անտեսական կյանքի ծայրահեղ բայքայման պատճառով, իսկական անկում է ապրում:

Պատմագրությունը նոր ծավալ է ստանում երկու հարյուրամյակ հետո միայն՝ XVII դարում՝ հայ հին գրականության զարգացման շորորոգ՝ ճորզովան շրջանում: Այս, ինչպես նաև նախորդ շրջանի պատմագրական երկերի մեծ մասը Արեղյանը բուն իմաստով պատմագրություն չի համարում և ոչ իսկ գրական արժեք ներկայացնող գործեր, այլ օտակ իբրև պատմական աղբյուրներ:

Այս շրջանի պատմագիրներից Արեղյանը բնութեան է առնում երեք հեղինակ՝ Առաքել Գավրիթեցուն, Զարարիա Սարկավազ Քանաբեցուն և Աբրահամ Արեսացուն:

Առաքել Գավրիթեցու «Պատմութեան» XVII դարի Հայաստանի բաղաբական իրադարձությունների ընդարձակ պատկերը ներկայացնելու իմաստով պատմական կարևոր նշանակություն վերագրելով հանդերձ, Արեղյանը բացահայտում է միաժամանակ Գավրիթեցու պատմահայեցողության առավելություններն ու սահմանափակությունները: Ժամանակաշրջանի ընդհանուր մտահայեցողության և կրթության ցածր մակարդակով մեկնաբանելով Գավրիթեցու պատմագրական աշխարհայեցողության ու դատողությունների, պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների ըմբռնման անխուսափելի սահմանափակությունն ու պարզամտությունը, նա միաժամանակ ցույց է տալիս, որ պատմագիրը «շնախելով յուր մեծ միամտությունը... լավ կերպով ըմբռնել է ժամանակի ոգին և մանավանդ ճահարպանությունը, ձգտումներն ու նպատակը»<sup>2</sup>: Գրանով Գավրիթեցուն բարձր է կանգնած իր շատ ժամանակակիցներին, որոնք խարվելով Շահ-Աբասի խորամանկություններից, նրան համարել են «բրիստոնէասեր և աշխարհաշէն և խաղաղարար թագուհոր»: Արեղյանը նկատի առնելով Գավ-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 213:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց հին գրական պատմություն, գիրք II, էջ 367:

<sup>2</sup> Անդ, էջ 451:



րիժեցու քաղաքական անցուղարձերի ներքին էության մեջ ներթափանցելու կարողությունը, նրան իրավամբ համեմատում է քաղաքացետ հոգեբանի հետ:

Նա շեշտում է Գավրիժեցու աշխարհայացքի մեկ այլ առաջնությունը՝ անկեղծ ու զուրկ եայլենասխարիւրյունը, որի շնորհիվ սերս պատմությունն ավելի շուշ է ստանում, գտնում արտառուշ ու հուղիշ: Այս անկեղծ հայրենասխարիւրյամբ է Արեղյանը պատնառարանում Գավրիժեցու «Պատմության» զեղարվեստական որոշ հատկանիշները, ժողովրդի տեղահանման ու զաղթի, նրա աղիիվ նահատակության նկարագրության շերտ ու սրտակեղքը որըներգությունը, ժողովրդական դանգվածների զգացմունքների ու տեղանքների բանաստեղծական հուղիշ վերարտադրությունը: Նա առանձնակի գրական արժեք է տալիս հին գրական տեսակներից մեկի՝ վկայարանության հատկանիշների վարպետ օգտագործմանը:

«Սակայն այդ վկայարանությանց մեջ,— գրում է նա,— մեզ պատմագիրը չի տալիս երևակայական կամ առասպելական գարգարայ պատմություն, այլ մի իրական թվլվառ աշխարհի նկարագիր, որի մեջ կթն պատմելու ձևը ժողովրդական պատմողների և մեծ մտամար ակնաստեսների բերանից առած լինելով՝ ժողովրդական բնավորություն է ստացել, հիմքը իրական է»<sup>1</sup>:

Գավրիժեցու «Պատմության» Արեղյանը զնահատում է նաև բանահյուսության նյութերի առատ օգտագործման տեսակետից, մի հանգամանք, որ իր կնիքն է դրել Գավրիժեցու լեղվի ու ոճի վրա: Նա առանձնապես արժեքավորում է Գավրիժեցու «Պատմության» ժողովրդական ոճի ու լեղվածների առատ օգտագործումը: Գավրիժեցին թավելի հետևել է ժողովրդական պարզ շարադրությունը,— գրում է նա,— կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածներին, չի որոշելով, ճշտության ու պարզության համար, նույնիսկ զավոռական ու թուրքերեն բառերից, որ և ոչ թն պատմագրի պահեստություն կամ դրույցների ժողովածու, ինչպես է Առաքելի Պատմությունը, յուր կենդանությունը, գույնն ու կրանգը ստանում է միայն ժամանակի կենդանի լեղվով պատմվելովը<sup>2</sup>: Եվ թեպետ Գավրիժեցու երկում հաճախ է բացակայում դեպքերի ժամանակագրական կարգը, աղբյուրների անկարգ դասավորությունից սերող իրադար-

ձությունների ու վրաստերի տրամարանական հարցրականությունը, ինչպես նաև մատենագրական միասնականությունը, այդուհանդերձ Արեղյանն այն Հայաստանի, մասամբ և վրաստանի XVI—XVII դարերի պատմության կարևոր աղբյուր է համարում:

Գավրիժեցու աշակերտ և XVII դարի մյուս պատմագիր Չախաբայ Սարկավազի «Պատմագրություն»-ը թեպետ իր ուսուցչի կրկի համեմատ լեղվի և կառուցվածքի տեսակետից Արեղյանն ավելի բարձր է գտնում, բայց իրեն պատմագրի, նրան, հրաշալիքներին հավատալու իր միամիտ հայացքներով՝ Գավրիժեցուց ցած է համարում: «Զարբարայի Պատմությունն,— գրում է նա,— իսկայես պատմություն չէ, սուտ ու ճշմարիտ, առասպել ու իրողություն վայրիվերու, խառնիխուռն ժողովված են մի տեղ՝ առանց որոշ գասավորություն, առանց որևէ կարգի»<sup>3</sup>:

Սակայն Արեղյանը գրանով չի թերտգնահատում Զարբարայի «Պատմագրություն» արժեքն ընդհանրապես: Առաջին հատորի նյութերն, օրինակ, կազմված լինելով հիմնականում ժողովրդական դրույցներից ու երգերից, Արեղյանն այդ արդյուն համարում է ոչ թն պատմագրություն, այլ «ժողովրդական բանաստեղծության ժողովածու», իսկ Զարբարային՝ խորենացուց հետո արանայությունության առաջին հավաքող» և «ժողովրդական գրող»: Միաժամանակ նա բարձր է զնահատում բանահյուսական այդ նյութերի պատմա-ազգայական և կուլտուր-ձանաչողական արժեքը: «Սակայն եթն այդ դրույցները պատմություն չեն,— գրում է նա,— նոցա հիմքը պատմական է և նոցա մեջ շատ զեղեցիկ երևում է ժամանակակից կյանքը, բնավորություններ և զեպքեր, կենցաղական գծեր... և այս տեսակետից Զարբարայի Պատմությունն այդ դրույցների մասը լրացուցիչ է յուր ժամանակի բուն պատմությունը»<sup>4</sup>:

Բանահյուսական նյութերի առատ օգտագործմամբ է մեկնաբանում Արեղյանը Զարբարայի «Պատմագրություն» զրվագների շարժանակությունն ու «կենդանի արտահայտիչ պատկերները», լեղվի ու ոճի մեջ առկա որոշ կոպտությունը:

Զարբարայի կրկի պատմական արժեքը Արեղյանը տեսնում է նաև ժամանակի հայ գլուղի, հայ ժողովրդի մտավոր կյանքի, աշխարհայեցողության, բարքերի, նխատույզի, սովորությունների, հաստատվելների նկարագրության, ինչպես նաև վիժմագիր արձանա-

1 Մ. Արեղյան, Հայց հին գրակ. պատմություն, գիրք II, էջ 449.  
2 Անց, էջ 444.

1 Մ. Արեղյան, Հայց հին գրակ. պատմություն, գիրք II, էջ 455.  
2 Անց, էջ 456.

գրութունների հավաքման և օգտագործման մեջ, «որով Զարարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական թանկագին հիշատակարանները ժողովրդների նախահայրը»<sup>1</sup>։

XVIII դարի պատմիչ Աբրահամ Կելտազու «Պատմագրութիւն անցիցն իւրոց և նազը շահին պարսից» կրկը Արեղյանը գնահատում է իբրև դեպքերի անձնական հիշատակարան, ուր, բացի պատմական անցքերի նկարագրութիւններից, կան նաև հայ տգետ ու ապերախտ հոգեորականների շատ դիպուկ բնութագրումներ։

Ժամանակագրութիւնից կատ, վերածնութիւն շրջանի հայ գրականութեան մեջ ծագում ու ծաղկում են գրական արձակի նոր տեսակներ ևս։ Նոր մտափոր հոսանքի խոշորագույն ներկայացուցիչներինց մեկի՝ Գրիգոր Մազիսարոսի թղթերի քննութեան միջոցով Արեղյանը հավաստում է գրական մի նոր տեսակի՝ նամակաճուռ երկվան գալը մեր գրականութեան մեջ։ Եթէ թղթերը, որոնց գոյութիւնը վկայված է մեզանում տակալին V դարից, որն է խնդրի առթիվ պաշտոնական գրութիւններ էին, սպա Մազիսարոսի թղթերը մասնավոր անձանց ուղղված նամակներ էին՝ որված տարբեր խնդիրների առթիվ և կրում էին գեղարվեստական խոսքի բացահայտ հատկանիշներ։ Պաշտոնական թղթերից Արեղյանը գրա-պատմական խոշոր արժեք է վերագրում և հատուկ քննութեան առարկա դարձնում ներսես Ենորճաու «Թուղթ ընդհանրական»-ը՝ ուղղված բոլոր հայերին։ Այս հարուստ ու բազմարտվանդակ գրութեան մեջ խնրականագրական և դավանաբանական խնդիրներ շոշափող ավլայններից դատ, Արեղյանը հեղինակի՝ հայութեան տարբեր խավերին ուղղված խրատների և հասարակական բարքերի ընդարձակ պատկերը։ Արեղյանը պատմական առանձնակի արժեք է տալիս հոգեորականների ուղղված խրատներին ու քննադատութեանը, որոնց մեջ ի հայտ են բերված ժամանակի հայ կրոնական դասի ընկած բարքերը։ Պարզում է, որ «կրոնավորների կյանքի մեջ արդեն մեծ փոփոխութիւն էր կատարվիլ. այլևս չկար» նախկին «անընչասեր և անսասցված աշխարհոտրացութիւնը։ Ընդհակառակն, նրանք սոսնսսարակ արդեն բռնկ էին... աշխարհականացման և աշխարհասիրութեան ուղին»<sup>2</sup>։

Թեպես Ենորճաւի հայ հոգեորականութեան հասկացողութիւնների ու կենցաղի մեջ կատարված փոփոխութիւնը բացատրում է ժամանակի թշվառութեամբ ու աղքատութեամբ, բայց գրականութեան պատմաբանը դրանից պատմական լուրջ հետևութիւնների է հանգում։ Նա կրոնական ոգու թուլացումը, որ նկատու էր դեռևս XI դարից, համարում է դարացող ու անաղաղիմող երևույթ ոչ միայն բնորոշ Ենորճաւու ժամանակաշրջանին, այլև հետագայ դարերին, և այն դիտում իբրև արդիւնք կյանքի ու աշխարհայացքի փոփոխութեան։

Հանձին XII դարի հեղինակ Ներսես Լամբրոնացու «Համարձման ներբողյան»-ի, Արեղյանը քննութեան առարկա է դարձնում եկեղեցական գրականութեան այդ հին և զարգացած տեսակներից մեկը ևս։ Լամբրոնացուն նա համարում է «տաղանդավոր հետադարձութիւն» ներկայացուցիչը մեր հոգեւոր պերճախոսութեան», իսկ նրա ներբողյանի մեջ բացահայտում բանաստեղծական զիղջերի արտահայտչամանրի պատշաճ կիրառութիւն։ Նա այդ կրոնական բովանդակութեամբ երկի գեղարվեստական արժեքը տեսնում է որվարթ եղանակով կատարված նկարագրութիւնների, դրամատուրգիական շարժուն, արագ ու եռանդուն ընթացող տեսարանների, «մեծ ավլանով ու օրտի զեղումով» ունկնդիրների երեակայնութիւնը վառող, ոգևորութիւն ու ցնծութիւն առաջ բերող բանաստեղծական թափի տակայնութեան մեջ։ «Համարձման ներբողյան»-ը համարելով «մեր բնորոշ ճանրից մեկը» և լավագույն օրինակ մեր հին կրոնական ներբողների, Արեղյանը, սակայն հանձին Լամբրոնացու այդ երկի, մատնանշում է գրական այդ հին տեսակի փոփոխութիւնը՝ իր ձեռով «և ամբողջ Հորինվածքի գեղեցկութեամբ»։

Եվ այդ փոփոխութիւնը նա պատճառարանում է ոչ միայն հեղինակի տաղանդով, այլև բնահանր ներողի ոգով, իբրև արտահայտութիւն դարձալ նոր մտափոր հոսանքի՝։ Իսկ Լամբրոնացու՝ ներսես Ենորճաւու կենսագրութեան նվիրված «Գովեստ ներբողական» չափածո երկը, թեպետ Արեղյանը բանաստեղծական ստույգութիւն է համարում, բայց պատմական տեսակետից գնահատում է այն իբրև գրական մի նոր տեսակի՝ ուղեւախոսով կենսագրութեան սկզբնավորում<sup>3</sup>։

Միջնագարան հայ գրական արձակի մյուս տեսակներից, ինչ-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, II, էջ 455։

2 Անց, էջ 123։

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմութիւն, գիրք II, էջ 138—139։

2 Անց, էջ 140—141։



պէս տեսել ենք, Գոշի և Վարդան Այգեկցու ձեռքով գրականութեան մեջ է մտնում առակը, իսկ Այգեկցին, բացի գրանից, հիմնադրում է մի առանձին գրական տեսակ՝ առակավոր նոսր, որով Արեղյանի գնահատութեամբ, հին ձառի ժանրը հարստանում էր մի նոր կողմով՝ առակով և խօսքը գրանով գտնուով բազմազան, «ալիկի գրավիչ, հետաքրքիր և ազգուն»<sup>1</sup>:

Նոր մտավոր հոսանքի արտահայտություններն ու արդյունքները Արեղյանը միայն հայ զեղարվեստական մտածողության մեջ չէր ցուցահանում, այլև գիտության ու մշակույթի ուրիշ բնագավառներում էս: XI դարի «ազատամիտ, լուսամիտ ու բազմազան» Գրիգոր Մազիստրոսի կյանքի ու գրական-հասարակական գործունեության ուսումնասիրությամբ Արեղյանը բացահայտում է X—XI դարերի Հայաստանում լուսավորության և ուսման ծավալումը, ազնվապանության բուռն հետաքրքրությունն ու սերը զեպի ուսումն ու գիտությունը: Հանձին Պահլավունի Գրիգոր Մազիստրոսի մտահայեցության ու գործունեության, նա նրան է հանում հայ վերածնության ժամանակաշրջանի մտածողության մի բնորոշ առանձնահատկությունը՝ սլրավականանալ միայն կրոնականով և եկեղեցական գրություններ, ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափություն, բժշկություն, ծանոթանալ հին հունական գրականությանը և ընդհանրապես բազմակողմանի գիտանքներ ձեռք բերելը: Արեղյանն իրավամբ Գրիգոր Պահլավունուն համարում է «մեր վաղ վերածնության շրջանի լավագույն ներկայացուցիչը, իսկական լուսավորական գործիչ», միաժամանակ իսկական իմաստով նաև՝ վերածնության առաջին բանաստեղծը, որի պատմական դերը արտահայտվել է ոչ միայն իր գրական գործերում արժարժված լուսավորական գաղափարների ներուժից ու թարմության, այլև գրական նոր տեսակի ստեղծման, հանդերձ և տարրեր շափերի կիրառության մեջ: Նոր մտավոր հոսանքի մյուս խոշորագույն արտահայտիչը գիտության ու գրականության մեջ, ինչպես տեսել ենք արդեն, գտանում է Մազիստրոսի կրտսեր ժամանակակիցը՝ «բազմակողմանի հմուտ-բյուռների տեր, մեծ գիտնական, փիլիսոփա մատենագիր, տաճարագետ, պատմադիր, ճարտասան հեղինակ... բնական գիտություն-

ներով պարագլուղ ու բաժաստեղծ» Հովհաննես Մարկավազը, որը Արեղյանի բնորոշմամբ, «իր լուսավոր մտքով հաճախ բարձր է կանգնած եղել միջնադարյան թանձրամտ խավարից»<sup>2</sup>:

Նոր մտավոր հոսանքը իր խոշոր ներկայացուցիչներով մի ամբողջ շարժում ու վերելք է առաջ բերում հայ միջնադարյան գիտության ու մշակույթի տարրեր ընդգլխավորելով: Արեղյանն առանձին հեղինակներն և նրանց երկերի բնութագրումը հատկապես ծանրանում է հայկական միջնադարում խիստ զարգացած գիտության ճյուղերից մեկի՝ իրավագիտության վրա, որի ծաղկումն ու աշխարհականացումը կատարվում է հենց զարգացած վերածնողի ժամանակաշրջանում: Եվ դրա առաջին արտահայտությունը նա գտնում է XI—XII դարերի հեղինակ Ավակա որդի Գավթի կանոններում, որոնցով մեղանում առաջին անգամ, մասամբ եկեղեցական կանոնների և մասամբ հին սովորութիւնների իրավունքի հիման վրա, ըստեղծվում է աշխարհիկ օրենսդրություն, որն իր ժամանակի իրականությանը հշրթիտ արտացոլմամբ ոչ միայն հետագայում օգտագործվում է Մխիթար Գոշի կողմից, այլև շարունակում է կիրառվել նաև նրա «Գատաստանագրքի» հրատարակումից հետո անգամ<sup>3</sup>: Երբեք Գավթի սեփական օրինակներով օրենսդրությունները՝ Արեղյանն արդյունքն ու արտահայտությունն է համարում հյուսիս-արևելյան հայկական դավաճների առաջին բարդավաճման, ապա Մխիթար Գոշի և Մմբատի դատաստանագրքերը հետևանք էին մի կողմից Չարաբայանների իշխանության, մյուս կողմից՝ Կիլիկյան հայկական պետության մեծացման և զորացման: Հայկական ավատական իշխանությունների սոցիալ-քաղաքական համանման պայմաններն ու անտևական և կուլտուրական ծաղկումը պահանջ էին առաջադրում պրավոր օրենսգրքի միջոցով հիմնավորել և հաստատել ազգային գիտությունների մեջ արդեն գոյություն ունեցող իրավական դրությունը<sup>4</sup>:

Մխիթար Գոշի «Գատաստանագրքը»-ը կազմված լինելով հայ և օտար տարրեր արդյունքների հիման վրա և բազկացած՝ եկեղեցական կանոններից ու աշխարհիկ օրենքներից, «հիմնականում ունի ազգային բնույթ ու գաղափարախոսություն է հակադրություն նա-

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 164.

2 Անդ. էջ 16—17:

3 Անդ. էջ 16, 19, 20 և հան.:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 46, 49.

2 Անդ. էջ 64:

3 Անդ. էջ 148—149.

խորդ բաղաբական շրջանի այլազգի, այսինքն մասնեղական իշխողների շահերը պաշտպանող օրենքների<sup>1)</sup> Այն ունեցել է գործնական և կուլտուր-պատմական խոշոր նշանակություն և օգտագործվել ինչպես հայ օրենսդիրների (Սմբատ Սպարապետ), այնպես էլ օտարների կողմից՝ իրենց օրինագրքերը կազմելիս:

Այնուհետև, հետևելով հայ ժողովրդի պատմական ճակատագրին, Արեղյանը պատմության կենտոտ իրադարձությունների ընդգրբեց մեկերես է հանում հայ վերածնություն շրջանում լայն ծավալ առաջացած լուսավորության ու գիտության զարգացման հետագա ընթացքը և ցույց տալիս, որ շնայած թաթարների և սելջուկ-թուրքերի աշխարհավեր արշավանքներին, գրեթե շարունակում են ծաղկել ու բարգավաճել վանքերում՝ կրոնավորների ձեռքով հետագա զարկում ևս:

Եթե XII—XIII դարերի նշանավոր եկեղեցական ու մշակութային գործիչ վանական վարդապետի ու նրա դպրոցի գործունեության մեջ Արեղյանը ցուցահանում է դարի շինարար ու տոկոս ուղին, «հայկական իշխանությունների մեջ արևելյան խուլ անկյուններում» գիտության, կուլտուրայի, լուսավորության ծաղկման ու տարածման պատմական մեծագործությունը<sup>2)</sup>, ապա հարթող XIV—XV դարերում, երկրի տնտես-բաղաբական անկման հետևանքով իր մայրամուտն ապրող գիտության, գրականության, մշակույթի պահպանման համար իրենց օրհասական ճիգերը գործադրող Հովհան Ռոտունցու և նրա հուշակավոր աշակերտ Գրիգոր Տաթևացու ու նրանց հետևորդների մշակութային սխրագործության մեջ բացահայտում է այդ թափած ջանքերի պատմական կարևոր նշանակությունը: Ընդհանրապես (Որոտունցու և նրա աշակերտների— Ս. Հ.) մեծ ճիգերը ապարդյուն չեն մնում, նրանք կարողանում են Հայաստանի որոշ թվով անկյուններում, զոնե ժամանակավորապես, կուլտուրական և եկեղեցական անկման առաջն առնել<sup>3)</sup>:

Արեղյանը բացահայտում է Հովհան Որոտունցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների գործունեության նաև հայրենասիրական կողմը՝ ազգային անազրա լիզվի, գիտության, ուսման և եկեղեցու պահպանության համար ունիթոսականների հայրենամբը

և այնպես ռոտեղությունների դեմ նրանց մղած պայքարը: Նա բազմակողմանի զարգացած, ժամանակի Արևմտաքի գիտություններին բացառելիաչ ու հաղորդակից, զարաշրջանի այդ լուսամիտ անհատների, մասնավորապես Գրիգոր Տաթևացու երկերի քննությունը, երևան է հանում վերջինս փյուսոփայական կուս սխառմը, արամբարմական խոր ու համակողմանի հիմնավորումները, փայլուն միտքը և, որ կարևոր է, այդ գործերի ընդհանուր կուլտուր-պատմական և գործնական արժեքը, այն է՝ «պատրաստել, բոս իրենց ժամանակի հասակացության, գիտուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մտքառելու և ազգային անկման առաջն առնելու»:

Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն»-ը իր գրա-պատմական վիթխարի արժեքից բացի, ունի նաև կարևոր բանասիրական արժեք: Հայ հին գրականության, բանահյուսության, լեզվի, տաղաչափության բնագավառներում հեղինակի կատարած արդամյա մանրակրկիտ հետազոտումները նրան հանգեցրել էին հայագիտության մեջ արգեն լուծված, անբավարար լուծված կամ սակավիչ շղջափված բանասիրական առանձին խնդիրների ճշգրտման ու նորովի մեկնաբանությունների: Գրանց մի մասը երեկվան էր եկել արդեն գիտնականի նախորդ հետազոտություններում, իսկ մնացածը տեղ է գտել «Հայոց հին գրականության պատմության» տարբեր գլուխներում և հատկապես հավելվածների մեջ: Հիշյալ հավելվածներում Արեղյանը շղջափում է երեք բնույթի խնդիրներ.

1. պատմա-բանասիրական բնեցնուր հարցեր, որոնց տակ նա տեղազայում է իր «Հայ վիդական բանահյուսություն» ժամանակին տակավին անտիպ աշխատությունից առանձին հատվածներ, ուր բնեցում է ավանդական վեպերի («Վիպասանք», «Պարսից պատերազմ») և պատմության փոխտարաբերության կարևոր խնդիրը, մի-մյանցից տարազատվում են ու ճշգրտվում վիպական և պատմական անձնավորությունները («Վիպասանքի պատմական հիմքը», «Պարսից պատերազմ» վեպի պատմականության խնդիրը):

2. կուլտուր-պատմական առանձին երևույթների գեմատուտ և եկատալոպյուն («Հայոց եկեղեցու զերբ քաղկեդոնականության վերաբերմամբ 5-րդ դարի հրկրող կենիս», «Մաշտոցի գործն եղեպրայում և Սամոսատում», «Շահամայի ձեռնարկ ազգեցությունը»):

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 150—151;  
2 Անգ. էջ 190;  
3 Անգ. էջ 350:

1 Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմություն, II, էջ 364:



3. ժամանակագրական և բնագրաբանական խնդիրներ: Այստեղ բանասիրական հանգամանակից բենոթյուններով լուծվում են հին հեղինակների այդքամ կամ նրանց երկերի գրման ժամանակի հարցերը («Սարակյաց Վարդապետի կենսագրության շրջըր», «Քրիկի կենսագրության շրջըր», «Տիմոթեոս Կուղի «Հակածառության» թարգմանվելու ժամանակը»), ինչպես նաև առանձին երկերի բնագրաբանական վիճելի խնդիրների պարզարանում նոր ու արժեքավոր ելրակացություններով («Փ. Բուզանդի Հայոց պատմության առաջին և երկրորդ դարթյունների խնդիրը», «Բարառնությունների հեղինակը», «Քերթողահայր Մովսես Խորենացի եպիսկոպոսի Թղթի վավերականությունը»):

Բանասիրական ու պատմագրականադիտական նշյալ խնդիրների պարզարանումների ժամանակ, ինչպես միշտ, երևան են գալիս Արեղյան-բանասիրանդի փայլուն տաղանդը, տրամաբանության վիթխարի ուժն ու մտածորի պնդյալն իւր բնդրկումները, որոնց շնորհիվ նրա փաստարկումներն ու ելրահանդումները դառնում են հիմնավոր ու անհերքելի:

Այսպես ուրեմն «Հայոց հին գրականության պատմության» մեջ, Արեղյանը հավատարիմ մնալով իր նախկին մեթոդաբանական սկզբունքներին, հայ գրականության ծագման ու զարգացման գարաջոր ընթացքը դիտում և բնմում է հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարական և կուլտուրական կյանքի

<sup>1</sup> Անշուշտ, Արեղյանը չէր կարող հաղթահարել հայ հին գրականության պատմաբանի առաջ ծառայող բոլոր այն պատճառական, բանասիրական ու գրականագիտական դժգոթությունները, որոնց մասին նա ցավով է հիշատակում «Հայոց հին գրականության պատմության» առաջաբանում: Գրանք խոչընդոտներ էին, որոնց հաթխահարումը վեր էր մեկ անհատ ումբրից: Նման կարգի բանասիրական մի բանի վիճելի կետեր հինք են առել Սո. Մալխասյանցին, Արեղյանի մահից հետո, հեղվածների ու հավաքածուով՝ միտումավոր բնագրատաթխարի հանդես գալու պիտականան այդ մեծագույն վաստակի դեմ: Մալխասյանցի այդ հավաքածուն, որ կոչվում է «Մասնականադիտական գիտություններ» (Երևան, 1962), մի բանի բանասիրական մանրույնների իրավալիքն ճշտումների հետ միաժամանակ, Արեղյանի մեծ գործը ծուռ հայելու մեջ ներկայացնող մի ուրույն բնոյցմանադական է, յուրահատուկ մի ինքնադրադրացում՝ «Հայոց հին գրականության պատմության» մեջ Մալխասյանցի արարել կարծիքների դեմ ուղղված Արեղյանի միշտ ու անաչառ բնույթատույն:

Ցավն այն է, որ Արեղյանի անտեր կրող գրականության ինտիտուտը, Մալխասյանցի մահվանից 16 տարի անց, անցյալի փոշուց լույս աշխարհ հանց այդ սովոր հավաքածուն, առանց Մալխասյանցի «բնագրատույն» անտառող միտումները բավարար ու հիմնովին հերքելու:

յալն տեսադաշտի վրա, հասարակական տվյալ երևույթներով սերտորեն պայմանավորված: Արեղյանի մեթոդաբանական մոտեցումն հին գրականության փաստերին ու երևույթներին ընդհանրապես այլ էր և բնկնում խոր պատմականությամբ, դրանք պայմանավորող հասարակական երևույթներին և սոցիալական գրդապատճառների բացմանդղմանի հաշվառումներով: Հին գրականության պատմության զարգացման իր նոր տեսությունը ու համախորդով Արեղյանը տվյալ առարկան դնում է դիտական նոր ու բարձր աստիճանի վրա: Հին գրականության պատմության միխարեղյանական բուրր շարդարանները աչքի էին զարնում նյութի սուկ փաստագրական կրքեղաբուր մատուցմամբ և հիմնականում՝ կրոնա-կենդանական ընդհանրացմանով: Բացառություն էին կազմում Հ. Գաթրճյանի և Ստ. Պալասանյանի Պատմությունները, երկուսն էլ, սակայն, նվիրված սուկ բանավոր գրականությանը, այսինքն հին ավանդական բանահյուսությանը: Մեր հին գրական-դեղարվեստական երկերի գրականագիտական բնմություններն ու գրական պորտիներն ու երևույթներին պատմա-իմաստասիրական կողմերի բացահայտումները գրեթե իսպառ բացակայում էին գրականության նախորդ պատմարաններին երկերում: Բացակայում էր նաև հայ հին գրականության զարգացման գարավոր ընթացքի բուն պատկերն ուր օրինաչափություններով ու հատկություններով, իր վաղեղներով ու վերելքներով, որականական իր փոխակերպություններով ու անցումներով: Միով բանիմ, հայ հին գրականության նախորդ պատմություններն, իրենց անխուսափելի բացառություններով, հիմնականում գրական դեմքերի ու երևույթների մետաֆիզիկական փաստագրություններ էին, ուր անգամ կարգին չէր որոշարկվում այն կամ այն հեղինակի ունեցած տեղն ու դիրք մեր գրականության մեջ: Դա պայմանավորված էր գրականության պատմարանների այդքամ մեծանակի ազդակի-հասարակական մտածողությամբ և ընդհանուր հայագիտության զարգացման ցածր մակարդակով:

Արեղյանը ստեղծագործարար յուրաքրից ու ամփոփեց հայ հին գրականության բնագրատույնում հայագիտության ձևոր բերած բուրր կարևոր նվաճումները և սկսած անցյալ հարյուրամյակի 90-ական թվականների վերելքից, առանձին հեղինակներն ու գրական երևույթները կոնկրետ ուսումնասիրություններին մեջ, նոր մոտեցումար ու հայացքով դիտեց մեր գրականության բազմադարյան ընթացքը:

Արդ ար՞նք են հետազոտական այն նորույթները, որոնցով Արեղյանը սահմանադատվում է գրականության նախորդ պատմարաններին ց Դառնում խոշոր նորարար.

ա) ամենից առաջ հին գրականության պատմության առարկայի գիտական նշագրմամբ, ավանդական անորոշ բմբռնումներից նրա վերջնական առանձնացումով.

բ) հայ հին գրականության պարզացման գիտական նոր պահանջներով, պարբերացման մերոգարանական եիշտ սկզբունքներով, և գրականության զարավոր ընթացքի զարգացման օրինաչափությունների սանձմանով.

գ) հին գրական գեներների ու նրույթների գնահատման մատուցելիստական մոտեցման, գրական իրակութունները հայ ժողովրդի պատմական կենցաղային կոնկրետ պայմանների, նրա հասարակա-քաղաքական, սոցիալ-դասակարգային, գաղափարաբանական ու պատմա-մշակութային կյանքի իրական շահախնդրություններով ու գրդումներով կատարած մեկնաբանությամբ.

դ) եվ վերջապես՝ հայ հին գրականության գիտական պատմության, նրա կուռ տեսության ու միտանական համակարգի ստեղծումով:

## Գ Լ ՈՒ Ե Ե Ր Ր ՈՐ Գ

### ՀԱՅ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՎԵՆԵՐԸ

Հայ գրականության պատմության նկատմամբ Արեղյանի գիտական շահագրդությունները չեն սահմանափակվում սուկ գրականության հասարակական գաղափարաբանության պատմական ու ժամանակակից խնդիրների շրջանակներում: Գրականության հասարակական գաղափարաբանությունն իր հետ առաջադրում է նաև գրական ձևերի հետազոտման անհրաժեշտությունը: Եվ պատահական չէ, որ Արեղյանը հայ բանաստեղծության տաղաչափության ուսումնասիրությունն է ձեռնարկում ընթացիկ հարյուրամյակի տասական թվականների սկզբներին, երբ փաստորեն արդեն ծայր էին առնում նրա զրա-պատմական հետազոտությունները:

Բանաստեղծության տաղաչափական ձևերի հետազոտությունը նա դիտում է իրրև գրականության պատմություն ստեղծելու կարևոր նախապայման: Մեր գրականության պատմությունը գրողը պետք է... նախ իմանար ի միջի շատ բաների նաև այն,— գրում է Արեղյանը,— թե ինչ է չափած ձև առածը և թե ինչ հատկություններ ունին մեր ստանավորները, որպեսզի հետո նոր կարողանար բազմակողմանի հետազոտել մեր չափածո բանաստեղծության վարդապետը<sup>1</sup>:

Սակայն հայկական տաղաչափության հետազոտությունը չի սկսվում Մանուկ Արեղյանով:

#### 1. ՀԱՅ ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԿԶՑԸ ՈՒ ԶԱՊԱՅՈՒՄԸ

Հայ տաղաչափության հիմունքների ուսումնասիրությունը սկզբնապես աղբյուրում է քերականների անուններին, բանգի տա-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն (Մեթոդիկ), Երևան, 1933, էջ 5:



դաշափությունը դիտուում էր լեզվի առանձնահատկություններից մեկը և բնության էր անովում տվյալ լեզվի բերականության մեջ իրը լեզվաբանական առարկա:

Գիտնական թրակացու Քնրականության հայերեն թարգմանության մեջ արդեն կային տաղաչափության տարրերի մասին նախնական տվյալներ<sup>1</sup>, որոնք օտար և հայ բերականների կողմից հետազոտում առավել զարգացվեցին ու խորացվեցին: Նոր ժամանակներում տաղաչափությանը զբաղվող առաջին բերականը Յոհանես Զոսիմի Երողերն է իր «Արամեան լեզուին գանձ» բերականական աշխատությանը<sup>2</sup>: Հեղինակի կարծիքով հին հայերենի տաղաչափությունը ամենակային (չափական) է և հիմնված սուղ ու երկար ձայնավորների վրա: Այս տեսակետը հետագայում շատ է բնագրավում ու վիճարկվում հայ բերականների, մասնավորապես Մխիթարյանների կողմից:

Հայերենի տաղաչափության գիտական ուսումնասիրությունը իսկապես սկզբնավորում է մեկ հարյուրամյակ անց՝ Մխիթարյան հայր Արսեն Բագրատունին (Անթիմոսյան), 1821 թ. վենետիկում հրատարակած ֆրանսերենի իր բնորոշակ բերականության մեջ<sup>3</sup>, Բագրատունին մի բնորոշակ զույգ է հասկացնում ֆրանսերենի տաղաչափությանը<sup>4</sup>, ուր առաջին անգամ մեղանում շարադրված էին տաղաչափության բնոճանուր հիմունքները, զեմատված նրա անկն ու խաղաղած զերբ բանաստեղծության մեջ:

Գարձյալ առաջին անգամ, հանգամանալից անդեկություններ են տրվում տաղաչափական երկու համակարգերի՝ շափականի և րվականի, նրանց յուրահատկությունների և տարբերությունների մասին: Այստեղ է, ա՛հա, Արս. Բագրատունին հայերենը ֆրանսերենի և իտալերենի նման համարում երկրորդ համակարգին պատկանող լեզու:

Բագրատունին, հակադրվելով Երողերի կարծիքին, փորձում է հերքել հին հայերենում շափական օտանավորի գոյությունը և գտնում, որ ի սկզբանե հայերենին հատուկ է եղել թվական կամ վանկական համակարգը: Հայերենը համարելով տաղաչափական միևնույն վանկական համակարգին պատկանող ինչ ֆրանսերենը,

<sup>1</sup> Տե՛ս «Փրականութիւն Դիմետիտի Քաղախչոյ», ի Փարսզ, 1824, էջ 9, 20, 68:

<sup>2</sup> Ամստերդամ, 1711:

<sup>3</sup> «Փրականութիւն Գաղղիական», Բ. Հ. Արսէն վարդապետ Արքիմանան, ի Մխիթարեան միաբանութենէ:

<sup>4</sup> «Յնագոս բանաստեղծական լեզուի և օտանաբարց գաղղիացոց», էջ 523—530:

նա, սակայն, տարբերություն է դնում ֆրոնտախկան և հայկական տաղաչափական սկզբունքների միջև: Եվ զա շեշտի խաղաղած կարեորապույն զերի զիտակցումն էր և այդ զերի տարբերությունը՝ հայերենի ու ֆրանսերենի տաղաչափական համակարգում:

Բագրատունին գտնում է նաև, որ մեր օտանավորի մեջ անգամատությունը շեշտով է կատարվում. «ուստի անգամն վաս շեշտին են, և շեշտին բաժանին»:

Եվ նա մի բանի վիստերով փորձում է հաստատել իր ուշադրավ կարծիքը: Իր այս աշխատությանը Բագրատունին մեղանում գտնում է հայերենի տաղաչափության առաջին հետազոտողն ու տեսարանը: Բագրատունու մեծ հեղինակությանը հայերենի տաղաչափության վանկական լինելու նրա տեսությունը մոտավորապես մեկ ութնուամյակ շարունակում է զարգանալ և գերիշխող գտնալ հայագիտության մեջ:

Ահի քսանամյակ անց, իր մեկ այլ աշխատությանը<sup>5</sup> Ա. Բագրատունին առաջ է քաշում այն տեսակետը, թև մինչև Գր. Նարեկացին (մինչև IX դար) հայ բանաստեղծության տաղաչափությունը այլ է եղել, քան XII դարից հետո: Այդ տարբերությունը նա ամենից առաջ տեսնում է հին Հոգևոր բանաստեղծության անճանկ և ուշ միջնադարյան բանաստեղծության հանդավոր լինելու մեջ:

Մեր հին օտանավորը, բոս Բագրատունու, թվական լինելով հանդերձ, վանկերի հաստատուն տեղություն չունենալու պատճառով հենվում է ոչ թև վանկերի բանական հարաբերակցություններով վրա, այլ անգամներ: Եվ քանի որ վանկերի տեղությունն անհամաչափ է, բնականաբար, նա հին շարականներում տեսնում է սուղ և երկար վանկեր և դրանք պատճառաբանում ժամանակի հայերենի թև՝ առողանական յուրահատկությանը և թև՝ շարականների երդվելու կամ ձայնիվ ասելու պահանջով: Սա նշանակում էր, թև

<sup>1</sup> «Փրականութիւն Գաղղիական», էջ 561:

<sup>2</sup> Հայրոց օտանամյակներում թեպիտ ընչանուր և օտար տաղաչափությունների մասին հայերեն լեզվով նոր աշխատություններ են երևան գալիս, բայց դրանք ոչ մեկում չէր շոշափվում (կամ գրեթե չէր շոշափվում) հայերենի տաղաչափության օրին խնդիր: Տե՛ս եղ. վեդ. Հյուսիսյալան, Առնձու բանաստեղծութիւն, վնետիկ, 1839, Ասնդ վ. Հովհաննես, Փրականություն գրականների լեզվի, վնետի, 1843, Քերովր Վ. Սպիկյանց, Փրականություն գրականների լեզվի, վնետի, 1844:

<sup>3</sup> «Պորտոսի վերջիկայ Մարտիի Մշակականը», թարգմանելու ի չափս հայկական և համառու մեկնութիւնները բարձրաշախարհ ի Հ. Արսէն Կոմիտասայ Բագրատունայ Մխիթարեան վարդապետ, ի վնետիկ, 1847, տե՛ս Առաջարանը:



շարականների մեջ Բաղրատունին տեսնում էր ամանակային կամ շափական ոտանավորների հատկանիշները Բաղրատունին, սակայն, տարբերություն էր գնում մեր այդ ոտանավորների ամանակի և հոնմահոտեական ամանակային շափերի մեջ, «սուղ վանկս իմա ինձ աստանոր ոչ ըստ հեղին և հոտմ հաստատուն շափոց առոգանութեան, որ ի տաղս մեր շունն սեղի, այլ ըստ նրադարձութեան և ծանրարարչութեան բնական առոգանութեան բանին ըստ իմաստիցն և ըստ կրից, կամ թէ նրբմն և ըստ աղատութեան իսկ»<sup>1</sup>։

Տաղաչափական այսպիսի ըմբռնումով էլ, ահա, Բաղրատունին զարգացնում է մեր հին շարականների բառանդամ լինելու տեսությունը, որ բավական ժամանակ իշխող հանդիսացավ հայ բանասիրության մեջ։

Ա. Բաղրատունին լինելով հայ տաղաչափության վանկական տեսության սկզբնավորողը, հին Տալիական ոտանավորների մեջ տարբերակում է երկու հիմնատեսակ. անձանգ-շափական ոտանավորներ՝ թվականի որոշ հատկություններով և հանգավոր-թվական ոտանավորներ, որ պատմականորեն հաջորդել է անհանգ-շափականներին Թեպետ Ա. Բաղրատունու բառանդամ տեսությունը հետադարձ զգալապես ընդհանրացավ և ճանաչում գտավ, և անդամ այդ շափը գործնականում կիրառվեց իր և ուրիշների (Մկրտիչ երթման) կողմից<sup>2</sup>, բայց և արժանացավ բննադատության<sup>3</sup>։ Բաղրատունու տաղաչափական նկատողություններով փաստորեն հիմք էր դրվում հայ հին ոտանավորների դիտական ուսումնասիրությանը։

Տաղաչափության նկատմամբ բոլորովին այլ ըմբռնում է ցուցաբերում նոր հայերենի խոշորագույն տեսաբան Արսեն վրդ. Այտընյանը։ Նա իր արդի հայերենի «Քննական բերականություն» վերջին բաժինը հատկացնում է արևմտահայ աշխարհաբարի ուղղագրությանը, առոգանության և տաղաչափությանը։

Այսօրեյանը, միմյանցից տարբերակելով արձակ և շափածո խոսքի տեսակները, տաղաչափությունը համարում է «ոտանավոր խոսք կազմելու արվեստը»։ Նա, ժամանակի տաղաչափական ըմբռնումներով ու ընդունված սերմինաբանությամբ, ոտանավորը բաժանում է երկու տեսակի. ա) թվական ոտանավորի, որ կազմված է վանկերի թվին համապատասխան, և բ) շափական ոտանավորի, կազմված՝ վանկերի երկարության կամ սղություն շափով։ Տաղաչափության կամ ոտանավորի մասերն է համարում ոտքը, անդամը, հանգը, տողը և տունը։ Նա թվական ոտանավորի հատկանիշների բննարկումը սկսում է տաղաչափական առաջին միավորից՝ ոտքից, որ հին բանասիրական ըմբռնումով նույնանուն էր վանկին։ Հաջորդ առավել մեծ տաղաչափական միավորը անդամն է համարում, որ ստանձնանում է հասածով, իսկ վերջինս համարում է արդյունք ոտանավորի շեշտի, որին միշտ էլ հաջորդում է հասածը։ Տաղաչափական երրորդ միավորի՝ հանգի և նրա տեսակների (տկար, տկար, ճոխ, նակ՝ արական և իրական), հանգավորման տեսակների (անանջատ, հյուսյալ, գրիխատն, ընդհատ), տողերի տեսակների (հավասար, անհավասար, խտան) և աների հանգամանակից բնություններով պարզում էր մեր արևմտահայ նոր բանաստեղծության տաղաչափական հատկանիշները։

Տաղաչափության մյուս տեսակի՝ շափական ոտանավորի մասնահատկությունների համառոտ բնութայամբ, Այտընյանը ցույց է տալիս, որ տաղաչափական հիշյալ տեսակի մեջ, ի հակադրել թվական ոտանավորի, իշխող սկզբունքն է ոչ թե վանկերի բանակը, այլ դրանց երկար կամ կարճ շափը, որ սիրված ու արարածված է եղել հին լեզուներում։ Նա շափական ոտանավորի էական բաղադրիչներն համարում է երկավանկ ու եռավանկ ոտքերը, որոնցից բաղադրվում են նաև բազմավանկ ոտքերը։ Բայց էական այն է, որ Այտընյանը տաղաչափական հիշյալ տեսակները բնունում է իրեն հատուկ պատմական հայացքով։ Ընդգծելով, որ շափական ոտանավորը իշխողն է եղել հին լեզուներում, նա միաժամանակ նշում է դրա պատմական զարգացումը, այն, թե ինչպես նոր լեզուներում թվական ոտանավորի հետ աստիճանաբար սկսել է կիրառվել նաև շափականը։ Բայց բանի որ նոր լեզուների առոգանության սկզբունքը շեշտն է, սպա «Նոց իրական երկար վանկերուն տեղ շեշտը կանցնի, իսկ սուղերուն տեղ՝ բութը»<sup>4</sup>։

<sup>1</sup> Ա. Այտընյան, Բնական բերականություն արդի հայերեն լեզվի, Վիննա, 1866, էջ 404.

<sup>1</sup> «Վերջինայ Մարովնի Մշակականք», էջ 18։

<sup>2</sup> Այդ «Հայկական կոչված շափով է Բաղրատունին Բարզանում Վերջինուի սՄշակականքն ու գրում իր «Հայի գրեցազնն գրված»։ Գարնայ նույն շափով ու Բաղրատունու հետևյալամբ է հորինում Մ. Կրիմյանը իր «Հրափրակ Արարական» երկը (Կ. Պոլիս, 1850)։

<sup>3</sup> Ավ. Բախարյան, Հին հայոց տաղաչափական արվեստը, քննական տեսություն, Շուշի, 1891, էջ 14 և հաս.՝ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1923, էջ 343 և հաս.։



Եվ Ալյաքեյանը հին ոտանավորի այս նորացման երևույթի մեջ տեսնում է նոր հայերենի տաղաչափության զարգացման հետանկարները: Ընդգծելով հանդերձ նոր հայերենի ոչ շեշտային բնույթը, սակայն հաշվի առնելով միաժամանակ հայերենի բնական արտասանական շեշտի առկայությունն ու բառերի շարադասական ձևուն հնարավորությունները, Ալյաքեյանը դրանք բավարար երաշխիք է համարում նոր հայերեն բանաստեղծության մեջ լափական ոտանավորը կիրառելու համար: Նա անգամ մի գործնական առաջարկություն է անում.

«...լափականին ունեցած հարզն ու առավելությունները կը պահանջեն,— դրում է Ալյաքեյանը,— որ արդի հայերեն լեզվին մեջ ալ, որուն տաղաչափությունը միշտ քվականն եղած է, այս նկատմամբ տառնձին մտադրություն մ'ըլլա, ինչպիսի վերջին ժամանակներս զբարբարի համար փորձ եղավ հաջողություն մ'աճը»<sup>1</sup>:

Ուրեմն՝ լափական ոտանավորի արմատավորման ձգտում մեր նոր բանաստեղծության մեջ:

Ալյաքեյանը տալիս է նաև տաղաչափության զարգացման մի համառոտ տեսություն, որ հայ բանաստեղծության պատմական առաջընթացի տեսարարչորէ վրա ուրվագծվում են հայ տաղաչափության զարգացման հիմնական պատմաշրջանները՝ Դրանք են.

1. սկզբից կրորդ դար՝ իշխող տաղաչափական տեսակներն են մտավոր համեմատականությունն ու լափականությունը.

2. VI—XIV դարեր՝ հայկական լափականություն և խոսք՝ անհանգ թվական.

3. XI—XIX դարեր՝ հանգավոր թվական, կրթմն էլ անհանգ:

Ալյաքեյանն իրավացիորեն նկատում է, որ հայ բանաստեղծության զարգացման առավել ստորին աստիճաններում, այսինքն վաղ դարերում, արվեստի առումով իշխողն է ազատ արձականման ոտանավորը, որ «սակի ը բնությունն էր խոսողը՝ քան արվեստը»: Մինչդեռ ժմեկի մերձավոր ժամանակները՝ բնական խոսվածքը առդի կուտա (հանգերու և ոտքերու) խիտ օրինացած, այսինքն բանաստեղծությունը դառնում է արվեստի օրինքներով կաշկանդված:

Այդպիսով, Ալյաքեյանը, առաջինը հայ բանաստեղծության մեջ, ելնելով տաղաչափական արվեստի ժամանակի եվրոպական գիտության մակարդակից, հմտորեն ու բավականաչափ հանգամանակից

մշակում է հայերենի տաղաչափության մի ամբողջական ուսմունքը: Ճիշտ է, վերջինս մեզ տակավին ձեշտ էլին որոշարկվում հայերեն օտանավորի բնույթը, նրա էական հատկանիշները, այդուհանդերձ Ալյաքեյանի ուսմունքը պետական լուրջ հողի վրա էր դնում հայ տաղաչափության առարկան և պատմականորեն նպաստում նրա ապագա տեսական հետազոտությանը:

Եթե մինչև անցյալ տարի 70-ական թվականները հայ բանաստեղծության մեջ տաղաչափությունը կենթկա էր բերականագիտությանը, և եղած տաղաչափական հետազոտությունները (բացառությամբ Ա. Բաղդասարյանի վերլուծության «Մշակականք»-ի առաջարկների առնչությամբ, ապա 70-ական թվականներից սկսած, հայագիտության նոր վերելքի հետևանքով, կրեան են գնալու տաղաչափական անկախ ուսումնասիրություններն աստիճանաբար անկախանում է քերականությունից և դառնում ինքնուրույն առարկա: Առաջին ուսումնասիրությունն այս նկատումով դառնում է էդ. Հյուր-ժյուզյանի «Հայկական տաղաչափություն» հոդվածը<sup>2</sup>, որի մեջ ընդգծվում էր հայկական ոտանավորում հատկապես շեշտի խաղացած կարևոր դերը: Նա հայ տաղաչափության վանկական բնույթի շեշտելով հանդերձ, դառնում է միաժամանակ, որ բացի մեր բառային վերջահար ու վերջընթեր շեշտերից «մենք իմաստիցը հարմար շեշտ մը ունինք, որ լսողին համար նույն է՝ որպես թե բառերուն մեջ շեշտ ունենալինք. այնչափ ալ զգալի է աս մեր շեշտը՝ որ օտարազգիք լսելու ատեն մեր լեզվին շեշտերը իտպականեն ալ ավելի կը կարծեն»<sup>3</sup>: Նա դառնում է նույնիսկ, «որ մեր լեզուն իրեն հատուկ շեշտ մը ունի իմաստից կամ առգանություն, զոր եվրոպացիք չունին. այսինքն այն բառերուն վերջը՝ որոնք հաջորդ բառին հետ, վերաբերություն մը ունին, ինչպես անակառք զոյակային հետ, հատկապես իշը հասկացնելուն հետ, անցյալը կամ ապանին օժանդակ բալին հետ»<sup>4</sup>:

Խուսքն այստեղ վերաբերում է քերականական կամ իմաստային շեշտին, որ սովորաբար զարգում է մեր օտանավորի էական հատկությունների վրա, կազմելով բարդ բառական ոտքեր կամ անդամներ»<sup>5</sup>:

<sup>1</sup> Ա. Ալյաքեյան, Փնական քերականություն, էջ 404:

<sup>2</sup> Անդ, էջ 427:

<sup>1</sup> Քաղվածակ, 1873, էջ 97—106:

<sup>2</sup> Անդ, էջ 299:

<sup>3</sup> Անդ, էջ 100:

<sup>4</sup> Մ. Արևիյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 28:



Հյուրմուտիցանք, շեշտին զուգահեռ, կանգ է առնում նաև արդման (ը ձայնավորի) զնայրերի և կանոնների վրա՝ երկուսին էլ վերապահելով տաղաչափական կարևոր արժեք:

Նույն տասնամյակում, դարձյալ «Քաղզմալիկ»-ում, Արսեն Սուբբրյանը ևս, «Հոմերական բաղդիրք և Հոմերական տողք» հոդվածում՝ կրկինելով Բագրատունու և հակառակ Դրոնեսիոս Քրակացու Քերականության և Երողերի պնդումների, գտնում է, որ հայ տաղաչափությունը շափական չէ, այլ վանկական է եղել:

Հայ տաղաչափության առաջին մենագրական հետազոտությունը երևան է գալիս 90-ական թվականներին սկզբներին, Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը»<sup>2</sup> աշխատությանը:

Առարկան, որ Բահաթրյանը դնում էր իր ուսումնասիրության հիմքում, հայ հին գրավոր աղբյուրներով ավանդված վիզյական բանահյուսության նմուշներն էին, հոգեոր հին երգերը կամ շարականները և ուշ շրջանում գրառած ժողովրդական հմայական աղբյուրները, որոնք բմբռնվում էին իրեն հին բանաստեղծություն:

Առարկայի բմբռնման սահմանները, ուրեմն, Բահաթրյանի մտա Բագրատունու համեմատությանը որոշ շափով ընդլայնված էին: Եարականներից բացի, իրավացիորեն, ամենից առաջ հին բանաստեղծության դասական արտահայտություններ էին համարվում ժողովրդական հին բանահյուսության վիզյական նմուշները:

Սակայն տաղաչափական բմբռնումներով և մանավանդ ուսումնասիրության եղանակներով Բահաթրյանը, չնայած իր և Բագրատունու միջև ընկած քառասնամյա ժամանակաշրջանին, շատ չի հեռանում Արսեն Բագրատունուց: Հայ հին բանաստեղծության տաղաչափական քննությունը Բահաթրյանը կատարում է որթմական մեծ միավորների՝ անդամների և տողերի սահմաններում, և որտեղավորի այդ երկու տարրերի հարաբերակցությանը էլ փորձում է պարզաբանել մեր հին բանաստեղծության տաղաչափական հատկանիշները: Նա Բագրատունու նման հին տաղաչափության մեջ վճռական դեր է վերապահում բնական առողջությունը ու մանավանդ երգելու եզանակին՝ երաժշտությամբ: Ըստ այսմ էլ նա հայկական հին աղատ կամ անհամաչափ կողմած ոտանավորը բաժանում է երկու զլխավոր տիպի:

ա) տողերում անդամների հավասար բանակ ունեցող կանոնավոր ոտանավորների, որոնք կարող են բաղկացած լինել մեկից մինչև չորս անդամ ունեցող տողերից. դրանով նա իրավամբ հակադրվում էր Բագրատունու պարբերաբար քառանդամի տեսությանը: բ) անդամների տարբեր բանակ ունեցող տողերով անկանոն ոտանավորների:

Այս երկու զլխավոր տիպերից բացի, կանոնավոր աղատ ոտանավորի մեջ Բահաթրյանը տարբերակում է նաև խառն տաղաչափազավ տաղաչափական ենթատեսակը, որ երևան է գալիս թե՛ հին վիզյական բանահյուսության և թե՛ շարականների մեջ:

Բահաթրյանի ուսումնասիրության արդյունքների առավելությունը նախորդների նկատմամբ այն էր, որ նա՝ ա) իրավացիորեն տաղաչափական ընդհանրություններ է բացահայտում մի կողմից հին և նոր ժամանակներում գրառած վիզյական բանահյուսական նմուշներին, մյուս կողմից՝ մեր առաջին կրոնական գրական հուշարձանների՝ շարականների մեջ Դրանով նա հավաստում է հին աշխարհիկ և հոգեոր բանաստեղծության միջև ձևական սերտ կապ ու նմանություն:

բ) տաղաչափական ձևերը պայմանավորված է համարում բանաստեղծության բովանդակությանը և այդ մեկնակետից էլ քննում է ոտանավորի առանձնահատկությունները, մի պարագա, որ առկա էր նաև Բագրատունու մոտ:

Այս առավելություններով հանդերձ, հին բանաստեղծության տաղաչափական հատկանիշների հետազոտությունը, ինչպես Բահաթրյանի, այնպես և նախորդ ուսումնասիրողների մոտ կրում էր արտաքին, մակերեսային բնույթ:

Այս առումով, անշուշտ, որոշ առաջընթաց պիտի համարել 1894-ին Քիչլիխում հրատարակված Հակոբ Ճաղարբեգյանի «Բանահյուսության տեսություն» ձեռնարկը, ուր զգալի տեղ էր հատկացված նաև տաղաչափությանը: Վերջինս դիտելով իրեն բանաստեղծության ոճի արտահայտություններից մեկը, Ճաղարբեգյանը, սակայն շատ չէր հեռանում իր նախորդների տաղաչափական բմբռնումներից: Նորությունն այն էր, որ հեղինակը տարբերակում էր տաղաչափության երեք հիմնական տեսակ. ա) շափական, բ) շեշտական կամ ձայնական և գ) վանկական: Հայերենի տաղաչափությունը նախորդների նման նա համարում է վանկականը, որ հենվում է վանկերի բանակի վրա: Բայց ի տարբերություն նախորդների, Ճաղարբեգյանը մասամբ ընդունում է շեշտային ոտա-

<sup>1</sup> «Քաղզմալիկ», 1877, էջ 15—20.

<sup>2</sup> Եռչի, 1891.



նախորի ասորիերի առկայությունը հայերենում, գրելով. «հայերենի մեջ շեշտական տաղաչափությունը պատահական է: Իրավ է, օրինակներ շատ կան թե՛ հնադարյան և թե՛ նոր ստանալորենի մեջ, սակայն՝ այստեղ շեշտականությունը լեզվի ընալօրությունից չէ դուրս գալիս»<sup>1</sup>:

Էականն այն չէր, որ հեղինակը շեշտային ստանալորեն հայերենում պատահական էր համարում, այլ այն, որ նա ընդունում էր, հակառակ Բահաբյանի, դրս գրությունը:

90-ական թվականներին հայ տաղաչափագիտության առաջընթացը ևրևան են գալիս ոչ միայն մենագրական հետազոտություններ, այլև ուսումնական ձեռնարկներ, որ փորձ է արվում ժամանակի եվրոպական տաղաչափագիտության սկզբունքներով համակարգել հայերենի տաղաչափական հասկացությունները:

Մինչև Արեղյանի տաղաչափական ուսումնասիրությունները հանգես դալը, սուղադրվում են հայերենի տաղաչափության նվիրված մի քանի աշխատություն ևս, որոնցից հիշատակության են արժանի Աթանես Տիրոյանի «Ասորական և հայկական տաղաչափություն»-ը (Ռեպրովիզիոն, 1899, էջ 12—15, 105—109, 249—253, 345—350, 502—506), Կ. Տեր-Մահկյանի «Աշխարհարարի նոր տաղաչափություն մը» (Ռեպրովիզիոն, 1905, էջ 437—441, մասի Աթանես Տիրոյանի «Ասորական և հայկական տաղաչափական գաղտնիքը» (Ռեպրովիզիոն, 1907, էջ 245—254), Զ. Թիրյայրյանի «Հայկական տաղաչափություն»-ը (Նյու-Յորք) և այլն: Առաջինը նվիրված լինելով հայ հին և սօրբական ու կրթական տաղաչափությունների կապին ու համեմատությանը, արժեքավոր էր իբրև այդպիսին, և այդ համեմատությունների մեջ բացահայտվում էին հայ տաղաչափության յուրահատկությունները: Կերպրենցի մեջ Տիրոյանը, հետևելով Բագրատունուն, էական տեղ էր հատկացնում խորի և բառային շեշտերի խաղաղացած տաղաչափական կարևոր դերին, որով բառային ու դիմաձայն սօրբերը միմյանց չեն համընկնում և դիմաձայնը հասում է բառական սօրբ, մի բան, որ բացակայում է և՛ ասորական, և՛ կրթական բանաստեղծության մեջ<sup>2</sup>:

Առավել ուշագրավ էր, սակայն, երկրորդ աշխատությունը Կ. Տեր-Մահկյանը առաջին անգամ հայ տաղաչափագիտության մեջ առաջադրում էր երաժշտականության պահանջի խնդիրը: Նա տաղաչափությունը համարելով բանաստեղծության երաժշտությունը, գտնում է, որ երաժշտագիտության սկզբունքներով ու պահանջներով պետք է մտանալ տաղաչափությանը: Նա բաղձալի է համարում «երաժշտության հանրածանոթի և ընդհանուր սկզբունքների բանաստեղծության հետ պատմաստեղ ուղղակի»<sup>3</sup>, ուստի և նա, ինչպես երաժշտության, այնպես էլ տաղաչափության մեջ էական պայման է համարում ամանակն ու շեշտը և ոչ թե վանկերի թիվը, «վասն զի ակադրությունը (ձայնական—Ս. Ը.) միայն վանկերու թիվն կախում չունի, այլ գլխավորապես շեշտերնն»<sup>4</sup>: Այս նկատառումով էլ Տեր-Մահկյանը հայերենում տաղաչափական կարևոր դեր է վերապահում, ինչպես Բագրատունին և ուրիշներ, բառային և բերականական շեշտերին: Այս թևակներով Տեր-Մահկյանը շատ լավ էր բերում դիմաձայն սօրբերը տաղաչափության մեջ, այդուհանդերձ նա ևս նախորդների նման անհաղորդ է մնում դիմաձայն շեշտերի խաղաղացած կարևորագույն դերին: Ենչտերի ըմբռնումն, ուրեմն, նրա մոտ ևս բառայինից, քերականականից և խոսքից կամ առողանականից այն կողմ չի անցնում:

Ենչտերի դերի նման նեղ ըմբռնումն էր, անշուշտ, պատճառը, որ նա տաղաչափական սկզբունքային նշանակություն էր տալիս ամանակին, և բարենորոգչի դեր ստանձնելով, առաջարկում էր աշխարհարար բանաստեղծությունը հորինել ամանակային տաղաչափության սկզբունքով, որը հեղինակի կարծիքով մեծ չափով կնպաստեր հայ բանաստեղծության զարգացմանն ու աշխարհարարի կատարելագործմանը:

Այս պահանջը ևս նորություն չէր. Բագրատունին և Մ. Խրիմյանը, ինչպես տեսանք, մասամբ գործնականում կիրառել էին այն, իսկ Ա. Այտընյանը տեսականորեն չափական ստանալօրի կիրառությունը նպատակահամար էր համարում:

Իր հաջորդ՝ Վեգային հին բանաստեղծության տաղաչափական դաղանիքը՝ հոգվածում, Տեր-Մահկյանը փորձում է ապացուցել, որ հին հայ տաղաչափությունը (մասնավորապես շարականներին), որոնց մի մասն էր միայն Բագրատունին ուսումնասիրել և որակել «հայկական չափ»՝ ամբողջապես ամանակային է, և Բագր-

1 Ը. Զաղարբյուզյան, Բանաստեղծության տեսություն, Քիջիս, 1894, էջ 33:  
2 Տե՛ս Ս. Մ. Գառապյան, Տաղաչափություն արգել հայերեն լեզվի, հանդիս է ծանոթությունը չափական և շեշտայն ստանալօրենքներու վրա, Կ. Պոլիս, 1895:  
3 Պուրզեև, Համաստ արվեստ տաղաչափության, հանդերձ դրաբար և աշխարհարար հատրետեր քերթվածոց հավաքածոյի, Կ. Պոլիս, 1897:  
4 Հմմտ. Ռեպրովիզիոն, 1899, էջ 252 և հանև:

1 Ռեպրովիզիոն, 1905, էջ 500:  
2 Անդ, էջ 501:



բառունու հայտնաբերած քառանգամ «հայկական լափը» ամանակային տաղաչափության արտահայտություններից մեկն է: Հին բանաստեղծության մեջ ամանակային լափերի զոյությունն ապացուցում է փորձերը նպատակ էին հետամտում նոր բանաստեղծության մեջ ամանակային տաղաչափության արմատավորումը ոչ թե պատահական ու եկամտու համարելու, այլ հայց լեզվին ու տաղաչափությանն առանձնահատուկ: Որքան էլ Տեր-Սահակյանի փորձերը ուշադրով էին ու արամբարանական, այդուհանդերձ մեր լեզվի սոցուն խորթ էին ամանակային լափերը և այդպիսիք գտնելու և դրանց զոյությունն ապացուցելու նրա և նախորդների ջանքերը հիմնադրել էին և բռնազորու: Բայց և այնպես, պատմական առումով Տեր-Սահակյանի աշխատությունները հայ տաղաչափական համակարգը վերաբնեւելու և վերակարգելու յուր փորձեր էին և գալիս էին նպատակու: Հայ տաղաչափական մտքի հետագա զարգացմանը: Այսպիսին էր հիմնականում հայ տաղաչափության ուսումնասիրության պիճակը մինչև Արեղյանը:

Շարտգրվածից դժվար չէ հետևեցնել, որ մինչև Արեղյանը տաղաչափության հետազոտությունը մեզանում տարվում էր հիմնականում երկու ուղղությամբ. ա) տաղաչափական բնդհանուր դիտելիքների խիստ համառոտ մշակում և մատուցում ուսումնական նկատառումներով՝ մեծ մասամբ ձեռնարկներով, և բ) հայ հին, մասամբ և նոր բանաստեղծության տաղաչափական հատկանիշների ուսումնասիրություն, որ կատարվում էր տաղաչափական սահմանափակ ու մակերեսային բերնոսումներով և հայ բանաստեղծության փաստերի սակավ և միակողմանի հաշվառումով: Մինչևարդյանական հայ տաղաչափագիտության առաջին պիսավոր թերությունն այն էր, որ հայ բանաստեղծության տաղաչափական իրավությունները բնեղում էին ոչ թե հին ու նոր հայերենի լեզվա-առողանական բուր հնարավորությունների հաշվառման հիման վրա, այլ միայն լեզվական առանձին ու մասնակի երևույթների: Այս հանգամանքն էլ պատճառ էր դառնում արված մտահանդուսների երբորն ու սակավ հիմնավոր լինելուն, ինչպես նաև տաղաչափական իրավությունների նկատմամբ քծածահ-անձնական վերաբերմունքին, որ արտահայտվում էր հատկապես հայ նոր բանաստեղծության մեջ տաղաչափական այս կամ համակարգը արմատավորելու ձգտումներում ու տեսություններում:

Երկրորդ էական պահանջուքներ, որ առավելարար մեթոդական նշանակություն ունի, մինչևարդյանական հայ տաղաչափագիտության կողմից ռիբնական շեշտերի առեսումն էր:

Ճիշտ է, սկսած հայ նոր տաղաչափագիտության սկզբնավորողից՝ Արս. Բազրատունուց, վերջացրած Կ. Տեր-Սահակյանով, թեպես այս կամ այն լափով հաշվի էր առնվում շեշտերի խաղացած կարևոր դերը մեր ստանավորներում, սակայն դրանք վերաբերում էին լեզվական (թերականական, բառական, խոսքի կամ առողանական) շեշտերին միայն: Իսկ ռիթմական շեշտերը, որոնք իրականում մեր տաղաչափության մեջ մեծ դեր են կատարում, անխրաժացիորեն հաշվի չէր առնվում: Եվ դրան նպաստում էին հատկապես մեր ստանավորները «վանկական» կամ էլ «շափական» համարելու տեսությունները, ըստ որոնց թերականահատվում էր այդ կարգի ստանավորներում ռիթմական շեշտերի տաղաչափական նշանակությունը:

Ռիթմական շեշտերի արժեքի թերականահատումն ու անտեսումը, ահա, հասցնում է այն բանին, որ տաղաչափական բնությունները կատարվում են միայն վանկերի, դրանցով կազմված ստերի, վերջիններսով բաղադրված անդամների ու դրանք բնդիրկող տողերի բանակի կամ էլ վանկերի սղությունն և երկարության համեմատ:

Այդ պատճառով էլ տաղաչափական վերլուծությունները կրում էին հիմնականում արտաքին, մակերեսային բնույթ. տաղաչափական ներքին կառուցվածքներն ու մասնահատկությունները, որոնք պայմանավորված էին ոտանավորի շեշտի հատկանիշներով, մնում էին աննշանակալի ըստահայտված:

Հայ տաղաչափագիտությունն բնդհանրապես մինչև Արեղյանը տակավին իր մանկությունն էր ապրում, հնի ավանդական խանձարուրով կաշկանդված. զղացվում էր նոր խոսքի, գիտական նոր մտքի անհրաժեշտություն:

## 2. ԱՅՅՈՒՆԻ ՏԱՂԱՉԱՓԱԳԻՏՈՒՄԻ ԲՈՒՆԵՐԸ

1889-ին, տակավին իր անդրանիկ գիտական աշխատության «Դավիթ և Մհեր»-ի առաջարանում Մանուկ Արեղյանը խոսելով վեպի իր զրառած պատումի տաղաչափական հատկանիշների մասին, նկատում է, որ վեպը երգվող բացահայտ լափածո հատվածներին

1 Հմտ. Էդ. Զրբայան, Մ. Արեղյանը և հայկական տաղաչափության հարթը, «Բաներ Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 84:

1 Տե՛ս Մ. Արեղյան, Հայեր լեզվի տաղաչափություն, էջ 133 և հտե.:



բացի, հորինված է ամբողջությամբ ստանալորով, որ սողերում վանկերի անհնաշատ թիվը 13-ն է (հրեմն 14), իսկ ամենաբլբը՝ 6: Սակայն էականն այդ չէր: Երեսուսարդ հետազոտողը հակադրվում էր մինչ այդ եղած հայ տաղաչափության գնահատման ավանդական սկզբունքներին, հայ տաղաչափության այսպես կոչված «վանկական» լինելու տեսությանը<sup>1</sup>:

«Սակայն,— գրում է նա,— ստանալորի համար այստեղ նշանակություն ունի ոչ թե վանկերի թիվը, այլ ձայների եկեւջը և ուրերի (στομα, և ք) թիվը, որ լինում է 3—6 ոտը: Ամեն մի ոտը բաղկացած է կրկու կամ երեք վանկից և շեշտ սովորաբար վերջին վանկի վրա ունի. որով և ամբողջ ստանալորը հորինված է ձայնական (շեշտական, տոնիզացում բաժբբ) շափվի և կազմված է մեծավեջ (ΣΜΒ) և վեջատանջ (αναπεστ) սովերի խառնուրդից՝ երկար և կարճ տաղերով»<sup>2</sup> (ընդգծումներն իմն են—Ս. Է.):

Ավելին. Արեղյանը շեշտական տաղաչափության հատկանիշը նկատում է ոչ միայն տակավին հետազոտության շարժանացած նոր գրառած ժողովրդական վիպում, այլև նորհնացու ավանդած հնագույն վիպական բանահյուսության նմուշներում:

«Լավ ուշադրություն դարձնողը,— շարունակության մեջ գրում է նա,— կատենի, որ արդի ժողովրդ. վեպի այս ձայնական տաղաչափությունը, որ բուլղոսիկն նոր է մեր բանահյուսության մեջ, շատ մոտ է մեր հին հնթանոսական վեպերի շափին (երկնէր երկին. և մյուս հատվածները նոր. պամ. մեջ): Վերջիններս անշուշտ նույնպիսի տաղաչափությամբ են հորինված եղել, հիմք ունենալով թերևս շեշտի և բուլի (անշեշտ վանկ) փոխանակ երկար ու սուղ ձայնավորները»<sup>3</sup>: Ե՛վ ավազին, Կ՝ երկրորդ զեպերում նա իր պրնցիպներն հաստատում է որոշակի օրինակներով:

Արեղյանը իր անդրանիկ գիտական ելույթում իսկ, հակառակ նախորդ բանասերների հայ տաղաչափությունը սուկ վանկական

համարելու միահամուտ կործիրին, վստահ ու համարձակ առաջ է բաշում մեր հին ու նոր վիպական բանահյուսության հուշարձանների շեշտական լինելու բոլորովին նոր տեսակետը: Եվ պատահական չէ, որ Արեղյանի այս նոր կարծիքը խօսույն առարկության է հանդիպում Ավ. Բահաթրյանի կողմից<sup>4</sup>, որը վանկական տաղաչափության վարկածը համարում էր սարքայուն սրբոց, իսկ լեզվական ու սիթմական շեշտերի միջև ոչ մի տարբերություն չէր գտնում:

Այն, ինչ Արեղյանը մասնակի էր ասել իր առաջին աշխատության մեջ, առավել քնդհանրացած ու պատմականորեն հիմնավորված ձևով, խորացնում է ու զարգացնում իր հաջորդ ուսումնասիրություններում: 1904-ին հրատարակած մեր ժողովրդական սիրո երգերի անդրանիկ հետազոտության մեջ<sup>5</sup>, ինչպես նշել ենք արդեն, Արեղյանը առանձին զուլու է հատկացնում գեղեկական սիրո երգերի տաղաչափական հատկությունների վերլուծությանը: Նա այստեղ ժողովրդական խաղիկների տաղաչափական բնույթյունը կատարում է «վանկական» հիմունքներով, այսինքն ըստ վանկերի բանակի եվ այց, եթե մասամբ աուրբ էր ավանդական բանասիրության մեթոդներին, այդ մասամբ էլ պայմանավորված էր ժողովրդական բանասիրության մի մասի տաղաչափության իրոք վանկական բնույթով: Այդ մասին հետագայում նա հատկապես գրել է. «Ժողովրդական Գաղաթիկների մեջ կան, հարկավ, և այնպիսիներ, որոնք իսկական վանկական ոտանավորներ են. այդպիսի սողերի մեջ կա վանկերի որոշ թիվը միայն և ոչ միանգամայն նաև շեշտերի դասավորությունն ու թիվը»<sup>6</sup>: Այսուհանդերձ, ժողովրդական խաղերի տաղաչափության վանկական վերլուծությունը չէր նշանակում, հարկավ, թե Արեղյանը չէր ընդունում նաև նրանց շեշտական բնույթը: Ընդհակառակը. ժխտելով այն թյուր կարծիքը, թե մեր սովորական տաղաչափությունը «հարմար չէ մեր լեզվի ողուն և թերևս կարելի է մի նոր տեսակի տաղաչափություն մտցնել մեր բանաստեղծության մեջ» և բննագատելով ուսաների ու վերմանացիների շեշտական տաղաչափության նմանությամբ մեղանում բանաստեղծությունները գրելու անհաշոյ փորձերը, Արեղյանը հավաստում է, որ «10-րդ դարուց սկսած, եթե ոչ էլ առաջ... մեր գրականության մեջ գործածական է մի շափ, որ սխալմամբ միայն վանկական է կոչվում, ս-

1 Ներկա հետազոտությունը ավարտված է մեքենագրված էր. երբ նրանք պետհամալսարանի սրահներում լույս տեսավ բանասիրակ. գիտ. ցրկտոր-պրոց. էջ. Ջրբաշյանի «Մ. Արեղյանը և հայկական տաղաչափության հարցերը» արժեքավոր հոդվածը, ուր առաջին անգամ մեր բանասիրության մեջ ըստ արժանիության գնահատվում է Մ. Արեղյանի պատմական խոշոր գիշը հայերենի տաղաչափության գիտական հիմունքների մշակման և սննդաբերված զարգացման գործում (անհ. «Քննարկը նրանից համալսարանի», 1268, № 1, էջ 80—83):

2 Մ. Արեղյան, Դավիթ և Մհեր, էջ 2:

3 Անց, էջ Է:

1 Տե՛ս նրա «Էին հայոց տաղաչափական արվեստը», էջ 134—135:

2 Մ. Արեղյան, Ժողովրդական խաղեր, ուսմածք:

3 Մ. Արեղյան, Զայց լեզվի տաղաչափություն, էջ 281:

յովհետև իսկապես շեշտական է, միայն ոչ գերմանացոց և ասուաց չափերի նման պարզ ոտքերի վրա հիմնված, այլ բարդ կամ բարձրագույն ոտքերի, որոնց մեջ վերջին շեշտերի կանոնավոր կրկնությունն է միայն ի նկատի առնվում»<sup>1</sup>:

Արեղյանն, որքանն, շեշտական տաղաչափությունը ոչ թե մեր լեզվին խորթ ու օտար իրողություն է համարում, այլ նրան հնուց անտի յուրահասուց մի հատկանիշ, որ ավանդական հայագիտության կողմից մնացել էր շրջաճաշայված: Նա գրանով փաստորեն հավաստում է հայերենի սովորական տաղաչափության շեշտական բնույթը: Այդ բարդ ոտքերով ու շեշտերի կանոնավոր կրկնությամբ շափր Արեղյանը համարում է «հարմար... մեր լեզվի ոգուն», որին ապացույց է «ոչ միայն յուր անցյալը, այլև այն, որ ժողովուրդը յուր խաղերի մեջ ճիշտ նույն շափի է գործածում, ինչ որ մեր գրագետները գործ են անել կամ գործ են անում... էական տարբերություն չկա մեր ժողովրդական և գրական բանաստեղծության շափի մեջ, և մի շափ, որ ժողովուրդն ևս գործածում է յուր երգերի մեջ, լի կարող լեզվի ոգուն համապատասխան լինելը»<sup>2</sup>:

Այդպես, հավաստումով հայ տաղաչափության շեշտական բնույթը, Արեղյանը միաժամանակ նշում է մեր գրական բանաստեղծության ու ժողովրդական բարասկան բանահյուսության տաղաչափական միասնությունը: Այդ միասնության մեջ շափերի բազմազանության առումով նա գերապատմությունը արամադրում է ժողովրդականին, գրելով, թե «ժողովրդական երգերի շափը շատ ավելի բազմազան և հարուստ է, քան գրականը»: Նույն կերպ նա առավելությունը տալիս է ժողովրդական երգերի հանգերին, գրելով, թե «հանգերի նկատմամբ ևս մեր ժողովրդական երգը շատ ավելի զարգացած է, քան գրականը»:

Հայերենի տաղաչափության շեշտական հատկությունը Արեղյանն ապացուցում է հատկապես «նստունի» կամ «հայրեն» կոչված երգերի բանաստեղծական շափի հակիրճ քննությամբ:

Տակավին նարեկացու կողմից ավանդված և մեր միջնադարյան բանաստեղծության մեջ, ինչպես նաև Ակնի ժողովրդական երգերում լայնորեն սիրված ու տարածված «նստունի» շափը, ըստ Արեղյանի, «մեր միակ նրաժշտական շեշտական շափն է, որի ոտքերը պարզ են, այսինքն մի շեշտված և մի կամ երկու անշեշտ վանկից են

կազմվում»<sup>3</sup>: «Նստունու» տաղաչափական սքեման համարելով 7—8 վանկանի տողերի փոխադարձ հարբորությունն ու յուրաքանչյուր տողում երեք շեշտի ու երեք ոտքի պարտադիր առկայությունը, Արեղյանը փաստորեն ապացուցում է հին հայկական ու ժողովրդական տաղաչափության մեջ շեշտական պարզ յամբական ու անպետական ստեղծումը: Նույնպես հայտնաբերելով «նստունի» շափի հատկանիշները, Արեղյանը համարում էր հայագիտության մեջ արմատացած «նստունի» տաղաչափության վանկական տեսությունը:

Նկզբի վերջնական ապացուցումն ու պարզաբանումը, սակայն, տակավին ապագային էր մնում:

1916 թ. «Համրավարեր»-ում սկսում է շարունակաբար լույս տեսնել Մ. Արեղյանի հոդվածաշարը՝ նվիրված հայերենի տաղաչափության բուն հատկանիշներին<sup>4</sup>:

Այստեղ, հեղինակն արդեն իր նախորդ հարևանցիորեն արտահայտած նոր տեսակետները ներկայացնում է գիտականորեն առավել հիմնավորված: Հոդվածաշարը յուրատեսակ ամփոփում էր տեսական այն հիմունքների, որ զարգացրել էր Արեղյանը տակավին 1910-ական թվականների սկզբին գրած իր հայերենի տաղաչափության մասին անտիպ ծավալուն հետազոտությամբ: Վերջինս արդյունքն ու մշակումն էր Գևորգյան ճեմարանի յարասկան բաժնում հայ տաղաչափության մասին հեղինակի կարգացած դասախոսությունների<sup>5</sup>:

Հոդվածաշարում Արեղյանը հիմնականում կանգ է առնում տաղաչափության երկու էական հատկանիշների՝ «իթմի» և «ոտանավորի» տեսակների վրա, որոնց միջոցով պարզաբանում է հայ տաղաչափության յուրահատկությունները: Ռիթմը համարելով երաժշտության և բանաստեղծության ընդհանուր հատկանիշը, Արեղյանը ջուլջ է տալիս, թե ինչպես այն առաջանում է «նույն ուրիշ» ռիթմի միությունների միասնական կանոնավոր հարբորությունից»:

1 Մ. Արեղյան, Ժողովրդական խաղեր, էջ 27:  
2 «Նստունի» կամ «նստացում» միայն «հայրեն» անվանած շափի մեարսման առանձնահատկությունների Արեղյանն անդրադառնում է «Նի գրագետական ժողովրդական երգեր» (1931) առանձնատիրության մեջ (էջ 21—42), որն արդեն տեղի էնք համապատասխան տեղում:  
3 Մ. Արեղյան, Հայերեն տաղաչափության մասին, «Համրավարեր», 1916, № 21, 22, 23, 25, 27:  
4 Տե՛ս «Համրավարեր», 1916, № 21, 666 էջի առաջատակի ծանոթությունը:

1 Մ. Արեղյան, Ժողովրդական խաղեր, էջ 33:  
2 Անց, էջ 33—34:



կան ամենափոքր միությունը կրթաշտաբան մեջ տակոն է, որ կազմվում է տեղաբնակի հավասար կրթու կամ կրթի նշանակությունը, որոնցից մեկն ու մեկը մյուսներից ավելի ուժեղ է արտաբերվում: Տակտի պայմանները, հետաքրքիր, կրթուսն են.

ա) ժամանակի հավասար տեղաբնակի կամ տակտի ամսակար, որ միության հարողը բոլոր տակտերի համար անփոփոխելի է մնում:

բ) ռիթմական շեշտը, որ ունի տակտամասերից մեկը, չե որով կրկու կամ երեք իրար հաջորդող է ժամանակի հավասար տեղաբնակ ունեցող նշանակները միասնում է մի ամբողջություն են կազմում: Տաղաչափության մեջ կրթաշտաբան տակտին համապատասխանում է ստիք, այն տարրերով, սակայն, որ կլին կրթաշտաբան տակտը կազմվում է ստիկ կրթու-երեք նշանակներից, ապա սուրը՝ կրթու-երեք վանկերից, որոնք տեղաբնակի հավասար են իրարիակ արտաբերման ուժով՝ մեկնում են շեշտված է մյուսների ներկատմամբ:

Այս ընդհանրությամբ հանդերձ, տաղաչափական ոտքը տարբերվում է կրթաշտաբան տակտից այնու, որ առաջինը կրթու չի կարող հասնել կրկրորդի ճշտությամբ, քանի որ կրթաշտաբան է և գործ ունի լուկ նշանակների հետ, միևնույն բանաստեղծը գործ ունի բառերի և խոսքերի հետ և կաշկանգված է լեզվական բազմաթիվ օրենքներով ու իրարմիություններով:

Ռիթմական այս ընդհանուր գիտելիքները հակիրճ շարադրելուց հետո, Արեղյանը գրանցից արամարաներեն բխեցնում է լեզուների տաղաչափական առանձնահատկությունները՝ պայմանավորված տակտի ամսակարի է շեշտով: ...նայելով լեզուների հատկության,— գրում է նա,— մի լեզվի մեջ բանաստեղծին ավելի զովարություն է պատճառում բառերի բնական ամսակարի համաձայնությունը ոտքի պահանջած տեղաբնակի հետ, մի ուրիշ լեզվի մեջ՝ բառերի բնական շեշտի համաձայնությունը ստանալորի ոտքի պահանջած շեշտի հետ: Որով մի լեզվի մեջ ոտքը, կրթաշտաբան տակտի համաձայնությամբ, անկատար է մնում ամսակարի կողմից. մի ուրիշ լեզվի մեջ՝ շեշտի կողմից: 1

Այս ընդհանուր օրինակաբանությամբ մոտենալով հայոց լեզվին, Արեղյանն իրավացիորեն պնդում է, որ վանկերի կրթաբնակությունն ու կարճությունը հայերենում հաստատուն արժեք չունենու Միևնույն

շեշտի զգացողությունն ավելի է կարգացած նոր լեզուներում, այդ թվում նաև հայերենում: Եվ քանի որ վերջինիս մեջ ստանալորի ոտքի ամսակար լավորում է վանկերի թվով, ապա պետք է առանձին ուղարկությունը դարձվի շեշտի վրա. որովհետև կլին տակտի պայմաններից մեկը՝ ամսակարի հավասարությունը մոտավորապես է միայն պահվում, մյուս պայմանը՝ շեշտը՝ պետք է անպատճառ նշտությամբ պահվի, որպեսզի կրթաշտաբանն ուրիշ առաջ գաս: 2

Այս հիմունքներով էլ Արեղյանը առավել հստակ ու որոշակի է ձևակերպում իր հայացքը հայերենի տաղաչափության բնույթի ներկատմամբ, որից, թե մեծ ոտանավորի կարևոր հիմքը դառնում է՝ վանկերի հավասար թիվն և շեշտը, և ոչ թե վանկերի ամսակարն ու շեշտը. ուրիշ խոսքով մեր ստանալորը պատկանում է շեշտական կողմից ստանալորների տեսակին: 3

Հավաստելով հայերենի տաղաչափության շեշտական բնույթը, Արեղյանը, սակայն, ցույց է տալիս, որ հայերենին շեշտական ստանալորների ոչ բոլոր ձևերն են հասուկ: Շեշտական ստանալորի ամենապարզ ոտքերը համարելով կրթավանկի և եռավանկ կազմություն ունեցողները, որոնք, շեշտի կրթուով հինգ տեսակի են բաժանվում (մեծապար-բարեքոս, մեծավերջ-յամբ, ստեղծ-գակախի, թողազոտ-ամֆիրաբոս, վերջապահ-անպակաս), նա գտնում է, որ դակտիլը (եռավանկ՝ առաջին վանկի շեշտով) հայերենին բնավ հասուկ չէ. բորեյականով (կրկավանկ՝ առաջին վանկի շեշտով) նույնպես է ստանալոր հորինել, քանզի հայերենում կան մի քանի տեսակի նման բառեր. յամբով (կրկավանկ՝ վերջին վանկի շեշտով) շատ հեշտությամբ կարելի է հայերենում ստանալոր հորինել, որովհետև հազարավոր կրկավանկ բառեր կլին. բայց միստամանակ նշում է մարքո յամբական ստանալորի կրթուով միստամանակ օրինակությունը, որից առաջարկում է զգուշանալ և միօրինակությունը վերացնել բորեյական և թողազոտ ոտքերի խառնուրդով: Յամբական ստանալորի նմուշները Արեղյանը տեսնում է տակավին ազատ ստանալորով հորինված շարականների մեջ: Բայց հայերենին ամենինք բնորոշը Արեղյանը համարում է անպակասյան ոտքը (եռավանկ վերջին վանկի շեշտամբ), որն հնուց անախ գործածական է հայ բանաստեղծության մեջ: Գրա հետ միստամանակ հնից է գալիս նաև ամֆիրաբոսը (եռավանկ վերջին վանկի շեշտամբ): Արեղյանը, սակայն, ուրիշներն ավելի կատարյալ ու զեղե-

1 «Համբավորք», 1916, № 21, էջ 669:

1 «Համբավորք», 1916, № 21, էջ 670:

2 Այդ,

ցիկ է համարում յամբի խառնուրդով անապետայն ոտանավոր-առավել կա՝ յամբ-անապետայն փոփոխակի ոտերևով ոտանավորը, որի լավագույն արտահայտությունները հայերեններն են:

Որիմեական պարզ միավորներից՝ պարզ ոտերի բնութվունից Աբեղյանն անցնում է բարդ ոտերին կամ անդամներին, որոնք կազմվում են պարզ ոտերի բաղադրությամբ և թեկադրված են ոտանավորի ուրիշը ավելի հարուստ ու բազմազան դարձնելու պահանջով:

Քարզ ոտերի կամ անդամները, ինչպես երաժշտության մեջ բարդ և խառն տակտերը, զոյանում են մի զորեղ շեշտով. պարզ ոտերի կամ տակտերը միանալով առաջ են բերում մի ամբողջություն, ուր պարզ ոտերի կամ տակտերը իրենց շեշտերը պահպանելուն, ուր պարզ ոտերի կամ տակտերը իրենց շեշտերը պահպանելուն, առավել զորեղ շեշտում են ոտերից մեկը կամ տակտերից առաջինը, և այդ շեշտն էլ հենց դառնում է բարդ ոտերի կամ անդամների միության կենտրոնը:

Աբեղյանը ցույց է տալիս, որ եթե զորեղ և թուլ շեշտերի կանոնավոր հաջորդականությունը երաժշտության մեջ պարտադիր է, ապա տաղաչափության մեջ բնավ էլ պարտադիր չէ, քանզի այդ կանոնավորությունը առաջ է բերում ձանձրալի միակերպություն, որ, սովորաբար ցանկալի չէ: Եվ նա առավելությունը տալիս է բանաստեղծության մեջ զորեղ շեշտերի շարժուն դասավորությանը այն հիմունքով, թե «զբանով ավելի մեծ կենդանություն է ստանում հորիվածքը»:

Այնուհետև, հավաստելով հայ տաղաչափության մեջ բարդ ոտերի կամ անդամների հարուստ բազմազանությունը, Աբեղյանը առաջ է բերում մեր ոտանավորում առավել սիրված անդամների սեսականերու Գրանք են հիմնականում՝ յամբական և փեյվականի առդամները. վերջիններս նոր բանաստեղծության մեջ բիշ գործածական են, միանում են մեծ մասամբ հինգականի արժանի հետ, որով ոտանավորը ունենում է մերթ յամբական, մերթ անապետայն բնույթ:

Աբեղյանը հայ տաղաչափության մեջ կարևոր նշանակություն է տալիս անդամներին այն հիմունքով, թե որիմեական միավորների կանոնավոր հաջորդականությունը մեր ոտանավորում մեծ մասամբ պահպանվում է կամ միայն բարդ ոտերի, կամ էլ բարդ ոտերիին

միացած պարզ ոտերի շնորհիվ: Սուսկ պարզ ոտերիով կատարվող ուրիշի առաջագացման թերին լրացնելու է գալիս անդամը, որը միշտ կանոնավորում է պարզ ոտերի ուրիշի անհամաչափությունը: Ուստի և հայկական անդամավոր ոտանավորի ամենապարտադիր կանոնը Աբեղյանը համարում է անդամի վերջին վանկի անպայման շեշտումը և յուրաքանչյուր բառի հարաձեշտ վանկի շեշտի փոխանցումը հաջորդ վանկին:

Հայ տաղաչափության նշված հատկությունների հանդամանակից բնութվունը պարտադրում էր Աբեղյանին վերջնականապես որոշել հայկական ոտանավորի ունեցած տեղը շեշտական տաղաչափության մեջ:

Նա հայ տաղաչափությունը համեմատելով դերմանական և ոտական շեշտական ոտանավորների, ինչպես նաև ֆրանսիական վանկական տաղաչափության հետ, գտնում է, որ հայկականը «որիմեկ երաժշտական տեսակետից, շատ ավելի անկատար է, քան գերմաներենը, որ պահանջում է անթերի ուրիշական շեշտեր ամեն մի պարզ ոտի համար»: Մինչդեռ նույն տեսակետից գրեթե հավասար է ռուսականին, «քանի որ երկուսի մեջ ևս անշեշտ վանկերն անցնում են տաղաչափորեն շեշտված վանկերի տեղը»: Այդուհանդերձ հայերենը տարբերվում է ռուսերենից ստանավորի անդամավոր կազմությամբ և այդ կողմից մոտենում է ֆրանսիերենին: Բայց միաժամանակ է՛ր արևելյան բնավորությամբ միջին տեղը է բռնում ռուսերեն և ֆրանսերեն ոտանավորների մեջ, շատ ավելի ուրիշի կուժրտական, քան ֆրանսերենը» (ընդգծումն իմն է — Ս. Հ.):

Ահա այն հիմնական կերպակացությունը, որին հանգում էր Աբեղյանը ընթացիկ հարյուրամյակի տասական թվականներին՝ հայ տաղաչափության բնույթը որոշելիս:

Սա մի նոր խոսք էր ու տեսակետ հայ բանասիրության մեջ՝ մակաբերված առարկայի խոր ու մանրազնին հետազոտությունից:

Աբեղյանը հիշյալ հետազոտությամբ փաստորեն հիմք էր դրելու հայ տաղաչափության նորագույն ուսմունքին, որն առավել համակողմանի ընդհանրացվեց ու խորացվեց նրա «Հայաց լեզվի տաղաչափության» մեջ: Իսկ գործնական տեսակետից բնութակվող հետազոտության արժեքն այն էր, որ հեղինակը հայ տաղաչափության կարծեցյալ «վանկական» բնույթը, Աբեղյանը ազատագրում էր հայ բանաստեղծներին չափածոն սսակ վանկերով հաշվելու մոլո-

1 «Համբավարիք», 1916, № 25, էջ 790—791:

1 «Համբավարիք», 1916, № 27, էջ 860:



բությունից, որով մեծապես առժամ էր բանաստեղծության ուրիշակ-  
կան շարժումը: Կա բանաստեղծների ուշադրությունն հրավիրելով  
հայ տաղաչափության մեջ շեշտերի խաղացած խիստ կարևոր դե-  
րին, դրանով զործնակեանում պաշխ էր նպաստելու հայ բանաս-  
տեղծության ուրիշական հատկանիշների զարգացմանն ու կատարե-  
լագործմանը<sup>1</sup>:

Պատմական և առավելաբար զործնական նման նպատակներ էր  
հետապնդում 1923-ին հրատարակած նրա մի նոր ուսումնասիրու-  
թյունը, նվիրված սովետահայ բանաստեղծության մեջ տաղաչա-  
փության զարգացման խնդրին<sup>2</sup>:

Արեղյանը ժամանակի բանաստեղծության տաղաչափական ձև-  
վերի զարգացումը ևս, ինչպես միշտ, դիտում է իբրև պատմական  
պրոցես, իբրև արգյունք ու հետևանք մեր բանաստեղծության դա-  
րավոր ընթացքի:

Կա սովետահայ բանաստեղծության տաղաչափական ձևերի ա-  
մենագիծը ու կարկանտն արտահայտությունը համարում է Եդի-  
շե Չարենցի պոեզիան և այն էլ զարմնում է հիմք ու ելակետ ժամա-  
նակի բանաստեղծության տաղաչափական յուրահատկությունները  
զննհատելիս:

Հակադրվելով սովետահայ գրականագիտության մեջ արտա-  
հայտված այն տեսակետին, թե «Չարենցի տաղաչափական ձևը մա-  
սամբ սալաթ-նովական է, իսկ ընդհանուր առմամբ տերյանական»  
(Ազ. Աշտուհի), Արեղյանը ապացուցում է, որ «տերյանական» կոչ-  
ված կամ Տերյանի գործածած բնորոշ շափեր անապետյան ոտանա-

վորն է, որ հնուց անտի հատուկ է եղել հայ բանաստեղծությանը և  
զարերի կյանք ունի: Տերյանն, ուրեմն, ոչ թե հիմնադիրն է մեղա-  
նարմ անապետյան ոտանավորի, այլ միայն կիրառողն ու զարգաց-  
նողը:

1. Չարենցի հայ տաղաչափությանը մատուցած պատմական  
առաջին ծառայությունը Արեղյանը համարում է նրա պոեզիայում  
անապետյան ոտանավորի աննախադեպ զարգացումը: Անապետ-  
յան շափը, որ չի թուլատրում ուրիշական շեշտի տեղափոխություն  
կամ պակաս, Տերյանի, ինչպես նաև նախորդ բանաստեղծների մաս,  
հաճախ չի պահպանում ուրիշական շեշտերի կայուն դրությունը, ո-  
րով թուլանում է բանաստեղծության կրած տակնանությունը: Մինչ-  
դեռ Չարենցի բանաստեղծություններում ուրիշական շեշտերի տե-  
ղափոխություն չկա և նրա «անապետյան ոտանավորը ավելի ուրիշ-  
ակի-կրած տակն է, քան Տերյանիին»<sup>1</sup>: Այսպես, Չարենցի մոտ հայ-  
թաղաչված է նախորդ բանաստեղծներին և մասամբ Տերյանին հա-  
տուկ ուրիշական յուրաքանչյուր ոտք բուռական ոտքով ավարտելը,  
որ խիստ միակերպ ու ձանձրալի է զարմնում ոտանավորը: Իսկ  
ուրիշական և բուռական ոտքերի հատումը<sup>2</sup> միացած ուրիշական շեշ-  
տերի կանոնավոր դրություն հետ, կարևոր դրավական է տաղաչա-  
փության ուրիշակի-կրած տակնանություն և ոտանավորի բազմադա-  
նություն: Այս տեսակետից Արեղյանը նշելով հանդերձ Տերյանի կա-  
տարած կարևոր դերը անապետյան ոտանավորը «բազմադան ու  
հրատարիչ» զարմնելու ուղղությամբ, շեշտում է հատկապես «Չա-  
րենցի անապետյան ոտանավորն ավելի կրած տակնան... միաժա-  
մանակ և ավելի բազմադան» լինելու իբրությունը<sup>3</sup>: Չարենցի ա-  
ռավելությունը Տերյանի նկատմամբ Արեղյանը համարում է նաև  
ավելիակակ (հիպերկատակակի) տողերի, ինչպես նաև յամբա-  
կան ոտքի խառնուրդով անապետյան ոտանավորի գործածու-  
թյունները, որոնք երկուսն էլ, թեպետ նախորդ բանաստեղծներից  
օգտագործված, Տերյանի մոտ, սակայն, բացակայում են:

2. Չարենցի հայ տաղաչափությանը մատուցած պատմական  
մյուս ծառայությունը Արեղյանը տեսնում է բարձրացող-ընկնող  
ընավորությամբ բուլաղատ (ամֆիբարբոս) ուրիշական բանաստեղծու-  
թյունների հորինելու մեջ, որը մի նշանավոր նորություն էր հայոց  
լեզվում և տակավին զարգացման ու մշակման ենթակա:

1 Մեկ տարի առաջ՝ 1915-ին «Չիֆենի»-ում լույս էր տեսել Ստ. Մայիսա-  
յանցի «Հայերեն տաղաչափությունը շեշտային ևս վերնագրով հոգվածը (տե՛ս  
«Չիֆենի», գրական ժողովածու, Ռեֆլիս, 1915, էջ 357-365), որ հնդկանց հա-  
վանաբար նկատի անելով Մ. Արեղյանի նախորդ հետազոտությունների արդյունք-  
ները, լրացուցիչ փաստերով ու փաստարկներով հիմնավորում է հայերենի տաղա-  
չափության շեշտական բնույթը: Հիմնական եզրակացությունն այն էր, որ «մեր  
տաղաչափությունը ունի հարավոր պայմանները շեշտային տաղաչափություն լի-  
նելու և իբրեք շեշտային է՝ նշառային տաղաչափության մի քանի շափերը նա միշտ  
զրոյ է անում, իսկ մյուսները միանգամայն ընդունակ է գործածելու» (էջ 365):  
Մայիսայանցի հոգվածը զախի էր ապացուցելու, որ Արեղյանի արտահայտած  
անսակեար արդեն գիտության մեջ ընդգնելություն էր գտնում:

2 Մ. Արեղյան, Տաղաչափության զարգացումը Չարենցի և ուրիշների բուռա-  
տեղությունների մեջ, «Երբ», գրական, գիտական և բարձրակարգ հանդես, գիրք  
հրատարակ, Երևան, 1923, էջ 263-290:

1 «Երբ», գիրք III, 1923, էջ 263:

2 Անդ, էջ 266:

3. Չարենցը և սովետահայ այլ բանաստեղծներ (Արուժ, Վլադու-նի) բարձրացող-ընկեցող սիմվոլ սասանավորեց անցում են կատարում դեպի բնկեցող սիմվոլ կամ բորիչական ոտանավորը և այն էլ բավարարում են ոչ միայն պարզ ոտերևով, այլ ձգտում են բորիչական բազմ ոտերի կամ պետական ոտանավորների կիրառության, որը դարձյալ Արեղյանը կարեոր ներություն է համարում:

4. Հաջորդ նորամտությունը, որ պատկանում է Չարենցի և մասամբ Արուժին, չամբական պարզ ոտերևով բանաստեղծություններ հորինելն է: Ցամբական պարզ ոտերևով ոտանավորի սովորական միասպաղաղությունը Չարենցն հաղթահարում է տղերք անշեշտ վանկերով ավարտելով և ապա՝ տղերի հաճախակի և տարբեր տեղերում կատարվող միջահատմաներով:

5. Չարենցը ֆրանսիական ալբրասկերայան շափը (12 վանկանի ոտանավոր՝ 6-րդ և 12-րդ վանկերի հաստատուն շեշտումով) կիրառելով հանդերձ, միաժամանակ այն զարգացնում և հարմարեցնում է հայերենի սիմվոլական կանոններին և զարմանում յամբական եռանգամ ոտանավոր՝ յուրաքանչյուր 6-րդ վանկից հետո կանոնավոր հասածով: Սա ևս նորություն էր հայ ստղաչափության մեջ:

6. Ռիթմական ոտերքը բառական ոտերի հատումով՝ Չարենցը զարգացնում է յամբ-անապետի կանոնավոր հաջորդությամբ բնութագրվող մեր ավանդական «Տայրենի» շափը:

7. Հայ ստղաչափության զարգացման գործում Չարենցի կատարած պատմական դերի բնութագրումը Արեղյանը բոլորում է նրա համաշեշտ ոտանավորի կիրառման, արտարուստ աշուղական «վանկական» թվացող ոտանավորը սովորական շեշտային ստղաչափության ձևերով ու կանոններով հորինելու, և վերջապես, հակառակ ավանդական ու ժամանակակից ճոխ ու զորեղ հանգրի, սուկ առձայնությի հանգիստության հանդավորում ստեղծելու իրողությունների բացահայտումով, հանգամանքներ, որոնք վերջին հաշվով ևս յուրատեսակ նորություններ էին հայ ստղաչափության մեջ:

Աղբյակն, տրեմն, հերբելով ստղաչափական տեսակետից Չարենցին անցյալի բանաստեղծներին սուկ հետևող համարելու կարծիքը, Արեղյանը հարուստ փաստերով ու հիմնավոր փաստարկներով ապացուցում է, որ Չարենցը հայ ստղաչափության մարդու խոշոր նորարար է և իր նախորդների մաս առևս ստղաչափական տարերային ձևերի զարգացումն ու օրինակաբանությունը:

Ժամանակի բանաստեղծության մեջ Չարենցի և արիշների կատարած ստղաչափական նորամտությունները հակադրելով բա-

նաստեղծների նախորդ սերունդների ստղաչափական արվեստին, Արեղյանը փաստորեն հավաստում էր հայ ստղաչափության վերընթաց զարգացումը և սովետահայ բանաստեղծության ներս նրա ստեղծանական կատարելագործումը: Մյուս կողմից՝ նա քննադատեց նում էր ժամանակի բանաստեղծության ստղաչափական նվաճումները, մասնանշելով դրանց թերություններն ու զարգացման հեռանկարները: Արեղյանը այս և նախորդ աշխատությունները, ստղաչափությունը պատմական դիտությունից փաստորեն վերածում էր գործնական կենդանի արվեստի, որով օժտված էր հատկապես նրա «Հայոց լեզվի ստղաչափություն»-ը:

Սրանք էին հայ ստղաչափագիտության և մասնավորապես Մ. Արեղյանի կատարած ուսումնասիրությունների արդյունքները մինչև նրա «Հայոց լեզվի ստղաչափություն» մենագրության հանդես դալը:

«Հայոց լեզվի ստղաչափություն»-ը՝ զալիս էր ամփոփելու գիտնականի մինչ այդ կատարած ստղաչափական մանր հետազոտությունների արդյունքները և մի նոր աստիճանի բարձրացնելու հայ ստղաչափագիտությունը:

### 3. ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՌԵՂՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԻՆԵՐԸ

Ինչպես այլուրեք, այստեղ ևս Արեղյանը իր բնության նախահարցն է զարմանում հետազոտվող առարկայի բնույթի ու խնդիրների պարզաբանումը: Հարցադրումն առաջնակարգ գիտական նշանակություն ունի ոչ միայն պատմական տեսակետից՝ հայագիտության

1 Արեղյանի եղված հետազոտությունը ամբողջությամբ թեկուս պատրաստ է նկղ ուղադրության 1912-ին, և նրա հետագայում սպաղրած ստղաչափական ուսումնասիրություններից նրկուսը («Հայերեն ստղաչափության մասին», 1916 թ.) և շէին դուստանական ժողովրդական երգիչուս հայրենների ստղաչափության հասվածը, 1931 թ.) յրվ կամ մասամբ սերում էին այդ սովկովին ձևադրը աշխատությունից, այնուամենայնիվ վերջինիս սպաղրված օրինակում (1933 թ.), Արեղյանը հաշվի առելով արգեն հրատարակումներ ուսումնասիրությունների արդյունքները, գրայի հավելումներ ու համալրումներ է կատարում: «Հայերեն ոտանավորների տեսակները» հասվածում ավելացրել է ՄՄ զուկը՝ «Աղբյակն և ուրբյանի բանաստեղծությունների մեջ ուսումնասիրության գրույթներից, Արեղյանն ավելացրել է հետևյալ պարզաբանները՝ 41, 50, 59, 60, 61, 69, 72, 73—76, 85-ի մեծ մասը, 88, 91, 92, Բացի այս կանան լրացումներից, հեղինակը բնագրկած օրինակները համալրել է դասական ու ժամանակակից բանաստեղծների թրթրվածներով, թե՛ օրինակներն և թե՛ շարադրանքի մեջ կատարվող որոշ կրճատումներ, և այլու:



մէջ տաղաչափության խնդիրները և ոտանավորի հասկանչները համակողմանի մեկնարարներով և ոտանավորի իր առաջնությունը, այլև մեթոդական և մասամբ մեթոդարանական առումներով: Առարկայի բնույթի ու խնդիրների լրմրումում էլ ր առաջին հերթին պայմանավորված տաղաչափական հետազոտության Արեղյանի առաջադրած մեթոդն ու եզանակները:

Արդ ի՞նչ էր տաղաչափությունն ըստ Արեղյանի, և որո՞նք էին նրա էական խնդիրները:

Տաղաչափության առարկան Արեղյանը համարում էր ոտանավորը, այսինքն «իմաստի փոքր միավորներից՝ ոտերից կազմված որիմաստական այն մեծ ամբողջությունը, որ կոչվում է շափածո տող կամ կարդ»:

Իսկ ոտանավորի կամ տողի կազմության ուսմունքը նա անվանում էր տաղաչափություն: Հետևաբար, ոտանավորն առարկան է, իսկ տաղաչափությունը այդ առարկայի՝ ոտանավորների սկզբունքներն ուսումնասիրող գիտությունը<sup>1</sup>:

Ոտանավորի էական հիմքը Արեղյանը համարում էր սիրտը, որ բնորոշ է արվեստի մի շարք տեսակների (երգ, երաժշտություն, պար), այդ թվում նաև բանաստեղծությունը: Սակայն սիրտը չուրաճատուկ է ոչ միայն արվեստի հիշյալ տեսակներին, այլ կյանքի այլևայլ երևույթներին, ուր կա շարժում և ընթացք: Ոտարի ոտանավորի, ինչպես նաև այլ արվեստների սիրտը ինչ-որ հատկությամբ պետք է տարբերվի սովորական սիրտերից. և դա Արեղյանն իրավամբ համարում է երաժշտականությունը:

Տաղաչափության սկզբունքների ուսումնասիրության առաջին խնդիրը Արեղյանը տեսնում է լեզվում երաժշտական սիրտի առաջ գալու երևույթի պարզարանման մեջ: Այս հիմունքով էլ նա տվյալ լեզվի տաղաչափության խնդիրը համարում էր տվյալ լեզվի երաժշտական սիրտի ուսումնասիրությունը:

Երաժշտական սիրտը նա դիտում էր օրգան լեզվական իրակություն, իբրև լեզվին առանձնահատուկ երևույթ, որն հակադրվում էր սովորական արձակ խոսքի անկանոն սիրտին: Արեղյանը տաղաչափությունը համարում էր լեզվի երաժշտականությունը, որը կենում է լեզվի բնականոր սիրտական հատկության համակողմանի ու մանրագիտի հետազոտությունից և ինքնին զանազան լեզվական

ուսումնասիրություն: Նա մերժում էր տաղաչափությունը ոտանավորներ հորինելու արվեստ համարելու ավանդական տեսակետը և գրեցնում, որ տաղաչափությունը լեզվական դիտություն է և կազմում է լեզվի բնականոր հնչյունարանության հետազոտության մի մասը:

1. Արեղյանի կարծիքով տաղաչափությունը լեզվական ուսումնասիրություն է, իսկ լեզուն լսի ձև է, այլև բովանդակություն, հետևաբար տաղաչափությունը գործ ունի ոչ թե անիմաստ հնչյունների, վանկերի, շեշտերի ու ամանակի, այլ բառերի ու խոսքերի հետ, որոնց իմաստով ու բովանդակությամբ էր պայմանավորված նրանց շեշտն ու առոգանումը: «Ձևն ու բովանդակությունը տաղաչափական տեսակետով՝ երկուսն էս կարևոր են և իրարուց անբաժան: Եվ այդ անբաժանության մեջ Արեղյանը առաջնությունը տալիս էր բովանդակությանը, հատկապես կրթականության էր տալիսն ուսումնավորի սիրտին: Երկուսն էս բովանդակության միջև:

2. Բայց միաժամանակ Արեղյանը այլ բնորոշում էր ցուցաբերում տաղաչափական ձևի ու բովանդակության նկատմամբ: «Ձևն ու բովանդակությունը,— դրում է նա,— տաղաչափության համար իբրև իրակություններ, ֆակտոր, այլ են, բան դրականացիտություն համար: Տաղաչափության մեջ ձևն ու բովանդակությունն ասելով լրացված է հասկանալ, պահանջ իմաստով, ամբողջական դրական երկերի, դիցուք, մի թերթվածի, մի երգի, մի դրամայի բովանդակությունն ու ձևը (լեզու, ոճ, շարադրություն-կամպոզիցիա, մտերի բնույթում և տրամաբանական հաջորդություն, շափածոյություն և այլն, բոլորն ըստ բովանդակության պահանջի): Քանի որ տաղաչափությունը լեզվական ուսումնասիրություն է, դա նկատի ունի՝ ձևի նկատմամբ՝ ուսանելու սիրտը, իսկ բովանդակությունն նկատմամբ՝ բառերի բովանդակությունը նրանց նյութական ու ձևական նշանակություններով, բառախմբերի բովանդակությունն իբրև բարդ դադափարների արտահայտություն, խոսքի բովանդակությունն իբրև մի որոշ ամառնության արտահայտություն, ամենաշատը՝ մի կամ երկու մասցվածի (ֆրազի) բովանդակություն, որ կա բնույթային ասած մեծ սիրտական միություններով— տողերի ու տերերի մեջ՝ (բնագիտությունն իմն են— Ս. 2.): Եվ ձևի ու բովանդակության այս չուրաճատուկությունը Արեղյանը պատահաբանում էր տաղաչափության, իբրև լեզվական հետազոտության բնույթով և իրեն՝ շափի լույթամբ:

3. Ձևի ու բովանդակության տաղաչափական բնորոշումները

<sup>1</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 7, 148:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 16—17:





մության բազմակողմանի ուսումնասիրության համար մի նախապայման է: Պա գրականագիտության համար մի օժանդակ գիտություն է, որ օգնում է գրականագիտին իր աշխատանքը կատարելուն: Տաղաչափությունը շափազանքի և նկարագրության մասերն ու կենտրոն վերլուծությանը, պարզ պատկերացում ու ծանոթություն է տալիս գրականագիտին ուսումնասիրելի կազմության մասին: Առանց այդ ծանոթության գրականագետը չի կարող իր գործը հաջողությամբ կատարել, ինչպես որ կարելի չէ որևէ նրաժշտական երկ և որևէ, զինչոք, գերմանական հրաժշտության պատմությունն ուսումնասիրել, առանց կանխապես ուսումնասիրած լինելու երաժշտության տարրական տեսությունը՝ տակա, շափ, ռիթմ և այլն»<sup>1</sup>:

Չափերի դարգացման պատմությունը, ինչպես տեսչի ենք արդեն, Արեղյանը համարում է գրականության պատմության հետադասման առարկա: Բայց բանի որ այդ վարդացումը ընդ մասով կապված է լեզվի զարգացման հետ, մյուս մասով բանաստեղծության պատմության հետ, ապա Արեղյանի կարծիքով, այն, ինչ լեզվի վարդացմանն է առնչվում, պետք է տաղաչափությունը հետազոտի, իսկ ինչ բանաստեղծությանը՝ գրականության պատմությունը: Այսպես հիմնավորելով տաղաչափության լեզվական գիտություն լինելը, միաժամանակ Արեղյանը հավաստում է տաղաչափության օտար կապն ու առնչությունը գրականության, գրականագիտության ու գրականության պատմության հետ, այն բնորոշելով իբրև գրականագիտության օժանդակող լեզվական մի ուսմունք:

Հայտնի լեզվի տաղաչափության ուսումնասիրությունը Արեղյանը առաջ է տանում երեք հիմնական ուղղություններով.

1. տաղաչափության հիմունքների ու տարրերի տեսական մանրամասն հետազոտություններ. 2. հայ դարավոր բանաստեղծությունների կիրառած բոլոր շափերի ու հանգիների հանդամանայից նկարագրություն և վերլուծություններ. 3. հայ տաղաչափության իրականությունների գիտական նուրմավորումներ: Այլ կերպ ասած՝ Արեղյանը հայտնի լեզվի տաղաչափությունը ուսումնասիրում է տեսական և գործնական մտտեցումներով:

#### 4. ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ՀԻՄՈՒՆԿՆԵՐԻ ՄՇԵԿՈՒՄԸ

Տաղաչափության հիմունքների գիտական խոր ու բազմակողմանի մշակումը հայ բանասիրության պատմության մեջ միմակուցում

<sup>1</sup> ԳԱԹ, Մ. Արեղյանի Գործ, № 76, էջ 23:

է Մանուկ Արեղյանին: Իս հայ տաղաչափության տեսական ուսումնասիրությունը կատարում է ելնելով կելրոպական, մասնավորապես գերմանական հետազոտողների բերած տաղաչափական նոր բնութենումներից ու հասկացություններից, նրանց նոր մշակած համակարգությունների հաշվառումից: Եվ ժամանակի միջոցովային գիտության վերջին նվաճումների հիման վրա նա ստեղծում է հայ տաղաչափության իր կատարելի սխեմներ:

Որո՞նք էին Արեղյանի տաղաչափական համակարգի տեսական հիմունքները:

Ինչպես նշել ենք արդեն, ուսումնավորի հիմքը համարելով տրվյալ լեզվի նրաժշտական ռիթմը, ամենապարզ շափական միավորը՝ տակաը կամ ոտքը, Արեղյանը տակաի կամ ոտքի էական պայմանները կանոնում է ամենակի և շեշտի մեջ:

Տակառամասերի կամ ոտքի վանկերի արտաբերման հավասար տեղությունն և դրանց մեջ շեշտված ու անշեշտ վանկերի կանոնավոր հաջորդականություն— ահա այն երկու էական հանգամանքները, որոնց շնորհիվ առաջ է դալիս կանոնավոր երաժշտական ռիթմը: Իսկ առավել բարդ տաղաչափական միավորների մեջ, բացի շեշտից ու հավասար ամենակից, երաժշտական կանոնավոր ռիթմ առաջ բերելու համար անհրաժեշտ է նաև նույնանման ռիթմական ոտքերի կամ շեշտերի միակերպ հավասար հետավորությամբ կանոնավոր հաջորդությունը միմյանց նկատմամբ:

Վնշանակի,— դրում է Արեղյանը,— տաղաչափությունը լեզվի երաժշտական ռիթմի հետադասումից ժամանակի էական ունենալով լեզվի կանոնավոր և անկանոն ռիթմերի հակադրությունը... Իսկական երկհատ ունի մի կողմից՝ խավածքի շեշտերի անկանոն անհավասար հետավորությամբ հաջորդությունն արձակ խոսքի մեջ, մյուս կողմից՝ ռիթմական շեշտերի միակերպ կանոնավոր հավասար հետավորությամբ հաջորդությունը ուսումնավորի մեջ: Ուրիշ խոսքով, տաղաչափությունը ուսումնավորի համար նկատի ունի «շափեր»<sup>1</sup>:

Ուսումնավորի «շափ» հասկացությունը Արեղյանը համարում է «որոշ թվով ռիթմական ոտքերի կամ անգամանքների կանոնավոր հաջորդության կարգը՝ մի ավելի մեծ ռիթմական միություն— ուսումնավորի (տղի) մեջ»:

Ոտքի տաղաչափական հատկանշները հանգամանորեն պար-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայտնի լեզվի տաղաչափություն, էջ 11—12:

զարանելուց հետո, Արեղյանն անցնում է ուրբանական ոտք առաջ բերող տաղաշալվական հիմների՝ շեշտի և ամանակի քննությունը:

Լեզվի իմաստարանություն մեջ պատշաճ արժեք հասկացնելով շեշտերի ունեցած նշանակությունը, Արեղյանը շեշտի տարբեր տեսակներից տաղաշալվական նկատմամբ արժեքավոր է համարում երկը՝ բառի շեշտը, խոսքի կամ նախադասության շեշտը և բերականական շեշտը: Այս երեք կարգի շեշտերը, որոնք լսելի են լինում միևնույն նախադասության մեջ, հաճախ իրար հանդիպելով, շեշտերի ուրբանական գրասովորության անհրաժեշտությամբ դրանցից մեկնում են բնականում և և նույնիսկ՝ վերանում: Խոսքի շեշտի մաս կարող են թույլանալ ու կորչել բառական ու բերականական շեշտերը, իսկ բերականական շեշտի մաս՝ բառի շեշտը:

Արեղյանը շեշտերի այս երեք տեսակին տաղաշալվական կարևոր արժեք վերագրելով՝ հանդերձ, լավագույնս ուսանավոր համարում է այն, սրի մեջ սխիմական շեշտը՝ համընկնում է ավելա խոսքի որոշմազգալության համեմատ բնական ունեցող շեշտի հետ: Այսինքն՝ ընդգծվում է սխիմի առաջացման մեջ բովանդակության խաղաղացած առաջնային ու կարևոր նշանակությունը, որ շարունակարար շեշտվում է այլուրեք ևս:

Ամանակը ևս շեշտի նման քննելով լեզվաբանական տեսակետից, Արեղյանը ցույց է տալիս, որ վանկերի արտասանության համար պահանջվող ժամանակի տեղությունը, տարբեր լեզուներում՝ տարբեր է լինում և կախված է ձայնավորների սզությունից և երկարությունից:

Արեղյանի կողմից հետազոտվում է նորմավորվում են ոտա- նավորների սխալման շարժն ու բարեհնչյունությունը պահպանող լեզվական իրակությունները, մասնավորապես հնչյունական սղում- ներն ու երկարումները, ոտանավորի սխալման միասնության համար կարևոր արժեք ներկայացնող իրողությունները (տաղավոր- չի սխալման ձևափոխություններ, տաղանցի դեպքերն ու հնարա- վորությունները, հաստածի տեսակներն ու սխալման նշանակու- թյունը), պարզոտնյա յամբական սխալման և խիստ բազմազան ո- տանավորներ հորինելու կարգն ու հնարավորությունները, բար- զոտնյա յամբական ոտանավորներում բառական և սխալման ոտքերի շաղապատման անհրաժեշտությունը, յամբ-անասպետյան բարդոտնյա ոտանավորներում անդամների գլխավոր սխալման շեշտերի կանոնավոր դրույթն ու անդամների ամանակի ճշու- թյամբ պահպանելու կարգը, ազատ ոտանավորների՝ միանման պարզ ոտքերից կամ միանման անդամներից կազմված լինելու անհրաժեշտությունը, արևելահայ դրական լեզվում արևելահայ բարբառների բառական վերջնիկը վանկի նոր շեշտադրության քննահանրանալու դեպքում՝ քնկնող և բարձրացող-քնկնող սխալման ոտանավորներ հորինելու հնարավորությունը, և վերջապես՝ հայե- րենում հանդ կազմող բառերի և հնչյունների տեսակներն ու կիրա- ությունը:

Մրանք, ինչպես նաև հայերեն ոտանավորների մեծ մասին Աբրեղյանի պարտադրած սխալման ոտքերը բառական ոտքերով և վերջնիկներ՝ սխալման ոտքերով են առնելու, նմանապես անշեշտ վանկերը սխալման շեշտելի վանկերի փոխարեն դնելու քննահա- նուր պահանջը, որ կարծիք թելի նման անցնում է աշխատության միջոց, գալիս էին ծառայելու մեկ գլխավոր նպատակի՝ հայերեն ոտանավորները սխալման անհրաժեշտական տեսակներից կատարյալ դարձնելու:

Աբրեղյանի առաջ քաշած տաղաչափական նորմավորման պա- հանքերը, սակայն, հեռու էին բարացած կանոնավորությունից, որ, սովորաբար, անխուսափելի է լինում նման պահանջների ժա- մանակ: Նա հանդես է գալիս ոչ իբրև տաղաչափական օրել շեղում չհանդուրժող կանոնի մի բանասեր, այլ քննահատակը, որպես նորարար ու ստեղծագործող մի գիտնական, որ զեղ է միմիայն այն- պիսի շեղումներին, որոնք խաթարում են ոտանավորի սխալման և ո- տանավորը դրկում իրեն բնորոշ տաղաչափական կիրառանքից: Տաղաչափական կանոններից կատարյալ բոլոր այն շեղումները,

արանք համահնչյուն լինելով հայոց լեզվի իրակություններին, գալիս էին մի նոր կողմից զարգացնելու և զարացնելու ոտանավորի ուղիքին ու սիմվոլական բազմազանությունը, Աբեղյանը ոչ միայն հնարավոր է համարում, այլև անհրաժեշտ նա միշտ և ամենուրեք խրախուսում և մանրակրկիտ վերլուծություններով բացահայտում է նման շեղումների տաղաչափական արժեքն ու անհրաժեշտությունը և դրանց ու ոտանավորի սիմվոլի վնասող սխալ ու անհրաժեշտ շեղումների հաշվառման հիման վրա էլ սահմանում է հայ տաղաչափության կանոններն ու օրինաչափությունները:

Նպատակ ու ելակետ դարձնելով հայերեն ոտանավորների սիմվոլիկ-երաժշտական կատարելությունը, նա գիտական վերլուծություններով բանաստեղծների առաջ բացում էր հայերենի տաղաչափության կատարելությունը նպաստող լեզվի ընձեռած բոլոր միջոցներն ու ներքին հնարավորությունները և պարտավորեցնում էր բանաստեղծներին՝ վարդիտորեն օգտագործել դրանք: Նա բանիցստաղաչափական տարբեր խնդիրներ շոշափող իր աշխատության մեջ, տարբեր աղիքներով քննադատում է հայ բանաստեղծներին՝ հայոց լեզվի ընձեռած հնարավորություններից քիչ օգտվելու և բանաստեղծությունների սիմվոլիկ-երաժշտական կողմը անկատար թողնելու համար: «Երանք (բանաստեղծները—Ս. Հ.),— գրում է նա,— ընդհանրապես քիչ են մտածում մեր ոտանավորի սիմվոլիկ երաժշտականության և առհասարակ մեր ոտանավորը զարգացնելու մասին: Երանք մեծ մասամբ փակվում են մնացել պատմական զվերի շրջանակի մեջ և ինչ որ Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու ժամանակից չափեր կան հայտնի, այն են միայն բանեցնում, այն էլ՝ ոչ բոլորը և ոչ նույն կատարելությամբ...»<sup>1</sup> «Առհասարակ նրանք (բանաստեղծները—Ս. Հ.) չգիտեն օգտվել լեզվի ընձեռած բոլոր միջոցներից՝ ոտանավորը միաժամանակ է՝ սիմվոլիկ և՛ բազմազան դարձնելու համար»<sup>2</sup>:

Հայ տաղաչափության հետազոտության Աբեղյանի մեթոդաբանական հիմնական ելակետը, ինչպես այլուրեք, ուսումնասիրվող փաստերի նկատմամբ դիալեկտիկական մոտեցումն է: Իսկ զա ա մենից առաջ պայմանավորված էր ուսումնասիրվող առարկան՝ հայերենի տաղաչափության փաստացի ամբողջական նյութը «իր բոլոր ձևերով, իր բոլոր փոփոխություններով ու հակասություններով՝ մանրալսելին, ճշգրիտ ու համակողմանի հետազոտության:

Աբեղյանը տաղաչափական իրակությունների բնությունը սկսում է նրանց ամենադարձապույն տարրական միավորներից՝ սոբրեց, շեշտից ու ամանակից և ավարտում ամենաբարձրագույն ու բարդ միավորով՝ սոզով կամ ոտանավորով: Նույն կերպ, պարզից զեպի բարդը, սոտրինից զեպի բարձրագույնը ընթացող միասնական գծով է ուսումնասիրում նա հայ բազմազարյան բանաստեղծության ոտանավորների տեսակները, սկսած յամբրական պարզ սոբրեցով ոտանավորներից և վերջացրած ազատ բարդոտնյա ոտանավորներով: Զարգացման այսպիսի ընթացքով էլ նա կերտում ու կառուցում է հայերենի տաղաչափական իրակությունների գիտական բարդ համակարգը, ուր մասերի բաշխումն ու հարակախությունը կատարված են մի այնպիսի օրամասնական ընդհանրությամբ ու կերտվածքով, որ անգամ ժամանակին շարժել են Աբեղյանի բնագրաստեղծից մեկի զարմանքն ու հիացմունքը՝

Տաղաչափական ընդհանուր իրակությունների և հայերեն ոտանավորների պարզ ձևերից զեպի բարդը, սոտրինից զեպի բարձրագույնը կատարվող զարգացման ընթացքի ուսումնասիրությունը Աբեղյանը կատարում է այդ զարգացումը պայմանավորող գիտելիտիկական երևույթների բացահայտմամբ՝

Նա, ոտանավորի սիմվոլական պարզացման ընթացքը բացատրում է ոտանավորի տարրերի փոխադարձ և պարբերաբար կրկնվող նակագրությունների միասնությունը: Սիմվոլական տարրական զգացողությունն առաջ գալու պատճառը Աբեղյանը տեսնում է իրար միացած շեշտված ու անշեշտ հակադիր հնչյունների կամ վանկերի կառնադիր հաջորդականության մեջ, պարզ սիմվոլական միավորների՝ սոբրեցի կամ տակտերի առաջացումը՝ այդ շեշտված ու անշեշտ հնչյունների կամ վանկերի հակադրամիասնության մեջ: Հակադրությունների միասնություններով զարգանալու այս ձևում բարդանակվում է վերքնթաց գծով, երբ պարզ շեշտված ու անշեշտ սոբրեցը կամ տակտերը իրար հարելով կազմում են սիմվոլական բարդ միավորներ՝ բարդ սոբրեց կամ անգամներ, որոնք սողնառաջ են բերում սիմվոլական ավելի բարձր զարգացողություն՝ անգամների սիմվոլիկ բարդ սոբրեց կամ անգամները, թույլ ու զորեղ շեշտերի հակադրությամբ, միանում են և կազմում ոտանավորների կամ տողեր, առաջ բերելով սիմվոլական առավել բարձր զարգացողություն՝ ոտանավորի սիմվոլ:

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 130:

<sup>2</sup> Անց, էջ 173:

<sup>3</sup> Տե՛ս ԳԱԲ, Մ. Աբեղյանի ֆոնդ, Մ 76, Հ. Հարությունյանի գրաստուակներ



Արեղյանը դիպլոմատիկական օրինաչափություն է բացահայտում նաև հայերեն ստանալորենների դարգացման պատմության մեջ: Արեւելահայ բարբառներում, բառերի վերջին վանկերից շեշտի՝ վերջընթեր վանկերի վրա անցնելու առողջանական իրողության հետեւանքով՝ բնիկող ոտքերով ստանալորենների առաջացման ու ընդհանրանալու հետանկարի մեջ Արեղյանը տեսնում է դիպլոմատիկայի հակաբերությունների փոխարժեքն օրենքի մի դրսեւորում:

«Այն ժամանակ, ահա, այս լեզվական զարգացումը,— գրում է նա,— անհրաժեշտորեն առաջ պիտի բերի արդեն եզրձ շափերի հակադրությունը, ինչպես այդ տեսնում ենք արդեն արեւելյան բարբառով հորինված ժողովրդական երգերի մեջ»<sup>1</sup>:

Այս ընդհանուր օրինաչափություններից բացի, ստանալորենների զարգացման ու կատարելագործման խնդրում Արեղյանը կարեւոր նշանակություն է տալիս ստանալորենի նկիւն բովանդակությանը դիպլոմատիկական միասնությանը:

Տակալին տաղաչափությունը երաժշտությունից տարբերակելիս, նշել ենք արդեն, Արեղյանը առաջինի կազմարանական ստանձնահատկությունը համարում է իմաստ ու բովանդակություն ունեցող բառերով և նախադասություններով ձևավորվելու հանդամանքը, երաժշտության՝ սոսկ հնչյուններով կազմված լինելու համեմատությամբ:

Եվ կէն երաժշտության մեջ պարզ տակերի միացումը կատարվում է միայն զորեղ շեշտով, ապա ստանալորենի դիմադական բարդ ոտքերը, բացի շեշտից, շատ կապակցվում են նաև բովանդակությամբ, մտևով, Բեաակառնունք<sup>2</sup>: Տաղաչափության այս սկզբունքային մասնահատկությունն էլ Արեղյանը դարձնում է մեթոդաբանական երկուս հայերենի տաղաչափական իրաւությունների քննելիս, ամենուրեք առաջնությունը տալով միտք արտահայտող բառերի ու նախադասությունների բովանդակությանը:

Տաղաչափական տվյալ ձևը նա առիպի է համարում տվյալ ստանալորենի բովանդակությունից: Ստանալորենի բովանդակությունը համարելով նրա տաղաչափական ձևը պայմանավորող, կարգավորող առաջնային գործուն, ըստ այդմ էլ Արեղյանը նորմավորում է կանոնավորում է հայերենի տաղաչափական իրաւությունները:

Այսպէս, վանկերի տարբեր քանակ ունեցող ոտքերով կազմված

ազատ տակաավոր ստանալորենների դիմադական հավասարակշռության պահպանման վճռական դերը Արեղյանը վերապահում է ստանալորենի բովանդակությանը<sup>3</sup>:

Իրիմաական ոտքերի, շեշտերի և այլնի տվյալ ստանալորենի ընդողջ դասավորության փոփոխությունները և առհասարակ տաղաչափական կանոններից ու նորմերից կատարվող շեղումները Արեղյանը արգարացնում է անզամ անհրաժեշտ է համարում այն դեպքերում միայն, երբ դրանք թելադրված են եղել ստանալորենի բովանդակությանը: Այդպէս է նա զնահատում յամբ-անապետայան երկանդամ 10-վանկանի ստանալորենի կանոններից կատարված շեղումները<sup>4</sup>. Նույն կերպ է վարվում բարդոտյա խառն ստանալորենների շափի փոփոխությունների նկատմամբ:

«Չափի փոփոխությունը,— գրում է Արեղյանը,— պետ է լինի բանաստեղծության բովանդակության ժողովրդության համեմատաբար: Ապա, «Ամեն բանաստեղծության համար կարեւոր նշանակություն ունի բովանդակության ընդհանուր բնագործության համապատասխան ստանալորենի կիրառությունը»<sup>5</sup>:

Մեթոդաբանական այդ ճիշտ երկակետով էլ Արեղյանը շատ անզամ բովանդակության թելադրանքով վերատուգատում է մեր բանաստեղծների այնպիսի ստեղծագործությունները, որոնք սողորբի ու անդամների դասավորությամբ համապատասխան չեն իրենց բովանդակությանը<sup>6</sup>:

Նախորդ ենթադրություններում տեսանք, որ Արեղյանը հայոց լեզվի տաղաչափությունը, մասնավորապէս հայերենի ստանալորենների տեսակները քննում է հիմնականում տիպաբանական մեթոդով: Հայերենի ստանալորենների տեսակները վերլուծելիս, սակայն, նա դիմում է հետազոտական կողմնակի այլ եղանակների: Կա: Գրանք են մասամբ պատմական մեթոդը, որ տեսել ենք արդեն և այսպէս Բանակական հարաբերակցություններով կամ վիճակագրական մեթոդը, որին նա դիմում է երկու առիթով՝ հայ բանաստեղծության մեջ որոշ տեսակի ոտքերի և շափերի օգտագործման հարաբերությունը պարզարանելու համար:

Արեղյանը վերլուծելով յամբական պարզոտյա 10-վանկանի ստանալորենը, մեր նոր բանաստեղծների (Հովհաննիսյան, Իսահակ-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 110—111:

2 Անգ, էջ 253:

3 Անգ, էջ 377, 379:

4 Հմմտ. անգ, էջ 147, 355—358, 438—439 և այլուր:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 392:

2 Անգ, էջ 115:

յան, Թումանյան) նույնչափյա բանաստեղծական տողերի, գրանջ մեջ եղած շնչալուրի բանակի և շեշտված վանկերի տեսակների թվական հաշվառումների հիման վրա՝ պարզում է սասանավորի այդ տեսակի մեջ մաքուր յամբական ունենող տողերի, ընկնող բառական ոտքերի գործածություն, սիմվական ոտքերը բառական ոտքերով հասնելու զեպրերի քանակն ու հարաբերակցությունները: Գրանով նա բացահայտում է և վերականգնում յամբական պարզունյա 10-վանկանի սասանավորի տարբերակների բոլոր ձևերը<sup>1</sup>:

Նույն մեթոդով նա բազդատում է Կոմիտասի «Անձինք նուիրալը»-ի և ութ շարականների տողերի անդամների և ոտքերի մեջ եղած վանկերի քանակը և այդ հաշվումներից պարզում, որ շարականները հորինված են ազատ բառանդամներով, մինչդեռ «Անձինք»-ը՝ ազատ բառատակտերով: Առաջինի մեջ իշխող անդամն է քառավանկը, երկրորդի մեջ՝ եռավանկ ոտքը, որոնք վերջին հաշվով կազմում են յամբական ազատ բառանդամ և անապետայն ազատ բառատանի սասանավորները: Գրանով Արեղյանն ընդմիջտ հերքում էր Արսեն Բաղրատունու՝ այդ սասանավորները ամանակական կամ շափական համարելու տեսությունը<sup>2</sup>:

Մեթոդական ու մեթոդաբանական նման դիրքերից է մտանում ու քննում Արեղյանը հայ քաղաքաբան մշակույթի ուրույն ու բառ հարկի շուտամնասիրված բնագավառներից մեկը՝ հայերենի տաղաչափությունը, և փաստերի խոր ու համակողմանի վերլուծության հիման վրա պարզում ու վերականգնում հայ տաղաչափության բնույթն ու համակարգը, նրա օրհներն ու կարգերը և դարգացման կայուն օրինաչափությունները: Նա սանդղտ է հայ տաղաչափության գիտական համակարգն ու տեսությունը:

Ահա թե ինչու Արեղյանի «Հայոց լեզվի տաղաչափություն»-ը, տեսական ու պատմական արժեքից բացի, գալիս էր կարգավորելու և նորմավորելու հայոց լեզվի տաղաչափությունը և գործնականում մեծապես նպաստելու հայ բանաստեղծության ձևական զարգացմանը:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 174—191:

2 Անգ, էջ 343—351:

## Գ Լ Ո Ւ Ե Չ Ո Ր Ր Ո Ր Գ

### ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԼԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. ՄԵԶԱԲԵՂՅԱՆԱԿԱՆ ԼՅՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԲԵՐԱԿԱՆԱՎՈՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հայ բերականագիտությունը միջնադարից ժառանգելով և՛ մշակված տերմինաբանություն, և՛ բերականական աշխատություններ, նոր ժամանակներում, հատկապես XVII դարի սկզբներից, նոր թափ ու զարգացում է ստանում:

Շուրջ մեկուկես հարյուրամյակի ընթացքում, սկսած Շրտգերից մինչև Գարագաշյան, հայ բերականագիտությունն աստիճանաբար մշակվում ու հղկվում է անվանի հայագետների կողմից. գրանջ մեջ, իրեն նորարարներ, աչքի են ընկնում Շրտգերը, Մխիթար Անբաստայցին, Զամչյանը, Ավետիսյանը, Բաղրատունին ու Գարագաշյանը, որոնք գրաբարի բերականագիտությունը ազատագրելով օտար ազդեցություններից, հատկապես յատկնարանությունից, այն զարձկում են հայագիտության կարևոր և ինքնուրույն մի բնագավառ:

XIX դարի երկրորդ կեսներից սկսվում է արդեն նոր ժամանակաշրջան՝ նոր հայերենի գիտական ուսումնասիրության և լեզվաբանական ու բերականագիտական նոր ուղղությունների առաջացման գարաշրջանը, կրթի փոխվում են հայ բերականագիտության հետազոտության առարկան ու մեթոդները, իսկ հինը՝ գրաբարը սկսում է արդեն բնիվել լեզվաբանական նոր ուսումնասիրի ու բերականագիտական նոր մեթոդների տեսակետից:

Մինչև Այտրեյանի «Քննական բերականություն» երևան գալը, աշխարհաբար հայերենին նվիրվել էին շուրջ բերականություն:



Առաջինը, Յոհանիմ Շրոդերի՝ Ամստերդամում այրող պարսկահայերի արևելահայ խոսակցական լեզվին նվիրած համառոտ քերականությունն էր, որը կցված էր իբրև հավելված իր նշանավոր գրարարի քերականությանը<sup>1</sup>— «Synopsis linguae civilis Armenorum» («Նայոց քաղաքացիական լեզվի համառոտ սեռաբանություն») խորագրով:

Երկրորդը՝ Մխիթար Աբրահամյան 1727-ին Վենետիկում հրատարակած «Գուան քերականության աշխարհարատ լեզուին Հայոց» հայաստա թուրքերենով շարագրված համառոտ ձևանարին էր, նվիրված արևմտահայ աշխարհարարի հոլովմանն ու խոնարհմանը: Երրորդը՝ զարմյալ օտար լեզվով գրված, էլիաս Ռիբսի «A Grammar of the modern Armenian language, as spoken in Constantinople and Asia minor» խորագրով, 1847-ին Կ. Պոլսում հրատարակած արևմտահայ աշխարհարարի խոսքի մասերին նվիրված համառոտ քերականությունն էր:

Նոր հայերենին նվիրված օտարալեզու այս երեք քերականություններից հետո, 1864-ին, դարձյալ Կ. Պոլսում, լույս է տեսնում Ա. Փիրենճյանի «Հայերեն քերականություն աշխարհարար լեզվի նախակրթական դպրոցաց համար» ձեռնարկը: Կինելով աշխարհարարի առաջին հայերեն լեզվով քերականությունը, այն հեղինակի խոստովանությամբ իսկ, ձևած էր գրարարի քերականության վրա, հատկապես Քաղաքատունու և Գարագաշյանի գործերի Փիրենճյանի Քերականությունը, սակայն, ուշադրով էր պատմական առումով: Այն գրապայքարի թե՛ պահին գալիս էր ազատություն աշխարհարարին և նրա քերականագիտական մշակման կենսական անհրաժեշտությունը և ամբապնդելու աշխարհարարի գործնական դերերը գրապայքարում:

Քայց այդ խնդրի համակողմանի լուծումը վիճակված էր Մխիթարյան միաբան՝ հայր Արևան Ալյառնյանին: 1866-ին Վիեննայում սպազարած ժողովական քերականություն արդի հայերեն լեզվի՞ մեջ, հաշվի առնելով հայ քերականագիտության հարուստ փորձն ու ավանդները, Ալյառնյանը մշակում է արևմտահայ աշխարհարարի բնական լրակատար քերականությունը, որն իր բնույթով ու հետադրաման մեթոդով մի նոր աստիճանի էր բարձրացնում հայ քերականագիտական միաբան առհասարակ:

Ալյառնյանի քերականագիտական համակարգը հիմնական դեմքով լինելով հետևություն գրարարի նախորդ նշանավոր քերականների (Քաղաքատունի, Գարագաշյանի), լրացված ու զարգացած էր նոր մասերով ու բաժիններով: Այն, ընդհանուր քերականագիտական առումով, ամփոփում էր և կիրառում ժամանակի քերականագիտական գրեթե բոլոր հասկացությունները արևմտահայ աշխարհարարի նկատմամբ:

Այդ աշխատության «նախաշավիղ» կոչված տեսական մասում, որ մի խորահմուտ հետազոտություն է աշխարհարար հայերենի ծագում, էություն, պատմության և արդի վիճակի վերաբերյալ, գիտական մանրակրկիտ փաստարկումներով ու լայն ընդհանրացումներով հիմնավորվում է այն տեսությունը (հակառակ ժամանակին եղած կարծիքների), որ աշխարհարար լեզվական առանձին համակարգ է, գոյություն ունի գրարարից անբաժան և անկախ և այն պետք է դառնա գրականության լեզու, ենթարկվի մշակման, հղկման և ազնվացման:

Իրավացիորեն նկատված է արդեն, որ Ալյառնյանը հիշյալ հետազոտությամբ կարգավորեց արևմտահայ աշխարհարարի դեռևս հեղհեղուկ, հաճախ կամայական կանոնները, ենթարկելով դրանք քերականական հաստատուն օրենքների, գիտականորեն ցույց տվեց աշխարհարարի դերը նոր կյանքում և ուղի հարթեց աշխարհարարի հետագա զարգացման համար<sup>2</sup>:

Ալյառնյանի մեծ գործի պատմական արժեքը լավադուրյա բնութելն են իրենք՝ Վիեննայի Մխիթարյանները, գրելով, թե սՔենական քերականության՝ շնորհիվ «աշխարհարարը բարձր ի զուրի կեկի ձակատեն հաղթանակավո՞ւ»:

Պարբերով գրականության մեջ իր տիրապետությունն հաստատած ու Մխիթարյանների կողմից կրկին վերակենդանացած գրարարին հակակշիռ, նույն Մխիթարյանների ձեռքով հիմնովին, խոր ու բազմակողմանի գիտական հետազոտության էր ենթարկվում նոր հայերենը, որ թեպետ գրարարին զուգահեռ վաղուց էր գործածական դարձել, բայց իբրև գիտական առարկա (գիտցելիլին) չէր մշակվել ու հիմնավորվել: Եվ թեպետ Ալյառնյանից ստաց արևմտահայ աշխարհարարի քերականություն գրելու մի բանի փորձը

<sup>1</sup> Էդ. Ալյառն, Հայ լեզվաբանության պատմություն, Կ. Մ. Նրևան, 1958, էջ 284:

<sup>2</sup> «Յուրաքանձ» ամբիվ հարիչամույ յորիկանի հրատարակման Մխիթարյան միաբանության ի Վիեննա, 1811—1911», էջ 33:

<sup>1</sup> Աբրահամ լեզուին գանն: Hoc est: Joh. Joachimi Schröderi Thesarius linguae armenicae, antiquae et hodiernae, Cum varia Praefatio materia, cujus elenchi sequens pagina exhibet», Amsterdam, 1711.

արվել էին արդեն, բայց դրանք գիտական ու հասարակական մեծ արժեք ու արձագանք չէին ունեցել: Այսօրնայնը եկավ, ահա, իրականացնելու պատմական այդ մեծ պահանջը, գիտականորեն հաստատելու աշխարհարարի պատմական իրավունքները, հիմնադրելու և բարձր աստիճանի բարձրացնելու արևմտյան աշխարհարարի գիտական ուսմունքը:

Արևելահայ իրականության մեջ Այտընյանին հաջորդեց Ստեփանոս Պալասանյանը: Եարունակելով 50—60-ական թվականներին Ստ. Նազարյանի ու Մ. Նալբանդյանի ծավալած դրապաշարի մեծ գործը, Պալասանյանը 1870 թ. «Քնդհանուր տեսություն արեվիկյան նոր դրավոր լեզվի հայոց» աշխատությունում, գիտականորեն մշակեց արևելահայ գրական աշխարհարարի բերականական հիմունքները և ժամանակի լեզվաբանական ուսմունքներին, հատկապես Ա. Այտընյանի «Քննական բերականություն» փորձի հիման վրա, սակզօնց արևելահայ գրական աշխարհարարի բերականագիտական համակարգը: Պալասանյանի բերականագիտական սխտեմբը, անկախ նույնիսկ ժամանակին նկատված իր որոշ պահասություններին, դառնում է այնուհետև իր և հետագա բերականների կողմած ձեռնարկներին ու աշխատություններին հիմքն ու ողնաշարը:

Արևմտահայ ու արևելահայ իրականության մեջ գրեթե համաժամանակյա սեղի ունեցող գրապաշարը, աշխարհարարի բերականության տեսական ու դործնական հիմունքների մշակումն ու դործադրումը, և այդ պաշարը հիմնական հաղթանակը հօգուտ նոր լեզվի կողմնակիցների՝ հայ ժողովրդի ազգային զարթոնքի և կուլտուր-հասարակական բուռն առաջընթացի այն էական արտահայտություններից մեկն էր, որ նախանշում էր գալիք վիթխարի տեղաշարժեր ազգային-մտավոր զարգացման ճամփամիջին:

Այտընյանի և ապա Պալասանյանի բերականագիտական աշխատություններից հետո, աշխարհարարի գիտությունը իրեն լեզվաբանական դիսցիպլին, թեանկողնում է իր զարգացման նոր շրջափուլը, ձևեր է բերում գիտական արժեք ու հեղինակություն և նրա ուսումնասիրության դործը հավասար է դասվում հաղարամյա հնություն ու գեղեցկություն ունեցող գրարար հայերենի դասական հետադարձությունների կողքին: Մյուս կողմից՝ արտանական բալլերով առաջ բնթացող XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական կյանքը, օրբարտեկ զարգացող մամուլն ու գրականությունը, մանկավարժությունը, գիտությունն ու մշակույթը հրամայական պահանջներ էին ներկայացնում հայոց լեզվին, զգալի փոփոխություններ էին

մտցնում հայոց նոր գրական լեզվի կազմում: Առաջ էին գալիս հարյուրավոր նոր բառեր ու տերմիններ, բերականական նոր ձևեր ու իրակություններ, հին ու անկալուն տարրերը լեզվից աստիճանաբար դուրս էին մղվում, կայունանում ու նորոգվում էին աշխարհարարի կենսունակ տարրերն ու ինքը՝ գրական աշխարհարարն առհասարակ:

Միջազգային ասպարեզում տարբեր ժողովուրդներին լեզուների հետադրուման, ինչպես նաև ընդհանուր լեզվաբանության բնագավառներում գիտական նոր նվաճումները, նոր մեթոդներն ու ուղղությունները անհրաժեշտաբար առաջադրում էին նորովի և հիմնովին հետազոտել գրական աշխարհարարը, վերջինս նոր ողուն համապատասխան՝ ադուտագրել լեզուն հետադրուման հին կերպերի ու եղանակների կաշկանդի կապանքներին:

Պատմական այս խոշոր առաքելությունն էլ, ահա, ընթացիկ գալապզրին իրագործելու եկավ Այտընյանի ու Պալասանյանի լեզվակերտն ու մեծ հաջորդը՝ Մանուկ Աբեղյանը: Աբեղյանի լեզվաբանական գործունեությունը շարունակությունն ու ավարտը եղավ այն պաշարի, որ բորբոքվել էր նախորդ հարյուրամյակի կեսերին գրարարի և աշխարհարարի կողմնակիցների միջև: Թեպետ այդ պաշարը զգալի լինելուց արտաբնապես զաղարկ էր, բայց խույժ ձեռք շարունակում էր հարստանել մինչև ընթացիկ գալապզուկըները, հասնելով նույնիսկ մեր օրերը:

## 2. ԱՐԵՎԵԼԱԿԱՆ ԱՇԽԱՐԽԱՐԱՐԻ ՓԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. ՏԵՄԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Աբեղյանը իր լեզվաբանական տեսության սկզբունքները շարադրել է 1931-ին հրատարակած «Հայոց լեզվի տեսության» ներածության մեջ, զիրի, որ տակալին պատրաստ է եղել տասական թվականներին և վերջնական վերամշակման է ենթարկվել հեղինակի կողմից 1922/23 թվականներին:

Այստեղ, Աբեղյանը, լեզվաբանական իր լոբոնուններով, հանդես է գալիս իրեն երիտերականների հետևորդ և այդ պարագի հիմնադիր ներկայացուցիչը՝ հայ լեզվաբանության պատմության մեջ:

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, Առաջաբան, անս ետև ետևի 11 հրատարակությունը, Երևան, «Մարտ» հրատ., 1965:



Տեսական այն հիմնական սկզբունքը, որով Արեղյանը դավանում էր երկրորդականների գործընթիվ լեզվի հոգեբանական բնորոշումն էր: Անցյալ դարակեսների Հայման Շտալնբլադի հիմնադրած լեզվի արամարանական բնորոշմանը հակադրվող հոգեբանական ուղղությունը՝ դարավերջերին որդեգրվում է յուրովսանն գարգայվում է երկրորդականների, հատկապես նրանց խոշորագույն տեսարան Հերման Պատլի կողմից: Երկրորդականների մի ուրիշ տեսարան՝ է. Զիվերսը, հելլենիստիկական ուսումնասիրությանը, մյուս կողմից, գալիս էր հիմնավորելու լեզվի ֆիզիկական-ֆիզիոլոգիական հատկանիշները, որոնք Հ. Պատլի լեզվի հոգեբանական կողմի ուսումնասիրության հետ միասին, կազմելու էին երկրորդականների ուսմունքի էությունը՝ մարդկային լեզուն իբրև հոգեֆիզիկական հիմունքներ ունեցող երևույթի բնորոշումը: Եվ լեզվաբանության պատմության մեջ, իրավամբ, երկրորդականների ուղղությունը այդպես էլ հորդորվում է՝ պիտիոֆիզիոլոգիայով:

Արեղյանն, ահա, որդեգրելով այդ ուղղությունը, վերջինս հիմնադրերների նման, խոսքը կամ խոսվածքի գործունեությունը համարում է սհիմնված... մտապատկերների կամ պատկերացումների զուգորդության վրա: Ինչպե՞ս են գոյանում պատկերացումներն ու նրանց զուգորդությունները. հետևելով ձանաչողության մաստերիալիստական-հոգեբանական սկզբունքներին, Արեղյանը զգայությունները համարում է արտաքին աշխարհի առարկաների մարդկային զգայարանների վրա թողած ապավորությունները, որոնք նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին: Այդ զգայությունների միջոցով մարդը ձանաչում է արտաքին առարկաներն ու նրանց հատկանիշները: Ձանաչման այդ գործողությունը կոչվում է բնորոշում: Նույն երևույթն է Արեղյանը տեսնում նաև խոսելու գործողության մեջ. խոսողի խոսքի օրգանների շարժումները առաջացնում են ձայնական տատանումներ, որոնք լսողությանը հարուցում են արդիանքը և նյարդերի միջոցով հաղորդում ուղեղին. առաջ են գալիս խոսողի արտասանած հնչյունների մասին լսվելիք զգայությունները, որոնց հաջորդում է լսած հնչյունների բնորոշումը: Նման ձևով՝ խոսքի գործարանների շարժման հետևանքով ծագած զգայություններից է

Արեղյանն առաջացած համարում խոսքի գործարանների որոշ մրկանային շարժումների մասին բնորոշումները:

Ահա, այս զգայությունների կամ բնորոշումների մարդկային մտքի մեջ հիշողությամբ պահվելն ու վերարտադրվելը Արեղյանը համարում է մտապատկեր կամ պատկերացում:

Նա որոշակիորեն տարբերակում է մտապատկերը՝ առարկայից, բնորոշումը՝ պատկերացումից և բառը՝ առարկայից, նրա բնորոշումից ու պատկերացումից: Ճեռարկային մտապատկերը (զգայաբարբ),— գրում է նա,— լպիտի շփոթել առարկայի իրեն հետ. առարկան մեկնից զուրա է, իսկ մտապատկերը կամ պատկերացումը գիտակցում ենք միայն մեր մեջ՝ հիշելով մեր առաջուց գիտած առարկան: Նույնպես լպիտի իրար հետ շփոթել առարկայի բնորոշումն ու պատկերացումը. բնորոշումը սեղի է ունենում մեր մեջ անմիջապես, իր գիտում ենք որևէ բան, նույնչու պատկերացումը ծնվում է մեր մեջ այն ժամանակ, իր առարկան այլևս մեր աշխի առջև չէ, այլ առաջ, նույնիսկ տարիներ առաջ ենք տեսել, լսել, շոշափել և այլն: ... Ապա դարձյալ առարկան և առարկայի բնորոշումն ու պատկերացումը լպիտի շփոթել բառերի, այսինքն առարկայի նման հետա՞:

Մատերիալիստական այսպիսի հստակ տեսագծով մոտենալով խոսքի գործունեության և առարկաների, նրանցից բխող զգայությունների և վերջիններիս վրա խաբարվող բնորոշման փոխհարաբերության հոգեբանական իրակությունը, Արեղյանն անցնում է խոսքի գործունեության սոսկ հոգեբանական հիմունքների քննությանը:

Գիտնականը, պատկերացումների հոգեբանական մեխանիզմի մեջ, հատկապես մեծ արժեք է վերապահում պատկերացումների զուգորդությանը. վերջինս համարում է լեզվական պատկերացումների և նրանց զուգորդության հոգեբանական հիմունքը: Լեզվական տեսանկյանից Արեղյանը կարևորություն է վերագրում հելլենիստիկական խոսքի գործարանների մկանային շարժման պատկերացումներին ու նրանց զուգորդությանը: Լկզու սովորելիս, իրար հաջորդող հնչյունների զուգորդված պատկերացումը, առաջ է բերում բառերի պատկերացում, որը առաջ է բերում միաժամանակ բառիմաստի առարկայական բնորոշումն ու պատկերացումը: Բառի հնչյունների զուգորդված պատկերացումն ու սուր բառը նշանակող առարկայի բնորոշումը սերտորեն զուգակցված են միմյանց և առաջինը հիշո-

1 Տճ՝ Կ. Ջանուկյան, Լեզվաբանության պատմություն, հատ. 1, Երևան, 1960, էջ 463—464.

2 Անդ, էջ 460.

3 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, II հրատ., Երևան, 1965, էջ 13.

զուգական մեջ վերարտադրելիս կամ ուրիշներին լսելիս՝ զուգորդությանը վերարտադրվում է տվյալ առարկայի պատկերացումը, և ընդհանրապես, տվյալ առարկան տեսնելիս կամ դիտակցության մեջ գրա պատկերացումը ձևվելիս՝ զուգորդությանը առաջ է գալիս տվյալ առարկան նշանակող բառի հնչյունական պատկերացումը: Գրանոմբառի հնչյունները կազմվելով այն անվանող առարկայի պատկերացմանը՝ բովանդակություն կամ նշանակություն են ձևոր բերում: Հույն-բանական այս դործողությունները Արեղյանը համարում է տակավին մարդկանց լեզվային հազորդակցման մի կոդը միայն՝ ուրիշներին լսելու և հասկանալու երևույթը: Իսկ խոսելու և մտքերը ուրիշներին հաղորդելու դործողության համար, Արեղյանը վճահական գեր է հասկացնում արտասանության համար անհրաժեշտ՝ խոսքի դործարանների մկանային շարժման պատկերացումների զուգորդությանը: Այդ շարժման մկանային պատկերացումները զուգորդվում են նաև համապատասխան հնչյունների լսողական պատկերացման հետ, որով խոսողի համար լսելի է դառնում իր իսկ արտասանած հնչյունների կապակցությունը, այսինքն բառի հնչյունների թե՛ լսողական և թե՛ մկանային պատկերացումներ՝ միմյանց զուգորդված, երբ մեկի վերարտադրմանը կարող է վերարտադրվել նաև մյուսը: Այդպես, մի առարկայի ներկայությունը մարդու մեջ վերարտադրում է այդ առարկայի պատկերացումը, որի հետ զուգորդված վերարտադրվում է այդ առարկան նշանակող հնչյունների լսողական պատկերացումը: Այս վերջինին զուգորդվում է խոսքի գործարանների համապատասխան շարժումների մկանային պատկերացումը և վերարտադրվում: Եվ երբ դիտակցարար կատարում են հիշած համապատասխան մկանային շարժումները, առաջ է գալիս բառերի, ապա և խոսքերի արտասանությունը, որը նույն կերպ հասկանալի է դառնում և ուրիշներին: Առաջ է գալիս խոսակցական օգուհանշանների հաղորդման և ընդունման գործողությունը կամ խոսակցությունը:

Հետևելով Շտայնբախին և հատկապես Հերման Փատլին, Արեղյանը պաշտպանում է նախադասությունը հոգեբանական դատողությանը միջնակետի տեսակետը: Ինչպես որ բառերը հոգեբանական պատկերացումների արդյունք են և հետո են արտամարանական հասկացություններ լինելուց, այնպես էլ նախադասությունը պատկերացումների հարակցում է, հոգեբանական դատողության արտահայտություն:

«Այն պատկերացումը,— դրսում է նա,— որ առաջ է ծնվում

մեր մեջ և որից սկսվում է դատողության գործողությունը, կոչվում է հագեբանական (դատողության) ենթակա. իսկ այն պատկերացումը, որ դիտակցում ենք, թե միանում է ենթակայի հետ, կամ, ինչպես ասում են, ստորոգվում է ենթակայի վրա, կոչվում է հագեբանական ստորոգյալ»<sup>1</sup>:

Այսինքն, կարևորություն ունի ոչ թե պատկերացումների տրամաբանական կապակցությունը, այլ պատկերացումների հերթական զուգորդությունը: Բայց ստորոգումը լինում է այն ժամանակ (այսինքն՝ դատողություն է կազմվում— Ս. Հ.), «երբ մենք դիտակցում ենք այդ երկուսի մեջ եզած հարաբերությունը: Այս հարաբերության դիտակցությանը է միայն առաջ գալիս մտածությունը, և սովորական զուգորդության երկու անդամները դառնում են դատողության անդամներ— ենթակա ու ստորոգյալ, և մտածությունը տարբերվում է սովորական զուգորդությունից»: Եվ Արեղյանը մտածության ամենակարևոր տարրը համարում է հոգեբանական ենթակայի և ստորոգյալի հարաբերության դիտակցությունը»<sup>2</sup>:

Իսկ ի՞նչ հարաբերություն է դիտակցվում հոգեբանական ենթակայի և ստորոգյալի տակ: Ի տարբերություն հոգեբանական ուղղության որոշ ներկայացուցիչների սուբյեկտիվ-իդեալիստական ըմբռնումների, Արեղյանը գտնում է, որ «դատողության անդամների իրար հետ ունեցած հարաբերությունը ոչ թե նրանց փոխարինող բաներին է, այլ մեր մտքի այն առարկաներին, որոնց փոխարինում են բաները»: Իսկ «մտքի առարկաները» այլ բան չեն, քան իրական աշխարհի առարկաների անդրապատկերումը:

Արեղյանը, ահա, խոսքը կամ դիտակցությունը համարում է հոգեբանական դատողության (մտածության) արտահայտությունը բաներով: Սա դեռևս չէր նշանակում հոգեբանական դատողության և նախադասության նույնացում: Կառուցվածքով (ենթակայի և ստորոգյալի երկատմամբ) այդ երկու հասկացությունները նույնացնելով հանդերձ, ենթակայի և ստորոգյալի ըմբռնումներով, սակայն, հոգեբանական դատողությունն ու նախադասությունը Արեղյանը տարբեր բաներ է համարում: Եթե հոգեբանական դատողության մեջ շեղման և ստորոգյալը բազմապես կերպով փոփոխվում են, և յուրաքանչյուր բառի կամ բառախմբի արտահայտած պատկերացում կարող է դառնալ հոգեբանական ենթակա կամ

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 22:

2 Անդ, էջ 23:

3 Անդ, էջ 24:



Տոգերանական ստորոգյալ, նայելով, քն ո՛ր պատկերացումն է առաջ երևան գալիս խոսքի մոխի մեջ և որը՝ նետո, խոսքի (նախադասության — Ս. Հ.) քերականական ենթական (բայի դեմքը) ու քերականական ստորոգյալը (բայմասար), խոսքի այս երկու անդամներն իրենց լրացումներով, հաստատուն կազմությամբ նույնն են մնում<sup>1</sup> (ընդգծումն իմն է — Ս. Հ.)։ Միեւնույն նախադասությունը կերտել է արտահայտել բազմաթիվ Տոգերանական դատողություններ և այն, ենթակալի և ստորոգյալի իր քերականական կազմությանմբ, այլևս կախում չունի Տոգերանական ենթակալից և ստորոգյալից։ Այսինքն, նախադասությունը Տոգերանական դատողության արտահայտություն լինելով հանդերձ, իր քերականական կազմությանմբ ու բնույթով տարբեր է նրանից։ Եվ այդ տարբերության մեջ էլ Արեղյանը տեսնում է Տոգերանության տարբերությունը քերականությունից։ «Եկզվի ուսումնասիրության գործն է ոչ թե վերլուծել Տոգերանական դատողությունը և որոշել նրա անդամները, այլ բացատրել խոսքի կազմությունը»։

Խոսվածքի գործունեության զարգացման և հատկապես խոսքային առավել բարդ միավորների՝ բառազուգորդումների և բառակապակցությունների ծագման ու կազմավորման մեջ, Հեբրեան Պատուի սկզբունքներով<sup>2</sup>, Արեղյանը կարևոր տեղ է հատկացնում Տոգերանական զուգորդությանն ու զուգանմանությանը (անալոգիա)։ Ըստ այդմ՝ բառերը մարդկային մտքի մեջ միմյանց են զուգորդում կամ սոսկ հնչյունների, կամ սոսկ նշանակության և կամ էլ միաժամանակ թե՛ հնչյունների և թե՛ նշանակության «մասնակի նույնության կամ նմանության վրա»։ Առաջին դեպքը վերապահելով սոսկ հանգի և հանգիստության բնագավառին, Արեղյանը հաստատու էր հերկո դեպքերին մեծ տեղ է հատկացնում բառազուգորդումների և բառակապակցությունների տարբեր խմբերի զոյացման մեջ։

Մարդկային մտքի բոլոր պատկերացումներն ու դրանք արտահայտող բառերը իրենց նյութական նշանակությամբ բաժանելով երեք մեծ խմբի՝ գոյականների, ածականների և բալերի, Արեղյանը գտնում է, որ դրանք էլ մարդկային մտքի մեջ իրենց հերթին բազաղովում են նյութական և ձևական նշանակությամբ տարբեր խմբերի։ Այդպես իրար հետ զուգորդվելով, զանազան խմբեր են կազմում նաև շարահյուսական կապակցության ձևերը։

Արեղյանը լեզվաձևերի վերաստեղծման և ստեղծման մեջ նշանակալից տեղ է հատկացնում լեզվական զուգորդության խմբերի անալոգիային։ Նա նշում է զուգանմանական կազմության երկու ձև. մեկն այն է, երբ բաժ, բայց մոռացված բառաձևերը կամ կապակցության ձևերը վերարտադրվում են լեզվական նույն հարաբերությունները արտահայտող ձևական խմբերի նմանությամբ, իսկ մյուսն այն է, երբ դարձյալ իմացած լեզվաձևերի նմանությամբ կազմվում են արդեն նոր բառաձևեր ու կապակցության ձևեր։

Այս են ընդհանուր գծերով խոսվածքի գործունեության առաջացման բնախոսական-Տոգերանական այն հիմունքները, որ հետևելիով Երիտթերականներին, առաջ է բաշում ու պաշտպանում Մատուկ Արեղյանը։

Արեղյանը միանգամայն իրավացիորեն հանրության լեզվի զարգացման սկիզբը տեսնում է անհասանելի մուգած զիտակցված ու հաճախ զգիտակցված լեզվական փոփոխությունների մեջ։

«Նոր կազմության ձևեր, — գրում է նա, — մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում. բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանավանդ երբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ։ ...Այսպիսով նոր կազմությունը, որ սկսվելով մի անհատից՝ սկզբում անսովոր և նույնիսկ սխալ է համարվում, դառնում է կիրառության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է։ Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի»։ Լեզվաձևերից բացի, Արեղյանը անհասանելից է ծագած համարում նաև հնչյունների և բառերի նշանակության փոփոխությունները։ Լեզվի փոփոխության երկրորդ կարևոր գործոնը նա համարում է սովյալ լեզվով խոսող ժողովրդի վրա տնտեսական, քաղաքականապես ու կուլտուրայական գերիշխող օտար լեզվի թողած ազդեցությունը, որ դարձյալ իրականացվում է անհասանելի միջոցով։

Լեզվի ծագման ու զարգացման մեջ անհատի և անհատականի դերի նման բացահայտումը և դնահատումը բնավ պատահական կամ հակասական<sup>3</sup> չպիտք է համարել, ինչպես երիտթերականներից սմանց (Հեբրեան Պատու և այլք), այնպես էլ Արեղյանի՝ լեզուն հասարակական երևույթ համարելու տեսակետի հետ։

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի անսովյան, 1965, էջ 354։

<sup>2</sup> Հիմն. Նրա „Prinzipien der Sprachgeschichte“, dritte Auflage, Halle, 1898.

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի անսովյան, 1965, էջ 45—46;  
<sup>2</sup> Պրոֆ. Էդ. Աղաթանի իր «Նյալ լեզվաբանության պատմության երկրորդ հատորում (էջ 147), Արեղյանի լեզվի հասարակական կողմի շմբեռումը հակասական

Լեզվի, իբրև հասարակական կրթության ընթացիկ ընթացիկ որոշակի գրանցում է լեզվի զարգացման իր որոշարժ տեսությունը շարադրման մեջ, որ Արեղյանը լեզուն համարում է մարդկային կամքից անկախ գոյություն ունեցող առարկայական մի իրողություն, որի փոփոխությունները սկսվելով անհասանելիք՝ աստիճանաբար տարածվում են և ընդհանրանում<sup>1</sup>:

Լեզվի հասարակական կյանքի հետ ունեցած սերտ կապի ընթացման մասին է վկայում ընդհանուր խոսակցական և գրական լեզվի առաջացման հասարակական զրգացումները ընդհանուր: Հնանելով ռուս ականափոր լեզվաբան Գ. Ուլանովին, Արեղյանը գրում է. «Երբ մի ազգի կուլտուրական կյանքի զարգացումն այն աստիճանին է հասնում, որ իրարուց բավական տարբերվող բարբառներով խոսողների համար առաջ են գալիս այնպիսի ընդհանուր պահանջներ, որոնցով նրանք ավելի սերտ հարաբերություն մեջ

1 Համարում եմ անհատական ըմբռնում հետ: Արզաբաջի չլ խոսվածքի գործունեության առաջացումն ու լեզվի զարգացումը տեսնա՞ի հոգեբանական ուսուցիչություններով բացառադ լեզվաբանների մեղադրել լեզվի հասարակական կողմը չզի-սանցնելու մեջ, առավել ևս Արեղյանին, որի լեզվական կոնկրետ օտոմատիզացիաները բնավ նման կործիքի հինք չեն ապալի: Բայց այդ, Արեղյանը ամհասարակ լեզուներն ասելով հասկանում է նաև արտաբառ, վերացարկված լեզվի կոնկրետ, իրական, շրջափնի արտահայտությունը: Իր ըՄի բանի քերականական խնդիրների մասին անարդ աշխատության մեջ (էջ 58 և հետ.) նա որոշակի պարզաբանում է իր այդ օտոմատը, դրելով «կա», որչեփով գոյություն ունի՝ լեզու ընդհանրապես իբրև այդպիսին: Այլ, զա արտաբացիկ է: Դա նշանակում է միայն՝ կոնկրետ լեզուների ընդհանուրը, մի բանի ընդհանուր որոշումները, մի բանի ընդհանուր հասկանիչները, որ իրական են, գոյություն ունեն եզակի կոնկրետ լեզուների մեջ... Կա՞, որչեփով գոյություն ունի՝ հայտ լեզուն, ուսաց լեզուն և մյուսները, ընդհանրապես իբրև այդպիսին: Այլ էլ արտաբացիկներ են, միայն ազգի բովանդակային, որովհետև ընդհանուր վերացական զապափորի հետ՝ պարունակում են նաև մասնավորը՝ հայտ կամ ռուսաց լեզվի օտոմատիզացիաները: Բայց այդ մասնավորն էլ հայտ լեզուն և այն, միայն մի վերացական մտնեն է, որ առանձին վերցրած չենք գտնի ոչ մի սեղ և իրական է, գոյություն ունի եզակի մեջ միայն և ոչ այլպես: Ինչպես վերացական է և դասակարգային լեզու ասածը...:

Ուրեմն ա՞րե է կոնկրետ լեզուն:— Դա եզակի, անհատական լեզուն է, որ իր մեջ պարունակում է կամ որի մեջ գոյություն ունին և եզակի, անհատական և մասնավորը—զատակարգչները, և ավելի բարձր՝ հայկականը, և ավելի ևս բարձր՝ ընդհանուր լեզվականը: Տեսնում ենք, ուրեմն, որ անհատական լեզվի տակ Արեղյանի մտ առկա է նաև լեզվի իմացարանական ըմբռնումը և ոչ միայն հոգեբանականը:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի անուսություն, 1965, էջ 46—47:

են մտնում միմյանց հետ,— այդ ժամանակ նրանք կարիք են զգում մի ընդհանուր խոսակցական լեզվի<sup>2</sup>:

Ընդհանուր գրական լեզվի փոփոխման ու զարգացման մեծ գործունեիքից մեկը Արեղյանը համարում է «ժողովրդի ընդհանուր մշակույթի զարգացումը: Ժամանակի ընթացքում առաջ են գալիս միշտ նրանցից զապափարներ... Դրանց համար ծնվում են նոր բառեր, բառերի նոր նշանակություններ և արտահայտության ձևեր, որով և գրական լեզուն շարունակ հարմարվելով նոր մշակույթին՝ հարստանում և ընդունակ է դառնում ամեն ինչ արտահայտելու, թե՛ մշակույթի և թե՛ նորի կրթությանը: Ժամանակի հետ այսպես կերպարանափոխվող գրական լեզուն է միայն կենսունակ և ընդունակ բավարարելու այն նպատակին, որին ժառանգում է, այսինքն՝ դառնալ մի ընդհանուր համարաբար զարձակված միջոց նույն լեզվով խստղ և գրող մարդկանց մտավոր հաղաղակցություն համար»<sup>3</sup> (ընդգծումն իմն է— Ս. Հ.):

Ահա, լեզվի հասարակական զարգացման և հասարակական գեղի նման միշտ ըմբռնումը, բնականաբար, պետք է հանգիստներ Արեղյանին նրա կուլտուր-պատմական ստույգ նշանակության ըմբռնմանը:

«Մի լեզվի պատմությունը սերտ կապված է նույն լեզվով խստղ ազգի պատմության հետ,— գրում է Արեղյանը,— ուստի ինչպես ազգի պատմությանը շատ բան բացատրվում է լեզվի մեջ, նույնպես և ինքը լեզվաբանությունը բացատրում է շատ պատմական իրողություններ»<sup>4</sup>:

Տեսնում ենք, ուրեմն, որ Արեղյանը բնավ էլ չի հերքում լեզվի հասարակական կրթության հանդեմնացը: Լեզվական իրակրթությունների ծաղմանը բնախոսական-հոգեբանական մեկնաբանություններ տալով հանդերձ, նա առանց վերապահության ընդունում է լեզվի հասարակական իրողություն լինելու պարզում: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանզի Արեղյանի որոշարժ լեզվարանական ուղղության գլխավոր արժանիքը հենց լեզվական պրոցեսի պատմական ըմբռնումն էր<sup>5</sup>, և լեզուն ու այն հետադարձ գիտությունը հասարակական (կուլտուրային), այսինքն՝ հասարակության մասին գիտություն համարելը:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի անուսություն, 1965, էջ 54:

2 Անդ. էջ 56:

3 Անդ. էջ 45:

4 Գ. Ջանուկյան, Լեզվաբանության պատմություն, հատ. 1, էջ 496:



Արեղյանը լեզվաբանական իր ըմբռնումներում, լեզվի գարգացման ընթացքը դիտում է իբրև պատմական պրոցես:

Նա գտնում է, որ սամևն լեզու միշտ է անընդհատ փոփոխվում է: Այս փոփոխության մեջ է լեզվի կյանքը կամ պատմությունը: Այս պատմառով է լեզուն, ինչպես մարդկային մշակույթի ամեն արտադրություն, պատմական ուսումնասիրության առարկա է... Հաս այժմ լեզվաբանությունը... պատմական գիտություն է՞»:

Լեզվաբանությունը պատմական գիտություն համարելը ոչ միայն չէր բացառում լեզվի արդի վիճակի համաժամանակյա քառասունի հետազոտությունը, այլ ընդհակառակն պարտադիր էր գործնում այն:

Լեզվի «պատմական ուսումնասիրությունը,— գրում է Արեղյանը,— հնարավոր է, սակայն, այն ժամանակ միայն, երբ հայանքի են լեզվի վիճակները նրա զարգացման զանազան շրջաններում: Ուստի մի լեզվի պատմական քննադատությունից առաջ՝ անհրաժեշտ է ունենալ նույն լեզվի մի շարք նկարագրական փրագմենտաբանություններ<sup>2</sup>:

Այդ ըմբռնումով էլ ինքը հենց ձևավորում է լինում ժամանակակից հայերենի նկարագրական քերականության ստեղծմանը նրբորեն քերականների առավելություններից մեկն էլ այն էր, որ նրանք «հանդես էին գալիս կենդանի լեզուների ուսումնասիրությանը առաջնություն տալու» նշանաբանով<sup>3</sup>, մի պարագա, որ լրիվ համապատասխանում էր XIX դարի վերջերի և XX դարի սկզբների հայոց լեզվի զարգացման պատմական պահանջներին: Աշխարհաբարի բարգավաճումն ու վերջնական հողթանակը զբարբի նկատմամբ արդեն պատմական անհրաժեշտություն էին դարձնում հայերենի ժամանակակից վիճակի ուսումնասիրությունը, որի իրազործումը ձևանարկելիս, պատմական հարկից բացի, Արեղյանին, անշուշտ, զրգել են նաև իր դավանած զյուրջի մեթոդաբանական պահանջները:

### Ք. ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԷ

Արեղյանի քերականագիտական հետազոտությունները թեպետ սկզբնավորվում են 90-ական թվականներից<sup>4</sup>, սակայն նրա ծան-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1955, էջ 62—63:

<sup>2</sup> Անդ, էջ 63:

<sup>3</sup> Ք. Համակյան, Լեզվաբանության պատմություն, հատ. I, էջ 496:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Ուղղագրական նկատողություններ, «Նոր-գար», 1890,

բակչիտ խոսքի այդ բնագավառում դառնում է 1906-ին լույս տեսած «Աշխարհաբարի քերականություն»-ը՝ Վերջինս, անկասկապ գրագրության ընդլայնում, արևելահայ աշխարհաբարի քերականագիտական մի նոր լուրջ հետազոտություն էր: Այդ աշխատությանը Արեղյանը հանդես է գալիս հայ քերականագիտության մեջ որպես իսկական նորարար: Երբեք չենք անհիշել ամենից առաջ նա բերում էր իր քերականագիտական համակարգով Հակոբյանի մինչև ինքը եղած թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի նկատմամբ կիրառած քերականագիտական ավանդական համակարգերի, որոնք, «ե՛հ մասամբ օտար քերականությունների ընդօրինակություն են», նա լեզվաբանական նորագույն հետազոտությունների լույսի տակ նորովի է վերաբնորոնում արդի հայերենի քերականական խնդիրներն ու իրականությունները և գրանք համակարգում է բոլորովին նոր մտացումով:

Երբքը նորաձևության փոփոխը չէ եղել մեկ առաջնորդ այս շրտոխությունների համար,— գրում է նա,— այլ միմիայն երջառության և կատարելության ձգտումը և այն միտքը, թե ամեն լեզու ընդհանուր քերականության հետ ունի և յուր առանձնահատուկ փրականությունը»<sup>2</sup> (ընդգծումներն իմն են— Ս. Հ.):

Ճշտություն, կատարելություն և հայոց լեզվի քերականության առանձնահատկություն— ահա Արեղյանի հայոց լեզվի հետազոտության առաջնորդող սկզբունքները, որոնց դավանելով նա ստեղծում է հայ քերականագիտության իր նոր ուղղությունը:

Քերականությունը, բայց լեզվի բաղադրիչ մասերի ուսուցման, Արեղյանը բաժանում է երեք դիսյակոր մասի.

1. Հնչարանություն, 2. Բառագիտություն և 3. Ծարհչուտություն:

Քերականության այս երեք մասերից «Աշխարհաբարի քերականության» մեջ Արեղյանը վերադառնում է բնում է առաջին երկուսը

ՄՄ 151, 153, 154, 155, 161, 162, 164, 166, 168, 169: Մ. Արեղյան, Գրաբարի երկարատևներ և ու թե՛ և, թե՛ վ, «Նոր-գար», 1890 ՄՄ 187—191, 193, 194, 196, 197: Մ. Արեղյան, Հաճախ, թե՛ րենք, «Նոր-գար», 1893, Մ 38: Մ. Արեղյան, Մի ստաղծարական խնդիր, «Նոր-գար», 1896, Մ 128: Մ. Արեղյան, Երկու բառ, «Նոր-գար», 1897, Մ 28: Մ. Արեղյան, «Նա» և «այն», «Նոր-գար», 1897, Մ 160—161: Մ. Արեղյան, Մի պակասություն, «Նոր-գար», 1891, Մ 138: Մ. Արեղյան, Փոփոխական լեզվի շեշտադրությունը (արևելյան հյուսիս բարբառների մեջ), «Նոր-գար» ՄՄ 141—145: Մ. Արեղյան, Հայոց լեզվի ուղղագրություն, Քիֆլիտ, 1892, Ծանոթ մի մտքը բնված է աշխատությանն առաջին գլուխներում:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վարդապատ, 1906, էջ Գ. 2 Անդ:

միայն՝ հնչարանությունը և բառադիտությունը: Ըստ որում հնչարանության բաժնում նա ուսումնասիրում է արևելյան աշխարհաբարի հնչյունաբանական և ուղղագրական իրականությունները, իսկ բառադիտության տակ է ներառում և բննում՝ ա) բառերի իմաստներն ու տեսակները, բ) բառակազմությունը և գ) թվերում (խոնարհում և հոլովում): Արեղյանի սխառմի առաջին ընդհանուր նորությունն, ա՛հա, քերականության հիշյալ մասերի վերաբնագրումն էր. նա հնչարանության տակ, բացի հնչյունների արտասանական ուսմունքից, պարզացնում է նաև նրանց գրության՝ ուղղագրության ուսմունքը, իսկ բառադիտությունը վերցնում է ընդլայնված առումով, դրա տակ ներգնելով բառերի և՛ իմաստի, և՛ կազմության, և՛ ձևաբանության ուսմունքները:

Արեղյանը իր քերականագիտական համակարգը կառուցում է էլիևելով խոսքի (իմա՝ նախադասության) նկատմամբ բառերի կատարած պաշտոններից: Ըստ այդմ՝ բառերը բաժանում է չորս տեսակի. ա) խոսք կազմող բառեր կամ բայ, բ) խոսք լրացնող բառեր կամ լրացում, գ) խոսքեր և լրացումների կապող բառեր կամ զոդ և դ) խոսքից դուրս մնացող բառեր կամ ձայնաբեկություն: Արեղյանը խոսքի մասերի մեջ կենտրոնական տեղը հասկացնում է բային, այն ճիշտ մեկնակետով, թե «ամենայն բայ մեակ կազմում է մի խոսք», իսկ «առանց բայի խոսք չկա»: Եվ այդ այն պատճառով, որ բայը «միանգամից մի քանի գաղափար է միացած հայտնում», այսինքն՝ բայի մասա, դեմ է րիվ: Ուրեմն, երկհես ընդունելով խոսքը<sup>1</sup>, հետևաբար և խոսք կազմող բառը՝ բայ, Արեղյանը մյուս բառերը (իմա՝ խոսքի մասերը) բննում է էլիևելով խոսքի մեջ բայի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունից. նա խոսքի մեջ էական տեղը հասկացնում է ստորոգմանը: Ըստ այդմ, խոսքի մյուս մասերը՝ բայի նկատմամբ լինում են լրացումներ (ենթակա և խնդիր) և լրացման լրացումներ (կողմնակի խնդիրներ): Բայն, ուրեմն, «բուն խոսքն է կամ խոսքի էական մասը», իսկ ենթական, խնդիրներն ու կողմնակի խնդիրները՝ «բայի նկատմամբ խոսքի երկրորդական մասերն են»: Լրացումները «երկու տեսակ են. զոչական և անական». զոչականներն էլ երկու տեսակ են՝ անուն

և դերանուն: Անունները լինում են՝ հասույ, հասարակ, բայանուն, անորշ անուն և հարցական անուն: Դերանունները լինում են, անձնական, ցուցական, փոխադարձ և հարաբերական: Ածականները, բայ խոսքի մեջ կատարած պաշտոնի, լինում են. մակաբան, մակբայ և մակածական: Մականուններն ըստ իմաստի լինում են. որակական, քանակական, դասական, ցուցական, բայածական, անորշ, հարցական և հոգին: Հորերն ըստ իմաստի լինում են. ցուցական, դիմորշ, ստացական և որոշող:

Մակբայներն իրենց ցույց տված գողափարներով բաժանվում են. 1. տեղական մակբայների, 2. ժամանակական մակբայների, 3. որակական մակբայների, 4. քանակական մակբայների, 5. եղանակական մակբայների:

Մականականները լինում են՝ պարագայի և աստիճանի: Աստիճանի մականականները երկու տեսակ են՝ բաղդատական և սաստկական:

Բառերի (խոսքի մասերի) մյուս խումբը Արեղյանը կոչում է զոդ, բառեր, շարքեր կազմում են կամ բառ բառի հետ, կամ խոսք խոսքի հետ:՝ Չորերն ըստ իրենց վարած պաշտոնի երկու տեսակ են. կապ և շաղկապ: Կապերը լինում են. 1. նախադրություններ և 2. ետադրություններ: Շաղկապները լինում են. ստորադասական և նամադասական: Բառերի վերջին՝ չորրորդ խումբը, ըստ Արեղյանի՝ ձայնաբեկությունն է, որ լինում է՝ քաղական և կոչական:

Այսպես ուրեմն, Արեղյանը հակառակ նախորդ քերականների խոսքի մասերի վերաբերյալ ունեցած ավանդական ուսմունքի, ստեղծում է խոսքի մասերի մի նոր սխառմ, որի կենտրոնն է բայը իր ստորոգումներով, նման էր կղզականությունի, որ հանդում նա իրեր ցրված հառազայիններ՝ խոսքի բոլոր մասերն իրենց քերականական որոշ հատկություններով: Արեղյանը, «Բառերի իմաստներն և տեսակները» հիշյալ ենթաբաժնում, խոսքի մասերի բնորոշման մեջ բերում է մի նորություն՝ ևս. առաջին անգամ նա քերականագիտության մեջ մտնում է «կապ» հասկացությունը՝ բաժանելով այն նախադրության և ետադրության, և շաղկապի հետ միասին դնում «Չոր» ընդհանուր անվան տակ:

«Մակբայաբար քերականություն» երկրորդ բաժնի երկրորդ հատվածում բննվում էր հայոց լեզվի բառակազմությունը, որից իր բոլոր էական կողմերով, իսկ երրորդ հատվածում՝ խոնարհումն ու հոլովումը, ուր Արեղյանը դարձյալ կուս ու միասնական համա-

1 Մ. Արեղյան, Աշխարհաբարի քերականություն, էջ 69:

1 «Աշխարհաբարի քերականություն», էջ 41.  
2 Արեղյանի քերականագիտական համակարգը բննելիս, նկատի ենք առն Ա. Չարիբյանի «Մեծուկ Արեղյանի քերականագիտական ստանդարտները հոգիամբան և շարժական բանասիրական հետախուզումները, գիրք առաջին, Երևան, 1946, էջ 151:



վարդի է բերում աշխարհարարի թեքման ուսմունքը, այն հարցա-  
տացնելով մի բանի նոր հասկացություններով: Առաջին կարևոր  
նորությունն այն էր, որ հակառակ մինչ այդ եղած բմբռնումներին,  
Արեղյանը արևելահայ աշխարհաբարի համար հինգ հոլով էր ըն-  
դունում (ուղղական, տրական, բացառական, գործիական և ներ-  
դրական): Այսինքն, Պալասանյանի հավաստած և հաջորդ քերա-  
կանների ընդունած հոլովական համակարգից զուր էր դնում սե-  
ռական ու հայցականը, իբրև հոլովաձև չունեցող հասկացություն-  
ներ:

Բայերի կազմության մեջ Արեղյանը, բացառությամբ կրա-  
վորական կազմությամբ բայերի, առաջին անգամ մուծում է նաև  
ստակվան, րազմապատկական և պատեռառական միջածանցներ  
ունեցող բայերի հասկացությունը, որն հետագայում, իր խի կող-  
մից վերածնելու էր բայասեռի քերականական նոր կարգի բմբռն-  
մանն ու մուծմանը հայ քերականագիտության մեջ:

Մինչև Արեղյանը՝ Պալասանյանի և այլոց կողմից ընդունվում  
էր արևելյան աշխարհարարի բայերի համար չորս եղանակ (սահ-  
մանական, ստորագասական, հրամայական, գերբայ), բնդ որում  
չորրորդը՝ գերբայը զուր էր եղանակային հասկացությունից: Ա-  
րեղյանը բերում է եղանակային նոր կարգեր և հայոց լեզվի հա-  
մար ընդունում հինգ եղանակ. սամմանական, ենթադրական, հաւ-  
կալական, ըզձական (նախկին ստորագասականը) և հրամայա-  
կան:

Արեղյանը բերում է նաև ժամանակի նոր հասկացություններ:  
Եթե Պալասանյանը սահմանական եղանակի համար ընդունում էր  
հինգ ժամանակ (ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ,  
պատանի և պատանի պայմանական), ապա նա զրանց ձևերը հասցը-  
նում է իննի. ներկա, անկատար անցյալ, պատանի ներկա, պատանի  
անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հաւակատար  
ներկա, հաւակատար անցյալ և անցյալ կատարյալ:

Նախորդ քերականները արևելահայ աշխարհարարի համար  
ընդունում էին չորս գերբայ՝ անտոշ, ներկա, անցյալ, պատանի:  
Արեղյանը նոր բմբռնումով է մտնում սգերբայ՝ հասկացությունը  
և այն բաժանում՝ անտոշի, անկատարի, պատեռու, անցյալի (վեր-  
ջինս ըստ վերջավորությունների բաժանում է վաղակատարի և հա-  
րակատարի) և ենթակայականի (ըստ հերի՛ ներկա գերբայ):

Նա վերացնում է նաև աշխարհարարի խոնարհման համակար-  
գը՝ գրաբարի քերականությունից եկող, ըստ բայական լծողու-

թյունների ստորաբաժանման ավանդական սովորույթը և բայերի  
կանոնավոր խոնարհումները սխառնավորելով ըստ անցյալ կա-  
տարյալի և հրամայականի վերջավորությունների, բաժանում է  
խոնարհման երեք ձևերի (Ի, Ա, և Ի-Ն): Եվ վերջապես Արեղյանը  
հայ քերականության մեջ բերում է նաև կերպի հասկացությունը:  
Կերպը բմբռնելով իբրև մի որոշ ժամանակակետի նկատմամբ բաղի  
ցույց աված գործողության հասկությունը, նա երկրորդական բա-  
ղարջալ ժամանակների համար մատնանշում է հայերենում երեք  
կերպ՝ կատարվող, կատարված և կատարելի:

Մտավորապես սրանք էին այն նորամուծությունները, որ  
բերում էր «Աշխարհաբարի քերականությունը» հայ քերականա-  
գիտության մեջ Մանուկ Արեղյանը:

Այն կենտրոնական խնդիրները, որոնք ըստինքյան հասկանալի  
պատճառով թեթևակի էին շոշափված «Աշխարհաբարի քերակա-  
նություն» մեջ, գիտական խոր ու համակողմանի քննության են  
ենթարկվում «Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.), «Հայցա-  
կան հոլովը մեր աշխարհաբարում» (1909 թ.), «Բայի եղանակ-  
ների արևելյան աշխարհաբարում» (1912 թ.) նրա հետագա ուսում-  
նասիրություններում:

#### Գ. ՀՈՎՈՎՆԵՐԻ ՏԵՍՈՒՔՅՈՒՆԸ

Աշխարհաբարի հոլովական համակարգի մեջ այն նորությունը,  
որ բերում էր Արեղյանը, հարկ ուներ գիտական մանրակրկիտ  
լուսարանման: Ուստի աշխարհաբարի հոլովների խնդիրը Արեղ-  
յանը համապատասխան պարզաբանումներով ենթարկում է հա-  
տուկ հետազոտության: Աշխարհաբարի հոլովական համակարգը  
քննելիս, Արեղյանը խստորեն տարբերում է բառերի ձևարանական  
նկարագիրը նրանց կիրառական հարաբերություններից: Հոլով  
համարելով «հոլովելի բառերի պանակն ձևերը», որոնք «ցույց են  
տալիս զանազան կախման հարաբերություններ», Արեղյանն իրա-  
վամբ հոլովների ուսմունքը բաժանում է երկու մասի՝ ա) ձևարա-  
նականի, «թի տրված բառը բանի տեսակ ձև կամ հոլով կարող է  
ունենալ և որոնք են այդ ձևերը» և բ) շարահյուսականի, «թի մտնեն  
ձև կամ հոլով ինչպիսի՛ և քանի՛ տեսակ կախման հարաբերություն  
կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ»: Ուստի և ձևա-  
բանական տեսակետից նա հոլովների ճիճեզ ձև է դառնում արևելյան

1 Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, քերականական խնդիրներ, Վաղար-  
շապատ, 1903, էջ 4:

աշխարհաբարում, հետևաբար և ընդունում է հինգ հոլովի (ուղղական, տրական, բացառական, գործիական և ներդրական) գոյությունը:

Արեղյանը մեկ առ մեկ քննում է հայցականի, սեռականի ու տրականի խնդիրը և գտնում.

Հայցական հոլով գոյություն չունի աշխարհաբարում, որովհետև չի կարող լինել մի հոլով առանց իրեն հատուկ հոլովական ձևի. մինչդեռ աշխարհաբարում «հայցական առածը միշտ նման է կամ ուղղականին կամ տրականին»: Այն սերականները, ովքեր ընդունել են հայցականի գոյությունը, պարզապես շփոթել են հոլովը՝ հոլովի պաշտոնի հետ կամ հոլովի ձևը՝ այդ ձևի շարճայնական նշանակության հետ, որն, ըստ Արեղյանի, «որոշ կերպով պետի տարրերը իրարուց»: Եվ նա իրավացիորեն գտնում է, որ նման հոլովները որոշվեն ըստ իրենց պաշտոնի կամ ցույց տված հարաբերության, «այն ժամանակ լեզուն, և ոչ միայն մեր լեզուն, շատ ու շատ հոլովներ կունենաք»: Եվ այսպես. «Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա առանձին ձև, չկա և առանձին հոլովը»: Մեկնույն հոլովը, կրկնում ենք, կարող է դործածվել գանազան շարճայնական... հարաբերություններ ցույց տալու համար. բայց այդ պատճառով մի հոլովը, մի ձևը չի դադարում միևնույն հոլովը մնալուց և չի գանձում երկու, երեք և ավելի հոլովներ»: Մանկավարժական նկատառումներով ևս Արեղյանը զովարժրմունք է համարում հայցական հոլովի տարբերումը աշակերտի կողմից, առանց շարճայնական հարաբերություններին իմանալու, որ արդեն այլ բնագավառ ու խնդիր է: Իրավոր Արեղյանը հայցական հոլովի ձևաբանական ըմբռնումն աշխարհաբարում բացատրում է սուղ դարձի և օտար լեզուների ազդեցությամբ: «Բայց կարծում ենք, — գրում է նա, — աշխարհաբարի քերականությունը մեր աշխարհաբարի համար լինի և ոչ զբարբի կամ օտար լեզուների: Եվ վերջապես ի՞նչ օգուտ այդ հայցական հոլովից»:

1 Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, քերականական խնդիրներ, Վազարշագատ, 1908, էջ 13:

2 Անդ, էջ 15: Արեղյանի հայցական հոլովի այս սահմանի դեմ մի հողվածով («Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ») հանդես է գրվել հայկական Սո. Մալխասյանը (ան՝ «Նոր դպրոց», ԻՖՖիլի, 1908, № 1, էջ 44—51):

Հողվածի հիմնական դատարարն այն էր, թե ոչ ևս ևսականներն և ոչ սեռականներն չէ արգտանում հայցական հոլովի վերացումն աշխարհաբարի ստացարանության դատարարից, իսկ դործնականորեն ու ժանկավարժական տեսակետից շատ մեծ վնասներ կատարած այդպիսի վերացումը (անդ, էջ 51):

Այդ առիթով Արեղյանը հանդես է գալիս «Հայցական հոլովը մեր աշխարհա-

Սեռական և տրական հոլովները քննելիս Արեղյանը ցույց է տալիս, որ դրանք ձևով՝ անունների մեջ, թե՛ դարարում և թե՛ աշխարհաբարում՝ նույնն են: Գրաբարում դերանունների և անորոշ անունների մեջ, սակայն, «գրեւ կան կրկին ձևեր՝ իմ-ինն, քո-քեզ, մեր-մեզ, սուրա-սմա, սորիւն-սմիւն, ուրումն-ումնմն, ոյր-ում և

բարում» (Վազարշագատ, 1909 թ.) առանձին ուսումնասիրությամբ: Ես փաստացի ու տրամաբանական գրեթե կովաններով մեկ առ մեկ ներում է Մալխասյանի հայցական հոլովի պաշտպանության հիմնավորումները, Արեղյանի հաստիքն ուղղուր քան անհիմն մեղադրանքները, որ իր թե Արեղյանը ընդունում է հոլովը շուրջ բառի մեջ և չի ընդունում նրա ֆունկցիան, նշանակությունը ( ի դեպ այս թյուր մտքը ցայտը իշխում է մեր որոշ լեզվաբանների կարծիքներում):

Արեղյանը Մալխասյանցի «հիմնավորումներին» առնչությամբ ետքովի է քննում հայցական հոլովի քերականական նկարագրի ու կիրառությունները արևելյան աշխարհաբարում և հակասուկ Մալխասյանցի այն պնդման, թե հայցականը սեփական հատուկ կիրառության մե, որ գանազանվում է թե՛ ուղղականից և թե՛ տրականից և առանձին տեսակի «խոստով» է կրելու մեկերի, այսպես ըստ է պր.

1. Հայցական հոլովը արևելյան աշխարհաբարում չունի հատուկ ձև, և մեկերի «խոստով» չէ, այլ պարզապես սեփականի և տրականի ձևերի իրի հայցական կիրառության մի հատուկ եզրակալ

2. Բուտերի առանձին խմբեր աշխարհաբարի հայցականի համար չունեն մեկերի հաստատուն և որոշ կիրառություն, որովհետքի բաների մի մասի հայցականը հաստատուն կերպով նման լինի ուղղականին, իսկ մյուս մասը՝ տրականին. քիչհաստատու, միևնույն բառի հայցականը թե՛ կալիւրում, թե՛ հողիւրում, թե՛ սեմի, թե՛ իրի, թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումներով կարող է նման լինել կ' ուղղականին, կ' տրականին: Արաբականությունն այն է, որ սեմեր լեզուն կործնելով հայցականը՝ այս հոլովի ֆունկցիաների տրամաշարելու նկատմամբ դեռ որոշ հաստատուն կերպարանք չի ստացել, այլ ստատեման, անցման շրջանի մեջ էր («Հայցական հոլովը», էջ 33):

3. Աշխարհաբարի հայցականը չունի միասնություն, այն տրականին է նման ոչ ընդհանրապես, այլ միայն այն ժամանակ, երբ անցողական բայերի սեփականի է. մնացած դեպքերում հայցականը տրականին նման չէ: Արևմե, եզրակացնում է Արեղյանը, «միևնույն բաների համար կա ...երկու հոլով, որ նշանակություն էր Արեղյանը, թե՛ իրավորում են իրարուց. մի հայցական, որ նման է ուղղականին և կատարում է հին հայցականի բոլոր ֆունկցիաները. մի հայցական ևս, որ նման է տրականին և կատարում է հին հայցականի սեփականի սեփականի պաշտոնը, այն էլ ոչ միշտ: Եվ այսպես. «հայցականի մեջ... որովում է ոչ թե նին հայցականի ֆունկցիաներով ընդամենապես տասն, այլ հին հայցականի ֆունկցիաներից սեփականի խնդիրը կհատի ունենալով», այսինքն՝ «տրականի նման հայցականը որոշվում է սեփականի խնդիրով, որովհետք հասնելիս է, թե «հայցականը ինչպես ձևով երկու տեսակ է՝ ուղղականի և տրականի, ետևյալն և նշանակությամբ ևս ձևով է կրելու տարբեր տեսակի, երկու հոլովին: Մյուս կողմից՝ Արեղյանը ցույց է տալիս նաև, որ սեփականի հայցականը միշտ չէ, որ նման է տրականին, այլ այն հանդիս նմանվում է և ուղղականին, կախված՝ որայից, դարձածից, խոսքի շրջումից, խո-



այլն» (ընդգծումներն իմն են— Ս. Է.): Միտաձանակ, գրաբարում որոշ գիրանունների հոլովման մեջ նկատվում է սեռականի և տրականի ձևերի տարրերովյան վերացման ձգտում (նորս—նմա):

սեռ ևզանահից, բարբառների ազդեցությունը և ետևիսկ երբևէ սեռի խեղդը կազ բարբառ: Ձեռով ու նշանակությամբ այսպիսի անմիասնական հայցական հոլովը Արեղյանն ամենայն իրավամբ ձևաբանության մեջ դնելը համարում է անբնական, իսկ հոլովական ֆունկցիաները պատշաճ է գտնում միայն ընդարձակ և գրական շարահյուսությունների մեջ քննել:

4. Արեղյանը հայցականի այդ տարրեր ձևերի ու ֆունկցիաների միասնությունը, իբրև մեկ հոլովական ձևական ամբողջություն, հարևանորեն անբնական է համարում: «Էին հայցականի ձևական մասի հետ,— գրում է նա,— մենք է և այդ հոլովով արտահայտված տարրեր պաշտոնների զգացումն իբրև մի առանձին ձևական ամբողջություն: Էին հայցականի կատարած պաշտոնները մեկը այժմ մասամբ ուղղականի ձևով ենք արտահայտում, մասամբ տրականի. և քանի որ ուղղականի և տրականի բոլորովին տարրեր ձևեր ունին, օտարի և այդ տարրեր ձևերը մեկը շեքը կարող ըմբռնել իբրև մի ձևական միասնություն: «Ներք խոսքով հայցականի ձևական զգացումը լիս մեղմում, այլ միայն ուղղականի և տրականի» (սեռայցական հոլովը, էջ 42):

Արեղյանը հերքում է նաև Մալխասյանցի հայցականի պաշտպանության տեղականացն ցնդումները, այն, թե՛ ա) չի կարելի «մեծնույն հոլովով կոչել իրար հակառակ ֆունկցիաները, այն է՝ սկզբի և հանդման, կերպրծողի և կրողի, ստացողի և ստացվածի: բ) հայցական հոլովը թևակա ձևով նման է ուղղականին և տրականին, բայց բոլորովին տարրեր, ետևիսկ հակադիր ու հակասական ֆունկցիա ունի ուղղականի նկատմամբ:

Կյանքի, ուղղական ունի «սկզբի և կերպրծողի ֆունկցիաները, տրականը՝ ստացողին, իսկ հայցականը՝ «հանդման և կրողին, այլև ստացվածին»:

Արեղյանը հենց Մալխասյանցի բերած և իր կողմից ավելացրած լրացուցիչ որոնումներով պայցուցում է, որ՝ ա) «հանդման և կրողի ֆունկցիա ջույց են առլիս ու միայն հայցականը, այլև ուղղականը, սեռական և տրականը»:

Ստացողի ֆունկցիան միայն տրականին չէ հասուկ, այլև սեռականին, իսկ ստացվածի ֆունկցիան՝ հայցականի և հետը բոլոր հոլովներին: Հնուհարար, ետևի հոլովը կարող է արտահայտել տարրեր և հակադիր ֆունկցիաներ, և հոլովների մեղմանորեն առանձին գոյությունը սույն ֆունկցիայով չի կարելի որոշել:

բ) Ուղղական և հայցականը բնահարակու հնչողը չեն իրար, այլ հակադիր են միայն կերպրծողի և կրողի ֆունկցիաները, կամ կերպրծող կեմական և կրող ստարկան: Այդ երկու հոլովները սույն մեկական ֆունկցիա չեն կատարում, այլ մի քանի, ճեռակարար լիսով էլ աններքի չէ, որ երբ ուղղականը մի դեպքում հանդման է կալիս իբրև կրող կեմական, այսինքն արտահայտում է կրողի ֆունկցիա, մի այլ դեպքում՝ հանդման կա իբրև կրող ստարկա, այսինքն հույն ֆունկցիայի բնչոյանում կատարի, մանավանդ, երբ կրող կեմական և կրող ստարկան շրինկ իրական նշանակությամբ կատարելագուս մեծնույն են:

Մալխասյանցի սեռական նախորդյունների անկերտությունն Արեղյանը բացատրում է լեզվական երևույթների նկատմամբ նրա անցած սույն արամարանական հակապատմական մտնցումով, երբ հայդի չեն անելով լեզվի պատմական մի-

նիսկ աշխարհաբարում սեռականի և տրականի գրաբարում գործածական գոյուղ ձևերը բոլորովին պակասել են. «արևմտյան աշխարհաբարում մենք են հինգ ձև սեռականի՝ իմ, քա, յուր (իր)»:

ստմներն ու զարգացումը: Մեղմուս «մեր լեզուն,— գրում է նա,— յուր բնական զարգացման ընթացքում կորցնելով հայցական հոլովը՝ ուղղականի, կերբեն նաև տրականի ձևերը դարձրել է արտահայտություն և հին հայցականի ջույց պիսկ հարաբերությունների, և կարելի չի զգացնել հին հայցականի այդ հարաբերության ձևերը արտարտա նա տարրեր թերման ձևերով զանազանելու» («Հայցական հոլովը», էջ 37):

5. Արեղյանն, ի վերջո, հերքում է նաև հայցական հոլովի պատկանության Մալխասյանցի փայտյաձ գործնական և մանկավարժական նախադրյալները՝ ապացուցելով, որ՝

ա) Քերականության մեջ հոլովների ուսումը բաժանվում է երկու բաղադրիչների. մեկը՝ հոլովական ձևերի սեռակալորումն ու սեռականի բաժանումն է, իսկ մյուսը՝ այդ ձևերի արտահայտած ֆունկցիաների սեռակալորումը: Գրադուս համակարգի և արամարանական սկզբնախոսության սեռակալորը աններքի է, երբ «հոլովական ձևերը սեռականի բաժանումը ժամանակ... հոլովների մի մասի համար երբ բաժանման հիմք ընդունվում է թառակն» (իր նշանակությամբ, այսինքն բաժանմանը ներհեմո կակոնրան): Այն յուր մասի համար (ինչպես հայցական հոլովը) բաժանման հիմք են դարձնում «միմիայն ֆունկցիան ստանց բաժանել, այսինքն միայն ներհեմո»: Այս անհերչա բաժանումն էլ խանաշիտության է ստացանում աշակերտների ժող հոլովական ձևերի ու երանց արտահայտած հարաբերությունների ըմբռնման շուրջ: Հնուհարար, պիսկ է ճշտել այդ բաժանման սկզբույնը և հայցական հոլովը իբրև ձևերի հաստատուն կերպություն չունեցող՝ նկարանության մեջ զուրս դնել հոլովների շարքը, իսկ հայցականի արտահայտած հարաբերությունները, որ, ինչպես պատմականորեն կատարվել է մեր լեզվում, մացնել ուղղականի և տրականի արտահայտած հարաբերությունների շարքում: Դրանով, հակասակ Մալխասյանցի պիզումներին, շատ ավելի կոյուրանա հայերենի քերականության ուսուցումը:

բ) Հայկարանորեն միշտ չէ հայցական հոլովի ձևական բնչունումը, որ միայն սուրբ է սուր լեզուներին: «Մեր լեզվի քերականության մեջ,— գրում է Արեղյանը,— դրեն շարի պղտորեցը մեր ստանց այն էլ սուր լեզուներին պղտորված լեզվական զյացումները: Մեր լեզուն հին հայցականի արտահայտած հարաբերությունները մացրել է ուղղականի արտահայտած հարաբերությունների ձևական խմբի մեջ, մասամբ և տրականի. հետևել որբեն մեր լեզվին, մեր բնական լեզվական զյացումներին» («Հայցական հոլովը», էջ 79):

Հայցական հոլովի հարցում Արեղյանի բերած լեզվա-մեթոդաբանական, քերականագիտական, պատմական և արամարանական զբնի բուրբ հիմունքները տեսականորեն և գործնականագուս պատճառաբանված լին և արդարացի: Դրանք բխում էին աշխարհաբար հայերենի հոլովական համակարգի պատմական զարգացումից և լեզվի քերականական ստույգ հասկանիչների հայտնաբերումը: Այդուհանդերձ, մի ստարմուլ ու պատկանողական մտախոնքությամբ, հայ քերականագիտությունը ճեռապայում զարթուլ կառած մնաց հինի և որդեգրով պատմական չեն վազուց մահացած հայցականի թրտխիլարը՝ զուր մանքարքեր ու մանքարեունեց արդի հայերենի հոլովների ուսումները:

մեր, ձեր, իսկ արեւելյան աշխարհարարում բացի դրանցից նաև սրա, դրա, նրա»<sup>1</sup> (ընդգծումներն իմն են— Ս. Է.):

Հոլովական գույզ ձևերի նույնացումն աշխարհարարում, և այդ օրինակաբանությունից դուրս մնացած հիշյալ բացառություններն Արեղյանին մղում են պատմական մանրակրկիտ բնության ենթադրելու իմ, քա, յուր, մեր, ձեր հոլովական ձևերը և դրանց գոյա-սեռումը բացատրելու քերականական հետևյալ իրականություններով—

ա) Վերորհրչյալ բառերը զրարարում թե՛ անձնական զերանվան սեռական են և թե՛ ստացական ածական: Գրվելով անվան վրա՝ դրանք սովորաբար համաձայնվում են որպես ածական (հայր իմ, հօր իմ, ի հօր, ի մայր և այլն): Այս ստանձնիչ գործածությունն էլ է ահա, իբրև ածական «թույլ չի տվել, որ այդ ձևերն ազդվին այն բնդհանուր ձգտումից, որով սեռական և արական հոլովները նույնացել են մեկը մյուսի տեղ անցնելով: Դրանք պահպանվել են ոչ թե իբրև սեռական հոլով, այլ իբրև ստացական ածականներ, որոնք, ինչպես ուրիշ ամեն մի ածական՝ իրենց գոյականից առաջ զրվելով՝ աշխարհարարում անփոփոխ են մնում, ուստի և ձևով նույնանում անձնական զերանունների սեռականի հետ»<sup>2</sup>:

բ) Աշխարհարարում հիշյալ բառերի սեռական համարված գործածությունները համապատասխան են «զրարարի նույն բառերի իբրև ստացական ածական գործածությունը, ուստի և դրանք մնացել են իբրև ստացական զերանուն և ոչ թե իբրև անձնական զերանունների սեռականներ»<sup>3</sup>: Վերջինները աշխարհարարում դուրս են բնկել և փոխարինվել են իձն, քեզ, մեզ, ձեզ և այլն արականով:

Այս հանգամանքներից ելնելով էլ, Արեղյանը հանգում է այն լեզվաբանոր կրթակացությանը, թե անձնական զերանունների նկատմամբ սեռական և արական հոլովների նույնացման մեջ աշխարհարարը բացառություններ չի թողել:

Ցուցական սրա, դրա, նրա և սրան, դրան, նրան զերանունների կրկնակի ձևերի բնությունը պարզում է, որ ե-ն կերպով ձևում հոլովակերտ մասնիկ է, հետազարում է հոյ բյուրնովել, և այդ երկբորոգ ձևից էլ ծագել է առաջինը՝ սրա, դրա, նրա: Այսինքն, հիշյալ ցուցականների կրկնակի ձևերը «միևնույն հոլովական ձևն են, միայն վերջում և ունենդոները, անվանական հոլովման ազդեցության տակ, իբրև արական են գործածվում, մինչև առանց ե-ն-երի

1 Մ. Արեղյան, Աշխարհարարի հոլովները, էջ 34:

2 Անդ.

ձևերը սովորաբար իբրև սեռական են բանում»<sup>4</sup>: Եվ Արեղյանը գալիս է այն կրթակացության, թե «Երգում... ցուցականների սեռական և արական հոլովների նույնացման մեջ ևս բացառություն չի թողել»<sup>5</sup>:

Այսպես, Արեղյանը անձնական և ցուցական զերանունների մեջ պահպանված սեռական-արական հոլովական ձևերի բնական վերլուծությունների շնորհիվ ապացուցում է, որ այդ ձևերն բառ էություն միևնույն հոլովական ձևն են, ուստի և «Հայերեն քերականության մեջ մի հոլով դիտի դեմ և հատկապես արական հոլով, իսկ սեռականը նրա գործածություններից մեկը միայն համարել»<sup>6</sup>:

Աշխարհարարում սեռականի գլխավոր կերպարությունների համոզիչ բնությունը հանգում է այն ապացույցին, որ սեռական ու արական հոլովները ոչ միայն ձևով են նույնացել, այլ նույնացել են հաստի նշանակությամբ ևս, բմբռնվելով որպես մի ընդհանուր հոլով: Վերջինս Արեղյանն առաջարկում է կոչել արական հոլովանունով այն միշտ հիմնավորմամբ, թե «Սեռականի գլխավոր նշանակություններն ունի և արականը կամ թե արականի նշանակություններով կարելի է բացատրել նաև սեռականի գործածությունները»:

Բայց Արեղյանը սեռական-արական հոլովաձևեր բնարկում է նաև պատմական տեսակետից՝ ստուգարանորեն: Գրարարում հոլովաձևերի աստիճանական զարգացման խորահանու հետազոտություններից նա գալիս է այն կարևոր կրթակացությանը, որ աշխարհարարի սեռական-արականի վերջավորությունները (ի, ու, ա, (—ալ), սե, վաճ) «սկզբնապես ոչ թե հոլովական վերջավորություն են եղել սեռականի կամ արականի, այլ բնի մաս (ու վերջավորությունը նաև ձայնաշարքում առաջացած), որ ապա իբրև վերջավորություն են բմբռնվել Գրանք Հայերենում կազմված հոլովակերտներ են և կազմված են այն ժամանակ, երբ հին սեռական և արական հոլովները անունների մեջ նույնացած են եղել՝ կամ հնչափոխության կամ անալոգիական կազմությամբ նույն ձևն ստացած լինելով: Հետևաբար աշխարհարարի այս հոլովակերտ վերջավորությունները առաջ են եկել ոչ լուկ իբրև սեռականի, կամ լուկ իբրև

1 Մ. Արեղյան, Աշխարհարարի հոլովները, էջ 34:

2 Անդ, էջ 35:

3 Անդ, էջ 38:



տրականի վերջավորություն, այլ իբրև մի ընդհանուր վերջավորություն այդ երկու հոլովի համար<sup>1</sup>։ Այսինքն, ստուգարանորեն դրանք նույնչափ տրականի վերջավորություն են, որչափ և սեռականի, բայց իրականում՝ ոչ այլ ինչ էն, քան կթն ռնոր, ընդհանուր ձևեր։ Ուստի ստուգարանորեն ևս ի, ու, ան, վաճ վերջավորություններով կազմված հոլովաձևերը, ինչպես և ետբա, ետբա, իրան, իրա—մի ընդհանուր հոլովական ձև են։ Եսայբ վերաբերում է նաև ոչ, ց վերջավորություններով կազմված և առանց վերջավորությանը, սոսկ միջի ձայնավորի փոփոխամբ կազմված (հայր-հոր, տուն-տան) սեռական-տրականին։

Այդ բազմակողմանի հիմնավորմանի հետև է միայն Արեղյանը դալխ այն վերջնական հետևությունը, թե սեռական և տրական միևնույն հոլովաձև ունեցող հոլովները ձևաբանության մեջ պետք է դնել մեկ հոլովով, այն անվանել տրական, իսկ սեռականը՝ իբրև տրականի մի գործածությունը միայն, որպես անվան վերադիր։

Այսպես, ուրեմն, Արեղյանը աշխարհարարի հոլովներից ներկրամ իր երկու նշանավոր աշխատություններով բնույթ է հայտնաբերողական քերականագիտության հոլովների ուսմանը և գիտական խոր հիմնավորումներով հերքում այնտեղ կարծացած հայտնականի և սեռականի գոյության հաստատումը։ Մեծ գիտնականին հատուկ խիզախությամբ դեռ նետելով հոլովների մասին ավանդական ու օտար բովանդակները, Արեղյանը կնքելով բուն հայոց լեզվի ողուց ու դարգացման միտումներին, լեզվաբանական կայուն սկզբունքներով որոշակիորեն իրարից տարբերում է հոլով՝ բառ ձևի և հոլով՝ բառ նշանակության կամ կիրառության։ Ըստ այսմ էլ, նա արևելյան աշխարհարարում, քանի որ լեզուն ձևով հինգ հոլով է գտնադրում, ձևաբանորեն բնութագրել է հինգ հոլով, որոնք արտասանություն են նարչաճյուսական տարբեր հարաբերություններ։

Արեղյանի գիտականորեն միանգամայն հիմնավոր այս սեռությունը՝ հետագա հայ քերականների կողմից անարդարացիորեն մերժվեց, հուշակվեց ֆորմալական<sup>2</sup>։

1 Մ. Արեղյան, Աշխարհարարի հոլովները, էջ 82։  
2 Արքի, հասկանալի երբեքայտեղ լեզվաբանների մի հոծ խումբ, ինչպես ցույց տվեցին 1966 թվականին և հետագայում ժամանակակից Հայերենի հոլովների մասին Սովետական գրքերի-ի, «Սոստա-բանականի» հանդես-ի էջերում ծավալված և շք. Անտոյանի լեզվի ինստիտուտի 1966-ի նոյեմբերի 2—22-ը կազմակերպած դիտական բանավեճերը (վերջինի մասին անս հան Սովետական Հայաստան օրաթերթ, 1966, № 288), անարդարացի ընդունում է Մ. Արեղյանի

Աշխարհարարի քերականության կենտոտ խնդիրներից՝ Արեղյանի ուշադրությանն է այժմանում բայական եղանակների և դրանց սահմանման ու տարրերագատման հարցը, որին նա նվիրում է իր հարցը՝ «Քալի եղանակներն արևելյան աշխարհարարում հետազոտությունը»։ Խնդիր, որի առաջին արժարժողն էր Արեղյանը, գործնականում ու գիտականորեն անմշակ և թերատ էր մնացել հայ քերականագիտության մեջ։ Հաջվի անելով մարդկային մտածողության եղանակների ընդհանուր օրինաչափությունները, բայական եղանակների իր համակարգը Արեղյանը հիմնում էր կանախ կատեգորիաների, հասկանալի տրամաբանական դատողությունների եղանակների մասին սահմանված ուսմունքի վրա։ Ըստ այսմ, Արեղյանը, համապատասխան դատողության երեք եղանակների<sup>3</sup> ստեղծարի (հաստատական, իրական), պորբեմասիկ

հինգ հոլովի տեսությունը և շանք է թափում գործնականում արժատարել այն դարձական և գիտական քերականություններում։ Բանավեճային հողվածներից բացի, ապագրվել է արդեն երկու այլատեսություն նվիրված ժամանակակից հայերենի հոլովների խնդրին, մեկը՝ գոցենա Հովհ. Բարսեղյանի «Մանուկ Արեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր բնագիտությունները» դրույթի է (Երևան, 1967, 76 էջ), որը լինելով լեզվի ինստիտուտում կազմակերպված բանավեճի հիմնական զեկուցումը, բնագիտական սրամբ ու անպատկառ լեզվաբանության և Արեղյանի հոլովական տեսության բնագիտության պատմության գիտական ու հակագիտական հիմունքները, միաժամանակ նոր կովաններով կրկին հիմնավորում Մ. Արեղյանի հինգ հոլովի տեսությունը և պաշտպանում այն։ Երկրորդը՝ պրոֆ. Գ. Զահեկյանի «Ժամանակակից Հայերենի հոլովման համակարգը» պրոֆ. Գ. Զահեկյանի «Ժամանակակից Հայերենի հոլովման համակարգը» հետազոտությունն է (Երևան, «Միտո» հրատ., 1987, 90 էջ), որ հեղինակը մասնական կառուցվածքա-բնագիտական կամ հարաբերակցային քերականագիտության մեթոդներով, հանգամանալից բնութագրելով արդի Հայերենի հոլովման մասին համակարգը, պարզում է, որ «Ժամանակակից Հայերենում կա 5 հոլով՝ ուղղական (բացարձակ), տրական (հասկանալի), բացառական (անբացառական), գործիական (ուղեկցային) և ներդրական (պարունակային)»։ «Ուղեկցական», «Նույնական» և «սեռական» անկախ հոլովներ (անփոփոխական) չեն, այլ առաջին երկու հոլովների (անփոփոխականի) դիրքային տարբերակները (փոփոխական)» (անդ, էջ 90)։

Այդպես, պրոֆ. Գ. Զահեկյանը լեզվաբանական նորագույն մեթոդներով ու նորոգ բնութայիններով կրկին անգամ հաստատում է այն, ինչ Արեղյանը գիտական լեզվագիտության սկզբունքներով պայտուցել էր վեց ստանդարտ առաջնորդում Արեղյանի հոլովական տեսությունը փայտուն բնութային է բունում արդի լեզվագիտության հետազոտական ստույգ մեթոդների գիմաց և կրկին անգամ պայտուցում իր գիտական նշքրությունները։

1 «Արարատ», 1912, № 2, էջ 170—181, № 3, էջ 261—271։

(անդժամային, երկբային, խնդրական) և ապոդիկտիկ (անհրաժեշտ), առաջ է քաշում բայական եղանակների խնդրոք և իրավա-ցիրենն գտնում, որ ասերտորիկ դատողությունը համապատասխան է բայի (իմա՝ գործողության, լինելիության) սահմանական եղանակին, պրոբնեմատիկը՝ կարելիության կամ ներադրական եղանակին, իսկ ապոդիկտիկը՝ հաերկարական և հրամայական եղանակներին: Այս երեք եղանակավորումը, Արեղյանը բոլոր լեզուների համար հատկանշական է համարում, բայց զրանց արտահայտության ձևերը տարբեր՝ հատկապես կարելիական և հարեադրական եղանակների նկատմամբ: Վերջիններին խնդրոք ներգրգողական մի քանի հին ու նոր լեզուների (հունարեն, լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) համեմատությամբ քննելով, ցույց է տալիս, որ զրանց համար շատ լեզուներում, նաև հայերենում, լիան հատուկ բառաձևեր, այլ հիշյալ եղանակներն ստեղծվում են բայեր վրա եղանակի բառերի կամ մասնիկների վերադրումով: Ըստ այս, Արեղյանը տարբերակում է խոսքի (իմա՝ նախադասության) տրամաբանական բնույթը նրա քերականական բնույթից, և գրտնում, որ եղանակական բառերն ու մասնիկներն հենց բայի քերականական միևնույն ձևին հարողում են տրամաբանական նոր իմաստ ու երանգ, որով իսկ խոսքը ձևով թեպետ մնում է սահմանական, բայց նշանակությամբ դառնում է հարեադրական կամ կարելիական:

Աշխարհարարի համար նշվում է մեկ եղանակավորիչ բայ (պիտի) և մեկ մասնիկ (կր), որոնցով կազմվում են հայերենի այն եղանակները, որոնց հատուկ քննությանն է նվիրում Մ. Արեղյանը իր նշված հետազոտությունը: Մինչ այդ, արևելահայերենի քերականության մեջ (Պալասանյան) կր մասնիկով կազմված բայերի ներկայի և անցյալի ձևերի միջև եղանակային տարբերություն էր դրվում. առաջինը (ներկան) դիտվում էր իբրև սահմանական եղանակ, իսկ երկրորդը՝ իբրև պայմանական եղանակ:

Նման արհեստական սահմանադրումն Արեղյանն իրավա-ցիրենն սխալ է համարում, որանց տարբերությունը տեսնելով ոչ թե եղանակավորման, այլ սուկ ժամանակի մեջ: Եվ այդ, առաջ է քաշում կր մասնիկով կազմված բայերի եղանակի մի նոր բարդու-նում, որն, իր արտահայտությամբ՝ սուլ սահմանական է... և ոչ

<sup>1</sup> Հմմտ. Սոս. Պալասանյան. Ընդհանուր անալոգիան, էջ 69—70, նույնի՝ «Բն-թականություն մարենի լեզվի», Քիֆլիս, 1874, էջ 144 և հասն:

պայմանական, այլ մի կարելիական կամ նեթադրական եղանակ-կամ լավ ևս՝ ըզձական եղանակ կարելիական նշանակությամբ:

Իր այս նոր հարցադրումը Արեղյանը հիմնավորում է լեզվա-համեմատական մի շարք քննություններով, հատկապես ներգրգող-ական մի բանի հին ու նոր լեզուների նկատմամբ, և ապացու-ցում, որ՝

ա) արևելահայ աշխարհարարում գոյություն ունի ցանկությամբ խոսքի կազմող երկու եղանակ՝ հրամայականը և ըզձականը.

բ) հրամայականով արտահայտված ուղղակի խոսքը, երբ փոխվում է անուղղակի խոսքի՝ հրամայականը դառնում է ըզձա-կան.

գ) ըզձականը գործածվում է նաև որպես «նպատակի խոսք» որ բնույթով է իբրև մի ցանկացած հետևանք» և որպես՝ պայմա-նական խոսք.

դ) գնամ, գնայի ձևերը, որ Պալասանյանը ստորագրատական եղանակ է համարում հատկապես նրանց մեկ ուրիշ բայի ստորա-դասվելու համար, այսինքն այն բանի, որ դրանք իբր թե գլխավոր ու անկախ խոսք չեն կազմում, այլ երկրորդական,— Արեղյանը սխալ է համարում, քանզի դրանք կազմում են և՛ անկախ, և՛ երկրորդական խոսքեր:

Արեղյանը դարձյալ մանրազնին քննություններով բացահայ-տում է կր մասնիկով կազմված ըզձականի կիրառությունները և ապացուցում, որ «կր մասնիկը գրվելով ըզձական եղանակի վրա, տալիս է նրան կարելիական նշանակություն», այսինքն վերանում է կարելիական կամ երբադրական եղանակի: Դրանով իբրև նա մեկերգմիշտ վերջ է դնում արևելահայերենի քերականության մեջ Պալասանյանի արմատավորած կր մասնիկով կազմված ըզձականի ներկայի ու անցյալի ձևերը երկու տարբեր եղանակների երկփեղկ-մանը և հիմնավորում, որ կր գնամ և կր գնայի իբրև եղանակավորու-թյամբ: «Դրանք ըզձական են կարելիական նշանակությամբ գոր-ծածված», իսկ որպես ստանձին եղանակ՝ այն կոչում է նեթադրա-կան, որն իր իմաստով համապատասխանում է նշված բայաձևերի թե՛ կարելիական և թե՛ պայմանական գործածություններին:

Այդպ. պիտի բառով կազմված ըզձականը (պիտի գնամ, պիտի գնայի) նշանակությամբ Արեղյանն իրավամբ համարում է ան-հրաժեշտություն. հարկ ու պիտե արտահայտող, և դա կոչում է հարեադրական եղանակ, զուգահեռ գործածական՝ սահմանականի:



վրա հղանակային մակրայական լրացումներով հարկադրանքների (անպայման ցալիս է, պարտավոր է զնալ և այլն), որ ձևով սահմանական է, բայց իմաստով հարկադրական: Արեղյանն, այդպիսով, հակասում ու սպառնացում է ենթադրականի ու հարկադրականի առանձին գոյությունը արևելահայերենում, միաժամանակ նորովի է մեկնարանում պիտի է կը եղանակիչների ծագումը. գտնելով, որ պիտի-ն՝ պիտիմ բայի եզակի երրորդ դեմքն է, ժամանակի ընթացքում վերածված բարացած մակրայաձև բառի, իսկ կր-ն, հակառակ Այառնյանի մեկնությունն, ծագած է համարում կր, կու, կա, կի ձևերից և դրան վերադրում հերթերդական ծագում ու բնօրհանություն:

Ժամանակակից հայերենի բերականական նոր համակարգության մշակումով և եշված նոր իրակությունների հայտնաբերումով Արեղյանը փաստորեն նախապատրաստում է արևելյան աշխարհարարի գիտական՝ բերականություն ստեղծման անհրաժեշտ նյութական հիմքերը:

### 3. ԱՐԵՎԵԼԱՆԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

#### Ա. ՇԱՐԱՆՑՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

«Աշխարհարարի բերականությունը» Արեղյանն արդեն մշակել էր արևելահայերենի ձևաբանության, մասամբ և հնչյունաբանության և բառագիտության նոր համակարգը, իսկ «Աշխարհարարի հոլովներ»-ով, «Հայցական հոլով»-ով և «Բայի եղանակներ»-ով նա տեսականորեն հիմնավորում է «Աշխարհարարի բերականությունը» մեջ ստեղծ բաշած հոլովական ու բայական համակարգերի իր նոր գոյությունը: «Աշխարհարարի բերականությունը» արամարանական

1 «Գիտական» բառը այստեղ օգտագործվում է որոշ պայմանականությամբ: Ոչ Արեղյանի «Աշխարհարարի բերականություն»-ը, ոչ «Աշխարհարարի շարաշյուսություն»-ը և ոչ իսկ 1931-ին ճրատարական «Հայց լեզվի տեսություն»-ը իրենց հետազոտված նպատակով՝ գիտական բերականություններ չէին ակադեմիական լայն հասկացությամբ: Դրանք մանկավարժական որոշակի նպատակներով գրված գիտադրեր կամ ձեռնարկներ էին, որոնցից առաջինը նախատեսված էր դպրոցների ստորին դասարանների, երկրորդը՝ բարձր դասարանների, իսկ երրորդը՝ ուսանողության համար:

Այսուհանդերձ, Արեղյանի այդ աշխատությունները դասադրային տեսքով գիտական լուրջ ու մանրախույզ հետազոտություններ են՝ ծավալային սեղմ ու խիստ ձևերի մեջ գրված ձեռնարք, լուծված դրանք հայերենի բերականության գիտական մշակումներ են՝ բարձր մակարդակով ու պահանջներով իրագործված:

հաջորդ քային է դառնում արևելահայ աշխարհարարի շարաշյուսության հետազոտությունը: Նույն 900-ական թվականների երկրորդ կեսին, «Աշխարհարարի բերականություն»-ից հետո, Արեղյանը ձեռնարկում է և ավարտում «Աշխարհարարի շարաշյուսությունը», որը հեղինակից անկախ պատճառներով տպագրվում է միայն 1912 թվականին<sup>1</sup>:

Արևելահայ աշխարհարարի շարաշյուսության մինչ այդ եղած լավագույն ուսումնասիրությունը սահմանափակվում էր Ստ. Պալասյանի «Մայրենի լեզվի բերականության» էջերում<sup>2</sup>, իբրև հավասար ու բազմազան մաս բերականության մյուս բաժնի՝ ստուգաբանության: Նա, շարաշյուսությունը վերաբերող նախադասության կազմությունն ու տեսակները դիտում և բննում է «Քերականություն» սկզբում՝ խոսքի մասերի կիրառությանն առնելիք, իբրև խոսքի կազմության ձևեր: Մինչդեռ շարաշյուսական մյուս հատկացությունները՝ համաձայնություն և խնդրատություն, «Բազմաշյուսություն» անվան տակ դնում և բննում է «Քերականություն» վերջում, իբրև խոսքի մասերի և նախադասությունների կապակցության ձևեր: Պատասխաններ իր «Քերականություն» առաջին մասում խոսքի մասերն ևս մտնելում է իբրև շարաշյուսական իրակությունների և խոսքի մասերի նշանակությունը դիտում է շարաշյուսական տեսակետից, մասնավորապես նախադասության մեջ նրանց ունեցած պաշտոնները կկատար առնելով. այսինքն, մտապիտայան այն ձևով, ինչպես խոսքի մասերը վերառելի ու բննելի էր ուսուցիչի իր

1 «Աշխարհարարի բերականության» առաջարանում (Հայագրագիտ., 1906, էջ 9) Արեղյանը վկայում է, որ «Այս բերականության» իբրև երկրորդ մաս կը հատուկ Այառնյանի շարաշյուսությունը (սխառագիտ.) և Նուստրոպյան, որ արդեն պատրաստ է տպագրության և հորինված է զգրանցողների վերին դասարանների համար՝ ավելի ընդարձակ չափով, բան այս ընդառնությունն ու բառափոխությունն ստանալուց: Մյուս կողմից այս գիտադրերը լույս չի տեսնում Արեղյանի հետապնդում վկայում է, որ «1912 թ. ճրատարական այդ լեռ» (Մ. Արեղյան, Մի քանի բերականական խնդիրների մասին, էջ 131, ստորագր.):

2 Ավույն, 1912-ին տպագրած «Աշխարհարարի շարաշյուսության» նախարանում (տ՝ա՝ էջ 7) Արեղյանը նշում է, որ «ստորինը առողջ արդեն սպառաքում է կելի այս «Աշխարհարարի շարաշյուսությունը», բայց հանգամանքներն ու կրթական սղությունը թույլ չէին տալին նույնիսկ երկու տարուց ի վեր սկսած տպագրություն ավարտել: Արեմն, պետք է ենթադրել, որ արդեն 1910-ին տպագրության հանձնված այս երկրորդ «Աշխարհարարի շարաշյուսություն»-ը զրվել կամ հիմնովին վերամշակվել է 1906-ից հետո:

2 Ս. Պալասյան, Քերականության մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874:

շարահյուսության մեջ Ֆեոդոր Բուլաևեր<sup>1</sup> Արդեն իրավամբ գիտա-  
ված է, որ Պալասանյանը բերականացիտական իր հայացքներով  
հետևում էր սուսական դասական լեզվաբանության ներկայացուցիչ  
Ֆ. Բուլաևերին, մասնավորապես նրա բերականության տրամաբա-  
նական սկզբունքներին<sup>2</sup>։ Բայ տրամաբանական բերականագիտու-  
թյունը սկզբնավորվել էր XIX դարի ստաչեին կեսերին և բերակա-  
նական վերլուծումների հիմքում դնում էր «տրամաբանական վեր-  
լուծության սկզբունքները և բերականական կատեգորիաները գի-  
տում որպես տրամաբանական կատեգորիաների ուղղագիծ արտա-  
հայտությունները»<sup>3</sup>։

Հայ բերականագիտության մեջ դառնալով տրամաբանական  
ուղղության հետևորդն ու ներկայացուցիչը, Ստ. Պալասանյանը  
ինչպես իր «Քերականության» ստուգաբանության, այնպես էլ  
շարահյուսության, այսինքն խոսքի կազմության ու մասերի բաղ-  
դասության հատվածներում, առաջնորդվում է տրամաբանական բե-  
րականագիտության սկզբունքներով։ Նա իր «Քերականության»  
չորսհատուկ կառուցվածքի հիմքում, որ ի ղեկավարելովում էր  
Բուլաևերի «Քերականության» կառուցվածքից, դնում էր նախա-  
դասությունը (այլ կերպ ասած՝ դասադրությունը)։ Պալասանյանը իր  
«Քերականություն»-ն սկսում է նախադասության կազմության  
ընտելությունից և խոսքի մասերի բնորոշման ելակետն է դարձնում  
նախադասության մեջ նրանց կատարած պաշտոնը<sup>4</sup>։

Քերականական հատկացությունների վերլուծման մեկնակետ  
դարձնելով նախադասությունը (իժա՝ դասադրությունը), բնակա-  
նաբար, նա պետք է իր «Քերականության» մեջ առավել մեծ տեղ  
հատկացներ շարահյուսական իրողություններին, քան ստուգաբա-  
նական կամ արդի տերմինով ասած՝ ձևաբանական երևույթներին։  
Եվ այդ, իրականում, կազմում է Պալասանյանի «Քերականության»  
նվարահատկությունը։ Պալասանյանը արևելյան աշխարհաբարի բե-  
րականության մեջ, երևելով ժամանակի ընդհանուր բերականագի-  
տական մտքի նվաճումներից, առաջին անգամ մեզանում մշա-  
կում է արևելահայերենի շարահյուսությունը, որը մինչև  
Արևելյանի «Շարահյուսության» հանդես գալը, առանձնակերպ

շարունակ մնում է արևելյան գրական աշխարհաբարի միակ և  
լավագույն բերականությունը։

Եթե Ստ. Պալասանյանը տրամաբանական բերականագիտության  
տեսանկյունից իր «Քերականության» արտացոլում էր ու նոր-  
մալորում XIX դարի 60—70-ական թվականների գրական արևե-  
լահայերենի բերականական իրակությունները, ապա Մանուկ Աբեղ-  
յանը ընթացիկ դարասկզբներին իր «Աշխարհաբարի բերականու-  
թյամբ» և մանավանդ «Աշխարհաբարի շարահյուսության» եկավ  
հետազոտելու դարգացած արևելահայերենի գրեթե բոլոր էական  
երևույթները, հիմնականում հետևելով երրորդականների մշակած  
արդյունավետ մեթոդներին և ուսմանը<sup>5</sup>։

«Աշխարհաբարի բերականություն»-ը քննելիս տեսանք, որ  
Աբեղյանը բերականագիտական ելակետ է դարձնում խոսքը (նա-  
խադասությունը), այսինքն եղևում է լեզվի երկու կարևոր ֆունկ-  
ցիոններից, նրա՝ 1. մտածուրջան (իժա՝ հոպերանական գոտո-  
ղության) հեշտունական-բառային արտահայտություն և 2. հազար-  
զակցման միջոց լինելուց։ Ըստ այսմ էլ նա բառերը տեսակավորում  
է ըստ նրանց նշանակության և խոսքի նկատմամբ կատարած  
պաշտոնի։

Աբեղյանը լրացնելով բառերի տեսակների մասին «Աշխար-  
հաբարի բերականություն» մեջ արժարած իր տեսակետը<sup>6</sup>, բառերն  
ըստ իրենց նշանակության բաժանում է երկու դիվալոր խմբի.

1. զգացմունք և կամք արտահայտող բառերի (ձայնարկու-  
թյուն), որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով, զուրա են  
մնում խոսքից.

2. զազալիար կամ պատկերացում ցույց տվող բառերի, որոն-  
ցով խոսվում և մտքերն հաղորդում են ուրիշներին։ Վերջիններին՝  
խոսքի նկատմամբ կատարած պաշտոնը նկատի առնելով, Աբեղ-  
յանը դրանք բաժանում է 3 խմբի.

ա) խոսք կազմող բառերի կամ բայի, բ) լրացական բառերի  
և գ) կապակցական բառերի, որոնք ոչ խոսք են կազմում ոչ էլ  
լրացում, այլ միմյանց են կապում բառերն ու խոսքերը։

Եթե բառերի նշանակության ընտելությունը Աբեղյանը վերապա-  
հում է իմաստաբանությունը, ապա բառերի պաշտոնը խոսքի  
նկատմամբ նա դարձնում է շարահյուսության ընտելության առաք-  
կան։ Թե՛ ըստ իմաստի և թե՛ ըստ պաշտոնի անհել ենք ես, որ Ա-  
բեղյանը խոսքի մասերի մեջ կենտրոնական տեղը հատկացնում է

<sup>1</sup> Հմմտ. Փ. Բյւճևան, Опыт исторической грамматики русского языка, часть II, Спнтаксис, М., 1858. էջ 119—220.

<sup>2</sup> Խ. Գաբրիլյան, Ս. Աբեղյանի բերականագիտական մտածողությունը, էջ 149.

<sup>3</sup> Կ. Չախալյան, Լեզվաբանության դասավորում, հատ. 1, Երևան, 1960, էջ 278 և հան.

<sup>4</sup> Տե՛ս Ստ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, էջ 33 և հան.

<sup>5</sup> Մ. Աբեղյան, Աշխարհաբարի բերականություն, էջ 40:



բային: Իսկ խոսքը դիտելով որպես հոբերանական դատադության (մտածութեան) բառական արտահայտություն, նա իրաւամբ խոսքը համարում է բայով արտահայտված մտածութիւնը, քանզի «խոսք կազմում է բայը»<sup>1</sup>:

Եվ քանի որ շարահյուսութիւնը խոսքի (նախադասութեան) կազմութեան ուսմունքն է, ապա, բնականաբար, նա շարահյուսութեան նկատմամբ ևս դարձնում է «խոսքի կենտրոնը»<sup>2</sup> բայը: Արդարև դիտվել է արդեն, որ Արեղյանը «շարահյուսութիւնը և ձևաբանութիւնը վերցնում է որպէս մի միասնական ամբողջութիւն, նրանց կենտրոնում դնելով բայը»<sup>3</sup>: Խոսքի կամ նախադասութեան, իբրև բառերով արտահայտված մտածութեան, էությունը Արեղյանը տեսնում է ստորոգման հատկութեան մեջ, այսինքն, երբ «մի տարրական վերադրում է մի հատկանիշը»: Խոսք կազմելու համար անվագն պարտադիր համարելով ամենաբացի երկու գաղափարի՝ տարրական և հատկանիշի, ինչպես նաև՝ ստորոգման անվագութեան հանդեմանը, Արեղյանը տարրիկ կամ անավրկայի գաղափարը, իբրև խոսքի բաղադրիչ մաս, համարում է ենթական, վերջինիս վերագրելով հատկանիշը կամ հատկանշի գաղափարը՝ ստորոգյալը: Ենթական և ստորոգյալը որակելով սոսկ խոսքի նյութ, նա, այդ նյութին խոսքի ձև ապա հատկութիւնը տեսնում է ստորոգման մեջ, որ իրականացվում է բայով: Հետևաբար և խոսքի կամ նախադասութեան միջուկը կազմում է բայը: Արեղյանը բայի մեջ արտահայտված է տեսնում ոչ միայն ստորոգման հատկանիշը, այլև ենթականի և ստորոգյալի գաղափարներ: Բայի դեմքը արտահայտում է ենթական, բայիմաստը՝ այն հատկանիշը, «որ իբրև ստորոգյալ վերադրում է ենթականին», իսկ ստորոգումը արտահայտում է բայիմաստի և գեմքի մեկ բառի մեջ միացած լինելու հանգամանքով:

Բայի այս հատկանիշներն էին, որ Արեղյանին հաստատել էին տալիս, թե ինչպէս է բայը... մենակ կազմում է մի խոսք», թե «խոսքը... մտածութեան արտահայտութիւնն է բայով», թե «տառանց բայի խոսք չկա»<sup>4</sup>:

Սակայն բայը, գեմքի և բայիմաստի գլխավոր գաղափարներին բացի, նշանակում է նաև ուրիշ երկրորդական գաղափարներ ևս, որոնք գալիս են պարզելու, լրացնելու խոսքի իմաստը: Բայի

կամ խոսքի իմաստը լրացնող, որոշող ու պարզաբանող գաղափարներն արտահայտող բառերը Արեղյանն անվանում է «լրացական բառեր», որոնք ըստ իրենց նշանակութեան ցույց են տալիս կամ տարրական կամ հատկանիշ կամ պարզաբան և ըստ այդմ լինում են՝ պրոպիան, անական և մակբայ: Այդ լրացական բառերը կամ լրացումները ըստ պաշտոնի նա համարում է՝

1. Ենթական (բառ-ենթական), «որ պարզում է բայի գեմքը, գեմքի հետ ներուսական հարաբերութիւնը»:

2. Ստորոգյալը, որ պարզում է էական եմ (լինեմ) բայերի բայիմաստը, ենթականի (կամ գեմքի) հետ ներուսական հարաբերութիւնը...

3. Չանաղան ինդիքները և պարագայական լրացումները, որոնք պարզում են բայիմաստը (կամ ստորոգյալը), վերջինիս հետ կախման հարաբերութիւնը: Բացի սրանից կան նաև ոչ-անմիջական կամ կողմնակի լրացումներ (լրացման լրացումները)<sup>5</sup>:

Եվ ինչպես հոբերանական գաղափարի մեջ երկու անգամ կա, այնպես էլ բերականական նախադասութիւնը Արեղյանը բաժանում է երկու մասի. «մեկ կողմում՝ բայի գեմք-ենթական իր լրացումով և լրացման լրացումներով, մյուս կողմում՝ բայիմաստ-ստորոգյալը իր լրացումներով և լրացման լրացումներով»<sup>6</sup>:

Շարահյուսութեան, իբրև խոսքի կազմութեան ուսմունքի, բուն նպատակն, ահա, Արեղյանը համարում է բնագրական խոսքի մեջ ենթականի և ստորոգյալի նշված բարդ պատկերացումները կազմող բաղադրիչ մասերի՝ բառերի հարաբերութեան և կապակցութեան մեկեր ուսումնասիրութիւնը<sup>7</sup>:

Սկզբունքային այս կլակետով էլ Արեղյանը կատարում է արեւելահայ աշխարհաբարի շարահյուսութեան իր ինքնատիպ հետազոտական համակարգը:

Շարահյուսութեան, որպէս խոսքի կազմութեան ուսմունքի մեջ Արեղյանի համակարգման սկզբնական կլակետը՝ նախադասութեան պարզ և բարդ տեսակների տարբերակումն է: Ըստ այսմ՝ նա շարահյուսութեան ուսմունքը բաժանում է երկու գլխավոր մասի՝

1. Բառերի շարահյուսութեան և 2. Խոսքի շարահյուսութեան: Սրանք յուրաքանչյուրն էլ, ըստ կոտորվածքային յուրահատկութեան, ստորաբաժանում է երկու ենթատեսակներ:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութեան, 1965, էջ 351—352:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Մ. Արեղյանի ընդհանրաբանական ժառանգութիւնը, էջ 151:

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութեան, 1965, էջ 362:

<sup>4</sup> Մ. Արեղյան, Մի քանի ընդհանրական ինդիքների մասին (անտիպ), էջ 242:

<sup>5</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութեան, 1965, էջ 353:

<sup>6</sup> Անց, էջ 354:

ների Առաջինի տակ է դնում խոսքի մեջ՝ ա) բառերի պաշտոնը և բ) բառերի կապակցությունները, իսկ երկրորդի տակ՝ ա) խոսքերի տեսակները և բ) խոսքերի կապակցությունը: Շարձչությունը իր կառուցված Արեղյանը մասերի ու մանրամասների հարադրումով մարմնավորում է և ամբողջացնում՝ վերածվելով արամբանական բարդ ու կառուցյալ համակարգի:

Խոսքի մասերի որոշումը: Նախագրասության մեջ բառերի պաշտոնի բնութիւնը Արեղյանը սկսում է խոսքի մասերի պարզարանումից:

Նա «խոսքի մասեր» («մասն-բանի» կամ «մասունք-բանի») ավանդական հասկացության տակ դնում է նոր բովանդակություն. «խոսքը» օգտագործելով իր բուն հայկական «նախագրասություն» իմաստով, «խոսքի մասեր» հասկացությունն էլ նա վերցնում է «նախագրասության մասեր», «նախագրասության անդամներ» առումով, ինչ իմաստով որ սկզբնապես գործածվել է այդ հասկացությունը հայերենում և այլ լեզուներում<sup>1</sup>:

Բայց Արեղյանի բերած նորությունը սուսկ հասկացության վերաիմաստավորումը չէր սահմանափակվում:

Խոսքի (նախագրասության) միջուկը ընդունելով բայը, հետևաբար՝ բայ-ստորոգյալը, Արեղյանը խոսքի մնացած մասերը (իմա՝ նախագրասության անդամներ)՝ ենթակա, խնդիր, պարագա, վերագիր, համարում է բայի լրացումներ և ստորագասում է բային: Բայը, ստորոգյալը և ստորգիլիական վերագիրը նա առնում է մեկ ընդհանուր ակտիան տակ և կոչում՝ բայ-ստորոգյալ, որի տակ հասկանում է և՛ ենթակային վերագրված հատկանիշը, և՛ հատկանիշի վերագրվելու հատկությունը ենթակային, այսինքն՝ «Ք՛ խոսքի նյութը և թ՛՛ ձևը»<sup>2</sup>:

Ենթական Արեղյանը համարում է բայի դեմքը և այն բացահայտող լրացումը, որ որոշակի մասնանշում է անող կամ երող առարկան: Հետևաբար, դերանվամբ արտահայտված ենթական Արեղյանն արդարև որոշ դեպքերում համարում է ավելորդություն և բայի դեմքը ոչնչով լրացահայտող (որ. ևս դեպքի = դեպքի, դու դեպքի = դեպքի):

Խնդրի, իբրև խոսքի մասի, շարձչության նշանակությունը պարզաբանելու համար, Արեղյանը շոշափում է արեհիլահայերենի

բայերի տեսակների և սեռի հարցն առհասարակ: Խնդրի նկատմամբ նա հայերենի բայերը բաժանում է երկու տեսակի՝ ա) ենթակայականի, որի ցույց տված գրոթյան կամ գործողության կատարման դեպքում բավական է միայն ենթական. բ) առեղյակականի, որի մասնանշած գործողությունը կատարելու համար, բացի ենթակայից, պահանջվում են այլ առարկաներ ևս:

Առարկայական բայերի բնութիւնը էլ Արեղյանը պարզարանում է խնդրների տեսակներն ու բայասեռը:

Եթե աշխարհաբար հայերենի նախորդ բերականներից Այտրյանը՝ արևմտահայերենի համար ապրիբակում էր բայերի երկու տեսակի խնդր՝ սեռի և բնորյան<sup>1</sup>, այդ Պալասանյանը՝ արեհիլահայերենի համար մատնացույց էր անում խնդրի երկու տեսակ, միայն առավել ձևական բաժանումով՝ գլխավոր և երկրորդական (պարագայական բառեր)<sup>2</sup>:

Խնդրի բնութիւնը Արեղյանի մոտ պայմանավորված էր բայի-մաստի հետ նրա ունեցած հարաբերությամբ և կրում էր առավել հասակ ու տարբերակված բնույթ: Նա արեհիլահայերենի բայերի համար մատնանշում է չորս տեսակի խնդիր. ա) կրող կամ ուղիղ խնդիր, բ) ենթագրծող խնդիր (ենթակայի վրա), գ) բնորյան խնդիր և դ) պարագայական խնդիր (իրև պարագա):

Խնդրի առնությունը Արեղյանը հայ բերականագիտության պատմության մեջ ստաբիլ անգամ առավել լայն ու համակողմանի ստաջ է քաշում և հիմնավորում բայասեռերի հասկացությունը:

Բայերի սեռը սահմանելիս, հիմնով մի կողմից ենթակայի և գործողության, իսկ մյուս կողմից՝ գործողության և կրող առարկայի (խնդրի) հարաբերությունից, Արեղյանը հայերենում կրող խնդրի նկատմամբ ապրիբակում է բայերի երկու սեռ՝ 1. անցողականի, որի դեպքում կրող խնդրի վրա է անցնում ենթակայի գործողությունը, և 2. անհեղզական, որի ժամանակ բացառվում է կրող խնդրի գոյությունը:

Հանլիի առեկով ենթակայի և բայիմաստի հարաբերությունը, Արեղյանը անցողական բայերը ենթարթամանում է ևս երկու սեռի՝ ա) ենթգրծակների և բ) պատճառակների, իսկ անանցողական բայերը՝ 1. կրավորական սեռի, երբ ենթական ունի ներգոր-

<sup>1</sup> Հմմտ. Մ. Արեղյան, Մի քանի բերականական խնդրների մասին (անտիպ), էջ 73 և հետև.:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 365:

<sup>1</sup> Հմմտ. Ա. Այտրյան, Քերականություն աշխարհաբար կամ արգի հայերեն լեզվի, Բ. Թուրքո, Վիեննա, 1882, էջ 97 և հետև.:

<sup>2</sup> Մա. Պալասանյան, Քերականության մայրենի լեզվի, Բիֆլիս, 1874, էջ 290 և հետև.:



ժող խնդիր և իր վրա է կրում զործողությունը, 2. շեզո՛ւ սեռի, կրթացաւում է ներգործող խնդիրը:

Արեղյանը մատնանշում է հայրենում նաև միևնույն բայերի անցողական և անանցողական սեռերի պոզիտիւնները, իսկ ներգործական սեռին համապատասխան կրավորական բայերի համար՝ սեռային իմաստի գործածության կրավորական բայերի համար՝ 1. բուն կրավորական, 2. անդրադարձ, 3. փոխադարձ և 4. շեզո: Բայասեռերի այս բազմաթիվ տեսակների բացահայտումն ու հիմնավորումը Արեղյանը կատարում է այն դեպքում, երբ աշխարհաբարին նվիրված Այտերյանի և Պալասանյանի բերականությունների մեջ տարբերակվում էին ընդամենը բայերի երեք սեռ (ներգործական, կրավորական, շեզոթ)<sup>1</sup>, այն էլ ոչ այգրան բազմակողմանի հիմնավորումներ:

Առանձնակի մանրակրկտությամբ է բնում Արեղյանը պարզազաններ կիրառությունը արևելահայ աշխարհաբարում: Նախորդ բերականներից միայն Պալասանյանն է նորմատիվ բերականություն սահմաններում, շատ համառոտակի խոսում արևելահայրենի պարագայական բառերի մասին և նշում նման շորս տեսակ բառերի գոյությունը (տեղի, ժամանակի, ձևի, պատճառի և նպատակի)<sup>2</sup>: Մինչդեռ Արեղյանը մշակում է արևելահայրենի պարագայական ամբողջ համակարգը, բացահայտում պարագաների բոլոր տեսակները, բուն պարագաները տարազատում պարագայական խնդիրներից և մանրամասն հետազոտում դրանց էական ու մասնակի գրեթե բոլոր կիրառությունները: Նա բացահայտում է բուն պարագաների վեց հիմնական տեսակ՝ 1. տեղի, 2. ժամանակի, 3. ձևի և միասնության, 4. չափի ու քանակի, 5. եղանակի, 6. հիմունքի, որը ստորաբաժանում է ևս շորս տարատեսակի՝ ա) պատճառի, բ) նպատակի, գ) պայմանի և դ) զիջման կամ հակառակ հիմունքի<sup>3</sup>:

Արեղյանի սահմանած խոսքի մասերից վերջինը՝ վերադրել է<sup>4</sup>, մի ընդհանուր անվանում, որի տակ են ներառվում և բնավում արդի բերականական տերմինաբանությունը՝ որչի՛ր, բացահայտելն ու հասկացողելը:

Արևելահայրենի նախադասության անդամների ինքնակահասկանիչները պարզելուց հետո, Արեղյանը բացահայտում է նաև դրանց միջև եղած ընդհանուր հարաբերությունը: Նախադասության մեջ առկա բառերի միջև նա մատնանշում է հարաբերության երկու հիմնաձև՝ ստորադասական և համադասական: Փերականական դերադասությունը լրացալի և լրացումի հարաբերության մեջ վերապահվելով լրացալին, Արեղյանը նախադասության մեջ զարձայլ գերադաս նշանակությունը հատկացնում է բալին, որին ստորադասում են մնացած անդամները (ենթակի, ստորգլխ, ստորգիլիական վերադիր, խնդիր և պարագա): Իսկ նախադասության առանձին անդամներ միմյանց նկատմամբ կարող են անկախ և համազոր լինել՝ կազմելով նախադասության բազմակի մասեր, որոնք, սակայն, ընդհանուր առմամբ համաստարգաս են, քանզի իրար նկատմամբ համազոր լինելուց դատ, դրանք միասին վերցրած լրացում են լինում մեկ այլ լրացալի՝ նախադասության անդամների միջև եղած հարաբերության այս բացահայտված տեսակներն էլ Արեղյանը հետագա շարադրանքի ընթացքում դարձնում է բարդ նախադասության անդամների փոխհարաբերությունը պարզարանելու հիմնական կալկուս:

Աղոցես, նախադասության անդամների առանձին-առանձին բնությունների մեջ Արեղյանն աչքի է ընկնում ոչ միայն բերականական հասկացությունների առանձնան հիտա-մեթոդական իր նոր սկզբունքներով, այլև հայ բերականագիտության պատմության մեջ ստեղծում է գրական ու խոսակցական արևելահայրենի նախադասության անդամների խոր ու ամբողջական ուսմունքը:

Բառերի կապակցությունը: Նախադասության անդամներին գրության պարզարանումը տրամաբանորեն առաջադրում էր նախադասության մեջ դրանց կապակցության ձևերի խնդիրը, որի լուսարանումը դարձյալ Արեղյանն առաջ է տանում կուտ ու միասնական սիտեմով: Կապակցության հիմնական տեսակներն համարելով ստորադասությունն ու համադասությունը, նա ստորադասության մեջ տարբերակում է երկու կարգի տրամաբանական հարաբերություն. 1. կախման, որի դեպքում լրացում գոյականը ենթարկվում է լրացալին և կախվում է նրանից. դա խնդրառություն է, որ արտահայտվում է՝ ա) անմիջական կապակցությամբ՝ նալվմներով միայն և բ) միջական կապակցությամբ, երբ խնդիրը

<sup>1</sup> Հմտ. Ա. Այտերյան, Փերականություն..., Թ սպ., էջ 41, Ստ. Պալասանյան, Փերականություն..., էջ 13:

<sup>2</sup> Ստ. Պալասանյան, Փերականություն..., էջ 13:

<sup>3</sup> Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 350 և հան.:

<sup>4</sup> Անգ, էջ 392:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 394 և հան.:

խնդրատուի հետ է կապվում հուլիների հետ միասին նաև կապերով.  
2. Ենթանկարյան, որի գեպրում «լրացումի ցույց տված գաղա-  
փարք մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված  
և նրա հետ միանում, համաձայնվում է իբրև մի գաղափար. կամ թե  
լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկրորդ անգամ կրկնու-  
թյունն ուրիշ բառով»: Նման դեպքերում լրացումը լրացյալին  
ստորադասվելով հանդերձ, «խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար  
պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, զուգորդվում է նրան և իր  
հուլովական ձևով կախված չէ նրանից. մինչդեռ կարևան մեջ, ընդ-  
հակառակն, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան  
իր լրացյալը, և իր հուլովական ձևով կախված է լրացյալից»:  
Ենթանկան հարաբերությունը նախադասության մեջ արտա-  
հայտվում է՝ ա) ելովվեճով և բ) նամանայնությունը: Բառերի  
կապակցության տեսական այս նոր ըմբռնումով էլ Արեղյանը ման-  
րագինն քննության է առնում կախման և ենթանկարյան հարա-  
բերությունների քերականական դրսևորման ձևերը՝ հուլովների,  
կապերի, համաձայնության և շարադասության միջոցով:

ԿԱՆՄԱՆ ՀԱՐԱՐՈՒՄԻՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՂՆԵՐ

ա. Անմիջական կապակցություն. Հ ո յ ո վ ն ն ու: Հուլովների ու-  
մուների հարցում Արեղյանի դերը հայ քերականագիտության պատ-  
մության մեջ բացառիկ նշանակություն ունի: Եթև նա իր նախորդ  
աշխատություններում («Նշխարհարարի քերականություն», «Աշ-  
խարհարարի հուլովները», «Հայցական հուլովը մեր աշխարհարար-  
ում») խոր ու համակողմանի բացահայտում և հիմնավորում էր  
արդի հայերենի հուլովական համակարգի ձևաբանական գրեթե  
բոլոր կական հատկանիշները, այդպե՛ս «Նշխարհարարի շարահյու-  
սության մեջ արդեն, նա նույն խորթափանցությունը և բազմա-  
կողմանիորեն քննում է հայերենի հուլովների շարահյուսական նը-  
շանակությունն ու կիրառությունները և դրանով ստեղծում ժա-  
մանակակից հայերենի հուլովների գիտական մեծարժեք և ամբող-  
ջական ուսմունքը:

«Աշխարհարարի շարահյուսության» մեջ, Արեղյանը, զարմյալ  
ստաջ բաշելով արդի հայերենում հինգ հուլովի գոյություն իր տեսա-

կանը, շարահյուսության կամ նշանակությանը, սակայն, դիտա-  
վորյալ դնում է ութ հուլով (կոչական, ուղղական, սեռական, արա-  
կան, հայցական, բացարական, գործիական և ներդրական)<sup>1</sup>  
իրենց բազմազան կիրառություններով: Եվ այդ պատճառարանում  
է այսպես.

1 Արեղյանի հինգ հուլովի տեսության քննազանները, իրենց թե՛ գրավոր, և  
թե՛ մտածական բանավոր կրթությունում (եկտրի ունեն հուլովների խնդրի նվիր-  
ված 1966-ի բանակները), հեղինակը Արեղյանի «Նշխարհարարի շարահյուսության»  
նրա «Տարրական քերականության», մասամբ և մեծ բանի քերականական խնդր-  
ների մասին» անսխալ բանավիճակի աշխատության որոշ գրույթների վրա, ճշմուն  
էն ապացուցել, որ իբր թե Արեղյանը կամ իր մասի «հակասությունը», կամ Եան-  
հետևողականությունը և կամ էլ ստանց որևէ հիմունք, հենց այնպես բեղուն  
և ապացուցում է հայերենում ոչ միայն յոթ, այլև ութ հուլովի գոյությունը և դա-  
նակ իսկ հերքում իր նախորդ հինգ հուլովի տեսությունը:

Հարկ չենք համարում կանց առնել քանակոր նման կրթությունի վրա, քանզի  
դրանք գիտական արժեք չեն ներկայացնում: Այսպիսի անհամեմատ է քննել միայն  
տարբերն առաջ ապագրված մեկ կարծիք: Ա. Գարբրյանը 1946-ին Մ. Արեղյանի  
քերականագիտական ժողովածուները նվիրած իր շահեկան հոդվածում նշում է,  
որ Արեղյանը թեպետ ձևաբանությունից դուրս է գցում սեռական և հայցական հու-  
լովները, սակայն առաջնորդվելով շարահյուսական սկզբունքով՝ նա իր համար  
էլ անսպասելի կերպով հայերենի մեջ նայունագործում է չատ իմաստի և կիրա-  
ռության 11 տեսակ սեռական... այնպես որ, շնչաձե ինքը պնդում է, թե սեռ-  
կան հուլով հայերենը չունի, բայց յուրաքանչյուր բեմբեղցող խոսողին համոզում  
է, որ այդ հուլովը հայերեն լեզվի մեջ գոյություն ունի: Այդպես է նաև հայցական  
հուլովի խնդիրը. «Ժողովածու հայցական հուլովի գոյությունը հայերենի ձևաբանու-  
թյան մեջ, շարահյուսության մեջ նա ցույց է տալիս, որ հայերենում կան հայցա-  
կանի հետևյալ տեսակները...»: Եվ այդպես ներկայացնում է. «Այսպեսով այն, ինչ  
էլ ինչ կարողանում ապացուցել հայցականի չըմբ պաշտպանները Մ. Մալխասյանի  
և արեղյանի, փալցուն և համոզելի կերպով ապացուցում է հայցական հուլովի հա-  
կասափորդ Մ. Արեղյանը» (տե՛ս Ա. Գարբրյան, Մ. Արեղյանի քերականագիտա-  
կան ժողովածուները, էջ 157—158, քննադատմունքն իմն իմն — Մ. Հ.):

Գուրու է գույն, որ Մ. Արեղյանը ինչ հերքել է իր նախորդ աշխատության-  
ներում՝ «Նշխարհարարի շարահյուսության» մեջ սիրեն համար էլ անսպասելի  
կերպով... հայանագործում է: Այսինքն, սովորական լեզվի վերածնունդ կառաջվի  
այն, որ Արեղյանը ինչ մի գրքում հաստատում էր, մյուսում՝ հերքում, քրական իսկ  
զանաձև տեսնողական ու հակասական իր տեսակետների մեջ: Ասա, իհարկե,  
չտա ժանտե մեթոդ է արդի հայ որոշ լեզվաբանների մոտ, բայց Ներկանակ պար-  
զպան չիոթել է հասցենները:

Համապատասխան աղեկրում տեսն ենք արդեն, որ Մ. Արեղյանը խառքեն  
աարբորելով հուլով-ձև և հուլով-կիրառություն և հակադասությունները, հայերենում  
ստեղծ հինգ հուլովան է աարբերակում, ստարի նախադասության մեջ գնում է հինգ

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 397.



«Յեպես և մեր աշխարհաբարն, իսկուպես շունի կռական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն զրույթյամբ կամ կիրառությամբ, բայց և այնպես կռական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերություններ արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ»<sup>1</sup>:

Հոլովների արտահայտած շարահյուսական հարաբերությունների բնույթը նկատի առնելով, Արեղյանը հոլովները բաժանում է երկու խմբի. ա) անկախ հոլովների (ուղղական, կռական), որոնք ցույց են տալիս կամ անկախ առարկա առանց հարաբերության, կամ ներդրական հարաբերություն արտահայտող նախադասության անդամ (նկատի, ստորոգյալ, վերադիր). բ) կախման հոլովների (հայցական, սեռական, տրական, բացասական, գործիական, ներգոյական), որոնք ցույց են տալիս կախման հարաբերության

հոլով, Մինչևս մենևույն հոլովաձևի հասուկ համարելով շարահյուսական տարբեր հարաբերություններ արտահայտելը՝ շարահյուսության մեջ գնում է հոլովների բաժանարարի կիրառություններ և որոնք մի մասը գործչալ կոչում է ավանդական կռական, սեռական, հայցական անուններով:

Եվ հիմն առնենքի պահպանությունը նա կատարել է գիտակցված անհրաժեշտությամբ, զի նկատի ունենալով,— ինչպես գրում է ինքը,— որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ: Եվ նրա նա ակտիվների հարցում սույն քերականության ուսուցումը դադարեցնելու համար առեր է տալիս հինի, ապա ըստ էության այդ հին անվանումների արտահայտած հարաբերությունները նա համարում է ուղղականի կռական կամ հայցական կիրառություններ, ինչպես նաև մեծ մասամբ տրականի սեռական կիրառություններ: Ուրիշ կերպ ասած, ուղղական և տրական հոլովաձևերի սակ Արեղյանը արտահայտված է դրանում զանազան կիրառական հարաբերություններ, այդ թվում նաև՝ կռականի, հայցականի և սեռականի հիմն անուններով կիրառությունները, որոնք հասկանալի լինելու համար է միայն թողնում ավանդական անվանումներով:

Այս է, որ երբեմն դիտավորյալ շեղ ուղում հասկանալ չաթ հոլովի կողմակից լեզվաբանները Այս հարցը ասածի մանրակրկիտ ու հիմնավոր վերաքննող են հայերենի հոլովներին նվիրած իրենց արևելագիտ. հոդվածում Պ. Շարաբուխյանը և էմ. Պիլազյանը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1967, էջ 125 և հտե.) և Բ. Մարտիչյանը «Մ. Արեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հիմն ու նոր քերականությունները» բանախմբային փուլում աշխատության մեջ (էջ 48 և հտե.):

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 399:

մեջ գտնվող առարկաները Հոլովների տրոտահայտած շարահյուսական հարաբերությունների բնույթումն տրամաբանական այս կլակետով էլ նա մանրակրկիտ քննության է ենթարկում արևելահայերենի հոլովական կիրառությունները:

Ուղղական կռակի քննելիս, Արեղյանը հավատարիմ իր տեսություններ, նկատում է դարձյալ, որ «Ուղղականի հոլովական ձևը, բացի իր բուն նշանակությունից՝ գործ է ածվում նաև կռական և հայցական հոլովների նշանակությամբ»<sup>1</sup>: Ըստ այդմ՝ նա զանազանում է ուղղականի երեք կիրառություն, հոլովական տարբեր նշանակությամբ. ա) բուն կամ անվանական ուղղական, բ) կռական ուղղական և գ) հայցական ուղղական, որը գործածվում է նաև իբրև ներգոյական: Այսինքն՝ կռականն ու հայցականը Արեղյանը դիտում է իբրև ուղղականի տարբեր կիրառություններ:

Նա նախադասության մեջ բացահայտում է ուղղական հոլովի կիրառության չորս զլխավոր դեպք՝ իբրև ենթակա (դիմավոր բայի) և ստորոգյալ և ստորոգելիական վերադիր, կողմնակի ենթակա և անվամբ վերադիր, որ գործածվում է որակական, բացահայտող և չափ ու բանակի իմաստով: Հայցական ուղղականը քննելիս, Արեղյանը ցուցահանում է շարահյուսական երեք հիմնական նշանակություն՝ իրենց տարբեր կիրառություններով:

Ըստ այդմ՝ հայցական ուղղականը ցույց է տալիս գործողության 1. հանգման պարագան, 2. հանգման և կրող իբր և 3. տեղը կամ ժամանակը: Հանգման պարագայի դեպքում Արեղյանը մատնանշում է հայցական ուղղականի չորս կիրառություն. ա) իբրև տեղի հայցական, բ) իբրև ժամանակի հայցական, գ) իբրև չափի ու բանակի հայցական և դ) իբրև նպատակի հայցական: Երկրորդ նշանակությամբ կիրառվելիս՝ Արեղյանը այն կոչում է կրող իրի կամ կրող խնդրի հայցական, իսկ երրորդ նշանակության դեպքում՝ ենթոյական հայցական:

Սեռականի կիրառությունը քննելիս, Արեղյանը հատկապես նշում է նրա ձևական և մեծ մասամբ նաև՝ նշանակության նույնությունը տրականին. զանազանություն է նկատում միայն կիրառության մեջ. «միևնույն հոլովական ձևը սեռական է, երբ լինում է խնդիր կամ վերադիր գոյականի. տրական է, երբ դառնում է խնդիր բայի կամ անձանի»<sup>2</sup>: Եվ կարևորացնում է, թե սեռականն ուրեմն միևնույն հոլովական ձևի գործածությունն է իբրև վերադիր»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 399:

<sup>2</sup> Անգ. էջ 419:

Հետևաբար, սեռականի շարահյուսական նշանակությունը նա իրավամբ տեսնում է մի առարկայի՝ մեկ ուրիշ առարկայի նկատմամբ ունեցած վերաբերության մեջ: Ըստ այսմ էլ՝ նա բացահայտում է սեռականի կիրառության հետևյալ 11 դեպքերը. ա) ստացականություն կամ պատկանելություն, բ) ծագում, գ) ենթակալություն, դ) առարկայականություն, ե) մասնակիություն, զ) նյութականություն, ի) պարունակություն, ը) տեղ և ժամանակ, թ) զին և արվեստ, ժ) որակ, ժա) բացահայտություն:

Տական հոլովի շարահյուսական նշանակության տակ Արեղյանը համարմբում է երեք դիսյուրք առում՝ 1. հանգման առարկայի, 2. հանգման և կողմ անձի և 3. տեղի և ժամանակի:

Հանգման առարկայի տրականի տակ Արեղյանը բացահայտում է տրականի արտահայտած շարահյուսական երեք կարգի հարաբերություն՝ իր բազմապիսի ենթաստեղծակերպով: Դրանք են. ա) մատուցում, որ արտահայտում է նաև վերագրում, վերածում, հայտնում, ուղղում, ձգում, զիմում, մոտեցում, անձնատրություն, հնազանդություն, ընտելացում, մարծեցում, դարմացում, զմայություն, առիթ և պատճառ. բ) շահ, որ արտահայտում է օգուտ և վնաս, ստացականություն, պատճառականություն, առանձնություն, զին և ներգործող խնդիր. գ) ելադասակ:

Հանգման և կողմ անձի (իմա՝ կրող խնդրի) տրականի նշանակությունը քննելիս, Արեղյանը նկատի առնելով նշանակության նյութությունը հայցականի հետ, իբրև անցողական բայերի գործողությունը կրողի, կույտ է հայցական տրական: Այս անվանումը նա հիմնավորում է հոլովների նկատմամբ հայոց լեզվի պատմական զարգացման միտումի բացահայտումով:

Տակավին հայցականի առնչությունը, Արեղյանը հիշյալ հոլովանի վերացման սկիզբը տեսնում է զինև միջնագրում, երբ հոլովակիրում հայցականի հոլովանը որոշ բառերում դուրս է ընկնում և ձևով նույնանում ուղղականին. «ուղղականը գործ է ածվում նաև իբրև հայցական: Այնպես որ արտահայտում հոլովների զարգացման նշյալ ընթացքը առավել կատարյալ է դառնում. հայցականը ոչ միայն ուղղականի ձևն է ընդունում, այլև ուղղականը բոլոր դեպքերի համար գործածվում է հայցականի նշանակությամբ: Որոշ նախագասություններում այդ գործածությամբ առաջ է դալիս ենթակայի և կրող խնդրի որոշ երկդիմություն (օր. «Տիգրանը տեսավ վար-

դանք»): Ահա յայն երկդիմության առաջն առնելու համար արեղյան բարբառները հայցականի նշանակությամբ անձի անունների համար էրը որոշված են, սկսել են զործածել տրական հոլովը»: Արեղյանը լեզվի պատմական այս փոփոխության սկիզբը նկատում է տակավին գրաբարում՝ անձնական դերանունների տրական հոլովով (զ) մեզ, դ) էնզ, գ) ենզ գործածության մեջ: Կրող խնդրի նշանակությամբ տրական հոլովի գործածության երևույթի վրա նա տեսնում է նաև գրաբարում մի շարք ներգործական բայերի տրական հոլովով կրող խնդրի առնելու ազդեցությունը: Իսկ այդ գործածության ընդհանրանալու առավել լուրջ պատճառը նա համարում է տրականը հանգման հոլովի՝ հայցականի նշանակություն առնելու պատմական փաստի մեջ:

Ավելի որոշարկելով աշխարհագրում տրականի և հայցականի հոլովական նշանակության նույնությունն ու տարբերությունը, Արեղյանը հաստատում է, որ «տրականն այժմ պահելով հանդերձ իր հին նշանակությունը՝ ցույց է տալիս գլխավորապես գործողության հանդուր, հայցականից այն տարբերությամբ, որ հայցականը գործողության հանգման պարագան է նշանակում, մինչ տրականը հանգման առարկան է ցույց տալիս»<sup>2</sup> (ընդգծումներն իմն են — Մ. Հ.): Արեղյանը մատածողության եղանակի այս փոփոխության հետևանք է համարում նաև անցողական բայերի հանգման և կրող խնդիրը, ընդունող կամ կրող անձի նշանակությամբ գործածելիս, տրական հոլովով զննելու երևույթը: Այլ երբ տրականն առհանձնաբար անցել է հայցականի փոխարեն, որոշյալ անձի անուններից տրականի այդ կիրառությունն ընդարձակվել է ու տարածվել նաև անորոշ անձի, կենդանիների և նույնիսկ իբրիք անունների վրա: Այլ լեզվական զարգացման այդ ընթացքը Արեղյանը համարում է տակավին չավարտված:

Ահա, լեզվի զարգացման այս պատմական ստույգ տեսանկյունով է դիտում Արեղյանը հոլովների ձևական ու կիրառական փոխանակությունը:

Տեղ և ժամանակ ցույց տվող տրականը, որ Արեղյանը, երևելով նրա հոլովական իմաստից, անվանում է ներգոյական տրական, տեղից և ժամանակից զատ արտահայտում է նաև ձևի և կերպի հարաբերություն:

1 Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 411:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 441:

2 Անգ. էջ 442:



Քաղաքակալների, իրեն կյակնու կամ սկզբնակնու ցույց տվող հուլիի շարահանուական կիրառութեան տառ դեպք է հայտնաբերում Արեղյանը հայերենում: Դրանք են. ա) դատական, բ) ծագման և նյութի, գ) մասնական, զ) ներքործող խնդրի, ե) պատճառի, ը) բազդատական, է) սահմանափակման, բ) պատմողական, թ) տեղի և ժ) ժամանակի:

Գործիական հուլիի համար Արեղյանը երևան է բերում հետևյալ ինը կիրառութեանները. ա) միջոցի, բ) հիմնների, գ) ներգործող խնդրի, դ) սահմանափակման, ե) պարտական, զ) տեղի, է) ժամանակի, բ) ձևի և միասնութեան, թ) շափ ու բանակի և գնի:

Եվ վերջապես ներգոյական հուլիի համար Արեղյանը մասնաշնչում է երեք տեսակի շարահանուական կիրառութեան. ա) տեղի, բ) ժամանակի և գ) սահմանափակման:

Արեղյանը հայերենի հուլիների հիշված բոլոր նշանակութեաններն ու կիրառութեանները բացահայտելիս, Արեղյանը բավարարվում է ոչ թե դրանց հաստատում և թվարկմամբ միայն, այլև հուլիի նշանակութեան և կիրառութեան յուրաքանչյուր դեպք հիմնադրում է դրական ու սոցիոլոգիական բազմապիսի ու բազմաթիվ օրինակներով, երևան է բերում հուլիական կիրառութեանների դրժն բոլոր նրբերանգները, պարզում տվյալ կիրառութեան դեպքում պահանջվող բաների իմաստները, առումները, ձևերն ու տեսակները (խրեդրառու բայերի սևոր, գոյականների թիվը, տնունների տեսակները, բաների տարբեր առումները և այլն) և հարկ եղած դեպքերում մանուս մանրամասն բացատրությունների մեջ:

Գրանով Արեղյանը ստեղծում է հայ քերականագիտութեան պատմութեան մեջ ընդհանրապես իր նախագիպը շունեցող հուլիների շարահանուական նշանակութեան և կիրառութեան մասին մի կուռ ու համակարգված ուսմունք:

Բ. Միջական կապակցություն: Բաների տեսակները որոշարկելիս, Արեղյանը դադարեցրել է ցույց տվող բաների շարքն է դասում կապակցական բաները՝ կապերն ու շաղկապները, որոնք ոչ նախագատություն են կազմում և ոչ լրացում դասում, այլ կապում են բառը՝ բառի և նախագատությունը՝ նախագատութեան հետ: Բաների կապակցութեան մեջ նա վերադասում է բնուում է կապերի նշանակութեաններն ու կիրառութեանները:

Նշվել է արդեն, որ հայերենի քերականութեան մեջ «կապ» հասկացութեան ներդրումը պատկանում է Արեղյանին: «Աշխարհ»

հարսի քերականութեան» մեջ «դոզ» ընդհանուր անվան տակ համախմբելով կապերն ու շաղկապները, նա կատարում է կապերի առաջին ստույգ դասակարգումը՝ նախագոյություններ և հատարություններ անուններով: Գրանով նա դարարդից ժառանգած նախագոյություններն ու աշխարհարարին բնորոշ հատարությունները, որ Ստ. Պալասյանի «Քերականութեան» մեջ կրում էր տակավին դարարյան միակողմանի «նախագոյություն» անվանումը, միացնում է «կապ» ընդհանուր քերականական հասկացութեան տակը:

Եթև Արեղյանը «Աշխարհարարի քերականութեան» բառագիտութեան բաժնում, կեննով իր գառագրի բնութիցը, տարրական գիտելիքներ է միայն տալիս հայերենի կապերի վերաբերյալ, ապա «Աշխարհարարի շարահանուական» մեջ արդեն բացահայտելով նրանց շարահանուական նշանակությունն ու կիրառությունը, նա դարգացնում է կապերի մասին քերականագիտական մի ամբողջական ուսմունք, որն իրավամբ հայ քերականագիտութեան լավագույն նվաճումներից մեկն է: Կապերի մասին իր ուսմունքի կապակց Արեղյանը զարձնում է նրանց շարահանուական ֆունկցիան՝ նախագատութեան մեջ բաների հարաբերությունները արտահայտելու հատկությունը: Կապերի արտահայտած պաշտոնը որակելով կախման հարաբերություն, Արեղյանը կապերի կիրառութեան հիմնական նշանակությունը տեսնում է հուլիների թերի լրացնելու մեջ: Ըստ այդմ՝ 1. կապերը առավել ճիշտ ու հստակ են որոշարկում հուլիների նշանակությունը և ապա 2. ցույց են տալիս մի նոր տեսակի հարաբերություն, որ հուլիները մենակ չեն արտահայտում: Նախագատութեան մեջ գոյականը կապով ստորագատում է մի ուրիշ բառի և կոչվում է կապի խնդրի. «կապը մենակ ցույց է տալիս, թե իր խնդրի գոյականը ինչպիսի կախման հարաբերություն ունի իր խնդրառու բառի հետ»:

Եննով կապերի բնութիցը և նրանց արտահայտած հարաբերությունից, Արեղյանը կապերը բաժանում է երկու հիմնական տեսակի. 1. իսկական կապեր, որոնք հարաբերություն նշանակող այնպիսի բաներն ու խոսքի մասնիկներն են, որ առանձին ու հուլով

1 Տե՛ս Ստ. Պալասյան, Ընդհանուր տեսություն արևելյան նոր դավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 112 և հան., ետևին՝ «Քերականություն մարկեի լեզվի», Թիֆլիս, 1874, էջ 233 և հան.:

2 Ս. Կախյան, Մ. Արեղյանի քերականագիտական մասնագրությունը, էջ 159:

3 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 471:

«չեն գործածվում իբրև լրացում, այլ միշտ մի գոյական խնդրի հետ»: Դրանք լինում են՝ ա) նախադրություններ և բ) նստադրություններ: 2. Անխակական կապեր, որոնք լինելով հայցական հոյովով գոյականներ, կորցրել են, սակայն, իրենց գոյական նշանակությունները և գործ են ածվում իբրև անաղբուրջուն և իրենց խնդիրը, երբ անձնական գերանուն է, առնում են արական հոլովով: Դրանք, իբրև գոյական, կարող են և մենակ գործածվել հոգով կամ առանց հոգի և հայովվել:

Կապերի այս երկու տեսակներից բացի, Արեղյանը նշում է նաև բառերի մեկ խումբ ևս՝ կապական բառերը, որոնք լինելով գոյականներ, ածականներ կամ մակբայներ, «իրենց նշանակության համեմատ մի գոյական խնդիր են առնում այս կամ այն հոլովով և խոսքի մեջ ցույց տալիս որևէ կախման հարաբերություն»: Դրանք «իրենց խնդիր գոյականի հետ միասին առնվում են իբրև խոսքի մի մաս»<sup>1</sup>:

Արեղյանը տարբերակում է իսկական կապերն անիսկականներից և կապական բառերից այնու, որ վերջին երկուսը իբրև գոյական, ածական և մակբայ կարող են առանձին ևս դառնալ լրացում մի ուրիշ բառի. մինչդեռ իսկական կապերը «մենակ լրացում չեն դառնում և մենակ չեն գործածվում, այլ իրենց հետ ունին միշտ մի գոյական խնդիր, որ և դառնում է լրացում մի ուրիշ բառի»: Իսկ անիսկական կապերը կապական բառերից տարբերվում են նրանով, որ առաջինները թեպետ գոյական՝ առնում են արական խնդիր և կորցնում իրենց գոյական նշանակությունը. մինչդեռ երկրորդները, եթև գոյական են՝ գործածվում են ստացական ասականով կամ սեռականով, իսկ եթև ածական կամ մակբայ են՝ գործածվում են իրենց իմաստի համեմատ մի հոլովով: Եվ Արեղյանը, ելնելով կապակցական բառերի նշված առանձնահատկություններից՝ անիսկական կապերը դնում է իսկական կապերի և կապական բառերի միջև. «Երանք կապեր են միայն այն ժամանակ, երբ անփոփոխ և առանց հոգի մնալով՝ մի արական խնդիր են առնում. բայց դեռ կատարելապես կապ չեն դարձած, որովհետև կարող են հոգ առնել, մենակ գործածվել և հոլովվել սեռական կամ ստացական խնդրով»<sup>2</sup>:

Այսպիսի հմտություններ որոշարկելով և համակարգելով հայե-

րենի կապերն ու կապական բառերը, Արեղյանը բացահայտում է յուրաքանչյուր իսկական ու անիսկական կապի կիրառական նշանակությունները, նրա արտահայտած կախման հարաբերությունը իմաստալին իր բոլոր ներբանգներով:

Դրանով նա վեր է հանում ու առարկայանում հայերենի կապերի շարահյուսական կիրառությունների ամբողջական համակարգը:

#### ՆԵՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայնություն: Հայ ավանդական թերականագիտության մեջ, ինչպես խնդրառությունը, այնպես էլ համաձայնությունը թերականության համեմատարար առավել նշակված կորզրից են: Այսընչյանն ու Պալասանյանը իրենց թերականությունների մեջ ևս, գրաբարի թերականության նմանությամբ, մշակում են արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսության նշված կարգերը և դրանով իսկ զգույապես դյուրացնում այնպահարարի ազդեց թերականագետի անլիթերը:

Արևելահայերենի խնդրառությունն ու համաձայնությունը մըշակելիս, Արեղյանը նախորդ թերականների փորձն ու արդյունքները հաշվի առնելով հանգիստ, բուրբուրվին նոր մտածելով է քրնում կապակցության հիշյալ ձևերը: Նա, ինչպես տեսել ենք արդեն, կապակցությունը դիտում է ոչ միայն նրա արտաբերման ձևական գրություններում, այլ իր հետադրություններից ևս կարծնում այդ ձևերի տակ արտահայտվող ներքին հարաբերությունների բըշտյին ու բովանդակությունը:

Եթև խնդրառությունը նա քննում է կախման հարաբերության մեկնակետից, ապա համաձայնության հիմքում սեծնում է ներունակադրյան արամարանական հարաբերության առկայություն, և համաձայնության յուրաքանչյուր զեպրի քննություն առաջ է տանում բառաձևերի կապակցության տակ առկա ներուսակության հարաբերության բացահայտումներով:

Նախորդ թերականների հման, բայց առավել հասակ ու որոշակի, Արեղյանը ևս համաձայնության երկու տիպ է մատնանշում. ա) սուկ բառերի ննով կատարվող կապակցություն, երբ իրար հետ կապակցվող բառերը, լրացումն ու լրացյալը թվով, զեծքով և հոլովով դրվում են միակերպ, և բ) սուկ բառերի բովանդակությամբ կամ բակառություններ կատարվող կապակցություն:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 472:

<sup>2</sup> Անդ, էջ 473:



Համաձայնության այս երկու տիպերի հաշվառումով, Արեղյանը գրական ու ժողովրդական լեզվի հարյուրավոր օրինակների հիման վրա, բացահայտում է նախադասության մեջ առկա բառային տարրեր կապակցությունների բազմազան դեպքերը իրենց օրինակաբանությամբ ու բացատրություններով հանդերձ: Նա մանրամասն բնույթ է եերակալի և բայի, ենթակալի և ստորոցալի ու ստորոցելիական վերադրի, բացանցալի և բացանցալայալի, մականվան և անվան, դերանվան և անվան համաձայնության մականվան և անվան ու երկրորդական գրենթի բոլոր իրողությունները:

Մականվան և անվան համաձայնության տակ բնեկելով արդի բերականական սերմինաբանության ասած՝ որոշի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի համաձայնության դեպքերը, Արեղյանը գրանցում է անույնությամբ առանձին ուսումնասիրության առարկա է դարձնում հայերենի հոգերի գործածությունը: «Աշխարհաբարի բերականության» մեջ, նա, հակառակ նախորդ բերականների (Աշխարհյան, Պայասանյան) հոգերը խոսքի տարրեր մասերի (գոյական, դերանուն) առնչությամբ բնեկելու ավանդության, հայերենի հոգերի ի մի է բերում և դասակարգում մականվանը կից<sup>1</sup>, այսինքն մականվան և անվան կապակցությունը պարզաբանելու առթիվ: Հետևաբար, նա կենում է հոգերի շարահյուսական նշանակությունից և դրանց գնահատում իրրև վերադրի և իր անվան համաձայնության կարևոր պայմանի: Ուստի, Ա. Բազրատունու նման<sup>2</sup>, հոգերի բնեկությունը Արեղյանը ես վերապահում է ոչ թե բառադիտությանը կամ ձևաբանությանը, այլ շարահյուսությանը: Հոգերի նշանակության բերականական ճիշտ գնահատությունը Արեղյանին հնարավորություն է տալիս հայերենի հոգերի իր իսկ կողմից վերջնական ձեռքբերված ու համակարգված տեսակների (ցուցական, դիմորոշ, ստացական, որոշի) արտահայտած ներուճակության հարաբերության պարզաբանման մեջ բացահայտել նրանց իմաստային-շարահյուսական արժեքը: Գերանվան և իր փոխարինած անվան համաձայնության յուրօրինակ կապակցությունը, որ աշխարհաբարի նախորդ բերականների կողմից անուշադրության էր առնված, Արեղյանը ներմուծում է հայ բերականության մեջ իրրև առանձին շարահյուսական իրակություն: Եվ որովհետև դերանունը լրացում

էլ այն անվանը, որին փոխարինում է, ուստի նա այդ համաձայնության յուրահասակությունը տեսնում է ոչ թե լրացումի և լրացյալի ներուճակության հարաբերության արտահայտության մեջ, ինչպես նախորդ կապակցությունները, այլ բառերի մի ներքին սրամտաբանական հարաբերության, որով կապակցվում են ոչ թե բառեր միմյանց հետ, այլ նախադասությունների՝ Սուտի նա առանձին դերանունների (ու, այս, այդ, այն) համաձայնական կիրառությունների բնույթությամբ՝ բացահայտում է նրանց շարահյուսական նշանակությունը:

**Ե ա Ր ա Պ ա ս ս Ի Ր Յ Ո Ն:** Արեղյանը կապակցության ձևերից մեկն էլ հայերենում համարում է նախադասության մեջ բառերի դասավորման կարգը կամ շարահասությունը և այն ենթարկում մասնաբաժնիկ հետադասության:

Նոր հայերենի ժամոռությունը ուղիղ ձևի արտահայտությունը համարելով նախադասության լրացումը լրացյալից առաջ դասվելու, իսկ բայը, իրրև նախադասության գլխավոր լրացյալի, խոսքի մեջ սովորաբար վերջադաս լինելու հանգամանքը, Արեղյանը շարահասության այս սովորական կամ ուղիղ ձևին հակադրում է շրջուն շարահասությունը: Վերջինիս ծագման անհրաժեշտությունը նա տեսնում է սրամտաբանական և ճարտասանական նպատակներով խոսքի արտահայտությունը ավելի կենդանի ու երաժշտական դարձնելու մեջ: Երբեմբ առաջ է գալիս հատկապես նախադասության կարևոր համարված բառի սրամտաբանական շեշտումից, երբ շեշտված բառը «գործը արտատնվելով դրվում է առաջ, կամ ազդում է մյուս բառերի շարահասության վրա»: «Երբեմով չի սխալվում խոսքի միաբար և բառերի քերականական հարաբերությունը»:

Այդպես, Արեղյանը շրջուն շարահասությանը քերականականից բացի, վերադրում է նաև սճաբանական-ճարտասանական կարևոր արժեքը: Նա մեկտունակ բնեկության առնելով բայի և նրա լրացումների, կողմնակի լրացումների և համադաս բառերի շարահասության ուղիղ և շրջուն ձևերը, բազմազան օրինակների և շարահասական բազմապիսի ձևերի մեջ բացահայտում է որոշակի օրինակ հակություններ, շարահասական տարրեր իրակությունների և վեր է հանում ժամանակակից հայերենի նախադասության մեջ բառա-

1 Հմմտ. «Աշխարհաբարի բերականություն», էջ 62 և հտն.  
2 Հմմտ. Ա. Բազրատունի, Հայերեն բերականությունից ի պետա զարգացիւց, Վենետիկ, 1862, էջ 374 և հտն.:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 539:  
2 Անդ, էջ 532.

դատվյալն տարբեր ձևերի հետևանքով առաջ եկող իմաստի արտահայտության զանազան նրբրանդները:

Խոր ու մանրակրկիտ հետազոտության ենթարկելով արևելյան աշխարհագրագրի բառերի շարահյուսությունը նախադասություն կազմող տարբերի՝ նախադասության անդամների պաշտոնը, նրանց միջև եղած հարաբերության և կապակցության տեսակները, Արեղյանը փաստորեն ստեղծում է նախադասության բաղադրիչ տարբեր նա առարկայական ու շարահյուսական ուսումնաբեր, որի հիման վրա նա անցնում է շարահյուսական տառվել բարդ միավորների՝ նախադասության տեսակների և կապակցության ձևերի ուսումնասիրությանը:

#### ՆԱՆԱԳՐԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԻ ՈԱՀՄԱՆՈՒՄԸ

Նախադասությունների շարահյուսության հետազոտությունը Արեղյանն սկսում է նախադասության տեսակների սահմանումից: Նա նախադասության տեսակների որոշարկման հիմքում դնում է քերականական և հոգերանական այնպիսի իրողություններ, որոնք միմյանցից թևակա տարբեր, բայց վճռական դեր են խաղում մարդկային խոսքին տարբեր տեսք ու երանգ հաղորդելու համար: Նախադասության կազմությունն ու կառուցվածքը, նրա անդամների և բաղադրիչ միավորների միմյանց նկատմամբ ունեցած դիրքն ու հարաբերությունը, նախադասության բովանդակության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը և խոսողի՝ լսողի հետ ունեցած հարաբերությունը—ահա այն սկզբունքային կախկանները, որոնցով առաջնորդվում է Արեղյանը խոսքի կամ նախադասության տեսակները սահմանելիս: Նախադասության մեջ լրացումներ հաշվի առնելով՝ նախադասության առաջին քնդհանուր տեսակը նա համարում է համառոտ և բեղաձաձկ խոսքերը, որոնց ավանդական անունները, սակայն, առաջարկում է վերանայել ըստ նախադասության իր սահմանած բայական ուսումների և դրանք վերանվանել՝ սոսկ խոսք և լրացած խոսք՝ անուններով:

Ապա, նկատի առնելով ստորոցայի հարաբերությունը ենթակայի հետ, Արեղյանը տարբերակում է երկու տեսակ նախադասություն ևս. զրական և բացասական (մխտակական):

Նայելով խոսողի՝ լսողի հետ ունեցած հարաբերությանը՝ նա մատնանշում է նախադասության երկու տեսակ ևս. հաստատական և հարցական: Առաջինի սակ, իբրև ենթատեսակ, մատնանշում է

պատասխանական խոսքերը, որոնք զեղչական ձևով են հաճախ հանդես գալիս. իսկ հարցականները ստորաբաժանում է երեք ենթատեսակի՝ հավաստականի, լրացականի և նախադասության, որոնցից առաջինը վերաբերում է նախադասության այս կամ այն անդամի ստուգությանը, երկրորդը՝ հարցնողի համար անհայտ նախադասության անդամին, իսկ երրորդը՝ ձևով հարցական է, նշանակությունը՝ հաստատական: Արեղյանը նախադասության մի շարք տեսակներ է տարբերակում հատկապես խոսքի բովանդակության նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը հաշվի առնելիս: Իսկ քանի որ այդ վերաբերմունքն արտահայտվում է բայի եղանակների միջոցով, ուստի և նա մատնանշում է սահմանական, ենթադրական, հարկադրական, հրամայական և ըզձական նախադասություններ, որոնցից առաջին երեքն ըստ բնույթի անվանում է դատողության, իսկ վերջին երկուսը՝ ցանկության խոսքեր:

Այս կապակցությամբ՝ Արեղյանը հատուկ և մանրակրկիտ բերնություն է ենթարկում հայերենի բայի եղանակները, կերպերն ու ժամանակները և նրանց ունեցած զերեն ու արժեքը նախադասության նշված տեսակների կազմավորման մեջ:

«Աշխարհագրագրի քերականություն»-ը քննելիս, տեսանք, Արեղյանը հայ քերականության մեջ մտածելով բայի կերպերի հոսակցությունը, առաջմտ տարբերակում էր երեք կերպ. կատարվող, կատարված և կատարելի: «Աշխարհագրագրի շարահյուսության» մեջ արգեն, նա դրանց վրա ավելացնում է նաև չորրորդը՝ պարզ կերպը, որը, ի տարբերություն նախորդների, ցույց է տալիս առակ գործողություն մի որոշ ժամանակակետում, առանց այլ ժամանակների համեմատության:»

Կերպերի այս հաշվառումով էլ նա քննում է հայերենի բայի եղանակներն ու ժամանակները՝ իրենց պիսվոր ու երկրորդական բոլոր ձևերով:

Սահմանական եղանակով կազմված խոսքը համարելով իբրև խոսողի կողմից հայանված մի հաստատ, ստույգ, իրական եղվաբան, որ իրապես գոյություն ունի կամ ունեցել է, Արեղյանը սահմանական եղանակի ինք ժամանակներում քննում է խոսքի (նախադասության) մեջ արտահայտված գործողության կերպային ու ժամանակային առումները իրենց էական ու երկրորդական նշանա-

1 Տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհագրագրի քերականություն, էջ 128:

2 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 557:



կույթուններով, կամ երկու տարբեր գործողությունների միաժամանակ և մեկը մյուսից առաջ կամ հետո լինելու հարաբերությունը՝ Վերջին գեղարվեստից հետո ևս պարզում և ուսումնասիրում է թե՛ բայի սահմանական գործածությունները և թե՛ հայերենի բուն հարաբերական ժամանակները:

Երկրորդական բազադրյալ ժամանակները համարելով հարաբերական ժամանակներ, բրոնք խոնարհվում են լինիմ օժանդակ բայով և զլխավոր ժամանակների նկատմամբ ունեն հարաբերական գործածություն, Արեղյանը մատնանշում է յոթ հարաբերական ժամանակ (նեբկա, անկատար անցյալ, վաղակատար, վաղակատար անցյալ, ապանի, ապանի անցյալ, անցյալ կատարյալ, բացի հարակատարից), որոնցից յուրաքանչյուրը ամեն զլխավոր ժամանակի համապատասխան՝ ըստ կատարվող, կատարված, կատարելի կերպերի ունի ևս երեք հարաբերական ժամանակ և զլխավոր ժամանակների նկատմամբ ցույց է տալիս միաժամանակություն, նախածամանակություն և հետծամանակություն իմաստ:

Ենթադրական եղանակով կազմված խոսքը Արեղյանը բնորոշում է ոչ թե որպես իրական, այլ խոսողի կողմից ենթադրվող, կարծված, հնարավոր մի եզրույթություն, որ կարող է կ' լինել, կ' չլինի: Այդ եղանակով կազմված նախադասությունների բայական գործողությունների համար, նա մատնանշում է երկու ժամանակակետ՝ ներկա և անցյալ, որոնց նկատմամբ շորս կերպերի համար էլ անկա են խոնարհման առանձին ձևեր: Ապանի ժամանակի նկատմամբ, թեպետ ենթադրականը շունի առանձին խոնարհման ձևեր, բայց այդ հարաբերություններն արտահայտում են ներկայի և պարզ կերպի անցյալի հարաբերության ձևերով: Ենթադրականի զլխավոր և բազադրյալ ժամանակների կիրառության մեջ Արեղյանը բացահայտում է ենթադրական նախադասության ոճա-իմաստային բազմազան առանձնահատկություններ, որոնց մեջ ի հայտ են գալիս խոսողի ենթադրական-կարելիական վերաբերմունքի բոլոր հնարավոր նրբերանգները:

Հարկադրական եղանակով կազմված նախադասությունը Արեղյանը բնութագրում է իրրե մի եզրույթություն, որը խոսողը մտածում է որպես անհրաժեշտ հարկուպես, որպես պարտք, ստիպումներ: Այդ եղանակը ունի եռույն ժամանակները, ինչ ենթադրականը, միայն կր եղանակի լի վտխարեն՝ զրվում է պլխի կամ պետ է եղանակի:

Համայնական և ըզմական եղանակներով կազմված նախադաս-

ություններից առաջինը Արեղյանը համարում է խոսող անձից խոսակցին ուղղած համայնված կամ արգելված եզրույթունը, իսկ երկրորդը՝ բան անելու փափագ ու տենչանք, հորդոր ու գրգռում, խնդիր, մաղթանք կամ պատվեր: Նա բերում է ըզմականի բազմաթիվ իմաստային և բերականական գործածություններ, որոնց մեջ ի հայտ են գալիս խոսքի բովանդակության նկատմամբ խոսողի տարբեր վերաբերմունքն ու նախադասության կազմության մեջ ըզմական նախադասությունների խաղացած շարահյուսական նշանակությունը:

Ըզմականը ևս ունի ենթադրականի ու հարկադրականի բոլոր ժամանակները՝ առանց կր և պլխի եղանակիչների գործածություն: Սրանք են մոտավորապես եղանակային խոսքերի այն տեսակները, որոնց անշուրթյամբ Արեղյանը վարպետնում է ժամանակակցից հայերենի բայական եղանակների, կերպերի և ժամանակների բոլոր մանրամասնություններով մշակված իր ուսմունքը, հայ բերականագիտական մտքի կարեւոր նվաճումներից մեկը:

Նախադասությունները տեսակների բաժանելիս, Արեղյանը նկատում է անոնում նաև նախադասության բազադրյալները: Ըստ այդմ, նա տարբերակում է նախադասության ևս երկու տեսակ՝ պարզ և բարդ: Բարդ խոսքերի բազադրյալ նախադասությունների կապակցության մեջ, նա, նախադասության անզամների կապակցության նման, բացահայտում է ստորադասության և համադասության հարաբերություն: Եկապակցված խոսքերից մեկը,— զրում է նա,— դառնալով լրացում մի ուրիշ խոսքի՝ իր կատարած պաշտոնով ստորադասում է այն խոսքին, որի լրացումն է դառնում: Լրացում գործող խոսքը, կոչվում է ստորադաս կամ երկարակցական խոսք, իսկ այն խոսքը, որի լրացումն է դառնում երկրորդական խոսքը, ասվում է զերադաս կամ զլխավոր խոսք<sup>1</sup>: Ուրեմն, ըստ բարդ նախադասության բազադրյալների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերության, նախադասության ևս երկու տեսակ՝ զլխավոր և երկարակցական:

Իսկ երբ կապակցված խոսքերը միմյանց նկատմամբ համազոր են և անկախ, և մեկը մյուսի լրացումը չի դառնում, այսինքն իրար վերաբերմամբ համադաս են, Արեղյանը դրանք կոչում է համադաս խոսքեր: Բացի այդ, համադաս երկրորդական նախադասություն-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի սեսություն, 1965, էջ 600:

ները հիմն զլիսավորի նկատմամբ միևնույն պաշտոնն են կատարում, նա դրանք էլ անվանում է համաստորոգյալ խոսքեր:

Նախադասությունների տեսակագործան չաջորդ աստիճանք Արևիտերը դարձնում է երկրորդական խոսքերի տարարժանումը:

Չլիսավոր նախադասության նկատմամբ ունեցած իրենց շարադասությամբ, նա երկրորդական խոսքերը բաժանում է երեք տեսակի. ա) առաջադաս, բ) միջադաս և գ) վերջադաս:

Իսկ զլիսավոր նախադասության նկատմամբ, ըստ իրենց վարած պաշտոնի, երկրորդական խոսքերը Արևիտյանը բաժանում է հինգ հիմնական տեսակի. 1. ենթակա խոսք, 2. ստորոզյալ խոսք, 3. խնդիր խոսք, 4. պարագայական խոսքեր (տեղի, ժամանակի, ձևի, բաղդատության, շափի ու աստիճանի և շեռեանքի, պատճառի, պայտանի, պայմանական, զիջական) և 5. վերադիր խոսքը ներքարգական նախադասությունների անդամներն էլ կարող են արտահայտվել առանձին խոսքերով, որոնք նա անվանում է երկրորդ կարգի երկրորդական խոսքեր: Դրանք համապատասխանում են նախադասության կողմնակի լրացումներին: Արևիտյանը, նաչելով, թի ինչ տեսակի լրացական բառերի են փոխարինում երկրորդական նախադասությունները, ըստ այդմ էլ տարբերակում է երկրորդական նախադասության ևս երեք տեսակ՝ ա) գոյական խոսքեր, բ) անական խոսքեր և գ) մակրայական խոսքեր:

Երկրորդական նախադասություններից զատ, նա, ըստ ձևի, տարբերակում է նախադասության երեք նոր տեսակ՝ 1. ուղղակի, 2. անուղղակի և 3. միջանկյալ խոսքեր:

Նախադասությունների այս բազմաթիվ տեսակները սահմանելուց բացի, Արևիտյանը շարադասում է նաև բարդ նախադասությունները պարզեցնելու և ուղղակի խոսքերը անուղղակի վերածելու ընդհանուր կանոնները:

Այդպես, Արևիտյանը հիմնելով նախադասության բնույթից, շարադասական տարբեր հատկություններից ու հարբերություններից, սահմանում է արդի տրևիչաչաչերենի նախադասության տեսակները և դրանք ենթարկում մանրակրկիտ հետազոտության, որի մեջ հաշվի են օտնված բայի եզանակային, կերդային և ժամանակային ձևերն ու բազմազան կիրառությունները:

ՆԱՆԱԿԱՍՈՒՐՅԱՆ ԿԱՐՊԵԿՈՒՐՅԱՆ ՉՈՒՐԵՐ

Տեսանք, որ Արևիտյանը բարդ նախադասության մեջ առկա բազադիր խոսքերի կապակցության հարբերությունները քննելիս,

բազահայտում է կապակցության երկու հիմնական տիպ՝ ստորադասություն և համադասություն:

Այս հիմնատիպերն էլ նա դարձնում է բարդ նախադասության շարահյուսական կառուցվածքի ու հատկանիշների ուսումնասիրության մեկնակետերը: Ստորադասությամբ կապակցված նախադասությունների մեջ Արևիտյանը երևան է հանում կապակցության երկու զլիսավոր տեսակ՝ 1. շարահարություն, երբ երկրորդական նախադասությունները փոխարինելով զլիսավորի որևէ անդամի, նրա հետ միանում են առանց կապակցական բառերի, 2. զոլղամ, երբ երկրորդական խոսքերը զլիսավորի հետ միանում են որևէ կապակցական բառով:

Շարահարությունը համարելով կապակցության ամենապարզ ու նախնական ձևը և միայն ժողովրդական լեզվին հատուկ, Արևիտյանը քննության առարկա է դարձնում ըզզվածով կապակցությունը, իրեն զրական լեզվի կապակցության պահանջով ձև Ձողվածով կապակցության մեջ զլիսավոր նշանակությունը վերադրելով կապակցական բառերին, նա դրանք բաժանում է երկու խմբի՝ հարբերական բառերի և ստորադասական շաղկապների: Արևիտյանը տարբերակում է երկրորդական կամ ստորադասական նախադասությունների ևս երկու տեսակ և դրանք կոչում իրենց կապակցող բառերի անուններով՝ հարբերական և շաղկապական խոսքեր:

Ստորադասական կապակցության այս ևս ենթաձևերի սահմանում, բնականորեն, առաջադրում էր նրանց մանրամասն հետազոտությունը իրենց որոշակի դրսևորումներով: Հարբերական բառերը (որ, ով, ինչ, որք, որ, քանի որ, որքան և այլն) համարելով հարցական նշանակությունը կորցրած բառեր, որոնք արտահայտում են մեծ մասամբ ընդհանուր անորոշ կամ ընդհանրացական իմաստ, Արևիտյանը հարբերական բառերի և ստորադասական շաղկապների բոլոր կիրառությունների հանգամանակից քննություններով՝ բազահայտում է դրանց շարահյուսական արժեքն ու նշանակությունը:

Նա մեկատմեկ քննության է առնում զլիսավոր նախադասության անդամներին փոխարինած երկրորդական նախադասությունների տեսակները (վերադիր խոսքեր, ենթակա, խնդիր և ստորոզյալ խոսքեր, պարագայական խոսքեր) իրենց ենթատեսակներով, որանց խոսքարանյութի մեջ տարբեր հարբերական բառերի և շաղկապների կիրառության ղեկավարը:

Այսպես, վերադիր ստորադասական նախադասությունների



կապակցությունը բնեկիս, Արեղյանը պարզում է, որ վերադիր խոս-  
քերը ըստ կապակցության բնույթի՝ հարաբերական են և կապա-  
կցվում են ու, ով (որ), ինչ (որ), որք որ հարաբերականներով: Իսկ  
ըստ շարադասության՝ հիմնականում լինում են միջադաս և վեր-  
ջադաս, առանձին դեպքերում միայն (բանաստեղծական և ժող-  
վերական լեզուներում), այն էլ շրջումով, կարող են և առաջադաս  
վարովել:

Ենթակա, խնդիր և ստորոցյալ երկրորդական նախադասու-  
թյունների կապակցության բնույթը պարզելիս, Արեղյանը, առա-  
ջին երկուսին բնորոշ է համարում և՛ հարաբերական, և՛ շարկապա-  
կան կապակցությունը, մինչդեռ ստորոցյալին՝ սոսկ հարաբերա-  
կանը: Ստորոցյալ խոսքերը կապակցվում են սովորաբար ինչ (որ),  
իսկ ենթակա և խնդիր խոսքերը՝ որ, ով (որ), ինչ (որ), որք (որ)  
հարաբերականներով: Առանձնապես հարուստ ու բազմազան են  
ենթակալի և խնդրի շարկապական կապակցությունները, որոնց  
ստիժով նա առանձին և մանրամասն բնույթյան է առնում որ և քե  
շարկապաների կիրառությունները: Նա պարզում է, թե որ շարկա-  
պով ենթակա նախադասությունները զբղում են անանցողական  
(կրավորական և շեղոթ) բայերի հետ, կրող խնդրի նշանակությամբ  
խոսքերը՝ անցողական բայերի հետ, բնույթյան խնդրի նշանակու-  
թյամբ խոսքերը՝ զանազան տեսակի բայերի հետ, գոյականի խըն-  
դիր խոսքերը առնվում են իբրև վերադիր, և վերջապես որ շարկա-  
պով կապմանում է ավելագույնությամբ շրջում: Թե, երև շարկապով,  
որ ցույց է տալիս «ուրիշի խոսք ու մտածմունք, կարծիք ու ենթա-  
դրություն», կապակցվում են ուղղակի, անուղղակի, անուղղակի ճառ-  
ցական խոսքերը կամ այն նախադասությունները, որոնք «կարծի-  
քով, երկրայությունը և ենթադրությունը են առնում, և կամ որոնց  
բովանդակությունը համապատասխան չէ իրականությանը», «հարց,  
կարծիք, կասկած, խոսք, ենթադրություն, հույս, խորհուրդ և այլն  
բայական անունների խնդիրները», ենթադրական բնույթի և այլ  
կարգի նախադասությունները:

Արեղյանը առավել հանգամանալից հետազոտում է պարա-  
զայական երկրորդական նախադասությունների կապակցության  
ձևերը, յուրաքանչյուր պարազայի և կապակցական բառի հաշվա-  
սումով: Նա պարզում է, որ տեղի խոսքերը սոսկ հարաբերական  
են, ժամանակի խոսքերը՝ և՛ հարաբերական են, և՛ շարկապական:  
Ձևի և շար ու Բանակի խոսքերի մեջ նա տարբերակում է բաղա-  
սական, ենտանգի և բացարարություն խոսքեր, որոնցից բազ-

դասականի մեջ զանազանում է նմանություն, հավասարության և  
տարբերության տեսակները:

Եթև նմանության խոսքերը ցույց են տալիս զլխավոր նախա-  
դասության հատկության, որպիսության նման լինելը երկրորդա-  
կանին, իսկ հավասարության բաղադատականները՝ զլխավոր նա-  
խադասության շար ու քանակի և աստիճանի հավասար լինելը  
երկրորդականին, այս տարբերության բաղադատական խոսքերը  
ցույց են տալիս զլխավոր նախադասության ամի հատկության կամ  
գործողության շար ու քանակի կամ աստիճանի տարբերությունը, ա-  
ռավելությունը կամ նվազությունը երկրորդական խոսքի մի հան-  
գամանքից:

Նեանտանգի խոսքերը, որ որոշում են զլխավորի ձևը կամ ա-  
տիճանը, ցույց տալով նրա հետևանքը, զբղում են վերջադաս և՛ որ,  
որ ետ, մինչև որ, այնպես որ շարկապաներով: Իսկ բացարարու-  
թյան խոսքերը ցույց են տալիս մի հարակից հետևանքի կամ հան-  
գամանքի չլինելը և զբղում են առանց որ շարկապով:

Հիմունգի խոսքերի մեջ Արեղյանը դասորոշում է խոսքի չորս  
տեսակ: 1. պատեռի, 2. նպատակի, 3. պայմանական, 4. զը-  
շական:

Այս վերադիր, ենթակա, խնդիր, ստորոցյալ և պարազայական  
տարաբնույթ ու բազմապիսի երկրորդական նախադասությունների  
հարաբերական ու շարկապական կապակցությունների մանրամասն  
քննություններով, Արեղյանը պարզում և համակարգում է արևելա-  
հայերենի բարդ նախադասության ստորադասական կապակցության  
բույր ձևերը, բացահայտում է հարաբերական բառերի և ստորա-  
դասական շարկապաների շարահյուսական-խմաստային դերն ու նը-  
շանակությունը՝ երկրորդական նախադասությունների՝ զլխավորի  
նկատմամբ ունեցած հարաբերության մեջ: Դրանով նա ստեղծում  
է հայերենի շարահյուսության ստորադասական կապակցության  
ուսմանքը:

Բարդ նախադասության կապակցության մյուս հիմնատիրը՝  
նամագատությունը քննելիս, Արեղյանն ի հայտ է բերում համագա-  
սական կապակցության երեք տեսակ: 1. շարահարություն, երբ  
միմյանցից տնկախ խոսքերը իրար են հաջորդում ստանց կապակ-  
ցական բառերի և մի բարդ ամբողջություն են կազմում սոսկ բո-  
վանդակությամբ. 2. ցուցական բառերով կապակցություն, երբ ցու-  
ցական բառերը զբղելով հաջորդ նախադասություն մեջ՝ անկար-  
կում են նախորդում եղած մի բառի կամ ամբողջ խոսքի բովան-

զակոթյունն ընդհանրապես, որով կապ է ստեղծվում այդ նախադասությունների միջև. 3. նամարասական շարկապնեւով և շարկապական բառերով կապակցություն:

Համադաս նախադասությունների կապակցության այս ձևերի առակ արտահայտված բաղձապան տրամաբանական հարաբերությունները Աբեղյանը վերածում է կրկու դիտավոր տեսակի՝ 1. բաղձապական կապակցության, երբ համադաս խոսքերը իմաստով համաձայն են միմյանց և 2. ներհակապական կապակցության, երբ համադաս խոսքերը բովանդակությամբ իրար հակառակ են ու անհամեմատ:

Միմյանց հակադիր տրամաբանական հարաբերություններ արտահայտող կապակցության այս կրկու դիտավոր տեսակների ներքո, Աբեղյանը համախմբում է հայերենի համադասության բույր կարևոր դեպքերը:

Բաղձապական համադաս նախադասությունների մեջ, Մ. Աբեղյանը երկրորդ խոսքի՝ առաջինի հետ ունեցած կապակցության յոթ դեպք է հայտնաբերում՝ հայերենում: Պրանք են. ա) հավելչական, բ) մասնական, գ) մեկնական, դ) տեղի, ե) ժամանակի, զ) բաղդատության և է) մակարերական:

Հավելական կապակցության մեջ երկրորդ նախադասությունը բովանդակությամբ կամ համարժեք է առաջինին, կամ համեմատ է նրան և նրանից ավելի արժեք ունի:

Մասնական կապակցության մեջ երկրորդ նախադասությունները արտահայտում են միևնույն ընդհանուր մտքի մասերը:

Մեկնական կապակցության մեջ երկրորդ նախադասությամբ կամ բառով բացատրվում է առաջինի միտքը:

Տեղի և ժամանակի կապակցության մեջ, երկրորդ նախադասությունը առաջինին է միանում տեղի և ժամանակի հարաբերությամբ և կապակցվում տեղի ու ժամանակի մի մակարայով, կամ նույն զաղափարները ցույց տվող մի գոյականով:

Բաղդատության կապակցության մեջ համադաս խոսքերը միանում են որակի, չափ ու քանակի կամ աստիճանի հարաբերությամբ և այդ հասկանիչները ցույց տվող ցուցաբաններով (այսպես, նույնպես, նույնքան, նույնչափ և այլն):

Եվ վերջապես՝ մակարերական կապակցության մեջ համադաս նախադասություններն ունեն հիմունքի և ճեռանքի (հետևություն) հարաբերություն: Կապակցությունը ցույց է տալիս կամ պատճառ կամ էլ նետարյուն:

Ներհակական կապակցությամբ նախադասություններում Աբեղյանը մասանելում է կապակցության շատ դեպք՝ միատական, առնական, սամանախիտիզ և հակադրական:

Միատական կապակցության երկրորդ նախադասությամբ մերժվում է առաջինի բովանդակությունը և շրտ փոխարեն հաստատվում է երկրորդին. կապակցվում է՝ ոչ, ոչ թե-այլ, այլ ընդհակառակն բառերով:

Տրոհական կապակցության մեջ համադաս նախադասությունները փոխադարձաբար միմյանց, ամբողջությամբ կամ մասամբ, ժխտում են. կապակցվում են՝ կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ, թե շարկապներով:

Սամանափակող կապակցության երկրորդ նախադասությունը առաջինին հակառակ հետևություն ունի, կամ նրան մի հակադրություն ավելացնելով՝ չափավորում և սամանափակում է նրա բովանդակությունը և նրանից սղաավող հետևության առաջն տեսնում. կապակցվում է բայց, սակայն, բայց և այնպես, բայց դարձյալ, և սակայն, այնուամենայնիվ, միայն, միայն թե շարկապներով:

Հակադրական կապակցության մեջ երկրորդ նախադասությունը, իր հակառակ կամ տարբեր նշանակությամբ միայն, հակադրվում է առաջինին և կապակցվում իսկ, մինչդեռ, ապա թե ոչ, թե չէ շարկապներով:

Ի երրակացությունն այս ամենի, Աբեղյանը համադասական և ստորադասական նախադասությունները համեմատելով գտնում է, որ «համադաս խոսքերի հավելչական, մասնական, ժխտական, տրբորոհական և հակադրական հարաբերություններն արտահայտվում են միայն համադասական, բաղձապական կամ ներհակական կապակցությամբ. այդ հարաբերությունները կարելի չէ ստորադասությամբ արտահայտել: Ընդհակառակն՝ տեղի, ժամանակի, բաղդատության, մակարերական, սահմանափակող, մասամբ և մեկնական կապակցությունների մեջ համադաս խոսքերն իրար հետ նույն հարաբերություններն ունին, ինչ որ զոգվածի մեջ տեղի, ժամանակի, բաղդատության և հիմունքի ու զիջական, մասամբ և վերադարձի խոսքերը գլխավոր խոսքի նկատմամբ. ուստի կարելի է ամեն այս տեսակի համադասական կապակցությունն արտահայտել նաև զոգվածով, աչիներն գլխավոր և երկրորդական խոսքերով: Համադասական կապակցությունը գերազանցվում է այն ժամանակ, երբ տրամաբանորեն ստորադաս խոսքի բովանդակությունն առանձնապես շեշտվում է իրրե մի ինքնուրույն մտածությունը»<sup>1</sup>:

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 670-671:



Քննարկվող ստորագրասկան և համադասական բոլոր կապակցությունների մեջ, ինչպես տեսանք, շարահյուսական զլխավոր դերը վերստագվում է կապակցող բառերին՝ հարարերականներին և շարկապներին, որոնց անունով էլ Արեղյանը կոչում է կապակցության ձևերը։ Ուստի նա կապակցության ձևերի քննությունը ստառ է տանում հիմնականում շարկապների և կապակցական բառերի արամարանական-իմաստային բոլոր առումները իրենց նրբիրաններով բացահայտելու նշանաբանով։ Բարդ նախադասության կապակցության ձևերի նման քննությանը փաստորեն Արեղյանը Ե. Կոնյակի կերպով ստչոչում է կապակցական բառերի մասին միամբողջ դրասական ուսմունք հայ քերականության պատմության մեջ։

Նախադասությունների կապակցությունը, սակայն, նշված ձևերով չի սղաւովում։ Արեղյանը մասնացույց է անում նաև բարդ կապակցությունների կազմության ևս երկու բարձրագույն տեսակ՝ բազմաբարդ խոսքեր և պարբերույթը։ Սրանցով և կենսագրության կանոնների սահմանումով էլ նա բոլորում է իր «Աշխարհաբարդ շարահյուսության» բարդ ու բազմաբովանդակ կառույցը։ Բազմաբարդ նախադասություններին բնորոշ կազմությունը Արեղյանը համարում է երկուսից ալվիի պարզ խոսքերի միակցումը կապակցության բազմազան ձևերով։ Համադասությունը բազմաբարդ է լինում, երբ՝ ա) կազմվում է երկուսից ալվիի համադաս պարզ նախադասություններից, բ) երբ համադաս նախադասություններից մեկը, մի քանիսը կամ բոլորը բարդ են։

Նախադասությունը բազմաբարդ է լինում՝ ա) երբ զլխավոր նախադասությունն ունի երկու և ալվիի երկրորդական նախադասություններ, որոնք կարող են վերաբերել կամ զլխավոր նախադասության տարրեր մասերին, կամ միեւնույն մասին, բ) երբ երկրորդական նախադասություններն իրենց հերթին, իրեն զլխավոր խոսք, կարող են ունենալ երկրորդական նախադասություններ։

Պարբերույթը ևս Արեղյանն համարում է բազմաբարդ նախադասության առանձին տեսակ. «Գա խոսքերն մի սմբողջական գեղեցիկ միություն է, — գրում է նա, — որի մասերը արվեստավոր կերպով այնպես են կապակցվում իրար հետ, որ մի հատ զլխավոր միաբը, որ զարմանում է արբողջի մեջ, մինչև վերջն ստեղծի է մեծում»։

Պարբերույթի կական պահանջները Արեղյանը համարում է՝ 1. երկու զլխավոր մասից կազմված լինելը և մեկը մյուսին լրաց-

նելը. բնդ որում՝ առաջին մասը պիտի ակնարկի երկրորդին. 2. համադասական կապակցություններից պարբերույթ կարող են կազմել միայն ներհակական և մակաբերական, մասամբ և հավելական նախադասությունները, իսկ ստորագրասկաններից՝ նրանք, որոնց զլխավոր խոսքը նախորդում է երկրորդականներին. 3. երկու զլխավոր մաս ունեցող պարբերույթի յուրաքանչյուր մաս և երկուսը միասին կարող են լինել միանգամ, երկանգամ, երեկանգամ և այլն, նայած իրենց մեջ պարունակած շարահյուսական զողվածների քանակին։ Պարբերույթի մասերի և անդամների փոխադարձ հարաբերությունը հիմնված համարելով հանգերձ նրանց արամարանական և շարահյուսական կապակցության վրա, Արեղյանը կարծես պահանջ է համարում նաև մասերի գեղեցիկ ներդաշնակությունն ու համաշարիությունը։

Պարբերույթի՝ այդ ճարտասանական խոսքը տեսակի բնդհանուր հատկանիշները բնեկուց հետո, Արեղյանը մանրամասնորեն մշակում է հայոց լեզվի կենսագրական համակարգը, որը անընշան փոփոխություններով զարձել է արդի հայերենի կենսագրական լավագույն ուղեցույցը։

Ահա հիմնական գծերով «Աշխարհաբարդի շարահյուսության» շղափած իրականություններն ու խնդիրները։

Արեղյանն իր «Աշխարհաբարդի շարահյուսության» ձևերի շարահյուսությունն հաստատում, նախադասության մեջ բառերի պաշտոնը, հարաբերությունն ու կապակցությունը բնեկախ՝ հայ քերականագիտության պատմության մեջ փաստորեն զարգացնում է արդի հայերենի պարզ նախադասության տեսությունը և իր բոլոր մանրամասններով մշակում պարզ նախադասության շարահյուսական համակարգը։ Իսկ երկրորդ՝ «Խոսքերի շարահյուսությունն հաստատում, նախադասության տեսակների և կապակցության ձևերի հետազոտությունը նա ստեղծում է բարդ նախադասության կազմության տեսությունն ու մշակում նրա շարահյուսական բարդ համակարգը։

Նախադասության այդ երկու հիմնատիպերը, որոնք առհասարակ լեզվական մտածողության ու հաղորդակցման հիմքն են կազմում, Արեղյանի գրքի տակ ձևոր են բերում նոր իմաստ ու հնդդությունն ենք հայ ավանդական քերականագիտության մեջ նախադասության ուսմունքը հիմնականում սահմանափակվում էր ստեղծողականության մի շարք կանոնների անձուկ շրջանակներում և դիտվում էր քերականական առումով միայն, այդպիսով Արեղյանը նախադասությունը վերցնում է առավել խոր ու լայն ընդգրկումով։

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 673—674։



Նա ամենից առաջ նախադասությունը դիտում է իրրև մարդկային մտածողության և հոգեբանության, կամ, ինչպես ինքն է ասելովում՝ հոգեբանական դաստիարակության լեզվական արտահայտություն: Հետևաբար, նախադասության մեջ նա տարբերակում է երկու կողմ՝ հոգեբանական-մտածական և լեզվա-արտահայտական կամ լեզվա-կազմական: Նախադասության իր հետազոտության առաջին կիսկետը, ահա, Արեղյանը դարձնում է նրա մտածական-հոգեբանական կողմը, ուստի և էական նշանակություն է տալիս բային, իրրև մտածողության բուն պրոցեսի, իրրև հոգեբանական դաստիարակության էություն: Բայի մեջ է արտահայտվում մարդկային մտքի շարժումը, բուն մտածությունը, ուստի և բայը կազմում է բուն խոսքը կամ նախադասությունը: Իսկ նախադասության ուսումնասիրության երկրորդ էլակետը Արեղյանը դարձնում է նրա սոսկ լեզվական-արտահայտական կամ լեզվա-կազմական կողմը: Եվ այդ երկուսի՝ դասողական-հոգեբանականի և լեզվա-կազմական կողմերի փոխադարձ հնչվածությունով էլ նա բնություն է անում հայերենի նախադասությունները: Արեղյանը արդի հայերենի պարզ ու բարդ նախադասությունների տեսակների, նրանց բաղադրիչ տարրերի ու գրանց լեզվական ու տրամաբանական հարաբերություններին մանրակրկիտ հետազոտություններով փաստորեն բացահայտում է խոսքի կամ նախադասության մեջ արտահայտված ժամանակակից հայերենի լեզվամտածողության ողջ հումակարգը, իր շարահյուսական գրեթե բոլոր ձևերով ու նրբերանգներով: Նա իր փոխադասական-տրամաբանական խոր ըմբռնումների և լեզվական ֆենոմենոլոգիայի ողջ ոլորտի շնորհիվ, նախադասության, և մասնաբաժնի, բարդ նախադասության բաղադրիչների կապակցության մեջ երևան է հանում հայերենին առանձնահատուկ մտածողության ամբողջական պատկերը: Փրանսով նա հայերենի շարահյուսության գիտությունը դուրս է բերում իր նորմատիվ բերականական միջանակից և նրան տալով բոլորովին նոր՝ փոխադասական իմաստավորում՝ աչքն զննում է իսկական գիտական բարձրության վրա:

Հայերենի շարահյուսությունը հետազոտելիս Արեղյանը հետևյալում է ուսումնասիրվող առարկայի պարզացման ընթացքին՝ նրա նախնական տարրերից սկսած մինչև ձևավորման ավարտը: Նա արդի արևելահայերենի շարահյուսության ուսումնասիրությունը սկսում է նրա պարզագույն տարրերից՝ բառերի տեսակներից, նրանց հարաբերությունների և կապակցության սկզբնական ձևերից՝ ստորադասությունից, համադասությունից, կախման և ներուժակություններից, խնդրառություններից և համաձայնություններից, և շարահյուսական նշված իրակությունների բնությունը բացահայտում դրանց հիման վրա առաջացած կապակցության առավել մեծ միավորի՝ պարզ նախադասության ձևավորմանը, նա ցույց է տալիս, թե ինչպես լեզվական դասակարգում է կապակցությունների զարգացմանը, նա ցույց է տալիս, թե ինչպես լեզվական դասակարգում է կապակցության նորմատիվ ձևերով շարահյուսական այդ պարզ միավորները՝ պարզ նախադասությունները: Հարում են միմյանց՝ ստորադասական ու համադասական հարաբերություններով կազմում կապակցության առավել բարդ միավորներ՝ բարդ նախադասություններ: Հարում են միմյանց՝ ստորադասական ու համադասական նախադասությունների զարգացմանը, Արեղյանը երևան է հանում կապակցության առավել բարդ տեսակներ՝ բարձրաբարդ նախադասություններ և պարբերություններ, որոնք ձևավորվում են բարդ նախադասությունների ստորադասական և համադասական կապակցություններով:

Այդպես, բայ-նախադասությունից մինչև պարբերություն — ահա հայերենի շարահյուսական ուսումնասիրության Արեղյանի էությունը: Երկրորդը և հանդիման-բարձրագույն կետերը, որոնց արանքում ընկած է հայերենի խոսքի (նախադասության) կազմությունը իր լեզվական բարդ ու բազմադաս ձևերով:

Հայերենի նախադասության և նրա կապակցության ձևերի պարզից դեպի բարդը, ստորինից՝ բարձրագույնը կատարված Արեղյանի այս հետազոտությունը իրագործվում է մեթոդաբանական մեկ այլ տեսադժով՝ նա. դա շարահյուսական ձևերի և նրանց արտահայտման ընթացքի ուսումնասիրության հաջողությունն է:

«Անշխարհարարի քերականություն» և «Անշխարհարարի շարահյուսություն» մեջ բնության առևելքով արևելահայերենի բառագիտությունը, ձևաբանությունն ու շարահյուսությունը, ինչպես տեսակներ, Արեղյանը բային է դնում քերականության այդ տարրեր բնագավառների կետերում և բառագիտական, ձևաբանական ու շարահյուսական բոլոր իրակությունները հետազոտելիս, նա կնքում է բային և գրանցը քերականորեն արժեքավորելիս միշտ նկատի է առնում բայի հետ գրանցը ունեցած հարաբերությունը: Բային է խոսքի և մտածողության կենտրոնը. առանց բայի չկա խոսք: Բային են կազմում և ձևավորում խոսքի, հետևաբար և լեզվի բովանդակությունը: Բայց դա զեռես էլակետային սկզբունքն էր, մինչդեռ



այն ուսմունքը զարձնելու համար հարկ էր բայի, հետևաբար և խոսքի (նախադասության) մանրամասն հետազոտություն, եվ Արեղյանը շարահյուսության մեջ, սկզբից մինչև վերջ փալլուն կերպով ասպացուցում է բայի, իբրև բովանդակավորված խոսքի կենտրոնի իր սեսությունը:

Հայերենի շարահյուսական իրակությունները բննելիս, ինչպես տեսանք, Արեղյանը բերականական մի շարք կարգեր ու հասկացություններ (հոլովների նշանակությունն ու կիրառությունները, բայի եղանակները, կերպերն ու ժամանակները, կապեր, շաղկապներ, հարաբերական բառեր և այլն), որոնց մի մասը, սովորաբար, նախորդ ու ժամանակակից փերականները վերառում և քննում էին ձևաբանության մեջ իրեն ստիկ ձևաբանական հասկացություններ, նա, հակառակ նրանց, բայի եղանակների ու ժամանակների, կապերի, շաղկապների ու հարաբերական բառերի փերականական իրականան արժեքավորումը տալիս է միմիայն շարահյուսության մեջ: Ուրիշ կերպ սասած, նա այդ փերականական կարգերն ու հասկացությունները արժեքավորում է նրանց արտահայտած շարահյուսական հարաբերությունների, այսինքն նրանց արտահայտած իմաստի տեսանկյունից: Այդպես և հոլովների հարցում. թեպետ հայ ավանդական փերականագիտությունը հոլովների կիրառական նշանակություններին զգույր սեղ էր հատկացնում շարահյուսության մեջ, բայց հոլովների արտահայտած շարահյուսական իմաստների բացահայտումով՝ շափազանց սահմանափակ էր: Արեղյանը ոչ միայն հազիմահարում է հայ փերականագիտության սահմանափակությունը հոլովների նորանոր նշանակությունների բացահայտումով, այլև ձևաբանության մեջ իր պաշտպանած հինգ հոլովների ձևերի տակ, շարահյուսության մեջ, երևան է բերում տարբեր ու բազմազան իմաստային հարաբերություններ: Գրանով նա մեծապես հարստացնում է հայերենի հոլովական ուսմունքը, այն էլ հոլովների արտահայտած շարահյուսական բովանդակության լայն բացահայտումների հաշվին:

Այդպես՝ ձևաբանության մեջ փերականական մեռչալ ձևերի տակ հանդուզ հոլովների, բայի եղանակային ու ժամանակային արտահայտությունների, կապերի, շաղկապների ու հարաբերական բառերի արտահայտած տարբեր ու բազմապիսի շարահյուսական իմաստների ի հայտ բերումով, Արեղյանն այնպիսի կենդանություն է հաղորդում դրանց, որ դրանք հայ փերականագիտության մեջ ընդմիջու ստանում են իրենց բուն փերականական-իմաստային արժեքը:

Նշված փերականական կարգերով ու հասկացություններով, ինչպես նաև շարահյուսությունը իրականացող շարահյուսական կապացության ձևերը բննելիս, Արեղյանը զարմայալ այդ ձևերի տակ երևան է բերում դրանց արտահայտած կախման ու ներուսկուսության տրամաբանական հարաբերությունները և վերջիններիս պանազան ենթատեսակներն էլ զարձնում է բուն հետազոտության ստորիս: Գրանով զարմայալ նա բացահայտում է և հետազոտում շարահյուսական ձևերի արտահայտած իմաստային հարաբերությունները:

Հայերենի շարահյուսության Արեղյանի հետազոտությունն աչիք է բննում մեկ ստանձնահատկությամբ ևս: Իր ուսումնասիրությունը կատարելով փաստական վիթխարի նյութի հիման վրա և հաշի աննելով այդ նյութի բնձնուած հարուստ տվյալները, Արեղյանը շարահյուսական յուրաքանչյուր իրակություն բննելիս ի հայտ է բերում զարմանալի մանրակրկիտություն, շարահյուսական աննանեուրը ու մասնակի հատկանիշների բացահայտման կարողություն:

Նա կապակցության յուրաքանչյուր ձև կամ արտահայտություն վերառում և քննում է իր էական ու երկրորդական գրեթե բոլոր մանրամասներով, որոնք այդ քննությունները մեծ մասամբ գրրկում են ստարիություն կամ երկմտություն վերցնելու հնարավորությունից: Եթե Արեղյանը հետազոտության իր մանրակրկիտությամբ հետազոտ էր երկարեքականների ուսումնասիրությունների հատկանշական աստոմիղմին», սպա այդ մանրամասներից լայն ընդհանրացումների մակարդակ բարձրանալու և մանրամասների մեջ զլիսավորն ու հիմնականը աչրաթող շանելու կարողությամբ՝ նա ինքնատիպ էր և ինքնուրույն:

Արեղյանի հայացքը, ինչպես նախորդ, այնպես էլ այս ու հետագա լիզվարանական ուսումնասիրությունների մեջ, առարկայի բմրանման հարցում ևս համընկնում է երկարեքականների էլակետային սկզբունքներին:

Նա աշխարհաբար հայերեն սակով, ի տարբերություն նախորդ և հետագա փերականների, չի հասկանում միայն դրական արևելահայերենը, այլև ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն, և այն զրականին հավասարապես, զարձնում է իր հետազոտության ստարկան: «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ սկզբից մինչև վերջ, իրեն հատուկ հետևողականությամբ, Արեղյանը զրական հայերենին զուգընթաց ու համարժեք, հետազոտում է ժողովրդական-խոսակցա-



կան լեզվի կապակցությունն ձևերն ու դրանցով արտահայտվող հարաբերությունները, այսինքն, արևելահայ աշխարհաբարը վերցնում է իր ամբողջության մեջ՝ դրական ու խոսակցական ձևերով, դրանով իսկ առավել հարուստ ու համակողմանի դարձնում արևելահայերենի շարահյուսական համակարգության ամբողջական պատկերը:

Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը թեպետ հիմնականում նկարագրական բնույթ ունի և արամարանական կուռ ու կառուցիկ շարահյուսական համակարգի մեջ մարմնավորում է արևելահայերենի շարահյուսական իրակությունների ամբողջական պատկերը, բայց այն սուսի նկարագրությամբ չի սպասվում: Արեղյանը դրական ու ժողովրդական լեզվի բացառապես օրինակների հանգամանակից բնութագրումներով վեր է հանում ոչ միայն արևելահայերենի շարահյուսական իրակություններն ու ներքին օրինակափոխությունները, այլ միաժամանակ իր վերաբերմունքն է արտահայտում լեզվական այս կամ այն երևույթի նկատմամբ: Արեղյանի վերաբերմունքն հիմնականում արտահայտվում է երկու ուղղությամբ. ա) իր իսկ հայտնաբերած իրակությունների և օրինակափոխությունների պատմական, արամարանական ու հոգեբանական հիմունքների համախմբող գիտական բացատրություններով. բ) բերականորեն ոչ ճիշտ լեզվա-շարահյուսական արևելաբանները ճշգրտելու և դրանց բերականական ուղիղ ձևերը վերականգնելու և կարգավորելու ներգործուն միջամտություն:

Թեպետ «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը նախատեսված է եղել զարոցական նպատակների համար և իրապես ունի դասազրբային բնույթ, սակայն շարահյուսական յուրաքանչյուր իրակության, կանոնի, կապակցության տեսակի առիթով հեղինակի հաճախակի ավանդ գիտական ծանոթությունները և առհասարակ նյութի մանրակրկիտ բացատրությունները, աշխատությունը դուրս են բերում դասազրբի սահմանափակ շրջանակներից և դարձնում գիտական ծանրակշիռ հետազոտություն:

Այդ ծանոթությունների և դիտական մանրամասն մեկնաբանությունների մեջ Արեղյանը երևան է բերում լեզվական բացառիկ զգացողություն, բերականական իրակությունները իրենց պատմական ու ձևական դարգացման մեջ դիտելու և բութանելու խորաթափանց միտք, իր բացահայտած շարահյուսական կանոնները գիտականորեն համակողմանի հիմնավորելու երկաթյա արամարանություն:

Լեզվական երևույթների բացատրության նկատմամբ գիտական

խոսապահանջ մոտեցումով է պայմանավորված «Աշխարհաբարի շարահյուսություն» մյուս հատկությունը՝ հայերենի շարահյուսական իրողությունները ճշգրտելու, նորմավորելու և կանոնավորելու միտումը: Արեղյանը, բնագիտաբան, հետևելով լեզվի բնական զարգացմանը, աշխատում է ամեն ինչ բացահայտել ու բացատրել լեզվական ստույգ օրինակափոխությունների տեսանկյունից, ստանց բըննդադասելու լեզվի զարգացման բնական միտումը, կանխելու այն կամ շեղելու իր ընթացքից: Նա, բացահայտելով լեզվական ավել իրակություն, ամեն կերպ փորձում է գիտականորեն պատճառաբանել ու հիմնավորել նոր գոյության անհրաժեշտությունը այնքանով, որքանով ավել փաստը հիմք է տալիս դրան: Նա ուղղում, ճշտում և կարգավորում է բացահայտ շեղումներն ու սխալները, որոնք խորթ են լեզվական ավել օրինակափոխանք կամ հայոց լեզվի ոգուն: Նրա նորմավորման սկզբունքները խիստ առարկայական են, զուրկ բնահաճ միտումներից և կանոնի սրբապատկալից: Գրական հայերենի շարահյուսական իրողությունները կարգավորելու առհասարակ, Արեղյանը ելնում է կենդանի հայերենի, հատկապես ժողովրդական խոսակցական լեզվի շարահյուսական սկզբունքներից, որոնց մեջ համեմատաբար անտարտ է պահպանվել հայերենի շարահյուսական լեզվազգացողությունը:

Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն»-ը, որ աչքի է ընկնում սխառնի կուռ արամարանություն, լուրջ հարցադրումներով և ծանրակշիռ մեկնաբանություններով, մշակած կանոնների պարզ, լակոնական ոճով, բովանդակության խտությամբ, շարահյուսական մանրամասների մշակման նուրբ ճշգրտությամբ, — հայ բերականագիտության խոշոր երևույթներից է և նշանավորում էր մի բարձրագույն փուլ հայ բերականագիտական մտքի պատմության մեջ: Այն՝ նոր հայերենի շարահյուսության անդրաբնիկ գիտական ուսումնասիրությունն էր և նոր հայերենի գիտական բերականությունն անկյունաքարը:

Ք. ԱՐԵՎԵԼՅԱՆԻ ԱՇԽԱՐԻՍԱԲԱՐԻ ՏԵՄՈՒԹՅՈՒՆԸ

Արեղյանի բերականական նոր համակարգը մշակված էր տակավին 1906-ին հրատարակած «Աշխարհաբարի բերականություն»-ը, զիբբ, որին հեղինակը մեծ արժեք էր տալիս հենց այդ նոր մշակած սխառնի համար<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս հեղինակի Առաջաբանը, էջ 9:



Քիրքը նվիրված լինելով հայերենի հնչյունաբանությանը և բառագիտությանը (իմս՝ իմաստաբանությանը, բառակազմությանը և ձևաբանությանը), հետազոտում էր սոսկ ուսուցողական նպատակներ և նախատեսված էր տարրական, երկդասյան և թեմական դպրոցների առաջին երեք դասարանները՝ համար իրեն դասադիրը<sup>1</sup>։ Հետագայում, քերականագիտական համակարգի և հասկացությունների այն արժեքավոր ներթուփումները, որ բերում էր նշված Քերականությանը Մ. Արեղյանը, կրում էին հիմնականում սքեմատիկ գործնական բնույթ. Քերականության դասադիրային նկարագրի պատճառով հեղինակը դիտմամբ տեսական բնույթումների մեջ չի մտնում և դասադիրը չի ծանրաբեռնում մանրակրկիտ բացատրություններով։

«Այդ ամենը,— գրում է նա,— կը մտնի մեր ընդարձակ քերականության մեջ, որի լոկ համառոտությունն է այս քերականությանը, և որ հույս ունենք, թե մի օր ամբողջացնենք և կը հրատարակենք»<sup>2</sup>։

Իր անդրանիկ Քերականության տղազրույթունից անմիջապես հետո, նա, ինչպես տեսել ենք, մանր հետազոտությունների ձևով, երևան է հանում արդի արևելահայերենի առանձին խնդիրներին նվիրված քերականագիտական իր նոր տեսությունները<sup>3</sup>, Ազգային, նա, աակավին 1906-ին պատրաստ, դպրոցների բարձր դասարաններին համար նախատեսվող շարահյուսության դասագիրքը չի տղազրում, այլ գրում է աշխարհարարի իր նոր գիտական շարահյուսությունը, ուր ի մի էին բերված քերականության այդ մարդին վերաբերող հեղինակի տեսական բոլոր դրույթները, եվ կբն «Աշխարհարարի շարահյուսությանը» իրազորմանում էր մասնավոր հայերենի ընդարձակ գիտական քերականություն ստեղծելու հեղինակի բաղձները, սպա հնչյունաբանությանն ու բառագիտությանը նվիրված իր գիտական ամբողջական քերականությունը, որ վաղուց պատրաստ էր՝ երկար ժամանակ մնում է անտպու։ 1922—23 թթ., կր Արեղյանը դասախոս էր Հայաստանի Մեծ համալսարանում, ելնելով համալսարանական պահանջներից, վերամշակում է այն և դասավանդում իրեն հայոց լեզվի բարձրագույն դասընթացը Այն լույս է տեսնում միայն 1931 թվականին, Մեղրույան ֆունդի կողմից՝

«Հայոց լեզվի տեսություն» քնդանուր խորագրով։ Աշխատությունը գուրս էր ամբողջացնելու Արեղյանի մշակած հայոց լեզվի գիտական քերականությունը, որի շարահյուսության մասը վաղուց էր արդեն լույս աշխարհ եկել։

«Հայոց լեզվի տեսություն»-ը նվիրված էր ժամանակակից արևելահայերենի հնչյունաբանությանը, իմաստաբանությանը, բառակազմությանը և ձևաբանությանը, այսինքն այն նույն խնդիրներին, որոնք տարրական ձևով արծարծված էին «Աշխարհարարի քերականություն» մեջ։ Քերականագիտական սխեմանի ու քնդհանուր սկզբունքների տեսականից, հարկավ, «Հայոց լեզվի տեսություն»-ը հիմնականում նույնանում էր «Աշխարհարարի քերականություն»-ը և ծավալային տոտով գտնում նույնիսկ նրա մի ընդարձակ փոփոխար։ Բայց իր մեթոդով, շոշափած քերականական խնդիրների ընդգրկումով և, մասնավոր, գիտական որակով տարբերվում էր «Աշխարհարարի քերականություն»-ից, մեթոդաբանությամբ՝ նույնիսկ «Աշխարհարարի շարահյուսություն»-ից։

Եթե վերիններին մեջ Արեղյանը արևելահայերենի իրականությունները բնույթ է համաժամանակյա (սինխրոնիկ) մեթոդը և բավարարվում է մեծ մասամբ լեզվի բաղադրիչ մասերի նկարագրությունում և նրանց բաղադրության օրենքների սահմանում միայն, ապա «Հայոց լեզվի տեսություն» մեջ նա կիրառում է հետազոտության ամբամանակյա (դիսխրոնիկ) մեթոդը և արևելահայերենի հնչյունաբանական, բառագիտական ու ձևաբանական իրականությունները ուսումնասիրում նրանց պատմական զարգացման ընթացքում։ Նա այստեղ լեզվական բաղադրիչները ոչ միայն նկարագրող է և դրանց բաղադրությունների օրենքները սահմանող, այլև դրանց գիտական մեկնաբանող։ Պատմական մեկնաբանության եղանակը, որին Արեղյանը «Աշխարհարարի շարահյուսության» մեջ հազվադեպ էր դիտում, «Հայոց լեզվի տեսություն» մեջ այն դարձնում է լեզվական բնույթումների իր հիմնական սկզբունքը։ Վերջինս մեջ արդի հայերենի հնչյունաբանական, իմաստաբանական, բառակազմական և ձևաբանական բաղադրիչները ստանում են իրենց պատմական հավաստի բացատրությունը, և դրանով իսկ «Հայոց լեզվի տեսություն»-ը ձևոր է բերում գիտատեսական բացառիկ արժեք։

#### 1. ՀԵՅՅԱՆՆԵՐԱՆՈՒՄՆԵՐԸ

Հնչյունաբանությունը, իրեն քերականության բաղկացուցիչ մաս, ծանոթ է հայ քերականագիտությանը նրա սկզբնավորումից ի

1 Տե՛ս հեղինակի Առաջարկը, էջ 7։  
2 Մ. Արեղյան, Աշխարհարարի քերականություն, Առաջարկ, էջ 9—7։  
3 Հմտ. նրա «Աշխարհարարի հոդվածները», 1908, «Հայցական հոդվածներ աշխարհարարում», 1909, «Բայի եղանակների արևելյան աշխարհարարում», 1912։



վեր: Գրեմեհիս Թրակացու Քերականության մեջ արգեն «Յաղագս տասին», «Յաղագս վանգի» և հետևյալ պարարաֆների առկա արձանագրված են զբարբար հայերենի հնչյունների տեսակները (ձայնափոք, բաղաձայն), ձայնափոքների տեսակները (սուղ, երկար, երկամասնակ, առաջադիր, ստորագաս), երկարարանները, բաղաձայնների տեսակները (նուրբ կամ լերկ, ստվար կամ թավ, միջակ, անձայն, կիսաձայն, կրկնակ, նայ) և վանկերի տեսակները (սուղ, երկար<sup>1</sup>): Ուշ միջնադարում Թրակացու Քերականության մեջ նշված հրեշտակաբանական համակարգը տարբեր մեկնիչների աշխատություններում որոշ համայնությունների ու աննշան փոփոխությունների ենթարկվելով, փոխանցվում է նոր քերականներին, որոնցից հատկանշը ձայնակն են Մ. Չամչյանը, Գարբրիել Ավետիսյանը և Արսեն Բաղրատունին: Ավետիսյանը, 1815-ին հրատարակած զբարբարի իր Քերականության մեջ<sup>2</sup>, Քրակացու հնչյունաբանական համակարգը բնորոշելով հանդերձ, մտնում է լծող հնչյունների հասկացությունը և հայերենի առանձին հնչյունների պատմական զարգացման մասին առանձին բացատրություններ է տալիս: Արսեն Բաղրատունին առավել զարգացնելով ու խորացնելով հայերենի հնչյունաբանության նախորդ ավյալները, ստեղծում է զբարբար հայերենի հնչյունաբանության և մասնավոր հնչյունափոխության մի իսկական ուսումնը<sup>3</sup>, որը մինչև Արեղյանը մնաց հայոց լեզվի միակ հնչյունաբանությունը: Ինչ վերաբերում է աշխարհաբար հայերենի հնչյունաբանությանը, ապա Այտերյանի Քերականության մեջ ուղղազբույթական և առողանության կանոնների առնչությամբ մի քանի հարևանքի դիտարկություններ են միայն արվում հայերեն տառերի հնչյունական արժեքի վերաբերյալ: Մինչդեռ Պալասանյանը իր «Ընդհանուր տեսության» մեջ զգալի տեղ է հատկացնում աշխարհաբար հայերենի հնչյունական երևույթներին: Նա, առաջինը հայ քերականագիտության պատմության մեջ, ուղղորդվում է զարձանում զբարբարի համեմատությամբ աշխարհաբար հայերենի հնչյունափոխության իրականություններին և հատկապես զբարբար երկարարանների աշխարհաբարում ունեցած պարզումների կամ շրջումների,

1 «Քերականության Գրեմեհիսի Թրակացույց, ի Փարեզ, 1824, էջ 8—24:  
2 Տե՛ս Գ. Անախիման, Քերականության հայկական, Վենետիկ, 1815, էջ 163 և հտե.:  
3 Ա. Բաղրատունի, Հայերեն քերականություն ի պետ զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 626 և հտե.:  
4 Ա. Այտերյան, Փնեական քերականություն, էջ 338—346, 365—373:

նոր լեզվի առանձին բառերում ձայնափոխների և բաղաձայնների կրթութի, բաղաձայնների հավելման, ինչպես նաև հնչյունների հետևաբանության վրա<sup>4</sup>:

Պալասանյանի հարցադրումը արժեքավոր էր մեթոդական առումով ևս: Արևելյան աշխարհաբարի հնչյունափոխության երևույթները նա պարզաբանում է հին լեզվի նկատմամբ, այսինքն՝ հայերենի հին և նոր վիճակների համեմատությամբ: Պատմա-համեմատական մեթոդաբանության այս միևնույն սկզբունքը, այնուհետև որդեգրում է Պալասանյանի աշակերտն ու հաջորդը՝ Մանուկ Աբեղյանը, որը զարգացնելով ուսուցչի հարցադրման եղանակները, դիտական նոր մակարդակի վրա է դնում աշխարհաբարի հնչյունաբանության հետազոտությունը և ստեղծում արդի հայերենի հնչյունաբանության գիտական ամբողջական ու համակարգված ուսումնը:

Տակավին գիտական գործունեության իր սկզբնաբալլերի ժամանակ, Արեղյանը բավական հանգամանորեն ընտելության առնելով զբարբարի երկարարանները, պարզում է հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի հարցեր: Այնուհետև, թե՛ ժողովրդական լեզվի շեշտագրության, թե՛ ժամանակակից հայերենի ուղղազբույթության, ապա և տաղաչափության խնդիրներին նվիրված աշխատություններում<sup>5</sup>, նա աստիճանաբար մշակում ու զարգացնում է հայոց լեզվի հնչյունաբանության հիմունքները, որոնց տարրական մասնակի նկարագրությունը գտնում ենք 1906-ին հրատարակված «Աշխարհաբարի քերականության» առաջին մասում, իսկ գիտական ամբողջական տեսնը՝ «Հայոց լեզվի տեսության» մեջ: Հայերենի հնչյունաբանության նոր մակարդակով գիտական հիմունքների մշակումը պատմականորեն պայմանավորված էր Արեղյանի գաճախում լեզվաբանական դպրոցի սկզբունքներով:

Սրիտերևականները խորամուխ լինելով հեղինակական լեզուների հնչյունական օրենքների ուսումնասիրության մեջ և սահմա-

1 Սա. Պալասանյան, Ընդհանուր տեսություն արևելյան նոր զբարբար լեզվի հայոց, Բիթլիս, 1870, էջ 8 և հտե.:

2 Հմմտ. Ա. Արեղյան, Գրարարի երկարարաններ (Վնոր-գար), 1890, № 187—191, 193, 194, 196, 197, Ժողովրդական լեզվի շեշտագրությունը (Վնոր-գար), 1890, № 141—145, Ուղղազբայական նկատողություններ (Վնոր-գար), 1890, № 151, 152—155, 161, 162, 164, 166, 168, 169, Հայոց լեզվի ուղղազբույթություն, Բիթլիս, 1892, Մեր ուղղազբայական մասին (Վերտաբաթ), 1913, № 11—12, Հայերեն տաղաչափության մասին («Համալսարան», 1916, № 21—23, 25, 26), Ջեղուցում հայոց լեզվի ուղղազբույթական սեփարմի մասին, էջմիածին, 1921, Ուղղազբույթական սեփարմը, Երևան, 1925:



Ներով հնչյունաբանական նոր ու կայուն օրինաչափություններ, մեծ զարկ են տալիս բնոջանուր հնչյունաբանության զարգացմանը: Հնչյունաբանությունը դառնում է բերականության մի առանձին և ինքնուրույն բաժին, որի հետազոտության առարկան է լեզվի արտաբերի ֆիզիկական կողմը՝ բառերի հնչյունները:

Արեղյանը, կենյով, ահա, բնոջանուր հնչյունաբանության մշակված տեսական գրույթներից, դրանց հիման վրա սանդղծում է արդի հայերենի հնչյունաբանության գիտական ուսմունքը, որը բողբոջվին նոր որակ ու մակարդակ էր նշանավորում հայ լեզվաբանության պատմության մեջ:

Նա հայերենի հնչյունների հետազոտությունը առաջ է տանում հնչյունների երկու իրական վիճակները՝ նրանց կայուն գրույթներն ու տեսակները, ապա և փոփոխությունն ու զարգացումը հարվի աննկղել: Ըստ այդմ էլ նա հայերենի հնչյունական ուսմունքը բաժանում է երկու հիմնական մասի. ա) հնչյունների արտաբերության ու տեսակների և բ) հնչյունների փոփոխությունների:

Արեղյանը ժամանակի լեզվաբանության պահանջների համեմատ, հնչյունների արտաբերումը դիտում է անատոմիական-բնախոսական տեսանկյունից, իրեն մարդու խոսակցական ու շրջապատի օրգանների (կրկորը, բերան, բիափող, ձայնալարեր, ձայնաճեղք, լեզու, ատամներ, շրթունքներ, քիմք) գործունեությունը առաջադրելով: Ըստ ձայնի և ազմուկի հարաբերության, նա հնչյունները բաժանում է երկու գլխավոր տեսակի՝ ձայնեղի և անձայնի (խուլ)։ Ընդհանրապես բաժանում է երեց տեսակի՝ 1. ձայնեղուհների, 2. անձայնեղուհների և 3. ձայնեղ ազմուկավոր բաղաձայնների. իսկ անձայն կամ խուլ հնչյունները, որոնք կազմված են միայն ազմուկից՝ անվանում է անձայն ազմուկավոր բաղաձայններ:

Այս բնոջանուր հնչյունական կարգերի համաձայն, Արեղյանը կատարում է հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունների տեսակի գիտական դասակարգումը: Անատոմիական-բնախոսական առաջնիկներից մանրամասնորեն որոշարկելով հայոց լեզվի ձայնավորների արտաբերման տեղերը, նա ըստ այդմ էլ կատարում է հայոց լեզվի ձայնավորների հետևյալ համակարգությունը. ի-ն և է-ն առաջաբնային ձայնավորներ են, ի-ն լեզվի վերին բարձրության, իսկ է-ն՝ միջին բարձրության: Ը-ն քմամիջային, լեզվի միջին բարձրության ձայնավոր է, իսկ ու-ն, օ-ն, ա-ն՝ վերջաբնային ձայնավորներ: Աւ-ն լեզվի վերին, օ-ն միջին և ա-ն ստորին բարձրությանն են պատկանում, ընդ որում ու-ի և օ-ի արտաբերության ժամանակ կարևոր

գեր են կատարում նաև շրթունքները, իրենց առաջնիկավորումը և կրթաբաժնում:

Բայց առավել բարդ ու հետաքրքիր պատկեր են ներկայացնում բաղաձայնների տեսակները, նրանց արտաբերության տեղերն ու եղանակները:

Արեղյանը, բաղաձայնները, ըստ իրենց արտաբերության եղանակի, բաժանում է երկու գլխավոր տեսակի՝ 1. փակվածի կամ պայթական բաղաձայնների և 2. նեղվածի կամ շփական բաղաձայնների, որոնք լինում են ձայնեղ և անձայն:

Իսկ ըստ բաղաձայնների բնորոշ ազմուկի առաջացման տեղերի, նա տարբերակում է երկու տիպ՝ բերանային և ռեզալյին բաղաձայններ:

Ըստ արտաբերության տեղի՝ Արեղյանը հայոց լեզվի բաղաձայնները բաժանում է յոթ խմբի. 1. շրթնային (պայթականներ՝ պ, բ, շփականներ՝ վ, ֆ, որոնք կոչում է շրթնատամային), 2. առամեային (պայթականներ՝ տ, դ, շփականներ՝ ս, զ), 3. որբեզային (մ, ն), 4. լեզվային (լ, բ, ռ), 5. մալային (շ, ճ), 6. կապկային (պայթականներ՝ կ, գ, շփականներ՝ խ, զ), 7. ճաղգային (հ): Նա մանրամասնորեն ցույց է տալիս նաև, թե ալվյալ բաղաձայնները որոշ հնչյունների հետ արտաբերվելիս փոխում են իրենց որակը. ռեզալյին ն-ն, օրինակ, գ, կ, ք-ից առաջ դառնում է քմային, կապկային գ, կ, ք բաղաձայնները ի, ի-ից առաջ արտաբերվում են իրեն քմային, և այլն:

Ըստ կազմության՝ Արեղյանը հայերենում տարբերակում է երկու կարգի բաղաձայններ. պարզ և բարդ: Բարդ բաղաձայնները է համարում երկու կամ երեք հնչյունի այնպիսի բաղաձայնություն, որի մեջ երկու հնչյունը մեկ արտաբերությամբ են առաջանում և ձայնաբանորեն իրեն մեկ հնչյուն են ըմբռնվում: 2. Հայերենի բարդ բաղաձայնների մեջ Արեղյանը տարբերակում է երկու տեսակ.

1. Հաղագլուխներ (փ, ք, ք), որոնք կազմության մեջ սովորական է հաղագլխի բաղաձայնը և 2. կրկնակ կամ կես-պայթական (կես-շփական) բաղաձայններ (ծ, ձ, ց, ճ, չ, շ), որոնք կազմվում են մի պայթական (տ, զ, ք) և մի շփական բաղաձայնից (ս, զ, շ, ժ):

Այս և, էական զծերով, հայոց լեզվի ձայնավոր և բաղաձայն հնչյունների Արեղյանի կատարած դասակարգումը, որը նորոգվում էր հայ լեզվաբանության պատմության մեջ: Արեղյանի հնչյունա-

կան դասակարգումը զարձակ հետադարձ հայ լեզվաբանների հայտնի հնչյունաբանական բնութագրերի պահպան հաստատուն կազմերը:

Հայերենի հնչյունների ուսումնասիրությունն, այնուհետև, Արեղյանն առաջ է տանում նրանց բառակազմական դերի բացահայտության նկատառումով: Ըստ հնչյունների արտաբերության զրույթյան, նա լեզվի մեջ տարբերակում է ուժեղ և քույլ հնչյուններ, որոնք իրեն բառակազմության նախնական տարրեր, սովորաբար հարում են միմյանց և կազմում վանկեր: Հնչյունների վանկակազմական դերը նկատի առնելով, Արեղյանը նախորդ բերականների նման, տարբերակում է հնչյունների երկու տեսակ. ա) վանկային կամ վանկ կազմող հնչյուններ և բ) անվանկային կամ վանկ չկազմող հնչյուններ: Հայերենում վանկային՝ ճարտար-վորները, իսկ անվանկային՝ բաղաձայնները համարելով ճայնիճ, նա միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ մեկ-մեկ բաղաձայնները կարող են վանկային հնչյունի դեր կատարել, իսկ ճայնավորները՝ անվանկային հնչյունի: Առանձին վանկ չկազմող ճայնավորը թույլ կամ բաղաձայնական ճայնավոր (կիսաձայն) է, իսկ վերջինս և վանկ կազմող ճայնավորի կապակցությունը՝ երկարաբա:

Նա առանձնապես կանգ է առնում յ (ի) կիսաձայնի հնչյունական որակի որոշարկման վրա, որի մանրամասն տեսությունը օտար լեզուների զուգահեռներով նա մշակել էր տակավին 1925-ին իր «Ուղղագրության սեֆորմը» աշխատության մեջ՝ Ստ. Մախաթյանցի հետ բանավիճելիս<sup>1</sup>: Արեղյանը ցույց է տալիս, որ հայերենի ի վանկային ճայնավորն ու յ կիսաձայնը տեղով ու որակով միևնույն հնչյունն են «և իրարուց տարբերվում են միայն իրենց ուժով. յ հնչյունը թույլ ի ճայնավոր է», նա գտնում է, որ մեր կիսաձայն յ-ն շփոթել է շփոթելի գերմ. յ (յոտ) առաջաբանային շփական բաղաձայնի հետ, որ հանդիպում է մեր բարբառներում<sup>2</sup>:

Հայերենի երկարաբաններն Արեղյանը համարում է յ կիսաձայն կամ թույլ անվանկային ճայնավորի՝ վանկային ա, ո, ու, է, ի ճայնավորներից զուգակցվելու արդյունք: Գրանք, բառ զուգակցման ձևի, լինում են բնկնող (աչ, ոչ, ուչ, էչ) և բարձրացող (յա, յո, յու, յե, յի):

Նա համակողմանի բնութագրում է առնում բառերի արտաբերու-

մը, հեղձուն ու վանկերի զոյացումը, հայերենի վանկակազմության ղեկավար և զրանք բացատրում արտաշնչության ընդհանուր կամ թույլացման բնախոսական հիմունքներով և իրարից արտհվող հնչյունների հատկությամբ:

Հնչյունների նկարագրությունը, դասակարգումն ու բառակազմական հատկությունները պարզաբանելուց հետո, Արեղյանն անցնում է հնչյունների զարգացման կամ փոփոխության խնդրի բնութայինը:

Հնչյունների փոփոխությունը հիմնականում համարելով պատմական բերականության ուսումնասիրության առարկա, նա, սակայն, դրական լեզվի կազմության, արտասանության և ուղղագրության պարզաբանման համար կարևոր է համարում բացահայտել հայերենի հնչյունափոխության էական կողմերը, կանց առնելով հնչյունափոխության երկու կարևոր եղանակի վրա. 1. բառերի մեջ հնչյունների տեղափոխության կամ անառնադրության և 2. հնչյունների արտաբերության տեղի աստիճանական փոփոխության կամ հնչյունների շրջման: Առաջին եղանակը հիմնականում համարելով հնչյունների պատահական ուսույունների արգասիք, Արեղյանը հաստատու է կանց է առնում երկրորդ եղանակի՝ հնչյունների շրջման կատարվող հնչյունների աստիճանական, մեկ որակից մյուսին փոխարկվելու իրակություն:

Հնչյունների շրջումը բննկիս Արեղյանը ցուցաբերում է պատմական մոտեցում. նա վերցնում է գրական հայերենի պատմական երկու վիճակները՝ հին գրաբարը և նոր գրական աշխարհագրաբար և դրանցում առկա բառերի հնչյունական կողմերի համեմատություններով պարզում հայերենի պատմական հնչյունափոխության հիմնական ղեկավարը նա նոր գրական հայերենում տարբերում է երեք տեսակ հնչյունափոխություն՝ գրաբարի նկատմամբ, լրացառելով ալլ տեսակներն ա. ա) փոփոխություններ, որոնք կատարվել են հին լեզվում և իրեն փոխառություններ, որոնք • առաջ են եկել նոր գրական լեզվի մայր բարբառում և փոխանցվել են նոր գրականին. և գ) փոփոխություններ, որ առաջ են եկել ուրիշ բարբառներում. որոնցից և անցիկ են նոր գրական հայերենին<sup>3</sup>: Հնչյունափոխության նշված և ալլ տեսակների մեջ Արեղյանը ցուցահանում է որոշ բառերում հնչյունների աստիճանական շրջման հետևյալ դեպքերը.

1 Հմմտ. էջ 15 և հան.

2 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 88.

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 100.



1. Հնչյունների կորուստ, 2. Հնչյունների ավելացում, 3. ձայնեզ հնչյունների անձայն դառնալը և ընդհակառակը, 4. կից կամ մոտրի հնչյունների ասնմանում և տարեմանում, 5. նայ ր հնչյունի չ դառնալը և ընդհակառակը, 6. հնչյունների կորուստ և նոր հնչյունների ծագում լեզվի մեջ: Արեղյանն ասանձնապես մանրամասն է քննում՝ 7. բառաշեշտի ազդեցության հետևանքով առաջացած հնչյունական փոփոխությունները, մասնավորապես շնչախց ասոջ և շնչախց հետևող անունները, ինչպես նաև՝ 8. երկարաբառերի պարզամաբ ասոջ եկած հնչյունափոխության զեպերը: Ես, երկարաբառերի պարզումը, այսինքն պարզ ձայնավորների վերածումը համարում է «հետևանք... բաղադրել ձայնավորների արտաբերության տեղերի արտաբերության անզրոյ մոտենում են իրար և աստիճանաբար այդ երկուսի փոխարեն արտաբերում է հնչյունական այլ որակի մի միջին՝ ձայնավոր: Բացի այդ, երկարաբառերը կարող են պարզվել նաև իրենց բաղադրիչներից մեկի վերածումով, երբ վերացվում է երկարաբառ կազմող ձայնավորներից մեկի արտաբերությունը: Եվ Արեղյանը քննության է առնում նոր զրական հայերենում երկարաբառերի շրջան բոլոր էական զեպերը:

Հետամտելով հայերենի հնչյունաբանական զարգացմանը, նա բացահայտում է մի շատ հետաքրքիր երևույթ ևս. երկարաբառերի պարզմանը հակառակ, նա ի հայտ է բերում նաև պարզ ձայնավորների աստիճանաբար բարդացման՝ երկարաբառի վերածվելու երևույթը, և այդ հատկապես և ն ձայնավորների երկարաբառացման եկամտամբ (սկզբնապես ևս, նկ, եզկ դարձել են յես, յեկ, յեզկ, սկզբնապես՝ սան, որ դարձել են՝ վոսն, վոր և այլն):

Արդպես Արեղյանը ցուցաբերում է է և և ձայնավորների նույնացումը և փոխարկվելը ի ձայնավորի, անվանկային չ մասնավորի ավելացումը երկու ձայնավորների միջև, չ հնչյունի փոխվելը և հարգով, և հնչյունափոխության այլ մասնակի զեպեր ևս, որոնց մանրամասն քննություններով նա բացահայտում է հայերենի, մասնավորապես նոր գրական լեզվի զարարքի համեմատությամբ ունեցած հնչյունական զարգացման պատկերը: Եվ հայերենի հնչյունական զարգացման մեջ էլ Արեղյանը տեսնում է թե՛ XIX դարի գրարարում և թե՛ մանավանդ նոր գրական լեզվում գրության և արտասանության տարբերությունների պատճառը: Այդ տարբերություն-

ներն էլ անհրաժեշտորեն առաջ են բերում գրությունը արտասանությանը մոտեցնելու, այսինքն ուղղագրության փոփոխության կարիքը, որին բավարարելու թե՛ նախաձեռնությունը և թե՛ իրարարումը, ինչպես տեսել ենք արդեն, պատկանում է Մանուկ Աբեղյանին:

## 2. ՊՄԱՍԱՍԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Նոր հայերեն բառերի հնչյունական կողմը կամ Պալատայանի արտահայտությամբ՝ մարմինը քննելուց հետո, Աբեղյանն անցնում է բառերի հոգու՝ այսինքն նրանց իմաստի ուսումնասիրությանը:

Նախորդ քերականներից՝ Այսերյանն է բառերի նշանակությունը զարձնում իր քերականության հատվածներից մեկը և հետագա-ատության հատուկ առարկա: Նա խիստ համառոտակի և ընդհանուր գիտելով միայն, կանգ է առնում նույնանիշ բառերի, բառերի առումների և բառերի նշանակության փոփոխության վրա, բառերի նշանակության առավել մանրակրկիտ ուսումնասիրական հետազոտությունը վերապահելով բառարանագիտությանը: Հետևելով Այսերյանին, Պալատայանը «Բառերի հատկությունները» ընդհանուր խորագրի տակ, հետազոտության առանձին հարց է զարձնում բառերի նշանակությունը: Նա ևս խիստ ընդհանուր և ուրվագծային ձևով միայն, խոսում է համանիշ, նույնանիշ, փոխարեքական բառերի և նրանց իմաստափոխության հատկության վերաբերյալ:

Նոր, հատկապես զրական հայերենի բառերի իմաստաբանության դիտական մանրակրկիտ ուսումնասիրությունը պատկանում է Մ. Արեղյանին: Նա հարցադրում է մեթոդով հետևելով իր նախորդներին, բառերի նշանակության հետազոտությունը, սակայն, կատարում է ծավալի և խորության բոլորովին նոր շափացույցներով:

Ա. Բ ա ռ ե ի դ ա ս ա կ ա ռ գ ու մ բ: Բայց Աբեղյանի նորարարությունը սոսկ մասշտաբներով չէր սահմանափակվում: Եթե իր նախորդները բառերի նշանակությունը հավասար դասելով բառերի՝ ձևերին, այդ երկուսը վերառում և քննում էին իրեն բառերի հատկություններ միայն, ապա Արեղյանը հայերենի լեզվաբանությունը իր ելակետային հիմունքն է զարձնում բառերի նշանակությունը և բառերի (արդի տերմինով՝ սասած՝ խոսքի մասերի) դասակարգումն

1 Ա. Այսերյան, Քննական քերականություն, Վիեննա, 1866, էջ 317:

2 Հմմտ. Ստ. Պալատայան, Հոգնանոր տեսություն, Քիբիս, 1870, էջ 12—17:

3 Հմմտ. Ա. Այսերյան, Քննական քերականություն, էջ 292 և հոսն. Ստ. Պալատայան, Հոգնանոր տեսություն, էջ 12 և հոսն.:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 111:

ընդհանրացված կատարում է նրանց արտահայտած իմաստների հիման վրա:

Նա, բառերը, ըստ նշանակության, բաժանում է երկու խմբի՝ 1. զգալիաբաներ նշանակող բառեր և 2. զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, «որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից զուրա են մնում»: Այդ երկրորդ խմբի՝ խոսքը միջարկող բառերի տակ, Արեղյանը զննում է ձայնարկությունները և բնույթով դրանք ստորաբաժանում երեք տեսակի՝ բացականչականի, կոչականի և նմանաձայնության (բնաձայնություն):

Առաջին խմբի կամ զգալիաբ ցույց տվող բառերը, նա, ըստ իմաստի, բաժանում է երկու ենթախմբի. ա) նչուրակաՆ նշանակություն ունեցող, մեծ մասամբ նաև ձևական նշանակություն արտահայտող բառեր, որոնցով կազմվում են նախադասություններ, ուստի կոչվում են խոսքի մասեր կամ նախադասության անդամներ. բ) ձևակաՆ նշանակություն ունեցող բառեր, որոնք խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ:

Արեղյանը, ինչպես տեսանք Շարահյուսությունը բնեկիս, տակավին 1912-ին է բառերի դասակարգումը կատարում իրենց նշանակություն համեմատո՞ւ Ավինի ուշ՞ օձայտց լեզվի տեսությանը ներածության մեջ, նա առավել մանրամասնելով բառադասակարգման իր տեսությունը, լեզվի ամբողջ բառապաշարը դարձյալ դասակարգում է ըստ նշանակության: Նա տարբերակում է նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբերի՝ գոյական, ածական և բայ՞:

Բառերն համարելով արտաքին աշխարհի առարկաների և երեկույթների մասին պատկերացումների հնչեղանակն արտահայտություններ, այդ պատկերացումների մեջ Արեղյանն ամենից առաջ տարրողում է երկու մեծ խմբեր. ա) օբյեկտակա, անկախ գոյություն ունեցող առարկաների՞ պատկերացումներ և բ) առարկաներից առչ-ինքնակա հատկանիշների՞ հատկություն, գործողություն, գրություն և այլն՞ պատկերացումներ:

Արտաքին աշխարհի իրերն ու երևույթները դիտելով մարդկային դիտակցությունից անկախ, ինքնակա գոյություն ունեցող առարկաներ, դրանց հատկանիշները, սակայն, Արեղյանը համարում

է ոչ-ինքնակա գոյություն ունեցող, այլ միայն այդ առարկաներին հասու՞կ, նրանց մեջ եղող, նրանցից անբաժան իրակություններ: Բայց միաժամանակ տարբերակում է կոնկրետ-թանձրացական առարկաները վերացականներից և վերջիններս վերագրում է մարդկային մտածողության յուրահատկությանը: «Ամեն ինչ, որ ինքնակա առարկաների կատեգորիայի մեջ ենք զննում, հարկավ, բնության մեջ անօդաճառ իրոք գոյություն չունին իրեն թանձրացական, ֆիզիկական, իրական առարկաներ, այլ հաճախ մենք ենք միայն մտածում այդպես իրեն ինքնակա գոյություն ունեցող բաներ, ինչպես են՞ ու՞՞՞ ու՞՞՞, քաղցություն, փոսք»: Եվ զա բացատրում է մարդկային մտածության պահանջով, այն հանգամանքով, որ «մենք այլ կերպ չենք կարող մտածել, քան ամեն ինչ զննել կամ ինքնակա առարկաների կամ ոչ-ինքնակա հատկանիշներ խմբերի մեջ»:

Նույն կերպ է նա բացատրում նաև հատկանիշները մտածողության մարդկաներից անջատելու և ինքնուրույն իրակություններ՝ առարկաներ համարելու հանգամանքը:

«Առարկան և իր հատկանիշը,— դրում է Արեղյանը,— մեր գիտությունը համար կազմում են մի անբաժան միություն, որովհետև հատկանիշն առարկայի մեջ գտնվում է իբրև նրա բաղադրիչ մասը: Բայց և այնպես մենք մեր մտածողության հաճախ հատկանիշն անջատում, վերացնում ենք առարկայից և պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող բան... Այսպիսի առարկաներն, անշուշտ, ինքնակա գոյություն ունեն միայն մեր մտածության մեջ. դրանք վերացական առարկաներ են և դրանց անուններն էլ կոչվում են վերացական անուններ»:

Այդպես, ուրեմն, Արեղյանը տարբերակելով վերացական առարկաները կոնկրետ-թանձրացականներից և որոշարկելով այդ երկուսի իմացաբանական հիմքերը, միաժամանակ ցույց է տալիս, որ այդ երկու կարգի առարկաները խոսողի դիտակցության մեջ բաժանվում են երեք խմբի կամ երեք զննելի: Յուրաքանչյուր զննելի հանդես է գալիս եզակի և հոգնակի թվով և որոշ ժամանակի մեջ:

Փիլիսոփայական-իմացաբանական նման հիմունքներով տարադատելով և դասակարգելով բառերը, Արեղյանը բառերի նշանակությունը բնեկիս առավել մանրամասնում է դրանց իմաստային դասակարգումը:

Նա դասակարգման հետ միասին տեսականորեն ճշգրտում է և

1 Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 127 և հետ.

2 Հմմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 361.

3 Անդ, էջ 25 և հետ.

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 26.

2 Անդ, էջ 26—27.



ստավիչ հատկում բառերի բերականական սահմանումները: Այսպես.

1. բայ է կոչում այն բառերը, որոնք ցույց են տալիս հականիշ և զեմք, միաժամանակ և ստորոգումս.

2. գոյական է կոչում այն բառերը, որոնք ցույց են տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկաներս.

3. ածական և մակերայ են կոչում այն բառերը, որոնք ցույց են տալիս ոչ-ինքնակա հատկանիշներս.

ա) դրանք սծական են, երբ մտածվում են «իբրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ մշտապես կամ ժամանակավորապես գտնված մի որոշիտություն, գործողություն, գրություն և այլն».

բ) մակերայ են, երբ մտածվում են «իբրև առարկայի հատկանիշից անբաժան մի հատկանիշ կամ իբրև հատկանիշի հատկանիշ (պարագա)».

Վերջին երկուսը՝ ածականն ու մակերայը Արեղյանը համարում է մեկ ընդհանուր տեսակ և կոչում է «մակադրական (վերադրական) բառեր» ընդհանուր անվամբ:

Գոյականները, ածականները և մակերայները Արեղյանը բաժանում է երկու ենթատեսակի՝ անվան և ղեհանվան. անուններն էլ ստորաբաժանում է նեղ մտքով անվան, րվակների և դերբայի: Ըստ այսմ էլ նա գոյականի, ածականի ու մակերայի չորս տեսակ է տարբերակում.

ա) գոյականները՝ 1. գոյական անվան, 2. գոյական թվականի, 3. գոյական դերբայի (անորոշ դերբայ) և 4. գոյական ղեհանվան:

բ) ածականները՝ 1. ածական անվան, 2. ածական թվականի, 3. ածական դերբայի (բայաձական) և 4. ածական ղեհանվան.

գ) մակերայները՝ 1. անվանական մակերայի, 2. թվական մակերայի, 3. դերբայական մակերայի և 4. ղեհանվանական մակերայի:

Բացի դադափար նշանակող կամ նյութական խմատ ունեցող բառերի հիշյալ խմբերից, Արեղյանը ըստ նշանակության է դասակարգում նաև ձևական խմատ ունեցող բառերը կամ խոսքի մասնիկները: Գրանք նշանակությամբ բաժանում է շոտ խմբի.

ա) կապակցական բառերի, որոնց տակ է դնում՝ 1. կապերը, 2. համադասական և 3. ստորադասական շաղկապները, բ) կղանկական բառերի կամ մասնիկների, գ) բացասական մասնիկների և դ) պատասխանական բառերի:

Ահա բառերի այն դասակարգումն ու բերականական սահմանումները, որ հիմնվելով բառերի արտահայտած նշանակությունների վրա, բերում էր հայ բերականագիտության մեջ Մ. Արեղյանը:

Բառազասակարգման և բառերի բերականական սահմանումների մեջ դարձյալ Արեղյանը հանդես է բերում տեսական-փիլիսոփայական խոր ըմբռնումներ, և նման հիմունքներով էլ մշակում է հայերենի բառազասակարգման դիտարկումները համակարգը:

Բ. Բ ա ն ե ի ն շ ա ն կ ու թ յ ու ն ն Ե Ր Ի տ ար ք Ե ա կ ու մ ր: Բառերի նշանակությունը Արեղյանը դիտում է հարաշարժ մի պրոցես, ուստի և այդ նշանակության հըզրիտ ըմբռնումը կապում է կենդանի ու կոնկրետ խոսքի հետ, նայած թե՛ տվյալ բոլոր բառերի տվյալ կապակցություն մեջ որոշակի ինչ խմատ է արտահայտում: Բառերի նշանակության այս կենդանի ըմբռնումը, բնականաբար, պետք է բերեր հարցադրման նոր եղանակ և նոր խնդրեր:

Բառերի ընդհանուր (հասարակ) և հատուկ նշանակությունների ըմբռնումը նորություն չէր հայ բերականագիտության համար, այն, իր սկզբնավորման օրից մինչև Արեղյանը, առկա է գրեթե բոլոր հայ բերականների աշխատություններում: Բայց հասարակ և հատուկ անունների խնդիրը հիմնականում սուկ այդ ըմբռնումով էլ սահմանափակվում էր, և բերականները գրեթե չեն դրավել բառերի հասարակ և հատուկ նշանակության ուսումնասիրությանը:

Արեղյանն առաջինն է դարձյալ, որ բառերի ընդհանուր և հատուկ նշանակությունները դարձյալ է առանձին հետազոտության առարկա: Բայց խնդիրը սուկ առանցությամբ չէր սահմանափակվում, այլ քննարկվող առարկայի նոր ըմբռնմամբ ու մեկնաբանություններով: Տեսանք, որ Արեղյանը նշանակության բնույթով տարբերակում է բառերի երկու հիմնական տեսակ՝ ընդհանուր-վերացական և կոնկրետ-թանձրացական: Բայց միաժամանակ ցույց է տալիս, որ բառերը խոսքի մեջ կարող են օգտագործվել և՛ կոնկրետ, և՛ վերացական-ընդհանուր խմատով<sup>1</sup>, բացասությամբ սակավաթիվ բառերի: Գոյականներից այդ երկու նշանակությամբ նա օգտագործվող է համարում նստարակ անունները: Այս պարագայում նա բոլոր վերաբում և դիտում է իր խմատային ծավալի և բովանդակության հակադրամիասնության մեջ: Անկախ վերաբաժ հասարակ

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 21—22, 131, Հմմտ. Մ. Վ. Շամշյան, Բերականագիտական Հայկական լեզուի, 9 տար, Շուշի, 1859, էջ 164—165:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 129,

անվան մեջ նա իրավամբ տեսնում է ընդհանուր վերացական նշանակություն, բառի անվանած տվյալ առարկայի ամբողջական սեռի իմաստ, որը սակայն ունի ամենամեծ ծավալը և ամենափոքրը բովանդակությունը: Գրանց հարարերակցությունը փոխվում է, երբ հասարակ անվան վրա դրվում է մի որակական ածական, այսինքն երբ անունը որոշարկվում է ծավալը սահմանափակվում: «Այն ժամանակ, — գրում է նա, — բառի նշանակության ծավալը փոքրանում է, իսկ բովանդակությունը, ընդհակառակն, մեծանում է, և բառի ընդհանուր կամ սեռի նշանակությունը փոխվում է տեսակի նշանակության»: Բառի նշանակություն ծավալի փոփոխության վրա ածականների ոչ բոլոր հավելումներին ազդեցություն վերադառնելով, Արեղյանը այդ նկատմամբ մեծ արժեք է ապրիս Բվակենեթին կամ Ֆանակալան ածականներին, որոնք, սակայն, ծավալը սահմանափակողի դեր են կատարում միայն, առանց բովանդակությունը հարստացնելու:

Բառի նշանակության ծավալի և բովանդակության հակադիր միասնության մասին ի վերջո նա կատարում է հետևյալ ընդհանրացումը, ուր գրանդրվում է բառիմաստի դիալեկտիկան:

«Անվան նշանակության ծավալը կարող է այնքան փոքրանալ, մինչև որ մի հատի, մի որոշ անհատ առարկայի վերածվի: այս դեպքում նշանակության բովանդակությունն ամենից հարուստ է լինում»:

Արեղյանը բառի նշանակության ծավալի և բովանդակության փոփոխությունները պայմանավորված է համարում որոշակի տեղով ու ժամանակով: Երբ առարկայի ընդհանուր պատկերացման բովանդակությունը դուրս է որոշակի տեղից ու ժամանակից, այն-ժամ առարկան կամ առարկայացված հասկացություն արտահայտող բառը ունի վերացական նշանակություն, հետևաբար և մեծ ծավալ ու փոքր բովանդակություն, և ընդհակառակն, երբ բառը ցույց է տալիս մի եզրակի առարկա, «որ առանձին զուգություն ունի որոշ տեղում ու ժամանակում», այդ այդ դեպքում բառն ունի թանձրացական հատուկ նշանակություն և փոքր ծավալ ու մեծ բովանդակություն:

Հասարակ անունների ընդհանուր նշանակությունները հատուկ նշանակության վերածվելու լեզվական միջոցներ է Արեղյանը հա-

մարում ցուցական ածականներ (այս, այդ, այն), դասական Բվակենեթը և հոդերը:

Գալով հատուկ անուններին և հասկանչելով դրանց թանձրացական-կոնկրետ նշանակությունը, Արեղյանը միաժամանակ մատչանցույց է անում դրանց տարբերությունը հասարակ անուններից. «...մինչ վերջիններս, — գրում է նա, — կարող են զործածվել թե՛ իրրև սեռի կամ տեսակի անուն և թե՛ իրրև անհատի անուն...», հատուկ անունները ցույց են տալիս մի որոշ անհատ առարկա միայն՝ նման սեսակ առարկաների մեջ և չեն կարող զործածվել իրրև սեռի անուն»<sup>1</sup>, այսինքն զուրկ են ընդհանրացնելու հատկությունից:

Արեղյանը նշում է նաև, որ թանձրացական հատուկ նշանակություն ունեն անձնական, ցուցական, փոխադարձ և հարաբերական դերանունները, որոնք, սակայն իրենց բնույթով հաստատուն նշանակություն չունեն և որինց հատուկ նշանակություն ստանում են միայն խոսքի մեջ ունեցած դրությունից, երբ զործածվում են որոշ անհատ առարկայի անվան, կամ ժամանակի ու տեղի մի որոշ մասի անվան տեղ»<sup>2</sup>:

Իսկ բովանդակությունը ընդհանուր վերացական նշանակություն ունեն՝ անորոշ զերանունները, անորոշ ածականներն ու մակբայները: Տեսական-փիլիսոփայական այսպիսի մտոցմամբ ու ըմբռնումներով է Արեղյանը քննում, դասակարգում ու զնահատում բառերի նշանակության տեսակները և բառերի տեսակներն նշանակությունները:

Բայց որովհետև բառերի նշանակությունը նա դիտում է որպես հարաշարժ պրոցես, որպես անընդհատ զարգացող ու պատմականորեն փոփոխվող իրակություններ, ուստի քննության հատուկ խնդիր է դարձնում նաև բառերի նշանակության փոփոխությունը: Այս խնդիրը քննելիս, նա դարձյալ երևան է բերում պատմական մտոցում:

Բառերի իմաստափոխության պատճառները Արեղյանը տեսնում է առարկաների մասին անհատների պատկերացումների փոփոխության և հասարակական կյանքի պայմանների, մասնավորապես մշակույթի զարգացման և փոփոխության մեջ:

«...Ինչպես անհատների, նույնպես և ամբողջ փոզովրդի մեջ, — գրում է նա, — դարերի ընթացքում ոչ միայն պատկերացումներն

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 131—132:

<sup>2</sup> Անդ, էջ 133:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 133:

<sup>2</sup> Անդ:



են փոխում, այլև նայելով նրա կուլտուրական առաջդիմությանը՝ ստաչ են դալիս նորանոր զազափարներ, կյանքի նոր պայմաններ ու հարաբերություններ, նորանոր իրեր և այլն, որոնց բոլորի արտահայտության համար կա՞մ նոր բառեր են ստեղծվում, կա՞մ գործածվում են հին բառերը: Հետևաբար բառերի նշանակությունը փոխվում է հարմարվելով մասնականի մշակութական պահանջներին, այնպես որ կարելի է ասել, թե բառերի նշանակության փոփոխությունը զուգընթաց է միշտ պատկերացումների բազմացման և փոփոխության հետ՝:

Տարբեր դարաշրջաններում առարկաների մասին եղած պատկերացումների նման փոփոխությունների արտացոլման մեջ էլ Արեղյանը տեսնում է բառերի կուլտուր-հնագիտական արժեքը:

Բառերի նշանակության փոփոխությունների մեջ առաջին օրինակափոխյունը, որ նկատում է Արեղյանը՝ նրանց հնչյունական և իմաստային կողմերի փոփոխության անկախությունն է միմյանցից: Բառի հնչյունական կողմը կարող է փոփոխվել և նրա նշանակությունը նույնը մնալ և ընդհակառակն՝ բառը միևնույն հնչյունական ձևով կարող է տարբեր նշանակություններ ձևաք բերել:

Նրկուրդ. բառերի իմաստափոխությունը կարող է այն աստիճանի հասնել, որ բառի նոր իմաստը իր սկզբնական նշանակության հակադրությանը փոխարկվի:

Նորուդ. բառերի սկզբնական նշանակությունը ետ մղվելով կարող է լրիվ մոռացվել և նոր իմաստը ընդհանրանալով դառնալ սովորական:

Չարուդ. բառերի սովորական նշանակությունները միևնույն լեզվի հին և նոր վիճակներում հաճախ տարրեր են լինում, բառերի հին նշանակությունները հաճախ չեն մոռացվում և պահվելով նորերի հետ, առաջ են բերում բառերի տարբեր առումներ:

Հինգերուդ. բառիմաստների մեջ սովորաբար, զանազանվում են սկզբնական կամ երկրորդական նշանակությունները՝ երկրորդականներից: Բայց ինչ առումով էլ գործածվելու լինի, սկզբում բառի սովորական նշանակությունն էլ մտածվում, այսպե՛ս միայն անսովոր կամ երկրորդական նշանակությունները, որոնց բարձունքը Արեղյանը կախված է համարում արտաքին որոշակի հանգամանքներից: Բարձր որոշող հանգամանք.— գրում է նա,— կարող են ծառայել խոսքն ասելու ժամանակ ասողի ու լսողի գրույթները, շրջապատը:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 142:

խոսքի ընդհանուր բովանդակությունը, խոսողի ու իր խոսակցի արվեստակցությունը, նրանց ընդհանուր պարասպունքը և վերապես խոսքի կապակցությունը՝:

Բառերի իմաստափոխությունների հիշյալ ընդհանուր օրինակափոխյունները սահմանելուց հետո, Արեղյանն անցնում է նշանակության փոփոխության առանձին տեսակների բնութագրում: Դրանք են.

ա) սեռի անվան գործածությունն իրեր տեսակի ու աննստի անուն, և ընդհակառակն. բ) բառի գործածությունը մասնակի նշանակությամբ, երբ քրտի բովանդակությունը բազմաթիվ տարրերից մեկին անջատվելով մյուսներից՝ անվում է իրեր ավելյալ բառի նշանակություն: Այս դեպքում բառիմաստը հնվում է նմանական բազդատության վրա. սեի առարկայի որևէ հատկությունը զուգորդակցում է հիշեցնում է... մի ուրիշ առարկայի ծանոթ որևէ հատկանիշը, և այս երկրորդ առարկայի անունով կոչվում է առաջին առարկան, կամ նրա հատկանիշը՝: Բառի նման մասնակի նշանակությամբ կիրառությունն էլ հենց բառի փոխարեական նշանակությունն է:

Այս առթիվ Արեղյանը զարգացնում է լեզվական փոխաբերությունների ծագման ու փոփոխությունների մի տեսություն, որ զարգելալ ներություն էր հայ լեզվաբանության համար: Ըստ կիրառության նպատակի, նա տարբերակում է փոխաբերության երկու տեսակ՝ 1. բանաստեղծական, որի նպատակն է զազափարը ցայտուն և պատկերավոր արտահայտելը, 2. կարիքային, որ ստացանում է որևէ զազափար արտահայտելու համար համապատասխան բառ լինելու հետևանքով: Այս երկուսն էլ ծագումը լինելով պատահական և անհատական բազմազան պատկերացումների արդյունք, կարող են և՛ պատահական մնալ, և՛ գործածվելով ընդհանրանալ և լեզվի մեջ դառնալ սովորական: Փոխաբերությունների այս երկու վիճակների մեջ Արեղյանը զանազանում է բառիմաստի երկու տարբեր որակ. առաջին դեպքում, երբ խոսողը զեռ դիտակցում է գործածած բառի փոխաբերություն լինելը, քրառը մնում է նույն բառը, միայն տարբեր առումով գործածված: Իսկ երկրորդ դեպքում, երբ բազդատության առիթ տվող բառի բուն նշանակությունը մոռացվում է, այսինքն՝ փոխաբերությունը մնալով լեզվի այլևս չի դիտակցվում իրրև այդպիսին,— ասյն ժամանակ առաջ է գալիս

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 140:

2 Անդ, էջ 145:

բառի բուրոսովին տարբեր նշանակություն և նույնիսկ տարբեր բառ<sup>1</sup>։ 3. բառերի նշանակության փոփոխությունը կցորդական զրգորությունը կամ փոխանունությունը, երբ քրատի նշանակությունը մի առարկայի գաղափարից անցնում է մի այնպիսի առարկայի գաղափարի, որ անզուրկ, ժամանակով, պատճառով կամ որևէ ուրիշ առնչությունը կապվում է առջինի հետ<sup>2</sup>։ Արեղյանը հայերենում զանազանում է փոխանունության հետևյալ կիրառությունները՝ 1. տեղը և տեղում գտնվողները նույն անունով կոչվել, 2. առարկայի մասի անունը ամբողջի անվան տեղ և ընդհակառակը գործածվել, 3. հատկության վերացական անունները հատկություն ունեցող առարկաների անվան տեղ զննել, 4. գործողության անունները գործող անձանց համար հավաքական նշանակությամբ օգտագործվել, 5. գործողության անունն իրեն առարկա գործածվել, 6. գործողի անունը այն միջոցի կամ գործիքի անվան փոխարեն զննել, որով կատարվում է գործողությունը, 7. պատճառի անունը հետևանքի անվան փոխարեն օգտագործվել։

Բառերի նշանակության փոփոխության հետ առնչվող կրորդ խնդիրը, որ Արեղյանը դարձնում է հետազոտության հատուկ առարկա, իմաստախոսված բառերի կամ բառակապակցությունների տեսակներն են։ Գրանք են.

1. Գարնվածները, որոնք լինելով բառակապակցություններ, սկզբնապես պատահաբար գործածվում են նոր նշանակությամբ, ապա կրկնվելով ընդհանրանում են և ձևոր են բերում մեկ բարդ բառի իմաստ։

2. Համանուն բառեր, որ առաջանում են միևնույն բառի տարբեր նշանակությունների ստանալուց և վերջիններս միմյանցից խեղա հեռանալուց։ Գրանք ս համարվում են ճշյուններով նույն, բայց միմյանցից անկախ և տարբեր բառեր-համանուններ<sup>3</sup>։ Վերջիններես շարքն է դատում Արեղյանը նաև պատահականորեն միևնույն բառաձևն ունեցող, բայց տարբեր ծագումով բառերը, ինչպես նաև առողջարանորեն և իմաստով իրարից անկախ այն բառերը, որոնք ժամանակի ընթացքում ճշյունափոխությամբ նույնացել են և դարձել համաճշյուն (հոտ, հարկ և այլն)։

3. Նույնանիշ բառերը, որոնք լինելով նույն նշանակությամբ՝ ծագումով և ճշյուններով, սակայն, տարբեր են։ Գրանք առաջ են

զայիս զանազան ճանապարհներով (բարբառներից, հին լեզվից, օտար լեզուներից, տարբեր բառերի համամեա զարգացումից) և ընդհանրանալով հատկապես գրական լեզվում՝ ընտիր, նոխ ու պես-պես են դարձնում այն։ Նույնանիշ բառերի առնչությամբ Արեղյանը ուշադրություն է դարձնում լեզվի զրգորացման մի կենդանի երևույթի՝ նույնանիշների կուտակի վրա, երբ նույնանիշներից մեկը համախափ գործածվելով մոռացության է մատնում մյուսներին։ Հետևելով նույնանիշների զարգացմանը, Արեղյանը բացահայտում է մի ուշադրավ օրինակափոխություն. նույնանիշները սկսալվելով որոշ կիրառությունների հետ՝ նշանակության նուրբ տարբերություններ են ստանում<sup>4</sup>։ նշանակությամբ նուրբ կերպով իրարից տարբերվող այդ բառերն էլ նա անվանում է համանիշներ։ Նույնանիշների իմաստախոսի այդ տարբերակման ընթացքը Արեղյանը գնահատում է իրեն լեզվի բնական զարգացում, որ սկսվում է անհատական պատկերացումներից. մի անհատ նույնանիշը կապում է պատկերացման առավել մեկ կողմի հետ կամ զանազան նշանակություններից ավելի մեկի հետ, իսկ այլ անհատների՝ ավելին պատկերացման մի ուրիշ կողմի հետ, կամ զանազան նշանակություններից մի ուրիշի հետ։ Այսպիսով անհատական լեզվի մեջ առաջ է զարկն առնուանիշների նշանակության նուրբ տարբերություն, որ առանձին անհատներից անցնում է ուրիշներիին, մինչև զայիս է ժամանակ, երբ նույնանիշ բառերը բուրոսովին տարբեր նշանակություն են ստանում<sup>5</sup>։

Բառերի նշանակությունների այս զարգացման մեջ նա նշատում է մեկ այլ ուշադրավ երևույթ. նոր գրական հայերենում գրաբարից և բարբառներից թափանցում են որոշ թվով նույն ծագմամբ կրկնակ ձևերով բառեր, որոնք ճշյունական տարբերությունների հետ համախա ունեն նաև տարբեր նշանակություններ (հոգի-ողի, արհեստ-արվեստ, կոտորել-կոտրել և այլն)։ նշանակության տարբերակումով կրկնակներ են կողմվում նույն բառի վրա գրաբարի հոգնակի «Է» մասնիկի հավելումով և գրաբարի դերբայական ձևերով։

Այսպես, բառերի նշանակությունների իմաստաբանական համակողմանի քննություններով, Արեղյանը մի կողմից տեսակալվում ու դասակարգում է բառերը, բացահայտում նրանց ընդհանուր և հատուկ իմաստները, մյուս կողմից՝ բառերի նշանակությունների դիտում է նրանց հարակա շարժման ու փոփոխության մեջ, սահ-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 146։

2 Անո, էջ 148.

3 Անո, էջ 153.

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 150։



մանում հայոց լեզվի բառապաշարի իմաստափոխման օրինակափոխությունները և սխառեմափոխում իմաստափոխված բառերի տեսակները: Գրանով նա հայ լեզվաբանությունն պատմության մեջ ստեղծում է բառերի մասին գիտական մի նոր ուսմունք՝ իմաստափոխությունը: Վերջինս հիմքերը թվական դրել էին աշխարհաբար նախորդ բերականները, բայց գիտական վերնաշերտի ավարտուն կառույցը պատկանում է Մանուկ Աբեղյանին:

### 3. ԲԱՆԻՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԻՆԵՐԸ

Բաների նշանակության ուսումնասիրությանը Աբեղյանը փաստորեն հիմք էր դրել գիտական մի առավել մեծ ու ամբողջական ուսմունքի՝ բառագիտությանը, որը սակայն, ամբողջացնում է և ավարտում իր աշխատանքի ընթացքում, բաների կազմության և բառերի փոփոխության բերականական ձևերին նվիրված իր ծավալուն ու մանրակրկիտ քննություններում: Եթե նախորդ գլխում Աբեղյանը հետազոտում էր բաների ներքին կողմը, նրանց իմաստներն ու իմաստափոխության տեսակները, ապա այժմ նա անցնում է բաների արտաքին կաղմբաբանական ձևերի ուսումնասիրությանը: Բառակազմության հետազոտությունն առհասարակ, նորություն էր հայ քերականագիտության համար: Գրաբարի քերականները, մասնավորապես Փ. Ավետիսյանի և Ա. Բազրատունիի<sup>1</sup>, մշակել էին Հին հայերենի բառակազմական համակարգը, իսկ նոր հայերենի հետազոտողները՝ իրենց անդրանիկ քերականություններում արդեն կարեոր տեղ էին հատկացնում աշխարհաբարի բառակազմության ձևերին: Ա. Գ. Այսերյանը իր «Քննական քերականության» երկրորդ դրուխն ամբողջապես նվիրում է բաների հատկությունների քննությանը, որի մեջ առաջնակարգ տեղ է հատկացնում բաների կազմությանը<sup>2</sup>: նա, ըստ բառակազմական հատկանշի, տարբերակում է շրջաբառակազմ. պարզ, ամենցյալ, բարդ և կրկնավոր: Բացի այդ, «Ո՞՞ճեր» անվան տակ նա համառոտակի քննում է ժամանակակից արևմտահայերենի և Հին դամկորենի հարադրությունները: Այսերյանը, հետևելով Փ. Ավետիսյանին և Ա. Բազրատունուն, աշխարհաբարի քերականության պատմության մեջ, առաջին անգամ տալիս է

ածանցների դասակարգումը, բարդ բաղադրությունների, կրկնավոր բաղադրությունների տեսակները, հարադրյալ բաղադրությունները, ընդհանուր գծերով հետազոտում դրանք և այդպիսով դասնում աշխարհաբարի բառակազմական համակարգի առաջին գիտական մշակողը:

Սա, Պալասանյանը, հետևելով Այսերյանին, համառոտակի ուրվագծում է արևելահայերենի բառակազմության մի քանի ձևեր նա տարբերակատում է արևելահայերենում բաղադրության երկու տեսակ, բարդ և ամենցյավոր: նոր հայերենը ընդհանրապես բարդ և ամենցյավոր բաների կողմից դարձարի նկատմամբ խիստ աղքատ համարելով հանդերձ, Պալասանյանը նշում է բարդության երկու տեսակ՝ կրկնավորներ և հարադրիներ, որոնցից վերջին տեսակը որակավորում է «Արևելյան հայոց լեզվին առանձին զարդ ու կենդանություն» ավել: Իր «Քերականություն մայրենի լեզվի» մեջ արդեն նա որոշակի քննություն է անում զոյականների, ամականների, դերբայների, բայերի, մակրայների բարդ և ամենցյավոր ձևերի կազմությունը, բայց ոչ իբրև բերականության առանձին բաժին, այլ ստուգաբանության մեջ որպես յուրաքանչյուր խոսքի մասի կազմությանն առընթեր օժանդակ գիտելիք<sup>3</sup>: Չնայած Այսերյանին, մասամբ և Պալասանյանի կողմից նոր հայերենի բառակազմությունն իր հիմնադրելու արդեն ընդհանուր հետազոտության էր ենթարկվել, բայց հայոց լեզվի բառակազմության խոր ու համակարգված գիտական ուսումնասիրությունը պատկանում է Մ. Աբեղյանին: նա ոչ միայն խորացնում է ու մանրամասնում նախորդների ձևեր բերած նվաճումները, այլև ստեղծում է բառակազմության մի նոր համակարգություն, մոտծում է բառակազմական նոր հասկացություններ և շատ իրականություններ ներդրել է հետազոտում և շատերին՝ նոր մեկնաբանություններ առաջին:

«Աշխարհաբարի քերականություն»-ը, որ կարելի է որակել Աբեղյանի քերականագիտական համակարգի ու հասկացությունների խոստոված միկրոաշխարհ<sup>4</sup>, իր հետ բերում էր նաև նոր հայերենի բառակազմության նրա մշակած այն սխեման իբրև հիմնականայն, սրն իր մարմնավորումը պատվ փորք-ինչ ուչ զրված «Հայոց լեզվի տեսության» մեջ<sup>5</sup>: Տեսնենք նախ սխեմանը, ապա մանրամասնելու հետազոտությունը:

<sup>1</sup> Հմմտ. Փ. Ավետիսյան, Քերականություն Հայկական, Վենետիկ, 1815, էջ 205—241, Ա. Բազրատունի, Հայերեն քերականություն, Վենետիկ, 1852, էջ 660—695:  
<sup>2</sup> Տե՛ս Ա. Այսերյան, Քննական քերականություն, էջ 292—310.  
<sup>3</sup> Անց, էջ 317 և հետև.

<sup>1</sup> Սա, Պալասանյան, Հնդհանուր տեսություն, էջ 17—19:  
<sup>2</sup> Հմմտ. Սա, Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Մասն երկրորդ, էջ 93 և հետև.  
<sup>3</sup> Հմմտ. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, էջ 79—95, նույնի «Հայոց լեզվի տեսություն», 1965, էջ 167—294.

Քառերն բառ կազմության, Արեղյանը բաժանում է երկու հիմնատիպի. 1. պարզ կամ արմատական բառեր և 2. բարդացյալ բառեր. վերջիններս բաժանում է երկու տեսակի՝ ա) բարդ և բ) ածանցական, այսինքն այնպես, ինչպես Գ. Ավետիսյանն էր դասակարգել: Սակայն շարունակության մեջ Արեղյանն արդեն նորություն էր բերում հայ բերականադիտությանը: Նա «Աշխարհարարի քերականության» մեջ՝ բարդ բառերը ձևով հեթարժանում է երեքի՝ ա) իսկական բարդություններ, բ) անիսկական բարդություններ և գ) հարադրյալ բառեր. ընդ որում, անիսկական բարդություններն էլ ստորաբաժանում է երկու ենթատեսակի՝ 1. կցական բարդություններ և 2. կրկնավոր բարդ բայեր կամ բազմապատկական բայեր: «Հայոց լեզվի տեսություն» մեջ Արեղյանը մասամբ վերանայում է բարդությունների իր այս դասակարգումը և «անիսկական բարդ բառերը» վերանվանում է նրանց ենթատեսակի՝ 1. կցական բարդություններ» անունով, իսկ սկրկնավոր բարդ բայերն ենթատեսակի դնում և բնում է հարադրական և կցական բարդությունների տակ՝: Եթև «Աշխարհարարի քերականության» մեջ Արեղյանը ածանցավոր բառերը բաժանում է ըստ նախածանցների, վերջածանցների և դերբայական կամ բայական ածանցների և դրանց համաձայն տարբերակում նախածանցավոր, վերջածանցավոր բառեր և միջածանցավոր ստակ, բազմապատկական, պատճառական և կրավորական բայեր<sup>1</sup>, այպ շուտ լեզվի տեսության» մեջ նա նախածանցավոր (ժխտական մասնիկներով) բառերը դնում է իսկական բարդությունների տարատեսակը կազմող առաջուղիները բազադությունների շարքը, իսկ ածանցման տակ է ներառնում վերջածանցով բառերն ու դերբայական ածանցներով դերբայներն ու բայերը<sup>2</sup>: Այս կերպ, նա առավել որոշարկիվում և հստակում է բառերի բազադությունների իր համակարգությունը:

**Ա. Բարդություններ:** Բառային բազադությունները բնութիվ բաժանելով երկու հիմնական տեսակի՝ բարդության և ածանցման, Արեղյանը բարդությունների տարբերակման կամ դասակարգման ելակետային սկզբունք է դարձնում բազադիչների շարահյուսական կապակցության աստիճանավորումները:

1 Հմտ. նրա «Քերականության» Հայկական, 1815, էջ 205:

2 էջ 85 և հտն.:

3 Հմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 169, 182 և հտն.:

4 Մ. Արեղյան, Աշխարհարարի քերականություն, էջ 88—95:

5 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 220, 237 և հտն., 282 և հտն.:

Բարդություններում բազադիչները սկզբնապես ինքնուրույն բառերի շարահյուսական աշխարհի կապակցություն են ներկայացնում, «որ բերումում է իրեն մի ստանձին բառական միություն. մեկ բառ մեկ նշանակությամբ»<sup>3</sup>: Նա բարդության երեսն դարձ տեսնում է այն իրողության մեջ, երբ որևէ պատճառով նշված շարահյուսական կապակցությունը որպես կենդանի շարահյուսական ձև այլևս զգալի չի դառնում: Բարդությունների առաջացումը Արեղյանը դիտում է որպես լեզվական կենդանի զարգացող պրոցես. սուսի և տարբերակում է բարդությունների շարահյուսական կապակցությունների այնպիսի աստիճանավորումներ, որոնք բառարարության զարգացման տարբեր գրեթե մեծեր լինելով, շարահյուսական զգացողության և գրության ձևերի տարբերություններ ստանեն: Ըստ այդ աստիճանավորումների, տեսանք, նա հայերենում գտնադնում է բարդության երեք տեսակ՝ 1. Կարգարարություններ, «որոնք թեպետ մեկ բառի նշանակության ունին, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իրեն մեկ բառ չեն դրվում.... Հարադրությունը բարդության հիմնական տեսակն է, որի մեջ շարահյուսական կապակցության զգացումը թեպետ միանձ է, բայց համախ դեռ բոլորովին անզգալի չէ»<sup>4</sup>:

2. **Կցական բարդություններ**, որոնք Արեղյանը համարում է հարադրական այնպիսի կապակցությունները, որ միացած իրեն մեկ բառ են դրվում, դրանք «թե՛ նշանակությամբ և թե՛ գրության ձևով մեկ բառ են»:

3. **Իսկական բարդություններ**, որոնց բազադիչները միացած մեկ բառ են դրվում, երկուսը միասին մեկ նշանակություն ունեն և նրանց շարահյուսական կապակցության ձևն էլ մեռած է լեզվի մեջ: Իսկական բարդության մեջ Արեղյանը տեսնում է բազադարության հնագույն եղանակը, որը, սակայն, կենդանի գործոն է և կարևոր դեր է խաղում զուգանմանական եղանակով նորանոր բառեր կազմելիս:

Բարդության տեսակների այս բերնումն ու սահմանումը առաջադրում էր այդ տեսակների բնութային համապատասխան եղանակներ:

Ենելով հարադրական և կցական բարդությունների իր մասնանշած բնդանությունից, Արեղյանը դրանց բնութային կատարում է միասնաբար և հասկապես հիմնավորում կցական բարդու-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 169:

2 Անդ.



Յլունները հարադրություններից աստիճանաբար դարգանալու տեսությունը:

Հարադրություններից նա առաջնակարգ տեղ է հատկացնում հնարադրական բայերին, որոնք առանձնապես հատուկ լինելով հայոց լեզվին, բաղադրվում են մի բայից և մի հարադիր բառից, որ միշտ լինում է բայի լրացումը: Նա, բայտ բայի և նրա լրացման բնույթի, սահմանում է հարադրական բայերի մի բանի տեսակներ հայերենում: Այդ տեսակների հանդամանակից քննություններում բացահայտելով հարադրական բայերի բազմաթիվ իմաստային ու ձևական հատկանիշներ, Արեղյանը երևան է հանում նաև հարադրական բայերից կցական բարդությունների առաջացման փաստը:

Հարադրական բայերը միանում և կազմում են կամ մի բառ, կամ հարադրական բայերի բնիքից կազմվում են նոր այնպիսի բառեր, որոնց մեջ հարադիրն ու իր բայի բունը միացած իրրև մի բառ են գրվում (հանձն առել-հանձնառու-հանձնառություն), և այդ այն պատճառով, որ օրարգություն երկրորդ անգամը չի գործածվում այն ձևով կամ նշանակությամբ, որ ունի բարդության մեջ: Նա մտղավորական և գրական լեզուներում մասնանշում է բազմաթիվ կցական բարդություններ, որոնք կազմվելով հարադրական բայերից և այլ կարգի բայերից ու իրենց լրացումներից, վերջից բնորոշում են, սովորաբար, մի անանցական մասնիկ (մեջ բերել-մեղբերում):

Հարադրությունների երկրորդ տեսակը Արեղյանն անվանում է բաղադրական հարադրություններ, որոնք կազմված լինելով նույնանիշ և մերձիմաստ բառերից ու (և) շաղկապով, «տունելում են իրրև մի բառական միություն»: Իսկ երբ այդ բառերը շաղկապով չեն միանում, այլ սոսի զծիկով, սպա առավել աստիճանում է բառիմաստը:

Նա բաղճյուսական հարադրությունների շարքն է դասում նաև այնպիսի հարադրությունները, որոնց բաղադրիչ բառերը տարրեր լինելով հանդիմ, նշանակությամբ որևէ առնչություն ունեն միմյանց, կամ իրար հայտնի իմաստներ են (մի-երկու, երկու-երեք), և որոնք առնվում են զարմուկ մեկ նշանակությամբ: Բաղճյուսական հարադրությունների իրրև մեկ բառական միություն միացման բերականական հիմունքը Արեղյանը տեսնում է զրանց օրգան մեկ բառ հոդ առնելու և հոլովվելու հասկության մեջ:

Մեկ բառի լեզվական այս զգացողությամբ ու բերականական փաստով էլ նա իրավամբ պատճառաբանում է բաղճյուսական հարադրություններից կցական բարդությունների առաջացումը, իրրև արդյունք հարադիրների մեկ բառի մեջ միանալու: Բայց դա Արեղյանը միակ պատճառը չի համարում: Բաղճյուսական հարադրություններից կցական բարդություններ են գոյանում նաև այն պատճառով, «որ հարադրության անդամներից մեկը կամ երկուսն էլ մեկակ ու անկախ չեն գործածվում» կամ թե զրանցից նոր բառեր են կազմվում և միացած են գրվում, և վերջիններիս զուգանանությունը էլ զրանց բունը ևս նոր հարադրության մեջ միացած է գրվում:

Հարադրությունների երրորդ տեսակը Արեղյանն անվանում է կրկնավորներ, որոնք կազմվում են նույն բառի կրկնությամբ, գրվում են անբառ կամ միանում են ու (և) շաղկապով, կամ էլ՝ զծիկով: Գրանք բաղադրվում են գույականների, դերանունների, ամականների ու մակբայների և իմաստների կրկնություններից, նույնությամբ կամ հնչյունների փոփոխությամբ: Երբ կրկնավորների բերականական կապակցությունը միապնում է, զրանք միանում են և գրվում են որպես մի բառ. կրկնավորներից առաջ են գալիս կցական բարդություններ:

Այդպես, լեզվի հին ու նոր բառային բաղադրությունների բաղճական վերլուծումներով Արեղյանն ապացուցում է հարադրություններից կցական բարդությունների օրգանական զույգումը և զրանով կապ ու միանություն տեսնում բարդության այդ երկու տեսակների միջև: Նա վերլուծման է ենթարկում հարադրություններից զույգացած կցական բարդությունների բաղադրիչների տեսակներն ու շարահյուսական կապակցության ձևերը, որով է ստեղծում է ուսումնար կցական բարդությունների մասին: Հարադրությունների շատ ուշադրավոր տեսակներից է ի վերջո Արեղյանը համարում նախադրավոր կազմությունները և զրանցից առանձնապես՝ նախադրավոր բայերը: Գրանք բաղադրվելով նախդիրներից և գույականներից, ինչպես նաև նախդիրներից և բայերից, արդեն զարարում կից են գրվել և բմբբբել են իրրև մեկ բառական միություն:

Արեղյանն ուշադրավոր դիտարկություն է անում հասկապես նախադրավոր բայերի վերաբերյալ, դրանելով, որ զրանք մի մասը ճիսական նախադրավոր բայեր չեն, այսինքն՝ նախաբայի և բայի հա-

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1966, էջ 174:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1966, էջ 177:

բարդութիւնը չեն կազմված, այլ նախդիրները նախ գրված են անունների վրա, և ապա նոր կազմվել են բայեր այդ նախդիր ունեցող անուններից» (զգեանել, առնեել, բմբերանել և այլն<sup>1</sup>): Նա այդ անունը յայտարարում է պատմական մի շարք բառաքննութիւններ, որոնց միջոցով պարզում է առ, գ. բառ, բեղ, յ, ճամ նախդիրների՝ անուններին և բայերին հարադրելու հետեանքով առաջ բերած նախդրարար բայերի փերականական նկարագիրն ու պատմական իմաստափոխութիւնները:

Բառակազմութեան վերաբերյալ Արեղյանի հայացքների տեսական խորութիւնն ու նրաութիւնները զբնորոշում են հատկապէս իսկական բարդարյունները բնեւեռ մասնակ, երբ բարդ բառերի նկատմամբ հայերենի հին ու նոր միջակների պատմա-համեմատական վերլուծութիւններով երևան է հանում բառարարութիւնների առաջացման և զարգացման էական օրինակափոխութիւնները:

Հինը բնգունելով արդեն հին փերականների մշակած բառարարութեան այն կանոնը, համաձայն որի բարդութեան երկու մասերը կազմում են «ա» հոգակապով, բարդութեան առաջին մասը գրվում է եզակի ուղղական հոլովով, և նրա վերջին վանկը անշեշտ մնալով, ձայնափոխութեան է ենթարկվում, — Արեղյանը մինևուրեք մասմանակ պատմական բնութիւններով զարգացնում ու մանրամասնում է հիշյալ կանոնը և երևան է բերում բառակազմական նոր իրակութիւնները: Հողակապի անունը յայտարար նա նախ նկատում է, որ այն պատմականորեն առաջացել է բառարարական շարահնչուական կապակցութիւնից և կազմել է բարդութեան առաջին բազազրիշի ընդ ձայնափոխը: Հետագայում (V դարում) այդ բազազրիշ բառերը կորցնելով բնի ձայնափոխը, բարդութիւնների մեջ, սակայն, շարունակում են պահպանել այն, որ արդեն զգալիում է ոչ թե որպէս բնի ձայնափոխը, այլ «իր բնի բարդութիւն կազմելու մի հոգ, կապ, որ միացնում է բարդութեան երկու մասերը և առաջ բերում մի նոր բառ»<sup>2</sup>: Արեղյանը, բառարարութեան և լեզվական ձևերի ծագման մեջ առհասարակ, պատմական գոյացումներին բացի, կարևոր տեղ է հատկացնում նաև զուգանմանական կազմութիւններին: Այս դեպքում ևս, նման ձևերով բարդված բառերի մեծ մասը նա համարում է լեզվի զարգացման համեմատաբար ուշ շրջանում հին բարդարարութիւնների նմանութիւնը առաջացած բարդութիւններ, որոնք

մեջ, թեպետ առաջին բազազրիշը լուծի «ա» ձայնափոխով բուն, բայց գոյանմանութեամբ «ա»-ն անցել է նման բարդութիւններին, բնգհարարացել և վերամշակել է հոգակապի: Այսպէս «ա»-ն անցել է նաև եզակի ու հոգեակի սեռականով կազմված հարադրութիւններին, ինչպէս նաև եզակի գործիականով և հոգեակի հայցականներով բազազրութիւններին ևս<sup>3</sup>:

Անզրազանաչով «ա» հոգակապի հետ ազնրավող հնչուծարանական այն կանոնին, թե «երբ բազազրութեան երկրորդ անդամը ձայնափոխով է սկսվում, «ա» հոգակապը չի գրվում», — Արեղյանը ցույց է տալիս, որ հիշյալ կանոն աշխարհաբարում ունի բացառութիւններ: Նա առանձնապէս կանոն է անունում ամեն բազազրիշով բարդիող բառերի վրա, նշում է, որ դրա հետ բազազրիող ձայնափոխով սկսվող երկրորդ բազազրիշները կապակցվում են առաջինի հետ «ա» հոգակապով, և նման բառերը «ձգտում են առանձնանալու և ստանալու զերադրական աստիճան կազմող մի հատուկ բառի նշանակութիւն»<sup>4</sup>:

Հիշյալ բացառութիւնն Արեղյանը հիմնավորում է պատմական այն իրադրութեամբ, որ դրաբարում ամեն բազազրիշով բարդութիւնները ձայնափոխով սկսվող բազազրիշի հետ հազվագեղ են, մինչդեռ զերադրական աստիճանի նշանակութեամբ՝ բազմաթիւ: Վերջիններիս զուգանմանութեամբ աշխարհաբարում նման բարդութիւնների մեջ «ա» հոգակապ է մտել, «տրով առաջ է եկել միակերպութիւն կազմութեան մեջ»: Արեղյանը, մյուս կողմից՝ այդ զուգանմանական միակերպութեան զրգապատճառը տեսնում է նաև այն երկրիմութեան վերացման ձգտման մեջ, երկրիմութիւն, որ կարող են ունենալ ստիտաբար առանց «ա» հոգակապի ամեն բազազրիշով կազմված բարդութիւնները (ամենընտիր, ամենընդունակ):

Այսպէս հայտ բերելով նաև առանց հոգակապի բարդութիւնների սակայնութեանը, նա մասնանշում է երկու կարգի իրողութիւն. նախ՝ հոգակապով կապակցված բարդութիւնները ամանցներով ամենիս՝ կորցնում են հոգակապը (արյունահեղ-արյունահեղութիւն), և ապա՝ հին և նոր հայերենում կան միևնույն բարդութեան հոգակապով ու անհոգակապ կրկին ձևեր (բարկով-բարակով, քրհան-քրհան): Նա գտնում է նաև, որ հոգակապով ձևերն առանձնահատուկ են առաջիկային արեւելյան բարբառներին, իսկ անհոգակապ

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1965, էջ 185:

2 Անգ, էջ 190:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1965, էջ 190—191:

2 Անգ, էջ 191:



ձևերը՝ արևմտյան: Եվ տարբեր խոսքի մասերի բաղադրիչներով կազմված անհոգակապ բարբառություններ քննելով, Արեղյանը ցույց է տալիս, որ դրանք նույնանուն են կցական բարբառություններին<sup>1</sup>:

Առանձնակի ուշադրության են արժանի բարբառական առաջին անդամի բերականական ձևերի զարգացման Արեղյանի բացահայտած օրինաչափությունները:

Բարբառական առաջին անդամը եզակի ուղղական հոլովով զբրվելու կանոնի դիմաց՝ նա մատնանշում է զրաբարում առկա Բ-ով վերացող մի շարք անկղական բառեր, որոնք բարբառիկնա գրաբարում (նույնպես և աշխարհաբարում) կորցնում են Բ-ն (փառք-փառագանձ, խելք-խելատ): Սակայն, միաժամանակ, նոր լեզվում Բ-ի հոգնակիականում նշանակության զգացումի կորստյան պատճառով, մի շարք բարբառություններում պահպանվում է նաև առաջին անդամի Բ-ն (խելք-խելքապական, գիրք-գրքակալ): Այս երկու կարգի կազմությունների գոյությունը Արեղյանը պատճառաբանում է զուգանշանության օրինաչափություններով. «Ենթ մի կողմից,— գրում է նա,— հին բառերի անալոգիայով այդպիսի բառերի վերջի Բ-ն զուրա ենք ձգում կազմությունների մեջ, մյուս կողմից՝ եզակի ուղղական հոլովից կազմվելու անալոգիայով՝ ժողովրդական լեզվի մեջ կան արդեն շատ բաղադրություններ, որոնց մեջ պահվում է վերջի Բ-ն»:

Այդպես նաև Ե, Բ, Ղ բներով բառերի բարբառական ժամանակ, նոր առաջին անդամը զրաբարում համայն սեռականով զրվելու ձևերը մասամբ զրաբարում, իսկ ընդհանրապես աշխարհաբարում ուղղականի զուգանշանությունը՝ վերածվում են եզակի ուղղականի (ականազործ-ակնազործ, ձկանակեր-ձկնակեր):

Իսկ հին լեզվի հարադրական բառերից կազմված կցական բարբառություններում առկա առաջին անդամի հայցական ձևի զուգանշանությունը՝ կազմվել են այնպիսի բարբառություններ (կենսածաղիկ, կենսատու), որոնց մեջ հայցական շղեղը է լինելը: Արեղյանը ցուցահանում է նաև զրաբարում քն-ով վերացող բառերի քն մասը աշխարհաբարում քնգհանրապես վերականու օրինաչափությունը հակառակ՝ բարբառությունների մեջ քն-ի վերականգնման պարտադիր կանոնը (զուռն-զուռ-զուռապան, մուկն-մուկ-մկնատամ):

Բարբառություններում առաջին անդամի բերականական նշված ձևերի զարգացման օրինակների բացահայտումը Արեղյանն ամբողջացնում է բառակազմության ժամանակ առաջ եկող հեյլուստափոխական օրինաչափությունների հայտնաբերումով: Բայց հայտնաբերվող բառաբարության իր ուսմունքի վերջնական ամփոփումը նա կատարում է բարբառական բաղադրիչ անգամների հարաբերության քննություններով:

Իսկական բարբառությունների մեջ շարահյուսական կապակցության ձևերը թեպես անհետացած, բայց շարահյուսական հարաբերության զգացումը տակավին մնում է: Բարբառական բաղադրիչների սովորական հարաբերությունը ստորադասականը համարելով, Արեղյանը ցույց է տալիս, որ բարբառական առաջին անդամը հայերենում ըստ իմաստի լրացնում է երկրորդ անդամը, որի մեջ է բարդ բառի գլխավոր նշանակությունը: Բարդ բառերի կազմության այս եղանակը նա համարում է բուն հայկական, և հակառակ ձևով կազմված բարբառությունները՝ սուր լեզուների աղբյուրության հետևյալն է:

Ըստ անունների բաղադրության՝ Արեղյանը հայերենում տարբերակում է բարբառական երկր հիմնական տեսակ, որոնց նշանակությունը, սակայն, որչափ է ըստ շարահյուսական հարաբերության:

1. Գոյականների, ածականների ու բայարմատների բարբառությունը գոյականների հետ՝ առաջ է բերում գոյականներ, որոնք, սակայն, հետագայում իմաստափոխությամբ կարող են ձևեր բերել ածականի նշանակություն:
2. Գոյականների և ածականների բաղադրությունը ածականների հետ՝ առաջ է բերում ածականներ:
3. Գոյականների և ածականների բաղադրությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ՝ առաջ է բերում գոյականներ և ածականներ: վերջինները կարող են նաև գոյականաբար գործածվել: Առաջին դեպքում բաղադրության երկրորդ անդամը ունի գործողության անվան նշանակություն, իսկ երկրորդ դեպքում՝ գործող անձի անվան կամ մի անցյալ զերբայի նշանակություն: Հայերենում վերջին նշանակությամբ բարբառությունների շատ ընդարձակ տեղ ունենալը մատնանշելով, Արեղյանը առաջին բաղադրիչի գոյական լինելու զիջելով, որոնց մեջ բացահայտում է հայերենի բոլոր հոլովների նշանակությամբ արտահայտվող շարահյուսական կապակցություն:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 194.  
<sup>2</sup> Անդ, էջ 196.

ներ, նա միաժամանակ ի հայտ է բերում միեւնույն բարդություն համախառն արարելու նշանակություններով բնորոշելու իրողությունը:

Բարդությունների մեջ Արեղյանը ստանձին տեղ է վերագրահում մի քանի մակրոյններով կամ նրանց արմատներով և մի քանի բայարմատներով ու մասնիկներով կազմված առաջադիր բաղադրություններին, որոնց մի մասը կազմված է այլ լեզուների նախադրվոր բաղադրությունների նմանությամբ: Այդ ձևական նշանակությամբ բառերով և մասնիկներով (սեղ, առաջ, արտ, բազ, բաց, գեթ, դեմ, դե, բե, բեռ, հակ, համ, համայն, հար, հեղ, մակ, մեջ, ենթ, ետ, նախ, ներ, շար, շաղ, շուրջ, պար, ստոր, վայր, վե, տար, տրամ, փոխ, ան, այլ, դժ, տ, չ) կազմված բաղադրությունների մի առ մի կատարված բնությունների մեջ նա բացահայտում է այդ բառերի և մասնիկների բարդության մեջ ունեցած իմաստային բոլոր առումները, դրանց օտարարան կազմությունները և դրանով ցուցահանում հայերենի բառարարությունների հարատույնն ու բազմերանգությունը:

**Ք. Ա Ս Կ Ե Ղ Ե Մ:** Բաղադրության այս հիմնատեսակը Արեղյանը ծագումնաբանորեն առնչում է բարդությունների հետ և անանցների մի օտվոր մասը նա ծագած է համարում բարդության բաղադրիչների հետ տեղի ունեցող հնչյունական և իմաստային փոփոխություններից: Նա բառերի բաղադրությունը պետքով իրենց ծագման ու փոփոխությունների ընթացքում, նկատում է, որ լեզվի հնազույն շրջանում առաջացած շատ բարդություններ նորագույն շրջանում կորցնում են բաղադրվա բառերի սպավորությունը և բնորոշում են իրրե պարզ բառեր: Դրա պատճառը Արեղյանը տեսնում է հնչյունափոխության և բաղադրիչներից մեկի կամ երկուսի անկախ դործածությունից դուրս ընկնելու մեջ: Ընդ որում ռժարդ բառերի զգացումն իրրե պարզ բառեր... մի անգամից չի առաջ գալիս, այլ երկար մասնանկի ընթացքում՝ աստիճանաբար<sup>1</sup>:

Ընդվական այսպիսի դարգացման ընթացքում, շերք բաղադրիչ մասերից մեկը հնչափոխությամբ իրրե բառ կորչում է, այսինքն՝ մենակ դործ չի անվում իրրե բառ... այն ժամանակ բարդ բառը թողնում է մի առաջադիր կամ վերջադիր մասնիկով (նախածանցով կամ վերջածանցով) կազմված բառի սպավորություն<sup>2</sup>:

Սակայն ոչ բոլոր մասերը, որ թողնում են մասնիկի սպավոր-

ություն, իրականում անանցական մասնիկներ են: Արեղյանն անանցական մասնիկներ է համարում դրանցից միայն այնպիսիք, որոնք միևնույն ձևով և միևնույն ձևական նշանակությամբ հանդես են գալիս տարրեր բառերի մեջ, և վերջիններս լեզվական զգացողությամբ առանձնանում են իրրե ձևական նշանակությամբ խումբը: Այսինքն՝ անանց են համարվում այն մասնիկները, որոնք բառակազմական դեր են կատարում և կարող են առաջ բերել զուգահեռ-մասնական կազմություններ: Հետևաբար, Արեղյանը անանցների մի մասը հայտնում պատմականորեն ծագած է համարում բարդությունների մեջ մտած բաղադրիչ բառերի հնչյունափոխված ձևերից՝ նախադարարչան շրջանում:

Սակայն, անանցային մասնիկների մի ուրիշ խումբ էլ ծագել է անանց հնչյունափոխության, շերք բաղադրիչ մասերից մեկը իրրե անկախ բառ կորչում է կամ չկա լեզվի մեջ, այլ մնալով բաղադրությունների մեջ՝ ստանում է մի նոր, ձևական նշանակություն<sup>3</sup>: Եվ երբ դրա զուգահեռությամբ կազմվում են նոր բառեր, այն ժամանակ սվյալ բաղադրիչը վերածվում է իսկական անանցի:

Բարդության բաղադրիչներից անանցական մասնիկների ծագման երրորդ պատճառը Արեղյանը տեսնում է բաղադրության մեջ բառի նշանակությունը ձևական ցուցաբերում և նույն բառի անկախ գործածությունից տարրերի վերջում մեջ: Մի շարք բաղադրությունների պատմական որոշակի բնություններով նա հավաստում է, որ նման «բարդ բառերի մի անգամը անանցական մասնիկ է զտնում ժամանակի ընթացքում հետզհետե, որովհետե նրա նշանակության փոփոխությունն էլ աստիճանաբար է առաջ գալիս, այնպես որ միևնույն բառը կարող է միաժամանակ մերթ իրրե բարդ բառ զգացվել, մերթ իրրե անանցական, նույնիվ թե նոր նշանակության անցնելը որքան զգալի է»<sup>4</sup>: Անանցների դրացման մյուս աղբյուրները Արեղյանը համարում է՝ ա) հնացած հոլովական և բայական ձևերը, որոնք այլևս չզգացվելով շերք կենդանի բառափոխության ձևական մասեր», վերածվում են բառակազմության անանցական մասնիկների, և բ) երկու մասնիկների միացումը, մասնիկներ, շերքեր բնորոշում են իրրե մի միություն և մի նոր բնոհանուր նշանակություն են ստանում<sup>5</sup>:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 226:

<sup>2</sup> Անց, էջ 229:

<sup>3</sup> Անց, էջ 234:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 223:

<sup>2</sup> Անց, էջ 224:



Հնգվական այս տարբեր աղբյուրներից ծագող ածանցական մասնիկներին, որոնք բառակազմության մեջ խոշոր դեր են կատարում, Արեղյանը բառերի ձևական նշանակությունների բազմազան փոփոխությունների առումով՝ բացառիկ առջ է վերապահում: Նա մատնանշում է հատկապես միևնույն ածանցի իմաստային տարբեր ու բազմազան նշանակությունները, իբրև արդյունք մասանակի ընթացքում բառերի հետ նորանոր առումներով գործածության:

Սերյ մի խումբ նույն ածանցներով կազմված բառերի նշանակությունը նույն ուղղությամբ փոփոխում է, այն ժամանակ, — գրում է Արեղյանը, — գրական ածանցական մասնիկն ստանում է նոր ձևական նշանակություն: Եվ քանի որ նոր նշանակությունների հետ ստորաբար պահպանում են սկզբնական և հին նշանակությունները, ուստի կրթման միևնույն ածանցված բառը թեև հին և թեև նոր նշանակությամբ է գործածվում, կամ թեև նույն ածանցով կազմված մի բառ հին նշանակությամբ է գործածվում, մի ուրիշը՝ նոր<sup>1</sup>:

Այսպիսի պատմական հայացքով է Արեղյանը հետադուրս ածանցների ոչ միայն գոյացումն ու զարգացումը, այլև նրանց իմաստային փոփոխությունները:

Ածանցման մասին իր տեսական ընդհանուր դրույթները նա կոնկրետ ու գործնական հողի վրա է դնում ածանցների բազմազան տեսակները մեկ առ մեկ քննելիս: Նա, ածանցները, բոտ բառակազմական բնույթի, բաժանում է երկու մեծ խմբի. անվանական և դերբայական վերջածանցների: Եվ առաջին անգամ հայ լեզվաբանության պատմության մեջ ճշգրտված ու հանգամանալից ուսումնասիրության են ենթարկվում հայերենի վերջածանցները իրենց աչրի ընկնող մի շարք նշանակություններով:

Այդպես, Արեղյանը, իր նախորդների համեմատ, ճշգրտելով ու նորովի վերակարգելով հայոց լեզվի բառակազմական համակարգությունը, առաջին անգամ հայ բերականագիտության պատմության մեջ, լայն ընդգրկմամբ ու տեսական խորությամբ, ուսումնասիրության է ենթարկում հայերենի բառակազմության բոլոր ձևերը՝ իրենց ծագման, զարգացման ու կրած փոփոխությունների ընթացքում: Նա ստեղծում է բառակազմության մի կուտ տրամաբանական համակարգ, որ բազադրություն հիմնական տեսակները՝

բարդությունն ու ածանցումը իրենց բոլոր ձևերով դառնում են մեկը մյուսին փոխարկվող, մեկը մյուսին փոխանցող ու պայմանավորող օղակներ, ևրևան հանելով լեզվի պատմական ու ձևական զարգացման ստույգ օրինակափոխությունները: Բարդություններից իրենցնելով ածանցման ծագումն ու զարգացումը և նշելով նրանց փոխազարձ աղբյուրը, Արեղյանը, օակայն, ածանցումը դիտում է իբրև բազադրության մի անկախ ձև, որի յուրահատկությունը նա ստանում է բառակազմական հունիցիայի և դուզանմանական կազմությունների առաջ բերելու հատկանշի մեջ: Եվ ընդհանրապես բազադրությունների գոյացման ու զարգացման մեջ Արեղյանը վրձնական դեր է վերապահում դուզանմանությունը:

Բառերի հնչյունական, իմաստային և կազմարանական հատկությունները քննելուց հետո, Արեղյանն անցնում է բառերի բերականական ձևերի՝ ձևարանության ուսումնասիրությանը, որով նա ավարտում է հայերենի բառագիտությունը ընդարձակ մտքով վերառած:

#### 4. ՁեկԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձևարանությունը հայերենի բերականության այն բաժինն է, որ թեև՝ զբաղաբի և թեև՝ աշխարհագրի բերականների կողմից ամենից շատ և ամենից լավ է հիտադոտոված:

Ինքն՝ Արեղյանը արդեն իր նախորդ աշխատություններում («Աշխարհարարի բերականություն», «Աշխարհարարի հոլովները», «Հայացական հոլովը մեր աշխարհարարում», «Յայի եղանակներն արևելյան աշխարհարարում») հիմնովին ու համակողմանի հետադուրսության էր ենթարկել արևելահայերենի թեքման համակարգը, ուստի «Հայոց լեզվի տեսության» մեջ բավարարվում է միայն բայական եղանակների, եղանակավորող մասնիկների, հոլովների ծագման ու զարգացման և բայի ժամանակների ու հոլովական ձևերի տիպաբանական դասակարգման հարցերով: Եթե նախորդ բաժիններում տեսական ու պատմական խնդիրների արժարծան հետև Արեղյանն զբաղվում էր նաև հայերենի հնչյունաբանական, իմաստաբանական և բառակազմական իրակությունների նկարագրությամբ, ապա ձևարանության բաժնում՝ բառաձևերի նկարագրական կողմը գրեթե բացակայում է:

Այստեղ նա սոսկ լեզվի տեսարան է և պատմարան: Նախորդ բաժնի վերջին հատվածում քննության առնելով բա-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 236:

<sup>2</sup> Անո, էջ 237—294.

չարնի ածանցները, դերբայական վերածանցներն ու բայածանցները, Արեղյանը ձևաբանության մեջ գործնաչափ, թեքման առնչությամբ շարունակում է բայերի ածանցանք ուսմունքը, բայց ընթացիկանական այլ մտադրագիտվ էթն բառերի թեքման ձևերը արտաբանա ածանցման մեջ են մտնում, այսպես քերականական բոլորովին այլ դեր են կատարում. ածանցները սոսկ բառակազմական արժեք ունեն, մինչդեռ թեքման ձևերը՝ բառափոխության ձևեր են, որնեղով արտահայտվում է բառերի հարաբերությունը:

Արեղյանը բառափոխության ձևերով արտահայտված է համապարտ էրկու տեսակ հարաբերություն.

1. Ստորոգիչության հարաբերություն, որով մի առարկայի իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշ իբրև ստորոգյալ, և կազմվում է խոսքը: Այս հարաբերության ձևերն ունին միայն բայերը...

2. Լրացական հարաբերություններ, որ գոյականներն ու գոյականաբար գործածված ածականներն ունին բայի նկատմամբ իբրև բայի լրացումներ և հենց իրենց լրացումների նկատմամբ իբրև լրացման լրացումներ...<sup>1</sup>:

Հետևաբար, ձևաբանության մեջ Արեղյանի քերականագիտական ստույգ կազմակերպումը հարձակ էր այն է կամ նախադասությունը:

Հայերենի բայական ձևերը մեծ մասամբ ծագած համարելով բայաբանների վրա անձնական դերանունների կցումից, նա ցույց է տալիս, որ բայական վերածանցներով որոշվում են բայերի դեմքը, թիվը, ժամանակը և կղանակը: Լեզվա-պատմական առումով դիտարկելիս շատ կարևոր նշանակություն ունի հայերենի ըզձական կղանակի ծագման այն տեսությունը, որ բայերի ձևերի առնչությամբ առաջին անգամ մեղանում զարգացնում է Մ. Արեղյանը: Միայն կղանակներն արևելյան աշխարհագրություն՝ ուսումնասիրության մեջ, ինչպես տեսանք, նա հանգամանորեն թնտեսական առնչով ըզձական կղանակի արտաբանական ու քերականական հատկանիշները, որոշարկում էր այդ կղանակի գրեթե բոլոր հնարավոր ձևերն ու կիրառությունները: Իսկ «Հայոց լեզվի տեսության մեջ» մեջ արդեն նա բացահայտում է այդ կղանակի քերականական ծագումը աշխարհագրում<sup>2</sup>: Հավաստելով այն իրողությունները, որ աշխարհագրաբար խոսրհաման ձևերը մասամբ նոր են կազմվել,

մասամբ էլ ծագում են գրաբարից հնչյունափոխությամբ կամ հնչյունափոխությամբ ու կղանակի շրջանով միասին, Արեղյանը ծագման վերջին դեպքին է վերագրում նոր հայերենի ըզձական կղանակը: Հետևելով հին հայերենի զարգացման ընթացքին, նա նկատում է, որ ստորագասական կղանակի անկատարի և կատարյալի ընդմեջ սկզբնապես տարբեր նշանակություն են ունեցել. առաջինը ցույց է տվել կատարվող, տեսական գործողություն, իսկ երկրորդը՝ կատարված: Սակայն V դարում երկու ստորագասականները շոթովել են միմյանց և հանդես են եկել նույն նշանակությամբ: Արեղյանը միաժամանակ գտնում է, «որ հին լեզվի մեջ ձգտում կա երկու ստորագասականները մի ետ արբերակման կիրառելու, այն է՝ անկատար ստորագասականը գործածվում է լոկ հնարավորություն ցույց տալու համար, իսկ կատարյալ ստորագասականը՝ կամք, ցանկություն, դիտավորություն մի բան անելու»<sup>3</sup>: Ապա, մյուս կողմից՝ հնագույն գրաբարում սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակները գործածվում են նաև ստորագասականների փոխարեն:

«Կիրառության այս փոփոխությունը սկսվում է Սանմ. անկատար անցյալի գործածությունից իբրև ըզձական»:

«Սահմանական ներկայի և անկատար անցյալի այս նոր նշանակությամբ գործածությունը իբրև անկատար անցյալի անկատար իբրև ըզձական կիրառությունից, վերջիվերջ այն հետևանքն է ունենում, որ գրաբարի ստորագասականները լեզվից զուր քան ընկնում մեռնում են, և միջին հայերենում նրանց փոխանակում են Սահմանական ներկան և անկատար անցյալը իբրև ըզձական կղանակ հնդեվրոպական լեզուների երկու կղանակի, ըզձականի և ստորագասականի բոլոր կիրառություններով, թե իբրև ցանկության, կարիքիական ու պատվիրական ըզձական և թե իբրև կամական, խորհրդակցության ու նախատեսական ստորագասական»<sup>4</sup>: Նրանակների այս փոփոխությունն ու զարգացումը Արեղյանը ցույց է տալիս առանձին բայերի և մասնավորապես կու նախամասնիկով կազմված բայերի նկատմամբ: Պատմա-քերական տեսանկյունից արժեք է ներկայացնում այդ տարիվ կու-կը կղանակիչ մասնիկների գոյացման մասին նրա զարգացրած տեսությունը: Վերջինս, որ սկիզբ էր առնում տակավին Միայն կղանակների արևելյան աշխարհագրություն՝ ուսումնասիրությունից՝ այստեղ, հին, միջին հայերենի ու զանազան բարբառ-

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 297:

<sup>2</sup> Անց, էջ 302-327:

<sup>1</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 307:

<sup>2</sup> Անց, էջ 309:



ների հարուստ տվյալների հիման վրա, առավել զարգացվում է ճշգրտվում և դալիս է ապացուցելու հասկերնի կը մասնիկի ծագումը՝ անհ, նաչ ցուցական բառերին համանել կայ (բրբ. կո, կյ, գո, դո) բառից: Հիշյալ բառը սկզբում լինելով անկախ, հետագայում զրկել է հին լեզվի սահմանական ներկայի վրա, նրա տեսականությունը հաստատու ու առանց երկզրմության ցույց տալու համար: Եվ աստիճանաբար բառի անկախ իմաստի միադրման և անշնչու մտալու հետևանքով, այն, իրրև նախահար, միանում է բային և վերածվում սահմանական ներկա կապմող մասնիկի (կոյ-դայ), որի հետագա ձայնափոխությունը առաջանում են կու-գայ, ապա նաև կը գա համանման ձևերը:

Բայաձևերի զարգացման պատմական նշված քննություններից՝ ըզձական եղանակի նկատմամբ Արեղյանի հանած վերջնական եկզակացությունն այն է, որ կու մասնիկով կազմված բայաձևերի առաջացմամբ (XII դար), խոնարհման ձևերը հայերենում բաժանվում են երկու խմբի. ա) գնամ-գնայի և բ) կըզնամ-կըզնայի: Առաջինով արտահայտվել է կամք և ցանկություն, որի մեջ են մտնում հնգվորդական ցանկության և պատվիրական ըզձականները, այլև ստորադասական կիրառությունը՝ կամական և խորհրդակցական նշանակությամբ: Մինչդեռ երկրորդը, ռտանց որևէ ցանկության կամ կամքի մասնակցության, արտահայտում է սահմանական ներկան և անկատար անցյալը (= գնում եմ, գնում էի), հին ստորադասականի կիրառությունը նախատեսական ապառնու նշանակությամբ (առանց կամական տարրի), կարելիական ըզձականը, այլև անիրական, ինչպես նաև պատվիրական ըզձական իրրև կարելիություն արտահայտող: Այսինքն, զկու (կը) մասնիկը ծառայել է ոչ-ցանկության խոսքեր ցանկության խոսքերից առջևիւս համար, մի դեր, որ Արեղյանը մտանանշում է միջին հայերենում և գրական լեզվում կը-ով ձևերը սահմանափակվել են որպես կարելիական ըզձական և իրրև նախատեսական ապառնի: Դրանք կազմում են ենթադրական խոսքեր: Ուստի նա «կզնամ-կզնայի» ձևերը կզում է ենթադրական եղանակ, իսկ «գնամ-գնայի» ձևերը՝ ըզձական:

Արեղյանը գրաբարի համեմատությամբ որոշում և վերականգնում է արեղյան աշխարհարարի բայական խոնարհման հիմնա-

տիպերը: Վերջիններս պարզ կերպի բայերի համար, գրաբարի նման, նա բխեցնում է բայերի ներկայի և կատարյալի բներից: Ներկայի բնի խոնարհմանն են պատկանում ըզձական ներկա ու անցյալ և արգելական, իսկ կատարյալի բնին՝ սահմանական անցյալ կատարյալ և հրամայական եղանակներով բայերը: Ընդ որում, գրաբարի նրման աշխարհարարում նա առկա է կատարյալի բնի երկու տեսակա) պարզ կամ արմատական և բ) ամացնական (գ-ով): Նույնպես գրաբարի նման աշխարհարարն ունի կատարյալի ի և ա վերջավորությունները, որոնց համապատասխան էլ Արեղյանն աշխարհարարում տարբերակում է կատարյալ խոնարհման երկու ենթատիպ: Իսկ բայի մնացած կերպերը (կատարյալը, կատարված, կատարելի) նա արտահայտված է գտնում բուզարյալ ժամանակներով, ռորոնք կազմվում են մի զերբայից և եմ կամ լինեմ բայերի ձևերից: դերբայը ցույց է տալիս կերպը, իսկ բայը՝ ժամանակը»:

Անցնելով գոյականի ձևերի քննությանը, Արեղյանը տարբերակում է երկու ձև. 1. հույով, որով արտահայտվում է ռզանական լրացական հարաբերություններ, որ գոյականը խոսքի մեջ ունի բայի, ածականի կամ մի ուրիշ գոյականի նկատմամբ իրրև լրացում, 2. բիվ, որով արտահայտվում է ռզոյականի գաղափար պատկերացումը իրրև մեկ կամ շատ»:

Ինչպես բերականական այլ իրադրություններ, այնպես և գոյականի այլ ձևերը, Արեղյանը վերառում և քննում է նրանց մշակական լինելիության, այսինքն շարունակական փոփոխությունների մեջ: Թվի նկատմամբ ընդունելով, որ սկզբնապես հայերենում ընկել են եզակի, երկակի և հոգնակի ձևերը, և երկակին դուրս է ընկել հայերենից՝ թողնելով միայն հետքեր, Արեղյանը կանգ է առնում հատկապես հոլովական ձևերի փոփոխության վրա: Նա լեզուների զարգացման պատմության մեջ մատնանշում է հոլովական ձևերի փոփոխության երկու ուղղություն.

ա) «Տարբեր կիրառություն ունեցող երկու կամ ավելի հոլովական ձևերի առջ անցնում է մի հաս ընդհանուր ձև», որ լինում է կամ հնչյունափոխությամբ տարբեր հոլովաձևերի նույնացման կամ էլ երկու կամ երեք հոլովաձևերից մեկի մահացման հետևանքով. նման դեպքերում կենդանի մնացած հոլովաձևը ձևոր է բերում առավել ընդարձակ նշանակություն»:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 333:

2 Անդ, էջ 334:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 327:



բ) Հակառակ տառչին ուղղութիւն, ստարբեր կիրառութիւններ կամ ֆունկցիաներ ունեցող մեկ հոլովական ձևի մտտ առաջ է դառնալիս մի նոր հոլովական ձև, որ այդ կիրառութիւններից մեկն իր վրայ է առնում, և հին հոլովական ձևը գործածվում է այնուհետև միայն մեկ նշանակութիւնով: հետևանքն այն է լինում, որ հին մեկ, բայց ընդարձակ նշանակութիւն ունեցող հոլովական ձևի տեղ դռնում են երկու հոլովական ձևեր, բայց ավելի նեղ կիրառութիւնով:

Արեղյանը հին ու նոր հայերենի հոլովական համակարգի քննարկումներով, որ հիմնականում տեսնել ենք արդեն, հայոց լեզվում ևս ի հայտ է բերում հնդկվորտական լեզուների հոլովաձևերի զարգացմանն առանձնահատուկ հիշյալ երկու երևույթների առկայությունը: Նու ցույց է տալիս, որ նախարարաբարյան շրջանի հայերենը ունենալով բառերի վերջընթեր վանկի շեշտադրութիւն, զբարբում, որպէս հետևանքով, կատարվել է բառերի վերջավորութիւնների կորուստ: Հետևանքը եղել է նաև այն, որ եղակի ուղղական, հայցական և կոչական հոլովները, որոնք սկզբնապես տարբեր ձևեր, այսօրն արբեր վերջավորութիւններ են ունեցել, մնացել են առանց սրկի վերջավորութիւնն ու բնի ձայնավորի և նույնացել են իրար հետ:՞: Միայն հայցականն հոգնակիում ունի ուղղականից տարբեր ձև: Եղակիում ուղղականի և հայցականի նույնութիւնն զուգանմանութիւնով հոգնակիում ևս ձգտում է նկատվում այդ հոլովաձևերի նույնացման: Բայց այդ ձգտումը մի ուղղութիւնով չի կատարվում. սկզբում խառը կերպով ուղղականը գործածվում է հայցականի և վերջինս՝ ուղղականի տեղակ, մինչև որ հայցականը ևս է մղվում և լեզվից ընկնում է դուրս: Վնագրականի ձևն, ընդհակառակն, հետորհետև գործածվում է իբրև հայցական, մինչև որ վերջապես այդ ձևն իրիսող է դառնում: Հետևանքն այն է լինում, որ հին հայցական հոլովն բոստ ձևի դուրս է ընկնում, և մնում է միայն ուղղական հոլովը, բայց ընդարձակված կիրառութիւնով, այն է՝ աշխարհաբարում ուղղականն իր վրայ է առել մասամբ նաև հայցականի ֆունկցիան, այսպես որ ուղղականն է՝ ուղղական-կոչական-հայցական:՞: Լոզնակի ուղղականի և հայցականի նույնացումով է բացատրում Արեղյանը նաև հոգնակիակերտ եր (հին՝ եար) և ներ (հին՝ նեար) մասնիկների, որ հին լեզվում կիրառվել են միայն ուղղականով և

հայցականով որոշ բառերի համար, ընդհանրացումը նոր հայերենում: Գրանք դուրս են մղում ոչ միայն հին ուղղականի և հայցականի հոգնակիակերտ Բ-ն, ա-ն, այլև սեռականի, տրականի և բացառականի ց-ն, և դառնում նոր հայերենում տիրապետող ձևեր:

Ապա, ուղղականի և հայցականի նույնացման հետևանքով տրականն է հասնալ կիրառում հայցականի փոխարեն, խոսքի երկզմութիւնը վերացնելու համար: Եվ հոլովական այդ փոփոխությունը անձի անուններից անցնում է անորոշ անունների և անգամ անշունչ առարկաներին, որով տրականի կիրառութիւնն ընդարձակվում է. «և այս հոլովն ևս ստանում է նաև հայցականի ֆունկցիաների մի մասը»:

Սեռականի և տրականի, որ զբարբարում զոյականների համար թե՛ եղակիում և թե՛ հոգնակիում նույն ձևն ունեն, որոշ թվով անաձաների և այլ անունների համար՝ կրկնակի ձևեր (այ, ում), զերանունների համար միայն ունեն տարբերակված ձևեր: Արեղյանը ցույց է տալիս, որ զբարբարում արդեն լեզուն ձգտել է սեռականի և տրականի այդ ձևական տարբերութիւնը զերանուններից վերացնել. շփոթութիւն և տատանում է առաջ եկել նախ՝ եար-նա և նման ձևերի կիրառութիւնն մեզ, և սեռականները գործածվել են իբրև տրական և ընդհակառակը: Իսկ աշխարհաբարում սեռականի և տրականի ձևական տարբերութիւնը լրիվ վերանում է, զերանունների մեջ սեռականի մնացորդները (իմ, քո, մեր, իր) մնում են ձևով իբրև ստացական անականների՝ գործածվելով իբրև վերադիր զայականների, կամ էլ իբրև լրացում զբարբաների և որոշ թվով անականների: Գրանք հետևանքով ասացել է եկել մի ընդհանուր հոլով՝ սեռական-տրական, իսկական մի տրական հոլով, որի կիրառութիւնն ընդարձակված է սեռականի ֆունկցիայով:՞:

Այսպես, սեռնում ենք, որ հոլովների իր նախորդ սեռութիւնն Արեղյանն այստեղ ամփոփելով՝ այն առավել ևս խորացնում է հոլովաձևերի զարգացման պատմական քննութիւններով և պատմական տեսանկյունից զարձայ ապացուցում, որ հայերենում իրար հետ են նույնացել ուղղական, հայցական և կոչական հոլովները, ապա նաև՝ սեռականն ու տրականը, և որ, հայցականը լեզվից դուրս ընկնելով՝ նրա նշանակութիւնները մասամբ անցնում են ուղղականին, մասամբ տրականին, իսկ սեռականի նշանակութիւնները՝ տրականին:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1965, էջ 334—335:

2 Անգ, էջ 335:

3 Անգ, էջ 336:

1 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, 1965, էջ 335:

2 Անգ, էջ 340:



Արեւիյանը չի սահմանափակվում սակ հոլովածների զարգացման հետազոտությանը. նա հոլովների մասին իր ուսմունքը բնորոշում է նաև հոլովների կազմության պատմական փոփոխությունների բնույթամբ և պարզում, ինչպես իր նախորդներն էին համարում<sup>1</sup>, որ պարբերում չկա հոլովական ձևերի պարզ դրույթում. հոլովներից յուրաքանչյուրի համար... հնչափոխության հետևանքով առաջ են եկել տարբեր-տարբեր հնչյունական ձևեր<sup>2</sup>: Հետևելով հայերենի պատմական զարգացմանը, նա ցույց է տալիս, որ զարբերում արդեն ձգտում է նկատվում այդ տարբեր հնչյունական ձևերի միօրինակացման և աշխարհաբարում այդ ձգտումը հիմնականում իրականանում է. «մեր նոր լեզվի մեջ հոլովումը զարբարի հոլովման համեմատությամբ՝ շատ ավելի հաստատուն, պարզ ու միակերպ բնավորություն ունի»<sup>3</sup>: Հոլովների այդ պատմական զարգացումը բնենկիս, Արեւիյանը պարզում է հոլովածների փոփոխության հակառակ երևույթը ևս: Գրաբարում թևակա բացակայում է ներգոյական հոլովածներ, սակայն նա սակավաթիվ բաների համար նկատում է ներգոյականի մնացորդներ (ոչ) և ապա դրանում, որ «ներգոյականի զգալիորով զարբարում թերևս մեծան չէ եղել և ոչ միայն ոչ վերջավորության, այլ ավելի ևս «ի փառքն իրում», «չաթու իրում» և նման կապակցությունների համար»<sup>4</sup>: Ու թեպետ ներգոյականի կիրառությունն և ոչ վերջավորությունը շուտով մեռնում են, և ներգոյականի պաշտոնը արևմտյան ու արևելյան բարբառներում իրենց վրա են վերցնում ուղղական-հայցական և տրական հոլովները, բայց միաժամանակ արևելյան բարբառներում ու գրական լեզվում ազատանում է ներգոյականի հատուկ հոլոված՝ ում վերջավորությամբ: Դա, Այսպես ինչ հետևություններ, Արեւիյանը ծագած է համարում զարբարի որոշ թվով ածականների արականի ում վերջավորությունից, որ ի նախորդով զործածվել է իբրև ներգոյական:

«Հայոց լեզվի տեսության մասին» Արեւիյանն ամփոփում ու ամբողջացնում է ժամանակակից արևելահայերենի հնչյունաբանության, բառագիտության և ձևաբանության իր տարիների պրպտունների արդյունքները, որոնք ցրված էին տարբեր ժամանակներում հրատարակած նրա մեծ ու փոքր թերականական դասագրքերում և

1 Հմմտ. Սո. Պալատանյան, Հնդհնոր տեսություն, Քիֆլիս, 1870, էջ 24.

2 Մ. Արեւիյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 243:

3 Անգ. էջ 344.

4 Անգ. էջ 342.

առանձին հետազոտություններում: «Հայոց լեզվի տեսություն»-ը, սակայն, լուկ եղածի քանակական ամփոփումը չէր, այլ սեռական վերանշարժությունն ու բնդհանրացումը՝ հեղինակի մշակած թերականական համակարգի և հակազոտությունների և նշանավորում էր գիտական մի նոր բարձր մակարդակ: Այստեղ գիտական խոր հիմնավորվածությամբ էլ դրսևորվում ամենից առաջ հեղինակի թերականագիտական այն համակարգը, որ ակշխարհաբարի թերականության մեջ հակահանալի պատճաններով կրում էր արևմտաիկ բնույթ:

Քերականության, իբրև գիտության նպատակը համարելով լեզվի կազմության, «մտքի ստարկաների հարբերությունը» արտահայտող լեզվական միջոցների ուսումնասիրությունը<sup>1</sup>, Արեւիյանը, ինչպես տեսել ենք արդեն, լեզուն կազմված է համարում որոշակի բաղադրիչներից և գրանց որոշակի հարբերություններով կազմված բաղադրություններից: Լեզվի ամենատարրական բաղադրիչ միավորը համարելով հնչյունները, դրանցից կազմված բաղադրությունները՝ բառերն ու զանազան մասնիկներ, վերջիններիցս կազմված բաղադրությունները՝ բարդությունները, պարզ ու բարդ բառերից բաղադրված կապակցությունները՝ խոսք կամ նախադասությունը, խոսքերի կապակցությունները բաղադրված կապակցության առավել բարդ ձևերը՝ բարդ նախադասությունն ու պարբերույթը, — Արեւիյանը լեզվական բաղադրիչների ու բաղադրությունների պարզից զեպի բարձր ընթացող բնածարանական այս հիմնախաբարի վրա էլ կառուցում է քերականագիտական իր համակարգը: Նա լեզվի ամենապարզ բաղադրիչների՝ հնչյունների բնույթն ու որակը, ապա նաև նրանց տեղաշարժերն ու պատմական փոփոխությունները հետազոտող գիտությունը՝ հնչյունաբանությունը վերցնում է իբրև լեզվական մի ինքնուրույն առարկա և դարձնում անխախ թերականական ուսմունք:

Քերականության հաջորդ աստիճանը Արեւիյանը դարձնում է լեզվի տարրական բաղադրիչներից՝ հնչյուններից բաղադրվող բառերի և մասնիկների ուսումնասիրության գիտությունը՝ բառագիտությունը: Վերջինիս տակ դարձյալ, ըստ արամաքանական հետազոտականության, նա տարբերակում է բառերի երեւ գլխավոր կողմեր կամ հատկությունները՝ 1. բառերի իմաստներ և իմաստային տեղաշարժեր, 2. տարբեր բառերից կամ բառերից ու մասնիկներից կազմված բառային բաղադրություններ կամ բառակազմության սեռականներ և 3. բառագիտության թերականական ձևեր (խոնարհում և

1 Մ. Արեւիյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 66:



հարվում), որոնցով արտահայտվում են բաների տարբեր հարաբերությունները խոսքի մեջ: Ընդ որում, բառադիտության մասերի բառարարածանման ելակետը նա գրածնում է բաների նշանակությունը կամ իմաստը. նայելով, թե բառերի իմաստների նկատմամբ ինչ հարաբերություն ունեն բաների ձևերը, բայտ այդ էլ նա կատարում է մասերի իր գառակարգումը: Եթե բառային բաղադրություններով (բարդություն) կազմվում են նոր բաներ, նոր իմաստներով, և բառակազմության քննությունը նա անմիջապես կատարում է իմաստարանությունից հետո, այս բաների փոփոխության բերականական կամ թերման ձևերը, որոնք ոչ նոր բաներ են կազմում և ոչ էլ իմաստներ են փոխում, այլ արտահայտում են միայն բաների հարաբերությունը միմյանց հետ, — այդ բառաձևերի կամ ձևարանության ուսումնասիրությունը Աբեղյանը հաջողում է բառակազմությանը և նախագրում շարանյութային, այսինքն բերականական բաղադրիչների բաղադրությունների տրամաբանական այն կրթող առաինանին, երբ արդեն բառաձևերի հարաբերություններով կազմվում է խոսքը կամ նախադասությունը: Այս միևնույն հիմունքով էլ, ինչպես արդեն տեսել ենք, հակառակ ավանդական բերականագիտության, Աբեղյանը բաների թերման համակարգից հոլովների նշանակությունն ու կիրառությունները, բայի եզանակները, ժամանակներն ու կերպերը քննության է առնում շարահյուսության մեջ, ձևարանությանը վերապահելով սոսկ բաների հոլովման և խոնարհման ձևերը:

«Հայոց լեզվի տեսություն» մեջ Աբեղյանի հետազոտության ընդհանուր եզանակը պատմահամեմատական մեթոդն է: Նա արդի հայերենի հնչյունաբանական, իմաստաբանական, բառակազմական, ձևարանական իրադրությունները ուսումնասիրում է զբարբերել միջին հայերենի համեմատությանը. այդ համեմատությունների շեղումով նա պարզում է բաների սկզբնական հնչյունային, իմաստային, կազմաբանական, մասնիկային, ձևարանական վիճակները, սպա հետամտում հայերենի զարգացման տարբեր շրջափուլերում նրանց փոփոխություններին, հասնելով մինչև ժամանակակից հայերենը: Դրանով նա վերանայնդնում է նոր հայերենի բերականական բազմաթիվ իրականությունների պատմական զարգացման պատկերը և այդ իրականությունները դիտում իբրև հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների արդյունք:

Աբեղյանը, բացի բառակազմության մասի, որ աչքի է ընկնում նյութի առատությանը, իր աշխատության փոքր մասն է

առհասարակ նվիրում լեզվական կոնկրետ իրականությունների ներկայարարությանն ու քննությանը. աշխատության մեծ մասը նվիրված է լեզվի զարգացմանը: Նա հայոց լեզուն և նրա բաղադրիչ տարրերը դիտում է ոչ թե կայուն ու անփոփոխ միավորներ, այլ որպես հարաշարժ ու մշտափոփոխ պրոցեսներ, որոնք «միշտ և անընդհատ ինքնարտիս կերպով փոխվում են խոսողների բերանին»: Նա լեզվական բոլոր իրականությունները դիտելով լեզվի զարգացման տեսակետից, համակողմանի և մանրամասն վերլուծություններով հետազոտում է հայոց լեզվի մեջ տեղի ունեցող բոլոր այն փոփոխությունները, որոնցով պատմապարզված է եղել արդի հայերենի զարգացումը: Հետազոտությունը թիպետ նվիրված արդի հայերենին, բայց շեշտը դնելով լեզվի անընդհատ շարժմանն ու պարզացմանը, Աբեղյանը հայոց լեզուն դիտում է իր ամբողջության մեջ, իբրև մեկ միասնական պատմական պրոցես, իր զարգացման կոնկրետ շրջաններով, լեզվի յուրաքանչյուր պատմաշրջանի ձևափոխությունների և յուրահատկությունների հաշվառումով, լեզվական շրջաններ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է որոշակի օրենքներով կատարվող իր նախորդի ձևափոխությունը, որ գոյանում է լեզվական երևույթների հակադիր կողմերի մշատես պայթարի, և վերջինս հետևանքով իրականացող աստիճանական քանակական փոփոխություններից որակականին անցնելու միասնական օրենսչափությունը: Այս ոչ պատճառ, ահա, որ Աբեղյանի քննարկվող աշխատությունը մի սովորական բերականություն չէ և ոչ էլ լեզվի զարգացման մի ընդհանուր պատմական տեսություն, այլ ժամանակակից հայերենին նվիրված տեսական-բերականագիտական մի բարձրարժեք հետազոտություն, որն իր նախնի շունի ոչ անցյալի և ոչ էլ արդի հայ բերականագիտության մեջ:

«Հայոց լեզվի տեսություն»-ը՝ տեսական ընդհանրացումն է հայ աշխարհագրաբար բերականագիտական մտքի մեկ հարյուրամյա պատմության արդյունքների և արդի հայերենի՝ գասական ամենակարգաբանական երկր: Այն՝ հայ բերականագիտության մտքի բարձրակետն է:

Աբեղյանը «Հայոց լեզվի տեսություն» և «Աշխարհագրաբար շարահյուսություն» ստեղծում է ժամանակակից արևելահայերենի դիտական ամբողջական բերականությունը և աշխարհագրաբար գիտությունը բարձրացնում զարգացման մի ամենախոցեղ պատիճանին: Նրա լեզվաբանական հետազոտությունները կազմում են ժամա-

1 Հմմտ. ԳՊԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, № 75:



Նականիցի հայ բերականության գիտական կայուն և անսասան հիմ-  
քերը:

#### 4. ՀԻՆ ԱՅՈՒՄ ԲՆԱԳՆԵՐՈՒՄ

Արեղյանի բերականագիտական ուսմունքը, սակայն, թիրի  
կլինի, եթև նկատի շանձվին գրաբարին, մասամբ և միջին հայերե-  
նին նվիրված նրա աշխատությունները<sup>1</sup>, մանավանդ, որ դրանք  
հատուկ նպատակ են հետապնդել առավել հիմնավոր ու ամբողջա-  
կան զարձնել աշխարհաբար հայերենի ուսումնասիրությունը:

Աշխարհաբարի գիտական հետազոտող Աբեևն վրդ. Այտբեյա-  
նը, առաջինն էր, որ գրաբարի ուսումը դիտում էր իբրև հարա-  
հարարի ուսուցմանը օժանդակող գիտություն և իր արևմտահայե-  
րենի քննական բերականությունը կից, հիշյալ նպատակով, դիտում էր  
գրաբարի համառոտ տեսությունը<sup>2</sup>:

Եթև մինչ այդ, գրաբարի բերականները (Գ. Ալիտբեյան, 1907,  
Վ. Չալոբյան, Ա. Բագրատունի, Ա. Գարագաշյան) երևելով գրա-  
բարի ուսուցման շահերից, գրաբարի իրենց ուսումնական ձևե-  
նարկները, մասամբ կամ ամբողջությամբ, շարագրում էին աշխարհ-  
հարարով, վերջինս ծառայեցնելով գրաբարի լավ ուսուցման նպա-  
տակին, այդ Այտբեյանից ի վեր, նրա «Քրեական բերականու-  
թյամբ» իրականացված աշխարհաբարի իրավազորություն վերջնա-  
կան հռչակումով, դերերը շրջվում են, գրաբարի ուսմունքը զանդակ,  
բայց աստիճանաբար դարձրեցնական կենցաղում վերածվում է ավելի  
աշխարհաբարի ուսուցմանը նպատակող օժանդակ գիտություն: Այդ  
հեղաշրջումը, որ տեղի էր ունենում բացահայտ կամ խուլ պայքա-  
րով, միանպասից չի իրականացվում: Հին գրությունը մասամբ կամ  
ամբողջությամբ որոշ գործընկերում հարստեղծ է մինչև ընթացիկ  
հարյուրամյակի սկզբները: Աբեղյանը, որ իր բերականագիտական  
գործունեությամբ դառնում է արևելահայ գլոբոցներում աշխարհա-  
բարի վերջնական հաղթանակի ամենավճռական մարտնչը, գա-  
րաբարի շարունակելով զարգացնել Այտբեյանի գործը, վերջնա-  
կանապես գրաբարը դարձնում է աշխարհաբարի ուսուցման մի  
օժանդակ և անհրաժեշտ մաս, բայց առավել հեռուն զնացող դի-

տական նպատակներով: Նա, 1907-ին, «Աշխարհաբարի բերակա-  
նություն» անմիջապես հաջորդած իր «Գրաբարի համառոտ քեր-  
ականություն» առաջարանի մեջ, անդրադառնալով այդ խնդիրներին,  
մասնավորապես գրում է. «Գրաբարի բերականության նպատակն  
էլ այժմ, իհարկե այլևս այն չէ, ինչ որ առաջ, երբ պետք էր ուղիղ  
գրաբար գրել սովորել, այն էլ 5-րդ դարի գրաբար «Եղիշի կամ  
նորենացու լեզվով»: Այժմ գրաբարի բերականությունը միայն իբրև  
միջոց պիտի ծառայի մեր հին լեզուն հասկանալու համար և այդ  
պիտի օգնի մեր լեզվի կազմությունը և սյատմական զարգացումը  
բացատրելուն»: Գեոևո «Աշխարհաբարի բերականություն» առա-  
ջարանում Աբեղյանը վկայում էր իր գրաբարի դասազրբի արդեն  
պատրաստ լինելու մասին. նա նշում էր հատկապես, որ հիշյալ  
դասագիրքը «Աշխարհաբարի բերականությանն» է հարմարեցրած.  
«և որի մեջ մտնում են հայերենի պատմական բերականության  
խնդիրներն»: Սակայն հաջորդ տարին, նա, գրաբարի դասազրբից,  
մանկավարժական որոշ նկատառումներով, դուրս է թողնում պատ-  
մական-բերականական խնդիրները և դրանք վերապահում էր  
ձրագրված աշխարհաբարի մանրամասն բերականությունը<sup>3</sup>, որ,  
ինչպես տեսնել ենք, լույս է տեսնում շատ ուշ, ի դիմս «Հայոց լեզվի  
տեսություն»: Այն, ինչ իր «Գրաբարի համառոտ բերականություն»  
մեջ չի ներառում Աբեղյանը, առավել մանրամասն նա ներկա-  
յացնում է իր «Հայոց լեզվի տեսություն» մեջ, իբրև բարձրագույն  
կարգի մի բերականություն: «Գրաբարի համառոտ բերականու-  
թյան» մեջ նշելով գրաբարի ու աշխարհաբարի բառապաշարի և  
բառակազմության գրեթե նույնությունը, Աբեղյանը հին ու նոր լեզ-  
վի տարբերությունը տեսնում է հիմնականում ձևաբանության և  
շարահյուսության մեջ<sup>4</sup>: Ուստի և նա հիմնականում կանգ է առնում  
գրաբարի խոնարհման, հոլովման, նախդիրների գործածության և  
շարահյուսական այնպիսի կանոնների վրա, որոնք աշխարհաբար-  
ում հազվադեպ են: Այսինքն, Աբեղյանը բնութագրում է գրաբարի քերա-  
կանական այնպիսի ձևեր և իրականություններ, որոնք բուն հին լեզ-  
վին են հատուկ: Այս նպատակով էլ նա ստեղծում է գրաբարի բե-  
րականություն մի կուտ համակարգ: որի տակ համակենտրոնացվել են

1 Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ բերականություն, Վաղարշապատ, 1907,  
նույնի երկրորդ վերամշակված հրատ., Երևան, 1936: Գրաբարի դասագիրք. 1 դիրք,  
Քիթիս, 1915. 11 դիրք, Քիթիս, 1916: Հին գրականական ժողովրդական երգեր,  
Երևան, 1931: Գրականական ժողովրդական տաղեր, Երևան, 1940:

2 Ա. Վ. Այտբեյան, Քննական բերականություն, էջ 420 և հասն.

1 Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ բերականություն, էջ 3:

2 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի բերականություն, էջ Գ:

3 Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ բերականություն, էջ 3—4:

4 Մ. Աբեղյան, Գրաբարի համառոտ բերականություն, էջ 5:

գրաբարի բուրք լեզվական ձևերը. միաժամանակ իր այդ քերական-նորգիտական համակարգը Արեղյանը հագեցրել է զիջուկ քնտրված բազմապան ու հարուստ լեզվական օրինակների մի այնպիսի առաստուղով, որի մեջ նրան են դալիս գրաբարի քերականական ձևերի գրեթե բուրք կոնկրետ կիրառությունները: Գա է պատճառը, որ այդ համառոտ փոքր քերականությունը ավելի շատ գիտելիքներ է առիտ գրաբարի մասին և դառնացնում նրա ուսումնասիրությունը, բան մինչ այդ եղած գրաբարի մեծածավալ շատ քերականությունները:

Բայց «Գրաբարի համառոտ քերականություն» նշանակությունը սոսկ գրաբարի լավագույն համակարգությունը ու մատուցմամբ չի սահմանափակվում. առ արժեքավոր էր նաև աշխարհաբարի պատմական ուսուցման նկատառումով: Արեղյանը գրաբարի շատ ձևեր ու իրադրություններ վերականգնում ու քննում է աշխարհաբարի համեմատությամբ, որի շնորհիվ, եթե մի կողմից բացահայտվում էին նոր հայերենի շատ կողմերի պատմական արմատները, ապա մյուս կողմից՝ գործնականում զգալապես դառնացվում էր գրաբարի ըմբռնումը: Այս համեմատություններով «Գրաբարի համառոտ քերականություն»-ը վերածվում էր յուրատեսակ համեմատական քերականության և «Աշխարհաբարի քերականություն», «Աշխարհաբարի շարահյուսություն» և «Նայտց լեզվի սեսություն» հետ միասին կազմում Արեղյանի քերականագիտական միասնական շղթայի օղակներից մեկը, օղակներ, որոնց մեջ ներկայացված են մեր լեզվի զարգացման տարբեր շրջանների վիճակները և դրանց փոխանցումն ու կերպարանափոխումը:

Ավելի ուշ, միջնագրայան դասանական երգերին՝ հայրենների նվիրած իր հետազոտություններում, հայրենների լեզվի առանձնահատկությունների առևտությամբ, Արեղյանը կանգ է առնում միջին հայերենի բառաձևերի՝ և քերականական այլ իրադրությունների, հատկապես զ և ի նախդիրների գործածության վրա, կատարելով մի շարք ուշագրավ գիտաբանություններ<sup>1</sup>:

Գիտա-մանկավարժական նկատառումներով գրաբարի և միջին հայերենի Արեղյանի կատարած քննությունները, վերջին հաշվով, զայն էին ծառայելու նաև նոր հայերենի քերականագիտական մի

շարք խնդիրների պարզարանմանը և առաջիկ խոր ու համակողմանի դարձնելու արևելյան աշխարհաբարի գիտությունը:

Եվ այդպես՝

1. Արեղյանական սուպարեզ իշնելով XIX դարի 90-ական թվականներին և շարունակելով զարգացնել իր երախտավոր նախորդների, մասնավորապես Ալաբեյանի և Պալասանյանի նոր՝ աշխարհաբար հայերենի ուսումնասիրությունն ու գործնական պրոպագանդը, Արեղյանն իր հետազոտություններով, գոսազրբերով ու մանկավարժական տեսական գործունեությամբ ապահովում է աշխարհաբարի վերջնական հաղթանակը:

2. Միևնույն գիտական նշանաբանով, նա իր գործունեության սկզբից իսկ հանգես է դալիս իրեն նոր հայերենի հին ուղղագրության բարեկարգման ամենաշեղծոտանող տեսարանն ու նախանձախնդիր և իր տարիների հետեղական շանթերով ի վերջը բարեկարգում է հայտց լեզվի հին ուղղագրությունը և դառնում արդի ուղղագրության հեղինակը:

3. Հետևելով ժամանակի միջազգային լեզվաբանության ամենաառաջավոր ուղղություններին և ստեղծագործաբար յուրացնելով հայ ավանդական քերականագիտության դարավոր մշակույթի զբերական արդյունքները, Արեղյանը վերակարգում է հայ քերականագիտության ավանդական համակարգը, այն վերջնականապես ազատագրում օտար քերականությունների ազդեցությունից և բուռեղծում բուն հայերենին համապատասխան քերականագիտական մի կտու ու միասնական համակարգ: Նա հայերենի քերականության մեջ սահմանում է բայերի խոնարհման, եղանակային ու դերբաշականների հոլովման նոր համակարգ, մտնում է կապի հասկացությունը, կատարում է բառերի կամ խոսքի մասերի նոր դասակարգում:

4. Արեղյանը առաջինն է գիտականորեն մշակում հայերենի հնչյունաբանությունը, իմաստաբանությունը, արևելահայերենի շարահյուսությունը, հիմնովին վերածախում է բառակազմությունն ու արևելահայերենի ձևաբանությունը: Նա զուգահեռաբար օգտագործելով լեզվի հետազոտության նկարագրական և պատմական մեթոդները, մի կողմից ներկայացնում է արդի հայերենի քերականական ձևերի և իրադրությունների ամբողջական դրական կառուցվածքը, մյուս կողմից՝ հետազոտում դրանց ծագումն ու զարգացումը իրենց անբեղհատ շարժման ու փոփոխության մեջ: Արեղյ-

<sup>1</sup> Հմմտ. Մ. Արեղյան, Հին գոստական ժողովրդական երգեր, էջ 43—63:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Գոստական ժողովրդական տաղեր, էջ 313, 317 և այլուր:



յանը արեւելահայերենի բերականութիւնը դուրս է բերում իր նորմատիվ զգրոցական վիճակից զեպի տեսական-փիլիսոփայական բարձունքներ և դառնում արդի արեւելահայերենի գիտական բերականութեան ստեղծողը:

Տ. Արեղյանը բերականագիտական իր տեսութեամբ ու համակարգով Հայոց լեզվի բերականութիւնը ազատագրում է տրամաբանութեան կաշկանդիչ կայանքներից և այն դարձնում լեզվական ձևերի և իմաստների ներքին օրինաչափութիւններն ու առանձնահատկութիւնները հետազոտող իսկական լեզվական գիտութիւն: Եվ լեզվական ստույգ օրինաչափութիւնների ու հատկանիշների վրա հիմնոված լինելու պատճառով է ահա, որ այսօր նրա բերականագիտական ուսմունքը պատվաւոր քննութիւն է բռնում արդի լեզվաբանական նոր մեթոդների և ուղղութիւնների դիմաց և նոր լուստի սակ կրկին ապացուցում իր գիտական ճշգրտութիւնը:

Գ Լ Ո Ի Խ Է Լ Ի Ն Գ Ե Ը Ո Ր Գ

## ԱՐԵՂՅԱՆԻ ՏԵՔՍԱԲԱՆ ԵՎ ԲԱՌԱՐԱՆՍԳԻՐ

Հայ ժողովրդական բանահյուսութեան, հայ հին գրականութեան և հայոց լեզվի բնագալտներում Մ. Արեղյանի բազմաժյուզ գիտահետազոտական աշխատանքների արդյունքները սոսկ տեսական ուսումնասիրութիւնների շրջանակներում չեն սահմանափակվում:

Իր գիտական ուսումնասիրութիւնները կատարելով փաստական հարուստ նյութի հիման վրա, նա բավարարվում է ոչ միայն այդ նյութի բնական տեսական հետազոտութեան միայն, այլև այդ նյութն իսկ ենթարկում է հատուկ քննութեան ու համակարգման և նրան տալիս որակական նոր կերպարանք: Այդպես է ծնվել Մ. Արեղյանի բնագրարանական աշխատութիւնների մեծ մասը:

1898—99 թվականներին «Հայ ժողովրդական աստագրիչները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մեջ» ուսումնասիրութեան կապակցութեամբ, Արեղյանը բանասիրական հատուկ հետազոտութեան է ենթարկում էջմիածնի մատենադարանի Խորենացու «Հայոց պատմութեան» աստուծո՞վ ձևազարդը: Արդյունքներն այնքան ակրնահայտ էին ու շոշափելի, որ նա արդեն 1901-ին, Սեթ Հարութիւնյանի աշխատակցութեամբ ձեռնարկում է Խորենացու «Հայոց պատմութեան» համեմատական բնագիր կազմելուն<sup>1</sup>, որի ստացումը

<sup>1</sup> Այդ նախնականութիւնը համրկնում է մի շատ կարեւոր իրադարձութեան 1902 թ. վերջերին Ստեփանոս Մալխասյանցի ձեռնարկութեամբ և ժամանակի նշանավոր մի իւր մը հայագետների (Ս. Վ. Ամատուի, Կ. Վ. Տեր-Մկրտչյան, Մ. Արեղյան, Ստ. Կանայան, Զ. Մանանդյան, Գ. Վ. Լուսինյան, Մ. Մարտոսյան, Գ. Տեր-Մկրտչյան, Վ. Նալբանդյան) մասնակցութեամբ ու շահերով էջմիածնում հիմնադրվում է «Պատմագիրք Հայոց» մատենադարանի գիտական հրատարակութիւնը:

թյունն սկսվում է 1908 թվականից, ավարտվում՝ 1911-ին<sup>1</sup>, իսկ դրբն ամբողջությամբ լույս է տեսնում միայն 1913 թվականին: Բնադիրը կազմելուց առաջ, Մ. Արեղյանը, հաշվի առնելով նախորդ խորհնազնուհարս-բանասերների (Ա. Բաումգարտներ, Գ. Տեր-Մկրտչյան) ձևեր բրածո բնագրաբանական արդյունքները, ի նորս է վերաբերում հորինացու «Հայոց պատմության» տարբեր ձևագրերի հարարերություն խնդիր: Եթև նախորդ բանասերները հորինացու «Պատմության» ձևագրերի գասակարգումը հիմնում էին սուկ գրանց որոշ բնթերգվածների և արտաբեր մի բանի հաստ-կանիչները վրա, ապա հորինացու բնական բնադիրը կազմելիս, Արեղյանը ձևագրերի իր նոր գասակարգման կապիան է դարձ-նում նրանց ամբողջական համեմատությունները: Նա վերջնակա-նորեն ճշգրտում և վերականգնում է ձևագրերի ծննդարանական խմբերն ու երկրորդական խմբակցությունները, պարզում նրանց միջև եղած ազդեցական հարաբերությունները: Գրանդով ստեղծ-վում էր պատմահոր երկր բնական-բազդատական բնադիրը կազ-մելու կայուն դիտական հիմքը:

Խորինացու «Պատմության» ձևագրերի գասակարգումը և տարբեր խմբերի ու խմբակցությունների հարարերությունների որո-շումը, բնական-բազդատական բնադիրը կազմողներին առաջին հերթին հնարավորություն էին բնձնում՝ կատարել տարբերաց-վածների առույց համախմբություններ, որոնցով բեռնաթափվում էին ծանոթությունները և բնագրաբանական տարբերությունները գառնում էին պարզ ու որոշակի:

Երազվում է հրատարակի հայ պատմագիրների հինգհատորյակ (տարբեր գրքե-րով), որ բնագրելու էր հրատեղե ավելի հայ պատմիչների ճշգրտված բազդատա-կան բնագրերը: Այս դեղերի ծրագիրը ապագայում, զանազան պատճառներով, թե-պետ չեղին չափով է իրագործվում (հրատարակվում է բնագրեր երեք պատմագրի գրասական-բազդատական բնագիր), աթոռանկանիով այն խոշոր նշանակություն է ստանում հայ գրական տերտարածության զարգացման գործում: «Պատմագրե-րը Հայոց» մասնեղանով հրատարակ մեզանում սկիզբ էր դրվում կենական-բազդատա-կան բնագրերի հրատարակարյունը: Մ. հորինացու «Հայոց պատմության» գրա-տան-բազդատական բնագիրը, հրատարակվում է «Պատմագրե-րը Հայոց»-ի խմբագրական մասնաժողովի մշակած բնագրաբանական սկզբունքներով և ծախսե-րով (հմ.ա. ԳԱԲ, Սա. Կանաչյանի ֆոնդ, № 632, Մաշտոցյան մասնեղանարանի արխիվ, կաթ. գրիան, թղթ. 297 ա. վաղ. 183, ինչպես նաև Մովսիսի հորինացուց Պատմությանը, Հատարարան, էջ ետ):

<sup>1</sup> Մաշտոցյան մասնեղանարանի արխիվ, Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ, թղթ. 24, վաղ. 115, 132.

Թեկտա հայ տերտարածության պատմության մեջ, հանձին Ա-գաթանեղոսի երկի բնական-բազդատական հրատարակության, արդեն կար մասնեղանարան հին արգասիքների գրական բնագրի օրինակի իմուշ, հորինացու «Հայոց պատմության» բնական-բազ-դատական բնագիրը, սակայն, զալիս էր չուրովսանն նպատակու հայ տերտարածության զարգացմանը և դառնալու մի նոր օրինա-կելի ու բարձրակարգ գրական հրատարակություն: Այն իրագործ-ված լինելով շուրջ 35 ձևագիր և սպագիր օրինակների բազդատու-վյամը, ի հայտ էր բերում հորինացու «Պատմության» բնագրաբա-նական գրեթե բոլոր կական հատկանիչներն ու օրինաչափություն-ները: Եվ այն ձևագրերը (թվով 21), որոնք գտնվելով աշխարհի տարբեր մասնեղանարաններում և առանձին անհատների մոտ, կամ որոնց երբեմնի գույության մասին միայն թուրցիկ հիշատակու-թյուններ էին մնացել, դանապան պատճառներով անմատչելի են մնում հորինացու բնագիրը կազմողներին: Սակայն գրանց համա-տուն նկարագրությունից և արտաբեր մի բանի նշաններին, որ տվել էին կազմողները, արդեն երևան էր զալիս այդ ձևագրերից մի բանիսի խմբային պատկանելությունը, որը օրել է նորություն չէր ավելացնում արդեն հայտնաբերվածին:

Մ. հորինացու «Հայոց պատմության» բնական-համեմատա-կան հրատարակությունը, բացի տարբերացվածների, զանազան վկայությունների ու հղումների սեղծ, պարզ ու բովանդակալից ծանոթություններից, օժտված էր Մ. Արեղյանի զրած գրատան մի բնագրական առաջարանով, ուր արված էր հորինացու «Պատմու-թյան» տպագիրների ու ձևագրերի նկարագրությունը, ձևագրե-րի գասակարգման խմբերն ու աղբյուրները, բնագիրը կազմե-լու հանգամանքները: Բացի այդ, բնագրերի, բնագիրը կազմե-լու հորինացու «Հայոց պատմության» տպագրությունների, թարգմա-նությունների, նրա մասին եղած բնությունների և ուսումնաբերու-թյունների դարձյալ Մ. Արեղյանի կազմած մանրամասն մասնեղ-անությունը, որը վերջնականապես համայնվել ու ճշգրտվել էր Արանի Ղազիկյանի ուղարկած տակավին անսխղ «Հայկական նոր մասնեղանություն և հանրագրարան հայ կյանքի» գրքի հո-րինացուն վերաբերող մասնեղանությունը<sup>2</sup>: Եվ ի վերջո դիրբը բո-լորում էր հորինացու «Պատմության» մեջ գործածված հատուկ

<sup>1</sup> Հմ.ա. Մովսիսի հորինացուց Պատմությանը Հայոց, Հատարարան, էջ ետ-եմ,

<sup>2</sup> Անդ, էջ 8 Ա.







Քյունը հայ բանասիրության մեջ բաց է մնում մինչև 1940 թ.<sup>1</sup>, երբ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առթիվ<sup>2</sup> Հայպետհրատը հանձնարարում է Մանուկ Աբեղյանին Կորյունի երկի աշխարհարար թարգմանությունը: Թարգմանությունը սխալուց առաջ, ինչպես խոստովանում է Աբեղյանը, բնագիր մեջ ուղղումներ մտցնելու և որոշ մուժ անդեր պարզելու համար, հարկ է զգացվում Կորյունի երկի ձևագրերի բաղադատության: Բայց վատառդղության պատճառով նա զիջարանում է ամսմանակ այլ կատարել, ուստի բազմաբարձրում է Վենետիկի 1894 թ. հրատարակությանը: Մակայն փորձել է անց, Մատենադարանի գիտաշխատող Հովհ. Մանվելյանը, Աբեղյանի խնդրանքով, Մատենադարանում անկա Կորյունի վեց ձևագրեր բաղադատելով Վենետիկի 1894 թ. հրատարակության հետ, ստացված տարբերակներով հանձնում է Մ. Աբեղյանին: Վերջինս արդեն ամսնդրվթ դրածոս ՎՊատմագիրը Հայոցը-ի սկզբունքներով, զասակարգում է տարբերակները, ուսումնասիրում

(գաղնկարծազիս ինդրինն, Վարուք, բացառությամբ արժարեկու-ն) նստրերեկի ցուգահե անկա է նաև ույայ նևուցում: Ավելին, ցղզնցի վարուք երանելին՝ բասակարգելությունը ամբողջությամբ ուղև է միմիայն այս Մ 2639 նևուցում, ապալում բացակայում է վարուք բաց, իսկ երկու նստրերեկուն է գրանց հիման վրա Գ. Տեր-Միկայելի կամած սեպիր բաղադատության մեջ՝ «երանելին: Սա ցույց է ապխ նա, որ Գ. Տեր-Միկայելը ունեցել է սեպիր բուլտրոմին տարեր, զանազան նևուցրնի բաղադատությամբ վերակազմված բնական մի բնագիր, որ, ինչպես Ավելյանի վերին վիտայությունն է ցույց ապխ, կազմված է եղել Մ 2639 նևուցր հիման վրա:

Եվ ի վերջ, Մաշտոցյան մատենադարանի Գ. Տեր-Միկայելի արխիվային վավերագրերի ցուցակում՝ 16-րդ թվադասակի 3-րդ վավերագրի դիմաց գրված է «Կորյուն մեծ», մինչև իրականում այդ թվադասարի տակ եղածը ոչ թե Վեժ Կորյունն է, այլ արզնն քանիցս հիշատակված 18 (չառն Կորյունի նստրուս-շեպր սեպուրությունը) Ուրեմն, սկզբնական արխիվում պահված է եղել Վեժ Կորյուն-ը (այսինքն վերակազմված քերական բնագիրը), ճավանարար Նյժմ անազիր օրինակի հետ միասին՝ մինևուր թվադասարի տակ: Եվ երբ վերակազմված բնագիր կորել է, մնացել է միայն սեպիրը, իսկ Նյժմերի ցուցակում շարունակ է պահպանվել նախկին վավերագրի անունը՝ «Կորյուն մեծ»:

3 1927 թ. «Սինեում» (Երևանգրք), ապա 1930-ին նաև առանձին դրքով (Կարևն, Վարք Մաշտոցի, ուղղակա և յուսարանկա ի Գանելի ձևուղանել, Երևանգրք) յույս է անեսում Կորյունի երկը, որ չի հիշատակված, թե ինչ բնագիր հիման վրա է այն հրատարակվել Հավանարար կազմող վերահրատարակելի է Վենետիկյան աղագրությունը (1894 թ.) և նրա բնական երկու նևուցրերի տարբերակներն է այլ մատենագիրների նստագրատաթան բստերի հանմ-մատական բնությունների հիման վրա էլ կատարել է իր ուղղումները և յուսարա-Նստերը:

րում գրանք և գրանցից մի քանիսը անձամբ նևուցրերի վրա վե-րրատուգրուց հետո, կազմել է Կորյունի բնական-բաղադատական բնագիրը և այն ղնելով աշխարհարար թարգմանությանը կից՝ հը-րատարակում: Ստացվում է մի հրատարակություն, որի մի կողմում գրված է գրարար բնական բնույթը ալլընթերգվածներով, իսկ մյուս կողմում՝ ճշգրտված բնագրի աշխարհարար թարգմանու-թյունը:

Կորյունի երկի Աբեղյանի կազմած բնագիրը խորոխված էր 9 նևուցրի և սուպիր օրինակների բաղադատության վրա, որ հաշվի էին առնված նաև 1894-ի հրատարակության ստղատակի՝ մյուս օրինակի տարբերակները: Նորությունն այն էր, որ առաջին անգամ շրջանառության մեջ էին գրվում երևանի Պետական մատենադարանի վեց նևուցրերի տվյալները, որոնք հետագայում հիմք պիտի ծառայեին այլ բանասերների համար՝ Կորյունի նոր, ստացվելի համարված բնագիրը պատրաստելու:

Փանի որ սկզբնական Կորյունի երկի աշխարհարար թարգմանությունը Աբեղյանը կատարել էր Վենետիկի 1894 թ. սուպիրից, ուստի հետագայում, երբ Մատենադարանից բավարարում են նևուցրերի բաղադատության նրա պահանջը, համանստության հիմքը

1 Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, նևուցրական ալլընթերգվածներով, թարգմանությամբ, առաջարանով և ձևոթագրություններով էր նևուցր արթ. գը-ր Մանուկ Աբեղյանի, Հայպետհրատ, Երևան, 1941, էջ 18—20:

2 Մեկն Մ. Աբեղյանի այս աշխատության երևան ցուլը, Կորյունի երկն անե-ցել էր վեց հրատարակություն, որոնցից մեկը՝ Համատես կամ Սուս-Կորյուն: Առաջին աղագրությունը կատարվել է Վենետիկում 1832-ին, երկրորդը՝ Ջնյու-նիայում, 1847-ին (առաջինն արտատպությունն է), երրորդը՝ Համատես Կորյունը, զարձայ Վենետիկում, 1854-ին, Վեժերը Հայկական-ի ժև գրում, շրթրորը նա Վենետիկում՝ 1894-ին, որը լինելով առաջինն արտատպությունը, բը-ր շրթրորը նա Վենետիկում՝ 1894-ին, որը լինելով առաջինն արտատպությունը, այս նստրի տակ գնեղված անի Համատես կամ Սուս-Կորյունը: Լինելորդը՝ Երու-սակումի արզնն հիշատակված հրատարակությունն է Վերջինս, Կորյունի բնագրի կազմելն, Աբեղյանը ձևեր տակ չի ունեցել: այն առաջել է եր արզնն Կորյուն-ի երկն հանձնված էր հրատարակության (անհ Կորյուն, Վարք Մաշտոցի, երե-վան, 1941, էջ 114): Բացառությամբ Համատես կամ Սուս-Կորյունի, մնացած աղագրությունները հիմնականում սերում են մեկ աղբյուրից՝ Վենետիկի առաջին աղագրությունից և ոչ մեկն էլ բաղադատական բնագիր չէ: Միայն նևուցրերն հրատարակածը մնամբ ունի բնական բնույթը: Նստերը:

3 Հմտ. Կարևն, Պատմագրություններով Հ. Ներսես Ավելյանի, Միսիթ. տխան, Բ աղագրություն, Վենետիկ, 1957, էջ 12: ԼՊ:



բնականաբար, դառնում է Վինետկի հիշյալ տղայգիր օրինակը: Արեղյանը նախքան ձևագրերի բաղադասությունը, Քարգմանության մեջ կատարել էր կետագրության և բնագրի բաղադասով ուղղումներ, օգտվելով վենետիկյան հրատարակության մեջ բերված այլընթիք-վածներից, կրեմն էլ՝ Սուս-Կորյունից<sup>1</sup>: Հետագայում, երբ ձևերի սակ է ունենում արդեն Մատենադարանի վեց ձևագրերի տարբեր-թերթվածները, պարզվում է նախ, որ Արեղյանի կատարած ուղղում-ները, մեծ մասամբ եղել են ճիշտ, և ապա դրանք հիմք են տալիս նույն բնագրի մեջ մի քանի նոր ուղղումներ կատարելու<sup>2</sup>: Նա Կոր-յունի բնագիրը, բոս բովանդակության, բաժանում է քանիսը հատ-վածների, դրանք զխակարգելով անկյունավոր փակագծերի մեջ գրված հաշվական թվանշաններով<sup>3</sup>: Քացի յուրբանույր էջի տար-ընթերցվածների ծանոթություններ, Արեղյանը գրքի վերջում կա-տնի բաղադասով ծանոթագրություններ, ուր հմտորեն մեկնաբան-ված են բնագրի բացատրության ենթակա շատ իրողություններ, որոնք գալիս են նույնատեղի բնագրի լավ հասկանալուն: Գիրքն ունի նաև հատուկ անունների ցանկ և առարկան, ուր սեղմ ու բո-վանդակային ներկայացված են գրքի գլուխից առջև Հայաստա-նում ստեղծված պատմական ու կուլտուր-բաղաբական պայման-ները, Մաշտոցի աղջաշեն գործունեությունը, Կորյունի երկի պատ-մա-մշակութային ու բանասիրական արժեքը, նրա բնական-բաղ-դասական բնագիրը կազմելու և աշխարհաբար Քարգմանության առիթն ու հանգամանքները: Իսկ կրք նկատի ենք առնում Կորյունի երկին կից աշխարհաբար բարձրորակ Քարգմանությունը, կատար-ված ճշգրտված ու վերակազմված համեմատական բնագրի հիման վրա, Քարգմանություն, որը մեծապես նպաստում է հայ առաջին գրական հուշարձաններից մեկի լայն ժողովրդականացմանն ու տա-րածմանը<sup>4</sup>, ապա պարզ կզարնա Արեղյանի կատարած գործի գիտա-

կյան և պատմական նշանակությունը: Առաջին անգամ հայ տեքստա-րանության պատմության մեջ, Արեղյանի շնորհիվ, հրատարակ էլ գա-լիս Կորյունի «Վարք Մաշտոցի»-ի բնական-բաղադասական բնա-գիրը՝ կից աշխարհաբար Քարգմանությունը<sup>1</sup>:

Հին գրական հուշարձանների նկատմամբ Արեղյանի տեքստ-աարանական շահագրգռությունները միայն պատմագիրներով չեն սպառվում:

Միջնադարյան «հարկներն» կողմն գուսանական-ժողովրդ-յական երգերը, որոնք արժանացել էին նրա կողմից մենագրական ուսումնասիրության<sup>2</sup>, գրավում են Արեղյանի ուշագրությունը նաև բնագրաբանական տեսակետից<sup>3</sup>:

Կուրյունցի և նրա առաջարկով «Վարք»-ը լույս է տեսնում անդերին՝ կից զորքեր բնագրով (Korjuni, The life of Maschots, translated by Bedros Norehad).

1 Կորյունի բնագրի համար Հ. Մանվելյանի Մատենադարանի 6 ձևագրերի բաղադասության կազմած արքերնթերցվածներում առկա մի քանի վրեպումներն ու ուղղաբանական կարգի սխալները, որ Արեղյանն իր անկապատ առողջության պատճառով չէր կարողացել վերանայն ձևա ստույգելով վերացնել, առիթ են ծառայում պատմաբան Աշ. Արրահամյանին, Մ. Արեղյանի դեմ հանդես գալու մի միտումնավոր դրսևոտությունը (տե՛ս «Արևիտական գրականություն», 1942, № 2, էջ 100—104): Մի երկու իրավացի գիտադրության հետ մեկտեղ («Հարանց վարք»-երի հնագույն օրինակների և N 2682 ձևագիրը չարագործելու հանգամանքը) գրախոսը մանրուքների շափազանցումներով, անհանկի պահանջներով, երբևէն էլ՝ փաստելու սխալ մատուցմամբ փորձում է նեմացնել Արեղյանի հրատարակու-թյան արժեքը: Եվ ի՞նչ մատենախոսականի դեմ նույն ամառգրի հույն տարվա 5—6 համարներում մի սուր քննադատական հոդվածով հանդես է գալիս Մ. Զանաղանյանը (տե՛ս նրա «Մի անդրանցիկ գրախոսական մտախն», էջ 190—194): Վեր-ջինս արգարացի փաստաբաններով հերքում է գրախոսի անհիմն պահանջներն ու փա-սազանքները, բացահայտում գրախոսականի ուղե միտումնադրությունն ու փա-սազանքի սխալները, իրավացիորեն հաստատում հարգում Արեղյանի կատարած արժեքավոր ուղղումներն ու զնահատում նրա կատարած գործի պատմական ար-ժեքը:

2 Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931:

3 Մինչև Արեղյանի ուսումնասիրությունը, հարկներն իրեն «Փուշակյան սառչեր» միջնադարյան ձևագրերից լույս աշխարհ էին եկել երկու հիմնական հրատարակություններ:

ա) «Հայեր, մեկնիք, սառչ և կրք», հավաքույն և հրատարակող Արե-սական վրդ. Տեղկյանց, Ռոստեն Վարպա, Փիֆլիս, 1882. բ) «Նահապետ Քու-շակի զիվանք, սիրո երգեր, իրատական և աշխարհական երգեր, պանդուխտի երգեր, քննական ուսումնասիրություն մբ», հրատարակիչ Աբշակ Զուգրյանյան, Փոփրի, 1902:

Այս երկու ժողովածուներից բացի, հարկներն իր փոքրիկ խմբեր և առանկի

1 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 18—19:

2 Անդ, էջ 20:

3 Անդ, էջ 19:

4 Արեղյանի կատարած «Վարք Մաշտոցի»-ի աշխարհաբար Քարգմանությունն առանկի, երկրորդ անգամ լույս է տեսնում Մաշտոցի մեծնշյան 1600-ամյակի առթիվ՝ 1962 թ. Նեղիմախի «Մեկուրոց Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» կից քննադական ուսումնասիրությամբ (Հայագիտություն, Երևան), Բացի այդ, նույն թվականին Արեղյանի կազմած բնագրից «Վարք Մաշտոցի»-ն հրատարակվում է նաև ուսուցիչական Քարգմանությամբ (տե՛ս Կ. ՕՐՅԱՆ, ЖИТІЕ Маштоца, перевод Ш. В. Сибатяна и К. А. Мелик-Оганджяна, Ашхста-рат, Ереван, 1962): Իսկ 1964-ին, Բոստոնում, գործնյալ Արեղյանի հրատարա-

Վերջինս, եթե մի կողմից անմիջականորեն պայմանավորված էր հետազոտություն ասիթով ձևերի տակ կուտակված մեծաքանակ նյութով և Գիվլանս-ից հետո հրատարակ եկած հայրենների նորանոր տպագիր նմուշներով, այսպե՛ս մյուս կողմից, որ շատ կարևոր է, Արեղյանի ուսումնասիրության գիտական նոր եզրահանգմամբ: Ապացուցելով, որ հայրենները մեր հին գուսանական ժողովրդական երգերն են, Արեղյանը գտնում է, որ գրանք նույնն են Արևմտահայաստանի որոշ շրջաններում տարածված ժողովրդական անսունիների հետ, այն տարբերությամբ միայն, որ առաջինները միջնադարում, իրենց հասարակական պահանջի համեմատ, գրատվում են տաղարաններում և ավանդվում գրավոր, իսկ անսունիները նույն հայրեններն են բանավոր ավանդված և բոտ այդպիսի փոփոխությունների ենթարկված: Ահա, գրավոր հայրենների ու բանավոր անսունիների այս նույնացումն ինքին առաջադրում էր պահանջ՝ անհնալ նոր համաձայն ժողովածու, ուր ընդգրկվեին հայրենների թիվ՝ գրավոր և թիվ՝ բանավոր բոլոր նմուշները, և բնագրի մեջ իսկ արտացոլվեր նրանց միասնությունը:

Գիտական այս նոր տեսագծով էլ Արեղյանը ձեռնարկում է կազմել հայրենների և անսունիների համաձայնաբ ժողովածուն: Նա ձեռքի տակ կենտրոնացնելով անցյալ դարակիսներից բերած մինչև 30-ական թվականները պարբերական մամուլի էջերում և առանձին գրքերում տպագրված հայրեններն ու անսունիները, ինչպես նաև Վաղորշապատի պետական մատենադարանի, Երևանի պետական թանգարանի, Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի և առանձին անհատների պատկանող ձեռագրերից հանված հայրենների տաղարարքեր, կազմում է հայրենների և անսունիների իր նշանավոր ժողովածուն<sup>1</sup>, որն ընդգրկում էր 500-ից ավել մեծ և փոքր երգեր իրենց տարբերակներով: Արեղյանի բնադրված պետական մեթոդի առաջին յուրահատկությունը՝ նյութի նրկատմամբ բնական վերաբերմունքն է:

Ելնելով հայրենների ընդհանուր բնույթից, իբրև բրիտանական-նշանավորական ոգուն հակադիր՝ աշխարհիկ զվարթ տրամա-

ղբրությունների բանաստեղծական օրոտահայտություններ, իբրև ժողովրդական երգիչների՝ գուսանների սիրտ և արխիտիան երգեր, Արեղյանը միջնադարյան ձեռագրերում առկա հայրենների տաղաչարքերից առանձնացնում է հայրենների ոգուն խորթ կրոնատարախոսական բովանդակությամբ երգերը, այն իրավացի հիմունքով, որ «Դրանք գուսանների ստեղծագործությունն են, այլ կրոնական ուսում առած մարդկանց, որոնք իրենց գուսանագրի արտահայտիչն են դարձել այդ երգերով»: Հայրենների տաղաչարքերում նման երգերի ներթափանցումն Արեղյանը բացատրում է մի կողմից խնչույքների ժամանակ գուսանների ամեն տեսակ երգեր կատարելու սովորությամբ, երբ երգեր գրատղները նույնությամբ այդ տարբեր բնույթի երգերը ներառնում են տաղարաններում, մյուս կողմից՝ երգեր գրատղների կրոնական պատկանելությամբ: Այդ կրոնական և բարոյա-խրատական աղերի ժողովրդական-գուսանական շիկերը Արեղյանն իրավացիորեն հիմնավորում է նաև այն իրողությամբ, որ նշված երգերը հետագայում չեն ժողովրդականացել ու բերանացի չեն պահպանվել, մինչդեռ մյուս հայրենները հասկ են մեզ բանավոր ավանդությամբ:

Հայրեններն ու անսունիները Արեղյանն իր կազմած ժողովածուում բաժանում է հինգ խմբի՝ 1. ուրխիտության և սիրտ հայրեններ, 2. հարսանյաց և սիրտ հայրեններ, 3. պանդխտության և սիրտ հայրեններ, 4. օրորոցի անսունիներ, 5. լացի անսունիներ կամ մահ-երգեր<sup>2</sup>:

Այս հարուստ և բազմապիսի նյութը պարտավորեցնում էր Արեղյանին նախընտրել բնադրաբնական այնպիսի միասնական սկզբունք, որ համապատասխաներ երգերի երկակի կենցաղավարման բնույթին: Նա, հայրենների մեծ մասի գրավոր և տարբերակներով այլանդակելու պատճառով, հիմք է ընդունում համեմատական բնագրեր կազմելու սկզբունքը՝ փոքր-ինչ ալլադիտոված: Հայրեններից ամենայրիվ ու համեմատաբար կատարյալ փոփոխակր

<sup>1</sup> «Գուսանական ժողովրդական տաղեր», էջ 13:

<sup>2</sup> Չպալանյանի ժողովածուի հետ համեմատած, Արեղյանի մաս ավելանում են երեք նոր բաժիններ («Հարսանյաց և սիրտ», «Օրորոցի անսունիներ և լացի անսունիներ»), որոնք պայմանավորված էին նոր նյութի՝ անսունիների ընդգրկմամբ: Եվ ընդհանրապես, Արեղյանը ժողովածուից դուրս է գնում խրատական և այլաբանական-կրոնական հայրենները, իբրև ոչ գուսանների հորինած երգեր, որոնք Չպալանյանի մոտ առանձին բաժին էին կազմում (Տե՛ս «Նախապես Քույրների գիվներ», էջ 83 և հետ.):

նույններ լույս էին տեսել նաև թե՛ առանձին գրքերում և թե՛ պարբերական մամուլի էջերում, որոնց ցույցերը կարելի է տեսնել՝ Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 27—30:

<sup>3</sup> «Գուսանական ժողովրդական տաղեր. հայրեններ և անսունիներ (ուրախություն, սիրտ, հայտարար, օրորոցի, լացի)», հավաքիչ և խմբագրեց գիտ. վաստակավոր գործիչ, պրոֆ. դոկտ. Մանուկ Արեղյան, ԱրմՖանի հրատարակչություն, Երևան, 1940:



ընդունելով հիմք, Արեղյանը տվյալ երգի հետ է բազադատում ձևաբար տակ եղած փոփոխակները և չարարանելու ատրի կամ բառի ասարբերություններն՝ բառ առգաձանարների և աղբյուրների, նշում երգատակին: Իսկ երբ շատ են աղղերի և բառերի տարբերությունները, Արեղյանը տվյալ երգն ամբողջությամբ դիտում է իբրև առանձին տարբերակ և երբ դնում է նախորդի հետ միևնույն համարի տակ, միայն աստղանիշով նշում: Բացի այդ, երբ երգերի տարբերությունները շատ մեծ են և բովանդակությամբ առանձին երգ կարող են դիտվել, նա գրանք հաջորդաբար դնում է միմյանց հետևից, միայն հիմնական համարի կողքին նշելով հայկական թվանշաններ (ա, բ, գ...), որով ակնարկվում է այդ թվանշանները կրող երգերի իրար նկատմամբ ունեցած աղղակցական հարաբերությունը:

Այդպիսով, Արեղյանը երգերի թեմատիկ միևնույն խմբի տակ՝ հայրեններն ու անտունիները դասակարգում է բառ իրենց բովանդակության և բառ այդ էլ միմյանց շուրջ համախմբում երգերն իրենց մերձավոր և հեռավոր տարբերակներով, իրենց բնագրական տարբերություններով: Նա միաժամանակ հանդես է բերում քննական վերաբերմունք երգերի բնագրի նկատմամբ, բանասիրական կառուցումով ամրացնում միջամտում է նրանց բնագրին և նկատի ունենալով երգերի համապատասխան փոփոխակները՝ բառ իմաստի կամ ոտանավորի շափի ուղղում է բացահայտ սխալները, հնչյունական և բառային հավելումներով կամ հազարումներով վերականգնում աղճատված տողերը, ամենուրեք նշելով իր կատարածի մասին: Արեղյանը ուղղագրական միջոցառումներ է նվիրում տարբեր ժամանակներում, տարբեր գրիչների կողմից գրված հայրենները, միայն բաղաձայններից առաջ՝ բառակարգի զ նախորդի և բաղաձայններից հետո՝ բառավերջի ս, դ, և հոգերի վրա, երբ դրանք առանձին վանկ են կազմում, երգի շափը հասկանալի լինելու համար ավելացնում է ք ձայնավորը՝ բզ, բս, բղ, բն: Իսկ երբ դրանք վանկ չեն կազմում, թողնում է նույնությամբ, առանց ք-ի: Արեղյանի այս միջամտությունների շնորհիվ, տարբեր գրանքից, տարբեր գրիչների ու երգիչների կողմից գրավոր ու բանավոր ավանդված, հաճախ աղճատված, իմաստային ու տաղաչափական խախտման ենթարկված հայրեններն ու անտունիները ձևաբար են բերում կատարյալ տեսք, զստնում անթերի:

Երգերի տարբերակները համախմբելիս՝ մի շարք անտունիներ

նույնանում են հայրեններին, և Արեղյանը բազադատելով դրանք միմյանց՝ բավարարվում է սոսկ անտունիների բնագրական տարբերությունները նշելով, իսկ շատ անտունիների համար համապատասխան հայրեններ չունենալով, նա այդ երգերը բազադատում է համապատասխան անտունիների հետ, դարձյալ միևնույն բնագրական սկզբունքներով: Արդյունքը՝ հայրենների և անտունիների փոխհիփոս միմյանց հաջորդող, բնագրաբանական միևնույն համակարգով կառուցված շարքերն են՝ թեմատիկ և բովանդակային համախմբումներով: Հայրենների և անտունիների այս դանձարանի դիտական արժեքը բարձրանում է այն ճեմատ ժանրագրություններով, որոնցով օժտել է Արեղյանը իր ժողովածուն: Դրանց մեջ երկվան են զայիս կազմողի խոր ու համակողմանի գիտելիքները հայ ժողովրդի պատմության ու մշակույթի բոլոր կողմերի նկատմամբ: Անտոնագրությունների արժեքը մեծանում է և այնու, որ այստեղ ներառվել են նոր ժողովրդական երգերում առկա հայրենների վերամշակված տարբերակները կամ հայրենների դարգացած ու վերամշակված հատվածները, որոնք զայիս են առավել ցցուն ու առարկայական դարձնելու հայրենների ժողովրդական-բանահյուսական նկարագիրը:

Երգերի հասկանալուն է դարձյալ նպատարով ժողովածուի վերջում գրած դժվարհասկանալի բառերի բառարանը, որ Արեղյանը լեզվաբան բառարանագիր իր ողջ հիմնությամբ, բազմաթիվ բառարաններ և օժանդակ այլ աղբյուրների օգտագործումով, ստույգ և աներկրա մեկնաբանում է ժողովածունում առկա բոլոր դժվարասահանալի բառերը՝ երգերում կիրառված իրենց որոշակի նշանակությամբ: Բառարանը, բացի իր այս նպատակային արժեքից, կարևոր է նաև միջին հայրենն ու մեր ժողովրդական բառարանը հետազոտելու տեսակետից առհասարակ:

Արեղյանի ժողովածուն, բացի հիշատակվածներից, ունի նաև ներածություն, որ սեղծ ներկայացված են հայրենների իր հետազոտության («Հին դուստնական ժողովրդական երգեր») աղբյուրները, օգտագործված աղբյուրների ցանկ, անվանացանկ, որով ամբողջանում է ժողովածուի ակադեմիական նկարագիրը:

«Գուսանական ժողովրդական տաղեր» գիրքը, ընդգրկված նույնով ու բնույթով, հայ ակադեմիական պատմության բացառիկ էրևույթներից էր, քննական-բազադատական սկզբունքներով առաջին

1 Հմմտ. «Գուսանական ժողովրդական տաղեր», էջ 305 և հետև.

1 Հմմտ. «Գուսանական ժողովրդական տաղեր», էջ 25 և հետև.

անգամ մեկանում գրավոր և բանավոր ավանդված ժողովրդական երգերը ենթարկվում էին բնագրասիրտական միասնական համակարգության: Եվ այդ երկակի նյութի համագրման պատճառով էլ, ՆՐԸ-ված ժողովածուն ձևեր է բերում ինքնատիրույթյուն և դանում ժողովրդական բանահյուսության արցասիրենների գիտական հրատարակության մի օրինակելի նմուշ:

Եթե «Գուսանական ժողովրդական աղերք»-ը նյութի կենցաղավարման բնութամով կիսով չափ գրական, կիսով չափ բանահյուսական բնագիր էր, և դրանով իսկ գրական նյութը բանահյուսականին կազմի մի օղակ, ապա «Ժողովրդական խաղիկներ» ժողովածուն՝ նյութով դուր բանահյուսական էր, ժողովրդի բերանից անմիջապես գրառած և ենթարկված տերապարանական բուրյուրվին այլ սերգ-տերքների: «Ժողովրդական խաղիկներ»-ը թեպետ լույս է տեսնում «Գուսանական ժողովրդական աղերք»-ի հետ միաժամանակ (1940 թ.), բայց նրա կազմման աշխատանքները սկսվել էին շատ վաղուց, սակավիճ դարակարգներին: 1900 թ. Կոմիտասի հետ ձևաերկելով ժողովրդական երգարան կազմելու գործը, Արեղյանը Գևորգյան ձևմարանի աշակերտներին, իր բարեկամներին և անձամբ իր և Կոմիտասի ջանքերով ժողովրդից գրառում է զեղչկական երգերի տասնյակ հազարավոր նմուշներ և դրանք բառարանի կարգով ենթարկում նախնական դասակարգման: Սակայն նկատելով, որ երգերի փոփոխանները ի մի համախմբելու տեսակետից դասակարգման այդ սկզբունքը նպատակահարմար չէ, Արեղյանը փոխում է համակարգման եղանակը: Նրա առաջարկությամբ խաղերն իրեն և Կոմիտասը սկսում են դասակարգել ըստ հանգերի, որով գրանց փոփոխանները իրար կողք են դալիս: Հետագայում՝ 1902 թվականից, Արեղյանը մենակ է սկսում աշխատել ժողովրդական խաղիկների վրա: Նա շարունակում է իր ծանուցներին և աշակերտների միջոցով նորանոր երգերի գրանցումը, համակարգումն ու բաղդատությունը: Մտադիր լինելով երգերի բանահյուսական ժողովածու հրատարակել, նա պատրաստում է դրա ներածական հետազոտու-

թյունը «Ժողովրդական խաղեր» վերնագրով, սակայն, տեսնելով, որ ժողովածուն թերի կլինի առանց ապագրված երգերի ընդգրկման, նա, աշխատանքով ծանրարեւոմված լինելու պատճառով, թողնում է ժողովածուն հրատարակելու միայն և եղված ներածությունը 1904-ին լույս է ընծայում իրի անկախ հետազոտություն: Այնուհետև նա սկսում է ապագրված երգերը հավաքել ու բաղդատել ձևերի տակ եղածների հետ, մինչև առաջին աշխարհամարտի սկզբները: 1914-ին նա դադարեցնում է այդ աշխատանքները և դրանք վերականգնում միայն 1927 թ., Խորհրդային Հայաստանի լուսժողովում Ասր. Մամվյանի հորդորով, և ավարտում հաջորդ՝ 1928 թվականին:

Քայց երգերը դասակարգելու հանգարանական ավալ սկզբունքը, իր որոշ անկատարությամբ, չի բավարարում Արեղյանին: Ըստ ձայնավորների դասավորած հանգերով շատ զգվար էր գտնել ուղած երգը, ուստի նա այդ տասնյակ հազարավոր երգերի դասավորությունը փոխում է հանգերի վերագտասակարգում է այբբենական կարգով: հանգերի համար նախտի է առնվում միայն երգերի առաջին օտղի վերջին հանգ կարգից բարձր: Հանգերը դասակարգվում են ըստ այբբենական կարգի, հանգարանի վերջին տառով, եռյն կարգով վերջից առաջ գնալով:

Մեծ ջանքեր պահանջող այդ աշխատանքը տեսն է բավական երկար, և ի վերջո Արեղյանի համառ աշխատասիրության շնորհիվ՝ օտանկվում հաջողությամբ<sup>1</sup>:

«Ժողովրդական խաղիկներ» ժողովածուն հայ զեղչկական սիրո երգերի՝ բաղայկների գիտական անդրանիկ համահավաքն է, որն ընդգրկում է մինչև ընթացիկ հարյուրամյակի 30-ական թվականները օտագրված հայ զեղչկական եղված երգերի ողջ ժառանգությունը և այդ բաղայկների՝ Արեղյանի ու Կոմիտասի հավաքած հազարավոր նմուշները: Ժողովածուի մեջ աեղ էին գտնել ավելի բան 3400 երգ՝ իրենց բազմաթիվ տարբերակներով: Երգերն ըստ հանգերի այբբենական կարգով դասակարգելու սկզբունքը ուներ կ'տեսական, կ' գործնական արժեք: Հանգերի կարգով դասավորումը մի կողմից սխտանմամբում էր ժողովրդական բաղայկների հարուստ ու բազմազան հանգերը՝ իրենց բարդ տեսակներով և դրանով իսկ կալում պատրաստի հող ստեղծում հայ ժողովրդական երգերի հանգերի տեսական ուսումնասիրության համար, մյուս կողմից՝ ի մի էր համախմբում այդ հազարավոր մանր երգերի տիպարանական փոքրերը,

<sup>1</sup> «Ժողովրդական խաղիկներ. գյուղական փոքր երգեր իրենց փոփոխաններով», խմբագրեց պրոֆ. Գ. ր. Մանուկ Արեղյան, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, Հայրենահրատ, 1940:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հիշողություններ Կոմիտասի մասին, տե՛ս «Կոմիտաս», ժողովածու՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, կազմեց Թ. Թերթմազյան, Երևան, Գևորգյան, 1930, էջ 61—62, նաև՝ Մ. Արեղյան, «Ժողովրդական խաղիկներ», էջ 169:

<sup>3</sup> Մ. Արեղյան, «Ժողովրդական խաղիկներ», էջ 109—111:



այսինքն՝ երգերն իրենց տարբերակներով, և երգերի քանակային խտուն բազմազանությունը ենթարկվում էր որոշակի համակարգի և օրինակափոխան: Բացի այդ, պայապան դյուրանում էր ժողովածուի օգտագործումը. բառային մեկ տեղն իմացողը շատ դյուրությամբ կարող է գտնել ուզած քառյակը այդ մեծածավալ գրքում: Ժողովածուի օգտագործումն առավել հնչողացնելու համար, Արեղյանը բարբառային վերջավորություն ունեցող հանգարաններն ու բաշմեներն անխափր վերածում է գրական ձևերի, որով միասնական ու մատչելի են դառնում երգերի հանգերն ու լեզուն առհասարակ<sup>1</sup>:

Երգերի տարբերակային փնջերը ևս Արեղյանը ենթարկում է որոշակի համակարգության. նա երգի հերթական թվահամարի տակ գնում է բուն երգը: Եթե փոփոխակը բուն երգի նկատմամբ միայն առանձին տողերով է տարբերակվում, ապա երգի տակ գրվում են տարբերակվող տողերը միայն՝ համապատասխան տեղահամարներով. իսկ երբ տարբերակվում է ամբողջական երգը, ապա շարունակության մեջ, եռաստղանշանի տակ բերվում է երգի ամբողջական փոփոխակը, որի տակ էլ (եթև կան) գրվում են դրան վերաբերող տարբերակները<sup>2</sup>: Տպագիրը աղբյուրներից վերցրած յուրաքանչյուր երգի ու տարբերակի տակ՝ համառոտագրությամբ նշվում են աղբյուրն ու էջը:

Ժողովածուն ունի, ինչպես նշվել է արդեն, ընդարձակ ներածական ուսումնասիրություն, ժողովածուն կազմելու հանգամանքները բնութագրող առաջարան, ուր համառոտագրություններով գրված է նաև օգտագործված տպագիր աղբյուրների մանրամասն ու ամբողջական մատենագիտությունը:

Այգլպետ, «Ժողովրդական խաղիկներ»-ը էությունով դիտական համահավաք բնագիր, արտաքուստ հրատարակվում էր փոքր-ինչ հանրամատչելի տեսքով: Ժողովրդական քառյակների լեզվի մասնակի գրականացումը, առարկայական, անվանական, հանգարանական ցանկերի, ինչպես նաև համապատասխան ծանոթությունների բացակայությունը՝ այդ մեծարժեք ժողովածուին հազորդում էին որոշ չափով հանրամատչելի կերպով:

<sup>1</sup> Հմմտ. Մ. Արեղյան, Ժողովրդական խաղիկներ, էջ 117:

<sup>2</sup> Գրքում երբեմն նույն խաղի փոփոխակներն առկաում են իրեն տեղափոխ երգ: Գա Արեղյանը պատճառաբանում է ժողովածուի վրա «երկար տարիների ընթացքում ընդհատումներով պարագիտու հանգամանքով (տե՛ս «Ժողովրդական խաղիկներ», էջ 119):

Միևնույն ժամանակ հիշյալ պակասությունները ժողովածուն դիտական օգտագործման տեսակետից մասամբ զարժնում էին անմատչելի: Այսուհանդերձ, Մ. Արեղյանի «Ժողովրդական խաղիկներ» աշխատությունը մի խոշոր երևույթ էր հայ բանագիտության պատմության մեջ: Առաջին անգամ բանասիրական միասնական համակարգությամբ հրատարակ էր բերվում հայ գեղջկական երգառայակների հարուստ ժառանգությունը, ուր արտացոլված էր մեր անցյալի գյուղաշխարհի միջավայրն ու նրանում ապրող մարդու ներքին ապրումների ամբողջական պատկերը, տարբեր ու այլազան գրեկերումներով: Բակ էր նկատի ենք առնում, որ հայ տերստարանության պատմության մեջ «Ժողովրդական խաղիկներ»-ով, առաջին անգամ հաջողությամբ իրականացվում էր ժողովրդական բնագրերի կազմելու տիպարաբանական սկզբունքը, ապա Արեղյանի ժողովածուն ձեռք է բերում նաև պատմա-մեթոդական կարևոր նշանակություն և դառնում բնագրաբանական մի բացառիկ օրինակ հայ բանասիրության մեջ:

«Մուսանական ժողովրդական տաղեր»-ով և «Ժողովրդական խաղիկներ»-ով, եթե Արեղյանը երևան էր հանում հայ հին ու նոր բազմաբային ու գեղջկական բնասիրության հարուստ ժառանգությունը, ապա եռագիրը «Մուսան ձևեր»-ով, նա, 4. Մեխր-Օհանջյանյանի աշխատակցությամբ, գիտական աշխարհին էր ներկայացնում հայ բազմազարյան վիպական բանահյուսության գլուխգործոցի՝ նոր ժողովրդական վիպի մոտ հինգ տասնյակի հասնող պատմների գիտական բնագիրը<sup>1</sup>:

Եթե Մանուկ Արեղյանի երկարամյա բանասիրական փորձն ու հայ ժողովրդական վիպի նվիրած ծանրակշիռ ուսումնասիրությունները տեսական ու գործնական բավարար նախադրյալներ էին ստեղծում վիպի գիտական համահավաք բնագիր կազմելու գործին, ապա 4. Մեխր-Օհանջյանի՝ վիպի մի շարք նոր պատումների հայտնագործման ու գրառման բանահավաքական փորձը, ինչպես նաև վիպի նրա լավ իմացությունն ու տեսական լայն պատրաստվածությունը՝ զախն էին նպաստելու դրան:

Նման գիրքները ձեռքի տակ համակենտրոնացնելով շուրջ վեց տասնամյակի բնթանքում Հայաստանի տարբեր վայրերից բանա-

<sup>1</sup> «Մուսան ձևեր», խմբագրեց պրոֆ. Գ. Բ. Մանուկ Արեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ.-Սևանշյանի, Ա. Հատար, Պետհրատ, Երևան, 1936: Նույնը, Բ. Հատար, առաջին մաս, Պետհրատ, Երևան, 1944: Նույնը, Բ. Հատար, երկրորդ մաս, Պետհրատ, Երևան, 1951:

Հավաքների գրանցած վեպի 65 տպադիր ու անտիպ պատուները, խստիվ բնորոշյալ գիտական համահավաքի մեջ են ներառում միայն 48-ը, մնացած 17-ը՝ թերի, ազավաղված, ազնառված լինելու պատճառով կամ այլ նկատառումներով գուրս են թողնվում<sup>1</sup>: Խմբագրությունն առհասարակ, իբրև սկզբունք, հրատարակության մեջ է ներառում բոլոր տպադիր պատուներն անխաիր, իսկ անտիպներից միայն նրանք, որոնք կամ բովանդակությունյալ, կամ գեղարվեստական ձևով որևէ չափով նորոշվում են հանդիսանում<sup>2</sup>:

Վեպի պատուներն մինչ այդ կատարած հետազոտություններից ու խմբագրման ընթացքում հատկապես արված հանգամանալից համեմատություններից, առավել հասակորեն պարզվում է, որ «Սասնա ծռեր»-ի պատումները բաժանվելով երկու հիմնական տեղադրական-բարբառային (Տարունի և Վանի) փնջերի, միաժամանակ և ժանրային ու ոճական նկարագրով համապատասխանաբար երկատվում են նա երկու տիպաբանական խմբի: Առաջին՝ Տարունի կամ Մշո (ներառյալ նաև Սասնա, Այաշերտի, Ապարանի, Նոր Բայազետի և այլն) պատումները աչքի են ընկնում խիստ վիպականությամբ, պատմողական հակիրճ ու առնական ոճով, մինչդեռ Վանի բարբառով կամ ենթաբարբառներով (Մոկաց, Շատախի, Կանճետի և այլն) պատումները հատկանշվում են առավելապես բնարականությամբ, երզվող հատվածների առատությամբ, բանաստեղծական նուրբ ու քնքուշ գեղումներով:

Այս երկու զխավոր խմբերից բացի, առկա էր պարսկաճանչերի պատումների փոքրիկ խումբը, որն իր տիպաբանական նկարագրով վերոնշյալ երկուսի խումբերի էր ներկայացնում:

«Սասնա ծռեր»-ի պատումների վերոնշյալ հատկանիշներն էլ Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանը դարձնում են պատումների գառակարգման հիմք: Ըստ այսմ՝ վեպի 48 պատումները նրանք սեղանադրյալում են երկու մեծագիր հատորներում<sup>3</sup>: Առաջինն ընդգր-

կում էր Վանի բարբառով, ենթաբարբառներով ու խոսվածքներով (Մոկաք, Շատախի, Սպարիկերտի, Գավաշի, Հայոց ձորի և Կանճետի) պատումները, իսկ երկրորդը՝ Տարունի կամ Մշո բարբառով ու ենթաբարբառներով, ինչպես նաև Աբարատյան դաշտի և պարսկահայոց պատումները:

Հատորների մեջ խմբագրությունը վեպի պատումները դասավորում է ըստ նրանց դրաման ժամանակի, երբևէ գիտակցաբար կատարում շեղումներ, հիմնով պատումների բովանդակության մերձությունից և վիպասացների միևնույն վիպասանական դպրոցին պատկանելուց<sup>4</sup>:

Քանի որ «Սասնա ծռեր»-ի գիտական հրատարակության տեղաբարանական հիմնական սկզբունքը պատումների տեղադրական-իզվաբարբառային հատկանիշներն էին դարձել, ուստի և խմբագրությունը յուրաքանչյուր հատորի սկզբում ապիս էր գրածում ընդգրկված պատումների կենդանագիտական աշխարհագրական վայրերի տեղագրությունն ու բարբառային-բերականական կանոնները: Քացի այդ, յուրաքանչյուր պատում ունի սեփական առասարան, ուր սեղմ ու հանգամանից շարադրված են բանասացի, բնահավաքի, տվյալ պատումի հետ կապված արտաբերական հանգամանքների մասին ձեռքի տակ եղած բոլոր տվյալները: Գրանով այդ նախաբանները ձեռք են բերում յուրատեսակ ծանոթագրությունների արժեք: Խմբագրությունը նկատի առնելով «Սասնա ծռեր»-ի չափածո, աղատ ոտանավորով ավանդված հանգամանքը, արձակ գրաված պատումները տողատում է ըստ չափի, իսկ արդեն տողատվածները՝ վերանայում և ճշգրտում: Քայց ութ պատում՝ տրդարվում է արձակ կամ մասնակի տողատումով, բնիզ էությունը եղել են արձակ և հնարավոր չի եղել վերականգնել ոտանավորը:

Քացի տողատումից, խմբագիրները պատումները ըստ բովանդակության բաժանում են առանձին հատվածների, զնելով համապատասխան վերնագրերի տակ: Նրանք բոլոր պատումների տարբեր ու այլազան գրություններ ենթադրում են ուղղագրական միօրինակության, միաժամանակ հնարավորին չափ արտահայտելով պատումների բարբառային-հնչյունական առանձնահատկությունները:

Հատորի Ա մաս, իսկ մնացած պատումները թողնվում էին հետագային և կազմելու էին Բ հատորի Բ մասը:

1 «Սասնա ծռեր»-ի գիտական բնագիրը կազմելու հետ կապված այս, ինչպես նաև հրատարակված այլ տվյալները բողոքում ենք ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանի բռնավոր հազորդաներից:

2 «Սասնա ծռեր», Ա հատոր, էջ 69:

3 1938-ին՝ «Սասնա ծռեր»-ի առաջին հատորը լույս տեսնելուց հետո, երբ երկրորդ հատորի տպագրությունը գրեթե կես էր եղել, խմբագիրներից անկախ պատճառներով հատորի տպագրությունը ստամանակի դադարեցվում է: 1942-ին, ֆինանսական սրշակի նկատառումներով Պետհրատը որոշում է տպագրված մասումները (թվով 10 պատում) հրատարակել առանձին գրքով, իբրև Բ



